

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐՊՈՒՆԻՆ ԱՐԿԵԱՆ ԱՍՅԱՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՊՈՅՏՔԵՆԱԶԱՆԵՆԻ ԳՐԹԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐԹԵՐԻ ՄՏԵՂՈՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՇԱՄԱՆՈՅԳՈՒԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՐՁԱԿԱՆ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:
ՑԱՆՎՈՒՆՈՒՄ ԵՒՔ ՉԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՒՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՔ՝ freebooks@rambler.ru

ՄԻՇԵԼ ՄԱՍՏԻՆ



ՓՈՐՁԵՐ



ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
1991

MICHEL
DE MONTAIGNE



LES ESSAIS

ՄԻՇԵԼ ՄՈՒՏԵՆ



ՓՈՐՁԵՐ

1

Թարգմանված է ռուսերեն
երկրորդ հրատարակությունից

ԳՄԴ 84.43բ-4
ՈՒՌՆԵՐ

Թարգմանությունը ԱՐՋՈՒՄԱՆ ԽՈՅԱՆՅԱՆԻ

4703000000
Մ $\frac{4703000000}{701(01)-91}$ 62-91
ISBN 5-540-01074-4

ԳՄԴ 84.43բ-4

© Թարգմանված է հայերեն, Ա. Մ. Խոյանյան, 1991

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մոնտենի հայտնի «Փորձերի» երեք գրքերի լիակատար հրատարակությունը ուսերեն թարգմանությամբ առաջին անգամ իրականացվել է 1954—1960 թթ.: «Լիտերատուրնիե պամյատնիկի» շարքով լույս տեսած այդ հրատարակության նախապատրաստմանն այն տեսքով, ինչպիսին եղել է 1960 թ. (մինչև այդ առաջին գիրքը լույս է տեսել 1954 և 1958 թթ., երկրորդը՝ 1958 թ.) մասնակցել են հետևյալ անձինք: Թարգմանությունը կատարել են. առաջին գրքինը՝ Ա. Ս. Բոբովիչը, երկրորդինը՝ Ա. Ս. Բոբովիչն ու Ֆ. Ա. Կոզան-Բրոնշտեյնը, երրորդինը՝ Ա. Ս. Բոբովիչն ու Ն. Յա. Ռիկովան: Հրատարակությանը կցված էին Ֆ. Ա. Կոզան-Բրոնշտեյնի երկու հոդվածները. «Միշել Մոնտենն ու նրա «Փորձերը», և «Մոնտենի փիլիսոփայական հայացքները»: Առաջին գրքի մեկնաբանությունները կազմել են Ա. Ս. Բոբովիչն ու Ֆ. Ա. Կոզան-Բրոնշտեյնը, երկրորդինը՝ Ֆ. Ա. Կոզան-Բրոնշտեյնը, երրորդինը՝ Ա. Ս. Բոբովիչն ու Ա. Ա. Սմիռնովը: Այդ հրատարակությունը սպառվեց շատ կարճ ժամանակում: Այժմ էլ «Փորձերը» շարունակում է հարուցել ընթերցողի վիթխարի հետաքրքրությունը:

Հոգեբանական վերլուծության վարպետ, նշանավոր գրող Մոնտենի ստեղծագործությունը կրում է հեղինակի անհատականության անկասելի ձգտողական ուժի հետքը: Այս գիրքը, խորությամբ արտացոլելով վերածնության դարաշրջանի պատմական փորձը, մարմնավորելով նրա լավագույն մարդասիրական ձգտումները, գարձել է կյանքի իմաստության և մարդկային հոգու գաղտնիքների նուրբ հետազոտությունների անսպառ աղբյուր: Այն ունի պատմական, փիլիսոփայական և գեղագիտական անանց արժեք: Ուստի առաջացավ «Փորձերի» հայերեն թարգմանության հրատարակման կենսական պահանջը:

Սույն հայերեն հրատարակության հիմքում ընկած է «Փորձերի» 1979—1980 թթ. ուսերեն հրատարակությունը:

Հայերեն թարգմանությունը խմբագրել է Մ. Վ. Ասատրյանը, մասամբ համեմատելով ֆրանսերեն տեքստի հետ:

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ընթերցող, սա անկեղծ գիրք է: Այն սկզբից ևեթ քեզ հայտնում է, որ ես չեմ ունեցել ոչ մի այլ նպատակ, քան ընտանեկան ու մասնավոր: Ես բնավ չեմ մտածել ոչ քո օգուտի, ոչ էլ իմ փառքի մասին: Նման խնդրի համար ուժերս քիչ են: Այս գրքի նպատակն է յուրատեսակ հաճույք պատճառել հարազատներիս ու բարեկամներիս, ինձ կորցնելով (իսկ դա տեղի կունենա մոտ ապագայում), նրանք կկարողանան այստեղ գտնել իմ բնավորության ու մտքերի որոշ հետքեր և, դրա շնորհիվ, լրացնել ու հարույթուն տալ իմ մասին իրենց պատկերացմանը: Եթե ես այս դիրքը գրեի ընտրախավի բարեհաճությանն արժանանալու համար, ես կպճնվեի ու կցուցադրեի ինձ ամենայն շուքով: Սակայն ուզում եմ, որ ինձ տեսնեն հասարակ, բնական ու սովորական տեսքով, անբռնազբոս և պարզ, քանզի ես պատկերում եմ ոչ թե ինչ-որ մեկին, այլ ինքս ինձ: Խերութուններս կհառնեն այստեղ ակնհայտ, և իմ ամբողջ նկարագիրը կլինի այնպիսին, ինչպիսին իրականում կա, անշուշտ, որքանով դա համատեղելի է հասարակության նկատմամբ իմ հարցանքի հետ: Եթե ես ապրեի այն ցեղերի մեջ, որոնք, ինչպես ասում են, այժմ էլ տակավին ըմբռնված են բնության նախասկզբնական օրենքների քաղցրանուշ ազատությունը, հավատացնում եմ քեզ, ընթերցող, ես մեծագույն հաճույքով կպատկերեի ինձ ամբողջ հասակով, և ըստ որում՝ մերկ: Այսպիսով, գրքիս բովանդակությունը ես ինքս եմ, իսկ դա բնավ հիմք չէ, որ դու քո ազատ ժամանակը տրամադրես այսքան թեթևամիտ ու շնչին տրարածի: Ուրեմն, մնաս բարով:

ԳԸ ՄՈՆՏԵՆ

Հազար հինգ հարյուր ութսուն թվականի մարտի մեկ:

Գլուխ I

ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՍՆԵԼ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՆԻՆ

Եթե մենք վիրավորել ենք որևէ մեկին, և նա, պատրաստվելով վրեժ առնել մեզանից, կարող է մեզ հետ վարվել ըստ իր հայեցողության, ապա նրա սիրտը մեղմացնելու ամենասովորական միջոցը մեր խոնարհությամբ նրան համոզելն է և նրա գուժն ու կարեկցանքը շարժելը: Մակայն, նաև խիղախությունն ու հաստատակամությունը՝ ճիշտ հակառակ միջոցները, երբեմն միևնույն ներգործությունն են ունեցել:

Էզուարդը՝ Ուելսի արքայազնը¹, նա, որ այդքան երկար ժամանակ մեր Գիենը² պահում էր իր իշխանության ներքո, մի մարդ, որի բնավորությունն ու ճակատագիրն աչքի են ընկել մեծության շատ հատկանիշներով, վիրավորված լինելով լիմոժցիներից և ուժով գրավելով նրանց քաղաքը, անտարբեր էր սպանդի դատապարտված, նրանից գթություն աղերսող և նրա ոտքերի տուռը փռված ժողովրդի, կանանց ու երեխաների վայնասունին, մինչև որ, ավելի ու ավելի խորանալով քաղաք, հանդիպեց երեք աղնավական ֆրանսիացիների, որոնք շտեմնված խիղախությամբ միայնակ դիմագրավում էին նրա հաղթական գործի ճնշմանը: Նման բացառիկ քաջության տեսարանից հարուցված զարմանքն ու հարգանքը մեղմացրին նրա զայրույթը և, սկսելով այդ երեքից, նա այնուհետև խնայեց նաև մյուս քաղաքացիներին:

Սկանդերբեգը³ էպիրոսի տիրակալը, մի անգամ ընկավ իր գինվորներից մեկի հետևից, որ սպանի. վերջինս, գթության նվաստական աղերսանքներով նրա զայրույթը մեղմացնելու ապարդյուն փորձերից հետո, վերջին պահին համարձակվեց դիմավորել սուրբ ձեռքին: Զինվորի այդ վճռականությունը հանկարծ մեղմացրեց պետի կատաղությունը, և նա, տեսնելով, որ գինվորն իրեն պահում է հարգանքի արժանի կերպով, կյանք բաշխեց նրան: Այս թագավորի ապշեցուցիչ ֆիզիկական

ուով և խիզախության մասին շկորկացած մարդիկ կարող են սույն օրինակով մեկնաբանել բոլորովին այլ կերպ:

Եւորոպ III կոչորր, պաշտօնելով Վելֆին՝ Բավարիայի զքսին, ոչ մի բանում չկամեցավ զլջումներ անել, թեև պաշարվածները պատրաստ էին հաշտվել ամենախայտառակ ու ստորացուցիչ պայմանների հետ, և համաձայնեց միայն, որ զքսի հետ միասին քաղաքում փակված ազնվազարմ կանանց թույլ տրվի հետիոտն զուրս գալ այնտեղից: անձեռնմխելի պահելով իրենց պատիվն ու հետները տանելով այն ամենը, ինչ կկարողանան վերցնել: Իսկ նրանք, ղեկավարվելով մեծահոգի խոյանքներով, որոշեցին շալակել ամուսիններին, ևրեխաներին և իրեն՝ զքսին: Նրանց ազնիվ ու համարձակ արարքն այնպես հիացրեց կայսերը, որ վերջինս գորովանքից լաց եղավ, նրա մեջ մարեց պարտված զքսի նկատմամբ անհաշտ ու մահացու թշնամանքի բոցը, և այդ ժամանակվանից նա սկսեց ավելի մարդկայնորեն վերաբերվել թե զքսի և թե նրա հպատակների նկատմամբ⁴:

Ինձ վրա միասեսակ հեշտությամբ կարող էին ներգործել թե առաջին, թե երկրորդ միջոցները: Ինձ հասուկ է արտակարգ հակվածությունը գթասարտության ու ներողամտության: Եվ այդ հակվածությունն ինձ մոտ այնքան ուժեղ է, որ, թվում է, ինձ կարող էր ավելի շուտ գինաթափել կարեկցանքը, քան հարգանքը: Մինչդեռ, ստոիկյանների համար գթությունը պարսավանքի արժանի զգացմունք է, նրանք ուզում են, որպեսզի, օգնելով թշվառներին, մենք միևնույն ժամանակ շնորհմանանք և չկարեկցենք նրանց:

Եվ այսպես, իմ բերած օրինակներն ինձ միանգամայն համոզիչ են թվում, չէ որ զրանք մեզ ցույց են տալիս այն հոգիները, որոնք, կրելով բերված երկու միջոցների ներգործությունը, անզրզվելի մնացին զրանցից առաջինի հանդեպ և չգիմացան ևրկրորդին: Մի խոսքով, կարելի է եզրահանգել, որ կարեկցանքը հատուկ է ներողամիտ, բարեհոգի և նըրրազգաց մարդկանց, այստեղից հետևում է, որ զրան ավելի շուտ հակվում են ավելի թույլ բնավորությունները, ինչպիսիք կանայք են, երեխաներն ու հասարակ մարդիկ: Հնդհակառակը, արցունքներին ու աղերսանքներին անտարբեր մնալը և միայն խիզախության սրբության նկատմամբ տածած պատկառանքից գիջելն ուժեղ և անհողողողը, քաջարի հաստատակամություն պաշտող, ինչպես նաև համառ հոգու զբանորում է: Բայց նվազ ազնիվ հոգիների վրա նույն ազդեցությունը կարող են ունենալ զարմանքն ու հիացմունքը: Դրա օրինակն է Թեբեի ժողովուրդը, որն իր դորապետների զեմ գատ սարքելով և սպառնալով սպանել այն բանի համար, որ նրանք շարունակում են կոտարել իրենց պարտականություն-

ներք նշանակված և նախացուցված ժամկետն անցնելուց հետո, դժվարութեամբ արդարացրեց Պելուպիդասին⁵, որը կքվել էր մեղադրանքների ծանրութեան տակ և ներման էր ձգտում միայն խոնարհ խնդրանքներով ու ադիրսանքներով, մյուս կողմից, երբ բանը հասավ էպամինոնդասին⁶, որը պերճ խոսքերով նկարագրեց իր բազմաթիվ ծառայութիւնները և հայտարարեւն ու գոռոզ տեսքով կշտամբեց համաքաղաքացիներին, նույն մոզովուրդը շհամարձակվեց վերցնել քվեագնդիկները և, ցրվելով ժողովից, մարդիկ ամեն կերպ գովաբանում էին նրա հոգու մեծութիւնն ու անասանութիւնը:

Դիոնիսիոս Ավագը⁷, երկարատև ու լարված ջանքերից հետո վերցնելով Ռեգիոսը⁸ և այնտեղ բռնելով թշնամու զորապետ Փիտոնին, որը մեծ արիութեան տեր մարդ էր և համառորեն պաշտպանում էր քաղաքը, ցանկացավ նրա նկատմամբ վրիժառութեան բսամնելի օրինակ ցուցադրել: Սկզբից նա պատմեց, թե ինչպես զրանից մեկ օր առաջ ինքը հրամայել է ջրում խեղդել նրա որդուն և բոլոր ազգականներին: Փիտոնը պատասխանեց, թե նրանք, ուրեմն, իրենից մեկ օր առաջ են երջանկութիւն գտել: Այնուհետև Դիոնիսիոսը հրամայեց նրա վրայից պոկել շորերը, հանձնել դահիճներին և ման տալ քաղաքում, զաժանորեն ու անտրգայից մտրակելով և հայհոյելով զազրելի ու վիրավորական բառերով: Փիտոնը, սակայն, ստկոնորեն պահպանում էր անասանութիւնն ու հոգու արիութիւնը, քայլելով հպարտ ու ինքնապատստան, նա բարձր ձայնով հիշեցնում էր, թե մեռնում է ազնիվ ու բարի զործի համար, այն բանի համար, որ շի կամեցել հայրենի երկիրը հանձնել բռնապետին, և վերջինիս սպառնացել է աստվածների մոտալուտ պատժով: Դիոնիսիոսը, իր զինվորների աչքերից կռահելով, որ պարտված թշնամու պարձևնկոտութիւնն ու արհամարհանքը նրանց առաջնորդի ու իր հաղթանակի նկատմամբ ոչ միայն շին վրդովեցնում նրանց, այլև, ընդհակառակը, նման բացառիկ անվեհերութիւնից զարմացած, նրանք սկսում են դերու նկատմամբ կարեկցանքով համակվել, պատրաստ են խոսովութիւն բարձրացնել և նույնիսկ նրան խլել պահալախիմբի ձեռքից, հրամայեց դադարեցնել այդ տանջանքը և թաքուն խեղդել նրան ծովում:

Ջարմանալիորեն ունայնամիտ, հիրավի շեզեկոտ և միշտ վարանող էակ է մարդը: Դժվար է նրա մասին կայուն և միօրինակ պատկերացում կազմել: Ահա մեր առջև Պոմպեոսն է, որը զթաց այն մամերտինացիներին⁹ ամբողջ քաղաքին, որոնց վրա դրանից առաջ սաստիկ զայրացած էր, զթաց միայն հարգելով նրանց համաքաղաքացիներից մեկի՝ Ղենոնի¹⁰ առաքինութիւնն ու մեծահոգութիւնը. վերջինս իր վրա վերցրեց բնդհանուր մեղքի բեռը՝ և խնդրում էր լսկ մի ողորմածութիւն, որ

պատիժը միայն ինքը կրի: Մյուս կողմից, Սուլային հյուրընկալող մի մարդ, նման առաքինությունն զրսևորելով Պերուզիայում¹¹, զրանով ամենևին չօգնեց ոչ իրեն, ոչ ուրիշներին:

Ահա իմ նախորդ օրինակներին միանգամայն հակառակ մի բան: Ալեքսանդրը, որ խիզախությամբ դերսզանցում էր աշխարհում երբևէ բնակվող բոլոր մարդկանց և սովորաբար շատ ողորմած էր պարտված թշնամիների նկատմամբ, մեծագույն ջանքերի զնով տիրելով Գադա¹² քաղաքին, այնտեղ հանդիպեց թշնամի զորապետ Բեթիսին, որի ապշեցուցիչ հմտությունն ու քաջությունը նա բազմիցս հնարավորություն էր ունեցել փորձելու պաշարման ժամանակ: Բոլորից լքված, կոտրված սրով ու ճեղքված վահանով, շատ տեղերից վիրավոր և արյունաքամ Բեթիսը միայնակ շարունակում էր դեռևս կռվել՝ շրջապատված իրեն նեղող մակեդոնացիների բազմությամբ: Ալեքսանդրը, խոցված այն բանից, որ հաղթանակը ձեռք բերվեց այդքան թանկ զնով, քանզի, զորքում մեծ կորուստներից բացի, նրան հենց նոր երկու տեղից վիրավորել էին, բղավեց. «Բեթիս, դու կմեռնես ոչ այնպես, ինչպես կուզենայիր: Իմացիր. դու ստիպված կլինես տանել բոլոր այն տանջանքները, որ կարելի է հորինել գերու համար»: Բեթիսը ոչ միայն լիակատար անվերջ զոսություն էր պահպանում, այլև ավելին, մարտական ու գոռոզ տեսքով լուռ լսում էր այդ սպառնալիքները: Այդժամ նրա հպարտ ու համառ լուսնյունից հավասարակշռությունը կորցրած Ալեքսանդրը շարունակեց. «Նա ծնկի եկավ՝ արդյոք, նրա շուրթերից թևկուղ մի աղերսանք դուրս թռավ: Բայց հավատա ինձ, ես կկոտորեմ քո լուսնյունը և, եթե քեզանից խոսք չկորվեմ, ապա գոնե հառաչանքներ կկորզեմ»: Եվ ավելի ու ավելի վաշտանալով, նա հրամայեց ծակել Բեթիսի կրունկները և, նրան կապելով մարտակառքին ողջ-ողջ քարշ տալ հետևից, ծվատելով ու այլանդակելով նրա մարմինը: Արդյոք դա այն բանի հետևանքն էր, որ Ալեքսանդրը կորցրել էր հարգանքը քաջության նկատմամբ, քանզի դա նրա համար սովորական բան էր և նրա հիացմունքը չէր հարուցում: Թե՛, գուցե, նա այնքան բարձր էր գնահատում սեփականը, որ չէր կարողանում իր մեծության բարձրությունից ուրիշի մոտ առանց խանդի դգացումի նման բան տեսնել: Կամ բնականից իրեն հատուկ անզուսպ զայրո՞ւյթը չէր կարողանում հանգուրժել որևէ մեկի դիմադրությունը: Եվ, իրոք, եթե այն սանձահարվելու լիներ, հավանաբար կսանձահարվեր Թերեն գրավելիս ու ավերելիս¹³, երբ նրա աչքի առաջ ամենայն անգթությամբ կոտորվեցին բազում քաջարի այրեր, որոնք կորցրել էին ամեն ինչ և զուրկ էին պաշտպանվելու հնարավորությունից: Զէ որ այն ժամանակ նրա հրամանով օպանվեց մի վեց հազար մարդ, ըստ որում

նրանցից ոչ մեկին չէին տեսել փախչելիս կամ գթություն աղերսելիս, բողհակառակը, յուրաքանչյուր ոք, այս ու այն կողմ նետվելով, հաղթող իշխամու հետ փողոցում ընդհարվելու առիթ էր սրոնում, այդպես արժանանալով պատվավոր մահվան: Չկար մեկը, որ նույնիսկ ուժասպառ լինելով վերքերից, շփոթներ վերջին ուժերի լարումով իր վրեժը լուծել և ցասումով բռնկված, մխիթարություն գտնել այն բանում, որ իր կյանքը տալիս է մի հակառակորդի կյանքի զնով: Նրանց քաջությունը, սակայն, Ալեքսանդրի գութը բնավ չշարժեց, և մի ամբողջ օրն էլ չբավարարեց հաղեցնելու վրեժի ծարավը: Այդ սպանող շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ թափվեց արյան վերջին կաթիլը, խնայեցին լոկ նրանց, ովքեր զենք չէին վերցրել, այսինքն՝ երեխաներին, ծերերին, կանանց, որպեսզի հաղթողին երեսուն հազար ստրուկ բաժին հասնելու:

Գլուխ II

ՎԵՏԻ ՄԱՍԻՆ

Ես պատկանում եմ այն մարդկանց թվին, որոնք ամենից քիչ են ենթարկվում այդ զգացմունքին: Ես այն չեմ սիրում և չեմ հարգում, թեև ամբողջ աշխարհն ասես խոսքը մեկ արած, բացառիկ պաշտամունքով է վերաբերվում դրան: Այն պճնում են իմաստնություն, առաքինություն, խղճով՝ հրեշավոր և անհնթեթ զարգարանքներ: Իտալացիներն անհամեմատ ավելի մեծ հաջողությամբ այդ նույն բառով անվանել են նենգությունն ու շարությունը: Չէ որ դա միշտ վնասարեր, միշտ խելացնոր, ինչպես նաև միշտ փոքրոգի և ստոր զգացմունք է: Ստոիկյաններն իմաստունին արգելում են անձնատուր լինել դրան:

Կա մի պատմություն, թե եգիպտական թագավոր Պսամմենիտոսը, պարտություն կրելով և գերի ընկնելով պարսից թագավոր Կամբյուռեսին¹, տեսավ իր գատերը, որը նույնպես գերի էր, երբ ջրի ուղարկված աղջիկը ստրկուհու շորերով անցնում էր նրա կողքով: Ու թեև այդուհի կանգնած նրա բոլոր բարեկամները լալիս էին ու բարձրաձայն հուռալում, նա մնաց անվրդով և, աչքերը հառելով գետին, ոչ մի խոսք չարտաբերեց, նա նույնպիսի ինքնաաիրապետում պահպանեց նաև այն ժամանակ, երբ տեսավ, թե ինչպես են իր որդուն տանում մահապատժի: Սակայն, մոտով թշվոռ գերիների բազմության մեջ նկատելով իր մերձավորներից մեկին, նա սկսեց գլխին խփել² և ծայրահեղ վիշտ արտահայտել:

Սա կարելի է համեմատել այն բանի հետ, որ վերջերս պատահեց

մեր տոհմիկ աստիճանավորներից մեկին³։ Գտնվելով Տրիենտում, նա լուր ստացավ, թե մահացել է իր ավագ եղբայրը, և ըստ որում այն մեկը, որն ամբողջ տոհմի նեցուկն ու հպարտությունն էր, որոշ ժամանակ անց նրան հաղորդեցին, թե մահացել է կրտսեր եղբայրը՝ նրա երկրորդ հույսը։ Օրինակելի տոկունությունը դիմանալով այդ երկու հարվածներին, նա մի քանի օր հետո, երբ մահացավ մերձավորներից մեկը, վհատվեց այդ դժբախտությունից և, կորցնելով հոգու արիությունը, անձնատուր եղավ վշտին ու հուսահատությանը, որը հիմք տվեց ոմանց մտածելու, թե նա միայն այդ վերջին ցնցումից էր կտրվել։ Սակայն, իրականում դա տեղի ունեցավ, որովհետև նրան համակող և մղկտացնող վշտին բավական էր ես մի քանի կաթիլ, և այն խորտակեց նրա համբերության պատենշները։

Նույն ձևով կարելի կլիներ բացատրել նաև վերը արված պատմությունը, եթե այն շունենար հավելում, ուր բերվում է Պսամմենիտոսի պատասխանը Կամբյուսեսին, որը կամեցավ իմանալ, թե ինչու, անմասն մնալով որդու և դստեր գառը բախտին, նա այդքան սրտին մոտ ընդունեց իր բարեկամներից մեկին հասած դժբախտությունը։ «Նրա համար,— ասաց Պսամմենիտոսը,— տր միայն այդ վերջին դաճնությունը կարող է զուրս հորդել արցունքների տեսքով, մինչդեռ առաջին երկու հարվածների պատճառած վիշտն արտասայտելու միջոց գոյություն չունի»։

Այստեղ շատ տեղին կլիներ հիշեցնել այն հին գեղանկարչի⁴ ոճածևր, որը, ձգտելով պատկերել ներկաների վիշտը Իֆիգենիային զոհաբերելու կապակցությամբ՝ համապատասխան այն բանին, թե նրանցից յուրաքանչյուրին որքանով էր հուզում այդ հմայիչ, միանգամայն անմեղ աղջկա մահը, այդ գործում հասավ իր վարպետության հնարավորությունների սահմանին, սակայն, հասնելով աղջկա հորը, նրան նկարեց ծածկած դեմքով, ասես հասկացնելով, որ նման հուսահատությունն անհնար է արտահայտել։ Այստեղից է սկիզբ առնում նաև բանաստեղծների այն հորինվածքը, թե իբր Նիոբեի⁵ դժբախտ մայրը, կորցնելով սկզբից յոթ որդիներին, իսկ ապա նույնքան դուստրերին և, շղիմանալով այդքան կորուստներին, ի վերջո ապառաժ գարձավ՝

Diriguise malis*.

Նրանք ստեղծել են այս կերպարը, հաղորդելու համար այն մոռյլ, լուռ ու մունջ անզգայացումը, որ տիրում է մեզ, երբ մեզ հաղթում են մեր ուժերին գերազանցող դժբախտությունները։

* Վշտից բարացավ⁶ (լատ.)։

Եվ, խորք, չափազանց մեծ վիշտը իսպառ ճնշում է մեր հոգին, կաշկանդելով նրա դրսևորումների ազատությունը, նման քան մեզ հետ կատարվում է որևէ գույժի թարմ ապագորություն տակ, երբ մենք մեզ զգում ենք անազատ, ընդարնացած, կարծես անդամալուծված, իսկ որոշ ժամանակ անց, վերջապես, պոռթկում են հեծկլոտոցներն ու տրտնջոցները, և մենք նկատում ենք, թե ինչպես է մեր հոգին դեն նետում կապանքները, ուղղվում և ավելի թեթև ու ազատ զգում:

Et via vix tandem voci laxata dolore est*

Հունգարիայի թագավոր Հովհաննեսի այրու հետ Ֆերդինանդ թագավորի պատերազմի ժամանակ, Բուդայի ճակատամարտում⁸, գերմանացի զորապետ Ռայչախը, տեսնելով բոլորի աչքի սուսը քաջաբար կովող մի հեծյալի մարտից դուրս բերված դիակը, բոլորի հետ միասին խղճաց նրան, մյուսների նման հետաքրքրվելով, թե այնուամենայնիվ ով է այդ հեծյալը, նա, սպանվածի վրայից սասպազները հանելուց հետո, տեսավ, որ դա իր սեփական որդին է: Եվ մինչ շուրջը բոլորը լալիս էին, միայն ինքը ոչ մի խոսք չսասց, մի կաթիլ արտասուք չթափեց, ուղիղ կեցվածքով նա կանգնել էր հայացքն աճյունին դամած, մինչև որ վիշտը նրա մեջ սառեցրեց կյանքի ոգիները⁹, և նա, անզգայանալով, մեռած ընկավ գետին:

Chi può dir com' egli arde, è in picciol luoco**

Ասում են, թե սիրահարները, ցանկանալով ցուցադրել կրքի տառապանքները.

misero quod omnes
Eripit sensus mihi. Nam simul te,
Lesbia, aspexi, nihil, est super mi
Quod loquar amens.
Lingua sed torpet, tenuis sub artus
Flamma dimanat, sonitu suo
Tinniant aures, gemina teguntur
Lumina nocte***

* Եվ վերջապես, վիշտը դժվարությունը բացեց ձայնը⁷ (լատ.):

** Նա, ով ի վիճակի է արտահայտել իր տուրբանքը, թույլ բոցով է այրվում¹⁰ (լատ.):

*** Ավագ, սիրն ինձ գրկել է բոլոր զգացմունքներից, Բավական է տեսնեմ քեզ, ևսրիս, և ես, խելագարված, այլևս ոչ մի բառ չեմ կարողանում արտաբերել: Լեզուս պայաննվում է, քնքուշ բոցն առնում է ողջ մարմինս, ականջներս զնգում են ու աչքերս մթնում¹¹ (լատ.):

Այսպես, այն պահերին, երբ մեզ համակում է կենդանի ու այրող կիրքը, մենք անկարող ենք տրտնջալ կամ թախանձել, մեր հոգին ծանրացած է մույլ խոհերով, իսկ մարմինը ուժասպառ է և սիրատուչոր:

Այստեղից էլ երբեմն առաջանում է անսպասելի մի ուժասպառութուն, որն այդքան անպատեհ համակում է սիրահարներին, այն սառցասառն անտարրերությունը, որը շափազանց մեծ կրակոտության պատճառով տիրում է նրանց վայելքների ամենաթեժ պահին: Լմենք մի կիրք, որը տեղ է թողնում վայելումի և խորհրդածության, թույլ կիրք է:

Curae leves loquuntur, ingentes stupent*.

Անսպասելի ուրախությունը կամ հաճույքը նույնպես շշմեցնում են մեզ:

Ut me conspexit venientem, et Troia circum
Arma amens vidit, magnis exterrita monstis,
Diriguit visu in medio, calor ossa reliquit,
Labitur, et longo vix tandem tempore fatur**.

Քացի այն հուսմեացի կնոջից, որ մահացել է անսպասելի ուրախությունից, տեսնելով Կաննի¹⁴ մոտ պարավելուց հետո վերադարձած որդուն, բացի Սոֆոկլեսից և բռնապետ Դիոնիսիոսից, որոնք նույնպես մեռել են ուրախությունից, և ի վերջո, բացի Տալվաչից¹⁵, որը մահացել է Կորսիկա կղզում, կարգալով Հոսմի սենատի կողմից իրեն շնորհած պատիվների մասին հայտնող նամակը, մենք ունենք մի օրինակ, որ վերաբերում է նաև մեր դարին. այսպես, Լևոն X պապը, տեղեկություն ստանալով Միլանի գրավման մասին, որ նա այդքան կրքոտությամբ ցանկանում էր, այնպիսի բուռն ուրախություն զգաց, որ հիվանդացավ ջերմախտով և շուտով մահացավ¹⁶: Եվ մարդկային ունայնամտության էլ ավելի ուշադրավ վկայություն բերելու համար հիշատակենք հների նշած մի դեպք. Դիոդորոս Դիալեկտիկը¹⁷ մահացավ գիտական մի վեճի ժամանակ, որովհետև սաստիկ ամառեց իր աշակերտներից ու շրջապատից, չկարողանալով հերքել իր գեմ ուղղված փաստարկը:

Ինչ վերաբերում է ինձ, ապա ես այնքան էլ ենթակա չեմ կրքի նման մոլեգնումներին: Ինձ այնքան էլ հեշտ չէ հրապուրել՝ այդպիսին է իմ էությունը, բացի այդ, շնորհիվ մշտական խորհրդածության, ես օր օրի ավելի եմ անզթանում ու կոփվում:

* Միայն փոքր թախանձ է խոսում, մեծը՝ լսու է¹² (լատ.):

** Նա հազիվ նկատեց, որ ես մոտենում եմ, և մեծ զարմանքով տեսավ շուրջս եղած տրոյական զինվորներին, մեծ հրաշքից սարսափահար, նա քար կտրեց, կյանքի հուրը լքեց նրա մարմինը, նա վալր ընկավ և միայն շատ ժամանակ անց՝ խոսեց¹³ (լատ.):

ՄԵՐ ԶԳԱՏՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՏՈՒՄ ԵՆ ՄԵՐ «ԵՍԻ» ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԳՈՒՐՍ

Նրանք, ովքեր մարդկանց մեղսագրում են ապագայի մշտական հակում և սովորեցնում կառչել ներկայի մեզ շնորհած բարիքներին և այլևս ոչ մի բանի մասին չմտածել (քանզի ապագան ավելի քիչ է մեր իշխանությունների տակ, քան նույնիսկ անցյալը), շոշափում են մարդկային առավել տարածված մոլորությունը, եթե մոլորություն կարելի է անվանել այն, ինչին մեզ մղում է հենց բնությունը, որպեսզի շարունակենք կատարել նրա գործը: Ավելի շատ մտահոգված լինելով նրանով, որ մենք լինենք գործուն, քան իմանանք ճշմարտությունը, բազմաթիվ այլ երազանքների հետ բնությունը ներշնչում է նաև այդ խաբուսիկ երազանքը: Մենք երբեք չենք լինում մեր տանը, մենք միշտ ինչ-որ տեղ գրսում ենք: Երկյուղները, ցանկությունները, հույսերը մղում են դեպի ապագան, դրանք մեզ զրկում են եղածն ընկալելու և հասկանալու ունակությունից, կլանելով մեզ նրանով, ինչ լինելու է թեկուզ այն ժամանակ, երբ մենք ինքներս այլևս չենք լինի: Calamitosus est anlmus futuri anxius*.

Ահա մի մեծ պատվիրան, որ հաճախ կրկնում է Պլատոնը. «Արաքո գործը և ճանաչիր ինքդ քեզ»²: Այս պատվիրանի երկու կեսից յուրաքանչյուրը ներառում է նաև մյուս կեսը և, այդպիսով, ընդգրկում մեր պարտականությունների ամբողջ ոլորտը: Ամեն ոք, ով գործ պիտի անի, կտեսնի, թե ինքը նախ և առաջ ինչ պետք է ճանաչի, ինչ է իրենից ներկայացնում և ինչի է ընդունակ: Ով բավականաչափ գիտե իրեն, նա ուրիշի գործն իրենը չի համարի, նա ամենից շատ սիրում է իրեն և հոգ է տանում իր բարօրության մասին, նա հրաժարվում է անօգուտ զբաղմունքներից, ամուլ մտքերից և անլուծելի խնդիրներից:

Ut stultitia, etsi adepta est quod concupivit nunquam se tamen satis consecutam putat: sic sapientia semper eo contenta est quod adest, neque eam unquam sui poenitet**.

Էպիկուրը գտնում է, որ իմաստունը չպետք է ապագան գուշակի և տազնապի նրա համար:

* 'Իմբաստ է ապագայի հոգսերով համակված հոգին' (լատ.):

** 'Սվ եթե հիմարությունը, նույնիսկ ձեռք բերելով այն, ինչ փափագում էր, այնուամենայնիվ, երբեք չի համարում, թե բավականաչափ ունի, ապա իմաստունությունը միշտ բավարարված է նրանով, ինչ կա, և երբեք իրենից չի սրտնեղում' (լատ.):

Մեռածների նկատմամբ մեր վերաբերմունքը բնորոշող կանոններից առավել հիմնավորն, իմ կարծիքով այն է, որը թելադրում է քննարկել թագավորների գործերը նրանց մահից հետո: Գրանք օրենքների եղբայրակիցներն են, եթե ոչ նրանց տերերը: Եվ քանի որ արդարադատությունն իշխանություն չի ունեցել նրանց վրա, արդարացի է, որ իշխանություն ձեռք բերի նրանց բարի անվան և հետնորդների ժառանգական սեփականության վրա. չէ որ և մեկը, և մյուսը մենք հաճախ կյանքից թանկ ենք գնահատում: Այս սովորույթը մեծ օգուտ է բերում այն պահպանող ժողովուրդներին, ինչպես նաև խիստ ցանկալի է ամեն մի բարի թագավորի համար, որը հիմք ունի գանգատվելու, թե իր հիշատակին վերաբերվում են ճիշտ այնպես, ինչպես վատ թագավորների հիշատակին: Մենք պարտավոր ենք ենթարկվել ու հնազանդվել լուսանց բացառության ամեն մի թագավորի, քանզի նա ունի դրա անվիճելի իրավունքը; բայց մենք պետք է հարգենք ու սիրենք միայն նրա առաքինությունները: Ուրեմն եկեք պետությունում կարգ ու կանոնի և հանգըստության համար համբերատար հանդուրժենք նրանց մեջ եղած անարժաններին, եկեք թաքցնենք նրանց արատները, եկեք օգնենք, հավանություն տալով նրանց ամենամանրան ձեռնարկումներին, քանի զեռ նրանց իշխանությունը մեր աջակցության կարիքն ունի: Սակայն հենց որ նրանց հետ մեր փոխհարաբերությունները վերջանում են, չկա ոչ մի հիմք՝ սահմանափակելու արդարության իրավունքներն ու մեր իսկական զգացմունքների արտահայտման ազատությունը, դրանով իսկ բարի հպատակներից խլելով թագավորի (որի թերությունները քաջ հայանի էին նրանց) հավատարիմ ու հարգալից ծառաների նրանց համբավը և սերունդը զրկելով ուսանելի օրինակից: Եվ ով իրեն ցուցաբերած որևէ ուղորմության համար անձնական երախտապարտության զգացմունքից զրդված փառարանում է գովասանքի անարժան թողնվորին, նա, արդարացին հատուցելով նրան մասնավորում, այդ անում է ի վնաս հասարակական արդարամտության: Իրավացի է Տիտոս Կիվիոսը, երբ ասում է, թե միապետի իշխանության տակ մեծացած մարդկանց լեզվի վրա շողոքորթություն է և ճղճիմ կեղծավորություն, յուրաքանչյուրը գովարանում է իր տիրակալին, ինչպիսին էլ նա լինի, վերագրելով նրան մեծագույն արիություն և արքայական վեհություն⁴:

Գուցե և ոմանք կդատապարտեն այն երկու զորականների հանդուգն խիզախությունը, որոնք շվախեցան Ներոնի երեսին ասել այն ամենը, ինչ մտածում էին նրա մասին: Նրանցից մեկը, Ներոնի այն հարցին, թե ինչու է նա իրեն՝ Ներոնին, շարիք կամենում, պատասխանեց.

«Ու՛ հավատարիմ էի և միրում էի քեզ, քանի դեռ արժանի էիր դրան, բայց այն բանից հետո, երբ սպանեցիր մորդ, երբ դարձար հրկիզող, խեղկատակ, ձխարշաճների կառապան, ես ատեցի քեզ, քանզի էլ ինչի՞ ևս արժանի»։ Իսկ երկրորդը, երբ ներոնը նրան հարցրեց, թե ինչու էր մտադրվել սպանել իրեն, պատասխանեց. «Որովհետև քո անվերջ շարագործությունները կասեցնելու այլ միջոց չէի տեսնում»⁵։ Սակայն, առողջ բանականության տեր ո՞ր մարդու խելքին կփչեք դատապարտել այդ կայսեր գարշելի ու հրեշավոր աջ ոճրագործությունների անթիվ վկայությունները, որոնք նշավակեցին նրան մահից հետո և կմնան հավերժ։

Ինձ վշտացնում է, որ, լակեղեմոնացիների մոտ՝ ընդունված ապրելակերպի ամբողջ անբասիրությունամբ հանդերձ, մենք գտնում ենք հետևյալ միանգամայն երեսպաշտական ծեսը. թագավորի մահից հետո բոլոր դաշնակիցներն ու հարևանները, բոլոր հելոտները, տղամարդիկ ու կանայք, անկանոն ամբոխ կազմելով, ի նշան վշտի ճանկոտում էին իրենց զեմքերը և բարձր հառաչում ու ողբում, բացականշելով, թե հանդուցյալն (ինչպիսին էլ լինեք իրականում) իրենց թագավորներից ամենալավն էր, այսպիսով, նրանք մեռածի աստիճանին մատուցում էին մի գովասանք, որին իրավամբ արժանի են միայն ծառայությունները և որը պետք է մատուցվի լոկ նրան, ով ունի միանգամայն բացառիկ ծառայություններ, թեկուզ և ամենացածր կոչում ունենա։ Արիստոտելը, որը, թվում է, աշխարհում ոչինչ բաց չի թողել, Սոլոնի այն խոսքերի կապակցությամբ, թե մահից առաջ ոչ ոք չի կարող երջանիկ հորջորջվել, իր առջև հարց է դնում. իսկ կարելի՞ է արդյոք երջանիկ անվանել նրան, ով ապրել ու մեռել է արժանավայել, եթե իր մասին վատ համբավ է թողել և սերունդը թշվառ է⁶։ Քանի դեռ մենք շարժվում ենք, մեր հոգսերն ուղղում ենք այնտեղ, ուր մեզ է հարմար, բայց հենց որ կյանքից հեռանում ենք, այլևս չենք շփվում այն բանի հետ, ինչը գոյություն ունի։ Ուստի, Սոլոնն ավելի իրավացի կլինեք, եթե ասեք, թե մաշղը երբեք երջանիկ չի լինում, քանի որ կարող է երջանիկ լինել սոսկ այն բանից հետո, երբ զազարել է գոյություն ունենալ։

Quisquam

Vix radicitus e vita se tollit, et eicit:

Sed facit esse sui quiddam super in seipso...

Nec remouet satis a proiecto corpore sese, et

Vindicat*.

* Հաղիվ թե որե՛ մեկը կարողանա ինքն իրեն արմատախիլ անել և հեռացնել կյանքից, Առանց դիտակցելու, ամեն ոք Լեթուցում է, թե իրենից որե՛ բան պիտի մնա, 2 Միշել Ամսուր։

Բերտրան Գյու Գեկլենը⁸ մահացավ Օվերնում Պյուիի մոտ գտնվող Խանկան ամրոցի պաշարման ժամանակ: Արդեն նրա մահից հետո անձնատուր եղած պաշարվածներին ստիպեցին ամրոցի բանալիները դնել հանգուցյալի աճյունին: Վենետիկցիների զորքերին հրամանատարող Բարատյումեո դը Ալվիանոն⁹ մահացավ Բրեշիայում, այնտեղ ռազմական գործադուլյունները ղեկավարելիս: Նրա դիակը Վենետիկ փոխադրելու համար հարկավոր էր անցնել թշնամի վերոնացիների հողերով: Վենետիկցիների զորքերի մեծ մասը գտնում էր, որ դրա համար անհրաժեշտ է վերոնացիներից անցաթուղթ խնդրել: Սակայն, Թեոդորո Տրիվուլցիոն¹⁰ առարկեց դրան. նա գերադասեց ուղղակի ուժով ճեղքել անցնել, ինքն իրեն ենթարկելով ճակատամարտերի անակնկալներին: «Վայել չէ,— ասաց,— որ նա, ով կենդանության օրոք երբեք չի վախեցել թշնամիներից, մահից հետո վախենա նրանցից»:

Այստեղ տեղին կլինի հիշել, որ, համաձայն հույների սովորույթների, յուրաքանչյուր ոք, ով դիմում էր թշնամուն, խնդրելով թաղելու համար տալ այս կամ այն մարդու դիակը, կարծես դրանով հրաժարվում էր հաղթողի պատվից և զրկվում տրոֆեյ¹¹ կանգնեցնելու իրավունքից: Հաղթողներ էին համարվում նրանք, ում դիմում էին նման խընդրանքով: Հենց այդ պատճառով Նիկիասը¹² չէր կարող օգտվել կորնթացիների դեմ պատերազմում ձեռք բերած առավելությունից և, ընդհակառակը, Ագեսիլայոսն¹³ ամրապնդեց իր կասկածելի հաղթանակը բեռտացիների նկատմամբ:

Այդ սովորույթները կարող էին տարօրինակ թվալ, եթե մարդկանց միշտ և ամենուր հատուկ շիներ ոչ միայն իրենց մասին հոգսերը տանել երկրային գոյության սահմաններից այն կողմ, այլև, ավելին, հավատալ նաև, որ երկնքի ողորմածությունը բավական հաճախ մեր հետևից գալիս է գերեզման և թափվում նույնիսկ մեր աճյունին: Ասվածը կարելի է հաստատել հին աշխարհից վերցված բազմաթիվ օրինակներով (էլ չեմ խոսում մեր ժամանակվա օրինակների մասին), և ես այդ առթիվ ծավալվելու անհրաժեշտություն չեմ տեսնում: Անգլիայի թագավոր էդուարդ I¹⁴ Շոտլանդիայի թագավոր Ռոբերտի¹⁵ դեմ իր նրկարատև պատերազմների ընթացքում համոզվելով, թե որքան շատ է իր ներկայությունը նպաստում գործերի հաջողությանը (քանզի իր ղեկավարած ամեն բան միշտ հաղթանակով էր ուղեկցվում), մահանալիս իր որդուց հանդիսավոր երզում վերցրեց, որ նա, իր մահից հետո դիակը նփի և,

և նա չի կարող իրեն լիովին բաժանել գետնատարած դիակից և հրաժարվել նրանից⁷ (լատ.):

միսը ոսկորներից անջատելով, թաղի, իսկ ինչ վերաբերում է ոսկորներին, նա որդուն ավանդեց դրանք պահել և, ամեն անգամ շոտլանդացիների դեմ կռվելիս, տանել իր և զորքի հետ, կարծես ճակատագրիոր սնխուսափելիորեն հաղթանակը կասել էր նրա կմախքին:

Յան Ժիժկան¹⁶, որը Ուիլլիֆի¹⁷ մուրուսթյունները պաշտպանելու համար խոսվություն էր բարձրացրել Բոհեմիայում, ցանկություն հայտնեց, որ մահից հետո իրեն մաշկեն և այդ մաշկից պատրաստեն մի լիմբուկ՝ թշնամիների դեմ մարտի կոշեղու համար, նա ենթադրում էր, թե դա կօգնի ամրապնդել համառ պայքարում իր ձեռք բերած առավելությունները: Նույն ձևով որոշ հնդկացիներ, իսպանացիների դեմ կռվի դնալիս, հետները տանում էին իրենց մեռած առաջնորդներից մեկի ոսկորները, հիշելով այն հաջողությունները, որոնք ուղեկցել էին նրան կենդանության օրոք: Նոր աշխարհի մյուս ժողովուրդները¹⁸ նույնպես պատերազմ են տանում ճակատամարտերում մեռած իրենց քաջարի զինվորների աճյունները, որպեսզի դրանք ծառայեն իրրե խիղախության օրինակ և հաղթանակի գրավական:

Մեր առաջին օրինակներում պահպանվում է մեռածների նախկին զործերով նվաճած փառքը միայն, մինչդեռ վերջինները նրանց վերադրում են ավելին՝ մահից հետո նույնպես գործելու հնարավորություն: Անհամեմատ ավելի սքանչելի ու վսեմ է արարքը մեր Բայարդ¹⁹ զորավարի, որը, զգալով, որ չախմախավոր հրացանի կրակոցից մահացու վիրավորվել է, մարտը թողնելու շրջապատի հորդորներին պատասխանեց, թե մեռնելուց առաջ էլ չի ուզում թիկունք ցույց տալ թշնամուն, և շարունակում էր կռվել մինչև ուժասպառ լինելը. զգալով, որ կորցնում է դիտակցությունը և չի կարող թամբի վրա մնալ, ծառային հրամայեց իրեն տեղավորել ծառի տակ, բայց այնպես, որ կարողանար մեռնել գեմքը գեպի ոսոխը. այդպես էլ վախճանվեց:

Ինձ թվում է, անհրաժեշտ է այստեղ ավելացնել նաև հետևյալ օրինակը, որն այդ առումով նախորդներից ավելի ուշագրավ է: Մաքսիմիլիան կայսրը՝ ներկայումս թագավորող Ֆիլիպի²⁰ նախապապը, բազում տրժանիքներ, այդ թվում նաև արտասովոր գեղեցիկ կազմվածք ունեցող տիրակալ է եղել: Բայց այդ հատկանիշների հետ մեկտեղ նա ունեցել է ևս մեկը, որ բնավ հատուկ չէ թագավորներին, որոնք կարևորագույն սյուտական գործերն արագ վերջացնելու համար երբեմն իրենց գուզարանի նստոցը վերածում են գահի. նա ոչ ոքի, նույնիսկ ամենամոտ ծառային թույլ չէր տալիս, որ իրեն տեսնեն կարիքի ժամանակ: Նա միշտ միզում էր թաքուն տեղում և, լինելով կույսի պես ամոթխած, ոչ

բծիշկաների, ոչ սրևէ մեկի մտ չէր քացում, մարմնի այն մասերը, որ
ընդունված է ծածկել: Քնշ վերաբերում է ինձ, ապա, ունենալով ոչ մի
բանից՝ շամաչող լեզու, այնուամենայնիվ, նույնպես ի ծնե ամաչկոտ եմ
նման բաներում: Եթե չկա ծայրահեղ անհրաժեշտություն, և չի դրդում
սիրո վայելքը, ես երբեք ինձ թույլ չեմ տալիս անհամեստ արարքներ
և ոչ որի առաջ չեմ մերկացնում այն, ինչը սովորաբար պետք է ծածկ-
ված լինի: Ես տառապում եմ ամոթխածությամբ, և ըստ որում, իմ կար-
ծիքով, ավելի, քան վայել է տղամարդուն, առավել ևս իմ դիրքի տղա-
մարդուն: Բայց Մաքսիմիլիան կայսրն այնքան գերի էր այդ նախապա-
շարմանը, որ իր կտակում հատուկ կանխապայման դրեց, որպեսզի մա-
հանալուց հետո իբեն վաբտիք հազցնեն, և հատուկ հավելումով լրաց-
րեց, թե իր դիակի հետ այդ բանն անողի աչքերը պետք է կապված լի-
նեն, Եթե կյուրոսն²⁾ իր երեխաներին պատգամել էր, որ ոչ նրանք, ոչ
ուրիշ սրևէ մեկը ոչ մի անգամ չնայելին և ձեռք շտային իր դիակին, կրր
հոգին դուրս կթռչեր մարմնից, ապա ես հակված եմ դրա րացատրու-
թյունը փնտրել ինչ-որ կրոնական հավատալիքներում, չէ որ և՛ նրա
պատմագիրը, և՛ ինքը, բացի այլ արժանիքներից, աչքի էին ընկնում
նաև նրանով, որ իրենց ամբողջ կյանքի ընթացքում կրոնական ծեսերի
նկատմամբ եռանդ ու հարգանք էին արձատավորում:

Ինձ բնավ դուր չի գալիս մի տոհմիկ աստիճանավորից լսած հե-
տևյալ պատմությունն իմ յուրայիններից մեկի մասին, որը րարի համ-
բավ է թողել ին խաղաղ ժամանակ, թե պատերազմի ասպարեզում: Զա-
ռամյալ հառաչում մեռնելով իր տանը և կրելով քարախտի անտանելի
ցավերը, նա կյանքի վերջին ժամերին մխիթարվում էր մշակելով իր
թաղման արարողության ամենաչնչին մանրուքները, ըստ որում իրեն
այցելող պաշտաականներին ստիպում էր երդվել, որ կմասնակցեն թաղ-
ման թափորին: Իր մահից առաջ տեսնելով թագավորին, նա թախան-
ձաղին ինդրանքով դիմեց անգամ նրան, որպեսզի մերձավորներին հրա-
մաչի՝ գալ հուղարկավորությանը, հիմնավորելով իր ինդիրքը րազմա-
թիվ նկատառումներով և օրինակներով, որոնք հաստատում էին, թե իր
դիրքի մարդն ունի դրա անվիճելի իրավունքը. նա, հավանաբար, մա-
հացավ հանգստացած ու զոհ, քանզի հասցրեց թագավորից կորզել այդ-
քան ցանկալի խոստումը և իր հայեցողությամբ տնօրինել սեփական
թաղման կարգն ու արարողությունը: Նման համառ ու՛ մեծ սնափառու-
թյան ես դեռ երբեք չեմ հանդիպել:

Ահա միանգամայն հակառակ բնույթի ևս մի տարօրինակություն,
որի օրինակները նույնպես կգտնվեն իմ ցեղում, այն ինձ թվում է վերը
հիշատակածի հար և նմանը: Այս տարօրինակությունը նույնպես սեփա-

կան թաղման ու թափորի մասին հոգան է, ըստ որում զրսևորելով բացառիկ, նման ղևաքերում բոլորովին շքնդունված խնայողություն, սահմանափակելով իրեն միայն մեկ ծառայով ու մեկ լապտերով: Ես գիտեմ, որ շատերը գովում են նման համեստությունը և, մասնավորապես, հավանություն են տալիս Մարկոս էմիլիոս Լեպիդոսի²² վերջին ցանկությունը, որը ծառանգներին արգելեց իր մահից հետո սովորական արարողություններ կազմակերպել: Սակայն, մի՞թե շափավորությունն ու ժուժկալությունը միայն նրանում են, որ խուսափենք շոայությունից ու ավելորդությունից, երբ դրանք արդեն չեն կարող մեզ օգուտ և հաճույք պատճառել: Հիրավի, ահա ինքնակատարելագործման հեշտ ու էժան մի միջոց: Եթե պահանջվեր մահից առաջ կարգադրություններ թողնել այդ առթիվ, ապա, կարծում եմ, այստեղ էլ, ինչպես ամեն մի կենցաղային գործում, յուրաքանչյուրը պետք է հաշվի նստեր իր քսակի հնարավորությունների հետ: Եվ փիլիսոփա Լիկոնասը²³ վարվեց միանգամայն իմաստուն, բարեկամներին պատվիրելով իր մարմինը հողին հանձնել այնտեղ, ուր նրանք կհամարեն ամենալավը, իսկ ինչ վերաբերում է հուղարկավորությանը, ապա նա կտակեց, որ այն շպետք է լինի ոչ շափազանց ճոխ, ոչ շափազանց խղճուկ: Անձամբ ես սովորություն եմ թողնում սահմանելու թաղման ժեսի կարգը և հաճույքով իմ մեռած մարմինը կհանձնեմ այն մարդկանց բարի հայեցողությանը (ովքեր էլ լինեն), որոնք ստանձնելու են այդ հոգսը. Totus hic locus est contentendus in nobis, non negligendus in nostris*.

Սրբերից մեկը նույնպես մի սուրբ ճշմարտություն է ասել. Curatio funeris, condicio sepulturae, pompa exsequiarum, magis sunt vivorum solatia quam subsidia mortuorum**.

Ահա թե ինչու, երբ Կրիստոնը Սոկրատեսի կյանքի վերջին ակնթարթներին հարցրեց, թե ինչպես կկամենա թաղվել, նա պատասխանեց. «Ինչպես դուք կկամենաք»: Եթե ես իմ ապագայի հոգսերն այդքան հեռուն տանեի, ինձ համար ավելի գայթակղիչ կհամարեի նմանվել նրանց, ովքեր, շարունակելով ապրել ու շնչել, իրենց սիրտը շոյում են հուղարկա-

* Մենք պետք է արհամարհանքով նայենք այդ բոլոր հոգսերին, երբ գործը վերաբերում է մեզ, սակայն շպետք է դանցառենք դրանք մեր մերձավորների վերաբերմամբ²⁴ (լատ.):

** Թաղման հոգսերը, շկիւմ սարքելը, հուղարկավորման ճոխությունը՝ այս ամենն ավելի շուտ մխիթարություն են կենդանի մնացածների համար, քան մեռածների վիճակի թերևայում²⁵ (լատ.):

վորության և թաղման ծեսերի ճոխության մտքերով և հաճույք են զգում, մարմարացած տեսնելով իրենց անկենդան դիմագծերը: Երջանիկ է նա, ով կարողանում է սփոփել ու շոյել իր զգացմունքները նրանով, ինչն անզգա է, ով կարողանում է ապրել իր սեփական մահով:

Ես ժողովրդական կառավարման նկատմամբ համակվում եմ ատելությամբ (թեև կառավարման հենց այդ ձևն է ինձ թվում առավել բնականն ու արդարը), երբ հիշում եմ անմարդկային կամայականությունն աթենացիների, որոնք, շուգենալով նույնիսկ արդարացումներ լսել, անզթորեն մահապատժի ենթարկեցին իրենց խիզախ զորապետներին, որոնք հենց նոր էին Արգինուսյան կղզիների մոտ լակեդեմոնացիներին հաղթել ծովում երբևէ հույների տված ամենանշանավոր, ամենակատաղի ճակատամարտում²⁶: Նրանց մահապատժի ենթարկեցին սոսկ այն բանի համար, որ, թշնամուն հաղթելով, օգտվել էին հաղթանակի ընձեռած հնարավորություններից, և չէին մնացել հավաքելու ու հողին հանձնելու իրենց սպանված համաքաղաքացիների մարմինները: Այդ հաշվեհարդարն ինձ հատկապես նողկալի է թվում, երբ հիշում եմ Դիոմեդոնասին՝ մահվան դատապարտվածներից մեկին, հիանալի գինվորական քաջության և քաղաքացիական առաքինությունների տեր մի մարդու: Մեղադրական դատավճիռը լսելուց հետո նա առաջ եկավ, որ խոսք ասի, ու, թեև նրան սուսչին անգամ էին թույլ տվել անարգել խոսելու ժողովրդի առջև, դրանից օգտվեց ոչ թե ինքնապաշտպանության և դատավորների այդքան դաժան որոշման ակնհայտ անարդարացիությունը ցույց տալու համար, այլ որպեսզի արտահայտի իր մտահոգությունն այդ դատավորներին սպասող ճակատագրի առթիվ. նա դիմեց ասավածներին, աղերսելով չպատժել նրանց այդ դատավճռի համար և, վախենալով, թե ասավածները կզայրանան այն բանի համար, որ ինքն ու իր ընկերները չեն կատարել ի նշանավորումն այդ փայլուն հաղթանակի տված երդումները, հայտնեց իր դատավորներին, թե որոնք են դրանք: Այլևս մի խոսք անգամ չասելով, ոչինչ չվիճարկելով և ոչինչ չխնդրելով, նա արխարար, հաստատուն քայլվածքով ուղղվեց դեպի մահապատժի տեղը: Սակայն մի քանի տարի հետո, նման հանգամանքներում, ճակատագիրը վրեժ լուծեց աթենացիներից: Աթենական նավատորմի գլխավոր հրամանատար Հաբրիասը, նաքսոս կղզու մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթելով սպարտացիների ծովային ուժերը գլխավորող Պոլլիսին, ձեռքից բաց թողեց աթենացիների համար այնքան էական այդ անվիճելի հաղթանակի առավելությունները միայն նրա համար, որ վախեցավ, թե ինքն էլ կարժանանա նախորդների տխուր ճակատագրին: Եվ իր սպանված մի քանի բարեկամների դիակները ծովում

չկորցնելու համար, թույլ տվեց դուրս պրծնել բազմաթիվ ողջ ու անձ վնաս թշնամիների, որոնք հետագայում ստիպեցին թանկ գնով վճարել այդ անհեթեթ նախապաշարման դիմաց:

Quaeris quo iaceas post obitum loeo?
Quo non nata iacent*.

Մեկ ուրիշ բանաստեղծ նույնպես անշունչ մարմինն օժտում է ոչ մի բանով չխախտվող հանգստի զղացողությամբ.

Neque sepulcrum, quo recipiatur, habeat portum corporis.
Ubi, remissa humana vita, corpus requiescat a malis**.

Գլուխ IV

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀՈԳՈՒ ԿՐՔԵՐԸ ԹԱՓՎՈՒՄ ԵՆ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎՐԱ, ԵՐԲ ՊԱԿԱՍՈՒՄ ԵՆ ԻՍԿԱԿԱՆՆԵՐԸ

Մեր ազնվականներից մեկը, որին տանջում էին հողատուալի սուր նոպաները, երբ բժիշկները համոզում էին հրաժարվել ազը դրած մտով կերակուրներից, սովորութուն ունեւ սրամիտ պատասխանելու, թե տանջանքների ու ցավերի թունդ պահին ուզում է ձեռքի տակ ունենալ մի բան, որի վրա թափեր իր զայրույթը, և թե, հայհոյելով ու անիծելով մերթ երշիկը, մերթ եզան լեզուն կամ ապխտած ազդրը, նա թեթևութուն է զգում դրանից: Բայց արդարև, այնպես, ինչպես մենք սրտնեղում ենք, եթե, հարվածելու համար ձեռք բարձրացնելով, շենք խփում այն սոսորկային, որին նշան էինք բռնել, և մեր ջանքերը զուր են կորչում, կամ, ասենք, որպեսզի այս կամ այն բնապատկերը հայացք շոյի, չպետք է անսահման հեռու գնա, այլ պատշաճ հեռավորության վրա պիտի ունենա իրեն հենարան ծառայող մի որևէ սահման.

Ventus ut amittit vires, nisi robore densae
Occurant silvae, spatio diffusus inani***.

* Դու հարցնում ես, թե որտե՞ղ պիտի հանգչես մահից հետո: Այնտեղ, ուր հանգչում են տակավին շնվածները²⁷ (լատ.):

** Թող նա չդառնի այն գերեզմանը, որն ընդունելու է իրեն, մեռած մարմնի այն հանգրվանը, ուր մարմինը կարողանալու է հանգստանալ ձախորդություններից, երբ մորդու կյանքը վերջացած է²⁸ (լատ.):

*** Եվ ինչպես քամին, ցրվելով ամառի տարածքում, կորցնում է ուժը, եթե խիտ անտառները չեն խոչընդոտում նրան¹ (լատ.):

այդպես էլ ինձ թվում է, ցնցված ու հուզված հոգին անպտուղ խորասուզվում է ինքն իր մեջ, եթե նրան չզբաղեցնես որևէ արտաքին բանով. հարկավոր է անընդհատ նրան տրամադրել առարկաներ, որոնք կարողանային դառնալ նրա ձգտումների նպատակակետը և ուղղություն տալ նրա գործունեությանը: Պլուտարքոսը շնիկների ու փոքրիկ կապիկների նկատմամբ չափազանց քնքուշ զգացմունքներ տածող մարդկանց մասին ասում է, թե մեզանում գոյություն ունեցող սիրո պահանջմունքը, բնական ելք չգտնելով, ստեղծում է հնարովի ու անմիտ կապվածություններ, միայն թե պարապությունից շխամբի², Եվ մենք իսկապես տեսնում ենք, որ կրքերից ճնշվող հոգին, պարապ մնալու փոխարեն, գերադասում է գայթակղվել մտացածին բաներով, ստեղծելով սուտ ու անհեթեթ պատկերացումներ, որոնց երբեմն ինքն էլ չի հավատում: Ահա թե ինչու, վայրի գազանները կատաղությունից հարձակվում են իրենց վերք հասցրած զենքի կամ քարի վրա, կամ, սեփական ատամներով իրենց բղկտելով, փորձում են վրեժ առնել իրենց տանջող ցավից:

Pannonis haud aliter post ictum saevior ursa,
 Cum iaculum parva Libys amentavit habena
 Se rotat in vulnus, telumque irata receptum
 Impetit, et secum fugientem circuit hastam*.

Ի՞նչ պատճառներ ասես, որ չենք հորինում մեղ պատահող այս կամ այն դժբախտությունը բացատրելու համար: Ինչին ասես, որ չենք կառչում (հիմք ունենալով կամ առանց որևէ հիմքի), միայն թե խժբժանքի առիթ գտնենք: Մահաբեր արճիճը սիրելի եղբորդ բաժինն են դարձրել ոչ այդ խարտյաչ զանգուրները, որ պոկում ես գլխիցդ, և ոչ այդ ճերմակ կուրծքը, որին հուսահատության մեջ այդպես անողոքբարբար խփում ես, սպառճառներն ուրիշ տեղ փնտրիր: Լիվիոսը, պատմելով Իսպանիայում երկու փառապանձ եղբայրների՝ իր զորավարների մահվան սուժիով հոռմեական դորքի վիշտը⁴, ավելացնում է. *Flere omnes repente et offensare capite** *:

Այդպիսին է ընդհանուր տարածում գտած սովորույթը: Եվ միթե սրամիտ չի ասել փիլիսոփա Բիոնն այն թագավորի մասին, որը հուսահատությունից մաղերն էր պոկում. «Այս մարդը, կարծես, մտածում է, թե

* Այդպես պաննոնիական արջը, կատաղելով կարճ կաշեփոկի օգնությամբ լիբիացու նետած նիզակի հարվածից, թեքվում է դեպի վերքը, գազազած ձգտում բռնել մխրճված տեղը և դալար-գալար է լինում կոթի շուրջը, որը փախչում է իր հետ³ (լատ.):

** Եոյորն անմիջապես սկսեցին ողբալ ու իրենց զլխներին տալ⁵ (լատ.):

ճաղատութիւնը կթեթեացնի իր վիշտը»⁶: Մեզանից ո՞վ չի տեսել, թե ինչպես են ժամում ու կուլ տալիս խաղաթղթերը, կծոտում զառը, որ գոնե մի քանից հանեն իրենց տանուլ տվածի վրեժը: Քսերքսեսը հրամայեց մտրակել Հելլեսպոնտոս⁷ ծովը և այն շղթայակապ անել, նա հայհոյանքները թափեց նրա վրա և Աթոս լեռանը մարտահրավեր նետեց: Կյուրոսը մի քանի օր պահեց ամբողջ զորքը, որ վրեժ լուծի Ինդոս գետից, մյուս ամիս անցնելիս ապրած երկյուղի համար: Կալիգուլան⁸ հրամայեց հիմնահատակ անել բոլոր առումներով հիանալի այն տունը, սրտեղ նրա մայրը դառնութիւններ էր կրել:

Երիտասարդ ժամանակ ես լսել եմ հարեան մի երկրի թագավորի մտախն, որը, աստծուց փառավոր քոթակ ուտելով, երդվել էր վրեժ առնել, նա հրամայել էր, որ իր երկրում տասը տարի շարունակ չաղոթեն, չհիշեն աստծուն և, քանի դեռ իշխանութիւնն այդ թագավորի ձեռքում է, նույնիսկ չհավատան նրան: Այս պատմութեամբ ընդգրծվում էր ոչ այնքան անմտութիւնը, որքան պարծենկոտութիւնն այն ժողովրդի, որի մասին խոսվում էր, այս երկու արատները կապված են տնքակտելի կապերով, սակայն, ճիշտն ասած, նման արարքներում գրսեորվում է ավելի շատ ամբարտաւանութիւն, քան հիմարութիւն:

Օգոստոս⁹ կայսրը, ծովում սաստիկ փոթորիկի մեջ ընկնելով, վայրացավ նեպտուն աստծո վրա, և նրանից վրեժ առնելու համար, կրկնում տոնական խաղերի ժամանակ հրամայեց հեռացնել նրա արևանը, որ կանգնած էր մյուս առավածների շարքում: Այստեղ նրան կարելի է ներել ավելի քիչ, քան բոլոր նախորդներին, և այնուամենայնիվ Սյուսանոսի այս արարքն ավելի ներելի է, քան այն, ինչ տեղի ունեցավ Հեռագայում: Երբ նրան հասավ իր հրամանատար Քվինտիլիոս Վարոսի Կերմանիայում կրած սլարտութեան լուրը, նա զայրույթից ու հուսահատութիւնից սկսեց զուխը պատին խփել, շարունակ բղավելով նույն բանը. «Յ՛, Վարոս, հեա տուր ինձ իմ լեզիոնները»¹⁰: Բայց առավել խենթութեան են հասնում (չէ որ այստեղ խառնվում է նաև սրբապղծութիւնը) նրանք, ովքեր դիմում են անմիջապես աստծուն կամ ճակատագրին, կարծես այն կարող է լսել մեր բառային համազարկը, նրանք այստեղ նմանվում են թրակիացիներին, որոնք կայծակի փայլատակման կամ ամպի ղղբգոցի ժամանակ կատաղի պայքարի են բռնվում երկնքի հետ, ձգտելով նետերի տարափ տեղալով խելքի բերել ամենի աստծուն: Եվ, ինչպես Պլուտարքոսի մոտ ասում է հին բանաստեղծը.

Սրբ՝ զայրացած՝ բախող ես փնտվում,
Կուր հրանով լոկ՝ օդն ես փնդացնում¹¹.

Սակայն, մենք հրքեք շենք վերջացնի, եթե կամենանք մարդկային անկասկածի մասին ասել այն ամենը, ինչ կարելի է:

Գլուխ V

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝ ԱՐԴՅՈՔ ՊԱՇԱՐՎԱԾ ԱՄՐՈՑԻ ՊԱՐԵՏԸ ԴՈՒՐՍ ԳԱԼ ԱՅՆՏԵՂԻՑ՝ ՀԱՎԱՌԱԿՈՐԴԻ ՆԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ

Մակեդոնիայի թագավոր Պերսեոսի դեմ պատերազմի ժամանակ հռոմեական լեգատ Լուցիոս Մարցիոսը, ձգտելով իր կործանարար մարտական պատրաստության բերելու համար ժամանակ շահել, խաղաղ բանակցություններ ձեռնարկեց, և խաբված թագավորը մի քանի օրով զինադադար կնքեց, թշնամուն հնարավորություն ու ժամանակ տալով զինվելու ու նախապատրաստվելու, և դա հասցրեց Պերսեոսի վերջնական ջախջախմանը¹: Բայց եղավ այնպես, որ իրենց հայրերի բարքերը տակավին հիշող ծեր սենատորները դատապարտեցին Մարցիոսի գործողություններն իբրև հակասող այն հին օրենքներին, որոնք, նրանց ասելով, պահանջում էին հաղթել քաջությամբ, այլ ոչ թե խորամանկությամբ, ոչ թե դարանակալություններով ու գիշերային գոտեմարտերով, ոչ թե կեղծ փախուստով և հակառակորդին անսպասելի հարված հասցնելով, ոչ թե առանց հայտարարելու պատերազմ սկսելով, այլ ընդհակառակը, հաճախ նախապես հաղորդելով առաջիկա ճակատամարտի ժամն ու տեղը: Ելնելով այս բանից, նրանք Պյուտոսի ձեռքը հանձնեցին իր բռնկին, օրը մտադրվել էր դավաճանել նրան², իսկ փալիսկեն-րի³ ձեռքը հանձնեցին իրենց շարամիտ ուսուցչին: Սրանք իսկական հռոմեական կանոններ էին, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին ճարակորեն դուրս պրծնելու հունական հնարամտության և պոնիկյան ուխտագրծության հետ, այդ ժողովուրդները գտնում էին, թե նվազ փառք ու պատիվ է ուժով, այլ ոչ թե խորամանկությամբ ու հնարանքներով հաղթելը: Այդ սենատորների կարծիքով, խաբելությունը կարող է հաջողությամբ պսակվել առանձին դեպքերում, սակայն իրեն պարտված է ճանաչում լուրջ նա, ով վստահ է, որ իրեն հաղթել են ոչ թե խորամանկությամբ, ոչ թե պատահական հանդամանքների բերումով, այլ զինվորական քաջությամբ, դեմ առ դեմ անմիջական գոտեմարտում, այն պատերազմում, որն ընթացել է համաձայն սահմանված օրենքների և ընդունված կանոնների պահպանմամբ: Այդ հիանալի մարզկանց խոս-

Վրեց պարզորոշ երևում է, որ նրանց դեռևս հայտնի չէր հետևյալ դեր-
ուսուս առույթը.

dolus an virtus quis in hoste requirat?*

Պոլիբիոսը պատմում է, թե աքայացիներն արհամարհում էին խա-
րեաթյունը և պատերազմում երբեք դրան չէին դիմում, նրանք հաղթա-
նակի գնահատում էին լուրջ և ծամանակ, երբ իրենց հաջողվում էր
կոտորել թշնամու արիությունն ու դիմադրությունը⁴: Eam vir sanctus et sa-
piens sciet veram esse victoriam, quae salva fide et integra dignitate parabitur**,
պատմում է մեկ ուրիշ հռոմեացի հեղինակ:

Vos ne velit an me regnare hera quidve ferat fors
Virtute-experiamur***.

Տերնատեի⁷ թագավորությունում, որը մենք հանդիստ սրտով բար-
բորասական ենք անվանում, համընդհանուր սովորույթներն արգելում
են պատերազմել առանց նախապես հայտարարելու և առանց թշնամուն
հարգելու այդ պատերազմում կիրառվելիք բոլոր ուժերի ու միջոցների
մասին, այսինքն, թե որքան զինվոր ունես, ինչպիսին է նրանց հանդեր-
ձանը, պաշտպանողական ու հարձակողական զենքը: Սակայն, եթե,
չնայելով դրան, թշնամին չի զիջում և վեճի խաղաղ լուծման չի դիմում,
նրանք ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում և ենթադրում են, որ այդ
զիպրում ոչ ոք իրավունք չունի իրենց մեղադրել դավաճանություն, ուխ-
տադրժություն, խորամանկության և այն ամենի մեջ, ինչը հեշտ հաղ-
թանակ ապահովելու միջոց կարող էր ծառայել:

Ֆյուրենտացիները վաղ անցյալում այնքան հեռու էին հանկարծա-
կե հարձակումով թշնամու նկատմամբ առավելության հասնելու ցանկու-
թյունից, որ մի ամիս առաջ նախազգուշացնում էին իրենց զորքի շարժ-
ման մասին, խփելով մեծ զանգը, որի անունը դրել էին Մարտինելյա:

Ինչ վերաբերում է մեզ, որ այդ հարցում անհամեմատ ավելի քիչ
բժախնորհի ենք, մեզ, որ համարում ենք, թե պատերազմից օգուտ քա-

* Միևնույնը չէ՝ արդյոք՝ խորամանկությամբ ես թշնամուն հաղթել, թե քաջու-
թյամբ³ (լատ.):

** Բարեպաշտ ու իմաստուն այրն իսկական կհամարի՝ լուրջ այն հաղթանակը, որ
էլ իրեն անբասիր ազնվությունն ու անբիժ արժանապատվությունը⁵ (լատ.):

*** Ուրեմն, քաջությամբ փորձենք՝ ամենակարող ճակատագրի նախասահմանմամբ
ես պիտի տիրեմ, թե դու, փորձենք, թե ինչ է այն բերում⁶ (լատ.):

դողն արժանի է նաև փառքի, մեզ, որ Հիսանդրոսի հետևից կրկնում ենք, թե այնտեղ, ուր պակասում է առյուծի մորթին, հարկավոր է մի կտոր աղվեսների կպցնել, ապա մեր հայացքները բնավ չեն դատապարտում թշնամու վրա հանկարծակի հարձակվելու ընդունված ձևերը: Եվ չկա մի ժամ, ասում ենք մենք, երբ զորապետին հարկ լինի ավելի զգոն լինել, քան բանակցությունների վարելու կամ հաշտություն կեփելու ժամին: Ուստի, այժմյան ամեն մի զինվորի համար անխախտ է այն կանոնը, համաձայն որի պաշարված ամրոցի պարետը ոչ մի պարագայում չպետք է դուրս գա այնտեղից՝ թշնամու հետ բանակցելու: Մեր հայրերի ժամանակներում այդ կանոնը խախտելու համար պախարակում էին պարոնայք զը Մոնմորին և զը Լ'Ասինյիին, որոնք պաշտպանում էին Մուզոնը Նասաուի կոմսից:

Իայց լինում է նաև, որ այդ կանոնի խախտումն ունենում է իր արդարացումը: Այսպես, օրինակ, դա ներելի է նրան, ով ամրոցից դուրս է գալիս, ապահովելով իր անվտանգությունն ու առավելությունը, ինչպես արեց կոմս Գվիդո դի Ռանգոնեն (եթե իրավացի է Դյու Բելլեն, քանզի, Գվիլլարդինիի ասելով, դա հենց նա է եղել) Ռեչո⁹ քաղաքում, երբ բանակցություններ վարելու համար հանդիպեց պարոն զը Լ'էկյուփն: Նա ամրոցի պարիսպներին այնքան մոտ կանգնեց, որ, երբ բանակցությունների ժամանակ վեճ բռնկվեց և հակառակորդները զենքի դիմեցին, պարոն զը Լ'էկյուն և նրա հետ եկածները ոչ միայն ավելի թույլ կողմ էին (չէ որ հենց այդ ժամանակ սպանվեց Ալեսանդրո Տրիվուլցիոն), այլև հենց պարոն զը Լ'էկյուն ստիպված եղավ, վստահելով կոմսի խոսքին, մտնել նրա հետ ամրոց՝ թաքնվելու սպառնացող վտանգից:

Անտիգոնոսը, Նորա քաղաքում պաշարելով էվմենոսին¹⁰, համառորեն առաջարկում էր նրան դուրս գալ ամրոցից՝ բանակցություններ վարելու: Հօգուտ իր առաջարկության տարբեր փաստարկների թվում նա բերեց նաև հետևյալը. թե իբր, էվմենոսը պետք է նրա առաջ կանգնի, որովհետև ինքը՝ Անտիգոնոսն ավելի մեծ ու զորեղ է, որին էվմենոսը տվեց հետևյալ արժանի պատասխանը. «Քանի դեռ սուրը ձեռքիս է, չկա մեկը, որին ինձանից բարձր դասեմ»: Եվ նա Անտիգոնոսի առաջարկությանը համաձայնեց ոչ ավելի շուտ, քան վերջինս, զիջելով նրա պահանջներին, որպես պատանդ տվեց իր զարմիկին՝ Պաղոմենոսին:

Սակայն, լինում են նաև զորապետներ, որոնք հիմք ունեն մտածելու, թե իրենք ճիշտ են վարվել, վստահելով պաշարողների խոսքին և դուրս գալով ամրոցից: Որպես օրինակ կարելի է բերել Անրի զը Վոյի՝ շամպայնցի այն ասպետի պատմությունը, որին պաշարել էին անգլիա-

յինները Կոմմերօի ամբողջում: Պաշարողների հրամանատար Բերտելիմի
դր Բոններ այդ ամբողջի պարիսպների մեծ մասի տակ ականներ էր փո-
րել, այնպես որ պաշարվածներին փլատակների տակ թաղելու համար
մնում էր միայն կրակը մոտեցնել բռնկիչին, դրանից հետո վերահիշյալ
Աներին առաջարկեց դուրս գալ ամբողջից և բանակցություններ սկսել,
համոզելով, թե դա նրա օգտին է, և որպես ապացույց հայտնելով իր
դազանիքը: Այն բանից հետո, երբ ասպետ Աներին անձամբ համոզվեց,
որ իրեն անխուսափելի կործանում է սպասում, թշնամու նկատմամբ
համակվեց խորին երախտագիտությամբ և իր բոլոր զինվորների հետ
միասին հանձնվեց հաղթողի ողորմածությանը: Փորված ականները պայ-
թեցվեցին, փայտե հենարանները գետին տապալվեցին, ամբողջը հիմնա-
խիլ արվեց:

Ես հակված եմ վստահելու մարդկանց, բայց ես մեծ դժկամությամբ
գտ կդրսևորեի բուրբի առջև, եթե իմ վարմունքը որևէ մեկին առիթ տար
մտածելու, թե դրան ինձ մղում են հուսահատությունն ու փոքրոգու-
թյունը, այլ ոչ թե ուղղամտությունն ու հավատը մարդկային ազնվու-
թյան նկատմամբ:

Գլուխ VI

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԺԱՍ Է

Պեսք է ասեմ, որ վերջերս, հարևանությամբ գտնվող Մյուսիդան¹
բաղաբում ես հետևում էի, թե ինչպես մեր բանակի ուժերով այնտեղից
գուրս շարտվածներն ու նրանց կողմնակիցները գանգատվում էին դավա-
նանությունից, քանզի բանակցությունների ժամանակ, պայմանավոր-
վելով զինադադարի մասին, նրանք ենթարկվել էին հանկարծակի հար-
ձակման և զլխովին ջախջախվել: Ուրիշ դարաշրջանում նման գանգա-
տը, թերևս, կարող էր կարեկցանք հարուցել: Սակայն, ինչպես վերը
ասացի, մեր սովորույթներն անցած ժամանակների կանոնների հետ
այլևս ոչ մի բնդհանուր բան չունեն: Ահա թե ինչու չի կարելի վստահել
միմյանց, քանի դեռ պայմանագիրը չի հաստատվել վերջին կնիքով,
իսկ դրա առկայությամբ էլ ինչե՞ր ասես որ չեն պատահում:

Սակայն, երբեք հնարավոր չէ վստահորեն հուսալ, թե հաղթական
գորքը կպահպանի այն պարտավորությունները, որ հաղթողը շնորհել
է համեմատաբար մեղմ ու զիջողամիտ պայմաններով անձնատուր եղած
բաղաբին, որը համաձայնել է ներս թողնել կովից հետո տակավին բոր-
բոբված զինվորներին: Հոռմեական պրետոր Լուցիոս էմիլիոս Ռեզիլտոսը,

ժամանակ կորցնելով փոկեյացիների քաղաքն ուժով վերցնելու ապար-
դյուն փորձերի վրա, քանզի նրա բնակիչները պաշտպանվում էին ապշե-
ցուցիչ խիզախութեամբ, ի վերջո, որոշեց նրանց հետ կնքել հաշտություն,
համաձայն որի նրանց իր ձեռքի տակ էր վերցնում իբրև «հոռմեական
ժողովրդի բարեկամների», և պետք է նրանց քաղաքը մտներ որպես
դաշնակիցների քաղաք: Դրանով նա վերջնականապես փարատեց հաղ-
թողների կողմից որևէ թշնամական գործողության հնարավորության
երկյուղները: Սակայն, երբ նրանք մտան քաղաք (քանզի էմիլիոսը, կա-
մենալով իրեն ցույց տալ ամբողջ շուքով, այնտեղ մտցրեց իր ամբողջ
զորքը), նրանց զսպելու ջանքերն ապարդյուն եղան, և քաղաքի զգալի
մասն ավերվեց նրա աչքի առջև. թալանի ու վրեժի ծարավը հաղթեց
նրա իշխանության նկատմամբ ունեցած հարգանքին ու հնազանդվելու
սովորությանը:

Կլեոմենեսը սովորություն ուներ ասելու, թե, պատերազմի ժամա-
նակ թշնամու նկատմամբ կատարված շարագործություններն ինչպիսին
էլ լինեն, դուրս են գալիս արդարադատության սահմաններից և շեն են-
թարկվում նրա դատավճիռներին՝ դրանց համար շեն դատում ոչ աստ-
վածները, ոչ մարդիկ: Արգիվացիների հետ յոթօրյա զինադադար կրն-
քելով, նա հարձակվեց արդեն երրորդ գիշերը, երբ նրանց ճամբարը
քնած էր, և դաժան պարտության մատնեց, հետագայում վկայակոչելով,
թե հաշտության պայմանագրում գիշերների մասին ոչ մի բան չի եղել:
Սակայն աստվածները նրան պատժեցին այդ հնարամիտ ուխտադրու-
թյան համար:

Կազիլին² քաղաքի բնակիչները, անփութորեն հույս դնելով իրենց
անվտանգությանը, բանակցությունների ժամանակ ենթարկվեցին հան-
կարծակի հարձակման, և դա տեղի ունեցավ բոլոր առումներով հիա-
նալի հոռմեական զորքի արդարագույն ու ազնվագույն զորավարների
օրոք: Արդարև, չէ որ ոչ մի տեղ չի ասված, թե չի կարելի հարկ եղած
տեղը և հարկ եղած ժամին օգտվել թշնամու հիմարությունից, այնպես,
ինչպես մենք օգուտ ենք քաղում նրա վախկոտությունից: Պատերազմը,
բնականաբար, ունի բազում առավելություններ, որոնք պատերազմական
գործողությունների սլայմաններում, հակառակ մեր բանականության,
միանգամայն բանական են. այստեղ շեն պահպանում հետևյալ կանոնը.

neminem id agere, ut ex alterius praedetur inscitia*.

* Ոչ որ չպետք է օգուտ քաղի ուրիշի անխելքությունից³ (լատ.):

Սակայն, ինձ ապշեցնում է այն անսահման աղատութիւնը, որ նըշ-
ված արտոնութիւնների վերաբերյալ թույլ է տալիս մի հեղինակ, ինչ-
պիսին Քսենոփոնն է, և այդ մասին են վկայում նրա իբր կատարյալ
ինքնակալ միապետի թե՛ խոսքերը, թե՛ գործերը, իսկ չէ որ նման հար-
ցերում նա րացառիկ կշիռ ունեցող գրող է, քանզի Սոկրատեսի մեր-
ևսոյն աշակերտներից մեկն է, հռչակավոր զորավար ու փիլիսոփա։ Ես
բնավ ոչ միշտ կարող եմ համաձայնել այդ առարկայի նկատմամբ. իմ
կարծիքով, նրա շափազանց լայն հայացքներին⁴։

Պարոն դ'Օբինյին, պաշարելով Կապուան, այն դաժանորեն ոմբա-
կոծեց, որից հետո քաղաքի պարետ սենյոր Ֆաբրիցիո Կոլոննան, կանդ-
նելով բերդապարսպի աշտարակի վրա, հանձնվելու մասին բանակցու-
թիւններ սկսեց, և, քանի որ նրա զինվորները կորցրել էին զգոնութիւնը,
մերոնք ներխուժեցին ամրոց և քարը քարի վրա շթողին այնտեղ⁵։ Ահա
մեր հիշողության մեջ ավելի թարմ ևս մի դեպք։ Սենյոր Զուլիանո Ռո-
մերոն Իվուայում⁶ մի մեծ վրիպում թույլ տվեց. կոնեսարի հետ բա-
նակցութիւններ վարելու համար նա դուրս եկավ ամրոցից, և ի՞նչ, վե-
րադատնալիս նկատեց, որ թշնամին այն զավթել է։ Ես կպատմեմ էլի մի
իրագարձութեան մասին, ցույց տալու համար, որ երբեմն մենք էլ ենք
փոռս կրել. մարկիզ Պեսկարացին պաշարել էր Զենովան, որտեղ հրա-
մանատար էր մեր հովանավորյալ դուքս Օտտավիանո Ֆրեզոզոն, երկու
գորտայետների միջև բանակցութիւններն ընթանում էին այնքան հա-
ջադ, որ հաշտութիւնն արդեն վճռված հարց էր համարվում։ Սակայն
յրանց ավարտի պահին իսպանացիները թափանցեցին քաղաք և սկսե-
ցին այնտեղ կարգադրութիւններ անել, կարծես իրոք վճռական հաղթա-
նակ էին տարել⁷։ Եվ հետագայում էլ Բառուայում գտնվող կինյի քաղա-
րը, որտեղ հրամանատար էր կոմս դը Բրիենը, իսկ պաշարումը ղեկավա-
րում էր ինքը կայսրը, զավթվեց հենց այն ժամանակ, երբ վերոհիշյալ
կոմսի լիազոր Բերտելլը, դուրս գալով ամրոցից, սկսել էր բանակցել
ակառակորդի ներկայացուցիչների հետ⁸։

Fu il vincer sempre mai laudabil cosa,
Vincasi o per fortuna o per ingegno, — *

այսպէս, համենայն դեպս, ընդունված է ասել։ Սակայն, փիլիսոփա
Էրիսիպոսը¹⁰ չէր բաժանում այդ կարծիքը, ես նույնպէս հեռու եմ այն
միտքի վերջ ճշմարիտ համարելուց։ Նա ասում էր, թե վաղքով մրցող-

⁴ Հալիանակը միշտ արժանի է գովեստի, միեւնոյն է, այն ձեռք է բերվել պատա-
ւարը. Բե շոքհիվ արվեստի⁹ (լատ.)։

ները պետք է գործի դնեն իրենց բոլոր ուժերը, որ առաջ անցնեն ժյուս-
ներից, բայց այդ դեպքում նրանց ամենին չի թույլատրվում ձեռքով
բռնել մրցակցին, որ նա հետ մնա, կամ առաջը ոտք գցել, որ նա վայր
ընկնի:

Առավել ազնիվ է մեծն Ալեքսանդրի պատասխանը Պոլիսպերթոնե-
սին, որը խորհուրդ էր տալիս օգտվել գիշերային խավարից և անսպա-
սելի հարձակվել Դարեհի զորքի վրա: «Գողացված հաղթանակ տանելն
իմ կանոններից դուրս է», — ասաց Ալեքսանդրը: — *Malo me fortunae poe-
niteat, quam victoriae pudeat**.

Atque idem fugientem haud est dignatus Orodem
Sternere, nec iacta caecum dare cuspide vulnus;
Obvius, adversoque occurrit, seque viro vir
Contulit, haud furto mellor, sed fortibus armis**.

Գլուխ VII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵՐ ՄՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԱՐԱՐՔՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ

Ասում են, թե մահը մեզ ազատում է ամեն տեսակ պարտավորու-
թյուններից: Ես գիտեմ, որ այդ խոսքերը մեկնաբանվել են տարբեր
ձևով: Անգլիայի թագավոր Հենրի VII-ը համաձայնագիր կնքեց ղոն
Ֆրիսլանդի՝ Մաքսիմիլիան կայսեր որդու, կամ (նրա անվանն ավելի մեծ
չուք տալու համար) կարլոս V կայսեր հոր հետ, որ վերոհիշյալ Ֆրիսլան
Անգլիայից փախած և նիդեռլանդներում ապաստան գտած դուքս Սա-
ֆոլկին՝ Սպիտակ վարդի կուսակցությունից նրա թշնամուն, կհանձնի
նրան, պայմանով, որ նա՝ Հենրին, պարտավորվում է շսպանել այդ
դքսին: Բայց և այնպես, արդեն մահվան մահճում, նա իր թողած կտա-
կում որդուն հրամայում էր իր մահից հետո անհապաղ սպանել դուքս
Սաֆոլկին¹: Վերջերիս բրյուսելյան ողբերգությունը, որի հեղինակն էր
դուքս Ալբան և հերոսներն էին թշվառ կոմսեր Հորեն ու էզմոնտը, ունի
ուշագրավ շատ բան²: Այսպես, օրինակ, կոմս էզմոնտը, որը համոզել

* Ես դերազատում եմ զանգատվել իմ բախտից, քան ամաչել հաղթանակից¹¹ (լատ.):

** Իսկ այդ նույն (Մեդենցիոսը) արժանավայել չհամարեց խոցել փախչող Օրոդո-
սին և, նետելով նիզակը, հարվածել թիկունքին. նա սլանում է ընդառաջ և, հայտնվե-
լով նրա դիմաց, մարտի բռնվում, ինչպես այլը այրի հետ, դերազանցելով ոչ թե խո-
րամանկությունը, այլ քաջությունը¹² (լատ.):

Էր իր բնկերոջը՝ կոմս Հորնին, անձնատուր լինել դուքս Այքսլին և հա-
վատացրել, թե այդ քայլն անվտանգ է, համառորեն ձգտում էր առաջի-
նը մեռնել. նա ուզում էր, որ մահն իրեն ազատի կոմս Հորնի նկատ-
մամբ ունեցած պարտավորութունից: Սակայն պարզ է, որ պատմած
գեպքերից առաջինում մահը չէր ազատում տրված խոսքից, մինչդեռ
երկրորդում պարտավորութունը շուներ ոչ մի ուժ, անգամ եթե ստանձ-
նողը շմեռներ: Մենք չենք կարող պատասխան տալ այն բաների համար,
որոնք վեր են մեր ուժերից ու հնարավորութուններից: Եվ քանի որ
խոստման հետևանքներն ու նույնիսկ բուն կատարումը դուքս են մեր
կարողութունից, ապա, խիստ ասած, մենք կարող ենք տնօրինել միայն
մեր կամքը և հենց կամքն է մարդկային պարտքի անխուսափելիորեն
միակ հիմքն ու շահանիշը: Ահա թե ինչու կոմս էզմոնտը, որը և՛ հոգով,
և՛ բռնականությամբ հավատարիմ էր իր խոստմանը, թեև շուներ այն
կատարելու ոչ մի հնարավորութուն, անտարակույս կազատվեր իր պար-
տավորութունից, եթե նույնիսկ կոմս Հորնից հետո մեռներ: Սակայն
գիտումնավոր կերպով խոսքը դրժած անգլիական թագավորի անաղնվու-
թյունը ոչ մի արդարացում չի կարող գտնել այն բանում, որ նա դքսի
մահապատիժը հետաձգեց մինչև իր մահը, հավասարապես, ոչ մի ար-
դարացում չկա Հերոդոտոսի մոտ այն քարտաշին, որն, անբասիր ազնու-
վությամբ ամբողջ կյանքում պահելով իր տիրակալի՝ եգիպտական թա-
գավորի գանձերի գաղտնիքը, մեռնելիս այն հայտնեց իր զավակներին³:

Ես իմ կյանքում բավական շատ եմ տեսել մարդիկ, որոնք, թեև
խղճի խայթ էին զգում ուրիշի ունեցվածքը թաքցնելու համար, այնու-
ամենայնիվ, հեշտությամբ հաշտվում էին դրա հետ, հույս ունենալով
իրենց մահից հետո կտակով զոհացնել օրինական տերերին: Այդպիսի
գործնականերպը երբեք չի կարելի արդարացնել. վատ է և՛ այն, որ նրանք
նետաձգում են այդ շտապ գործը, և՛ այն, որ կամենում են իրենց հասց-
րած վնասը հատուցել այդպիսի շնչին ջանքերի գնով, աննշան շահով
գիջելով իրենց շահը: Արդարև, նրանք պետք է կիսեին այն, ինչն իսկա-
պես իրենցն էր: Որքան նրանց համար ծանր լիներ վճարելը, որքան
շատ դժվարութուններ հաղթահարեին այդ առթիվ, այնքան ավելի ար-
դարացի կլիներ նման հատուցումը, այնքան մեծ կլինեին նրանց ծառա-
յությունները: Զղջումը զոհեր է պահանջում:

Ավելի վատ են վարվում նրանք, ովքեր ամբողջ կյանքում ոխ են
պահում իրենց որևէ մերձավորի նկատմամբ, արտահայտելով այն լոկ
վերջին կամքով: Հարուցելով վիրավորված մարդու անբարեհաճութունն
իրենց հիշատակի հանդեպ, նրանք այդպիսով ցույց են տալիս, որ քիչ
են մտածում իրենց պատվի և, ավելի քիչ՝ խղճի մասին, քանզի չեն
3 Միլեյ Մոնտան

ուզում թեկուզև մահը հարգելով մարել իրենց շարությունը և թողնում են, որ այն իրենցից հետո էլ ապրի: Նրանք նման են այն անիրավ դատավորներին, որոնք անվերջ հետաձգում են իրենց վճիռը և կայացնում լոկ այն ժամանակ, երբ արդեն մոռացել են գործի բուն էությունը:

Եթե միայն ինձ հաջողվի, ես կաշխատեմ, որ մահս շասի ոչ մի այնպիսի բան, ինչ նախկինում չի ասել կյանքս:

Գլուխ VIII

ՊԱՐԱՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես անմշակ հողը, եթե այն պարարտ է ու բերրի, ծածկվում է հազարատեսակ մոլաբույսերով ու անպետք խոտերով և, մեր նպատակներին ծառայեցնելու համար անհրաժեշտ է սկզբից մշակել այն և որոշակի սերմեր ցանել, ինչպես կանայք ինքնուրույնաբար կարող են ստեղծել միայն տձև մարմնակույտեր ու գնդիկներ, իսկ որպեսզի առողջ ու ամրակազմ սերունդ տան, նրանց անհրաժեշտ է կողմնակի բեղմնավորում, այդպես է նաև մեր խելքը: Եթե այն շղթաղեցնենք որոշակի զսպող բանով, կսկսի դեսուշե՞լ: Ընկնել երևակայության անծայրածիր դաշտերում.

Sicut aquae tremulum labris ubi lumen ahenis
Sole repercussum, aut radiantis imagine lunae
Omnia pervolitat late loca, iamque sub auras
Ergitur, summique ferit laquearia tocti*.

Եվ ինչ անմտություն, ինչ վառանցանք ասես որ չի ծնի մեր բորբոքված միտքը,

velut aegri somnia, vanae
Finguntur species**.

Կանխապես սահմանված նպատակ չունեցող հոգին իրեն դատապարտում է կործանման, քանզի, ինչպես ասվում է, ով ամեն տեղ է, նա ոչ մի տեղ չէ.

Quisquis ubique habitat, Maxime, nusquam habitat***.

* Ինչպես պղնձե ամանում ալիքվող ջուրը, անզրտդարձելով արևը կամ փայլող լուսրնկան, արձակում է շողեր, որոնք ճախրում են գեսուզեն, թռչում վերև ու դիպչում բարձր առաստաղի զարդաքանդակներին¹ (լատ.):

** Հիվանդի երազների նման, ստեղծվում են անիմատտ պատկերներ² (լատ.):

*** Ով ապրում է ամեն տեղ, Մաքսիմ, նա չի ապրում ոչ մի տեղ³ (լատ.):

Վերջերս առանձնանալով տանը³, ես մտադրվեցի, ինչքան հնարավոր է, շարադվել ոչ մի գործով և միայնակ ու հանգիստ անցկացնել այն կարճ ժամանակը, որ ինձ մնում է ապրելու: Ինձ թվում էր, թե խելքիս համար չկա և չի կարող լինել ավելի մեծ բարերարություն, քան հնարավորություն տալ նրան լիակատար պարապության մեջ զրուցել ինքն իր հետ, կենտրոնանալ ու ամփոփվել ինքն իր մեջ: Ես հույս ունեի, թե հիմա նրա համար հեշտ կլինի հասնել այդ բանին, քանզի տարիների ընթացքում նա դարձել էր ավելի հիմնավոր, ավելի հասուն: Սակայն ես գտնում եմ, որ

variam semper dant otia mentem*

և, ընդհակառակը, իմ միտքը, ազատության մեջ հայտնված ձիու պես, հարյուր անգամ ավելի է աշխատում, քան տուաջ, երբ դա անում էր ուրիշների համար: Եվ, իրոք, իմ միտքը ծնում է խառնիխուռն կուտակվող, բոլորովին անկապ այնքան պատրանքներ ու երևակայական հրեշներ, որ, կամենալով ազատ ժամանակ պարզել, թե որքանով են դրանք տարօրինակ ու անհեթեթ, ես սկսել եմ թղթին հանձնել, հուսալով, որ, դուցե, ժամանակի ընթացքում նա կամաշի իրենից:

Գլուխ IX

ՍՏԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Չկա մի մարդ, որին սազեր ինձանից քիչ խոսել հիշողության մասին: Ախր ես ինձանում դրա հետքն անգամ չեմ գտնում ու չեմ կարծում, թե ամբողջ աշխարհում կա այսպիսի սարսափելի թույլ մեկ այլ հիշողություն: Մյուս բոլոր ունակություններս աննշան են և միանգամայն սովորական: Սակայն այս մեկի առումով ես ինձանից ներկայացնում եմ մի շատ բացառիկ ու հազվագյուտ բան և դրա համար, թերևս, արժանի եմ փառքի ու մեծահռչակ անվան:

Չխոսելով արդեն յուրաքանչյուրին հասկանալի այն անհարմարությունների մասին, որ ես կրում եմ դրանից (չէ որ, ուշադրության առնելով հիշողության կենսական անհրաժեշտությունը, Պլատոնը, բավականաչափ հիմք ունենալով, այն անվանել է մեծ ու հզոր օստովածուհի⁴), մեր կողմերում, երբ կամենում են այս կամ այն մարդու մասին ասել,

* Պարապությունը հողում ծնում է անվստահություն⁵ (լատ.):

Թե բոլորովին խելագուրկ է, ասում են՝ զուրկ է հիշողությունից, և ամեն անգամ, երբ ես սկսում եմ գանգատվել իմ հիշողության պակասից, ինձ նախատում են ու տարհամոզում, կարծես պնդում եմ, թե խելագար եմ: Մարդիկ հիշողության ու մտածելու կարողության միջև տարբերություն չեն տեսնում, և դա զգալիորեն վատթարացնում է իմ դրությունը: Սակայն նրանք իրավացի չեն իմ հանդեպ, քանզի փորձով հաստատված է, որ հիանալի հիշողությունը շատ հաճախ զուգակցվում է կասկածելի մտավոր կարողությունների հետ: Նրանք իրավացի չեն մի ուրիշ առումով ևս. ինձ ոչինչ այնպես չի հաջողվում, ինչպես հավատարիմ բարեկամ լինելը, այնինչ իմ բարբառով երախտամոռությունն արտահայտվում է նույն բառով, որով կոչում են իմ հիվանդությունը: Իմ կապվածության ուժի մասին դատում են իմ հիշողությունից, այդպիսով բնական թերությունը գերաճում է բարոյականի: «Նա մոռացել է կատարել իմ այսինչ խնդրանքը և իր այսինչ խոստումը:— Ասում են այդ դեպքերում:— Նա մոռանում է իր բարեկամներին: Նա չհիշեց, որ իմ սիրույն պետք է ասեր կամ աներ այսինչ բանը և, ընդհակառակը, լռեր այնինչ բանի մասին»: Ես, իրոք, կարող եմ հեշտությամբ մոռանալ այս կամ այն բանը, սակայն զիտակցաբար արհամարհել բարեկամիս հանձնարարությունը՝ ոչ, այդպիսի բան չի լինում: Թող նրանք գոհանան իմ դժբախտությամբ և այն շղարձեն յուրօրինակ նենգություն, որին հակոտնյա է իմ էությունը:

Ես մի բանում այնուամենայնիվ ինձ համար սփոփանք եմ տեսնում: Նախ, իմ այդ թերության մեջ գտնում եմ էական հենարան, պայքարելով մեկ ուրիշ, ավելի վատ թերության՝ փառամոլության դեմ (որը հեշտությամբ կարող էր զարգանալ ինձանում), քանզի դա ուժից վեր բեռ է բարձր խավի կյանքից մեկուսացած մարդու համար: Այնուհետև, ինչպես հուշում են բնության կյանքում եղած նույնանման բազմաթիվ օրինակները, այն ինձանում առատորեն արմատավորել է ուրիշ կարողություններ՝ նույն շափով, որչափ զրկել է վերոհիշյալից: Արդարև, չէ որ ես կարող էի թմբեցնել և ուժասպառ անել իմ միտքն ու խորաթափանցությունը, գնալով հարթված ճանապարհներով, ինչպես դա անում է մի ամբողջ աշխարհ, շմարդելով ու չկատարելագործելով սեփական ուժերս, եթե, լավ հիշողությամբ օժտված, միշտ տեսնեի օտար կարծիքներն ու օտար մտքի արգասիքները: Բացի այդ, դրուցելիս ես սակավախոս եմ, քանզի հիշողության շտեմարանն ավելի տարողունակ է, քան երևակայածին բաներինը: Վերջապես, եթե ես լավ հիշողություն ունենայի, իմ դատարկաբանությամբ կխլացնեի բարեկամներին, քանզի իմ հիշատակած առարկաները կարթնացնեին դրանց վատ կամ լավ տիրապետելու

և տնօրինելու ինձ տրված ընդունակությունը, դրանով իսկ, խթանելով ու բուրբոքելով իմ շատախոսությունը: Իսկ դա իսկական աղետ է: Ես տնձամբ դա փորձել եմ իմ որոշ մերձավոր բարեկամների հետ շփվելիս, իրադարձությունները կամ իրերը բոլոր մանրամասներով և ամբողջ ակնհերևության վերհիշելուն զուգընթաց, նրանք այնքան են երկարացնում իրենց պատմությունը, այնքան են ծանրաբեռնում ոչ մեկին պետք չեկող մանրուքներով, որ, եթե պատմությունն ինքնին լավն է, անպայման սպանում են նրա հմայքը, իսկ եթե վատն է, ապա ձեզ մնում է միայն նզովել կամ նրանց բաժին ընկած Ֆրչանկությունը, այսինքն՝ լավ հիշողությունը, կամ, ընդհակառակը՝ դժբախտությունը, այսինքն՝ մտածելու անկարողությունը: Հիրավի, երբ մարդ ոգևորվում է, դժվարանում է ավարտել կամ ընդհատել իր շաղակրատանքը: Իսկ չէ որ ձիու ուժն իմանալու համար չկա ավելի լավ միջոց, քան ստուգել միանգամից և ստհունորեն կանգ առնելու նրա կարողությունը: Սակայն նույնիսկ գործուրար մարդկանց շրջանում ես ճանաչում եմ այնպիսիներին, որոնք ուզում են, բայց չեն կարողանում զսպել իրենց թափավազքը: Եվ, ջունալով գտնել մի կետ, որ, ի վերջո, դանդաղեցնեն քայլերը, նրանք շարունակում են քաշ գալ երեքալով ու ոտքերը ճոճելով, ինչպես հոգնածությունից ուժասպառ մարդիկ: Այստեղ հատկապես վտանգավոր են ձերերը, որոնք պահպանել են հին գործերի հուշերը, բայց չեն հիշում, որ արդեն բազմիցս կրկնել են իրենց պատումները: Եվ ես հաճախ եմ տեսել, թե ինչպես միանգամայն հետաքրքիր պատմությունները մի որևէ արգարժան ծերունու բերանում դարձել են սաստիկ ձանձրալի, չէ որ անկնդիրներից յուրաքանչյուրը դրանցով հիացել է, առնվազն, հարյուր անգամ: Երկրորդ, ես սփոփանք եմ գտնում նաև այն բանում, որ իմ վատ հիշողությունը կրածս վիրավորանքների մասին քիչ հուշեր է պահպանում, ինչպես ասում էր մի հին գրող², հարկ կլիներ դրանց ցուցակը կազմել ու մոտս պահել, հետևելով Դարեհի օրինակին, որը, աթենացիների հասցրած վիրավորանքները շնորհալու համար, ժառանգին հրամայել էր ամեն անգամ իր սեղան նստելու ժամանակ երիցս հայտնել. «Արա, հիշիր աթենացիներին»: Եվ հետո. այն տեղանքները, ուր ես արդեն եղել եմ անցյալում, կամ կարդացած գրքերը միշտ ինձ ուրախացնում են նորության թարմությամբ:

Ոչ առանց հիմքի ասում են, թե նա, ով այնքան էլ չի ապավինում իր հիշողությանը, դժվարությամբ է ճարակորեն ստում: Ինձ քաշ հայտնելի է, որ քերականները տարբերություն են դնում «սուտ խոսել» և «ստել» երրորդաշարությունների միջև: Նրանք բացատրում են, թե «սուտ խոսել» նշանակում է ասել բաներ, որոնք չեն համապատասխանում իրականու-

թյանը, բայց, այնուամենայնիվ, խոստով կողմից ընկալվում են որպես իրական, և թե «ստեղ» բառը լատիներեն (իսկ լատիներեն բառից առաջացել է նաև մեր ֆրանսերենը) նշանակում է համարյա նույնը, ինչ «գնալ քնդգեմ սեփական խղճի»³: Համենայն դեպս այստեղ, ևս խոսում են լոկ նրանց մասին, ովքեր ասում են մի բան, իսկ իրենք իրենց մեջ գիտեն ուրիշ բան: Իսկ դա կամ այն մարդիկ են, որոնց խոսքերը, այսպես ասած, զուտ հնարանք են, կամ նրանք, ովքեր միայն մասամբ են թուքցնում ու աղավաղում ճշմարտությունը: Սակայն, թեթևակի կոծկելով և աղավաղելով այն, նրանք վաղ թե ուշ, եթե նրանց նորից ու նորից մղես միևնույն առարկային, իրենք կմերկացնեն իրենց սուտը, քանզի անհավատալի է, որ նրանց երևակայություն մեջ ամեն անգամ չհառնի առարկայի մասին այն իրական պատկերացումը, որն առաջինն է նրստվածք թողել և հետո խիստ տպավորվել նրանց հիշողության մեջ, կայունանալով նրա յուրահատկությունների ճանաչողության, ապա նաև իմացության ընթացքում, իսկ այդ սկզբնական պատկերացումն աստիճանաբար հիշողությունից դուրս է մղում հնարանքը, որը չի կարող ունենալ նույնպիսի կայունություն ու ամրություն, քանզի առարկայի հետ առաջին ծոնոթության հանգամանքները, ամեն անգամ մեր մտքում վերըստին հառնելով, իրենցով ծածկում են նորամույժ, կեղծ ու աղճատված հուշերը: Իսկ այն դեպքերում, երբ մարդկանց բոլոր ասածներն ամբողջովին հնարանք են և իրենք էլ չունեն այդ հնարանքին հակասող տպավորություններ, նրանք, հավանաբար, ավելի քիչ հիմքեր ունեն վախճնալու վրիպումից: Սակայն այստեղ էլ, քանի որ նրանց հնարանքը ցնորք է, անորսալի մի բան, ձգտում է դուրս թռչել հիշողությունից, եթե այն բավականաչափ կառչուն չէ:

Ես հաճախ եմ նկատել նման վրիպումներ, և, որ ամենազվարճալին է, դրանք թույլ են տալիս հենց այն մարդիկ, ովքեր, կարելի է ասել, մասնագիտացել էին, և իրենց խոսքը կառուցում էին այնպես, որ օգներ զործերին, ինչպես նաև հաճելի լիներ այն ազդեցիկ անձանց, ում ուղղված էր: Սակայն քանի որ հանգամանքները, որոնց նրանք պատրաստ են ենթարկել իրենց հոգին ու խիղճը, ենթակա են անթիվ փոփոխությունների, ապա նրանք ստիպված են լինում անվերջ րազմազանել իրենց բառերը: Իսկ դա հանգեցնում է այն բանին, որ նրանք ստիպված են միևնույն իրն անվանել մերթ մոխրագույն, մերթ դեղին, և իրենց զրուցակիցներից մեկի մոտ պնդել մի բան, իսկ մյուսի մոտ՝ բոլորովին ուրիշ: Եթե առիթի դեպքում նրանք համեմատեն այդքան տարբեր դատողությունները, ապա ի՞նչ կզառնա այդ շատախոսների հիանալի

արվեստը: Բացի այդ, նրանք էլ, մոռանալով զգուշությունը, մերկացնում են իրենց սուտը, քանզի ո՞ր հիշողությունը կարող է ընդգրկել միևնույն առարկայի այդպիսի քանակություն մեծ հնարովի, ոչ միանման պատկերներ: Ես հանդիպել եմ իմ բազմաթիվ ժամանակակիցների, որոնք նախանձում են ողջախոհության այդ փայլուն տարատեսակն ունեցողների փառքին: Նրանք, սակայն, չեն նկատում, որ փառքը փառք, բայց դրանից ոչ մի օգուտ չկա:

Եվ, իսկապես, ստախոսությունն ամենադարձելի արատն է: Միայն խոսքն է մեզ մարդ դարձնում, միայն խոսքն է մեզ հնարավորություն տալիս միմյանց հետ շփվելու: Եվ եթե մենք գիտակցեինք հիշյալ արատի ամբողջ նողկալիությունն ու ծանրությունը, ապա ավելի մեծ հիմունքով խարույկի վրա կայսրեինք դրա համար, քան մի ուրիշ հանցանքի: Ես գտնում եմ, որ շատ հաճախ երեխաներին պատժում են միանգամայն դատարկ բաների համար, կարելի է ասել, անտեղի, որ նրանց պատժում են այնպիսի շնչին զանցանքների համար, որոնք կատարում են շիմանալով, շհասկանալով և ոչ մի հետևանք չեն ունենում: Հենց միայն ստախոսությունն ու, թերևս, մի փոքր ավելի պակաս՝ կամակորությունն ինձ թվում են մանկական այն արատները, որոնց առաջացման ու արմատավորման դեմ հարկ է անշեղորեն և անողորբաբար պայքարել: Դրանք մեծանում են մարդկանց հետ միասին: Եվ հենց լեզուն թաթախվի ստի մեջ, ուղղակի զարմանալի է, թե որքան դժվար է այն վերադարձնել ճշմարտության: Այդ է պատճառը, որ մենք հանդիպում ենք ուրիշ առումներով միանգամայն ազնիվ ու բարեկանոն, բայց այս արատին հլու և գերի մարդկանց: Ես ունեմ մի դերձակ, որն ընդհանրապես ասած, շատ լավ մարդ է, բայց ես ոչ մի անգամ ոչ մի ճիշտ բառ չեմ լսել նրանից, և ըստ որում նույնիսկ այն դեպքում, երբ դա կարող էր միայն օգուտ բերել նրան:

Եթե սուտը, ճշմարտության նման, լիներ միադեմ, մեր վիճակը զգալիորեն թեթև կլիներ: Այս դեպքում մենք հավաստի կհամարեինք հակառակն այն բանի, ինչ տեսնում է ստախոսը: Սակայն ճշմարտության անկոտնյան ունի հարյուր հազարավոր կերպարանք և շունի սահմաններ:

Պյութագորականները գտնում են, թե բարին որոշակի է և սահմանափակ, մինչդեռ չարն անորոշ է ու անսահմանափակ: Նպատակից հետոյցիում են հազարավոր ճանապարհներ, և միայն մեկն է տանում դեպի այն: Եվ ես բնավ էլ համոզված չեմ, թե նույնիսկ ինձ սպառնացող մեծագույն զոբախտությունը կանխելու համար կկարողանայի ինձ ստիպել, օղտվելու բացահայտ ու անամոթ ստից:

Եկեղեցու հայրերից մեկն ասել է, թե մենք մեզ ավելի լավ ենք գտում ծանոթ շան հետ, քան այն մարդու, որի լեզուն մեզ անծանոթ է.

Ut externus alieno non sit hominis vice* .

Սակայն որքան է սուտասան լեզուն, որպես հաղորդակցության միջոց, ավելի վատ, քան լուռությունը:

Ֆրանցիսկ I թագավորը պարծենում էր, թե ինչպես է ճարպկորեն խաբել Միլանի դուքս Ֆրանչեսկո Սֆորցի դեսպանին՝ Ֆրանչեսկո Տավերնին, որը զրուցակցին բուն նյութից շեղելու արվեստում մեծ համբավ ուներ: Նա ուղարկվել էր մեր թագավորի պալատը, որպեսզի նորին մեծությանը հայտներ իր տիրակալի ներողությունը ստորև բերվող մի շատ կարևոր հարցի կապակցությամբ: Թագավորը, որին դրանից քիչ առաջ դուրս էին մղել Իտալիայից և նույնիսկ Միլանի շրջակայքից, պամենալով տեղեկություններ ստանալ այնտեղ կատարվող ամեն ինչի մասին, որոշել էր Միլանի դքսի մոտ ունենալ մի ազնվական, որն իրականում իր դեսպանն էր, բայց ապրում էր որպես անձնական գործերով այնտեղ ժամանած մասնավոր անձ: Եվ դա առավել ևս անհրաժեշտ էր, որովհետև դուքսը, հատկապես այն ժամանակ ավելի մեծ կախում ունենալով կայսրից, քան մեզանից, քանզի խնդրել էր նրա զարմուհու՝ Դանիայի թագավորի դստեր՝ ներկայումս Լոթարինգիայի այրի դքսուհու ձեռքը, չէր կարող առանց իրեն մեծ վնաս պատճառելու բացահայտ կապեր պահպանել մեզ հետ և քանակցությունների մեջ մտնել: Երկու տիրակալների միջև կապ պահպանելու համար համապատասխան դեմք էր հենց ոմն Մերվեյլը՝ թագավորի ախոռասպանը և միլանցի ազնվականը⁵: Վերջինս, ունենալով սովորաբար դեսպաններին հանձնվող զազտների հավատարմագրեր ու հրահանգներ, ինչպես նաև, ուշադրություն շեղելու և զաղտնիքը պահելու նպատակով, դքսին ուղղված հանձնարարական նամակներ, որոնք վերաբերում էին այդ ազնվականի անձնական գործերին, Միլանի արքունիքում մնաց այնքան երկար, որ հարուցեց կայսեր դժգոհությունը, և, ինչպես մենք ենք ենթադրում, հենց այդ հանգամանքն էլ պատճառ ծառայեց հետագայում տեղի ունեցած ամեն ինչին: Իսկ տեղի ունեցավ ահա թե ինչ. որպես պատրվակ օգտագործելով մի սպանություն, դուքսը հրամայեց երկու օրում ավարտել դատաքնությունը և մի գեղեցիկ գիշեր զլխատել հիշյալ Մերվեյլին: Եվ քանի որ թագավորը, բավարարություն պահանջելով, այդ գործի առթիվ պիմեց բոլոր քրիստոնյա թագավորներին, այդ թվում նաև հենց Միլանի:

* Այնպես որ ուրիշ ցեղի մարդու համար օտարերկրացին մարդ չէ⁴ (լատ):

դքսին, վերջինիս դեսպան պարոն Ֆրանչեսկոն պատրաստեց այդ պատմութեան մի ընդարձակ և սուտ նկարագրութիւն, որն առավոտոյան ընդունելութեան ժամանակ ներկայացրեց թագավորին:

Նրանում ձգտելով արգարացնել իր տիրակալին, դեսպանը պնդում էր, թէ նա միշտ Մերվելլին համարել է մասնավոր անձ, միլանցի սգնվական և իր հպատակը, որը Միլան է եկել սեփական գործերի համար և այնտեղ է գտնվել բացառապես այդ նպատակով, այնուհետև, նա կարականապես ժխտում էր, թէ դքսին հայտնի է եղել, որ Մերվելլը ծառայում էր Ֆրանցիսկ թագավորին և նույնիսկ վերջինս անձամբ ճանաչում էր նրան, ուստի դուքսը բոլորովին ոչ մի հիմք չունէր Մերվելլին դիտել որպէս Ֆրանցիսկ թագավորի դեսպանը: Թագավորը, սակայն, իր հերթին նեղելով նրան սարքեր հարցերով ու առարկումներով, դանապան որոգայթներ լարելով և, ի վերջո, ծուղակը գցելով, դեսպանից պահանջեց բացատրել, թե, ինչու է այդ դեպքում մահապատիժն իրականացվել գիշերը և կարծես գաղտագողի: Խեղճ մարդը, կատարելապես շփոթվելով և աշխատելով քաղաքավարի մնալ, այս վերջին հարցին պատասխանեց, թէ դուքսը, խորապես հարգելով նորին մեծութեանը, շատ կվշտանար, եթէ նման մահապատիժն ի կատար ածվեր ցերեկը: Կծվալը չէ պատկերացնել, որ, թույլ տալով այդպիսի կոպիտ սխալ, և այն էլ Ֆրանցիսկ թագավորի պես նուրբ հոտառութիւն ունեցող մի մարդու մոտ, նա իսկույն բռնվեց⁶:

Իր ժամանակ Հուլիոս II պապը Անգլիայի թագավորի մոտ ուղարկեց մի դեսպան, հանձնարարելով լարել նրան Ֆրանսիայի վերահիշյալ թագավորի դեմ: Երբ դեսպանը հայտնեց իրեն հանձնարարված ամեն ինչ, Անգլիայի թագավորը⁷, պատասխանելով նրան, խոսեց այն կծվարութիւնների մասին, որոնց հետ, իր կարծիքով, կապված էր Ֆրանսիայի նման հզոր տերութեան դեմ պատերազմի նախապատրաստութիւնը, և, ի հաստատումն իր խոսքերի, բերեց մի քանի նկատարում: Դեսպանը միանգամայն անպատեհ ասաց, թէ ինքը նույնպէս մտածել է այդ ամենի մասին և նույնիսկ իր կասկածները հայտնել է պապին: Անգլիայի թագավորին անմիջապէս պատերազմ սկսելու հորդորման դեսպանախմբի նպատակներին շատ վատ համապատասխանող այդ խոսքերը նրա մոտ հարուցեցին կասկած (որը հետագայում հաստատվեց), թէ դեսպանը ներքուստ Ֆրանսիայի կողմն է: Նա այդ մասին հայտնեց պապին, դեսպանի գույքը բռնագրավվեց, իսկ ինքը քիչ մնաց կլանքով հասուցեց:

ԱՇԽՈՒՅԺ ԵՎ ԴԱՆԴԱԴԿՈՏ ԽՈՍԷԻ ՄԱՍԻՆ

«չ բարձր ունեն բարձր ձրին»¹

Ինչպես մենք կարող ենք համոզվել, սա վերաբերում է նաև ճարտասանությունը, 'ոմանց հստակ է խոսքի թեթևությունն ու աշխուժությունը, և նրանք, ինչպես ասում են, խոսքի տակ շեն մնում, կատարելապես զինված են միշտ և ամենուր, մինչդեռ մյուսները, որ ավելի դժվար են թափ առնում, ընդհակառակը, առանց նախապես կշռադասելու և հիմնավորապես աշխատելու, ոչ մի բառ չեն արտասանում: Եվ, ինչպես կանանց են երբեմն խորհուրդ տալիս, թե որ խաղերին ու մարզանքներին մասնակցեն, ցուցադրելու համար իրենց ամբողջ գրավչությունը², այդպես էլ այն հարցին, թե մեր օրերում առավելապես քարոզիչներին ու փաստաբաններին հատուկ ճարտասանության այս երկու տեսակներից որն է սաղում առաջիններին և որը՝ մյուսներին, ես դանդաղ խոսող մարդուն խորհուրդ կտալի դառնալ քարոզիչ, իսկ աշխույժ խոսողին՝ փաստաբան: Չէ որ առաջինի պարտականություններին խնդրան ասես ազատ ժամանակ են տրամադրում նախապատրաստվելու համար, իսկ բացի այդ, նրա գործունեությունն ընթանում է միշտ մեկ ուղությունամբ, հանգիստ ու համաշափ, մինչդեռ այն հանգամանքները, որոնցում ապրում ու գործում է փաստաբանը, ամեն պահ կարող են հարկադրել նրան մենամարտի, ըստ որում հակառակորդի անսպասելի հարձակումները երբեմն նրան ցած են գլորում թամբից և նա ստիպված է լինում անմիջապես պաշտպանությունն նոր ձևեր փնտրել:

Այնինչ, Ֆրանցիսկ թագավորի հետ Մարսելում Կղեմեսի հանդիպման ժամանակ եղավ հիշտ հակառակը: Երբ պարոն Պուայեն³, մի մարդ, որն ամբողջ կյանքում հանդես էր եկել դատարաններում, կարելի է ասել, այնտեղ թրծվել էր և արժանացել բարձր գնահատականի, պապին ողջունի խոսք ասելու հանձնարարություն ստացավ, դրա վրա լավ մտածելու ժամանակ ուներ և, ինչպես ասում են, Փարիզից այն բերեց միանգամայն պատրաստի վիճակում: Բայց այն օրը, երբ պետք է արտասանվեր այդ ճառը, պապը, վախենալով, թե ողջունի խոսքում կասեն մի բան, որը կարող է վիրավորել իր հետ եկած ուրիշ տիրակալների դեսպաններին, թագավորին հաղորդեց ճառի ցանկալի մի բովանդակություն, որն, իր կարծիքով, կլիներ տեղին ու ժամանակին: Սակայն, ցավոք, դա բնավ այն չէր, ինչի վրա աշխատել էր պարոն Պուա-

յին, այնպես որ քր պատրաստած ճառը դարձավ ավելորդ, և նա պետք է շատ կարճ ժամկետում շարագրեր նորը: Բայց քանի որ նա իրեն անկարող զգաց կատարել այդ լեզվի, այն ստիպված եղավ ստանձնել պարոն կարդինալ Դյու Քելլեն⁴:

Փաստաբանի աշխատանքը քարոզչի աշխատանքից բարդ է, և այնուամենայնիվ, իմ կարծիքով, մենք ավելի շատ հանդիպում ենք տանելի փաստաբանների, քան քարոզիչների: Այգայես է, համենայն դեպս, Ծրանսիայում:

Երևում է մեր սրախոսությանն ավելի հատուկ են արագությունն ու հանկարծակիությունը, իսկ խելքին՝ հիմնավորությունն ու դանդաղկոտությունը: Բայց ինչպես այն մարդը, որ նախապատրաստվելու ժամանակ շունենալով, մնում է համր, այնպես էլ նա, ով անկախ այդ մամանակից, խոսում է միատեսակ լավ, ծայրահեղություններ են: Սևերուս Կասիոսի⁵ մասին պատմում են, թե նա զգալիորեն ավելի լավ էր խոսում առանց նախապես խորհելու և թե իր հաջողություններով պարտական էր ավելի շուտ բախտին, քան ջանասիրությանը: Պատմում են նաև, թե երբ ճառելիս ջղայնացնում էին, դա օգնում էր նրան, և հակառակորդները զգուշանում էին դիպչել նրա զգայուն թելերին, վախենալով, թե զայրույթը կկրկնապատկի նրա պերճախոսությունը⁶: Ես անձամբ գիտեմ մարդիկ, որոնց բնավորությանն անհամատեղելի է քրտնաջան ու լարված նախապատրաստությունը: Եթե այդպիսի մարդկանց միտքն այս կամ այն դեպքում սահուն ու ազատ չի դործում, այն դառնում է կարգին բանի անընդունակ: Մենք որոշ երկերի մասին ասում ենք, թե դրանցից ձեթի ու լամպի հոտ է գալիս, քանզի հեղինակների վիթխարի աշխատանքը դրանք դարձնում է անհարթ ու անճոռնի: Ընդամին կարելուցն շափ լավանալու ձգտումը և շափազանց կաշկանդված ու իր գործով կլանված հոգու լարումն աղավաղում են նրա ստեղծագործությունը, խեղում, խեղում են այն, այնպես, ինչպես սեփական ձեռնամիջ ու առատությունից սեղմված, կուտակված ջուրը երբեմն ելք չի գտնում բաց, սակայն իր համար շափազանց նեղ անցքից:

Իմ ասած բնավորության տեր մարդիկ երբեմն ամենևին պահանջ չունեն արտաքին խթանների, որոնք հարուցում են բուռն կրքեր, ինչպես, օրինակ, Կասիոսի զայրույթը, այդպիսի հուզմունքը նրանց համար կլիներ շափազանց բիրտ, նրանց խառնվածքը կարիք ունի ոչ թե հուզմունքի, այլ ոգեշնչման՝ ինչ-որ առանձնահատուկ, անսպասելի ու անակնկալ տպավորությունների: Հոգու այդպիսի կերտվածք ունեցող ինքն իր կամքին թողնված մարդը լինում է հույլ ու ապիկար: Թեթև հուզմունքը նրան կյանք է ներարկում և արթնացնում տաղանդը:

Ես ինձ վատ եմ կառավարում ու տնօրինում: Դիպվածն ինձ վրա ավելի մեծ իշխանություն ունի, քան ես ինքս: Հանգամանքները, հասարակությունը, որտեղ ես գտնվում եմ, վերջապես, ձայնիս հնչումն իմ մտքից կորզում են ավելին, քան ես կկարողանայի հայտնաբերել ինձանում, զբաղվելով ինքնահետազոտմամբ կամ օգտագործելով այն իմ պահանջմունքի համար:

Ուստի, իմ խոսքն արժե ավելին, քան գրոտվածքս, եթե առհասարակ թույլատրելի է ընտրություն կատարել ոչ մի արժեք շունեցող բաների միջև:

Պատահում է նաև այնպես, որ ինքս ինձ չեմ գտնում այնտեղ, ուր փնտրում եմ, և, ընդհանրապես, ավելի հաճախ ես ինձ գտնում եմ շնորհիվ երջանիկ պատահականության, քան ինքնահետազոտման: Դիցուք, ինձ հաջողվել է թղթի վրա արտահայտել մի նրբաճաշակ և սուր միտք (ես շատ լավ հասկանում եմ, որ այն, ինչ ինձ համար շատ լավն է, ուրիշի համար կարող է վատը լինել, թողնենք կեղծ համեստությունը. ամեն ոք ջանում է իր ընդունակությունների շափով): Եվ հանկարծ մրտաքումս եղածն այնպես է գլխիցս թռչում, որ ես այլևս չգիտեմ, թե ինչ էի ուզում ասել, և պատահում է, երբ կողմնակի մարդն ինձ ավելի լավ է հասկանում, քան ես ինքս: Եթե ամեն անգամ հարկ եղած դեպքում ես գործի դնեի ածելին⁷, ինձանից բոլորովին ոչինչ չէր մնա: Սակայն կարող է գալ մի պահ, երբ իմ մոռացածը կողողվի ավելի պայծառ լույսով, քան արևաշատ օրը, և այնժամ ես միայն կզարմանամ իմ այժմյան շփոթության վրա:

Գլուխ XI

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատգամախոսների մասին հայտնի է, որ նրանց նկատմամբ հավատը սկսել է կորչել Հիսուս Քրիստոսի գալստից դեռ շատ առաջ: Մենք գիտենք, որ Ցիցերոնը փորձում էր պարզել նրանց հեղինակության անկման պատճառները. *Cur isto modo iam oracula Delphis non eduntur non modo nostra actate sed iamdiu ut modo nihil possit esse contemptius?**

* Ի՞նչն է պատճառը, որ ոչ միայն մեր ժամանակներում, այլև վաղուց՝ արդեն Դելֆիից նման գուշակություններ չեն տարածվում, և ոչ մի բանն այնպես չի արհամարհվում, ինչպես դրանք¹ (լատ.):

Սակայն ինչ վերաբերում է այլ գուշակություններին. զոհաբերվող կենդանիների (որոնց ներքին օրգանները, Պլատոնի կարծիքով, սրոշ շափով հարմարեցված են դրա համար)² ոսկորների ու փորոտիքի, հավերի քջջելու, տարբեր թռչունների ճախրանքի, aves quasdam rerum augurandarum causa natas esse putamus*, կայծակի, գետերի գալարների, multa sernunt aruspices, multa augures provident, multa oraculis declarantur, multa vaticinationibus, multa somniis, multa portentis**

և այլ նշանների վրա կատարվող մյուս գուշակություններին, որոնք հները մեծ մասամբ հիմք էին վերցնում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր իրենց ձեռնարկումներում, ապա մեր կրոնը վերացրել է դրանք: Բայց և այնպես մեզ մոտ էլ պահպանվում են ապագան տեսնելու որոշ միջոցներ՝ աստղերի, ոգիների, մարմնական տարբեր նշանների, երազների ու էլի շատ բաների օգնությամբ, և դա պարզորեն վկայում է անզուսպ հետաքրքրասիրությունը մեր հոգու, որը տենչում է պատկերացնել ապագան, կարծես ներկայումս քիչ հոգսեր ունի.

cur hanc tibi rector Olympi
Sollicitis visum mortalibus addere curam,
Noscant venturas ut dira per omina clades,
Sit subitum quodcunque paras, sit caeca futuri
Mens hominum fati, liceat sperare timenti***.

N: utile quidem est scire, quid futurum sit. Miserum est enim nihil proficientem cogi****.

* Մենք գտնում ենք, որ որոշ թռչուններ նախատեսված են գուշակության համար³ (լատ.):

** Շատ բան տեսնում են հարուստիկները, շատ բան կանխատեսում են հավահամաները, շատ բան ավետում են պատգամախոսները, շատ բան՝ մարգարեությունները, երազները, նախանշանները⁴ (լատ.):

*** ... ինչո՞ւ դու, Օլիմպոսի տիրակալ, հաճեցիր մահկանացուների տառապանքներին ավելացնել նաև այս հոգսը: Քո ինչի՞ն էր պատք, որ նրանք ահարկու գուշակություններով իմանային իրենց գալիք գծբախտությունները: Թող անակնկալ լինի այն ամեր. ինչ պատրաստում ես, թող մարդկանց միտքը շտեմնի այն, ինչին նրանք գառապարտված են ապագայում, թու՛յլ տուր, որ հուսա ահարկվածը⁵ (լատ.):

**** Եվ անօգուտ է իմանալ, թե ինչ է լինելու: Զէ որ խղճուկ վիճակ է, երբ տառապանքով ես՝ որևէ բանով օգնելու անգործ⁶ (լատ.):

և դա, իրոք այդպես է, քանզի մեր հոգին անդոր է հանգամանքների առջև:

Ահա թե ինչու Սալուցայի մարկիզ Ֆրանչեսկոյի հետ տեղի ունեցածն ինձ թվաց միանգամայն ուշադրավ: Լինելով Ֆրանցիսկ թագավորի այն բանակի հրամանատարը, որ գտնվում էր լեռներից անդին, վայելելով մեր արքունիքի անսահման բարեհաճութունը, իր տիտղոսի և եղբորից բռնագրավված ու իրեն տրված տիրույթների համար թագավորին պարտական այդ մարդը, վերջապես, շունենալով իր տիրակալին դավաճանելու ոչ մի հիմք, առավել ևս, որ նրա հոգին ընդվզում էր դրա դեմ, թույլ տվեց, որ իրեն վախեցնեն (ինչպես պարզվեց հետագայում) Կարլոս V կայսեր ապագա հաջողությունների և մեր անխուսափելի պարտության մասին դուշակութուններով: Այդ անհեթեթ դուշակութունների մասին խոսում էին ամենուր, դրանք թափանցեցին նաև Խալիս, ուր գտան այնպիսի լայն տարածում, որ, հետևելով իբր մեզ սպառնացող ջախջախման լուրերին, Հոսմում, վիթխարի գումարներ ղնելով գրնազ էին գալիս, թե հենց այդպես էլ կլինի: Սալուցայի մարկիզը հաճախ իր մերձավոր անձանց հետ ցավով խոսում էր, իր կարծիքով, ֆրանսիական թագի վրա կախված անխուսափելի դժբախտությունների, ինչպես նաև իր ֆրանսիացի բարեկամների մասին: Ի վերջո, նա խոսվություն բարձրացրեց և անցավ թշնամու կողմը, և դա նրա համար մեծագույն դժբախտություն դարձավ, ինչպիսին էլ որ լինեք աստղերի դասավորությունը: Սակայն նա իրեն պահում էր որպես հակասական մղումներից մորմոքվող մարդ, քանզի, իր տնօրինության տակ ունենալով տարբեր քաղաքներ և ռազմական փառք, գտնվելով Անտոնիո դը Լեյվայի⁷ հրամանատարությամբ գործող թշնամի զորքերին շատ մոտ, նա կարող էր, օգտվելով իր հղացած դավաճանության մասին մեր անտեղյակությունից, զգալիորեն ավելի շատ վնաս հասցնել: Չէ որ նրա դավաճանությունը չխլեց ոչ մի կյանք, ոչ մի քաղաք, բացի Ֆոսանոյից⁸, այն էլ երկարատև պայքարից հետո.

Prudens futuri temporis exitum
Caliginosa nocte premit deus,
Ridetque si mortalis ultra
Fas trepidat.

.....

Ille potens stui
Laetusque deget, cui licet in diem

Dixisse: Vixi. Cras vel atra
Nū'be polūn pāter occupato
Vel sole puro*.
Laetus in praesens animus, quod ultra est,
Oderit curare**.

**Հնդհակառակը, խորապես մտլորվում է նա, ով համաձայն է հե-
տևյալ խոսքերին.** *Isti sic reciprocantur, ut et, si divinatio sit, dii sint; et, si dii
sint, sit divinatio***. Շատ ավելի խելամիտ է ասում Պակուվիոսը.*

Nam istis qui linguam avium intelligunt,
Plusque ex alieno iecore sapiunt quam ex suo,
Magis audiendum quam auscultandum censeo****

Ապագան գուշակելու տոսկանացիների այդ փառապանծ արվեստը¹³
ծագել է հետևյալ կերպ: Մի գյուղացի, իր գութանի խոփով շուռ տալով
մի մեծ հողաշերտ, տեսավ, թե ինչպես նրա տակից դուրս եկավ Տա-
գեսը՝ մանչուկի դեմքով և ծերունու իմաստնություններ մի կիսաստված:
Փողոտուրդը խմբվեց: Տագեսի¹⁴ ճառերն ու գուշակությունների վերա-
բերյալ նրա բոլոր խրատները հավաքեցին մի տեղ և դարեր շարունակ
խնամքով պահեցին: Այդ արվեստի հետագա զարգացումն արժանի է
նրա ծագմանը:

Ինչ վերաբերում է ինձ, ապա ավելի շուտ ես կգերադասեի իմ գոր-
ծերում ղեկավարվել նետածս գառերի միավորները հաշվելով, քան նման
դառանցանքներով:

Եվ իրոք, հանրապետական կառուցվածք ունեցող բոլոր պետու-

* Աստված խելամտորեն գալիքը թաքցնում է գիշերվա խավարում, և նրա համար
լիծաղելի է, եթե մահկանացուն գողտղում է ավելի, քան պետք է: Անկախ ու երջանիկ
է նա, ով կարող է այսօրվա համար ասել. «Անցավ: Վաղը հայրը կուզի թող երկինքը սև
ամպով պատի, կուզի պայծառ արև պարզելի» (լատ.):

** Ներկայից գոհ հոգին ապագայի մասին չի մտածի¹⁰ (լատ.):

*** Փոխադարձությունն այսպիսին է. եթե գուշակություն կա, ուրեմն, պետք է լինեն
ևսև աստվածներ, իսկ եթե աստվածներ կան, ուրեմն, պետք է լինի նաև գուշակու-
թյուն¹¹ (լատ.):

**** Ինչ վերաբերում է նրանց, ովքեր հասկանում են թուշունների լեզուն և ուրիշի
լարդն ավելի լավ գիտեն. քան իրենցը, ապա, կարծում եմ, հարկավոր է ավելի շուտ
անկեղծել նրանց, քան լսել¹² (լատ.):

թյուններում վիճակահանութիւնը մեծ դեր է խաղացել: Պլատոնը իր երևակայութեամբ ստեղծած հեքիաթային պետութիւնում վիճակահանութեանն է թողնում լուծելու բազմաթիւ կարևոր բաներ: Ի միջի այլոց, նա ուզում է, որ լավ քաղաքացիների ամուսնութիւնները կայանան վիճակահանութեամբ, նա այդ պատահական ընտրութեանը տալիս է այնպիսի մեծ նշանակութիւն, որ իր կարծիքով, հայրենիքում պետք է դաստիարակվեն միայն այդպիսի ամուսնութիւններից ծնված երեխաները, մինչդեռ վատ քաղաքացիների սերունդը պետք է արտաքսվի օտար երկրներ: Սակայն, եթե աքսորյալներից որևէ մեկը, մեծանալով, բարի բնավորութիւն դրսևորի, կարող է վերադարձվել հայրենիք, ճիշտ նույն կերպ, եթե հայրենիքում թողածներից մեկնումեկը, դառնալով պատանի, շարդարացնի հուշերը, ապա կարտաքսվի օտար երկրներ:

Ես դիտեմ մարդկանց, որոնք ուսումնասիրում և բոլոր ձևերով մեկնում են իրենց արմատախնները¹⁵, դրանցում փնտրելով ցուցումներ, թե ինչպես վարվեն տվյալ դեպքում: Բայց քանի որ նման արմատախններում կարելի է գտնել ամեն բան, դրանցում ակներևաբար ստի կողքին պեսք է լինի նաև ճշմարտութեան մասնիկ: Quis est enim qui totum diem iaculans non aliquando conlineet?*

Ես արմատախններն ավելի բարձր չեմ գնահատում, որ երբեմն տեսնում եմ դրանց ճշմարտացիութիւնը: Ավելի լավ է դրանք միշտ ստեին. այդ դեպքում մարդիկ կիմանային, թե ինչ մտածեն դրանց մասին: Ավելացնենք, որ ոչ ոք չի հաշվում դրանց վրիպումները, որքան էլ հաճախակի ու սովորական լինեն, իսկ ինչ վերաբերում է ճիշտ գուշակութիւններին, ապա դրանց մեծ նշանակութիւն են տալիս հենց այն պատճառով, որ հազվադեպ են, ուստի և թվում են ինչ-որ անըմբռնելի ու զարմանահրաշ բան: Աթեիստ մականունը կրող Դիագորասը, գտնվելով Սամոթրակիայում, ահա թե ինչպես պատասխանեց այն մարդուն, որը, տաճարում նրան ցույց տալով նավաբեկութիւնների փրկվածների պատկերներով բազմաթիւ նվերները, դիմեց հետևյալ հարցով. «Դու, որ գտնում ես, թե աստվածները միանգամայն անտարբեր են մարդկանց գործերի նկատմամբ, ի՞նչ կասես նրանց ողորմածութեամբ այսքան փրկվածների մասին»: «Թող որ այդպես է,— պատասխանեց Դիագորասը:— Բայց չէ որ այստեղ չեն պատկերված խեղդվածները, իսկ նրանք անհամեմատ ավելի շատ են»: Յիցերոնն ասում է, թե աստծո հավատը

* Կգտնվի՞ արդյոք մի մարդ, որը օրնիրուն տեղ նետելով, գոնե մի անգամ չխփի նշանակետին¹⁶ (լատ.):

րաժանող բոլոր փիլիսոփաներից միայն Քսենոփան Կուլթոնացին էր փորձում պայքարել տարբեր գուշակների դեմ¹⁷: Առավել ևս քիչ է զարմանալի, որ մեր տիրակալներից ոմանք, ինչպես տեսնում ենք, դեռ էլի նշանակություն են տալիս նման անհեթեթությունը, և հաճախ ի վնաս իրենց:

Ես կուզենայի սեփական աչքով տեսնել երկու այնպիսի հրաշքներ: Ինչպիսիք են կալարրիացի այն արքա Յոաքիմոսի գիրքը, որը գուշակել էր բոլոր ապագա պապերի անուններն ու տեսքը, և այն Լևոն կայսեր գիրքը, որը գուշակել էր բյուզանդական¹⁸ կայսրերի ու պատրիարքների անունները¹⁸: Սակայն իմ աչքով ես տեսել եմ միայն հետևյալը. հասարակական աղետների ժամանակ իրենց դառնություններից ցնցված մարդիկ անձնատուր են լինում անհավատությանը և փորձում երկնային խորհրդանշաններում գտնել իրենց գլխին թափված դժբախտությունների պատճառն ու նախակարապետը: Եվ որովհետև իմ ժամանակակիցները պրանում ցուցաբերում են անըմբռնելի հմտություն ու ճարակություն, ևս եկել եմ այն համոզման, թե, քանի որ սուր մտքի տեր ու պարապ մարդկանց համար այդ զբաղմունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ղվարձություն, ապա նման իմաստակումների հակում ունեցող, դրանք շուտումուտ տալու ընդունակ յուրաքանչյուր ոք կարող է ուզածը գրքում գտնել այն ամենը, ինչ փնտրում է: Սակայն այդպիսի գուշակների հաջողության պիտավոր պայմանը խրթին լեզուն է, երկիմաստ ու տարօրինակ մարդարեական այն խոսքը, ուր այդ գրքերի հեղինակները շեն դրել որոշակի եմաստ, որպեսզի սերունդներն այնտեղ գտնեն այն ամենը, ինչ կուենան:

Սոկրատեսի «Դեռ»¹⁹, հավանաբար, նրա կամքի թելադրանքն էր անկախ նրա գիտակցությունից: Սակայն, շատ հավանական է, որ նրա լեզու և իմաստնություն ու առաքինության անընդհատ մարզանքներով լրտված հոգում այդ թեկուզ աղոտ ու չգիտակցված հակումները միշտ եղել են խոհեմ և հետևելու արժանի: Յուրաքանչյուր ոք այս կամ այն չափով ունեցել է պոռթկուն ու անակնկալ այդպիսի տիրական մղումներ: Ես, որ այնքան էլ չեմ վստահում մեր լավ մտածված որոշումների խոհեմությանը, հակված եմ բարձր գնահատելու նման մղումները: Ես ինչորս հաճախ ունեցել եմ այդպիսիք, դրանք ուժգին ձգում են ինչ-որ բանի կամ վանում ինչ-որ բանից՝ վերջինը Սոկրատեսի մոտ լինում էր ավելի հաճախ: Ես թույլ էի տալիս, որ այդ մղումները ղեկավարեն ինձ, և դա բերում էր այնպիսի հաջող ու երջանիկ հետևանքներ, որ, արդարև դրանցում կարելի էր տեսնել անտվածային ներշնչման պես մի ամուս:

ՏՈՎՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եթե որեւէ մեկը վճռական ու տոկուն մարդու համբավ ունի, ապա դա բնավ չի նշանակում, թե նա չի կարող հնարավորին շափ խուսափել իրեն ազանացող պատուհասներից ու տհաճություններից, հետեաբար, նաև զգուշանալ, որ դրանք իրեն բաժին չընկնեն: Ընդհակառակը, աղետներից ու տհաճություններից մեզ զերծ պահելու ընդունակ բոլոր միջոցները՝ պայմանով, որ դրանք անազնիվ չեն, ոչ միայն թույլատրելի են, այլև արժանի են ամենայն գովեստի: Ինչ վերաբերում է տոկունությանը, ապա մենք դրա կարիքն զգում ենք, կրեչու համար այն դառնությունները, որոնց դեմ պայքարելու միջոցներ չկան: Զէ որ չկա կովում զենքը կիրառելու այնպիսի հնարք կամ եղանակ, որը մենք համարենք վատը, միայն թե այն օգնի կասեցնելու մեզ վրա ուղղված հարվածը:

Բազմաթիվ ռազմատենչ ժողովուրդներ կովի դաշտից հանկարծակի փախուստն օգտագործում էին որպես թշնամուն հաղթելու ամենազխափոր միջոցներից մեկը, և նրանց թիկունք ցույց տալը թշնամու համար ավելի վտանգավոր էր, քան դեմքով կանգնելը:

Թուրքերն այժմ էլ տակվին գիտակ են այդ գործին:

Պլատոնի մոտ Սոկրատեսը ծաղրում է Լաքեսին, որը քաջությունը սահմանում է հետևյալ կերպ. «Անդրդվելիորեն կանգնել զորաշարքում թշնամու առաջ»: — «Ինչպե՞ս», — բացականչում է Սոկրատեսը: — Մի՞թե նահանջելով թշնամուն հարվածելը վախկոտություն կլիներ»: Եվ ի հաստատումն իր խոսքի նա վկայակոչում է Հոմերոսին, որը գովերգում է էնեասին՝ փախուստը հմտորեն օգտագործելու համար: Իսկ երբ Լաքեսը, մտածելով, պետք է խոստովաննի, որ իրոք այդպիսին է սկյութացիների և առհասարակ բոլոր հեծյալ զինվորների սովորությունը, Սոկրատեսն օրինակ բերեց նաև հետևակային լակեդեմոնացիներին՝ մի ժողովուրդ, որ շատ սովոր էր աննկունորեն կովել հետևակային զորաշարքում. Պլատոնի ճակատամարտում, պարսիկների փաղանգը ճեղքելու անհաջող փորձերից հետո, նրանք որոշեցին ցաքուցրիվ նահանջել, որպեսզի փախուստի տպավորություն ստեղծելով մասնատեն ու ցրիվ տան պարսիկների ահարկու զանգվածը, երբ նրանք կնետվեն հետապնդելու իրենց: Ենորհիվ այդ խորամանկության նրանք հաղթեցին¹:

Սկյութացիների մասին պատմում են, թե իբր այդ ժողովրդին հնազանդեցնելու նպատակով ձեռնարկած արշավանքի ժամանակ Դարեհը

նրանց թագավորին սաստիկ հանդիմանել է, որ վերջինս շարունակ նահանջում է և խուսափում բաց ճակատամարտից: Ինդատիքսը² (այդպես էր թագավորի անունը) պատասխանել է, որ ինքը նահանջում է ոչ թե վախից, քանզի առհասարակ աշխարհում ոչ մեկից չի վախենում, այլ նրա համար, որ այդպիսին է պատերազմում սկյութացիների սովորութունը, ախր նրանք չունեն ոչ մշակովի հողեր, ոչ քաղաքներ, ոչ տներ, որոնք թշնամու ձեռքը շտալու համար հարկ է պաշապանել: Սակայն, ավելացրել է նա, եթե Դարեհն³ այդքան շտապում է հակառակորդի հետ բաց մարտի բռնվել, թող մոտենա այն վայրերին, ուր Ինդատիրսի նախնիների գերեզմաններն են. այնտեղ նա իր հետ ուժերը չափող կգտնի:

Այնուհանդերձ, երբ թնդանոթների թիրախ ես դառնում, իսկ դա պատերազմում հաճախ է պատահում, ումբագնդերից վախենալը համարվում է ամոթաբեր, քանզի ընդունված է մտածել, թե սրընթաց ու հզոր այդ արկերից միևնույն է շես փրկվի: Եվ հաճախ է եղել, որ նա, սվ այդ պարագայում երում բարձրացրել է ձեռքը կամ խոնարհել գլուխը, առնվազն, հարուցել է ընկերների քրքիշը:

Բայց ահա թե ինչ տեղի ունեցավ մի անգամ Պրովանտում մեր դեմ Կարլոս V կայսեր արշավանքի ժամանակ: Մարկիզ դել Գուաստոյին, որը հետախուզության էր գնացել Արլ քաղաքը և դուրս եկել իրեն պատսպարող ու քաղաքին մոտենալու հնարավորութունն ավող հողմաղացի հետևից, նկատեցին պարոնայք դը Բոնեալն ու սենեշալ Աժենուան, որոնք ճեմում էին Արլի կրկեսի ամֆիթատրոնում: Վերջիններս մարկիզ դել Գուաստոյի մասին հայտնեցին հրետանու պետ պարոն դը Վիլիեին, և սա կույնրինով³ այնպես նշան բռնեց, որ եթե վերոհիշյալ մարկիզը, նկատելով իր վրա բաց արած կրակը, արագորեն շորեքթաթ քաներ, ապա, երևի, արկը նրա մարմինը կմխրճվեր: Նման բան տեղի է ունեցել նաև դրանից մի քանի տարի առաջ Ուրբինոյի դուքս Լորենցո Ենդիչիի՝ մեր թագավորի մորապապի⁴ հետ Իտալիայի Վիկարիատ կոչվող մարզում⁵ գտնվող Մոնդուֆո ամրոցի պաշարման ժամանակ. տեղեկելով, որ արդեն պատրույզը մոտեցրել են հենց իր վրա ուղղված թնդանոթին, նա փրկվել է միայն, գետնին ընկնելով, կարելի է ասել, բազի պես սուզվելով: Այլապես ումբագունդը, որն անցավ համարյա նրա սլիավերևով, անտարակույս, կդիպչեր ուղիղ փոքրին: Ճիշտն ասած, եո եմ կարծում, թե մենք այդ շարժումներն անում ենք մտածված, քանզի ինչպե՞ս կարելի է դատել ճիշտ կամ սխալ նշանառության մասին, որը ամեն բան կատարվում է այդպես անակնկալ: Եվ անհամեմատ վելի ճիշտ կլինի ենթադրել, որ նկարագրված դեպքերում այդ մարդ-

կանց հանդեպ բարեհաճ է եղել ճակատագիրը, և որ վախեցած վիճակում այդ կերպ վարվելով, կարելի է նույն հաջողութեամբ ինչպես խուսափել, այնպես էլ ընկնել ոմբագնդի տակ:

Երբ կայծքարավոր հրացանների խլացուցիչ թնդյունը հանկարծ խփում է ականջիս, և ըստ որում այնպիսի տեղում, ուր նման բան սպասելու ոչ մի հիմք չունեմ, ես շեմ կարող դողս զսպել, ինձ բազմիցս վիճակվել է տեսնել, թե ինչպես նույն բանը տեղի է ունենում ինձանից ավելի քաջ մարդկանց հետ:

Նույնիսկ ստոիկյանների համար պարզ է, որ իմաստունի հոգին, ինչպիսին նրանք այն պատկերացնում են, անկարող է դիմադրել հանկարծակի իր վրա թափվող տպավորություններին ու պատկերներին և այդ իմաստունն օրինական տուրք է տալիս բնությանը, երբ զունատվում ու կուչ է գալիս, լսելով, օրինակ, ամպրոպի ճայթյունը կամ դալամիլի դղրոցունը: Նույն բանն է կատարվում, երբ նրան համակում են կրքերը, միայն թե միտքը մնա պայծառ և շխախտի իր ընթացքը, միայն թե բանականությունը, մնալով անխաթար ու իրեն հավատարիմ, տեղի չտա վախի կամ տառապանքի զգացմունքի առջև: Նրանք, ովքեր շեն պատկանում իմաստունների թվին, ճիշտ նույն կերպ են իրենց պահում, և թե նկատի առնենք ասվածի առաջին մասը, և բոլորովին այլ կերպ, և թե՛ երկրորդը: Քանզի սովորական խառնվածքի տեր մարդկանց մոտ կրքերի ազդեցությունը մակերեսային չէ, այլ թափանցում է նրանց բանականության խորքերը, վարակելով ու թունավորելով այն: Այդպիսի մարդը դատում է կրքերի անմիջական ազդեցության ներքո և կարծես ենթարկվելով դրանց: Ահա իմաստուն ստոիկյանի հոգեվիճակի լրիվ ու ճիշտ պատկերը:

Mens immota manet, lacrimae volvuntur inanes*.

Պերիպատետիկների ըմբռնմամբ իմաստունը զերծ չէ հոգեկան ցրնցումներից, բայց շափավորում է դրանք:

Գլուխ XIII

ԹԱԳԱՎՈՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ

Չկա նույնիսկ մի շնչին առարկա, որ անտեղի լինի իմ այս արտասովոր խառնուրդում: Համաձայն մեզ մոտ ընդունված կանոնների, տա-

* Ոգին անսասան է, արցունքները զուր են հոսում⁶ (լատ.):

նը շինելը մեծ անքաղաքավարություն է նույնիսկ մեզ հավասարի, իսկ առավել ևս հասարակության մեջ բարձր դիրք զբաղող մարդու հանդեպ, եթե նա վաղօրոք տեղեկացրել է իր գալստյան մասին: Ավելին, նավարայի թագուհի Մարգարիտը՝ այդ առթիվ ասում է նաև, թե ազնվականի կողմից անքաղաքավարություն է տանից ընդառաջ դուրս գալ այցելուին (ինչպես դա հաճախ պատահում է), որքան էլ վերջինս ազնվատոհմ լինի, այլ անհամեմատ ավելի հարգալից ու քաղաքավարի է սպասել տանը, թեկուզև ճանապարհին նրան կորցնելու երկյուղից, և այդպիսի դեպքերում բավական է հյուրին ուղեկցել մինչև նրա համաբնախատեսված հարկարածինը:

Ինչ վերաբերում է ինձ, ապա ես հաճախ մոռանում եմ թե մեկ, թե մյուս այդ դատարկ պարտականությունները, քանզի աշխատում եմ իմ տանից դուրս մղել ամեն տեսակ ծիսակարգերը: Կան մարդիկ, որոնք երբեմն դրանից նեղանում են: Բայց ի՞նչ արած: Ավելի լավ է մեկին զեթ մեկ անգամ նեղացնես, քան ինքդ շարունակ նեղություն կրես. այս վերջինն ինձ համար անտանելի լուծ կլիներ: Ի՞նչ միտք ունի պալատական ստրկությունից փախչելը, եթե այն արմատավորում ես քո սեփական որջում:

Ահա ևս մի կանոն, որն անշեղորեն պահպանվում է ամեն տեսակ ժողովներում, կանոնում ասվում է, թե ստորադրյալները պետք է առաջինը ներկայանան, մինչդեռ ավելի երևելիներին սազում է, որ իրենց սպասեն: Մակայն նախքան Ֆրանցիսկ թագավորի հետ Կղեմես պապի խանդավորմը, որ պետք է տեղի ունենար Մարսելում, թագավորը, անելով անհրաժեշտ բոլոր կարգադրությունները, հեռացավ այդ քաղաքից, պապին հնարավորություն տրամադրելով երկու կամ երեք օր տեղավորվել ու հանգստանալ, և միայն դրանից հետո վերադարձավ, որ հանդիպի նրա հետ: Ճիշտ նույն կերպ, երբ այդ նույն պապն ու կայսրը հանդիպում նշանակեցին Բոլոնիայում, կայսրը հնարավորություն տվեց պապին այնտեղ հասնել առաջինը, իսկ ինքը ժամանեց մի փոքր ավելի ուշ: Թագավորող անձինք հանդիպումների ժամանակ ղեկավարվում են, ինչպես գիտակ մարդիկ են ասում, հետևյալ կանոնով. նա, ով ամենագրեզն է, պետք է նշանակված տեղում լինի մյուսներից առաջ և նույնիսկ նախքան այն թագավորը, որի տիրույթներում տեղի է ունենում խանդավորմը, գտնում են, որ այդ հնարքը կիրառվում է ցուցադրելու համար, թե իբր ցածրները փնտրում են բարձրին և համառորեն ձգտում խանդավորել նրա հետ, այլ ոչ ընդհակառակը:

Ոչ միայն յուրաքանչյուր երկիր, այլև յուրաքանչյուր քաղաք, և անգամ յուրաքանչյուր դաս ունի քաղաքավարության իր հատուկ կանոն-

ներք: Թս բաժականաչափ զավ եմ ղաստիարակվել երեխա ժամանակ և ապա միշտ գտնվել եմ բաժականաչափ օրինավոր միջվայրում, ուստի գիտեմ մեր Ֆրանսիական քաղաքավարության կանոնները, ավելին, ես կարող եմ դրանք սովորեցնել ուրիշներին: Թս սիրում եմ հետևել դրանց, բայց ոչ այնքան հնազանդորեն, որ դրանք կապանքներ դնեն կյանքիս վրա: Որոշ կանոններ մեզ թվում են կաշկանգիչ, և եթե մենք դրանք մոռանում ենք կանխամտածված, այլ ոչ թե տնդաստիարակության պատճառով, ապա դա ոչ մի չափով չի նսեմացնում մեր սիրալիրությունը: Թս հաճախ հանդիպել եմ մարդկանց, որոնք եղել են անհարգալից, որովհետև եղել են չափազանց հարգալից, և եղել են անտանելի, որովհետև եղել են չափազանց սիրալիր:

Սակայն մարդկանց հետ վարվել կարողանալը շատ օգտակար բան է: Սիրալիրության ու գեղեցկության նման, այն հեշտացնում է մեր մուտքը հասարակություն և նպաստում բարեկամական կապերի հաստատմանը, դրանով իսկ հնարավորություն ընձեռելով սովորել ուրիշների օրինակով և, ընդամիև, օրինակ ծառայել և ցույց տալ մեր լավ կողմը, եթե միայն մեզանում կա ընդօրինակման արժանի և շրջապատի համար ուսանելի որևէ բան:

Կլոյխ XIV

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԲԱՐՈՒ ԵՎ ՉԱՐԻ ՄԵՐ ԸՍԲՈՆՈՒՄԸ ԶԳԱԼԻ ՉԱՓՈՎ ԿԱՆՎԱԾ Է ԴՐԱՆՑ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻՑ

Ինչպես սավում է հին հունական մի ասույթում, մարդկանց տանջում են ոչ թե բուն իրերը, այլ դրանց մասին նրանց պատկերացումները: Եվ եթե մեկը պարզեր, որ դա ճիտ է միշտ և ամենուր, չափազանց շատ բան արած կլինեն թեթևացնելու համար մեր մարդկային ողորմելի վիճակը: Զէ որ եթե տառապանքներն իսկապես ծնում է մեր բանախոհությունը, ապա, թվում է, մենք կարող ենք կամ բուլտրովին արհամարհել, կամ բարիքի վերածել դրանք: Եթե իրերն իրենք իրենց հանձնում են մեր տնօրինությանը, ուրեմն ինչո՞ւ դրանք մինչև վերջ չենթարկենք մեզ և չհարմարեցնենք մեր օգտին: Եվ եթե այն, ինչը մենք անվանում ենք շարիք ու տառապանք, ինքնին ոչ շարիք է, ոչ տառապանք, և սոսկ մեր երևակայությունն է նրանց այդպիսի հատկանիշներ վերագրում, ապա ոչ այլ ոք, քան մենք ինքներս, կարող ենք փոխադրել դրանք ուրիշներով: Ունենալով ազատ ընտրության հնարավորություն, ամենևին չենթարկվելով կողմնակի ճնշման, մենք, այնուհանդերձ, ցուցաբերում ենք արտասովոր խելացնորություն, գերապատվությունը տալով անա-

գործուն քայտին և մեր հիվանդությունները, աղքատությունն ու խայտառակությունը համարելով դառը, զզվելի ու տապահամ, մինչդեռ կարող էինք այդ համը դարձնել հաճելի, չէ որ ճակատագիրը մեզ տրամադրում է միայն թերամշակ նյութը, և մենք ինքներս պետք է գրան ձև տանք: Եվ այսպես, եկեք տեսնեք, թե կարելի է արդյոք ապացուցել, որ այն, ինչը մենք անվանում ենք շարիք, ինքնին այդպիսին չէ, կամ, համեմայն դեպս, ինչ էլ որ լինի, մեզանից է կախված դրան ուրիշ համ և ուրիշ կերպարանք տալը, քանզի, ի վերջո, ամեն բան հանգում է դրան: Եթե բուն էությունն այն բանի, ինչի առաջ մենք դողում ենք, ինքնին ունակ լիներ արմատավորվելու մեր գիտակցության մեջ, ապա այն հավասարապես ու նույնությամբ կարմատավորվեր բոլորի գիտակցության մեջ, քանզի բոլոր մարդիկ նույն ցեղատեսակից են, բոլորն ունեն ճանաչելու և դատելու ավել կամ պակաս չափով միատեսակ ընդունակություններ ու միջոցներ: Սակայն միևնույն բաների մասին մեր պատկերացումների տարբերությունն ակնհայտորեն ապացուցում է, որ այդ պատկերացումները մեզ մոտ ձևավորվում են ոչ այլ կերպ, քան մեր հակումներին համապատասխան, միգուցե որևէ մեկը երջանիկ պատահականությամբ դրան: Ընկալում է իսկական էությամբ, սակայն հազարավոր ուրիշները դրանցում տեսնում են բոլորովին տարբեր, այլ էություն:

Մենք մահը, աղքատությունն ու տառապանքը դիտում ենք որպես մեր ամենաոխերիմ թշնամիները: Սակայն ո՞վ չգիտե, թե այն նույն մահը, որը ոմանք համարում են բոլոր սոսկալի բաներից ամենասոսկալին, մյուսների համար այս կյանքի տագնապներից պաշտպանող միակ պատ ու պատվարն է, գերագույն բարիքը, մեր ազատության տղբյուրը, լիակատար ու վերջնական ազատագրումը բոլոր պատուհասներից: Եվ մինչ ոմանք ահ ու դողով սպասում են նրա մոտենալուն, մյուսները նրանում ավելի շատ են ուրախություն տեսնում, քան կյանքում:

Կան անգամ այնպիսիք, ովքեր ցավում են, որ մահը մատչելի է ամենքին:

Mors utinam pavidos vita subducere nolle.

! Sed virtus te sola daret*.

Սակայն շնորհե՛ք մեծահոշակ քաջություն ունեցող մարդկանց, ինչպիսին Քեռոսրոսն էր, որն իրեն սպանել սպառնացող կիսիմարոսին

* Ո՞վ դու մահ, ո՞ւր էր, թե շիւեիր վախկոտների կյանքը, ո՞ւր էր, թե միայն քաջությունն արժանանար քեզ² (լատ.):

ասաց. «Իրանով դու կգործես մի սխրանք, որը կգործեր նաև խարա-
նաճանճը»։ Փիլիսոփաների մեծ մասն իրենք էն կանխորոշել իրենց
նահը կամ սեփական ջանքերով արագացրել այն։

Իսկ ժողովրդի ծոցից ելած ինչքան մարդիկ գիտենք, որոնք կանգ-
նած լինելով ոչ թե սովորական ու դյուրին, այլ մեծ խայտառակության,
իսկ երբեմն էլ քստմենելի տառապանքների հետ կապված մահվան շե-
մին, պահպանում էին ոգու այնպիսի արիություն (մեկը կամակորու-
թյունից, մեկ ուրիշը պարզամտությունից), որ սովորական վիճակի հա-
մեմատությամբ նրանց մոտ չէր նկատվում ոչ մի փոփոխություն։ Նրանք
կարգադրություններ էին անում իրենց տնային գործերի վերաբերյալ,
հրաժեշտ էին տալիս բարեկամներին, երգում էին, խրատական և այլ
խոսքերով դիմում ժողովրդին, երբեմն նույնիսկ համեմելով դրանք կա-
նակներով, և, ճիշտ Սոկրատեսի նման, խմում էին իրենց բարեկամների
կենացը։ Նրանցից մեկը, որին տանում էին կախաղան, հայտարարեց,
թե կարիք չկա գնալ այդ փողոցով, քանզի ինքը կարող է հանդիպել
խանութպանին, որը հին պարտքի համար կբռնի իր օձիքից։ Մեկ ուրի-
շը, այնքան էր վախենում խուտուտից, որ գահիճին խնդրեց չդիպչել
իր վզին, թե չէ ծիծաղից կցնցվի։ Երրորդը պատասխանեց այն խոս-
տովանահորը, որը խոստանում էր, թե արդեն երեկոյան նա հաց կկտրի
մեր փրկչի հետ. «Այդ դեպքում ինքներդ գնացեք այնտեղ, իսկ ես այսօր
պաս եմ պահում»։ Զորրորդը ջուր ուզեց և, երբ դահիճն առաջինը խմեց
այդ ջրից, ասաց, որ ինքը ոչ մի դեպքում չի խմի նրանից հետո. քանզի
վախենում է, թե մի վատ հիվանդություն ձեռք կբերի։ Ո՞վ չի լսել պի-
կարդացու պատմությունը։ Երբ նա արդեն կանգնած էր կախաղանի
տակ, մոտ բերին մի պոռնիկ և խոստացան, որ եթե նա համաձայնի
ամուսնանալ հետը, նրան կյանք կբաշխվի (չէ որ մեր արդարադատու-
թյունը երբեմն դիմում է այդ քայլին), նայելով կնոջն ու նկատելով, որ
մի ոտքով կազի է տալիս, նա բղավեց. «Իե՛հ, հազցրու օղակը։ Նա
կաղ է»։ Համանման պատմություն կա մի դանիացու մասին, որին պետք
է զլխատեին։ Արդեն կառափնաբեմին, նա հրաժարվեց նույն պայմանով
առաջարկված ներումից լոկ այն պատճառով, որ իրեն հրամցվող կնոջ
այտերը փոս ընկած էին, իսկ քիթը՝ շատ սուր։ Հերետիկոսության մեջ
մեղադրվող մի թուրուզցի ծառա իր հավատի ճշտությունն ապացուցելու
համար կարող էր վկայակոչել լոկ այն, թե այդպիսին է հավատն իր
տիրոջ, որն իր հետ միասին գնդան նետած մի երիտասարդ ուսանող էր,
նա մահ ընդունեց, այդպես էլ իրեն թույլ շտալով կասկածել սեփական
տիրոջ իրավացիությանը։ Մենք գրքերից գիտենք, որ երբ Լյուդովիկոս
XI-ը գրավեց Առաս քաղաքը, բնակիչների մեջ գտնվեցին շատերը,

որոնք գերադասեցին կախաղան բարձրանալ, միայն թե շքավեին.
«Կեցցե՛ թագավորը»:

Նարսինգյան թագավորութունում՝ քրմերի կանայք ցայժմ էլ ողջ-
ողջ թաղվում են իրենց մեռած ամուսինների հետ: Բոլոր մյուս կանանց
ողջ-ողջ այրում են իրենց ամուսինների թաղման ժամանակ, և նրանք
մեռնում են ոչ միայն ապշեցուցիչ սոկունությունով, այլև, ինչպես ասում
են, նույնիսկ ուրախությունով: Իսկ երբ այրում են թագավորի դին, նրա
բոլոր կանայք, հարճերը, սիրելի անձինք և տարրեր կարգի պաշտոն-
յաները, ինչպես նաև ծառաները, կազմելով մի ատվար բաղմություն,
այնպիսի հաճույքով են հավաքվում խարույկի մոտ, նետվում մեջն ու
այրվում իրենց տիրակալի հետ, որ, պետք է ենթադրել, նրա հետ մեռ-
նելը մեծ պատիվ է համարվում այնտեղ:

Իսկ ի՞նչ ասես այն ստոր հոգիների՝ ծաղրածունների մասին: Նրանց
մեջ երբեմն լինում են նաև այնպիսիք, «չոնք նույնիսկ մահվան շեմին,
չեն ցանկանում հրաժեշտ տալ իրենց սովորական կատակախոսությա-
նը: Երբ դահիճը, կախաղան բարձրացնելով նրանցից մեկին, արդեն ոտ-
քերի տակից խփել զցել էր նեցուկը, նա բղավեց իր սիրելի ղվարձատույ-
թը. «Է՛հ, ինչ ուղում է լինի»: Մեկ ուրիշը, հենց օջախի մոտ ծղոտե
ներքնակին՝ մահամերձ պառկած, բժշկի այն հարցին, թե հատկապես որ
մասում է ցավ զգում, պատասխանեց. «անկողնու և օջախի արանքում»:
Իսկ երբ եկավ քահանան և, կամենալով տալ վերջին օժումը, սկսեց
շոշափել մեռնողի ոտնաթաթերը, որոնք նա ցավից ներս քաշեց, նա
ասաց. «Դուք դրանք կգտնեք իմ ոտքերի ծայրին»: Այն մարդուն, որը
նրան համոզում էր ինքն իրեն հանձնել մեր աստծուն, նա հարցրեց.
«Իսկ ո՞վ ինձ կհասցնի նրա մոտ» և, երբ ի պատասխան լսեց. «Դուցե,
դուք ինքներդ, եթե աստված կամենա», ասաց. «Բայց ախր ես նրա
մոտ կլինեմ, թերևս, միայն վաղը երեկոյան»:— «Դուք միայն ինքներդ
ձեզ հանձնեք նրա կամքին,— նկատեց զրուցակիցը,— և դուք այնտեղ
կլինեք շատ շուտով»:— «Այդ դեպքում,— հայտարարեց մեռնողը,—
ավելի լավ է ես ինքս ինձ հանձնեմ նրան»⁵:

Միլանի համար մեր վերջին պատերազմների ժամանակ, երբ այն
բազմիցս ձեռքից ձեռք էր անցնում, ճակատագրի անթիվ անակնկալ-
ներից հոգնատանջ ժողովուրդն այնպես էր տոգորվել մահվան տենչով,
որ, հորս ասելով, ինքն այնտեղ տեսել է մի ցուցակ, ուր եղել են ոչ
պակաս, քան քսանհինգ շափահաս տղամարդիկ՝ ընտանիքի հայրեր.
որոնք ինքնասպանություն են գործել ընդամենը մեկ շաբաթում⁶: Հա-
մանման բան է կատարվել նաև, երբ Բրուտոսը պաշարել է Քսանթոս⁷
քաղաքը. բնակիչներին՝ այրերին, կանանց ու երեխաներին, համակել

էր մեռնելու այնպիսի մի կրթութիւն ցանկութիւն, որ մարդիկ այնքան ջանք չէին թափում վերահաս մահից փրկվելու, որքան ատելի կյանքից ազատվելու համար, և Բրուտոսին դժվարութեամբ հաջողվեց փրկել միայն շնչին թվով մարդկանց:

Անեն մի համոզմունք կարող է լինել բավականաչափ ուժեղ, որպէսզի մարդկանց ստիպի այն պաշտպանել անգամ կյանքի գնով: Հույն-պարական պատերազմների ժամանակ Հունաստանի տված և պահպանված զեղեցիկ ու վեհ երդման առաջին կետն ասում էր, որ յուրաքանչյուր ոք ավելի շուտ կյանքը կփոխարինի մահով, քան իր երկրի գրեթէ բոլոր պարսկականով⁸: Իսկ քանի՜-քանիսը հույն-թուրքական պատերազմների ժամանակ զերադասեցին տանջամահ լինել, միայն թե չպղծեին թլպատումն ու շենթարկվեին մկրտման ծեսին: Եվ չկա մի կրթութիւն, որ չկարողանար նման բանի մղել:

Երբ Կաստիլիայի թագավորներն իրենց պետութիւնից արտաքսեցին հրեաներին, Պորտուգալիայի թագավոր Հովհաննեսը⁹ նրանց ապաստան տվեց իր տիրույթներում, գանձելով ամեն մեկից ութական էկչու, պայմանով, որ որոշակի ժամկետում նրանք կթողնեն իր թագավորութեան սահմանները, նա խոստացավ այդ նպատակով հանդերձել նավեր, որոնք նրանց կփոխադրեն Աֆրիկա: Նշանակված օրը, որից հետո բոլորը, ովքեր չէին ենթարկվում հրամանին, համաձայն նախազգուշացման, դառնում էին ստրուկներ, նրանց տրամադրվեցին միանգամայն աղքատիկ հանդերձված նավեր: Այդ նավերը նստողները հանդիպեցին անձնակազմերի դաժան ու կոպիտ վերաբերմունքին, անձնակազմեր, որոնք շիտակով արդեն այլ ծաղրանքների մասին, նրանց հետ ու առաջ էին աւանդում ծովում, մինչև որ արքայազմերը սպառնեցին իրենց հետ վերցրած ամբողջ պարենը և ստիպված եղան այնպիսի առասպելական գնեցումով դրանք առնել նավաստիներից, որ, երբ, ի վերջո, նրանց ափ իջեցրին, կատարելապէս կոզոպտիված էին:

Երբ այդ անամպոքիային վերաբերմունքի լուրը տարածվեց Պորտուգալիայում մնացածների շրջանում, մեծ մասը գերագուսեց ստրուկ դառնալը, իսկ տնանք տափանափոխութեան առեւտրի պատրաստակամութեամբ հայտնեցին: Հովհաննեսին փոխարինած Մանվելը սկզբից նրանց ազրաստութիւնն վերադարձուց, բայց հետո, փոխելով իր որոշումը, սահմանեց մի նոր ժամկետ, որից հետո նրանք պետք է թողնեին երկիրը, և դրա համար հատկացվեց երեք նավահանգիստ, որտեղ նրանք պետք է նավ նստելու թնչպէս իր հիանալի լատիներեն գրքում ասում է մեր ժամանակակի պատմագիր Եպիսկոպոս Օգորիտն¹⁰, նա մտածում էր, որ եթե իր շնորհած ազատութեան բարիքները չկարողացան նրանց հակել

քրիստոնեակցան, ապա դա կանի նախկինում մեկնած տոհմակիցների պես նավաստիների կողմից թալանված լինելու վախը, ինչպես նաև չկամությունը՝ թողնել այն երկիրը, ուր նրանք սովոր են տիրել մեծ հարստությունների և մեկնել օտար, անծանոթ ափեր: Սակայն համոզվելով, որ իր հույսերն ապարդյուն են և հրեաները, շնայած ոչ մի քանի, որոշել են հեռանալ, նա հրաժարվեց արքամադրել սկզբնական նշանակած երեք նավահանգիստներից երկուսը, մտածելով, թե ոտքերուծյան երկարատևությունն ու դժբախտությունները կվաճակեցնեն նրանցից մի քանիսին, կամ նպատակ ունի քողորին հավաքել մի տեղում, որպեսզի ավելի դյուրին կատարեր իր ծրագիրը: Քեզ թրագրել էր ահա թե ինչ. նա հրամայել էր հայրերի ու մայրերի ձեռքից խլել սասնչորսը շրոտրած բոլոր երեխաներին, ուղարկել մի այնպիսի տեղ, որ չկարողանային ոչ տեսնվել, ոչ շփվել իրենց ծնողների հետ, և դաստիարակել ըստ մեր կրոնի: Ասում են, թե այդ հրամանը դարձել է մի քսամնելի տեսարանի պատճառ: Ծնողների բնական սերը դեպի երեխաները և այս վերջիններինը դեպի ծնողները, ինչպես նաև հին հավատի ձգտումը չէին կարող հաշտվել այդ դաժան հրամանի հետ: Այստեղ կարելի էր տեսնել, թե ինչպես են ինքնասպան լինում ծնողները, կարելի էր տեսնել ավելի սոսկալի տեսարաններ, երբ նրանք, սիրուց ու կարեկցանքից իրենց փոքրիկ երեխաներին նետում էին ջրհորները, որպեսզի գոնե այդ ճանապարհով ազատեին մկրտումից: Նավերի պակասի պատճառով բաց թողնելով իրենց ժամկետը, նրանք դարձյալ սարկացվեցին: Նրանցից մի քանիսը գարձան քրիստոնյաներ, սակայն այժմ էլ, ամբողջ հարյուր տարի անց, Պորտուգալիայում քչերն են հավատում նրանց դավանափոխությունը կամ նրանց սերնդի նվիրվածությունը քրիստոնեից հավատին, թեև սովորությունն ու ժամանակը անհամեմատ ավելի ուժգին են ներդրածում, քան հարկադրանքը¹¹: Quoties non modo ductores nostri sed universi etiam exercitus ad non dubiam mortem concurrerunt*, **ասում է Յիցերոնը:**

Ինձ վիճակվել է հետևել իմ ամենամոտ բարեկամներից մեկին, որն ամբողջ հոգով ձգտում էր մահվան. դա նրանում արմատացած և դատողություններով ու ամեն տեսակ փառտարկներով ամբուպնդվող մի կիրք էր, որից հետ պահելը վեր էր իմ ուժերից, և իր համար պատ-

* Ոչ միայն մեր առաջնորդները, այլև ամբողջ բանակներ քանիցս սլացել են անխուսափելի մահվանն ընդառաջ¹² (լատ.):

վաբեր հանգամանքներում ինքնասպան լինելու տուգանքին իսկ հնարավորության դեպքում նա, առանց որևէ տեսանելի հիմքի, մահվան տանջալի ու այրող ծաբավից, նրան ընդառաջ նետվեց:

Մենք նման օրինակներ ունենք նաև մեր օրերում, ընդհուպ մինչև երեսնաները, որոնք մի շնչին անախորժության վախից ինքնասպան են եղել: «Էլ ինչի՞ց շենք վախենում,— այդ առթիվ ասում է մի հին գրող¹³,— եթե վախենում ենք անգամ այն բանից, ինչը վախկոտությունն է իրեն ապաստան ընտրել»: Ես երբեք չէի վերջացնի, եթե սկսեի թվարկել տարբեր դասի, ամենատարբեր կրոններ դավանող այրերին ու կանանց, որոնք նույնիսկ նախկին երջանիկ ժամանակներում անսասան հոգով սպասում էին մահվան, ավելին, իրենք էին այն փնտրում, ոմանք՝ երկրային գոյության դառնություններից ազատվելու համար, մյուսները՝ պարզապես կյանքից գերհագենալուց, երրորդները՝ այն աշխարհում ավելի լավ գոյության հույսից: Նրանք այնքան շատ են, որ հիրավի ինձ համար ավելի հեշտ կլինեի թվարկել մահից շվախեցողներին:

Միայն ահա թե ինչ: Մի անգամ ուժեղ փոթորիկի ժամանակ փիլիսոփա Պիոտնը¹⁴, կամենալով քաջալերել իր ուղեկիցներից մի քանիսին, որոնք, ինչպես ինքն էր տեսնում, մյուսներից ավելի էին վախենում, մատնացույց արեց նավի վրա գտնվող կոտած խոզին, որը ոչ մի ուշադրություն չէր դարձնում վատ եղանակին: Ուրեմն ի՞նչ, կհամարձակվե՞նք արդյոք պնդել, թե մեր բանականության տված առավելությունները, բանականություն, որով այդպես հպարտանում ենք և որի շնորհիվ երկրային մյուս արարածների տերն ու տիրակալն ենք, տրված են ի տառապանս մեզ: Մեր ինչի՞ն է պետք իրերի ճանաչողությունը, եթե դրա հետևանքով կորցնում ենք այն հանգիստն ու անդորրը, որոնք հակառակ դեպքում կունենայինք, և ընկնում ենք ավելի վատթար վիճակի մեջ, քանի Պիոտնի խոզը: Արդյոք ի վնաս մեզ չե՞նք օգտագործի հանուն մեր առավել բարիքի շնորհված հասկացողությունը, եթե այն կիրառենք հակառակ բնության նպատակների և իրերի ընդհանուր կարգի, ըստ որի յուրաքանչյուր ոք պետք է իր ուժերն ու հնարավորություններն օգտագործի հօգուտ իրեն:

Թերևս, ինձ կասեն. «Ձեր նկատառումները ճիշտ են, քանի դեռ խոսքը մահվան մասին է: Սակայն ի՞նչ կասեք աղքատության մասին: Ի՞նչ կասեք տառապանքի մասին, որը Արիստիպոսը¹⁵, Երոնիմը և իմաստունների մեծ մասը համարում էին ամենասարսափելի դժբախտությունը: Եվ մի՞թե խոսքով մերժողները, իրականում չէին ընդունում այն»: Պոմպեոսը, այցի գալով Պոսիդոնիոսին¹⁶ և տեսնելով նրա տառապանքը ծանր ու տանջալից հիվանդությունից, ներողություն խնդրեց, որ այդքան ան-

պատեճ էր եկել լսելու նրա փիլիսոփայական դատողութիւնները: «Աստ-
ված մի արասցե,— պատասխանեց նրան Պոսիդոնիոսը,— որ ցավն այդ-
պես պատի ինձ և խանգարի գատողութիւններ անել ու խոսել այդ
առարկայի շուրջ»: Եվ անմիջապես նա սկսեց երկար դատողութիւն-
ներ անել ցավն արհամարհելու մասին: Մինչդեռ ցավն անում էր իր
գործը և ոչ մի վայրկյան չէր թողնում, այնքան, որ, ի վերջո, նա բա-
ցականչեց. «Որքան էլ ջանաս, ցավ, քո ճիգերն ապարդյուն են, միե-
նույն է ես քեզ շարիք չեմ անվանի»: Արդյո՞ք սույն պատմութիւնը,
որին այդքան նշանակութիւն են տալիս, իրոք վկայում է ցավն արհա-
մարհելու մասին: Խոսքն այստեղ սոսկ բառերի դեմ պայքարելու մասին
է: Չէ՞ որ, եթե ցավերը շանհանգստացնեին Պոսիդոնիոսին, նա չէր ընդ-
հատի իր գատողութիւնները: Եվ ինչո՞ւ էր նա այդքան կարևորութիւն
տալիս այն բանին, որ հրաժարվում էր ցավը շարիք անվանել:

Այստեղ ամեն ինչ չէ, որ կախված է երևակայութիւնից: Եթե որոշ
դեպքերում մենք հետևում ենք մեր դատողութիւնների քմահաճությանը,
ապա այստեղ կա մի հավաստի բան, որ ինքն է խոսում իր մասին: Այդ
բանում գատավորները մեր զգացմունքներն են.

Qui nisi sunt veri, ratio quoque falsa sit omnis*.

Կարո՞ղ ենք արդյոք ստիպել մեր մաշկին, որ հավատա, թե խարա-
զանի հարվածները միայն խուտուտ են անում իրեն: Կամ համոզել
մեր ճաշակելիքին՝ թե հալվեի թուրմը սպիտակ գինի է: Պիտոնի
խոզը ևս մի ապացույց է մեր օգտին: Նա մահից չի վախենում, բայց,
եթե սկսես ծեծել, կճղճղա ու ցավ կզգա: Կարո՞ղ ենք արդյոք հաղթա-
հարել բնության ընդհանուր օրենքը, համաձայն որի աշխարհի երեսին
ապրող ամեն բան վախենում է ցավից: Մտուերն անգամ կարծես տըն-
քում են, երբ շարդոտում ես: Ինչ վերաբերում է մահվանը, մենք չենք
կարող զգալ այն, մենք այն ըմբռնում ենք լոկ բանախոհությամբ, քան-
զի կյանքից այն բաժանված է ոչ ավելի, քան մեկ ակնթարթով:

Auf fuit, aut veniet, nihil est praesentis in illa,
Morsque minus poenae quam mora mortis habet**.

Հազարավոր կենդանիներ, հազարավոր մարդիկ մեռնում են, չհասց-
նելով զգալ մոտալուտ մահը: Եվ իրոք, երբ մենք ասում ենք, թե վախե-

* Եթե զգացմունքները չլինեն ճշմարիտ, ապա մեր ամբողջ բանականութիւնն էլ կլինի
կեղծ¹⁷ (լատ.):

** Մահը կամ եղել է կամ կլինի, այն չի առնչվում ներկային, և նվազ տանջալի
է բուն մահը, քան նրա սպասումը¹⁸ (լատ.):

նում ենք մահից, ապա նախ և առաջ մտածում ենք ցավի՝ նրա սովա-
րական նախակարապետի մասին:

Թեպետ, եթե հավատանք եկեղեցու հայրերից մեկին, *malam mortem non facit, nisi quod sequitur mortem**.

Սակայն, ինձ թվում է, ավելի ճիշտ կլիներ ասել, թե ոչ այն, ինչը նա-
խորդում է մահվանը, ոչ այն, ինչը հետևում է նրան, ըստ էության մահ-
վանը շեն վերաբերում: Մենք մեզ ներում ենք առանց բավարար հիմ-
քերի: Եվ, ինչպես փորձն է ասում, բանն այստեղ ավելի շուտ մահվան
մտքի անտանելիությանն է, որն անտանելի է դարձնում նաև մեզ կրրկ-
նակի տառապանք պատճառող մահազույժ ցավը: Բայց բանի որ բանա-
կանությունը կշտամբում է մեզ փոքրոգության համար, թե վախենում
ենք այդքան անակնկալ, այդքան անխուսափելի և այդքան անզգայելի
բանից, մենք դիմում ենք մեր վախի այդ՝ առավել հարմար արդա-
րացմանը:

Ցանկացած հիվանդություն, եթե այն իր մեջ ուրիշ ոչ մի վտանգ չի
պարունակում, բացի պատճառած տառապանքներից, մենք համարում
ենք անվտանգ: Ո՞վ իսկական հիվանդություն կհամարի ատամնացավը,
կամ ասեներ, հոդատապը, որքան էլ դրանք տանջալի լինեն, եթե մա-
հացու չեն: Սակայն, ենթադրենք, թե մահվան մեջ մեզ ամենից շատ
վախեցնում է տառապանքը, ճիշտ նույն կերպ, աղքատության մեջ
չկա սարսափելի ոչինչ, բացի այն, որ, դատապարտելով մեզ սովի ու
ծարավի, տապի ու ցրտի, անքուն գիշերների և այլ ձախորդություն-
ների, այն մեզ զարձնում է տառապանքի որս:

Ուրեմն, խոսենք միայն Ֆիզիկական ցավի մասին: Ես տալիս եմ
նրան պատշաճը: Ֆիզիկական ցավը մեր գոյության ամենավատ ուղե-
կիցն է, և ես գա ընդունում եմ լիակատար պատրաստակամությամբ:
Ես այն մարդկանցից եմ, որոնք ամբողջ հոգով ատում են ցավը, կա-
րելուն շափ խուսափում նրանից, և, փառք աստծո, մինչև հիմա իսկա-
կանի պես չեմ ծանոթացել նրա հետ: Բայց չէ որ մենք կարող ենք, եթե
ոչ իսպառ վերացնել այն, ապա, գոնե, որոշ շափով մեղմացնել համբե-
րությամբ և, որքան էլ մեր մարմինը տանջվի, աներեր պահել մեր բա-
նականությունն ու ոգին:

Եթե գա այդպես շիհներ, մեղանից ո՞վ կգնահատեր առաքինություն-
ները, բաշությունը, ուժը, հոգու մեծությունը, վճռականությունը: Որտե՞ղ

* Մահը շարիք է լոկ այն բանի համար, ինչ նրան հետևում է¹⁹ (լատ.):

կղրսևորվեին գրանք, եթե չլինեք տառապանքը, սրի դեմ պայքարում են: Avida est periculi virtus*.

Եթե ստիպված չլինեինք քնել մերկ գետնին, լիակազմ ասպազենք հագած տանել կեսօրյա շոգը, սնվել ձիու կամ ավանակի մսով, ենթարկվել անդամահատված լինելու վտանգին, դիմանալ, երբ հանում են ոսկորներիդ մեջ մխրձված զնդակը, կաթում, լվանում, շոշափում, շիկացած երկաթով դադում են վերքդ՝ ինչո՞վ կարող էինք ցուցաբերել այն գերազանցությունը, որով կամենում ենք տարջերվել ստոր էակներից: Եվ երբ իմաստուններն ասում են, թե երկու միատեսակ փառահեղ գործերից մեզ ավելի դայթակղիչ է թվում այն, որի հաստատումն ավելի դժվար է, ապա դա բնավ նման չէ տառապանքներից ու ցավից խուսափելու խորհրդի: Non enim hilaritate, nec lascivia, nec risu aut ioco comite levitatis, sed saepe etiam trister firmitate et constantia sunt beati**.

Ահա թե ինչու հնարավոր չէր տարհամոզել մեր նախնիներին այն բանում, որ բաց մարտում, անակնկալներով հղի պատերազմներում տարած հաղթանակներն ավելի պատվաբեր են, քան առանց որևէ վտանգի, միայն ճարպկությունմբ ու հնարագիտությունմբ ձեռք բերածները.

Laetius est, quoties magno sibi conostat honestum***.

Բացի այդ, մենք պետք է մխիթարվենք նաև, որ սովորաբար, եթե ցավը շատ է տանջալի, երկար շի տևում, իսկ եթե երկարատև է, ապա առանձնապես տանջալի չէ. si gravis brevis, si longus levis****.

Դու այն շափազանց երկար շես տանի, եթե շափազանց խիստ ես զգում, այն վերջ կտա կամ իրեն, կամ քեզ: Ի վերջո, թե մեկը, թե մյուսը

* Քաջությունը վտանգի է ծարավի²⁰ (լատ.):

** Զէ որ նույնիսկ լինելով վշտաբեկ, նրանք հաճախ սփոփանք են գտնում ոչ թե արախություն ու զվարճությունների, ոչ թե ծիծաղի ու կատակի՝ թեթևամտության այդ ուղեկցի, այլ տոկունության ու հաստատունության մեջ²¹ (լատ.):

*** Որքան առաքինությունը դժվար է ձեռք բերվում, այնքան նա ավելի հաճելի է²² (լատ.):

**** Եթե ցավը տանջալի է, ապա երկարատև չէ, եթե երկարատև է, ապա տանջալի չէ²³ (լատ.):

հանգեցնում են միևնույն բանին: Եթե դու չես կարող տանել ցավը, այն ինքը բեզ կտանի: Memineris maximos morte finiri: parvos multa habere intervalla requietis; mediocrium nos esse dominos; ut si tolerabiles sint, feramus, sin minus, e vita cum ea non placeat, tanquam e theatro exeamus*.

Ցավը մեզ համար անտանելի է դառնում այն բանից, որ մենք սովոր չենք գերագույն գոհացում գտնել հոգում և գլխավոր օգնությունը սպասել նրանից, թեև հենց նա է և՛ մեր վիճակի, և՛ մեր վարքի միակ ու լիիշխան տերը: Մեր մարմիններն ունեն քիչ թե շատ միանման կազմվածք և միատեսակ հակումներ: Իսկ մեր հոգին խիստ փոփոխական է և ընդունում է ամենատարբեր ձևեր, ըստ որում կարողանալով իրեն և՛ իր վիճակին՝ ինչպիսին էլ լինի այդ վիճակը, հարմարեցնել մեր մարմնի զգայություններն ու բոլոր մյուս դրսևորումները: Ահա թե ինչու այն հարկավոր է ուսումնասիրել ու հետազոտել, ահա թե ինչու հարկավոր է գործի դնել նրանում թաքնված հզոր շարժիչ ուժերը: Չկան այնպիսի փաստարկներ ու արգելքներ, չկա մի ուժ, որ կարողանա դիմակայել նրա հակումներին ու ընտրությունը: Նա ունի հազարավոր ամենատարբեր հնարավորություններ, ուրեմն եկեք ընձեռենք նաև այն մեկը, որը կապահովի մեր կյանքն ու անդորրը, և այնժամ մենք ոչ միայն կպաշտպանվենք ճակատագրի հարվածներից, այլև, եթե նա կամենա, նույնիսկ տառապանքներ ու վիրավորանքներ կրելով, կհամարենք, որ այդ հարվածները երջանկացրել ու բարերարություն են արել մեզ:

Նա անխտիր ամեն ինչից օգուտ է քաղում: Նույնիսկ մոլորությունները, նույնիսկ երազները ծառայում են նրա նպատակներին. նա ամեն բան գործի կդնի, միայն թե մեզ զերծ պահի վտանգից ու տազնապից:

Իյուրին է տեսնել, թե հատկապես ինչն է սաստկացնում մեր տառապանքներն ու վայելքները. դա մեր մտքի ազդեցություն ուժն է: Կենդանիները, որոնց խելքը գրվանի տակ է, իրենց մարմնին թույլ են տալիս ազատ ու անմիջականորեն, հետևաբար, նաև յուրաքանչյուր տեսակի համար գրեթե նույն կերպ, արտահայտել իրենց զգացումները, դրանում հեշտ է համոզվել, դիտելով նրանց շարժումները, որոնք համապատասխան պարագաներում միշտ միատեսակ են, եթե մենք այդ

* Հիշիր, որ սաստիկ տառապանքներն ավարտվում են մահով, շափավորները հտճախ կարճատև դադարներ են տալիս մեզ, իսկ թուլերի նկատմամբ մենք տիրակալներ ենք, տյապիսով, եթե գրանք տանելի են, դիմանանք, իսկ եթե ոչ՝ հեռանանք կյանքից, ինչպես թատրոնից, քանզի այն ուրախություն չի պատճառում մեզ²⁴ (լատ.):

հարցում չկաշկանդեինք մեր մարմնի մասերի օրինական իրավունքները, ապա պետք է մտածել, որ դրանից մեզ շատ ավելի լավ կզգայինք, քանզի բնությունը պատշաճ չափով դրանք օժտել է հաճույքի բնական հակումով և տառապանք կրելու բնական ունակությամբ: Եվ սրանք չէին էլ կարող անբնական լինել, որովհետև հատուկ են բոլորին և միատեսակ են բոլորի համար: Սակայն քանի որ մեր երևակայության անսանձ ազատությանն անձնատուր լինելու համար մենք մասամբ ձերբազատվել ենք բնության օրենքներից, գոնե՞ աշխատենք օգնել ինքներս մեզ, տալով նրան առավել հաճելի ուղղություն:

Պլատոնը երկյուղում է ամբողջ էությունը տառապանքի ու վայելքի անձնատուր լինելու մեր հակումից, քանզի այն չափազանց շատ է հոգին ենթարկում մեր մարմնին և կապում նրան²⁵: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես երկյուղ ունեմ ավելի շուտ հակառակ բանից, այսինքն՝ թե այն կտրում ու հեռացնում է դրանք միմյանցից:

Ինչպես թշնամին, տեսնելով, որ մենք փախուստի ենք դիմել, ավելի է կատաղում, այդպես էլ ցավը, նկատելով, որ մենք վախենում ենք իրենից, ավելի անողոր է դառնում: Բայց, այն մեղմանում է, եթե հակազդեցություն է հանդիպում: Հարկ է դիմադրել նրան, հարկ է պայքարել նրա դեմ: Սակայն եթե մենք վհատվում ենք և տեղի տալիս, դրանով իսկ հարուցում ենք վերահաս կործանում և արագացնում այն: Եվ ինչպես մարմինը, լարվելով, ավելի լավ է դիմանում գրոհի, այդպես էլ մեր հոգին է:

Դիմենք, սակայն, օրինակների՝ ինձ նման թույլ մարդկանց այդ սպնականին, և այստեղ մենք իսկույն կհամոզվենք, որ տառապանքի ու թանկարժեք քարերի հարցում բանը նույնն է. քարերը փայլում են պայծառ կամ աղոտ, կախված շրջանակից, նմանապես, տառապանքը մեզ կլանում է այնքանով, որքանով մենք տեղի ենք տալիս նրա առջև:

Tantum doluerunt quantum doloribus se inserverunt*,

ասում է սուրբ Օգոստինոսը: Մենք անհամեմատ ավելի շատ ենք ցավ գրում վիրաբույժի նշտարից, քան մարտի թեժ պահին ստացած տասնյակ սրավերքերից: Թե՛ բժիշկները, թե՛ ինքն աստված ծնունդի ցավերը համարում են անչափ տանջալից, և մենք այդ իրադարձությունն ուղեկցում ենք ամեն տեսակ արարողություններով, այնինչ, կան ժողովուրդներ, որոնք բանի տեղ չեն դնում այդ ցավերը: Ես չեմ խոսում

* Ինչպես տառապում են ճիշտ այնքանով, որքանով տեղի են տալիս տառապանքի (լատ.):

արդեն սպարտացի կանանց մասին, հիշատակեմ միայն շվեյցարուհիներին՝ մեր վարձու հետևակալիներին կանանց: Ինչո՞վ է աչքի ընկնում նրանց կենսաձևը ծննդաբերությունից հետո: Լոկ այն բանով, որ քայլելով իրենց ամուսինների հետևից, այսօր նրանցից ոմանք երեխաներին տանում են իրենց ուսերի վրա, մինչդեռ տակավին երեկ պահում էին արզանդում: Իսկ ի՞նչ ասես այն ստրասփելի գնչուհիների մասին, որոնք վխտում են մեզ մոտ: Նրանք գնում են մոտակա ջուրը, որ լողացնեն նորածնին և լողանան իրենք: Մի կողմ թողնենք նաև այն զվարթ աղջիկներին, որոնք, որպես կանոն թաքցնում են թե իրենց հղիութունը, թե մանկան աշխարհ գալը: Հիշենք միայն Սաբինոսի կնոջը՝ հոմեացի մատրոնային, որը, շուգենալով անհանգստացնել ուրիշներին, բոլորովին մենակ, առանց որևէ օգնության և առանց ճիշտ տնքոցի դիմացավ երկունքի տանջանքներին, ծնելով երկվորյակներ: Սպարտացի մի սովորական մանչուկ, գողանալով աղվեսն ու թաքցնելով թիկնոցի տակ, թույլ տվեց, որ նա կրծոտի իր փորը, միայն թե շմատներ իրեն (ախր նրանք, ինչպես հայտնի է, անհամեմատ ավելի շատ էին վախենում անշնորհք գողությունից, քան մենք՝ դրա պատժից): Մեկ ուրիշը, գոհաբերության ժամանակ խունկ ծխելով և խնկամանից անզգուշորեն մի ածխակտոր գցելով թևքի մեջ, թողեց, որ այն մինչև ոսկորն այրի մարմինը, վախենալով խախտել խորհուրդը: Նույն Սպարտայում կարելի էր տեսնել բազմաթիվ յոթնամյա տղաների, որոնց դեմքերն անգամ չէին փոխվում, երբ, այդ երկրում ընդունված սովորույթի համաձայն, նրանց մահածեծ էին անում, ստուգելով նրանց արիությունը: Ցիցերոնը տեսել է խմբերի բաժանված երեխաների, որոնք, գործի ղենելով բռունցքները, ոտքերը և նույնիսկ ատամները՝ կովել են մինչև ուշաթափ ընկնելը, այդպես էլ պարտված շճանաչելով իրենց: Nunquam naturam mos vinceret: est enim ea semper invicta; sed nos umbris, deliciis, otio, languore, desidia animum infecimus; opinionibus maloque more delinitum mollivimus*.

Ո՞ւմ հայտնի չէ այն Մուցիոս Սցեուլայի պատմությունը, որը, թշնամու զորապետին սպանելու համար թափանցելով ոսոխի ճամբարը և անհաջողութուն կրելով, որոշեց այնուհանդերձ հասնել իր ուզածին և ազա-

* Սովորույթը չէր կարող հաղթել բնությանը, քանզի նա միշտ անպարտելի է մնում, բայց մենք հոգուն զայթակղեցինք անխող կյանքով, ճոխությամբ, պարապությամբ, նվազիտությամբ, անզորությամբ. և երբ նա թուլացավ, մենք առանց ջանք թափելու նրան ներշնչեցինք մեր կարծիքներն ու վատ սովորույթները²⁷ (լատ.):

տագրել հայրենիքը, դիմելով մի շատ արտասովոր միջոցի: Այդ նպատակով նա ոչ միայն իր սկզբնական դիտավորութիւնը խոստովանեց Պորսենասին՝ այն արքային, որին մտադիր էր սպանել, այլև ավելացրեց, թե հռոմեական ճամբարում ունի բավական մեծ թվով համախոհներ՝ նույն կոփվածքի մարդիկ, որոնք երգվել են կատարել նույն բանը: Եվ, ցույց տալու համար, թե ինչպիսին է այդ կոփվածքը, նա խնդրեց բերել կրակարանը, ձեռքը դրեց վրան, հանգիստ նայելով, թե ինչպես է այն այրվում ու խորովվում, մինչև որ սարսափահար արքան ինքը հրամայեց տանել կրակարանը: Իսկ այն մա՞րդը, որ շկամեցավ կտրվել դրբից, երբ նրան մակահերձում էին²⁸: Իսկ նա՞, որ շարունակ կատակում ու ծիծաղում էր, երբ իրեն խոշտանգում էին, ուստի, դահիճների ամենի դաժանութիւնն ու գնալով ավելի հնարամիտ դարձող տանջանքները, ինչպիսին կարող էին հորինել, ծառայում էին լոկ նրա հաղթանակին²⁹: Դիշտ է, նա փիլիսոփա էր: Բայց ի՞նչ արած: Այդ դեպքում, ահա Կեսարի գլադիատորը, որը միայն ծիծաղում էր, երբ փորփրում կամ գրգռում էին իր վերքերը: Quis mediocris gladiator ingemuit? Quis vultum mutavit unquam? Quis non modo stetit verum etiam decubuit turpiter? Quis sum decubisset, ferrum recipere iussus, coellum contraxit?*

Ավելացնենք այստեղ կանանց: Փարիզում ո՞վ շի լսել այն կնոջ մասին, որը հրամայել էր մաշկել իր դեմքը միայն նրա համար, որ նորն ավելի թարմ գույն ունենար: Հանդիպում են նաև այնպիսիք, ովքեր հանում են միանգամայն առողջ ատամները, որ իրենց ձայնը դառնա ավելի բնթուշ ու փափուկ կամ մյուս ատամներն աճեն ավելի ուղիղ ու գեղեցիկ: Ցավն արհամարհելու որքա՞ն ուրիշ օրինակներ կարող ենք բերել: Ի՞նչ ասես, որ շեն անում կանայք: Գոյութիւնն ունի՞ մի բան, որից նրանք վախենան, եթե գոնե շնչին հույս կա, թե դա օգտակար կլինի իրենց գեղեցկութեանը:

Vellere quis cura est albos a stirpe capillos,
Et faciem dempta pelle referre novam**

* Նույնիսկ միջակ գլադիատորներից ո՞վ է երբևէ հառաչել: Ո՞ւմ դեմքն է երբևէ բոխվել: Նրանցից ո՞վ է վախ դրսևորել կովկիս և տեղամ գետին տապալվելիս: Ո՞ր էկին է, գետին տապալվելով և մահացու հարված ընդունելու հրաման ստանալով, ներս աչել վիզը³⁰ (լատ.):

** Կան այնպիսիները, որոնք աշխատում են փետել իրենց սպիտակ մազերը և, ազատվելով կնճիռներից, վերադարձնել դեմքի շահելութիւնը³¹ (լատ.):

Իս տեսել եմ կանանց, որոնք ավագ կամ մոխիր են կուլ տալիս, ամեն կերպ աշխատելով փշացնել իրենց ստամոքսը, միայն թե դեմքը դալկանա: Իսկ ինչպիսի՞ տառապանքներ են կրում իրանը գեղեցկացնելու համար, պինդ ձգվելով ու քուղակապվելով, կողերը քրքրելով կոշտ, մարմինը խրվող կեղևակտորներով, որից երբեմն նույնիսկ մեռնում են:

Իրենց մասին սեփական պատմությունների հանդեպ ավելի մեծ հավատ ներշնչելու համար մտածված կերպով իրենք իրենց վերքեր հասցնելու սովորույթը շատ ժողովուրդների մոտ առկա է նաև մեր ժամանակներում, և մեր թագավորը³² բերում էր այդպիսի նշանավոր բավական շատ դեպքեր, որոնք իրեն վիճակվել է տեսնել Վհաստանում իր շրջապատի մարդկանց մեջ: Չասենք արգեն, որ մեզ մոտ Ֆրանսիայում նույնպես ոմանք, ինչպես հայտնի է, ընդօրինակություն կարգով իրենք իրենց անում են նույն բանը. հանրահայտ շտատների ձևավորումից ոչ շատ առաջ Բլուայում ես տեսել եմ մի աղջկա, որը, ձգտելով հաստատել իր ջերմ խոստումները, իսկ դրա հետ մեկտեղ նաև իր հավատարմությունը, մազերից հանած ծամկալով շորս թե հինգ տեղից ծակոտեց իր ձեռքը, վնասելով մաշկն առաջացրեց ուժեղ արյունահոսություն: Թուրքերն, ի պատիվ իրենց կանանց, սեփական մաշկի վրա անում են մեծ բացվածքներ, և, որպեսզի դրանց հետքն ընդմիշտ մնա, վերքը դադում են կրակով, ըստ որում կրակը վրան պահում են անասելի երկար, այդպիսով կանգնեցնելով արյունահոսությունը և, դրա հետ միասին գոյացնելով սպիներ: Այդ բանը սեփական աչքով տեսած մարդիկ ինձ գրում էին, երգվելով, որ դա ճիշտ է: Ասենք, նրանց մեջ միշտ կարելի է գտնել մեկին, որը տասն ասպերով³³ խոր վերք կհասցնի իր ձեռքին կամ ազդրին³⁴:

Ինձ համար անշափ հաճելի է, որ այնտեղ, ուր մեզ հատկապես անհրաժեշտ են լինում վկաներ, իսկույն դտնվում են, քանզի քրիստոնեից աշխարհում նրանք չափողանց շատ են: Մեր ամենարարեզու Տովվի ցույց տված օրինակից հետո գտնվեցին բազմաթիվ մարդիկ, որոնք բարեպաշտությունից կամեցան համբերությամբ կրել իրենց խաչը: Մենք վստահության արժանի վկայից իմանում ենք³⁵, որ կյուղովիկոս Սուրբ թագավորը մազազգեստ էր կրում այնքան ժամանակ, մինչև նրան, արդեն ծեր հասակում, ազատեց խոստովանահայրը, իմանում ենք նաև, որ ամեն ուրբաթ վերջինիս ստիպում էր խփել իր ուսերին հինգ երկաթե շղթաներով, որոնք հատուկ արկղիկով ման էր տալիս հետը: Գիենի մեր վերջին դուքս Գիլիոմը³⁶, այն նույն Ալիենորի հայրը, որից այդ դքսությունն անցավ Ֆրանսիայի, իսկ ապա Անգլիայի թագավորու-

կան տանը, կյանքի վերջին տասը թե տասներկու տարում, հանուն ապաշխարհության, վանականի զգեստի տակ մշտապես զրահ էր կրում, Անժուի կոմս Ֆուկլը³⁷ պարանը վզին գնաց նույնիսկ Երուսաղեմ, որպեսզի այնտեղ, իր հրամանով, երկու ծառաներն աստժո զագաղի առջև մտրակեն իրեն: Իսկ մի՞թե մենք ամեն տարի չենք տեսնում, թե ինչպես են բազմաթիվ այրեր ու կանայք իրենց ենթարկում տանջանքների ուրբաթ օրը, մինչև ոսկորները քրքրելով իրենց մարմինը: Ես դա տեսել եմ բազմիցս և, ճիշտն ասած, առանձին հաճույք չեմ զգացել: Ասում են, նրանց մեջ (նրանք այդ դեպքերում գիմակներ են դնում) լինում են այնպիսիք, որոնք փողով հանձն են առնում այդ կերպ ամրապնդել ուրիշների կրոնասիրությունը, նրանց մոտ հարուցելով սաստիկ արհամարհանք ցավի նկատմամբ, քանզի բարեպաշտության մղումները շահասիրության մղումներից ուժեղ են:

Քվինտոս Մաքսիմոսը թաղեց իր որդուն՝ նախկին կոնսուլին, Մարկոս Կատոնը՝ իր որդուն, որն ընտրվել էր սրետորի պաշտոնի, իսկ Լուցիոս Պողոսը՝ մեկը մյուսի հետևից մահացած երկու որդիներին, և նրանք բոլորն արտաքուստ հանգիստ էին, բնավ վիշտ չէին ցուցաբերում: Մի անգամ, ջահելությանս օրերին, ես կատակով մի մարդու մասին ասացի, թե ճարպկորեն խուսափել է երկնային պատժից: Բանն այն է, որ մեկ օրում սպանվել էին նրա երեք շափահաս որդիները, և դա հեշտությամբ կարելի էր մեկնաբանել որպես պատժիչ ձեռքի հարված, և ինչ, նա հեռու չէր այն մտքից, որ դա ընդուններ իբրև բացառիկ ողորմածություն: Ես ինքս, եթե ոչ առանց որոշակի ափսոսանքի, ապա, համենայն դեպս, առանց տրտնջալու, կորցրել եմ, ճիշտ է մանկահասակ, բայց երկու-երեք երեխա: Մինչդեռ շկա ոչինչ, որ մարդուն կարողանա ցնցել ավելի, քան այդ դժբախտությունը: Ես գիտեմ նաև այլ դառնություններ, որոնք սովորաբար մարդիկ վշտանալու բավարար առիթ են համարում, սակայն հազիվ թե դրանք կարողանային դիպչել իմ զգայուն թելերին, եթե ինձ վիճակվեր հանդիպել դրանց, և իրոք, երբ այնուամենայնիվ վրա հասան, ես վերաբերվեցի արհամարհանքով, թեև դրանցում կային բոլորի կողմից ամենասարսափելի համարվող բաներ, այնպես որ ես չէի համարձակվի առանց ամոթխածության շառագույնի պարծենալ մարդկանց առջև. Ex quo intelligitur non in natura, sed in opinione esse aegritudinem*.

* Ինչից երևում է, որ դառնությունը գոյություն ունի ոչ թե ինքնին, այլ մեր պատկերացման մեջ³⁸ (լատ.):

Իրերի մասին մեր պատկերացումը հանդուզն ու անշափ մեծ ուժ է: Ո՞վ է այնպիսի ազահուծյամբ ձգտել անվտանգության ու անգորրի, ինչպես Ալեքսանդր Մեծն ու Կեսարը վտանգների և զրկանքների: Թերեսասը՝ Սիտակոսի հայրը, սովորություն ուներ ասելու, թե, երբ ինքը պատերազմում չէ, ապա իր և իր ձիապանի միջև ոչ մի տարրերություն չի տեսնում³⁹:

Երբ Կաստնը կոնսուլ եղած ժամանակ, ցանկանալով ապահովել իր անվտանգությունն Իսպանիայի մի քանի քաղաքներում, բնակիչներին արգելեց զենք կրել, նրանց մեծ մասն ինքնասպանություն գործեց.

Ferox gens nullam vitam rati sine armis esse*.

Իսկ քանի՞-քանիսին գիտենք, որ փախել են իրենց տան հանգիստ կյանքի զվարճություններից, հարազատներից ու բարեկամներից, ընդառաջ գնալով ամայի անապատների սարսափներին, իրենք իրենց դատապարտել են աղքատության, խղճուկ, անիմաստ գոյության, բարձր խավի արհամարհանքին և այնքան գոհ են եղել իրենց կենսաձևից, սր ամբողջ հոգով սիրել են այն: Կարգինալ Բոռոմեոն⁴¹, որը վերջերս մահացավ Միլանում՝ ճոխության ու վայելքների այդ կենտրոնում, վայելքներ, որոնց տրամագրում էր թե նրա ազնվական ծագումը, թե հարստությունը, թե հենց Իտալիայի օգը, և, վերջապես, երիտասարդ տարիքը, ապրում էր շատ համեստ, ամառ ձմեռ նույն հագուստն էր կրում, և, մի խուրձ ծղոտից բացի, չգիտեր ուրիշ անկողին, ու եթե մնում էին ժամեր, կրք ազատ էր լինում պարտականություններից, նա ծունկի չոքած անընդհատ պարապում էր, գրքի կողքին գնելով մի քիչ հաց ու ջուր՝ իբր ամբողջ սնունդը, որն ուտում էր առանց ընթերցանությունից կտրվելու: Ես գիտեմ անհավատարիմ կին ունեցող մարդկանց, որոնք օգուտ են քաղել իրենց դժբախտությունից և կնոջ շնորհիվ առաջ գնացել, մինչդեռ մարդկանց մեծ մասն այդ բառից անգամ սարսուռ է ապրում: Եթե տեսողությունը մեր ամենաանհրաժեշտ զգայությունը չէ, ապա համենայն դեպս, նրանցից է, որոնք ամենից շատ են հաճույք պատճառում մեզ, իսկ մեր մարմնի ամենաշատ հաճույք պատճառող և միաժամանակ մարդկային ցեղի համար առավել օգտակար օրգաններն, ըստ իս, նրանք են, որոնք ծառայում են որդեծնությանը: Այնինչ, շատերն ատելով ատել են դրանք լոկ այն պատճառով, որ վայելք են ուարգևում մեզ և մերժել են հենց նրա համար, որ առանձնապես կարևոր ու արժեքա-

* Վայրի մի ցեղ, որն առանց զենքի կյանք չի պատկերացնում¹⁰ (լատ.):

վոր են: Այդպես է մտածել նաև այն մարդը, որն ինքն իրեն զրկել է տեսողութունից⁴²:

Մարդկանց մեծ մասը, ընդ որում ամենաառողջները, գտնում են, թե շատ երեխա ունենալը մեծ երջանկություն է, ինչ վերաբերում է ինձ և էլի մի քանիսին, ապա մենք նույնպիսի երջանկություն ենք համարում բոլորովին երեխա չունենալը: Երբ Թալեսին⁴³ հարցրին, թե ինչու չի ամուսնանում, նա պատասխանեց, որ սերունդ տալու տրամադրություն չունի:

Իրերի արժեքը կախված է նրանց մասին մեր կարծիքից, և դա երեւում է թեկուզ արդեն այն բանից, որ նրանց մեջ շատ են այնպիսի իրերը, որոնք մենք զննում ենք ոչ միայն գնահատելու, այլև մեզ համար արժեքավորելու նպատակով: Մենք հաշվի չենք առնում ոչ նրանց հատկանիշները, ոչ օգտակարության աստիճանը, մեզ համար կարևոր է լոկ այն, թե նրանք ինչ են նստել մեզ վրա, կարծես հենց դա է նրանց էության մեջ ամենահիմնականը. և նրանց արժեքը մենք համարում ենք ոչ թե այն, ինչ կարող են տալ մեզ, այլ այն, թե ինչ զնով ենք ձեռք բերել: Սրանից ես ենթադրում եմ, որ մենք հաշվենկատ տնտեսատերեր ենք և ավելորդ ծախսեր թույլ չենք տալիս մեզ: Եթե իրը ձեռք է բերվել դժվարությամբ, այն մեր աչքում արժե ճիշտ այնքան, որքան արժե մեր ծախսած աշխատանքը: Իրի մասին մեր կարծիքը երբեք թույլ չի տա, որ այն ունենա անհամաչափ գին: Այժմաստին արժեք է հաղորդում պահանջարկը, առաքինությանը՝ այն պահպանելու դժվարությունը, բարեպաշտությանը՝ զրկանքները, դեղանյութին՝ դառնահամը:

Մի մարդ, կամենալով դառնալ աղքատ, իր ամբողջ դրամը նետեց հենց այն ծովը, ուր ամեն տեղ վխտում են բազմաթիվ ուրիշ մարդիկ, սրպեսզի ցանցերով հարստություն որսան⁴⁴: էպիկուրն⁴⁵ ասում է, որ հարստությունը ոչ թե թեթևացնում է մեր հոգսերը, այլ մեկը փոխարինում մյուսով: Եվ իրոք, ոչ թե կարիքը, այլ ավելի շուտ լիությունն է մեզանում ազահություն ծնում: Ես ուզում եմ այդ առթիվ կիսել իմ փորձը:

Մանկական տարիքս անցնելուց հետո ես ունեցել եմ երեք կենսավիճակ: Սկզբնական շրջանում, մինչև քսան տարեկանս, ապրել եմ պատահական միջոցներով, առանց որոշակի դիրք ու եկամուտ ունենալու, կախված լինելով օտար կամքից և օգնությունից: Ես փողը ծախսում էի զվարթ ու անհոգ, առավել ևս, որ նրա քանակը որոշում էր քմահաճ բախտը: Եվ այնուհանդերձ ես երբեք ինձ ավելի լավ չեմ զգացել: Զի եղել մի դեպք, որ բարեկամներիս քսակներն ինձ համար պինդ հանդուցված լինեն, այն ժամանակ ես իմ ամենազխաժոր հոգսը համա-

րում էի մի բան. որ շանցկացնեմ վճարման իմ իսկ նշանակած ժամկետը: Սակայն, տեսնելով ժամանակին վճարելու իմ բոլոր ջանքերը, նրանք այդ ժամկետը երկարացնում էին, երևի թե, հազար անգամ, ստացվում է, որ ես նրանց վճարում էի բծախնդիր և, դրա հետ միասին, մի փոքր խաբլիկ ազնվությամբ: Մտրելով որևէ պարտք, ամեն անգամ ես իսկական բերկրանք ևմ ապրում. ուսերիցս ծանր բեռ է թոթափվում, և ես ձերբազատվում եմ իմ կախվածության զգացումից: Բացի այդ, ինձ որոշ հաճույք է պատճառում այն միտքը, թե արգարացի բան եմ անում և գոհացնում եմ ուրիշին: Այստեղ, իհարկե, շեն մտնում հատուցումների և սակարկելու անհրաժեշտության հետ կապված վճարումները, զի եթե շկա մեկը, որ վրան բարդեմ այդ բեռը, ես, համոթ ինձ, ոչ այնքան բարեխղճորեն կարելույն չափ ձգձգում եմ դրանք, ես մահու շափ վախենում եմ ամեն տեսակ խոսքակոխվներից, որոնց ամենևին հարմարված չէ ոչ խառնվածքս, ոչ լեզուս: Ինձ համար շկա ավելի ատելի բան, քան սակարկելը. դա ծայրից ծայր խարեություն և անամոթություն է, մի ամբողջ ժամվա վեճերից ու ստահակությունից հետո երկու կողմն էլ ընդամենը հինգ սուի համար դրժում են իրենց խոսքը: Ահա թե ինչու իմ պարտք վերցնելու պայմանները սովորաբար լինում էին ոչ ձևոնտու, սիրտ շանելով դրամ խնդրել անձամբ հանդիպելիս, ես սովորաբար նման դեպքերում դիմում էի գրավոր հաղորդակցության, իսկ թուղթն այնքան էլ լավ բարեխոս չէ և հաճախ ձեռքը մղում է մերժման: Ես այն ժամանակ շատ ավելի հաճույքով և ավելի թեթև սրտով գործերիս վարումը վստահում էի երջանիկ աստղին, քան այժմ վստահում եմ շրջահայացությանս ու ողջամտությանս:

Լավ տնտեսատերերի մեծ մասն այդպիսի անորոշության մեջ ապրելը համարում է ինչ-որ սոսկալի բան, սակայն, նախ և առաջ, նրանք աչքաթող են անում, որ մարդկանց մեծամասնությունն ապրում է հենց այդպես: Միանգամայն հարգարժան շատ մարդիկ զոհաբերել են վաղվա հանդեպ իրենց վստահությունը և շարունակում են ամեն օր անենույն բանը, ապավինելով թագավորական բարեհաճությանն ու բախտ ողորմածությանը, Կեսարը՝ Կեսար դառնալու համար, իր ունեցվածքի զատ, ծախսեց ևս մեկ միլիոն ոսկի, որը պարտք էր վերցրել: Իսկ որքան վաճառականներ իրենց առևտրական գործերը սկսում են ընդամենը մագարակ վաճառելով, որը նրանք, այսպես ասած, ուղարկում են շրջակաստան

Tot per impotentia freta.*

* Բազում մրրկամուփ ծովերով⁴⁶ (լատ.):

Մենք տեսնում ենք, որ, շնայած բարեպաշտության նվազմանը, հազարավոր վանքեր ապրում են անկարիք, թեև վանականների օրական սնունդը կախված է բացառապես երկնքի ողորմածությունից: Երկրորդ, այդ լավ տնտեսատերերը մոռանում են նաև, որ այն բարեկեցությունը, որի վրա իրենք ուղում են հենվել, անկայուն է և ենթակա է զանազան պատահականությունների, ինչպես բուն պատահականությունը: Ունենալով երկու հազար էկյու տարեկան եկամուտ, ես ինձ այնքան մոտ եմ զգում աղքատությանը, որքան եթե այն՝ դուռս բախեր արդեն: Քանզի ճակատագիրը կարող է հեշտությամբ մեր հարստության մեջ առաջացնել հարյուրավոր ճեղքվածքներ, ճանապարհ բացելով աղքատությանը, և հաճախ այն թույլ շի տալիս ոչ մի միջին բան բարձրագույն բարօրության և լիակատար կործանման արանքում:

Fortuna vitrea est; tunc cum splendet frangitur*.

Եվ քանի որ այն խորտակում է մեր բոլոր ամբողջումներն ու ամրոցները, ես գտնում եմ, որ կարիքը նույնքան հաճախ տարբեր պատճառներով հյուր է լինում ինչպես զգալի կարողություն ունեցողներին, այնպես էլ շունեցողներին, և երբեմն այն ինքնին ավելի քիչ է դժնդակ, քան երբ տեսնում ենք հարստության կողքին: Հարստությունը ստեղծվում է ոչ այնքան մեծ եկամուտներով, որքան գործերը ճիշտ վարելով:

faber est suae quisque fortunae**.

Հոգսերի ու գործերի մեջ թաղված, միշտ կարիք ունեցող հարուստն ինձ թվում է ավելի խղճուկ, քան նա, ով պարզապես աղքատ է. in divitiis inopes, quod genus egestatis gravissimum est***.

Կարիքն ու դրամական միջոցների բացակայությունն ամենապորեղ ու հարուստ տիրակալներին մղել են ամեն տեսակ ծայրահեղությունների: Քանզի ի՞նչ ավելի մեծ ծայրահեղություն կա, քան վերածվելը բռնակալների, իրենց հպատակների սեփականությունը յուրացնող անազնիվ գոպիողների:

Իմ կյանքի երկրորդ շրջանն այն ժամանակն է, երբ սեփական զրամ ունեցա: Հնարավորություն ստանալով իմ հայեցողությամբ տնօ-

* Ճակատագիրն ապակի է. փայլելով՝ փշրվում է⁴⁷ (լատ.):

** Ամեն ոք ինքն է կոում իր բախտը⁴⁸ (լատ.):

*** Հարստություն ունենալով՝ կարիքի մեջ լինելն ամենահոգեմաշ աղքատությունն է⁴⁹ (լատ.):

րինել այն, ես կարճ ժամանակում, կարողութեանս համեմատ, խնայեցի
 բավական մեծ գումար, գտնելով, որ մենք իսկութեամբ ունենք լույ այն,
 ինչը գերազանցում է մեր սովորական ծախսերը և չի կարելի ապավի-
 նել այն եկամուտներին, որոնք միայն հույս ունենք ստանալ, ինչքան
 էլ դրանք մեզ հաստատ թվան: «Իսկ էթե հանկարծ ինձ բան պատա-
 հի՞», — ասում էի ինքս ինձ: Գտնվելով այդ սին ու անհեթեթ մտքերի
 ազդեցության տակ, ես կարծում էի, թե խելոք եմ վարվում, հետ զցե-
 րով ավելցուկը, որը պիտի փրկեր ինձ դժվարություններից: Եվ նրան,
 ով ասում էր, թե այդ դժվարություններն անթիվ են, առանց վարանելու
 պատասխանում էի, որ եթե դա ինձ շագատի էլ ամեն տեսակ նեղու-
 թյուններից, ապա, գոնե կսուլահովի դրանց որոշ մասից, որոնք, ընդս-
 մին խիստ շատ են: Ես տանջալից հուզմունք էի ապրում: Ամեն ինչից
 գաղտնիք էի սարքում: Ես, որ ինձ թույլ եմ տալիս այդպես անկեղծորեն
 պատմել իմ մասին, միջոցներիս շուրջ խոսում էի շատ բան թաքցնե-
 րով, կեղծելով, հետևելով այն մարդկանց օրինակին, որոնք ազքատ ևն
 ձևանում, լինելով հարուստ, և հարուստ են ձևանում, լինելով աղքատ,
 բայց երբեք անկեղծորեն չեն խոստովանում, թե իրականում ինչ ունեն:
 Միծաղելի՞ ու ամոթալի՞ զգուշություն: Երբ ուղևորության էի մեկնում,
 ինձ միշտ թվում էր, մոտս եղած դրամը քիչ է: Բայց որքան շատ էի
 հետս փող վերցնում, այնքան մեծ էր լինում երկյուզս. կասկածում էի
 մերթ ճանապարհների անվտանգությունը, մերթ այն բանին, թե կարելի
 է արդյոք վստահել նրանց ազնվությանը, ում հանձնում էի իրերս,
 որոնց համար, ուրիշ շատերի նման, երբեք հանգիստ չէի լինում, եթե
 միայն աչքիս առաջ չէին: Իսկ երբ դրամատուփը մոտս էի պահում, ինձ
 համակում էին անթիվ կասկածներ, տազնապալի մտքեր և, որ ամենա-
 վատն է, այնպիսի մտքեր, որոնք ո՛չ մեկի հետ չես կարող կիսել: Ես
 միշտ զգաստ էի լինում: Մի խոսքով, ունեցած դրամը պահպանելն ավելի
 դժվար է, քան այն ձեռք բերելը: Եթե ես նույնիսկ չէի ունենում այն
 բոլոր ապրումները, որոնց մասին այստեղ պատմում եմ, ապա ինքս
 ինձ զսպելը մե՛ծ ճիգեր էր պահանջում: Իմ հարմարության մասին հո-
 գում էի քիչ կամ բոլորովին չէի հոգում: Գրամն ավելի ազատորեն ծախ-
 սելու հնարավորություն ստանալով, ես շսկսեցի ավելի հանգիստ սրտով
 բաժանվել նրանից: Քանզի, ինչպես ասում էր Բիոնեսը⁵⁰, մազոտը հա-
 զատից քիչ չի ջղայնանում, երբ քաշում են նրա մազերը: Հենց ինք-
 ներդ ձեզ վարժեցրեք այն մտքին, թե ունեք այս կամ այն գումարը,
 և հաստատապես հիշեք դա, դուք այլևս կկորցնենք ձեր զորությունն
 այդ գումարի հանդեպ, և կսարսափեք գոնե մի քիչ ծախսել դրանից:
 Շարունակ կթվա, թե ձեր առջև մի կառույց է, որին բավական է միայն

դիպչեք, և այն կավերվի հիմնահատակ: Դուք կհամարձակվեք այդ դրամը ծախսել լուկ այն դեպքում, երբ կարիքը կբռնի ձեր կոկորդը: Եվ նախկինում ես ավելի հեշտությամբ գրավ էի դնում տանս եղած-չեղածը կամ վաճառում հեծկան ձիս, քան այժմ ինձ թույլ կտայի դիպչել նվիրական քսակիս, որը պահում էի թաքուն տեղում: Եվ ամենավատն այն է, որ այստեղ հեշտ չէ սահմանափակվել (չէ որ միշտ դժվար է որոշել սահմանն այն բանի, ինչը բարիք ես համարում) ու կանգ առնել ժլատության պատշաճ շափի վրա: Ակամայից աշխատում ես անընդհատ մեծացնել ու բազմապատկել կուտակված հարստությունը, շվերցնելով դրանից ոչինչ, այլ ավելացնելով այնքան, որ խայտառակ կերպով հրաժարվում ես հաճույքիդ համար օգտվել քո իսկ բարիքից, որն առանց օգտագործելու պահում ես գաղտնարանում:

Եթե հարստությունն այդպես տնօրինվի, ապա ամենից հարուստ կարելի է համարել նրանց, ում հանձնարարված է հսկել մի որևէ հարուստ քաղաքի դարպասներն ու պարիսպները: Փուլ ունեցող ամեն մարդ, իմ կարծիքով, ժլատ է:

Պլատոնը մարդու ֆիզիկական ու կենցաղային բարիքները թվարկում է հետևյալ հերթականությամբ. առողջություն, գեղեցկություն, ուժ, հարստություն: Եվ հարստությունն, ասում է նա, ամենևին կույր չէ, ընդհակառակը, շատ հեռատես է, երբ լուսավորվում է խոհեմությամբ⁵¹:

Այստեղ տեղին է հիշել Դիոնիսիոս Կրտսերին, որը շատ սրամտորեն ծաղրել է մի գծուծ մարդու: Նրան հայտնել են, թե իր սիրակուսեցիներից մեկը գանձեր է թաղել: Դիոնիսիոսն այդ մարդուն հրամայել է դրանք բերել իր պալատը, և նա բերել է, թաքցնելով, սակայն, մի մասը, իսկ ապա, վերցնելով իր պահած բաժինը, վերաբնակվել է ուրիշ տեղում, ուր, կորցնելով փող կուտակելու հակումը, սկսել է ավելի ճոխ ապրել: Լսելով դա, Դիոնիսիոսը հրամայել է հետ վերադարձնել նրանից իրած գանձերը, ասելով, թե, քանի որ այդ մարդը, վերջապես, սովորել է պատշաճ կերպով օգտվել դրանցից, ինքը հաճույքով վերադարձնում է վերցրածը⁵²:

Ես նույնպես մի քանի տարի այդպիսին էի: Չգիտեմ, թե որ բարի ուղին, ի երջանկություն ինձ, այդ ամբողջ անհեթեթությունը դուրս մղեց իմ գլխից, այնպես, ինչպես դա տեղի էր ունեցել սիրակուսեցու հետ ժլատությունն իսպառ մոռանալու գործում ինձ օգնեց մեծ ծախսերի: Ետ կապված մի ճանապարհորդությունից իմ ստացած հաճույքը: Այն ժամանակվանից ես անցա արդեն իմ երրորդ (այդպես, համենայն դեպս, ինձ է թվում)՝ անտարակույս ավելի հաճելի ու կանոնավոր կենսաձևին: Ես ծախսերս համապատասխանեցնում եմ եկամուտներին, եթե երբեմն

առաջինը գերազանցում է երկրորդին, իսկ երրեմն էլ ընդհակառակը, ապա այնուամենայնիվ, ես դրանց միջև մեծ տարբերություններ թույլ չեմ տալիս: Ես ապրում եմ աննկատելի և գոհ եմ, որ իմ եկամուտը միանգամայն բավարարում է ամենօրյա կարիքներս, իսկ ինչ վերաբերում է շնախատեսված կարիքներին, ապա այստեղ մարդուն չի բավարարի ամբողջ աշխարհի հարստությունը: Հիմարություն կլիներ սպասել, որ ճակատագիրն ինքը մեզ ընդմիշտ զիններ իր ոտնձգություններից պաշտպանվելու համար: Նրա դեմ մենք պետք է պայքարենք մեր սեփական զենքով: Պատահական զենքը միշտ կարող է վճռական պահին դավաճանել: Եթե ես երբեմն փող եմ հետ զցում, ապա միայն մոտ ապագայում նախատեսելով մի խոշոր ծախս, ոչ թե հող (որն ինձ պետք չէ), այլ հաճույք զնելու համար: Non esse cupidum pecunia est, non esse copiam declarat emacem vectigal est¹.

Ես չունեմ ոչ երկյուղ, թե կարողությունս ինձ չի բավականացնի, ոչ էլ ցանկություն, որ այն մեծանա. Divitiarum fructus est in copia, satietas**.

Ես մեծ երջանկություն եմ համարում, որ այդ փոփոխությունն ինձ մոտ տեղի է ունեցել այն տարիքում, երբ մարդն առավել հակում ունի ժլատության, և որ ես ազատվել եմ ծերերի համար շատ սովորական այդ ախտից, մարդկային ամենազավեշտական անխոհեմությունից:

Թերաուլեսը, ժառանգելով երկու կարողություն և պարզելով, որ հարստության ավելացումից ուտելու, խմելու, քնելու կամ կնոջը սիրելու ցանկությունը չի աճում, այլ մնում է առաջվանը, և, մյուս կողմից, զգալով, թե ինչ անտանելի բեռ է դնում իր վրա խնայելու մարմաջը (ճիշտ այնպես, ինչպես ինձ հետ էր), որոշեց բարերարություն անել մի պատանու՝ իր հավատարիմ բարեկամին, որը տենչում էր հարստանալ, և այդ նպատակով նրան նվիրեց ոչ միայն իր ամբողջ ունեցածը (իսկ նրա կարողությունը վիթխարի էր), այլև այն, ինչ շարունակում էր ստանալ իր առատաշնորհ տիրակալ Կյուրոսից, ինչպես նաև ռազմավարի իր բաժինը, պայմանով, որ այդ երիտասարդը կպարտավորվի պատշաճ կերպով պահել ու կերակրել նրան, իբրև հյուրի ու բարեկամի: Այդ ժամանակվանից նրանք ապրում էին շատ միաբան, ընդ որում եր-

¹ Ազահ շինելն արդեն հարստություն է, մսխող շինելը՝ հկոմուտ⁵³ (լատ.):

^{**} Հարստության պտուղը լիությունն է, լիության նշանը՝ բավարարվածությունը⁵⁴ (լատ.):

կուսն էլ հավասարապես գոհ էին իրենց պայմանների փոփոխությունից: Ահա մի օրինակ, որին ևս կհետևեի մեծագույն հաճույքով⁵⁵:

Ես շատ եմ հավանում նաև այն տարեց պրեշառի վարքը, որը լիովին իրեն սղատեց սեփական քսակի, եկամուտների ու ծախսերի հոգսերից, դրանք հանձնարարելով մերթ մի հավատարիմ ծառային, մերթ մյուսին, և երկար տարիներ անցկացրեց իր գործերի վիճակին այնքան անտեղյակ, ասես այդ ամենում ինքը կողմնակի անձ էր: Ուրիշի բարեկանոնության նկատմամբ վստահությունը բավականաչափ ծանրակշիռ վկայություն է սեփական բարեկանոնության, և դրան սովորաբար հովանավորում է աստված: Ինչ վերաբերում է հիշյալ պրեշառին, ապա ես ոչ մի տեղ չեմ տեսել այնպիսի կարգ ու կանոն, ինչպիսին նրա տանն էր, ոչ մի տեղ չեմ տեսել, որ տնտեսությունը պահվեր նման արժանապատվությամբ և ամուր ձեռքով: Երջանիկ է նա, ով կարողացել է այնպիսի ճշտությամբ համաշափել իր կարիքները. որ նրա միջոցներն առանց որևէ գլխացավանքի ու ջանքի բավարարում են դրանց: Երջանիկ է այն մարդը, որին ունեցվածքի կառավարման կամ բազմապատկման հոգսերը չեն շեղում իր խառնվածքին ավելի համապատասխանող, ավելի հանգիստ ու հաճելի այլ զբաղմունքներից:

Այսպիսով, թե լիությունը, թե աղքատությունը կախված են այն պատկերացումից, որ մենք ունենք դրանց մասին, նմանապես նաև հարստությունը, փառքը կամ առողջությունը լավ ու զրավիչ են սոսկ այնքանով, որքանով այդպիսին են համարում այն մարդիկ, ովքեր ունեն դրանք: Յուրաքանչյուր ոք ապրում է լավ կամ վատ, կախված նրանից, թե ինքն այդ առթիվ ինչ է մտածում: Գոհ է ոչ թե նա, ում գոհ են կարծում ուրիշները, այլ նա, ով ինքն է իրեն կարծում այդպիսին: Եվ առհասարակ, այստեղ ճշմարիտ ու էական կարելի է համարել սվյալ մարդու սեփական կարծիքը միայն:

Ճակատագիրը մեղ չի բերում ոչ շարիք, ոչ րարիք, այն մատակարարում է լոկ մեկի ու մյուսի հում նյութը և այդ նյութը բեղմնավորելու ընդունակ սերմը: Մեր հոգին, որն այդ առումով ավելի զորեղ է, քան ճակատագիրը, դրանք օգտագործում ու կիրառում է իր հայեցողությամբ, այդպիսով դառնալով իր երջանիկ կամ աղետալի վիճակի միակ պատճառն ու տնօրենը:

Արտաքին հանգամանքներն այս կամ այն բնույթն են ստանում կախված մեր ներքին հատկություններից, նման այն բանին, ինչպես մեր հայուսար տաքացնում է ոչ թե իր, այլ մեր սեփական ջերմությամբ, որը, շնորհիվ իր հատկությունների, կարողանում է պահել ու կուտա-

կել: նա, ով հագուստի մեջ փաթաթի մի սառը առարկա, ճիշտ նույն կերպ կպահպանի դրա սառնությունը. հենց այդպես են վարվում ձյուն կամ սառույց պահելիս, որպեսզի պահպանեն այն հալվելուց:

Ինչպես սովորել է ծուլին տառապանք, իսկ գինի չխմելը՝ հարբեցողին. տանջանք, այդպես էլ շափավորությունը պատիժ է ճոխության սովոր մարդուն, իսկ մարմնական վարժությունները շարշարանք են փափկակյացին ու պարապին, և այլն: Իրերն ինքնին ոչ գծվարին են, ոչ տանջալից, միայն մեր փոքրոգությունն ու թուլությունն են դրանք դարձնում այդպիսին: Վեհ ու մեծ բաների մասին ճիշտ դատելու համար անհրաժեշտ է ունենալ նաև այդպիսի հոգի, հակառակ դեպքում մենք գրանց կվերագրենք մեր սեփական թերությունները: Զրու՜մ ընկղմված թին մեղ թվում է կոտրված: Այսպիսով, կարևոր է ոչ միայն այն, թե ինչ ենք մենք տեսնում, այլև այն, թե ինչպես ենք տեսնում:

Իսկ եթե այդպես է, ապա ինչո՞ւ այսքան դատողություններում, որոնք տարբեր ձևով մարդկանց համոզում են արհամարհել մահը և գիմանալ ցավին, չգտնենք նաև մեզ համար պիտանի մեկը: Եվ ինչու դրանում ուրիշներին համոզած այդ բաղմաթիվ փաստարկների միջից մեզանից յուրաքանչյուրը չընտրի իր համար այն, որն իրեն ավելի է գուր գալիս: Եվ եթե նա չի կարող ընդունել այն դեղամիջոցը, որն ազդում է արագ ու բուռն և լիովին դուրս է մղում հիվանդությունը, թող ընդունի գոնե մեղմացնող դեղամիջոց, որը թեթևություն կբերի: *Opinio est quaed. m e^ffeminata ac levis, nec in dolore magis, quam eadem in voluptate: qua, cum liquescimus fluimusque mollitia, apis aculeum sine clamore ferre non possumus. Totum in eo est, ut tibi imperes**.

Սակայն, մեր տառապանքների սաստկությունն ու մարդկային անվորությունը շափից ավելի ընդգծողները նույնպես չեն պրծնի փիլիսոփայությունից: Այն ի պատասխան կբերի հետևյալ անվիճելի դրույթը. «Եթե կարիքի մեջ ապրելը վատ է, ապա չկա կարիքի մեջ ապրելու ոչ մի կարիք»:

Ամեն ոք, ով երկար է տանջվում, ինքն է մեղավոր:

Ինչո՞վ օգնես նրան, ով արիություն չունի դիմանալու ինչպես կյանքին, այնպես էլ մահվանը, ով չի ուզում ոչ փախչել, ոչ մարտնչել:

* Նման փափկակեցություն ու թուլություն [ոմանց մոտ] լինում է ոչ միայն տառապանքներում, այլև վաշխըների բուռն պահին, և երբ դրանից մենք կակզում ու կամազրկվում ենք, մեղմի խայթոցն անդամ մեղանից հեծեծանքներ է կորզում... Հարցն այն է, որ սովորես տիրապետել ինքդ քեզ⁵⁶ (չառ.):

**ԱՄՐՈՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԻՄԱՍՏ ՀԱՄԱՈՒՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ՊԱՏԻԺ ԵՆ ԿՐՈՒՄ**

Քաջությունը, ինչպես նաև մյուս առաքինությունները, ունի որոշ սահման, որն անցնելով, սկսում ես հակվել դեպի արատը: Ահա թե ինչու այն կարող է իր սահմանները (իսկ յորանք ստուգությամբ որոշեցին, իսկապես, հեշտ չէ) բավականաչափ լավ շիմացող ամեն մեկին ժղել անխոհեմության, համառության և ամեն տեսակ խենթությունների: Հենց այս հանգամանքն էլ սովորություն ծնեց պատերազմի ժամանակ պատժել (երբեմն նույնիսկ մահվան դատապարտելով) նրանց, ովքեր համառորեն պաշտպանում են այն ամբությունը, որը, ռազմական գիտության կտնոններով, հնարավոր չէ պահել: Այլապես չէր լինի մի հավաքուն, որն, անպատիժ մնալու հույսով, շկանգնեցներ մի ամբողջ բանակի առաջխաղացումը:

Պարոն կոնետաբլ դը Մոնմորանսին, Պավիայի պաշարման ժամանակ՝ հրաման ստացավ անցնել Տիշինոն և գրավել սուրբ Անտոնիոս արվարձանը. դեմ առնելով կամրջագլխի աշտարակի պաշտպանների համառ դիմադրությանը, նա այնուհանդերձ գրոհով վերցրեց այն և հրամայեց կախել բոլոր պաշտպաններին: Նա նույն կերպ վարվեց նաև հետագայում, երբ ուղեկցում էր դոֆինին՝ լեոներից անդին կատարած արշավանքում: Երբ նա գրավեց Վիլլանո ամրոցը² և զինվորները, կատապելով, կոտորեցին բոլոր այնտեղ գտնվողներին, բացի պարետից ու զրոշակրից, նա հրամայեց, նույն պատճառով, կախել նաև այս վերջիններին: Նույն կողմերում նույն ճակատագրին արժանացավ նաև կապիտան Բոնին, որի բոլոր մարդիկ կոտորվեցին ամբությունը գրավելիս, այդպես էր հրամայել Տուրինի այն ժամանակվա նահանգապետ Մարտեն դյու Բելլեն³: Բայց քանի որ ամրոցի հզորության ու թուլության մասին կարելի է դատել, միայն համեմատելով քս ուժերը պաշարողների ուժերի հետ (քանզի նա, ով բավարար հիմքով կգիմադրեր երկու կուլերինների, խենթ կլիներ, եթե մտածեր կովել երեսուն թնգանոթների դեմ), և բանի որ, գրանից բացի, այստեղ սովորաբար հաշվի է առնվում ներխուժած թագավորի հզորությունը, հեղինակությունը, նրան ցուցաբերվող պատշաճ հարգանքը, ապա վտանգ կա, որ կշեռքի վրա նրա նժարը միշտ վոթր ինչ ավելի ծանր կլինի: Իսկ դա, իր հերթին, հասցնում է այն բանին, որ նման թագավորն սկսում է այնքան շատ կարծել իր և իր հզորության մասին, որ նրան ուղղակի անհեթեթություն է թվում, թե կարծող է ընել

իրենն դիմադրելու արժանի գոնե մեկը, և քանի դեռ ազգական բախտը ժպտում է նրան, նա սրի է քաշում իր դեմ պայքարող յուրաքանչյուրին, ինչպես գա երևում է թեկուզ այն վայրագ, ամբարտավան և բարբարոս կոպտությամբ լի պահանջներից, որ սովոր էին դնել արևելյան տիրակալները, և այժմ էլ նրանց հետնորդները:

Սրբ պորտուգալացիներն առաջին անգամ սկսեցին թալանել Հրնդկաստանը, այնտեղ գտան պետություններ, ուր տիրում էր համատարած ու անխախտ մի օրենք, որն ասում էր, թե թագավորի կամ փոխարքայի հրամանատարության տակ գտնվող զորքերից պարտություն կրած թըշնամին ենթակա չէ փրկագնով ազատման և գթության հույս ունենալ չի կարող:

Եվ այսպես, ով կարող է, թող զգուշանա ընկնել դատավորի ձեռքը, երբ այդ դատավորը հաղթական և մինչև ատամները զինված թշնամի է:

Գլուխ XVI

ՎԱՆԿՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ

Մի անգամ մի արքայազնից՝ շատ խոշոր գորավարից լսել եմ, թե չի կարելի փոքրոգության համար զինվորին դատապարտել մահվան, այս կարծիքը նա հայտնեց սեղանի շուրջ, երբ նրան պատմեցին Բուլոնը հանձնելու համար մահվան դատապարտված պարոն դը Վերվենի դատի մասին¹:

Եվ իրոք, ես միանգամայն ճիշտ եմ համարում, երբ հստակորեն իրարից սահմանազատում են մեր թուլությունից բխող և այն զանցանքները, որոնք ծնունդ են շար դիտավորության: Կատարելով վերջինները, մենք գիտակցաբար ընդվզում ենք մեր բանականության այն հրամանների դեմ, որոնք մեզանում դրոշմել է հենց բնությունը, այնինչ, կատարելով առաջինները, ըստ իս, մենք հիմք կունենայինք վկայակոչելու այդ նույն բնությունը, որը մեզ ստեղծել է այսքան թույլ ու անկատար, ահա թե ինչու շատ շատերը կարծում են, թե մեզ կարելի է մեղսագրել հակառակ խղճի մեր արած բաները միայն: Որոշ չափով հենց դրա վրա է հիմնված ինչպես այն մարդկանց կարծիքը, որոնք դատապարտում են հերետիկոսների ու անհավատների մահապատիժը, այնպես էլ այն կանոնը, համաձայն որի փաստաբանն ու դատավորը չեն կարող պատասխանատվության ենթարկվել պաշտոնավարման ժամանակ անտեղյակությամբ թույլ տված վրիպումների համար:

Ինչ վերաբերում է վախկոտությանը, ապա, ինչպես հայտնի է, այն

պատժելու ամենատարածված ձևը համընդհանուր արհամարհանքն ու անարգանքն է: Գտնում են, թե այդ պատժաձևն առաջին անգամ գործածության մեջ է մտցրել օրենսգիր Քարոնդը², նրանցից առաջ հունական օրենքները ռազմի դաշտից ամեն մի փախչողի դատապարտում էին մահվան, նա հրամայեց դրա փոխարեն փախածներին կանացի հագուստով երեք օր ի ցույց կանգնեցնել քաղաքի հրապարակում, հույս ունենալով, թե դա նրանց օգտակար կլինի և անարգանքը կվերագարձնի նրանց արիությունը: Suffundere malis hominis sanguinem quam effundere*.

Հռոմեական օրենքները նույնպես, համենայնդեպս հնում, մարտի դաշտից փախածներին պատժում էին մահով: Այսպես, Ամիանոս Մարցելի-նոսը պատմում է, թե պարթևների զորքի վրա հռոմեացիների հարձակման ժամանակ Հուլիանոս կայսրը թիկունքով դեպի թշնամին շուռ եկած տասը զինվորի զրկել է զինվորական կոչումից և ապա հին օրենքների համաձայն դատապարտել մահվան⁴: Սակայն մի ուրիշ անգամ նույնպիսի զանցանքի համար նա մեղավորներին պատժել է միայն նրանով, որ գերիների գումակն է նստեցրել: Թեև հռոմեացի ժողովուրդը կաննի ճակատամարտից հետո դաժանորեն պատժեց փախածներին, ինչպես նաև նրանց, ովքեր նույն պատերազմում Գնեյոս Փուլբիոսի հետ էին նրա պարտության ժամին, այնուամենայնիվ, այդ դեպքում բանը չհասավ մահապատժի:

Սակայն, հիմք կա երկյուղելու, թե խայտորակությունը ոչ միայն հուսահատեցնում է այդպես պատժվածներին և հասցնում կատարյալ անտարբերության, այլև երբեմն դարձնում է թշնամի:

Մեր հայրերի ժամանակներում մարշալ Շատիլիոնի զորքերի զրկվոր հրամանատարի երբեմնի տեղակալ պարոն դը Ֆրանսեն, որին մարշալ դը Շաբանը պարոն դյու Լյուդի փոխարեն նշանակել էր Ֆունտարաբիայի նահանգապետի պաշտոնին, այդ քաղաքը հանձնելով իսպանացիներին, դատապարտվեց ազնվականի կոչումից զրկվելու, և ինչպես ինքը, այնպես էլ իր սերունդները հայտարարվեցին ռամիկներ, մտան հարկատու դասի մեջ և զրկվեցին զենք կրելու իրավունքից: Այս խիստ դատավճիռը նրան կայացվեց Լիոնում: Հետագայում նույնպիսի պատիժ կրեցին բոլոր այն ազնվականները, որոնք գտնվում էին Գիզալում, երբ այնտեղ մտավ Նասաույի կոմսը, այն ժամանակվանից նույնն են ճաշակել նաև ուրիշ մի քանիսը:

* Գերադասիր, որ մարդու արյունը հոսի դեպի այտերը, քան դեպի դուրս³ (լատ.):

Ինչ էլ լինի, ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք նման բռի ու բացահայտ, ամեն մի շափ անցնող տղիտուծյուն կամ վախկոտուծյուն, իրավունք ունենք եզրակացնելու, թե այստեղ կան բավականաչափ ապացույցներ հանցավոր դիտավորության ու շար կամքի, և սլաոժելու դրանք որպես այդպիսիք:

Գլուխ XVII

ՈՐՈՇ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

Իմ ճանապարհորդությունների ժամանակ, աշխատելով ուրիշների հետ շփվելուց որևէ նոր բան քաղել ինձ համար (իսկ դա մեկն է լավագույն դպրոցներից, որ կարելի է պատկերացնել), ես անշեղորեն հետևում եմ մի կանոնի՝ զրուցակցիս հետ խոսել այնպիսի առարկաների շուրջ, որոնց նա քաջատեղյակ է:

Basti al nocchiero ragionar de'venti,
Al bifolco dei tori, et le sue piaghe
Conti'l guerrier, conti'l pastor gli armeniti*.

Սակայն, ամենից հաճախ նկատվում է հակառակը, քանզի սմենք ոք ավելի հաճույքով դատողություններ է անում ուրիշ, քան սեփական արհեստի մասին, հույս ունենալով էլի մի ասպարեզում գիտակ մարդու անուն հանելու, այդպես, օրինակ, Աբբիդամոսը² կշտամբում էր Պերիանդրոսին, որ նա արհամարհեց նշանավոր բժշկի համբավը, ընկնելով վատ բանաստեղծի փառքի հետևից:

Տեսեք, թե որքան բազմախոս է դառնում Կեսարը, երբ նկարագրում է կամուրջներ կամ ռազմական մեքենաներ կառուցելու վերաբերյալ իր հայտնագործությունները³, և, ընդհակառակը, որքան սեղմ ու սակավ է խոսում այնտեղ, ուր պատմում է զորապետի իր պարտականությունների, սեփական արիության կամ իր ռազմիկների վարքի մասին:

Նրա գործերն առանց այդ էլ բավարար չափով հաստատում են նրա նշանավոր զորավար լինելը, սակայն, նա ուզում է, որ իրեն իմանան նաև որպես հիանալի ռազմական ինժեներ, իսկ դա արդեն միանգամայն նոր բան է: Վերջերս, երբ ոմն գիտնական իրավաբանի ցույց տվին մի աշխատասենյակ, որը լի էր նրա զբաղմունքին, ինչպես նաև գիտություն

* Քող նավավարը խոսի միայն քամիների մասին, իսկ հողագործը՝ եղների, թող գինվորը մեզ պատմի իր վերքերի մասին, իսկ հովիվը՝ նախիրների՝ (լատ.):

մյուս բնագավառներին վերաբերող գրքերով, նա այնտեղ չգտավ ոչ մի այնպիսի բան, որի մասին, իր կարծիքով, արժեք խոսել: Մինչգեռ նա կանգ առավ, որպեսզի գիտուն ու վեհակերպ տեսքով խոսեր սենյակ տանող պտուտակաձև սանդուղքի փակոցի մասին, թեև ամեն օր դրա կողքով անցնում էին մոտ հարյուր սպա ու զինվոր, չդարձնելով ոչ մի ուշադրություն:

Դիոնիսիոս Ավագն իր դիրքին վայել, հիանալի զորավար էր, բայց նա ձգտում էր փառքի հասնել առավելապես պոեզիայում, որից բացարձակապես ոչինչ չէր հասկանում:

Optat ephippia bos piger, optat arare caballus*.

Սակայն գրանով դուք երբեք կարգին բանի չեք հասնի:

Եվ այսպես, ամեն մարդու, լինի դա ճարտարապետ, գեղանկարիչ, կոշկակար կամ ուրիշ մեկը, պետք է անշեղորեն վերադարձնել իր ամենօրյա զբաղմունքի առարկային: Եվ այդ առթիվ նկատեմ. կարդալով պատմական երկեր (այս ժամրում վարժություններ են արել ամենատարբեր մարդիկ), ես մշակել եմ մի սովորություն. հաշվի առնել, թե հատկապես ովքեր են եղել գրողները, եթե այնպիսի մարդիկ են, որոնք, բացի դրական ստեղծագործություններից, ուրիշ ոչ մի բանով չեն զբաղվել, ես ամենից առաջ նայում եմ ոճին ու լեզվին, եթե բժիշկներ են, ավելի հաճույքով վստահում եմ այն հատվածներին, ուր նրանք խոսում են օդի ջերմաստիճանի, թագավորների առողջության ու խառնվածքի, վերքերի ու հիվանդությունների մասին, եթե իրավաբաններ են, պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնել իրավունքի հարցերի, օրենքների, պետական հիմնարկությունների և նման այլ բաների մասին նրանց դատողություններին, եթե աստվածաբաններ են՝ եկեղեցական գործերին, եկեղեցական բանադրանքներին, ազաշխարանքին, ամուսնությունների թույլատրություններին, եթե պալատականներ են՝ սովորություններին ու ծեսերին, եթե զինվորականներ են՝ այն բանին, ինչը վերաբերում է նրանց զբաղմունքին, և, գլխավորապես իրենց մասնակցությամբ տեղի ունեցած արշավանքների ու ճակատամարտերի մասին նրանց պատմություններին, եթե գեսպաններ են, ապա ամեն տեսակ խորամանկություններին, լրտեսությանը, կաշառումներին, և այն բանին, թե այդ բոլորն ինչպես է կատարվել:

Ուստի, այդ գործերում վերին աստիճանի բանիմաց սենյոր դը Լան-ժեի՝ «Պատմության» մեջ ես առանձնացրել ու նշել եմ շատ այնպիսի

* Ալարկոտ եզն ուզում է թամբի տակ լինել, իսկ ձին՝ հերկել* (լատ.):

բաներ, որոնք կշրջանցեի, եթե հեղինակը լիներ մեկ ուրիշը: Պատմելով մեր դեսպաններին՝ եպիսկոպոս Մակոնացու և պարոն դյու Վելլիին ներկայութեամբ հռոմեական կոնսիստորիային Կարլոս V կայսեր արած այն նախազգուշացումների մասին, որոնց կայսրն ավելացրեց մեզ ուղղված վիրավորական բավական շատ արտահայտութիւններ, ու նաև այն, որ եթե իր զորապետները, զինվորներն ու հպատակները լինեին նույնքան հավատարիմ իրենց տիրոջը և նույնքան հմուտ ռազմական գործում, որքան թագավորի ենթականերն են, ապա ինքն անմիջապես պարանը կզցեր վիզն ու կգնար խոնարհաբար գթութիւն աղերսելու (նա, հավանաբար, ինքն էլ որոշ չափով հավատում էր, թե դա իրականում հենց այդպես է, քանզի ավելի ուշ էլ, իր կյանքի ընթացքում երկու թե երեք անգամ կրկնել է նույն բանը), ինչպես նաև հաղորդելով, թե նա մարտահրավեր է ուղարկել մեր թագավորին, առաջարկելով մենամարտել նավակի վրա, միայն շապիկներով, սուսերով ու դաշույնով, վերահիշյալ պարոն դը Լանժենն ավելացնում է, թե հիշյալ դեսպանները, թագավորին զեկուցագրելիս, թաքցրին կայսեր խոսքերի մեծ մասը և նույնիսկ այն վիրավորանքները, որոնց մասին ասվեց վերը: Ես միանգամայն տարօրինակ եմ համարում. այդ ինչպես է դեսպանն իրեն թույլ տվել որոշելու, թե ինչը զեկուցի իր թագավորին, իսկ ինչը կոծկի նրանից, առավել ևս, որ գործը հղի էր այդպիսի հետևանքներով, որ այդ խոսքերն ասել էր այդպիսի անձնավորութիւնը և այդքան բազմամարդ ժողովում: Ինձ թվում է, թե ենթակայի պարտականութիւնն է ճիշտ ու ճշգրիտ, ամենայն մանրամասնութեամբ շարադրել իրադարձութիւնները, ինչպես դրանք տեղի են ունեցել, որպեսզի տիրակալն ունենա հրամաններ արձակելու, իրադրութիւնը գնահատելու և ընտրելու լիակատար ազատութիւն: Քանզի աղավաղել կամ թաքցնել ճշմարտութիւնը, վախենալով, թե նա կարող է ըստ պատշաճին շրնդունել այն և դա կարող է նրան դրդել մի սխալ որոշում կայացնելու, և այդ պատճառով նրան թողնել գործերի իրական վիճակին անտեղյակ, կարծում եմ, իրավունք ունեն նրանք, ովքեր օրենքներ են թելագրում, այլ ոչ թե նրանք, ում համար նախատեսված են այդ օրենքները, նման իրավունք ունեն ղեկավարն ու դատարարակը, բայց ամենևին ոչ նա, ով պետք է համարի իրեն ստորադաս ոչ միայն դիրքով, այլև փորձվածութեամբ ու իմաստնութեամբ: Ինչևէ, ես բնավ չէի ուզենա, որ ինձ՝ չնչին էակիս, ծառայեին վերը նկարագրած ձևով:

Օգտվելով ամեն տեսակ պատրվակներից, մենք աշխատում ենք դուրս դալ ենթակայութիւնից և յուրացնել տնօրինելու իրավունքը, մե-

դանից յւրաքանչյուրը (և դա միանգամայն բնական է) ձգտում է ազատութեան ու իշխանութեան, ահա թե ինչու վերադասի համար ենթակայի մեջ շփեալ է լինի ավելի արժեքավոր ոչինչ, քան պարզ ու միամիտ հնազանդութիւնը:

Եթե հնազանդվում են ոչ թե անառարկելիորեն, այլ պահպանելով որոշ անկախութիւն, ապա դա մեծ խոչընդոտ է հրաման տվողի համար: Պուբլիոս Կրասոսը^Ը, նա, որին հռոմեացիները համարում էին հընդապատիկ երջանիկ մարդ, Ասիայում կոնտուլ եղած ժամանակ մի հույն ինժեների հրամայեց բերել Աթենքում իր տեսած երկու նավակայաներից մեծը, որպեսզի պատրաստեր միտքը դրած բաբանը, իսկ հույնը, հիմնվելով սեփական գիտելիքների վրա, իրեն թույլ տվեց խախտել հրամանը և բերեց այն կայմը, որն ավելի փոքր էր, բայց նաև, ինչպես հուշում էր նրա փորձը, նշված նպատակի համար ավելի պիտանի: Կրասոսը, համբերատար լսելով նրա փաստարկները, հրամայեց այնուամենայնիվ խարազանել նրան, գտնելով, որ ամենից առաջ կարգապահութիւնն է, անգամ եթե դա վնաս է բերում գործին:

Մյուս կողմից ավելորդ չէ նշել, որ անվերապահ հնազանդութիւնն օգտակար է լոկ հստակ և որոշակի հրամանի առկայութեան դեպքում: Իեսպանների պարտականութիւնները թույլ են տալիս գործողութիւնների ավելի մեծ ազատութիւն, քանզի մի շարք դեպքերում նրանք ստիպված են լինում ինքնուրույն որոշումներ ընդունել, չէ որ նրանք ոչ միայն կատարում են իրենց տիրակալի կամքը, այլև նախապատրաստում են այն և ուղղութիւն տալիս իրենց խորհուրդներով: Իմ կյանքում ես տեսել եմ բարձրաստիճան բավական շատ անձանց, որոնց պարսավում էին թագավորի կարգադրութիւններին կուրորեն հնազանդվելու և գործի հանգամանքները հաշվի առնելու անկարողութեան համար:

Իրազեկ մարդիկ այժմ էլ պախարակում են պարսից տիրակալներին, որոնք իրենց փոխարքաներին ու հավատարմատարներին տրամադրում էին այնպիսի պոչատ լիազորութիւններ, որ նրանք ստիպված էին լինում ամեն մի մանրուքի համար լրացուցիչ ցուցումներ խնդրել: Ուշագրութեան առնելով պարսից թագավորութեան վիթխարի տարածքները, նման հապաղումը, հաճախ միանգամայն լրջորեն վնասում էր նրանց գործերին:

Եվ եթե Կրասոսն իր արհեստում փորձառու մարդուն հղած նամակում նշել է, թե ինչպես է մտադիր կայմն օգտագործել, ապա դա արդյոք չի՞ նշանակում, որ նա սկսել է վարպետի հետ քննարկել իր մտահղացումը և իրավունք տվել հրամանը կատարելու այս կամ այն շտկումով:

ՎԱՍԻ ՄԱՍԻՆ

Obstupui, steteruntque comae, et vox faucibus haesit*.

Ես ամենեին էլ լավ բնախույզ չեմ (ինչպես ընդունված է արտահայտվել), և ինձ հայտնի չեն մեզ վրա վախի ազդեցության շարժառիթները, սակայն ինչ էլ լինի, դա հիրավի ապշեցուցիչ մոլուցք է, և բժիշկներն ասում են, թե չկա մի ուրիշ զգացում, որ վախի նման խախտի մեր հավասարակշռությունը: Եվ իրոք, ես տեսել եմ բավական շատ մարդիկ, որոնք վախի ազդեցության տակ դարձել են խելակորույս, ասենք, նույնիսկ առավել հավասարակշռված մարդկանց մոտ վախի նուպան կարող է սոսկալի կուրացում առաջացնել: Ես արդեն չեմ խոսում տղետ ու խավարամիտ մարդկանց մասին, որոնց աչքին երևում են մերթ փոթոթմաններից ելած ու սպիտակ սավանով փաթաթված իրենց նախնիները, մերթ փոխակերպուկներ, մերթ տան ոգիներ կամ ուրիշ ճիվաղներ: Սակայն նույնիսկ զինվորները, որոնք, թվում է, պետք է մյուսներից քիչ տեղի տան վախի առջև, նրանից կուրացած, բազմիցս ոչխարների հոտն ընդունել են զրահակիր հեծյալների տեղ, շամբն ու եղեգնուտը՝ զրահավոր զինվորների և նիզակակիրների, մեր զինակիցներին՝ թշնամիների և սպիտակ խաչը՝ կարմիր խաչի տեղ²:

Երբ Բուրբոնյան արքայազնը գրավում էր Հոսմը³, սուրբ Հրեշտակի ամրոցի մոտ կանգնած մի դրոշակիր տազնապի առաջին իսկ ազդանշանից այնպես վախեցավ, որ ճեղքի միջով դրոշը ձեռքին նետվեց քաղաքից դուրս՝ ուղիղ հակառակորդի վրա, համողված լինելով, թե գնում է քաղաք, յուրաջինների մոտ, և միայն տեսնելով Բուրբոնյան արքայազնի իրեն ընդառաջ շարժվող զինվորներին (քանզի նրանց թվաց, թե դա պաշարվածների կողմից ձեռնարկած արտագրոհ է) նա, վերջապես, ուշքի դալով, շուռ եկավ և վերադարձավ քաղաք այն նույն ճեղքով, որից դուրս էր եկել բուրբոնյան բաց տեղանքով ավելի քան երեք հարյուր քայլ թշնամու կողմը գնալու համար միայն: Բնավ ոչ այսքան հրջանիկ վախճան ունեցավ Ժյուլի դրոշակրի արարքը: Երբ սկսվեց Սեն-Պոլի գրոհը, որն այն ժամանակ մեզանից վերջրել էին կոմս դը Բյուրն ու պարոն դյու Ռյուն, այդ դրոշակիրը վախից իրեն այնպես կորցրեց, որ ճեղքի միջով դրոշը ձեռքին նետվեց քաղաքից դուրս և թրատվեց թշնամու գրոհող զինվորների կողմից: Նույն պաշարման ժամանակ տեղի ունե-

* Ես քարացա, մազերս բիզ-բիզ կանգնեցին, և լեզուս կարկամեց¹ (լատ.):

ցավ բոլորի համար՝ հիշարժան մի դեպք, երբ ազնվականներից մեկը, շատանալով նույնիսկ մեկ քերծվածք, սրտաթափ, ահից անշնչացած վաչր ընկավ ճեղքի մոտ:

- Նման վախ համակում է երբեմն բազմաթիվ մարդկանց: Ալեմանների դեմ Գերմանիկի⁴ արշավանքներից մեկի ժամանակ հոռմեացիների երկու խոշոր ջոկատներ սարսափահար ճողոպրեցին երկու տարրեր ուղղութուններով, ըստ որում նրանցից մեկը սլացավ հենց այնտեղ, որտեղից փախչում էր մյուսը:

Վախը մերթ թե է տալիս մեր կրունկներին, ինչպես երկու նախորդ օրինակներում, մերթ, ընդհակառակը, մեխում ու թմրեցնում մեր ոտքերը, ինչպես կարելի է կարդալ Թեոփիլես կայսեր մասին, որը, հաղարացիների⁵ դեմ կռվում պարտութուն կրելով, դարձավ այնքան անտարբեր և այնպես կարկամեց, որ ի վիճակի չէր անդամ փախչել:

adeo, pavor etiam auxilia formidat*.

Վերջացավ նրանով, որ Մանվելը՝ գլխավոր հրամանատարներից մեկը, բռնեց նրա ուսն ու թափահարեց, ինչպես անում են մարդուն խոր քնից արթնացնելու համար, և դիմեց հետևյալ բառերով. «Եթե հիմա ինձ չհետևես, ես քեզ կսպանեմ, քանզի ավելի լավ է կյանքից բաժանվել, քան, կորցնելով թագավորութունը, գերի դառնալ»:

Մայրահեղ վախն արտահայտվում է այնպես, որ, տեղի առնելով նրա առջև, մենք նույնիսկ համակվում ենք այն նույն քաջությամբ, որից նա մեղ զրկել էր այն պահին, երբ պահանջվում էր կատարել մեր պարտքն ու պաշտպանել մեր պատիվը: Հաննիբալի դեմ պատերազմում հոռմեացիների (այս անգամ նրանց հրամանատարն էր կոնսուլ Սեմպրոնիոսը) առաջին խոշոր պարտության ժամանակ տասը հազար հետեվակալիներից բաղկացած հոռմեական մի ջոկատ, վախի ճիրաններում շտեմելով փրկության այլ ճանապարհ, շեշտակիորեն նետվեց թշնամու ամենախիտ շարքերի վրա և ապշեցուցիչ համարձակությամբ ճեղքեց գրանք, ծանր կորուստներ հասցնելով կարթագենցիներին: Այդպիսով ցակատը խայտառակ փախուստի հնարավորութուն ձևոր բերեց այն դեպք, ինչ գնով կարող էր փայլուն հաղթանակ ձևոր բերել: Ահա թե ես ինչից եմ վախենում բուն վախից ավելի:

Իսկ ընդհանրապես մենք վախն ավելի սուր ենք դգում, քան մյուս պատուհասները:

Սրիէ կռվում ջարդոտված, վիրավոր ու դեռևս արյունլվա շատերին

* Վախը ստիպում է սահմուկել նույնիսկ նրանից, ինչը կարող էր օգնել⁶ (լատ.):

կարելի է հաշորդ օրը նորից մարտի տանել, սակայն նրանց, ովքեր ճաշակել են ու գիտեն վախը թշնամուց, դուք չեք կարող ստիպել, որ գոնե նայեն նրան: Բոլոր նրանք, ովքեր մշտապես տանջվում են ունեցվածքը կորցնելու, արտաքսման ենթարկվելու, կախման մեջ ընկնելու վախից, ապրում են տազնապը սրտերում, կորցնում են քունը, դադարում ուտել ու խմել, մինչդեռ աղքատները, տարազիրներն ու ստրուկները հաճախ ապրում են նույնքան անհոգ, որքան մյուս մարդիկ: Իսկ քանի՞-քանիսը, զարհուրելի վախի տառապանքներից, կախվել են, խեղդվել ջրում կամ նետվել անդունդը, ակնբախտորեն համոզելով մեզ, սրահն ավելի անտանելի ու անհանդուրժելի է, քան բուն մահը:

Հույները տարբերում են վախի մի հատուկ տեսակ, որն ամենևին կախված չէ մեր մտածողական ընդունակությունների անկատարությունից: Այդպիսի վախը, նրանց կարծիքով, առաջանում է առանց տեսանելի հիմքերի և երկնքի ներշնչանք է: Երբեմն այն պատում է մի ամբողջ ժողովրդի, ամբողջ բանակների: Այդպիսին էր վախի այն բռնկումը, որն անհավատալի աղետներ բերեց Կարթագենում: Ամբողջ քաղաքում լսվում էին միայն ճիչ ու վայնասուն, միայն հուզված ձայներ: Ամենուր կարելի էր տեսնել, թե ինչպես են քաղաքացիները, կարծես տազնապի ազդանշանով, դուրս թռչում տներից, նետվում միմյանց վրա, վիբավորում ու սպանում իրար, ասես քաղաքը գրավելու համար, ներխուժած թշնամիներ լինեին: Խռովությունն ու վայրագությունները շարունակվեցին՝ այնքան, մինչև ազոթքներով ու զոհաբերություններով նրանք մեղմեցին աստվածների ցասումը:

Այդպիսի վախը հույներն անվանում էին խուճապային:

Գլուխ XIX

ՈՐԵՎԷ ՄԵԿԻ ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼ ԶԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԶԻ ԿԱՐԵԼԻ ԴԱՏԵԼ, ԲԱՆԻ ԴԵՌ ՆԱ ԶԻ ՄԱՀԱՅԵԼ

Scilicet ultima semper
Expectande dies homini est, dicitque beatus
Ante obitum nemo, supremaque funera debet*.

Յուրաքանչյուր երեխայի հայտնի է այս առթիվ Կրեսոս արքայի մասին պատմությունը. գերի ընկնելով Կյուրոսին և մահվան դատա-

* Եվ այսպես, մարդը միշտ պետք է սպասի յուր վերջին օրվան և ոչ ոքի չի կարելի երջանիկ անվանել մինչև նրա մահն ու թաղման ծեսերի կատարումը՝ (լատ.):

պարտվելով, մահապատժից անմիջապես առաջ նա բացականչեց. «Մ՛հ, Սուլոն, Սուլոն»: Երբ այդ մասին զեկուցեցին Կյուրոսին և նա հարցրեց, թե դա ինչ է նշանակում, Կրեսոսը պատասխանեց, թե ինքը սեփական մաշկի վրա է զգացել ժամանակին Սուլոնից լսած այն նախազգուշացման արդարացիությունը, թե որքան էլ բախտը ժպտա այս կամ այն մարդուն, մենք չպետք է նրան անվանենք երջանիկ, մինչև շանցնի նրա կյանքի վերջին օրը, քանզի մարդկային ճակատագրերն այնքան երբ-րան ու փոփոխական են, որ բավական է մի աննշան ցնցում, և ամեն ինչ իսկույն կփոխվի: Ահա թե ինչու մի մարդու, որը պնդում էր, թե պարսից արքան երջանիկ է, քանզի, շատ ջահել հասակում տիրում է այդքան հզոր զահի, Ագեսիլայոսն² ասաց. «Պրիամոսն էլ այդ տարիքում դժբախտ չէր»: Մակեդոնիայի արքաներին՝ մեծն Ալեքսանդրի հետնորդներին, մենք Հռոմում տեսնում ենք որպես զրազիրներ ու ատաղ-ձագործներ, Սիցիլիայի բռնապետներին՝ որպես դպրոցի ուսուցիչներ Կորնթոսում: Աշխարհի կեսը նվաճողը, որը իշխում էր այդքան բանակների, դառնում է խոնարհ հայցող, որը ստորանում է Եգիպտոսի տիրակալի շնչին ծառաների առջև. ահա թե ինչքան թանկ նստեց Պոմպեոսին նրա կյանքի երկարացումը ևս մի հինգ-վեց ամսով³: Իսկ մի՞թե չեն հիշում մեր հայրերը, թե ինչպես էր Լոշ բանտում տանջվելով հանդում Լոզովիկո Սֆորցան⁴: Միլանի տասներորդ դուքսը, որի առաջ երկար տարիներ դողում էր Իտալիան: Եվ նրա վիճակում վատթարագույնն այն էր, որ այնտեղ անցկացրեց ամբողջ տասը տարի: Իսկ մի՞թե դահճի ձեռքով շմեռավ ամենաչքնաղ թագուհին, քրիստոնեից աշխարհի ամենազորեղ թագավորի այրին⁵: Նման օրինակներն հազարավոր են: Եվ կարելի է մտածել, թե, ինչպես Երկնային ամպրոպներն ու փոթորիկներն են կռվի Ելնում մեր պալատների գոռոզությունն ու ամբարտաժանությունն զեմ, այդպես էլ այնտեղ՝ վերևում, կան ոգիներ, որոնք նախանձում են Երկրաբնակ ոմանց մեծությունը.

Usque adeo res humanas vis abdita quaedam
 Obterit, et pulchros fascēs saevasque secures
 Proculcare, ac ludibrio sibi habere videtur*.

Կարելի է մտածել նաև, թե երբեմն ճակատագիրը դիտավորյալ գա-րտանակալում է մեր կյանքի վերջին օրը, որ ցույց տա իր ամենի զս-

* Այդպես մի թաքնված ուժ տալալում է մարդկանց գործերը, և, հավանաբար, սրանչևի փակեղներ ու ահեղ տապարներ ոտնատակ տալը նրա համար գլխարձություն է (լատ.):

բությունն ու մի ակնթարթում ավերի այն ամենը, ինչ ինքն է կառուցել տարիներով, և դա մեզ ստիպում է կաբերիսսի⁷ նման բացականչել.

Nimirum hac die una plus vixi, mihi quam vivendum fuit*.

Այսպիսով, մենք ունենք Սոլոնի խորհրդին ունկնդրելու բոլոր հիմքերը: Բայց քանի որ այս փիլիսոփան ենթադրում էր, թե ճակատագրի ողորմածությունը կամ հարվածները դեռևս Լրջանկություն կամ դժբախտություն չեն, իսկ բարձր դիբբը կամ գորեղությունը համարում էր շքնչին պատահականություններ, ես գտնում եմ, որ նա տեսնում էր ավելի հեռուն և իր խոսքերով ուզում էր ասել, թե հարկ չկա մարդուն համարել երջանիկ (երջանկության տակ հասկանալով անդորրություն և ազնիվ սգու բավարարվածություն, ինչպես նաև իրեն տիրապետել կարողացող հոգու կայունություն ու վճռականություն), մինչև որ մեզ չվիճակվի տեսնել, թե նա ինչպես է խաղում իրեն բաժին ընկած պիեսի վերջին և, անտարակույս, առավել դժվար գործողությունը: Մնացած ամեն ինչում կեղծիք է հնարավոր: Մեր հիանալի փիլիսոփայական կշռադատությունները հաճախ ավելին չեն, քան մի սերտած դաս, և ամեն տեսակ կենցաղային անախորժությունները շատ անգամ, առանց մեր զգայուն թելերին դիպչելու, մեզ հնարավորություն են թողնում արտաքուստ կատարելապես հանգիստ երևալ: Սակայն մահվան, և մեր միջև այդ վերջին գոտեմարտում այլևս տեղ չկա կեղծիքին, հարկ է լինում պարզ խոսել և, վերջապես, առանց կոծկելու ցույց տալ, թե ինչ կա հոգումդ.

Nam verae voces tum demum pectore ab imo
Eiiciuntur, et eripitur persona, manet res**.

Ահա թե ինչու այդ վերջին քննությունը վերջնական ստուգումն ու փորձաքարն է այն ամենի, ինչ կատարել ենք կյանքում: Այդ օրը գերագույն օրն է, մեր բոլոր մյուս օրերի դատավորը: Այդ օրը, ասում է մի հին հեղինակ¹⁰, դատում է իմ բոլոր անցած տարիները: Ես մահվանն եմ թողնում զնահատելու իմ գործունեության պտուղները, և այնժամ պարզ կզառնա՝ խոսքերս դուրս էին դալիս իմ շուրթերից միայն, թե նաև սրտից:

Ես գիտեմ մարդիկ, որոնք սեփական մահով ապահովել են իրենց ապրած ողջ կյանքի բարի կամ, ընդհակառակը, վատ համբավը: Սկի-

* Պարզ է, որ ես այս մեկ օրն ապրել եմ ավելի, քան պետք է ապրեի⁸ (լատ.):

** Քանզի միայն այդ ժամանակ, վերջապես, հոգու խորքից դուրս են թռչում անկեղծ խոսքեր, պատվում է դիմակը և մնում էությունը⁹ (լատ.):

պիտոնը՝ Պոմպեոսի աները, իր մահով վերջ դրեց նախկինում իր մասին եղած վատ կարծիքին¹¹: Երբ ինչ-որ մեկն էպամինոնդոսին հարցրեց, թե ում է ավելի բարձր դասում՝ Քարրիասին, Իփիկրատեսին թե իրեն, նա պատասխանեց. «Այդ հարցը որոշելու համար հարկ է նայել, թե ինչպես կմեռնի մեզանից յուրաքանչյուրը»¹²: Եվ իրոք, շատ բան կխլեր նբանից այն մարդը, սվ նրա մասին կդատեր, հաշվի չառնելով վերջինիս մահվան վեհությունն ու ազնվությունը: Անիմանալի է կամբլն աստծո: Իմ ժամանակներում ամենանողկալի կյանք վարող երեք տականքներ, ինչպիսիք ես երբևէ տեսել եմ, երեք կատարյալ սրիկաներ մահացան ինչպես վայել է օրինավոր մարդկանց, և, բոլոր առումներով, կարելի է ասել, անբասիր:

Կինում են մահացություններ քաջարի և բարեհաջող: Այսպես, օրինակ, ես ճանաչում էի մեկին, որի ապշեցուցիչ հաջողությունների թելը մահը կտրեց այն միջոցին, երբ նա հասել էր իր կենսուղու բարձրակետին, նրա վախճանն այնքան էր վեհ, որ, ըստ իս, նրա փառասեր ու համարձակ ծրագրերը շունեին այնքան վեհություն, որքան զրանց խորտակումը: Նա առանց մի քայլ անելու հասավ այն բանին, ինչին ձրգտում էր, և ըստ որում դա կատարվեց ավելի վեհորեն ու ավելի մեծ փառքով, քան նա կարող էր ցանկանալ և հուսալ: Իր մահով նա ձեռք բերեց ավելի մեծ հզորություն և ավելի հնչեղ անուն, քան երազում էր կենդանության օրոք¹³:

Ուրիշների կյանքը գնահատելիս ես միշտ նկատի եմ առնում նրա վախճանը, և այդ առթիվ ամենազլխավոր հույսս այն է, որ իմ սեփական կյանքն ավարավի բավականաչափ լավ, այսինքն՝ հանգիստ ու աննշմար:

Գլուխ XX

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՓԻԼԻՍՈՓԱՅԵԼ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՍՈՎՈՐԵԼ ՆԵՌՆԵԼ

Յիցերոնն ասում է, թե փիլիսոփայելը սչ այլ թեչ է, քան ինքդ քեզ նախապատրաստել մահվան¹: Եվ դա առավել ևս ճիշտ է, քանզի հետագատությունն ու մտորումը մեր հոգին հեռացնում են մեր փուչ «ես»-ի սահմաններից, պոկում մարմնից, իսկ դա, մի տեսակ, մահվան կանխադրժում և նմանություն է, կարճ ասած, ամբողջ իմաստությունն ու բոլոր լատողությունները մեր աշխարհում, ի վերջո, հանգում են այն բանին, որ մեղ սովորեցնեն չվախենալ մահից: Եվ իրոք, կամ մեր բանականությունը ծաղրում է մեզ, կամ, եթե այդպես չէ, այն պետք է ձգտի գեթ

մեկ նպատակի, այսինքն զոհացնի մեր ցանկությունները, և նրա ամբողջ գործունեությունը պետք է ուղղված լինի լոկ այն բանին, որ մեզ հնարավորություն ընձեռնի բարիք գործել և ապրել մեր հաճույքի համար, ինչպես ասված է Սուրբ գրքում²: Այս աշխարհում բոլորը հաստատ համոզված են, որ մեր վերջնական նպատակը հաճույքն է, և վեճը լոկ այն է, թե ինչպես հասնել դրան, հակառակ կարծիքն իսկույն կմերժվեր, քանզի ո՞վ կլսեր այն մարդուն, որը պնդում է, թե մեր ջանքերի նպատակը մեր պատուհասներն ու տառապանքներն են:

Փիլիսոփայական դպրոցների տարաձայնություններն այս դեպքում զուտ բառային են: *Transcurramus sollertissimas nugas**.

Այստեղ ավելի շատ համառություն և խոսքակոխվ է մանր-մունր բաների շուրջ, որ վայել չէ նման վեճ կոչում ունեցող մարդկանց: Ասենք, մարդն ում էլ նմանակելու լինի, դրա հետ մեկտեղ միշտ խաղում է նաև ինքն իրեն: Ինչ էլ որ ասեն, նույնիսկ առաքինության վերջնական նպատակը վայելքն է: Ինձ դուր է գալիս այդ բառով շղայնացնել նրանց, ում համար այն շատ տհաճ է: Եվ երբ այն իսկապես ցույց է տալիս գերագույն հաճույք ու լիակատար զոհացում, նման վայելքն ավելի շատ կախված է առաքինությունից, քան որևէ այլ բանից: Դառնալով ավելի աշխույժ, բուռն, կրակոտ ու առնական, այդպիսի վայելքը միայն ավելի է քաղցրանում: Եվ մենք պետք է այն կոչենք ավելի մեղմ ու բնական «հաճույք» բառով, քան «տոփանք», ինչպես հաճախ անվանում են: Ավելի ստոր այս վայելքը, եթե առհասարակ արժանի է այդ գեղեցիկ անվանը, ապա սոսկ մրցության կարգով, այլ ոչ թե իրավամբ: Ես գտնում եմ, որ վայելքի այդ տեսակը, ավելի քան առաքինությունը, կապված է զանազան անախորժությունների ու զրկանքների հետ: Բավական չէ, որ այն թուրցիկ է, անկայուն ու վաղանցուկ, նրան հատուկ են նաև թե իր հսկումները, թե իր պասերը, թե իր շարշարանքները, թե քրտինք, թե արյուն, ավելին, նրա հետ կապված են առանձնահատուկ, խիստ տանջալից և ամենատարբեր տվայտանքներ, իսկ ապա՝ այնպիսի տհաճ հրդիություն, որը կարելի է պատիժ համարել: Մենք խորապես մոլորվում ենք, կարծելով, թե այդ դժվարություններն ու խոչընդոտներն ավելի կրակոտ են դարձնում նման վայելքն ու առանձնահատուկ համ տալիս նրան, ինչպես դա տեղի է ունենում բնության մեջ, ուր հակադրությունները, բախվելով, նոր կյանք են ներարկում միմյանց, սակայն ոչ պա-

* Եկեք մի կողմ թողնենք այդ ճղճիմ հնարքները³ (լատ.).

կաս մոլորութեան մեջ ենք ընկնում, երբ, անցնելով առաքինութեանը, ասում ենք, թե նրան ուղեկցող դժվարութիւններն ու դառնութիւնները այն դարձնում են բեռ մեզ համար, դարձնում են անսահմանորեն անմատչելի մի բան, քանզի այստեղ անհամեմատ ավելի, քան վերոհիշյալ վայելքի ժամանակ, դրանք ազնվացնում, քաղցրացնում ու սաստկացնում են աստվածային և կատարյալ այն հաճույքը, որ առաքինութիւնն է պարգևում մեզ: Հիրավի առաքինութեան հետ շփվելու արժանի չէ այն մարդը, որ նժարների վրա է դնում նրա՝ պահանջած զոհերն ու տված պատուները, համեմատելով դրանց քաշը. այդպիսի մարդը չի պատկերացնում ոչ առաքինութեան բարերարութիւնը, ոչ նրա ամբողջ հմայքը: Եթե մեկը պնդում է, թե առաքինութեան հասնելը տանջալի ու դժվարին գործ է և լոկ նրան տիրելն է հաճելի, դա միևնույնն է, եթե նա ասեր, թե առաքինութիւնը միշտ տհաճ է: Մի՞թե մարդն ունի այնպիսի միջոցներ, որոնց օգնությամբ որևէ մեկը թեկուզ մի անգամ կարողացել է լիովին տիրել նրան: Մեզանում առավել կատարյալներն իրենց երջանիկ էին համարում անգամ այն ժամանակ, երբ հնարավորութիւն կ'իս ստանում ձգտելու գոնե մի քիչ մոտենալ, հույս շունենալով երբևէ տիրել նրան: Բայց այդպես ասողները սխալվում են. չէ որ մեզ հայտնի բոլոր հաճույքներին հետամտելն ինքնին հաճելի զգացում է: Բուն ձրգտումը մեզանում ծնում է ցանկալի կերպարանքը, իսկ չէ որ նրանում է մեծ մասն այն բանի, ինչին պետք է հասցնեն մեր գործողութիւնները, և առարկայի մասին պատկերացումն իր էութեամբ անբաժանելի է նրա կերպարանքից: Երանութիւնն ու երջանկութիւնը, որոնցով փայլում է առաքինութիւնը, պայծառ լույսով են ողողում այն ամենը, ինչն սկզբից մինչև վերջ առնչվում է նրան: Եվ նրա ամենագլխավոր բարերարութիւններից մեկը մահն արհամարհելն է, այն մեր կյանքը դարձնում է հանգիստ ու անխռով, թույլ է տալիս վայելել նրա մաքուր ու անողող հաճույքները, իսկ երբ դա չկա՝ թունավորվում են նաև մյուս ոլորտ վայելքները:

Ահա թե ինչու փիլիսոփայական բոլոր ուսմունքները հանդիպում ու փատեղվում են այդ կետում: Ու թեև դրանք միաբերան մեզ կոչ են անում արհամարհել տառապանքները, աղքատութիւնն ու մյուս ձախորդութիւնները, որոնց ենթակա է մարդու կյանքը, այնուհանդերձ դա չէ, որ պետք է լինի մեր առաջնահերթ հոգսը, ինչպես նրա համար, որ ուղի ձախորդութիւններն այնքան էլ անխուսափելի չեն (մարդկանց մեծ մասը կյանքն անց է կացնում, շճաշակելով աղքատութիւնը, իսկ ոմանք՝ անյնխակ շիմանալով, թե ինչ են ֆիզիկական տառապանքն ու հիվանդութիւնները, ինչպես, օրինակ, երաժիշտ Քսենոփիլեսը, որը մահացավ

հարյուր վեց տարեկանում և մինչև մահ հիանալի առողջություն ուներ)⁴, այնպես էլ նրա համար, որ, ծայրահեղ գեպքում, երբ մենք կամենանք, կարելի է դիմել մահվան օգնությունը, որը կդադարեցնի մեր երկրային գոյությունն ու վերջ կտա մեր տանջանքներին: Բայց ինչ վերաբերում է մահվանը, ապա այն անխուսափելի է.

Omnes eodem cogimur, omnium
Versatur urna, serius ocus
Sors exitura et nos in aeternum
Exitium impositura cymbae*.

Սրանից հետևում է, որ եթե այն մեզ վախ է ներշնչում, ապա գա մեզ համար մշտնջենական աղբյուր է այնպիսի տառապանքների, որոնք թեթևացնելն անհնար է: Այն բոլոր կողմերից գաղտագողի մոտենում է մեզ: Մենք կարող ենք, ինչքան ասես նայել այս ու այն կողմ, ինչպես անում ենք կասկածելի վայրերում. quae quasi saxum Tantalus semper impendit**.

Մեր պառլամենտները հաճախ ոճրագործներին մահապատժի են ուղարկում հենց այնտեղ, ուր կատարվել է հանցագործությունը: Ճանապարհին նրանց հետ մտեք ամենաշքեղ տները, հյուրասիրեցեք ամենանըրբընտիր ուտեստներով ու ըմպելիքներով,

non Siculae dapes
Dulcem elaborabunt saporem,
Non avium cytharaeque cantus
Somnum reducent***.

մի՞թե կարծում եք, թե նրանք կկարողանան հաճույք զգալ դրանից, և իրենց ուղևորության վերջնական նպատակը, որ շարունակ նրանց աչքի առաջ է, չի փչացնի այդ ամբողջ ճոխությունն նկատմամբ նրանց ակործակն ու չի խամրեցնի այն.

Audit iter, numeratque dies, spatioque viarum
Metitur vitam, torquetur peste futura****.

* Բուրբիս վերջը նույնն է, բուրբիս համար թափ է տրվում վիճակախաղի սսփորը, վազ թե ուշ՝ կրնկնի վիճակն ու մեզ ընդմիշտ կործանելու համար կղատապարտի (Քուրոնի) նավակին⁵ (լատ.):

** Այն միշտ սպառնում է, ինչպես Տանտալոսի ժայռը⁶ (լատ.):

*** ... ոչ սիցիլիական ուտեստները հաճույք կպատճառեն նրան, ոչ թռչունների գեղգեղանքն ու կիթառի նվաղը կվերադարձնի նրա քունը⁷ (լատ.):

**** Նա մտածում է ճանապարհի մտահն, հաշվում օրերը, կյանքը շափում ճամփաների հեռավորությամբ և տանջվում է ապագա պատուհասների մտրից⁸ (լատ.):

Մեր կենսուղու վերջակետը մահն է՝ մեր ձգտումների սահմանը, և եթե այն սարսափ է ներշնչում, ապա կարելի է արդյոք, առանց տենդորեն ցնցվելու, անել գոնե մեկ քայլ: Տգետ մարդկանց օգտադործած դեղը այդ մասին բնավ չմտածելն է: Սակայն ինչպիսի անասնական բթամտություն է պետք, որ այդքան կույր լինես: Այդպիսիներն էլը պոչից կսանձեն:

Qui capite ipse suo instituit vestigia retro,—*

և չկա գտրմանալի ոչինչ, որ նման մարդիկ հաճախ ծուղակն են ընկնում: Նրանք սարսափում են մահն իր անունով կոչել, և շատերն այդ բառը լսելիս խաշակնքում են, այնպես, ինչպես սատանայի անունը լսելիս: Եվ քանի որ կտակում անհրաժեշտ է հիշատակել մահը, ապա շրուպասեք, թե նրանք կմտածեն այն կաղմել նախքան բժշկի վերջին խոսքը, և լոկ աստծուն է հայտնի, թե ինչ վիճակում են գտնվում նրանց մտավոր կարողությունները, երբ, մահվան տանջանքների ու վախի մեջ, վերջապես, սկսում են թխել այն:

Քանի որ հոռմեացիների յեզվով «մահ» վանկը¹⁰ շատ էր ականջ ձակում և շարագուշակ հնչողություն ուներ, նրանք սովորեցին կամ առհասարակ հրաժարվել դրանից կամ փոխարինել շրջաբանություններով: Փոխանակ ասելու, թե «նա մահացավ», ասում էին «նա դադարեց ապրել» կամ «նա իրենն ապրեց»: Քանի որ այստեղ հիշատակվում է, թեկուզ անցած, կյանքը, դա որոշ մխիթարություն էր բերում նրանց: Մենք այստեղից ենք փոխառել մեր՝ «հանգուցյալ պարոն այսինչը»: Առիթի գեպում, ինչպես ասում են, խոսքը ոսկուց թանկ է: Ես ծնվել եմ մեր թվարկության¹¹ (այսինքն, տարեսկիզբը համարելով հունվարը) հարյուր հինգ հարյուր երեսուններեք թվականի փետրվարի վերջին օրը, աստնմեկի ու կեսգիշերի միջև: Երկու շաբաթ առաջ բուրեց իմ երեսունինը տարին, և ես պետք է ապրեմ, գոնե, էլի այդքան: Ասմտություն կլիներ, սակայն, չմտածել, թվում է, այնքան հեռավոր բանի մասին: Արդարև, ահել թե ջահել միատեսակ են գերեզման մտնում: Ամեն ոք կյանքից հեռանում է ոչ այլ կերպ, քան եթե հենց նոր կյանք մտած լիներ: Ավելացրեք սրան, որ չկա մի զառամյալ ծերունի, որը, հիշելով Առաքուսաղային¹², շնուսա ապրել ևս մի քսան տարի: Բայց, ողորմելի՛ լիմար (քանզի ուրիշ ինչ ես ներկայացնում քեզանից), ո՞վ է սահմանել կյանքիդ տևողությունը: Դու հիմնվում ես բժիշկների դատարկարարության վրա: Ավելի լավ է դիտես շրջապատդ, դիմես քո սեփական

* ևս սրտեց գնալ, գլուխը շրջելով հետ⁹ (լատ.):

փորձին: Եթե ելնելու լինենք իրերի բնական ընթացքից, ապա դու արդեն երկար ժամանակ է ապրում ես շնորհիվ երկնքի առանձնահատուկ բարեհաճության: Դու գերազանցել ես մարդկային կյանքի սովորական ժամկետը: Եվ դրանում համոզվելու համար հաշվիր, թե քո ծանոթներից քանիսն են մահացել քո հասակից շուտ, և կտեսնես, որ նրանք անհամեմատ ավելի շատ են, քան քո տարիքին հասածները: Բացի այդ, կազմիր իրենց կյանքը փառքով պսակողների ցուցակը, և ես զրազ կգամ, որ այնտեղ զգալիորեն ավելի շատ կլինեն մինչև երեսունհինգ տարեկանը մահացածները, քան այդ սահմանագիծն անցածները: Բանականությունն ու բարեպաշտությունը մեզ հրամայում են մարդկային կյանքի տիպար համարել Քրիստոսի կյանքը, բայց այն ավարտվել է, երբ նա երեսուներեք տարեկան էր: Մեծագույն մարդը, այս անգամ պարզապես մարդ՝ ես նկատի ունեմ Ալեքսանդրին, մահացել է նույն տարիքում: Եվ ինչպիսի՞ հնարքներ ունի մահը, մեզ հանկարծակիի բերելու համար:

Quid quisque vitet, nunquam homini satis
Cautum est in horas*.

Ես չեմ խոսի տենդի ու թոքաբորբի մասին: Սակայն ո՞վ կարող էր մտածել, թե Բրետոննի դուքսը կճգմվի ամբոխում, ինչպես եղավ Կղեմես պապի՝ իմ հարևանի¹⁴, Լիոն մտնելու ժամանակ: Մի՞թե շենք տեսել մենք, թե ինչպես մեր թագավորներից մեկը սպանվեց, մասնակցելով ընդհանուր զվարճությանը¹⁵: Եվ մի՞թե շմահացավ նրա նախնիներից մեկը, որին վիրավորել էր վարազը¹⁶: Էսքիլեսը, որին գուշակել էին, թե մեռնելու է, մնալով փլված տանիքի տակ, կարող էր ինչքան ասես նախազգուշական միջոցներ ձեռնարկել, դրանք բոլորը եղան անօգուտ, քանզի նրան սպանեց արծվի մագիլներից դուրս պոկված կրիայի գրահը: Այսինչը խեղդվեց խաղողի կորիզով¹⁷, այսինչ կայսրը մահացավ սանրի քերծվածքից, էմիլիոս Լեպիդոսը՝ գայթեկով իր սենյակի շեմքից, իսկ Ավիտիգիոսը՝ գիպշելով խորհրդի նիստերի դահլիճ տանող դռանը: Կանանց զրկում են մահացել. պրետոր Կորնելիոս Գալոսը, Հոոմի քաղաքային պահակախմբի պետ Տիգելլինոսը, Մանտուայի մարկիզ Գվիդո Գոնզագոյի որդին՝ Լոդովիկոն, ինչպես նաև (և այս օրինակները կլինեն ավելի ցավալի) Պլատոնի դպրոցի փիլիսոփա Սպլեսիոյոսն ու պապերից մեկը: Խեղճ դատավոր Բեբիոսը, դատավիճող կողմերից մեկին

* Մարդն ի վիճակի չէ կանխատեսել, թե ինչից պիտի խուսափի այս կամ այն պահին¹³ (լատ.):

տալով մեկ շաբաթ ժամկետ, տեղնուտեղը հոգին ավանդեց, քանզի անցել էր հենց իրեն առաքված ժամկետը: Հանկարծամահ եղավ նաև բժիշկ Կայոս Հուլիոսը, այն պահին, երբ նա սպեղանի էր դնում մի հիվանդի աչքերին, մահը փակեց հենց իր աչքերը: Նման օրինակներ եղել են նաև իմ հարազատների մեջ. եղբայրս՝ քսաներեքամյա կապիտան Սեն-Մարտենը, որը, սակայն, հասցրել էր դրսևորել իր արտասովոր ընդունակությունները, մի անգամ խաղի ժամանակ դնդակով վնասվածք ստացավ, ըստ որում հարվածը, որ հասել էր աջ ալյանջից փոքր ինչ վերև, վերք չէր բացել և անգամ կապտուկ չէր թողել: Ստանալով հարվածը, եղբայրս չէր պառկել և նույնիսկ չէր նստել, սակայն հինգ թե վեց ժամ հետո մահացավ կաթվածից, որի պատճառը վնասվածքն էր: Տեսնելով այնքան հաճախակի և այնքան սովորական այդ օրինակները, մենք արգյոք կարող ենք ձերբազատվել մահվան մտքից և միշտ ու ամենուր շղգալ, թե այն արդեն բռնել է մեր օձիքը:

Բայց, դուք կասեք, միևնույնը չէ՞ արգյոք, թե դա ինչպես տեղի կունենա մեզ հետ: Միայն թե շտանջվե՞նք: Ես նույն կարծիքին եմ, և եթե տեղացող հարվածներից հորթի կաշվի մեջ թաքնվելու միջոց էլ ներկայանա, ես այնպիսին չեմ, որ հրաժարվեմ դրանից: Ինձ ձեռնտու է բառացիորեն ամեն ինչ, միայն թե հանգիստ լինեմ: Եվ ես կընտրեմ ինձ ընձեռվող լավագույն բախտարածինը, որքան էլ այն ձեր կարծիքով, լինի սակավ պատվաբեր ու համեստ:

praetulerim delirus inersque videri
Dum mea delectent mala me, vel denique fallant,
Quam sapere et ringi*.

Սակայն իսկական խելագարություն կլիներ հույս տածել, թե այդպիսով կարելի է անցնել այն աշխարհը: Մարդիկ վխտում են հետ ու առաջ, դոփում նույն տեղում, պարում, իսկ մահ չկա: Ամեն ինչ լավ է, ամեն ինչ հրաշալի է: Բայց երբ այն վրա է հասնում (նրանց կամ նրանց կանանց, երեխաներին, բարեկամներին, բերելով անակնկալի, գտնելով անպաշտպան), ինչպիսի՞ տանջանքներ, ինչպիսի՞ ողբ, ինչպիսի՞ գայլույթ և հուսահատություն է պատում նրանց անմիջապես: Դուք տեսե՞լ եք մեկին, որ լինի այդպես ընկճված, այդքան փոփոխված, այդքան հուղված: Հարկ է այս բաների մասին վաղօրոք մտածել: Իսկ նման անասնական անհոգությունը, եթե այն հնարավոր է փոքրիշատե մտա-

* ...ես կգերադասեի երեւել տկարամիտ ու տնտաղանդ, քան գլխակցել ու տանջվել դրանից, միայն թե իմ թիրուխյունները զվարճացնեին կամ, զոնե, խաբեին ինձ¹⁸ (լատ.):
7 Արշել Մոնտեկ

ծող մարդու մոտ (ըստ իս, բուրրովին անհնար է), մեզ ստիպում է շափազանց թանկ գնել նրա բարիքները: Եթե մահը նման լիներ թշնամու, որից կարելի է փախչել, ես խորհուրդ կտայի օգտվել վախկոտների այդ զենքից: Բայց որովհետև նրանից պրծնել հնարավոր չէ, քանզի միատեսակ հասնում է փախչողին, լինի դա սրիկա կամ ազնիվ մարդ,

Nempe et fugacem persequitur virum,
Nec parcit imbellis iuventae
Poplitibus, timidoque tergo*,

և որովհետև լավագույն զրահն անգամ չի պաշտպանի նրանից,

Ille licet ferro cautus se condat et aere,
Mors tamen inclusum protrahet inde caput**

եկեք սովորենք կրծքով դիմավորել ու մենամարտի բռնվել նրա հետ: Եվ, հաղթանակի զլխավոր առավելությունը նրանից խլելու համար, ընտրենք սովորականին հակառակ ճանապարհ: Զրկենք նրան խորհրդավորությունից, ուշադիր նայենք, ընտելանանք նրան, մտածելով նրա մասին ավելի հաճախ, քան որեէ այլ բանի մասին: Ամենուր և միշտ պատկերացնենք նրան հնարավոր բուրր կերպարանքներով: Եթե սայթաքի մեր ձին, եթե տանիքից կղմինդր ընկնի, եթե քորոցով մեզ ծակենք, եկեք ամեն անգամ մեր մտքում կրկնենք. «Իսկ ի՞նչ, եթե մահը հենց սա է որ կա՞»: Շնորհիվ դրա մենք կկոփվենք, կդառնանք ավելի տոկուն: Տոնախմբության ժամանակ, ամենաուրախ պահին թող մեր ականջներում միշտ հնչի մեր ճակատագիրը հիշեցնող նույն կրկներգը, եկեք թույլ շտանք վայելքները մեզ կլանեն այնքան, որ ժամանակ առ ժամանակ միտք շռվալայծի, թե որքան անհաստատ է մահվան թիրախ մեր ուրախությունը, և ինչպիսի անսպասելի հարվածների է ենթակա մեր կյանքը: Այդպես էին վարվում եգիպտացիները, որոնք սովորություն ունեին ամենահամեղ ուտելիքների ու ըմպելիքների հետ հանդիսարան բերել մի մումիա, որպես հիշեցում խնջույքի մասնակիցներին:

Omnem crede diem tibi diluxisse supremum.
Grata superveniet, quae non sperabitur hora***.

* Ախր նա հետապնդում է նաև փախչող տղամարդուն և չի խնայում վախկոտ պատանու ոչ ծնկները, ոչ երկշոտ թիկունքը¹⁹ (լատ.):

** Թող որ նա կանխատեսորեն ծածկվել է երկաթով ու պղնձով, միևնույն է, մահն ապագաների միջից կհանի նրա պաշտպանված գրուխը²⁰ (լատ.):

*** Քեզ բաժին ընկած ամեն մի օր համարիր վերջինը, և հաճելի կլինի այն ժամը, որի հույսը չունեիր²¹ (լատ.):

Հայտնի չէ, թե մահը որտեղ է մեզ սպասում, ուրեմն սպասենք նրան ամենուր: Մտորել մահվան մասին՝ նշանակում է մտորել ազատության մասին: Նա, ով սովորել է մեռնել, մոռացել է ստրուկ լինել: Մեռնելու պատրաստակամությունը մեզ ազատում է ամեն տեսակ հնազանդությունից ու հարկադրանքից: Եվ կյանքում չկա շարիք այն մարդու համար, ով ըմբռնել է, որ կյանքը կորցնելը շարիք չէ: Երբ Պողոս էմիլիոսին ներկայացավ Մակեդոնիայի դժբախտ թագավորի՝ նրա գերու բանբերը և հայտնեց վերջինիս խնդրանքը, որ իրեն շատիպի գնալ հաղթակառքի հետևից, նա պատասխանեց. «Թող այդ խնդրանքով ինքն իրեն դիմի»:

Անկեղծ ասած, ուղածդ գործում, եթե բնական ինչ-որ ձիրք չունես, սոսկ հմտությամբ ու եռանդով շատ բանի չես հասնի: Ես մեկամաղձոտ խառնվածքի տեր չեմ, բայց հակված եմ երազկոտության: Եվ իմ երեվակայությունը երբեք ոչ մի բանով այնպես չի կլանվել, ինչպես մահվան պատկերներով: Նույնիսկ կյանքիս ամենաթեթևամիտ շրջանում,

Iucundum cum aetas florida ver ageret*.

երբ ես ապրում էի կանանց ու զվարճությունների մեջ, ոմանք երբեմն մտածում էին, թե տանջվում եմ խանդից կամ հուսաբեկ եմ, մինչդեռ իրականում տարված էի լինում այդ օրերին տենդից մահացած որևէ ծանոթի մասին մտքերով, տենդ, որը նա ձեռք էր բերել մի այսպիսի տոնահանդեսից վերադառնալիս, երբ նրա հոգին լի էր քնքշանքով, սիրով և տակավին շմարած կրթով, այնպես ինչպես լինում է ինձ հետ, և ականջիս շարունակ հնչում էր.

Iam fuerit, nec post unquam revocare licebit**.

Այս խոհերը ճակատս կնճիռներով են ակոսել ոչ ավելի, քան բոլոր մնացածները: Թեև, անշուշտ, չի լինում, որ նման պատկերներն առաջին հայտնության ժամանակ ցավ չպատճառեն մեզ: Սակայն կրկին ու դարձյալ դառնալով նրանց, ի վերջո, կարելի է վարժվել: Հակառակ դեպքում (այդպես կլինեք, համենայն դեպս, ինձ հետ) ես կապրեի անընդհատ վախի ու հուզմունքի մեջ, քանզի ոչ ոք երբեք իր կյանքին ավելի քիչ չի վստահել, քան ես, ոչ ոք ավելի քիչ չի ապավինել նրա երկարատևությանը, քան ես: Եվ այն քաջառողջությունը, որ վայելում եմ մինչև

* Երբ ծաղկուն տարիքս իր ուրախ գարունն էր անցկացնում²² (լատ.):

** Նա անցյալի գիրկը կանցնի, ու այլևս երբեք հնարավոր չի լինի հեռ կանչել²³ (լատ.):

այսօր և որը խախտվել է շատ հազվագեպ, բնավ չի կարող ավելացնել, իսկ հիվանդութիւնները՝ դուշըն ինչ նվազեցնել այդ առթիվ իմ հուշերը: Ես միշտ այն զգացումն ունեմ, թե շարունակ խույս եմ տալիս մահից: Եվ անընդհատ ինքս ինձ շնջում եմ. «Այն, ինչ հնարավոր է ամենօր, հնարավոր է և այսօր»: Եվ իրոք, վտանգներն ու սլատահականութիւնները մեզ համարյա կամ, ավելի ճիշտ, բոլորովին չեն մոտեցնում մեր վերջնագծին, և, պատկերացնելով, թե, բացի այսինչ դժբախտութիւնից, որը մեզ սպառնում է, հավանաբար, ամենից շատ, մեր գլխին կախված են միլիոնավոր ուրիշները, կհավատանք, որ իսկապես մահը միշտ մեր կողքին է՝ թե՛ այն ժամանակ, երբ ուրախ ենք, թե՛ այն ժամանակ, երբ այրվում ենք տենդից, թե՛ ծովում, թե՛ տանը, թե՛ ճակատամարտում, թե՛ հանգստանալիս: Nemo altero fragilior est: nemo in crastinum sui certior*

Ինձ միշտ թվում է, թե մինչև մեռնելս այդպես էլ չեմ հասցնի ավարտել այն գործը, որ կատարելու եմ, թեկուզ ավարտելու համար պահանջվի մեկ ժամից ոչ ավելի: Մանոթներիցս մեկը, մի անգամ քրքրելով թղթերըս, դրանց մեջ գտավ մի նշում, որը, համաձայն իմ ցանկության, հարկ էր իրականացնել մահիցս հետո: Ես նրան պատմեցի, թե բանն ինչպես է եղել. գտնվելով տանից ընդամենը մեկ լյո հեռավորության վրա, միանգամայն առողջ ու առույգ, ես շտապել էի գրի առնել իմ կամքը, քանզի վստահ չէի, թե կհասնեմ տուն: Նման մտքեր հղանալով և դրանք գլուխըս մտցնելով, ես միշտ պատրաստ եմ այն բանին, որ դա կարող է ինձ հետ պատահել ուղածդ ակնթարթին: Եվ որքան էլ մահն անսկսկալ վրա հասնի, դրանում ինձ համար ոչ մի նորութիւն չի լինի:

Հարկ է, որ կոշիկներդ միշտ հագիդ լինեն, հարկ է, որքանով դա մեզնից կախված է, միշտ պատրաստ լինել արշավի, և հատկապես նկատի ունենալ, որ մեկնման ժամին միայն մե՛նք պետք է լինենք մեր հոգսը:

Quid brevi fortes iaculamur aevo
Multa?***

Չէ որ առանց այդ էլ մենք անշափ շատ հոգսեր ունենք: Մեկը գանգատվում է նույնիսկ ոչ այնքան բուն մահից, ինչքան նրանից, որ այն

* Ամեն որ նույնքան թուլակազմ է, որքան բոլոր մյուսները, ամեն որ միատեսակ անվստահ է վաղվա օրվան²⁴ (լատ.):

** Ինչո՞ւ վաղանցուկ կյանքում հանդգնորեն ձգտենք այդքան շատ բաների²⁵ (լատ.):

կխանդարի փայլուն հաջողութեամբ ավարտել սկսած գործը, մեկ ուրիշը՝ որ ստիպված է այն աշխարհ գնալ, շհասցնելով ամուսնացնել դստերը կամ հետևել երեխաների կրթութեանը, մեկը ողբում է բաժանումը կնոջից, մյուսը՝ որդուց, քանզի իր ամբողջ կյանքի ուրախութիւնը նրանք էին:

Ինչ վերաբերում է ինձ, ապա, փառք աստծո, ես պատրաստ եմ չքվել այստեղից, երբ նա կամենա, շվտանալով ոչ մի բանի համար, բացի բուն կյանքից, եթե նրանից հեռանալը ծանր լինի, ես ազատ եմ ամեն տեսակ կապանքներից, ես արդեն կիսով շափ հրաժեշտ եմ տվել բոլորին, բացի ինձանից: Դեռևս չի եղել մեկը, որ այսպես հիմնովին պատրաստ լինի հեռանալ այս աշխարհից, մեկը, որ հրաժարվի նրանից վերջնականորեն, ինչպես, հուսով եմ, ինձ է հաջողվել:

Miser, o miser, aiunt, omnia ademit
Una dies infesta mihi tot praemia vitae*.

Ահա նաև բառեր, որոնք սազում են տուն ու տեղ կառուցելու սիրահարներին:

Manent opera interrupta, minaeque
Murorum ingentes**.

Սակայն, շարժե որևէ հարցում գուշակել հեռավոր ապագան կամ, համենայն դեպս, սաստիկ վշտանալ, որ քեզ չի հաջողվելու տեսնել սկսածիդ ավարտը: Մենք ծնվում ենք դործունեութեան համար.

Cum moriar, medium solvar et inter opus***.

Ես ուզում եմ, որ մարդիկ գործեն, որ հնարավորին շափ լավ կատարեն իրենց վրա կյանքի դրած պարտականութիւնները, որ մահն ինձ դտնի կաղամբ տնկելիս, սակայն կամենում եմ կատարելապես անտարբեր մնալ թե նրա, թե, առվել ևս, մինչև վերջ շմշակած իմ բանջարանոցի նկատմամբ: Ինձ վիճակվել է տեսնել մի մահամերձի, որը մեռնելիս անգամ չէր դադարում արհեստանք հայտնել, թե շար բախտը կտրեց

* Ո՛հ ինչ դժբախտ եմ, ի՛նչ ողորմելի,— բացականչում են նրանք:— Տխրալի մեկ օրն ինձանից խից կյանքի բոլոր պարգևները²⁶ (լատ.):

** Աշխատանքները մնում են անավարտ, և թերակառույց են պարիսպների ատամնաձև բարձր կատարները²⁷ (լատ.):

*** Ես ուզում եմ, որ մահն ինձ գտնի աշխատելիս²⁸ (լատ.):

մեր թագավորների մասին իր ձեռքով գրվող պատմության թելը, երբ ինքը հասել էր տասնհինգ, թե տասնվեցերորդ թագավորին:

Illud in his rebus non addunt, nec tibi earum
Iam desiderium rerum super insidet una*.

Հարկավոր է ձերբազատվել այդ փոքրոգի ու կործանարար տրամադրություններից: Եվ ինչպես մեր գերեզմանոցներն ընկած են եկեղեցիների մոտ կամ քաղաքի առավել մարդաշատ վայրերում, որպեսզի, Լիկուրգոսի խոսքերով, երեխաներին, կանանց ու ռամիկներին սովորեցնեն շվախենալ հանգուցյալ տեսնելիս, և, որպեսզի մարդկանց աճյունները, գերեզմաններն ու թաղումները, որ ամեն օր տեսնում ենք, մեզ միշտ հիշեցնեն գալիք ապագան,

Quin etiam exhilarare viris convivia caede
Mos olim, et miscere epulis spectacula dira
Certantum ferro, saepe et super ipsa cadentum
Pocula respersis non parco sanguine meisis**;

ինչպս եգիպտացիները խնջույքից հետո ներկաներին ցուցադրում էին մահվան վիթխարի նկարը, ըստ որում այն բռնողը բացականչում էր. «Խմիր ու զվարճացիր սրտանց, քանզի, երբ մեռնես, կլինես այսպիսին», այդպես էլ ես ինձ սովորեցրել եմ ոչ միայն մտածել, այլև միշտ և ամենուր խոսել մահվան մասին: Եվ չկա մի բան, որ ինձ զրսովի ավելի, քան այս կամ այն մարդու մահվան մասին պատմությունները. թե նրանք ինչ են ասել այդ ժամանակ, ինչպիսին են եղել նրանց դեմքերը, ինչպես են իրենց պահել, սա վերաբերում է նաև պատմական ստեղծագործություններին, որոնցում ես հատկապես ուշադիր ուսումնասիրում եմ այն տեղերը, ուր խոսվում է նույն բանի մասին: Դա երևում է թեկուզ իմ բերած օրինակների առատությունից և այն արտասովոր հակումից, որ ունեմ նման բաների նկատմամբ: Եթե ես լինեի զրքեր հորինող, կկազմեի մահվան տարբեր ձևերի նկարագրությամբ մի ժողովածու, կցելով մեկնաբանություններ: Ով մարդկանց սովորեցնում է մեռնել, նա սովորեցնում է ապրել:

¹Իհեարքոսը³¹ կազմել է նման մի գիրք, տալով համապատասխան

* Սակայն ահա թե ինչ շեն ավելացնում նրանք. բայց դրա փոխարեն դու մահից հետո այլևս չունես այդ ամենի ձգտումը²⁹ (լատ.):

** Հնում այրերը սովորություն ունեին խնջույքներն աշխուժացնել սպանությամբ և հացկերույթն ուղեկցել մենամարտի քստմենլի տեսարանով, որի մասնակիցները երբեմն ընկնում էին գավաթների վրա, այդամբ ցողելով կերուխումի սեղանները³⁰ (լատ.):

խորագիր, սակայն նա ղեկավարվել է ուրիշ, և ըստ որում պակաս օր-տակար նպատակով:

Թերևս, ինձ կասեն, թե իրականութունն անհամեմատ ավելի սար-սափելի է նրա մասին մեր պատկերացումներից և չկա մի վարպետ քու-սերամարտիկ, որ շասանվի, երբ բանը հասնի դրան: Թող խո՞ւնն, բայց և այնպես մահվան մասին նախապես մտածելն, անստրակույս, օգտակար է: Եվ հետո, մի՞թե առանց ահ ու զոզի մինչև վերջնագիծ զնա-լը գատարկ բան է: Եվ ավելին. բնությունն իսկ շտապում է օգնության ու քաջալերում մեզ: Եթե մահն արագ է ու բռնի, մենք ժամանակ շունենք վախենալու նրանից, իսկ եթե այդպիսին չէ, ապա, որքան ես եմ նկա-տել, հիվանդության աստիճանաբար խորացման հետ, ես բնականաբար սկսում եմ համակվել կյանքի նկատմամբ որոշ արհամարհանքով: Ես գտնում եմ, որ մեռնելու վճռականությամբ լցվելն անհամեմատ ավելի դժվար է, երբ ես առողջ եմ, քան այն ժամանակ, երբ ինձ քրքրում է տենդը: Քանի որ կյանքի ուրախություններն այլևս նախկին ուժով չեն ձգում ինձ, զի դադարում եմ օգտվել դրանցից ու հաճույք ստանալ, ես մահվանն էլ նայում եմ ավելի քիչ վախվորած աչքերով: Ինձ հույս է ներշնչում, որ ինչքան շատ հեռանամ կյանքից և մոտենամ մահվանը, այնքան հեշտ կլինի հաշտվել այն մտքի հետ, թե մեկն անխուսափելիորեն փոխարինում է մյուսին: Բազմաթիվ օրինակներով համոզվելով, որ իրա-վացի էր Կեսարը, երբ պնդում էր, թե հաճախ իրերը հեռվից մեզ թվում են զգալիորեն ավելի մեծ, քան մոտիկից, ես նույն կերպ հայտնաբերե-ցի, որ, լինելով կատարելապես առողջ, անհամեմատ ավելի շատ էի վա-խենում հիվանդություններից, քան այն ժամանակ, երբ նրանք սկսեցին իմաց տալ իրենց մասին. առույգությունը, ուրախ կյանքն ու սեփական առողջության զգացումն ինձ ստիպում են պատկերացնել հսկառակ վի-ճակն իմ վիճակից այնքան տարբեր, որ ես երևակայությանս մեջ հի-վանդությունների պատճառած անախորժությունները սաստիկ շտապազանց-նում եմ, և համարում դրանք ավելի տանջալից, քան իրականում են, երբ պատում են ինձ: Հուսով եմ, որ մահվան հարցում այլ կերպ չի լինի:

Այժմ տեսնենք, թե ինչպես է վարվում բնությունը, որպեսզի, շնա-յած դեպի վատն անընդհատ փոփոխություններին և ամենքիս աստիճա-նարար թառամելուն, մեզ զրկի մեր այդ կորուստներն ու հետզհետե րայքայումը զգալու հնարավորությունից: Ի՞նչ է մնում ծերուկին նրա ջահելության ուժից, նրա անցած կյանքից:

Heu senibus vitae portio quanta manet*.

* Ավա՞ղ: Շատ քիչ կյանք է թողած ծերերին³² (լատ.):

Երբ Կեսարի արդեն ծեր ու հյուժված մի թիկնապահ, հանդիպելով նրան փողոցում, խնդրեց բաց թողնել իրեն մեռնելու, Կեսարը, տեսնելով, թե նա որքան զառամյալ է, բավական սրամիտ պատասխանեց. «Ուրեմն, դու քեզ կենդանի՞ ես երևակայում»: Ես չեմ կարծում, թե մենք կզիմանայինք մեր կերպարանափոխությունը, եթե այն վրա հասներ բուրրովին անսպասելի: Սակայն կյանքը մեր ձեռքից բռնած դանդաղ ու զգուշորեն մեզ տանում է թեքավուն, գրեթե աննկատելի լանջով, մինչև որ կհասցնի այդ խղճուկ վիճակին, ստիպելով աստիճանաբար ընտելանալ դրան: Ահա թե ինչու մենք ոչ մի ցնցում չենք ապրում, երբ վրա է հասնում մեր ջահելության մահը, որն, արդարև, իր էությունամբ անհամատ ավելի դաժան է, քան հազիվ նշողվող կյանքի, կամ մեր ծերության վախճանը: Չէ որ ավելի քիչ տանջալից է թոխչքը խղճուկ գոյությունից դեպի շղթայություն, քան ուրախ ու ծաղկուն գոյությունից դեպի մի այլ գոյություն՝ վիշտն ու տառապանքը:

Կուշ եկած ու կորացած մարմինն ի վիճակի չէ ծանր բեռի դիմանալ, նույնն է նաև մեր հոգին. հարկավոր է այն ուղղել ու վեր բարձրացնել, որ կարողանա մեծամարտել նման հակառակորդի դեմ: Քանզի եթե անհնար է, որ, նրա առաջ դողալով, այն մնա հանգիստ, ապա, ազատվելով նրանից, այն ձեռք է բերում պարծենալու իրավունք (թեև դա, կարելի է ասել, գրեթե գերազանցում է մարդկային հնարավորությունները), թե իրենում այլևս տեղ չկա տագնապին, տառապանքներին, վախին կամ նույնիսկ ամենաթեթև դառնությունը:

Non vultus instantis tyranni
 Mente quatit solida, neque Auster
 Dux inquieti turbidus Adriae,
 Nec fulminantis magna Iovis manus*.

Այն դարձել է իր կրքերի ու ցանկությունների տիրակալը, այն իշխում է կարիքին, ստորացմանը, աղքատությանն ու ճակատագրի բոլոր մյուս անակնկալներին: Դե ուրեմն յուրաքանչյուր ոք իր հնարավորությունների շահով թող հասնի այդ կարևոր առավելությունը: Ահա թե որտեղ է իսկական և ոչ մի բանով չկաշկանդվող այն ազատությունը,

* Ոչինչ չի կարող սասանել նրա հոգու տոկունությունը. ոչ անեղ բռնապետի հայացքը, ոչ Ավստրը (հարավային քամի)՝ բուռն Ադրիատիկի կատաղի տիրակալը, ոչ շանթառար ծուպիտերի հուժկու բաղուկը³⁸ (լատ.):

որ մեզ հնարավորություն է տալիս արհամարհել բռնությունն ու կամայականությունը և ծիծաղել բանտերի ու շղթաների վրա.

in manicis, et
Compedibus, saevo te sub custode tenebo.
Ipse deus simul atque volam, me solvet: opinor
Hoc sentit, moriar. Mors ultima linea rerum est*.

Մեր մարդկանց ոչինչ այնքան չի ձգել դեպի մեր կրոնը, որքան նրանում հղած արհամարհանքը կյանքի նկատմամբ: Եվ ոչ սխալն րանականության ձայնն է մեզ կոչում դրան, ասելով. արժե՞ արդյոք վախենալ, թե կկորցնենք մի բան որի կորուստն արդեն ամիսոսանք չի հարուցի մեզ, այլև մի այսպիսի նկատառում. եթե մեզ սպառնում են մահվան բազում ձևեր, ավելի դժվար չէ՞ արդյոք վախենալ այդ բոլորից, քան կրել որևէ մեկը: Եվ եթե մահն անխուսափելի է, միևնույնը չէ՞ արդյոք, թե այն հրը կգա: Նրան, ով Սոկրատեսին ասաց. «Երեսուն բռնապետները քեզ դատապարտել են մահվան³⁵», վերջինս պատասխանեց. «Իսկ նրանց բնությունն է դատապարտել մահվան»:

Ինչպիսի՞ անհեթեթություն. վշտանալ այն բանից, որ տեղափոխվում ենք այնտեղ, ուր ազատվում ենք ամենայն վշտից:

Ինչպես մեր ծնունդը մեզ համար ծնունդ էր շրջապատող ամեն ինչի, այդպես էլ մեր մահը կլինի շրջապատող ամեն ինչի մահը: Ուստի սղբալ, թե հարյուր տարի հետո մենք մեռած կլինենք, նույնպիսի անհեթեթություն է, ինչպես այն, թե մենք շենք ապրել սրանից հարյուր տարի առաջ: Մեկի մահը մյուսի կյանքի սկիզբն է: Մենք ճիշտ նույն կերպ լաց ենք եղել, նույնպիսի ջանքերի գնով ոտք դրել այս կյանքը, և նույն կերպ, կյանք մտնելով, մեր վրայից պոկել ենք մեր նախկին թաղանթը:

Չի կարող ծանր լինել այն, ինչը տեղի է ունենում գեթ մեկ անգամ: Իմաստ ունի՞ արդյոք այդքան հրկար դողգողալ այդքան վաղանցուկ բանի առջև: Միևնույնը չէ՞ արդյոք, հրկար ես ապրել, թե կարճ, եթե և մեկը և մյուսը վերջանում են մահով: Քանզի այլևս գոյություն չունեցող բանի համար չկա ո՛չ հրկար, ո՛չ կարճ: Արիստոտելը պատմում է, թե Հիփանիս գետի մոտ կան մանր միջատներ, որոնք ապրում են մեկ օրից ոչ ավելի: Առավոտյան ժամը ութին սատկողները ստտկում են շատ ջահել, երեկոյան հինգին սատկողները՝ զառամյալ: Մեղանից ո՞վ

* «Ձեռք ու ոտքդ շղթայած քեզ պիտի պահեմ անողոր բանտապանի տնօրինության տակ»: — «Ապովաձն ինքը կազատի ինձ, հենց ցանկանամ»: Կարծում եմ այդ պահին նա մտածում էր. «Ես կմեռնեմ»: Քանզի մահվան հետ վերջանում է ամեն ինչ³⁴ (լատ.):

չէր ծիծաղի, եթէ իր ներկայութեամբ այդ միջատներին անվանեին երջանիկ կամ տարաբախտ, հաշվի առնելով դրանց կյանքի տևողութիւնը: Կրթեթի նույնն է նաև մեր կյանքը, եթէ այն համեմատենք հավերժութեան կամ լեռների, գետերի, երկնային լուսատուների, ծառերի և անգամ որոշ կենդանիների հարատև գոյութեան հետ³⁶:

Ասենք, բնութիւնը մեզ շի թողնում երկար ապրել: Նա ասում է. «Հեռացեք այս աշխարհից այնպես, ինչպես եկել եք: Ինչպես ժամանակին անխռով ու անցավ անցել եք մահից դեպի կյանք, այդպես էլ այժմ անցեք կյանքից դեպի մահ: Ձեր մահը տիեզերքը կառավարող կարգ ու կանոնի մի օղակն է, ողջ աշխարհի կյանքի մի օղակը.

inter se mortales mutua vivunt
Et quasi cursores vitae lampada tradunt*.

Մի՞թէ հանուն ձեզ ես կխախտեմ իրերի այդ հրաշալի կապը: Եթէ մահը ձեր երևան գալու պարտադիր պայմանն է, ձեր անբաժանելի մասը, կնշանակի, դուք ձգտում եք փախչել ինքներդ ձեզանից: Ձեր գոյութիւնը, որի հաճույքը վայելում եք, իր մի կեսով կյանքինն է, մյուսով՝ մահինը: Ձեր ծննդյան օրը դուք սկսում եք ինչպես ապրել, այնպես և մեռնել.

Prima, quae vitam dedit, hora, carpsit**.

Nascentes morimur, finisque ab origine pendet***.

Ձեր ապրած ամեն մի ակնթարթը դուք խլում եք կյանքից, ապրում ի հաշիվ նրա: Ձեր ողջ կյանքի անընդհատ զբաղմունքը մահը սնուցելն է: Ապրելիս դուք մեռած եք, քանզի մահը ձեզանից պոկ կգա ոչ ավելի շուտ, քան դուք կթողնեք կյանքը:

Կամ եթէ կուզեք, դուք մահանում եք, ապրելով ձեր կյանքը, սակայն ապրում եք, մահանալով. մահն, անշուշտ, անհամեմատ ավելի ուժդին, շատ ավելի սուր ու խորն է խոցում մեռնողին, քան մեռածին:

Եթէ դուք ճաշակել եք կյանքի ուրախութիւնները, հասցրել եք հագենալ դրանցից, ուրեմն հեռացեք զոհացած սրտով.

Cur non ut plenus vitae conviva recedis?****

* Մահկանացուները կյանքը փոխառում են իրարից... և արագավազ մարդիկների նման, իրար փոխանցում կյանքի ջահը³⁷ (լատ.):

** Մեզ կյանք տվող առաջին իսկ ժամը կրճատեց տյն³⁸ (լատ.):

*** Ծնվելիս մենք մահանում ենք, վերջը պայմանավորված է սկզբով³⁹ (լատ.):

**** Ինչո՞ւ լիս հեռանում կրտսերից, ինչպես կուշտ կերած սեղանակիցը (խնջույթից)⁴⁰ (լատ.):

Իսկ եթե չեք կարողացել օգտվել, եթե այն ժլատ է եղել ձեր հանդեպ, ձեզ ի՞նչ, թե կորցրել եք այն, ձեր ինչի՞ն է այն պետք:

Cur amplius addere quaeris
Rursum quod pereat male, et ingratum occidat omne?*

Կյանքն ինքնին ոչ բարիք է, ոչ շարիք. այն և բարիքի և շարիքի շտեմարանն է, նայած, թե դուք ինչի եք վերածել: Եվ եթե դուք ապրել եք գեթ մեկ օր, արդեն տեսել եք ամեն ինչ: Յուրաքանչյուր օրն այնպիսին է, ինչպես բոլոր մյուս օրերը: Չկա թշուրիշ լույս, ոչ ուրիշ խավար: Այս արևը, այս լուսինը, այս աստղերը, տիեզերքի այս կառուցվածքը՝ ամեն բան նույնն է, ինչ վայելել են քո նախապապերը և կրմբոշխնեն քո սերունդները.

Non alium videre patres: aliumve nepotes
Aspicient**.

Եվ, ծայրահեղ դեպքում, իմ կատակերգության բոլոր գործողությունները, իրենց ամբողջ տարազանություններով, կատարվում են մեկ տարում: Եթե դուք ուշադիր նայել եք սարվա շորս եղանակների շուրջապարին, չէիք կարող շնկատել, որ նրանք ընդգրկում են աշխարհի բոլոր տարիքները. մանկություն, պատանեկություն, հասունություն և ծերություն: Մեկ տարուց հետո նա այլևս անելիք չունի: Եվ նրան մնում է ամեն ինչ սկսել սկզբից: Եվ այդպես կլինի միշտ.

versamur ibidem, atque insumus usque
Atque in se sua per vestigia volvitur annus***.

Թե՞ դուք երևակայում եք, որ ես ինչ-որ նոր զվարճություններ կստեղծեմ ձեզ համար.

Nam tibi praeterea quod machiner, inveniamque
Quod placeat, nihil est, eadem sunt omnia semper****.

Տեղ ազատեցեք ուրիշների համար, ինչպես ուրիշներն են ազատել ձեզ համար: Հավասարությունն արդարության առաջին քայլն է: Ո՞վ կա-

* Ինչո՞ւ ես աշխատում երկարաձգել այն, ինչը կործանվելու է և դատապարտված է անհեռ կորստյան⁴¹ (լատ.):

** Դա այն է, ինչ տեսել են մեր հայրերը, դա այն է, ինչ կսեսնեն սերունդները⁴² (լատ.):

*** Մենք միշտ ապրում ու գտնվում ենք նույն միջավայրում... Եվ տարին իր իսկ նախորդ վերադառնում է յուր տեղը⁴³ (լատ.):

**** Քանզի ես (Բնությունս) ինչ էլ որ մտածեմ, ինչ էլ գտնեմ, չկա մի բան, որ դուք չդո քեզ, ամեն բան միշտ մնում է նույնը⁴⁴ (լատ.):

բող է գանգատվել, թե ինքը դատապարտված է, եթե բոլոր մշուաները նույնպես դատապարտված են: Որքան էլ ապրեք, դուք չեք կարողանա կրճատել մեռած մնալու ժամանակը: Բոլոր ջանքերն այստեղ աննպատակ են. այն վիճակում, որը ձեզ խիստ սարսափ է ներշնչում, դուք կգտնվեք ճիշտ այնքան, ինչքան եթե մեռնեիք սանտուի գրկում.

licet, quod vis, vivendo vincere saecula,
Mors aeterna tamen nihilominus illa manebit*.

Եվ ես ձեզ կտանեմ այնտեղ, ուր ոչ մի վիշտ չեք տեսնի.

In vera nescis nullum fore morte alium te,
Qui possit vivus tibi te lugere peremotum.
Stansque iacentem**.

Եվ չեք կամենա կյանքը, որի համար այդպես ափսոսում եք.

Nec sibi enim quisquam tum se vitamque requirit,
Nec desiderium nostri nos afficit ullum***.

Մահվան վախը պետք է լինի ավելի շնչին, քան ոչնչությունը, եթե գոյություն ունի մի ավելի շնչին բան, քան այս վերջինն է.

multo mortem minus ad nos esse putandum
Si minus esse potest quam quod nihil esse videmus****.

Ի՞նչ գործ ունեք դրա հետ, երբ մեռած եք, կամ էլ ողջ: Երբ ողջ եք՝ նրա համար, որ գոյություն ունեք, երբ մեռած եք՝ նրա համար, որ այլևս գոյություն չունեք:

Ոչ ոք իր ժամից շուտ չի մեռնում: Ձեզանից հետո եղած ժամանակը ձերն է ոչ ավելի, քան այն, որ անցել է նախքան ձեր ծնվելը, և դա ձեր գործը չէ.

Respice enim quam nil ad nos ante acta vetustas
Temporis aeterni fuerit*****

* Դարեր էլ ապրես, քեզ մահ է սպասում⁴⁵ (լատ.):

** Միթե շփտես, որ իսկական մահվանից հետո չի լինի քո երկրորդ՝ կենդանի «ես»-ը, որ աճյունիդ մոտ ողբա քո մահը⁴⁶ (լատ.):

*** Եվ այնքան ոչ ոք չի հոգա ոչ իր մասին, ոչ կյանքի... և մենք այլևս չենք տխրի մեզ համար⁴⁷ (լատ.):

**** Պետք է համարել, թե մահը մեղ համար անհամեմատ ավելի փոքր բան է (եթե միայն կարող է ավելի փոքր բան լինել), քան այն, ինչը, ինչպես տեսնում ենք, ոչնչություն է⁴⁸ (լատ.):

***** Քանզի նկատի առ, անցած ժամանակների հավերժությունը մեզ համար րացարձակապես ոչինչ է⁴⁹ (լատ.):

Որտեղ էլ ձեր կյանքը վերջանա, այնտեղ է նրա վերջը: Կյանքի շափանիչը ոչ թե նրա երկարատևությունն է, այլ այն, թե ինչպես եք օգտագործել. մեկն ապրել է երկար, բայց քիչ է կյանք տեսել, մի հապաղեք, քանի այստեղ եք: Ձեր կյանքի տևողությունը ձեր կամքն է որոշում, այլ ոչ թե ապրած տարիների քանակը: Մի՞թե դուք կարծում էիք, թե երբեք չեք հասնի այնտեղ, ուր գնում եք առանց կանգ առնելու: Կա՞րդյոք մի ճանապարհ, որ վերջ չունենա: Եվ եթե դուք կարող եք մխիթարվել լավ ընկերակցությամբ, ապա արդյո՞ք ողջ աշխարհը չի գնում ձեր ճանապարհով:

Omnia te vita perfuncta sequentur*.

Չի՞ սկսում արդյոք ձեր շուրջն ամեն ինչ հրերալ, հենց որ դուք ինքներդ եք հրերում: Կա՞ մի բան, որ շփերանա ձեզ հետ: Հազարավոր մարդիկ, հազարավոր կենդանիներ, հազարավոր այլ էակներ, մեռնում են այն պահին, երբ դուք եք մեռնում:

Nam nox nulla diem, neque noctem aurora secuta est,
Quae non audierit mistos vagitibus aegris
Ploratus, mortis cimites et funeris atri**.

Ի՞նչ օգուտ ունի ընկրկել մի բանի առջև, որից միևնույն է չեք փախչի: Դուք տեսել եք շատերին, որոնք մահացել են ճիշտ ժամանակին, քանզի դրանով ազատվել են մեծ դժբախտություններից: Սակայն տեսե՞լ եք արդյոք մի մարդ, որին մահը դժբախտություններ հասցրած լինի: Այնքան էլ խելամիտ չէ, երբ դատափետու՞ ես այն, ինչը չես փորձել ոչ քեզ վրա, ոչ ուրիշի: Ուրեմն ինչո՞ւ ես գանգատվում և ինձանից և քո ճակատագրից: Մի՞թե մենք արդարացի չենք քո հանդեպ: Ո՞վ պիտի կառավարի. մե՞նք քեզ, թե՞ դու մեզ: Դեռևս նախքան քո ժամկետների վերջը, կյանքդ արդեն վերջացած է: Փոքրիկ մարդուկը նույնպիսի ամբողջական մարդ է, ինչպես մեծահասակը:

Կանգուններով չեն շափվում ոչ մարդիկ, ոչ մարդկային կյանքը: Քիրոսը մերժեց իր անմահությունը, անվերջ ժամանակի աստված Սատուրնից՝ իր հորից իմանալով, թե ինչպիսին է այդ անմահության բնույթը⁵²: Լավ մտամուխ եղեք այն բանում, ինչն անվանում են հավերժա-

* ...և, ապրելով իրենց կյանքը, բոլորը կհեռեն քեզ⁵⁰ (լատ.):

** Չի եղել ցերեկվան փոխարինող մի գիշեր, գիշերվան փոխարինող մի արշալույս, որ լաված շինեն մանկանց աղիոզորմ լացին միախառնված հառաշնաքներ՝ մահվան և դառնադեմ թաղումների այդ ուղեկիցները⁵¹ (լատ.):

կան կյանք, և կհասկանաք, թե մարդու համար դա որքան ավելի ծանր ու անտանելի կլինենր, քան այն, ինչ ես եմ պարզեել: Եթե դուք մահ չունենայիք, շարունակ կանիծեիք ինձ, որ ձեզ զրկել եմ դրանից: Ե» գիտակցարար նրան տվել եմ մի փոքր դառնություն, որպեսզի, ուշադրության առնելով նրա մատչելիությունը, ձեզ խանգարեմ շափազանց ազահորեն ու խելահեղորեն նետվել նրան ընդառաջ: Որպեսզի ձեզ ներարկեմ այն շափափորությունը, որ ես եմ պահանջում, այսինքն՝ որպեսզի դուք չխորշեք կյանքից և դրա հետ մեկտեղ չփախչեք մահից, ես թե մեկը թե մյուսը դարձրել եմ կիսով շափ քաղցր և կիսով շափ վշտալի:

Ձեր առաջին իմաստուն Թալեսին ես ներշնչել եմ այն միտքը, թե ապրելն ու մեռնելը միևնույն բանն են: Եվ երբ մեկը նրան հարցրեց, թե, այդ դեպքում, ինչու ինքը չի մեռնում, նա շատ իմաստուն պատասխանեց. «Հենց նրա համար, որ դա միևնույն բանն է»:

Ջուրը, հողը, օդը և այն, ինչից կառուցված է իմ շենքը, միջոց են ինչպես քո կյանքի, այնպես էլ քո մահվան համար: Ինչո՞ւ ես վախենում վերջին օրից: Այն ընդամենը այնքան է օժանդակում մահվանդ, որքան մյուս բոլոր օրերը: Հոգնածության պատճառը վերջին քայլը չէ, այն լոկ զգացնել է տալիս հոգնածությունը: Քո կյանքի բոլոր օրերը տանում են դեպի մահ, վերջինը միայն տեղ է հասցնում»:

Այսպիսին են մեր մայր բնության բարի խրատները: Ես հաճախ եմ մտորել, թե ինչու պատերազմում մահը (միևնույն է, դա մեզ է վերաբերում, թե մեկ ուրիշին) մեզ թվում է անհամեմատ ավելի քիչ սարսափելի, քան տանը, հակառակ դեպքում, բանակը բաղկացած կլիներ միայն լալկաններից ու բժիշկներից, և էլի. ինչո՞ւ, շնայած այն բանին, որ մահն ամենուրեք և ամեն տեղ նույնն է, գյուղացիներն ու ցածրաստիճան մարդիկ նրան վերաբերվում են շատ ավելի հանգիստ, քան մնացած բոլորը: Կարծում եմ, այստեղ բանը տխուր դեմքերն ու զարհուրելի իրադրությունն են, որոնց միջև մենք այն տեսնում ենք և որոնք մեզանում ծնում են ավելի մեծ վախ, քան բուն մահը: Ինչպիսի՞ նոր, միանգամայն անսովոր տեսարան է. մոր, կնոջ, երեխաների հառաչանքն ու ողբը, մոլոր ու շվար այցելուները, բազմաթիվ սպասավորների ծառայությունները, նրանց արտասովորաց ու դալուկ դեմքերը, այն սենյակը, ուր չի թափանցում ցերեկային լույսը, վառվող մոմերը, մեր գլխավերևում կանգնած բժիշկներն ու քահանաները: Կարճ ասած, մեր շուրջը չկա ոչինչ, բացի վախից ու սարսափից: Մենք ողջ-ողջ արդեն փաթաթված ենք սավանով և հողին հանձնված: Երեխաները վախենում են իրենց պատանի ընկերներից, երբ նրանց տեսնում են դիմակով, նույն բանն է տեղի ունենում նաև մեզ հետ: Հարկավոր է դիմակազերծել.

ինչպես իրերը, այնպես էլ, առավել ևս, մարդուն, և երբ դիմակը հանվի, մենք նրա հետևում կտեսնենք այն նույն մահը, որ դրանից քիչ առաջ առանց վախի կրել են մեր ծեր սենեկապանը կամ աղախինը: Բարեպարզ և մահը, որը ժամանակ չի տալիս այդ ճոխ նախապատրաստութունների համար:

Գլուխ XXI

ՄԵՐ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՑԻ ՄԱՍԻՆ

Fortis imaginatio generat casum*, — ասում են գիտնականները:

Ես մեկն եմ նրանցից, ում վրա երևակայությունն ազդում է բացառիկ ուժով: Ամեն մարդ ավել կամ պակաս շափով ընկնում է նրա ազդեցության տակ, սակայն ոմանց այն համակում է ամբողջովին: Նրա ճշնշումը խեղդում է ինձ: Ահա թե ինչու ես ջանում եմ խուսափել դրանից, բայց չդիմադրել: Ես կուզենայի շուրջս տեսնել միայն առողջ և ուրախ դեմքեր: Եթե որևէ մեկը տանջվում է իմ ներկայությամբ, ինքս սկսում եմ ֆիզիկական տառապանք ապրել, և հաճախ ուրիշների զգացումները դուրս են մղում իմ զգացումներին: Եթե մոտակայքում որևէ մեկն ուժեղ հազում է, ես հեղձուկ եմ զգում և հազս գալիս է: Ես ավելի պակաս հոժարակամությամբ եմ այցելում այն հիվանդներին, որոնց կարեկցում եմ, քան նրանց, ում ավելի քիչ եմ կապված և ավելի քիչ եմ հարգում: Տեսածս հիվանդությունն անցնում է ինձ և ինքս եմ զգում այն: Ես վարմանալի չեմ համարում, որ երևակայությունը հարուցում է տենդ և անզամ մահ այն մարդկանց, ովքեր ազատություն են տալիս ու խթանում են այն: Սիմոն Տոման իր ժամանակի մեծ բժիշկն էր, Հիշում եմ, թե ինչպես մի անգամ, հանդիպելով ինձ իր հիվանդներից մեկի՝ մի հարուստ թոքախտավոր ծերունու մոտ, նա, այդ մարդուն բացատրելով առողջությունը վերականգնելու միջոցները, ի միջի այլոց ասաց, թե դրանցից մեկն իր ընկերակցությունն ինձ հաճելի դարձնելն է, քանզի հայացքն ուղղելով իմ թարմ ջահել դեմքին, իսկ մտքերը՝ իմ պատանի զևղուն կենսուրախությանն ու առողջությանը, ինչպես նաև իր զգացումները տողորելով իմ ծաղկուն կյանքով, նա կկարողանա բարելավել իր վիճակը: Նա մոռացավ ավելացնել միայն, որ դրանից կարող է վատանալ իմ առողջությունը: Վիբիոս Գալլոսը այնքան լավ էր ըմբռնել խելագարության էությունն ու դրսևորումները, որ, կարելի է ասել, խախտ-

* Վառ երևակայությունն իրազարծություն է ծնում (լատ.):

վեց ու այլևս խելքի չեկավ. նա կարող էր բավարար հիմունքով պար-
ծենալ, թե գժվել է իմաստնությունից¹: Լինում են նաև այնպիսիք, որոնք,
դողալով դահճի ձեռքի տակ, կարծես կանխում են նրան, և ահա այն
մարդը, որին կառավարեմի վրա ալատում են կապանքներից, որ կար-
գան ներման հրամանը, սեփական երևակայությամբ սպանված դիակ է
դառնում: Մենք ծածկվում ենք քրտինքով, դողում, կարմրում, գունատ-
վում, ցնցվելով սեփական մտացածին բաներից, և, թաղվելով անկող-
նում, ուժաթափ ենք լինում դրանց ճնշման տակ. պատահում է, որ
ոմանք նույնիսկ մեռնում են դրանից: Եվ կրակոտ երիտասարդությունը,
քնելով հագուստով երբեմն այնպես է գրգռվում, որ երսուզում ստանում է
գոհացում իր սիրային ցանկություններին.

Ut, quasi transactis saepe omnibus rebus, profundant
Fluminis ingentes fluctus vestemque eruentent*.

Ու թեև ոչ ոքի համար նորություն չէ, որ գիշերվա ընթացքում կա-
րող են պոզեր աճել պառկելուց առաջ առհասարակ պոզեր շունեցողների
գլխին, բայց և այնպես Իտալիայի թագավոր Յիպոսի հետ տեղի ունե-
ցածը հատկապես ուշադրավ է³. վերջինս, ամբողջ օրը լարված ուշա-
դրությամբ դիտելով ցլամարտը և իր գիշերային երազներում մեծ պո-
զեր ունեցող եզան գլուխ տեսնելով, հասավ այն բանին, որ միայն նրա
երևակայության ուժով պոզեր աճեցին ճակատին: Կիրքը Կրեսոսի որդի-
ներից մեկին շնորհեց այնպիսի ձայն⁴, որից բնությունը զրկել էր նրան,
իսկ Անտիոքոսը, ցնցվելով Ստրատոնիկայի գեղեցկությունից⁵, որը
խիստ ներգործել էր նրա հոգուն, հիվանդացավ ջերմախտով: Պլինիոսը
պատմում է, թե իրեն վիճակվել է տեսնել ոմն Լուցիոս Կոսիցիոսի, մի
կնոջ, որն իր հարսանիքի օրը տղամարդ էր դարձել: Պոնտանոն⁶ և
ուրիշները հայտնում են նման փոխարկումների մասին, որ տեղի են ունե-
ցել Իտալիայում նաև հետագայում: Եվ շնորհիվ անկասելի ցանկու-
թյան, ինչպես նաև մոր ցանկության,

Vota puer solvit, quae femina voverat Iphis**.

Անցնելով Վիտրի Լե Ֆրանսեի միջով, ես հնարավորություն եմ ունե-
ցել այնտեղ տեսնել մի մարդու, որին Լկեղեցու անդամ ընդունելիս

* Այնպես որ հաճախ նրանք, կարծես կատարելով պահանջվող ամեն բան, առա-
տորեն սերմնածայթում են և կեղտոտում իրենց հարուստը² (լատ.):

** Եվ պատանին կատարեց իր այն խոստումները, որ տվել էր, երբ աղջիկ էր Իփիս
անունով (լատ.):

Սուսաննի՝ եպիսկոպոսը տվել է ժերմեն անունը. տեղի բոլոր բնակիչներն այդ երիտասարդին տեսել էին ու գիտեին որպես աղջիկ, որը մինչև շատներևու տարեկանը կրում էր Մարիա անունը: Այն ժամանակ, որի մասին ես հիշում եմ, այդ ժերմենն ուներ մեծ մորուք, ծեր էր և ամուրի. Տղամարդու օրգանները, նրա պատմելով, գոյացել էին այն պահին, երբ նա հեռու ցատկելու ճիգ էր գործադրել: Եվ մինչև այժմ էլ տեղի աղջիկների մեջ տարածված է մի երգ, որում նրանք միմյանց զգուշացնում են ցատկեր կատարելուց, որպեսզի չգառնան պատանիներ, ինչպես եղավ Մարիա—ժերմենին: Բնավ էլ հրաշք չէ, որ այդպիսի բաները տեղի են ունենում բավական հաճախ: Եթե երևակայությունն ի վիճակի է նման բան կատարել, ապա, մշտապես գամված լինելով միևնույն առարկային, նա երբեմն գերադասում է կրկին ու դարձյալ նույն մտքերին և նույն այրող ցանկություններին անգրադառնալու փոխարեն, աղջիկներին ընդմիշտ պարզել տղամարդու այդ օրգանը:

Ոմանք՝ Դագոբերոս Թագավորի և սուրբ Ֆրանցիսկի⁸ սպիները նույնպես վերագրում են նրանց երևակայության ուժին: Ասում են, թե երբեմն այն կարողանում է բարձրացնել առարկաներն ու տեղից տեղ փոխադրել: Իսկ Յելսուսը⁹ պատմում է մի քրմի մասին, որն իր հոգին հասցնում էր այնպիսի հափշտակության, որ մարմինը երկար ժամանակ դառնում էր անշունչ և կորցնում զգայունությունը: Սուրբ Օգոստինոսը վկայակոչում է մեկ ուրիշին, որը լաց կամ տնքոց լսելիս այնպես էր ուշաթափվում, որ ինչքան էլ ականջի մոտ գոռային ու ճշային, կամթեին և անգամ կրակ դեմ անեին, ոչ մի բանը չէր օգնում, մինչև ինքն, ի վերջո, ուշքի չէր գալիս, նա ստում էր, թե նման դեպքերում լսում է ինչ-որ հեռվից հասնող ձայներ և միայն սթափվելուց հետո էր նկատում իր կապտուկներն ու այրվածքները: Իսկ որ դա համառ ձևացում չէր և նա պարզապես չէր թաքցնում իր զգացումները, ապացուցվում է այն բանով, որ, ուշաթափ վիճակում նա չէր շնչում և երակազարկ չէր ունենում¹⁰:

Միանգամայն հավանական է, որ հրաշքների, տեսիլքների, կախարդանքի և այլ արտասովոր բաների հավատի աղբյուրը գլխավորապես երևակայությունն է, որն առանձնահատուկ ուժով է ազդում հասարակ ու տղետ մարդկանց հոգիների վրա, քանզի նրանք ուրիշներից դյուրաթևեր են: Օգտվելով այդ մարդկանց դյուրահավատությունից, ողջամտութեն դատելու նրանց ունակությունն այնպես են դուրս մղել, որ նրանց իվում է, թե իրենք տեսնում են այն, ինչ իրականում բնավ էլ չեն տեսնում:

Ես այն կարծիքին եմ, թե նորապսակներին այսպես կոչված նշքով

տալը, որը բազմաթիվ մարդկանց մեծ անախորժություններ է պատ-
ճառում և որի մասին մեր ժամանակներում այդքան խոսում են, բա-
ցաարվում է, ըստ էության, սոսկ տագնապի ու վախի ազդեցությամբ:
Ինձ ճշտիվ հայտնի է, որ մի մարդ, որի համար երաշխավորում եմ, ինչ-
պես ինքս ինձ, թե նրան ամենևին չի կարելի կասկածել նման անբա-
վարարության և կախարդված լինելու մեջ, մի անգամ իր ընկերոջից
լսելով խիստ անպատեհ, անակնկալ վրա հասած նրա լիակատար ան-
կարողության մասին, հայտնվելով նման իրադրության մեջ, իր երևա-
կայությունը ցնցած այդ պատմության վախից ճաշակել է նույն բանը:
Այդուհետև բազմիցս նրա հետ տեղի էր ունենում նման բան, քան-
զի առաջին անհաջողության ծանր հիշողությունը կաշկանդում ու ճըն-
շում էր նրան: Ի վերջո, նա ձերբազատվեց այդ մտացածին հիվանդու-
թյունից մեկ այլ հնարանքի օգնությամբ: Այսինքն, խոստովանելով իր
թերությունը և նախազգուշացնելով այդ մասին, նա թեթևացնում էր
հոգին, քանզի, տեղյակ պահելով հնարավոր անհաջողության մասին,
նա կարծես նվազեցնում էր իր պատասխանատվությունը, և այն քիչ էր
ճնշում իրեն: Թոթափելով մեղքի տանջող միտքը և իրեն այս կամ այն
կերպ պահելու հարցում ազատ զգալով, նրա մարմնական ունակու-
թյունների բնական վիճակը վերականգնվեց, առաջին իսկ փորձը հաջող
ստացվեց, և նա լիովին ապաքինվեց:

Զէ որ նա, ով գոնե մեկ անգամ ունակ է եղել այդ բանին, հետա-
գայում էլ կպահպանի իր ունակությունը, եթե միայն իսկապես չի տա-
ռապում անկարողությամբ: Այդ անհաջողությունից պետք է երկյուղել
լոկ սկզբնական շրջանում, երբ մեր հոգին շափից ավելի համակված է,
մի կողմից, կրքոտ ցանկությամբ, մյուս կողմից՝ երկշտությամբ, և,
հատկապես, եթե բարենպաստ հանդամանքները հանկարծակիի են բե-
րում մեզ և պահանջում վճռական ու արագ գործողություններ, այստեղ
արդեն, իսկապես, ոչնչով չես կարող օգնել: Ես գիտեմ մի մարդու, որին
այդ դժբախտությունից ազատվելու գործում օգնել էր նրա սեփական
մարմինը, երբ վերջինս սկսել էր գերհագենալ և մարմնական ցանկու-
թյունը նվազել էր: Տարիների ընթացքում նա ավելի քիչ էր անկարո-
ղություն զգում հենց այն պատճառով, որ դարձել էր ավելի թույլ: Գի-
տեմ նաև մեկ ուրիշին, որին նույն բանից ազատվելու գործում օգնել
էր իր բարեկամը, համոզելով նրան, թե ինքն ունի ամեն տեսակ կա-
խարդանքների հակազդող հմայակների մի ամբողջ շարան: Բայց ավե-
լի լավ է ամեն բան պատմեմ հերթականությամբ: Շատ լավ տոհմից
սերող մի կոմս, որի հետ ես բարեկամական հարաբերությունների մեջ
էի, կնության էր առել մի դեռատի գեղեցկուհու, և քանի որ աղջկան

նախկինում համառորեն սիրահետում էր հանդեսի ներկաներից մեկը, երիտասարդ ամուսինն իր վախով ու կասկածներով տազնապի մատնեց բարեկամներին և, հատկապես մի պառավ տիկնոջ՝ իր ազգականուհուն, որը տնօրինում էր յուր տանը կազմակերպած հարսանիքը, կախարդանքներից ու աչքով տալուց վախեցող այդ կինն իր անհանգստությանը հազորդակից դարձրեց ինձ: Ես խնդրեցի ամեն ինչում ինձ ապավինել: Բարեբախտաբար, իմ արկղիկում գտնվեց մի ոսկե իր, որի վրա պատկերված էին կենդանակերպի նշանները: Համարվում էր, թե, զանգակարին դնելու դեպքում այն պաշտպանում է արևահարությունից ու գլխացավից, իսկ որպեսզի վայր չընկներ, այն ուներ բավականաչափ երկար ժապավեն՝ կզակի տակ հանգույց անելու համար: Կարճ ասած, դա նույնպիսի մի անհեթեթություն է, որի մասին խոսում ենք: Այդ անսովոր նվերն ինձ տվել էր Ժակ Պելլետիենը¹¹: Ես մտադրվեցի գործի դնել այն և կոմսին ասացի, որ, շատերի պես, ինքն էլ կարող է կրել նման անհաջողություն, քանզի այստեղ կան մարդիկ, որոնք պատրաստ են կազմակերպել դա: Սակայն թող նա համարձակորեն անկողին մտնի, որովհետև ես միտք ունեմ բարեկամական ծառայություն մատուցել նրան և չեմ խնայի իմ ունեցած հրաշք միջոցը, պայմանով, որ նա կխոստանա խիստ գաղտնի պահել դա: Նրանից պահանջվող միակ բանն այն է, որ, եթե գործերը վատ լինեն, գիշերը, երբ մենք հարսանեկան ընթրիքը կտանենք նրա ննջասենյակը, նշան անի ինձ: Իմ բառերը նրան այնպես էին հուզել, և նա այնպես էր վհատվել, որ չէր կարողանում զսպել մոլեգնած երևակայությունը և պայմանի համաձայն նշան արեց ինձ: Այդ ժամ ես նրան ասացի, որ վեր կենա անկողնուց իբր մեզ վռնդելու համար, և, կարծես կատակով իմ վրայից հանելով տնային խալաթը (մենք համարյա մի հասակի էինք), ինքը հագնի, բայց միայն իմ հրահանգները կատարելուց հետո, այսինքն՝ երբ մենք դուրս դանք ննջարանից, նա պետք է իբր փոքր կարիքի համար հեռանա և երիցս կարդա այսինչ աղոթքն ու երեք անգամ էլ այսինչ շարժմունքներն անի, և ըստ այդմ ամեն անգամ գոտևորվի այն ժապավենով, որ ես խոթել իմ սփի մեջ, մեղալը դնելով գոտկատեղի որոշակի մասին, այնպես, որ, երեսի մասը ուղղված լինի այսինչ կողմը: Անելով դա, նա պետք է ժայռավենն ամուր կապի, որ չքանգվի ու տեղից չշարժվի և լոկ այդ ամենից հետո նա կարող է վերջապես լիակատար ինքնավստահությամբ վերագառնալ իր գործին: Սակայն, իմ խալաթը հանելով, թող նա շնորհակալ այն գցել իր տեղաշորի վրա, այնպես, որ ծածկի երկուսին էլ: Հենց այս արարողություններն են ամենագլխավորը, հենց սրանք են ամենից շատ ազդում. մեր միտքը չի կարող պատկերացնել, թե այդ-

քան անսովոր գործողութիւնները շէն հենվում ինչ-որ գաղտնի գիտելիքների վրա: Հենց անհեթեթութիւնն է դրանց այդպիսի կշիռ ու նշանակութիւնն հաղորդում: Կարճ ասած, պարզվեց, որ իմ թալիսմանի նշանները կապված են ավելի շուտ Վենեթի, քան Արեգակի հետ, որ դրանք ավելի շուտ խրախուսում են, քան դերձ պահում: Այդ խաղին ինձ մղեց Երևակայութեան հանկարծակի և ինձ զվարճալի թվացող քմայքը, որն ընդհանուր առմամբ օտար է իմ խառնվածքին: Ես թշնամի եմ ամեն տեսակ խորամանկութիւններին ու հնարանքներին: Ես ատում եմ ոչ միայն զվարճանալու համար արվող խորամանկութիւնը, այլև այն, որը կարող էր օգուտ բերել: Եթէ իմ բուն արաբքում չկար ոչ մի վատ բան, այդուհանդերձ իմ ընտրած ճանապարհը վատն էր:

Եգիպտոսի արքա Ամասիսն¹² ամուսնացել էր Կառդիկայի՝ չքնաղ հելլենուհու հետ, և հանկարծ պարզվեց, որ սիրային զվարճութիւններում մշտապես հիանալի այդ ընկերակիցն ի վիճակի չէ վայելք ճաշակել դրանից. գտնելով, թէ այստեղ կախարդանք կա, նա սպառնում էր սպանել կնոջը: Եվ ինչպէս սովորաբար լինում է բոլոր այն բաներում, որոնք արգասիք են Երևակայութեան, վերջինս տարավ նրան դեպի բարեպաշտութիւն, երդումներով ու աղերսանքներով դիմելով Վենեթիին, զոհ մատուցելու և զեղումների առաջին իսկ գիշերը նա զգաց, որ իր ուժերը հրաշքով վերականգնվել են:

Եվ իզուր են որոշ կանայք դիմավորում մեզ այնպիսի տեսքով, կարծես իրենց ձեռք տալը վտանգավոր է, կարծես բարկանում են մեզ վրա, և մենք անբարյացակամութիւն ենք հարուցում. նրանք մարում են մեր կիրքը, ձգտելով բորբոքել այն: Պլութագորասի հարսն ասում էր, թէ տղամարդու հետ քնող կինը պետք է շրջազգեստի հետ միասին դեն նետի նաև ամոթխածութիւնը, իսկ ապա, շրջազգեստը հագնելով, կրկին վերաննի այն: Համառորեն ձգտողի բազմաթիվ տաղնապներով ու կասկածներով կաշկանդված հոգին հեշտութեամբ կորցնում է հավասարակշռութիւնը, և նա, ում Երևակայութիւնը ստիպել է գեթ մեկ անգամ տանել այդ խայտառակութիւնը (իսկ դա հնարավոր է միայն սկզբնական շրջանում, քանզի առաջին նոպաները միշտ ավելի անողոր են ու ավելի կատաղի, ինչպէս նաև այն պատճառով, որ սկզբում հատկապես շատ է բարեհաջող վախճանի երկչուղը), սկսելով վատ, այդ գծրախտութիւնը հիշելիս հուզմունք ու վիրավորանք է ապրում, և դրա հետևանքով, նրա հետ նույն բանն է տեղի ունենում նաև հետագայում:

Շատ ժամանակ ունեցող նորապսակները չպետք է շտապեն ու իրենց ենթարկեն փորձութեան, քանի դեռ պատրաստ չեն դրան, և ավելի լավ է խախտեն սովորույթն ու շտապեն արժանին մատուցել ամուսնական

անկողնուն, ուր ամեն ինչ տողորված է հուզմունքով ու տենդով, այլ, որքան էլ հարկ լինի, սպասեն հարմար առիթի, առանձնանալու և հանգրստութեան, չղժբախտանան ամբողջ կյանքում, ցնցվելով ու հուսահատվելով առաջին անհաջող փորձից:

Ոչ առանց հիմքի ընդգծում են ինքնահաճութունն այդ օրգանի, որը երբեմն խիստ անպատեհ հայտնում է իր պատրաստակամությունը, երբ հնարավորություն չունենք բավարարություն տալու, և նույնքան անպատեհ կորցնում է այն, երբ ամենից շատ ունենք դրա կարիքը, քմահաճորեն դիմադրում է մեր կամքին և ամբարտավանությամբ ու համառությամբ մերժում այն հորդորները, որոնցով նրան դիմում է մեր միտքը: Եվ այնուամենայնիվ, եթե նա ինձ խոստանար համապատասխան հատուցում, որպեսզի պաշտպանեի մեղադրական դատավճիռ կայացնելու համար հիմք ծառայող կշտամբանքներից, ես, իմ հերթին, կաշխատեի կասկած հարուցել մեր մյուս օրգանների՝ նրա ընկերակիցների նկատմամբ, որ վերջիններս, նախանձելով նրա կարևորությանն ու հաճելի պարտականություններին, առաջադրել են այդ մեղադրանքը, որպեսզի ամբողջ աշխարհը լարեն նրա դեմ, շարամտորեն միայն նրան վերագրելով այն մեղքերը, որոնցում մեղավոր են բոլորը միասին:

Ինքներդ դատեցեք, թե կա արդյոք մեր մարմնի մի այնպիսի մաս, որ անխափան կատարի իր աշխատանքը համաձայն մեր կամքի և երբեք չգործի նրան հակառակ: Այդ մասերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ կրքերը, որոնք նրան արթնացնում են քնից կամ, ընդհակառակը, քնեցնում, առանց մեզանից թուլտվություն խնդրելու: Որքան հաճախ են մեր դեմքի ակամա շարժումները մատնում մեր այն մտքերը, որոնք կուզենայինք թաքցնել, և մեզ մերկացնում շրջապատի առջև: Մեր նվիրական օրգանները գրգռող պատճառն առանց մեր գիտության հուզում է նաև մեր սիրտը, գրգռում թոքերը, երակազարկը: Մեզ համար հաճելի էակի տեսքից մենք վայրկենապես տենդագին հուզմունք ենք ապրում: Մի՞թե մեր մկաններն ու երակները չեն պրկվում, չեն թուլանում իրենք իրենց ոչ միայն անկախ մեր կամքից, այլև այն ժամանակ, երբ մենք նույնիսկ չենք մտածում այդ մասին: Մեր հրամանով չէ, որ ցանկությունից կամ վախից մեր մազերը ցից-ցից են կանգնում, իսկ մաշկը քրտինքով է ծածկվում: Լինում է նաև, որ լեզուն քարանում է և ձայնը մնում կոկորդում: Երբ ուտելու բան չունենք, մենք հաճույքով սովին կարգելիինք անհանգստացնել մեզ հիշեցնելով իր մասին, սակայն, ուտելու և խմելու ցանկությունը չի դադարում տանջել մեր այն օրգանները, որոնք ենթակա են իրեն, ճիշտ այնպես, ինչպես այն մյուս ցանկությունը, և վերջինս, ուզած պահին, հաճախ էլ միանգամայն

անպատեհ հեռանում է մեզանից: Մեր ստամոքսը բեռնաթափող օրգանները նույնպես կծկվում ու լայնանում են կամայականորեն, անկախ, երբեմն էլ հակառակ մեր մտադրության, ճիշտ այնպես, ինչպես այն օրգանները, որոնք կոչված են բեռնաթափելու մեր երիկամները: Թեպետ մեր կամքի ամենագորութունն ապացուցելու համար, սուրբ Օգոստինոսը այլ ապացույցների թվում վկայակոչում է նաև մի մարդու, որին տեսել է և որն իր հետույքին հրամայում էր այս կամ այն քանակությամբ կրակոց տալ, իսկ սուրբ Օգոստինոսի մեկնարան Վիվեսոսն ավելացնում է արդեն իր ժամանակին վերաբերող մի օրինակ, հայտնելով, թե մի ոմն կարողանում էր նման ձայներ հանել համապատասխան իր համար ընթերցվող բանաստեղծության շափի, այստեղից, սակայն բնավ չի հետևում, թե մեր մարմնի այդ մասը միշտ ենթարկվում է մեզ, քանզի ամենից հաճախ այն իրեն պահում է միանգամայն անհամեստ, պատճառելով մեզ բավական շատ հոգսեր: Ավելացնեմ, որ ինձ հայտնի է մեր մարմնի նույնպիսի մի աղմկոտ ու ինքնահաճ մաս, որն արդեն ահա քառասուն տարի է, ինչ իր տիրոջը չի տալիս ոչ հանգիստ, ոչ ժամանակ, գործելով մշտապես ու անընդմեջ և այդկերպ տանելով նրան զեպի վաղաժամ մահ:

Սակայն ինչպե՞ս է մեր կամքը, որի իրավունքները պաշտպանելով առաջադրեցինք այդ կշտամբանքները, Չե՞նք կարող արդյոք իրեն յուրահատուկ կամակորության ու սանձարձակության պատճառով է՛լ ավելի մեծ հիմքով մեղադրանք առաջադրել նրան հուլումների ու խոտվությունների համար: Արդյո՞ք նա միշտ է ցանկանում այն, ինչ մենք ենք կամենում, որ ցանկանա: Արդյո՞ք նա հաճախ չի ցանկանում այն (և ըստ որում բացահայտորեն ի վնաս մեզ), ինչ մենք արգելում ենք ցանկանալ: Չի՞ հրաժարվում արդյոք ենթարկվել մեր բանականության վճիռներին: Վերջապես, իմ պաշտպանյալի օգտին ես կարող եմ ավելացնել նաև հետևյալը. թող բարեհաճեն ուշադրության առնել այն, որ նրան առաջադրված մեղադրանքն անքակտելիորեն կապված է նրա ընկերակիցների հանցակցության հետ, թեև ուղղված է միայն նրա դեմ. քանզի այստեղ հանցանշաններն ու ապացույցներն այնպիսին են, որ հաշվի առնելով դատավիճող կողմերի պարագաները, չեն կարող առաջադրվել նրա ընկերակիցներին: Արդեն սրանից կարելի է հեշտությամբ տեսնել հայցվորների անբարեխղճությունն ու բացահայտ կողմնակալությունը: Ինչպես էլ լինի, որքա՞ն էլ փաստաբաններն ու դատավորները վիճարանեն, ինչպիսի վճիռներ էլ կայացնեն, բնությունը միշտ գործելու է ըստ իր օրենքների, և վեր է ամեն կասկածից, որ նա միանգամայն ճիշտ է վարվել, շնորհելով այդ օրգանին առանձնահատուկ իրավունքներ

ու արտոնություններ: Նա է մահկանացուների միակ անմահ գործի տնօրենն ու կատարողը: Հղիացումն, ըստ Սոկրատեսի, աստվածային գործ է, սերն անմահության տենչ է և անմահ ոգի:

Շնորհիվ երևակայության ուժի, մեկն իր գեղձախտը թողնում է մեզ մոտ¹³, մինչդեռ նրա ընկերն այն հետ է տանում Իսպանիա: Ահա թե ինչու նման բաներում, որպես կանոն, պահանջվում է հոգու որոշ պատրաստականութուն: Հանուն ինչի՞ թե՛ն բժիշկներն այդպիսի եռանդով աշխատում ձեռք բերել իրենց հիվանդի վստահությունը, շաչելով նրա առողջութունը բարելավելու սուտ խոստումներ, եթե ոչ այն բանի համար, որ նրա երևակայությունն օգնության հասնի իրենց խաբեբայական նշանակումներին: Նրանք իրենց արհեստի մի լուսատուի զրվածքից գիտեն, որ լինում են մարդիկ, որոնք միայն գեղի տեսքից լավանում են:

Բոլոր այս արաստովոր տարօրինակ բաները ես հիշել եմ միայն վերջերս, լսելով մեր տնային դեղագործին (նրա ծառայություններից օգտվում էր հանգուցյալ հայրս), որը մի հասարակ շվեյցարացի է, իսկ նրանք, ինչպես հայտնի է, բնավ էլ ունայնամիտ ժողովուրդ չեն և ստելու հակում չունեն: Ապրելով Թուլուզում, նա երկար ժամանակ այցելում էր մի հիվանդ վաճառականի, որը քարեր ուներ և հաճախակի հոգնանների կարիք էր զգում, այնպես որ, կախված նրա վիճակից, բժիշկներն ըստ նրա պահանջի նշանակում էին տարբեր հոգնաններ: Դրանք բերում էին նրա մոտ, և նա երբեք չէր մոռանում ստուգել, թե արդյոք ամեն ինչ կարդին է, հաճախ նա փորձում էր նաև, թե հո գրանք շատ տաք չեն: Բայց ահա նա մտավ անկողին, շրջվեց փորի վրա, ամեն բան արված է ինչպես հարկն է, բացի նրանից, որ հոգնայի պարունակութունն այդպես էլ չի ներարկվել: Դրանից հետո դեղագործը հեռանում է, իսկ հիվանդն ընդունում է այնպիսի դիրք, կարծես նրան իրոք հոգնա են գրել, քանդի արված ամեն ինչը նրա վրա ազդել է ոչ այլ կերպ, քան դա ազդում է իսկապես օգտագործողների վրա: Եթե բժիշկը դանում էր, որ հոգնան բավականաչափ չի ազդել, դեղագործը տալիս էր երկու կամ երեք ճիշտ նույնպիսի հոգնաններ: Իմ պատմողը երզվում է, թե հիվանդի կինը, ավելորդ ծախսերից խուսափելու համար (քանդի հիվանդը վճարում էր այդ հոգնանների դիմաց, այնպես, ինչպես իրականում դրվելու դեպքում), բազմաթիվ փորձեր էր անում, սահմանափակվելու զույր ջրով, բայց քանի որ դա չէր ազդում, նրա արարքը շուտով բացահայտվեց և, քանի որ այդ հոգնանները ոչ մի օգուտ չէին բերում, հարկեղավ վերադառնալ հին եղանակին:

Մի կին, ենթադրելով, թե հացի հետ քորոց է կուլ տվել, ճշում ու տանջվում էր, իր ասելով, անտանելի ցավ զգալով կոկորդի շրջանում, ուր իբր մնացել էր քորոցը: Բայց քանի որ չէին նկատվում ոչ այտուց, ոչ արտաքին փոփոխություններ, մի ուշիմ մարդ, մտածելով, որ դա ընդամենը հացի կտորով պատահմամբ կոկորդը քերծելու հետևանքով առաջացած կասկածամտություն ու երևակայություն է, նրա մոտ փսխում առաջացրեց և ործանքի մեջ մի կեռ քորոց գցեց: Կինը, հավատալով, թե ինքն իսկապես քորոց է փսխել, հանկարծ զգաց, որ ցավերը հանդարտվել են: Ինձ հայտնի է նաև մի այսպիսի դեպք. մի ազնվական, ճոխ հյուրասիրություն կազմակերպելով, գրանից երեք թև շորս օր հետո սկսեց կատակով պատմել (քանզի իրականում ոչ մի այդպիսի բան չէր եղել), թե իբր հյուրերին կերակրել է կատվամսի պաշտետով: Դա ընդունելությանը ներկա եղած մի աղջկա այնպիսի սարսափի մեջ գցեց, որ նրա մոտ սկսվեցին ստամոքսի սուր ծակոցներ, տենդ, և այդպես էլ չհաջողվեց նրան փրկել: Նույնիսկ կենդանիները, մարդկանց նման, ենթարկվում են իրենց երևակայության ուժին, ապացույց կարող են ծառայել շները, որոնք սատկում են, կորցնելով իրենց տիրոջը: Մենք տեսնում ենք նաև, որ քնած ժամանակ նրանք հաշում են ու ցնցվում, իսկ ձիերը վրնջում ու քացի են տալիս:

Սակայն վերը ասված ամեն բան իր բացատրությունը կարող է գտնել հոգու և մարմնի սերտ կապի մեջ, որոնք իրենց վիճակը հաղորդում են միմյանց: Ուրիշ բան, եթե երևակայությունը, ինչպես դա երբեմն լինում է, ազդի ոչ միայն իր, այլև ուրիշի մարմնի վրա: Եվ ինչպես հիվանդ մարմինն է իր ախտը փոխանցում հարևաններին, որը երեվում է թեկուզ մեկից մյուսին անցնող ժանտախտի, սիֆիլիսի կամ աչքի հիվանդությունների օրինակով,—

Dum spectant oculi laesos, laeduntur et ipsi:
Multaque corporibus transitione nocent*.

այդպես էլ գրգռված երևակայությունն է արձակում նետեր, որոնք կարող են խոցել շրջապատի առարկաները: շները պատմում են սկյութացի կանանց մասին, որոնք, մեկի վրա շատ խիստ զայրանալով, սպանում էին նրան հայացքով: Կրիաներն ու ջայլամները ճուտ են հանում միայն անընդհատ նայելով իրենց ձվերին, և դա ապացուցում է, որ նրանք ճառագում են ինչ-որ ուժ: Ինչ վերաբերում է կախարդներին, ապա պըն-

* Նայելով հիվանդներին, հիվանդանում են մեր աչքերը, և առհասարակ, շատ բուներ, վարակ տարածելով, վնաս են հասցնում մարմիններին¹⁴ (լատ.):

գում են, թե իբր նրանց հայացքը գիվահարություն ու շարակնություն է հարուցում:

Nescio qui teneros oculus mihi fascinat agnos*.

Հմայողները, սակայն, իմ կարծիքով, վատ պատասխանողներ են: Բայց ահա թե ինչ գիտենք մենք փորձով. կանայք իրենց արդանդում գտնվող երեխաներին հաղորդում են իրենց երևակայության բնորոշ գծերը, ապացույց կարող է ծառայել այն կիներ, որը նեգր էր ծնել: Բոհեմիայի թագավոր և կայսր Կարլոսին մի անգամ ցույց տվին խիտ ու երկար մաղաժածկ ունեցող պիզայի մի աղջիկ, մոր խոսքերով, աղջիկն այդպես էր ծնվել, որովհետև իր անկողնու վերևում կախված է եղել Հովհաննես Մկրտիչի պատկերը: Նույնն է նաև կենդանիների մոտ, զրա ապացույցն են Հակոբի ոչխարները¹⁶, ինչպես նաև չիլ կաքավներն ու նապաստակները, որոնց սարերում սպիտակացրել է այնտեղի ձյունը: Վերջերս ես տեսա, թե ինչպես էր կատուն դարանում ծառին նստած մի թռչնակի, նրանք երկուսն էլ որոշ ժամանակ, առանց աչքերը հեռացնելու, նայում էին իրար, և հանկարծ, սեփական երևակայությունից ընդարմացած, թե կատվից ճառագվող ինչ-որ ձգողական ուժի ազդեցության ներքո, թռչունը, կարծես անկենդան, ընկավ ուղիղ կատվի ճանկը: Բազեաորսի սիրահարներն, իհարկե, գիտեն այն բազեապանի պատմությունը, որը զբաղ էր եկել, թե, սևեռուն նայելով երկնքում ճախրող շահենին, միայն հայացքի ուժով կստիպի նրան իջնել գետին և, ասում են, հասել է իր ուզածին: Սակայն ուրիշներից փոխառած իմ պատմությունները թողնում եմ այն մարդկանց խղճին, ումից լսել եմ:

Այդ ամենից արված հետևություններն իմն են, և ես դրանք արել եմ դատողությունների շնորհիվ, այլ ոչ թե հենվելով իմ անձնական փորձի վրա: Յուրաքանչյուր ոք կարող է իմ բերածին ավելացնել իր սեփական օրինակները, իսկ ովքեր այդպիսիք չունեն, թող հավատան ինձ, որ դրանք հեշտությամբ կգտնվեն, ուշադրության անելով վկայված նման դեպքերի մեծ քանակությունն ու բազմազանությունը: Եթե իմ բերած օրինակներն այնքան էլ համոզիչ չեն, թող մեկ ուրիշը գտնի ավելի հարմար օրինակներ:

Մեր բարքերն ու մղումներն ուսումնասիրելիս, որով ես, ըստ էության զբաղվում եմ, հնարովի վկայությունները նույնքան պիտանի են, որքան իսկականները, պայմանով, որ դրանք չեն հակասում հնարավորին: Իրականում դա տեղի է ունեցել, թե ոչ, պատահել է Փարիզում թե

* Ինչ-որ մեկը աչքով ավեց իմ գառնուկներին¹⁵ (լատ.):

Հոռմում, ժանին թե Պիեռին, բոլորովին միևնույն է, միայն թե խոսքը վերաբերի մարդու այս կամ այն ունակութեանը, որ ես հօգուտ ինձ նշել եմ պատմության մեջ: Ես տեսնում և օգուտ եմ քաղում դրանից, անկախ այն բանից, թե այդ ունակությամբ օժտված են սովորները կամ կենդանի մարդիկ: Եվ հաճախ նման պատմություններում եղած տարբեր դասերից ես իմ նպատակների համար օգտագործում եմ միայն առավել արտասովորները և ուսանելիները: Կան գրողներ, որոնք նպատակ են դնում պատկերել իրական դեպքերը: Իսկ իմ խնդիրն է (միայն թե կարողանամ այն գլուխ բերել) պատկերել այնպիսի բաներ, որոնք կարող էին տեղի ունենալ: Դպրոցական գերիմաստութեանը թույլ է տրվում (և այլ կերպ չէր էլ կարող լինել) իրերի միջև նմանություն տեսնել անգամ այն ժամանակ, երբ իրականում այդպիսին բնավ չկա: Իսկ ես ոչ մի այդպիսի բան չեմ անում և իմ մանրախնդրությամբ գերազանցում եմ ամենապահանջկոտ պատմագետին: Իմ բոլոր լսածից, անձամբ կատարածից կամ ասածից քաղած օրինակներում ես ինձ թույլ չեմ սովել փոփոխել ոչ մի մանրուք, որքան էլ այն սակավանշանակ լիներ: Իմ իմացածի մեջ, անկեղծ ասած, ես մազաշափ անգամ չեմ շեղվում ճշմարտությունից, իսկ եթե որևէ բան չգիտեմ, խնդրում եմ ինձ շնորհակալ դրա համար:

Ի դեպ, այդ առթիվ ասեմ, որ երբեմն ես խորհում եմ, թե այդ ինչպես կարող է աստվածարանը, փիլիսոփան կամ առհասարակ զգայուն խիղճ և սուր միտք ունեցող մարդը ձեռնամուխ լինել ժամանակագրություններ կազմելուն: Ինչպե՞ս կարող են նրանք ճշմարտանմանության իրենց շափանիշը համաձայնեցնել ամբոխի շափանիշին: Ինչպե՞ս կարող են պատասխան տալ իրենց անհայտ անձանց մտքերի համար և իրենց հնարանքներն ու ենթադրությունները հրամցնել որպես արժանահավատ փաստեր: Ախր նրանք կհրաժարվեին, թերևս, երդումնավոր ցուցմունքներ տալ իրենց աչքի առաջ տեղի ունեցած գոնե ինչ-որ շափով բարդ դեպքերի կապակցությամբ, նրանք շունեն, թերևս, ոչ մի ծանոթ, որի մտադրությունների համար համաձայնեին լրիվ պատասխան տալ: Ես գտնում եմ, որ անցյալը նկարագրելն ավելի քիչ է վտանգավոր, քան ներկան նկարագրելը, զի այդ դեպքում գրողը պատասխանատու է միայն ուրիշներից փոխառածը ճիշտ հաղորդելու համար: Ոմանք ինձ հորդորում են նկարագրել իմ ժամանակի անցքերը¹⁷, նրանք հիմնվում են այն բանի վրա, որ իմ հայացքն ավելի քիչ է կրթերով մթազնած, քան որևէ մեկինը, և ես ավելի մոտ եմ այդ անցքերին, քան մեկ ուրիշը, քանզի ճակատագիրն ինձ հնարավորություն է սովել շփվելու մարդկանց տարբեր խմբերի առաջնորդների հետ: Սակայն նրանք աչքաթող են անում, որ ես այդ խնդիրը չէի ստանձնի անգամ Սալլուստիոսի¹⁸ փառքն ունե-

նալու գնով, որ ես ամեն տեսակ պարտավորությունների, նստաջանության, համառամտության ոխերիմ թշնամին եմ, որ չկա իմ գրելակերպին այնքան հակասող ոչինչ, քան երկարաշունչ պատմությունը, որ ես շարունակ ընդհատում եմ ինքս ինձ, քանզի շունչս չի հերիքում, որ ես բնդունակ չեմ կուռ ու հստակ որևէ բան շարագրել, որ, ի վերջո, առօրյայում օգտագործվող ամենասովորական արտահայտությունների ու դարձվածքների հարցում իմ շիմացությամբ ես գերազանցում եմ նույնիսկ երեխաներին: Եվ, այդուհանդերձ, ես սիրտ արեցի այստեղ ասել այն, ինչ կարող եմ ասել, բովանդակությունը հարմարեցնելով իմ ուժերին: Եթե ես որևէ մեկին վերցնեի իբրև առաջնորդ, հազիվ թե իմ քայլերը համընկնեին նրա քայլերին: Եվ եթե ես կամքս տնօրինելու գործում ազատ լինեի, կհրապարակեի այն դատողությունները, որոնք և իմ տեսակետից, և ըստ բանականության պահանջների, կլինեին հակաօրինական ու պատժելի¹⁹: Պլուտարքոսն իր գրածի վերաբերյալ կարող էր ասել, թե միշտ և ամեն ինչում իր բերած օրինակների հավաստիության մասին հոգալն իր գործը չէ, իսկ ահա, որպեսզի դրանք սերունդների համար լինեն խրատական և դառնան ասես առաքինության ճանապարհը լուսավորող ջահ, դա իսկապես նրա հոգսն է եղել: Հին ավանդություններն ինչ-որ դեղատոմս չեն. այստեղ վտանգ չկա. թե արդյոք դրանք պրված են այս կամ այլ կերպ:

Փլուլս XXII

ՄԵԿԻ ՕԳՈՒՏԸ ՄՅՈՒՍԻ ՎՆԱՍՆ Է

Աթենացի Գեմադոսը դատապարտել էր հուդարկավորության համար անհրաժեշտ բոլոր պարագաների առևտուր անող իր համաքաղաքացիներից մեկին, հիմնվելով այն բանի վրա, թե նա ձգտում էր կորզել շափաղանց մեծ օգուտ, որը կարելի էր ստանալ ոչ այլ կերպ, քան շատ շուտերի մահվան գնով: Այդ վճիռն ինձ թվում է անհիմն, քանզի, ընդհանրապես ասած, չկա մի օգուտ, որ կապված չլինի այլոց վնասի հետ, աստի և, եթե դատելու լինեինք Գեմադոսի նման, պիտի դատապարտեինք ուղածդ վաստակը:

Վաճառականը հարստանում է երիտասարդության շոռայությունից, երկրագործը՝ շնորհիվ հացի բարձր գնի, շինարարը՝ շնորհիվ այն բանի, որ շենքերն են թուլանում ու փլուզվում, դատավորները՝ մարդկանց զրժտություններից ու դատավճիռներից, քահանաները (նույնիսկ նրանք) պարտավոր են ինչպես իրենց նկատմամբ եղած մեծարանքին, այնպես

էլ հենց սեփական գործունեութեանը՝ կապված մեր մահվան ու արատների հետ: Հունական մի կատակերգութեան մեջ ասվում է, թե ոչ մի բժիշկ չի ուրախանում անգամ իր ամենամերձավոր բարեկամների առողջութեամբ, ոչ մի զինվոր՝ հարևանների հետ իր հարազատ քաղաքի հաշտութեամբ և այլն: Ի՞նչ ասես: Եթե մեզանից յուրաքանչյուրը պրպտի իր ներսը, կտեսնի, որ իր ամենանվիրական ցանկություններն ու հույսերը ծնվում ու սնվում են, մեծ մասամբ, ուրիշի հաշվին:

Երբ ես խորհում էի այդ մասին, մտքովս անցավ, որ բնությունն այստեղ էլ հավատարիմ է իր սահմանած կարգին, քանզի, ինչպես ենթադրում են բնախույզները, յուրաքանչյուր առարկայի ծնունդը, սնունդն ու աճը միևնույն ժամանակ մեկ ուրիշի քայքայումն ու սնչացումն են:

Nam quodcumque suis mutatum finibus exit,
Continuo hoc mors est illius, quod fuit ante*.

Գլուխ XXIII

ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՅԵԼ ՁԷ ԱՌԱՆՑ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՍՔԻ ՓՈՒՆԵԼ ԱՐՄԱՏԱՎՈՐՎԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Թվում է, սովորության ուժը հիանալիորեն է ըմբռնել նա, ով առաջինը հորինել է հեքիաթն այն գեղջկուհու մասին¹, որը, սովորելով փաղաքշել ցլիկին նրա աշխարհ գալու օրվանից և հետագայում էլ շարունակելով նույն բանը, նրան ձեռքերի վրա ման էր տալիս նաև այն ժամանակ, երբ ցլիկը բավական մեծացել էր: Հիրավի, չկա ավելի անողորմ ու նենգ դաստիարակ, քան մեր սովորությունը: Կամաց-կամաց այն գաղտնաբար տիրում է մեզ, սակայն, սկսելով համեստ ու բարեհոգի, ժամանակի ընթացքում արմատավորվում ու ամրապնդվում է մեզանում, ի վերջո, դեն է նետում քողն իր իշխանազոր ու դաժան գեմքից, և մենք այլևս անկարող ենք լինում նայել նրան: Մենք տեսնում ենք, որ նա շարունակ խախտում է բուն բնության սահմանած կանոնները. Usus efficacissimus rerum omnium magister**

Այդ առթիվ միտս են գալիս Պլատոնի քարանձավը նրա «Պետությունում»³, ինչպես նաև այն բժիշկները, որոնք ի հաճույս սովորության

* Եթե մի բան, փոփոխվելով, անցնի իր սահմանները, դա կլինի նախկինի անհապաղ վախճանը² (լատ.):

** Ամեն ինչում լավագույն խրատուն սովորությունն է² (լատ.):

շատ հաճախ արհամարհում են իրենց արվեստի օրենքները, այն արքան, որն իր ստամոքսը վարժեցրել էր թուլնի⁴, այն աղջիկը, որի մասին Ալբերտը⁵ պատմում է, թե սովորել էր սնվել բացառապես սարդերով:

Եվ Նոր Հնդկաստանում⁶, որը մի ամբողջ աշխարհ է, գտնվել են տարբեր կլիմաներում ապրող շատ բազմամարդ ժողովուրդներ, որոնք նույնպես սնվում են գլխավորապես սարդերով, նրանք որպես պաշարացու հավաքում են այդ սարդերը, ինչպես նաև մորեխներ, մրջյուններ, մողեսներ ու շղջիկներ և բտում, և մի անգամ մթերապաշարի սուղ ժամանակ այնտեղ դողողը վաճառեցին վեց էկյուով, նրանք խորովում են այդ դողողները և մշակում զանազան համեմունքներով: Գտնվել են նաև ժողովուրդներ, որոնց համար մեր մսեղեն կերակուրը եղել է թունավոր ու մահաբեր: *Consuetudinis magna vis est. Pernocant venatores in ninve: in montibus uri se patiuntur. Pugiles caestibus contusi ne ingemiscunt quidem**.

Օտար երկրներից փոխառած այս օրինակներն արտասովոր չեն թվա, եթե դիմենք մեր անձնական փորձին ու հիշենք, թե որքան է սովորությունը նպաստում մեր զգացմունքների բթացմանը: Դրա համար բնավ հարկ չկա դիմելու նեղոսյան քարվաստների մոտակայքում ապրող մարդկանց պատմությանը կամ այն պարագային, թե փիլիսոփաները որն են համարում երկնային երաժշտություն, այսինքն՝ թե իբր երկնային ամուր ու հարթ գնդերը, պտտվելով, քափում են իրար, արձակում սքանչելի, թովիչ ներդաշնակությամբ հնչող ձայներ, որոնց ութմին ու ելևէջներին հետևելով, շուրջպար բռնած երկնային լուսատուները տեղաշարժվում են ու փոխում իրենց դիրքը, թեև երկրային էակների, ինչպես, օրինակ, նեղոսյան քարվաստների հարևանությամբ ապրող եգիպտացիների ականջներն ի վիճակի չեն որսալ այդ ձայնը, որքան էլ բարձր լինի այն, քանզի անընդհատ է: Դարբինները, ջրաղացպաններն ու դինագործները չէին դիմանա այն աղմուկին, որում աշխատում են, եթե դա նրանց ականջը ծակեր այնպես, ինչպես մերը: Իմ բուրավետ կաշվե կոլետը սկզբում հաճելի է իմ քթին, բայց եթե, առանց հանելու, ես այն կրեմ երեք օր շարունակ, հաճելի կդառնա միայն շրջապատի մարդկանց հոտառությանը: Է՛լ ավելի ապշեցուցիչ է, որ մեզ մոտ կարող է մեր զգայարաններն իրեն ենթարկող սովորություն առաջանալ ու հաս-

* Սովորության ուժը մեծ է: Որսորդները գիշերն անց են կացնում ձյան վրա, տանջվում լեռնային սառնամանիքներից: Մետաղապատ ձեռնոցներով ծեծված բռնցքամարտիկները նույնիսկ չեն տներում? (լատ.):

տատվել նույնիսկ այն ժամանակ, երբ նրա հարուցիչը մեր զղայարանների վրա ազդում է ոչ թե անընդհատ, այլ երկարատև ընդմիջումներով, դա լավ գիտեն նրանք, ովքեր ապրում են գանգակատան մոտակայքում: Ես ապրում եմ մի մեծ զանգ ունեցող աշտարակում, ուր ծեզին ու իրիկնադեմին հնչում է Ave Maria⁸: Զանգի ղողանջներից նույնիսկ աշտարակն է ցնցվում, սարսափում. առաջին օրերին ինձ էլ դա թվում էր միանգամայն անտանելի, սակայն քիչ ժամանակ անց ես այնքան ընտելացա, որ այժմ դա ինձ բնավ չի ջղայնացնում, իսկ հաճախ նույնիսկ չի արթնացնում:

Պլատոնը խիստ հանդիմանեց մի մանչուկի, որը վեզ խաղալով էր տարվել: Նա պատասխանեց. «Դու ինձ կշտամբում ես դատարկ բանի համար»: — «Սովորությունը, — ասաց Պլատոնը, — բնավ էլ դատարկ բան չէ»⁹:

Ես գտնում եմ, որ մեր բոլոր ամենավատ արատներն առաջանում են մատաղ հասակից և մեր գաստիարակությունը կախված է գլխավորապես մեր ստնտուններից ու դայակներից: Մայրերը հաճախ ուրախանում են, նայելով, թե ինչպես է իրենց որդյակը ոլորում ձափ վիզը և զվարճանում, տանջելով կատվին կամ շանը: Իսկ որոշ հայրեր լինում են այնքան անխոհեմ, որ, նկատելով, թե ինչպես է իրենց որդին անտեղի դեգստում անպաշտպան գեղջուկին կամ ծառային, դրանում տեսնում են մարտական բնավորության բարի նշան, կամ, հետևելով, թե ինչպես է նույն որդյակը, դիմելով խաբեության և ուխտադրժության, հիմարացնում իր ընկերոջը, դրանում դիտում են իրենց զարմին հատուկ ձկուն խելքի դրսևորում: Իրականում, սակայն, դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ դաժանության, սանձարձակության, դավաճանության սերմեր, հենց այստեղ են դրանք արձակում իրենց առաջին ծիլը, որը հետագայում տալիս է այդքան փարթամ շիվեր և արմատավորվում սովորության ուժով: Եվ այդ գարշելի հակումները պատանեկությանը հատուկ թեթեամտությամբ և զանցանքի աննշանությամբ բացատրելով ներելու սովորությունը շատ ու շատ վտանգավոր է: Նախ և առաջ, այստեղ լսվում է հենց բնության ձայնը, որն ավելի զիլ ու մաքուր է, քանի դեռ չի կոպտացել, երկբորդ՝ մի՞թե խաբեբայությունը դառնում է ավելի պակաս զզվելի, եթե խոսքը մի քանի սուի, այլ ոչ թե մի քանի էկյուրի մասին է: Այն զզվելի է ինքնին: Ես, անհամեմատ ավելի ճիշտ եմ համարում հետևյալ եղրակացությունը. «Ինչո՞ւ այս մարդը շխաբի մի ամբողջ էկյուր, եթե խաբում է մեկ սու», — փոխանակ այդ առթիվ անելու սովորական դատողություններ. «Չէ որ նա խաբել է ընդամենը մեկ սու, նրա մարով իսկ չէր անցնի խաբել մի ամբողջ էկյուր»: Անհրաժեշտ է

երեխաներին համառորեն սովորեցնել, որ ատեն արատները որպես այդպիսիք, անհրաժեշտ է, որ նրանք իրենց աչքով տեսնեն, թե ինչքան են այդ արատները այլանդակ, և խուսափեն դրանցից ոչ միայն իրենց գործերում, այլև սրտերում, անհրաժեշտ է, որ ցանկացած դիմակ կրող արատների մասին բուն միտքը լինի նրանց ատելի: Ես համոզված եմ, որ եթե մինչև այսօր, անդամ ամենաաննշան ղվարճության մեջ, ծայրահեղ նողկանք եմ ապրում ամեն տեսակ խաբեությունների նկատմամբ, և դա իմ ներքին պահանջմունքն է ու բնական հակումներիս արտահայտությունը, այլ ոչ թե ճիգեր պահանջող ինչ-որ բան, ապա դրա պատճառն այն է, որ հենց մանկուց ինձ սովորեցրել են քայլել միայն շիտակ ու բաց ճանապարհով, հասակակիցներիս հետ խաղերում (այստեղ տեղին է նշել, որ երեխաների խաղերն ամենեին էլ խաղեր չեն և ավելի ճիշտ է դրանք դիտել իբրև այդ տարիքի ամենանշանակալից ու խորիմաստ զբաղմունք) խորշելով ամեն տեսակ խարդախություններից ու խորամանկություններից: Դուբլով, ինչպես նաև կրկնակի դուբլոնով¹⁰ թուղթ խաղալիս ես վճարում եմ միատեսակ նրբանկատությունք, թե այն ժամանակ, երբ պարտվելն ու տանելն, ըստ էության, ինձ համար միևնույնն են, քանզի խաղում եմ կնոջս ու դստերս հետ, թե այն ժամանակ, երբ խաղին նայում եմ այլ կերպ: Ամեն ինչում և ամեն տեղ ըստ պատշաճին պարտքս կատարելու համար բավական են միայն իմ սեփական աչքերը, և աշխարհում չկան մեկ ուրիշ զույգ աչքեր, որ ավելի ուշադիր հետևեն ինձ ու վայելեն իմ ավելի մեծ հարգանքը:

Վերջերս իմ տանը տեսա ի ծնե կոնատ մի նանտցի թղուկի, նա այնքան լավ էր ոտքերը վարժեցրել ծառայելու ձեռքերի փոխարեն, որ դրանք, կարելի է ասել, կիսով շափ մոռացել էին իրենց վրա բնության զրած պարտականությունները: Ասենք, նա դրանք անվանում է իր ձեռքերը, դրանցով է կտրում, լցնում ատրճանակն ու իջեցնում հրահանք, ասեղ թելում, կարում, գրում, հանում գլխարկը, սանրվում, խաղում թուղթ ու զառ, նետելով դրանք ոչ պակաս ճարպկությամբ, քան մեկ ուրիշը, իմ տված դրամը (քանզի նա հաց է վաստակում իրեն ցույց տալով) նա վերցրեց ոտքով, ինչպես մենք այդ կանեինք ձեռքով: Ես գիտեի նաև մեկ ուրիշ հաշմանդամ մանչուկի, որը, նույնպես լինելով ձեռնատ, կզաչը կրճքին սեղմելով, պահում էր սակրատեղն և երկարակոթ սուրը, վեր նետում ու նորից բռնում դրանք, դաշույն էր նետում և ֆրանսիացի վարպետ սայլապանի հմտությամբ մտրակ շրխկացնում:

Սակայն սովորության բռնադատությունն ավելի դյուրին է տեսնել այն արտասովոր պատկերացումներում, որ ստեղծվում են մեր հոգիներում, քանզի վերջիններս ավելի քիչ են դիմադրում նրան: Ինչ ասես

որ չի անում այն մեր մտածելակերպի ու հավատալիքների հետ: Կա՞ արդյոք մի կարծիք, որքան էլ այն մեզ անհեթեթ թվա (ես արդեն չեմ խոսում շատ կրոնների հիմքում ընկած և բազում մեծ ժողովուրդների ու խելամիտ այրերի հիմարացրած կոպիտ խաբեության մասին, քանզի դա դուրս է մարդկային հասկացողությունից, և նա, ում վրա չի իջել վերին օգնությունը, հեշտությամբ մոլորվում է), այսպես, ուրեմն, գոյություն ունե՞ն արդյոք մեզ համար անըմբռնելի հայացքներ ու կարծիքներ, որոնք նա շտարածի ու շարմատավորի կամայականորեն իր ընտրած երկրներում որպես անխախտ օրենքներ: Եվ որքան արդարացի է հետևյալ հին բացականչությունը. Non pudet physicum, id est speculatorem venatoremque naturae, ab animis consuetudine imbutis quaerere testimonium veritatis.*

Ես գտնում եմ, որ չկա մարդկային երևակայության մեջ ծնված մի հնարանք, ինչքան էլ այն ցնորամիտ լինի, որ այլուր շքնդունվի իբրև համընդհանուր տարածում ունեցող սովորույթ և, հետևաբար, շարժանանա մեր բանականության հավանությանն ու շհիմնավորվի նրա կողմից: Կան ժողովուրդներ, որոնց մոտ ընդունված է թիկունք ցույց տալ այն մարդուն, որին բարևում են, և երբեք չնայել նրան, ում ուզում են հարգանք հավաստել²: Կա նաև մի ժողովուրդ, որի մոտ պալատական տիկնանցից մեկը, ըստ որում նա, ով առավել բարեհաճություն է վայելում, դեմ է անում իր ձեռքը, երբ թագավորն ուզում է թքել, իսկ մեկ ուրիշ երկրում թագավորի շրջապատի առավել աղդեցիկ անձինք նման պարագաներում կռանում են մինչև գետին ու թաշկինակով սրբում թագավորի թուրը:

Այստեղ տեղ հատկացնենք հետևյալ զվարճալի պատմությանը: Մի ֆրանսիացի ազնվական շարունակ խնչում էր բռի մեջ, իսկ դա մեր սովորույթների աններելի խախտում է: Մի առիթով պաշտպանելով իր այդ սովորությունը (իսկ նա շատ սրամիտ վիճող էր), նա ինձ հարցրեց, թե ի՞նչ առավելություն ունի մեր այդ կեղտոտ արտաթորանքը մյուսների նկատմամբ, որ հավաքում ենք հիանալի նուրբ գործվածքի մեջ, ծալում և, որ ավելի վատ է, խնամքով պահում մոտներս: Չէ որ այն շատ է զգվելի, և ավելի լավ չի՞ լինի արդյոք թողնենք ուր պատահի, ինչպես վարվում ենք մեր մյուս արտաթորությունների հետ: Ես նրա բառերում գտա որոշ իմաստ և, վարժվելով նկարագրված ձևով նրա քիթ

* Ամսթ չէ՞ արդյոք, որ ֆիզիկոսը, այսինքն՝ բնությունն ուսումնասիրողն ու զննողը, ճշմարտության վկայություններ փնտրի սովորույթով ստրկացած հոգիներում¹¹ (լատ.):

մաքրելուն, դադարեցի ուշադրություն դարձնել այդ բանին, թեև, լսելով նման պատմություններ օտարերկրացիների մասին, մենք դրանք համարում ենք վարշելի:

Եթե անգամ հրաշքներ գոյություն ունեն, ապա սոսկ այն պատճառով, որ մենք բավականաչափ չգիտենք բնությունը, այլ բնավ ոչ նրա համար, թե դա հատուկ է նրան: Սովորությունը բխացնում է մեր դատողությունները: Վայրենիները մեզ համար ավելի մեծ հրաշք չեն, քան մենք նրանց համար, և այդպիսի հիմքեր էլ չկան, դա կընգուներ յուրաքանչյուր ոք, եթե միայն կարողանար, ծանոթանալով մեզ օտար կարգերին, այնուհետև կանգ առնել սովորականների վրա և ողջամտորեն համեմատել դրանք: Չէ որ մեր բանականությունը մոտավորապես միատեսակ է հիմնավորում մեր բոլոր հայացքներն ու բարքերը, ինչպիսին էլ լինի դրանց արտաքին տեսքը (իսկ այն անսահման է իր դրսևերում, անսահմանորեն տարբեր է): Սակայն դառնամ իմ դատողությանը: Կան ժողովուրդներ, որոնց մոտ ոչ ոք, բացի կնոջից ու երեխաներից, իրավունք չունի դիմել թագավորին այլ կերպ, քան ուրիշների միջնորդությամբ: Միևնույն ժողովրդի մոտ կույսերը ցուցադրում են իրենց մարմնի առավել նվիրական մասերը, մինչդեռ ամուսնացած կանայք խնամքով ծածկում ու թաքցնում են դրանք: Որոշ շափով այդ սովորույթի հետ է կապվում նրանց մոտ տարածված ևս մեկը. քանի որ առաքինությունը գնահատվում է միայն ամուսնության մեջ, աղջիկները կարող են տրվել ում ուզենան, և, հղիանալու դեպքում, համապատասխան միջոցներով վիժել, առանց որևէ մեկից թաքնվելու: Բացի այդ, եթե վաճառականն ամուսնանում է, հարսանիք հրավիրված մնալից առաջ բոլոր վաճառականները նրանից առաջ են պառկում նորահարսի հետ, և որքան նրանք շատ լինեն, այնքան հարսի պատիվն ու հարգանքն ավելի մեծ կլինի, քանզի դա համարվում է նրա առողջության և ուժի վերականգնումը. եթե ամուսնանում է պաշտոնյան, նկատվում է նույն բանը, սույնն է նաև ազնվատոհմ անձանց հարսանիքում, և բոլոր մյուսների մոտ, բացի հողագործներից ու ռամիկներից, քանզի այստեղ առաջնություն իրավունքը սենյորինն է, սակայն ամուսնական կյանքում հարկ է պահպանել անբասիր հավատարմություն: Կան ժողովուրդներ, որոնց մոտ կարելի է տեսնել հասարակաց տներ, ուր պահվում են տղաներ և անզամ տեղի են ունենում ամուսնություններ տղամարդկանց միջև, կան երեխաներ, որոնց մոտ կանայք պատերազմ են գնում ամուսինների հետ և ոչ միայն մասնակցում են կռիվներին, այլև երբեմն հրամանատարում են զորքերին: Լինում են ժողովուրդներ, որտեղ օղեր են կրում ոչ միայն քթերին, շուրթերին, այտերին ու ոտքերի բթամատերին, այլև

բավական ծանր ու ոսկե ձողեր են անցկացնում պատկերնորի ու նստատեղերի միջոց: Որտեղ ուտելիս ձեռքերը մաքրում են, քսեղով ազդրերին, ձվապարկերին և ոտնաթաթերին: Որտեղ երեխաները չեն ժառանգում իրենց ծնողներին, ժառանգորդները եղբայրներն ու եղբորորդիներըն են, երբեմն էլ, միայն եղբորորդիները (սակայն դա չի վերաբերում գահաժառանգությանը): Որտեղ սեփականությունն ընդհանուր է և բոլոր գործերի զեկավար են նշանակվում գերագույն իշխանությունք օժտված պաշտոնատար անձինք, որոնք էլ հոգ են տանում հոգը մշակելու և աճեցրած պտուղները, յուրաքանչյուրի կարիքներին համապատասխան բաշխելու մասին: Որտեղ սգում են երեխաների մահն ու տոնում ծերերի մահը: Որտեղ ընդհանուր անկողին են մտնում սառը կամ տասներկու ամուսնական զույգեր: Որտեղ կանայք, որոնց ամուսինները սպանվել են, կարող են մարգու գնալ երկրորդ անգամ, մինչդեռ բոլոր մյուսներին դա արգելված է: Որտեղ կանայք գնահատվում են այնքան ցածր, որ բոլոր նորածին աղջիկներին անզթորեն սպանում են, իսկ իրենց կարիքների համար կանանց գնում են հարեան ժողովուրդներից: Որտեղ ամուսինը կարող է առանց պատճառի բացատրելու թողնել կնոջը, մինչդեռ կինը, ինչպիսի պատճառներ էլ բերի, չի կարող դա անել: Որտեղ ամուսինն իրավունք ունի վաճառել կնոջը, եթե նա չբեր է: Որտեղ հանգուցյալների գիակները եփում են, ապա, արտերևով, ստանում շիլայանման մի բան, որը խառնում են գինուն և հետո խմում այդ ըմպելիքը: Որտեղ ամենացանկալի թաղումը շների, փսի ուրիշ տեղերում՝ թռչունների փայ դառնալն է: Որտեղ հավատում են, թե նրանություն մեջ գտնվող հոգիները լիակատար ազատություն են վայելում, ապրելով սքանչելի դաշտերում և ճաշակելով գանազան հաճույքներ, և թե նրանք են ստեղծում այն արձագանքը, որ մեզ գիճակվում է երբեմն լսել: Որտեղ կոպում են միայն ջրում և, շոգալով, դիպուկ նետ արձակում: Որտեղ, ի նշան հնազանդության, բարձրացնում են ուսերն ու գլուխ տալիս, իսկ մտնելով թագավորական կոցարան, հանում են ոտնամանները: Որտեղ կտրում են կուսակրոն կանանց հակող ներքինիների քիթն ու շրթունքները, որպեսզի հնարավոր չլինի նրանց սիրել, իսկ հոգևորականները, դեերին մերձենալու և նրանց գուշակությունները լսելու համար, հանում են իրենց աչքերը: Որտեղ ամեն ոք աստվածացնում է ուզած բանը. որսորդը՝ առյուծը կամ աղվեսը, ձկնորսը՝ այս կամ այն ձուկը, նրանք կուռք են սարքում մարդկային ամեն մի գործողություն և ամեն մի կիրք, նրանց գլխավոր աստվածներն են՝ արեգակը, լուսինը ու երկիրը, իսկ նրանք նրդվում են, մատը դնելով գետնին և աչքերը հառելով արևին, իսկ միսն ու ձուկն ուտում են հում-հում: Որտեղ ամեն-

նաահեղ ուխտը երկրում բարի համբավ վայելող որևէ հանգուցյալի անունով հորդվելն է, ձեռքը հպելով նրա գերեզմանին: Որտեղ թագավորի ամանորյա նվերն իր օջախի կրակն է, որ ուղարկում է իշխաններին, իր վասալներին, և երբ ժամանում է արքայի կրակաբեր սուրհանդակը, իշխանական պալատում մինչ այդ վառվող բոլոր կրակները պետք է մարեն, իսկ իշխանների հպատակները, նորին մեծությանը վիրավորած չլինելու և շպատովելու համար, պետք է իրենց հերթին նրանցից վերցնեն այդ կրակը: Որտեղ թագավորը, կամենալով ամբողջովին անձնատուր լինել բարեպաշտությանը (իսկ՝ դա նրանց մոտ պատահում է բավական հաճախ), հրաժարվում է դահից, և այդ դեպքում նրա մերձավոր ժառանգորդը պարտավոր է վարվել նույն կերպ, իսկ իշխանությունն անցնում է հաջորդին: Որտեղ հանգամանքների պահանջով փոխում են պետութայն կառավարման ձևը, երբ նրանց անհրաժեշտ է թվում, դահընկեց են անում թագավորին և նրա տեղը նշանակում ավագներին, որպեսզի կառավարեն երկիրը, իսկ երբեմն էլ բոլոր գործերը տնօրինում է համայնքը: Որտեղ և՛ կանայք, և՛ տղամարդիկ թլպատվում են, իսկ դրա հետ միասին՝ նաև մկրտվում: Որտեղ մեկ կամ մի քանի ճակատամարտերից հետո իր տիրակալին թշնամու յոթ կամ ավելի գլուխ բերող զինվորը դասվում է ավագանու շարքը: Որտեղ մարդիկ ապրում են բարբարոստեպան և մեզ համար խիստ անսովոր այն համոզմունքով, թե հոգիները մեռնում են: Որտեղ կանայք ծննդաբերում են առանց հառաչանքի ու վախի: Որտեղ ծնկներին կրում են պղնձե ծնկակալներ, իսկ երբ ոչիլն է կձոտում, նրանք, հետևելով մեծահոգության պարտքին, պարտավոր են իրենց հերթին կծել նրան, աղջիկները շեն համարձակվում ամուսնանալ առանց նախապես իրենց կուսությունն առաջարկելու թագավորին, եթե նա կամենա: Որտեղ բարևում են, մատը դնելով դետին, իսկ ապա պարզելով երկինք: Որտեղ տղամարդիկ ծանրությունները տանում են գլխներին, իսկ կանայք՝ ուսերի վրա, այնտեղ կանայք միտում են կանգնած, տղամարդիկ՝ պպղած: Որտեղ, ի նշան բարեկրամության, ուղարկում են իրենց արյունը և, կարծես հանուն աստծու, խուճկ ծխում այն մարդկանց առջև, որոնց ուղում են մեծարել: Որտեղ ամուսնություններում չի թույլատրվում ոչ միայն մինչև շորրորդ պորտի, այլև շատ հեռավոր ազգակցություն: Որտեղ երեխաներին կրթություն են կերակրում ամբողջ շորս տարի, իսկ հաճախ էլ մինչև տասներկու տարեկանը, սակայն երեխայի համար մահացու վտանգավոր են նամարում կուրծք տալ հենց առաջին օրը: Որտեղ հայրերը պատժում են սպաներին, աղջիկներին պատժելու թողնելով մայրերին, իսկ պատիժն այն է, որ մեղսավորին թեթևակի ծխահարում են, ուսքերից կախելով

օջախի վրա: Որտեղ կանանց թլպատում են: Որտեղ առանց ջոկելու ուտում են իրենց մոտ աճող բոլոր խոտերը, բացի նրանցից, որոնց հոտը դուր չի գալիս իրենց: Որտեղ ոչինչ փակի տակ չէ, և տները, որքան էլ դրանք գեղեցիկ ու հարուստ լինեն, շունեն ոչ մի սողնակ, և այդ տներում շես գտնի կողպվող ոչ մի սնդուկ, իսկ գողին տրվող պատիժը նրանց մոտ կրկնակի անգամ ավելի խիստ է, քան որևէ այլ տեղ: Որտեղ ոչիլը ճրթում են ատամներով, ինչպես կապիկները, և զզվելի են համարում, եթե որևէ մեկն այն ճզմում է եղունգով: Որտեղ երբեք շեն կտրում ոչ մազերը, ոչ եղունգները, ուրիշ տեղերում կտրում են միայն աչ ձեռքի եղունգները, իսկ ձախ ձեռքինը՝ գեղեցկության համար թողնում: Որտեղ թողնում են մազերը (ինչքան էլ դրանք երկարեն) աչ կողմում և սափրում ձախ կողմը: Հարևան երկրներից մեկում մազ են թողնում առջևը, մյուսում, ընդհակառակը՝ հետևը, իսկ առջևը սափրում են: Որտեղ հայրերն իրենց որդիներին, իսկ ամուսինները՝ կանանց տրամադրում են հյուրերին որպես հաճույքի առարկաներ, ստանալով դրա դիմաց վճար: Որտեղ ամոթալի չի համարվում երեխա ունենալ սեփական մորից, նրանց մոտ սովորական բան է, երբ հայրը կենակցում է դստեր կամ որդու հետ: Որտեղ հանդիսավոր տոնակատարությունների ժամանակ զվարճության համար փոխանակում են իրենց երեխաները:

Այստեղ սնվում են մարդու մսով, այնտեղ՝ հարգող որդին պարտավոր է սպանել որոշ տարիքի հասած հորը, մեկ այլ տեղում հայրերը վճռում են տակավին մոր արգանդում գտնվող երեխայի բախտը՝ պահպանել նրա կյանքն ու դաստիարակել կամ, ընդհակառակը, թողնել առանց խնամքի ու սպանել, էլի մի ուրիշ տեղում զառամյալ ամուսիններն իրենց կանանց առաջարկում են պատանիներին, որ ծառայություն մատուցեն, լինում է նաև, երբ կանայք համարվում են ընդհանուր, և դրանում ոչ ոք մեղք չի տեսնում, կա նույնիսկ մի երկիր, ուր կանայք որպես տարբերանշան հագուստի փեշին կրում են այնքան շքեղազարդ ծոպեր, որքան տղամարդ են ունեցել իրենց կյանքում: Սովորույթը չէ՞ր, որ կանանց հատուկ պետություն ծնեց: Նա չէ՞ր, որ զենք տվեց կանանց ձեռքը: Նա չէ՞ր, որ կանանց գումարտակ կազմեց և տարավ մարտի: Եվ սովորույթը չէ՞ արդյոք, որ իր զորությամբ ամենախավարամիտ ու միկին ներշնչում է այն, ինչ փիլիսոփայությունն անկարող է մտցնել ամենախիմաստուն գլուխները: Մենք հո գիտենք այնպիսի ժողովուրդներ, որոնք ոչ միայն արհամարհում են մահը, այլ անգամ ուրախությամբ են ընդունում այն, ժողովուրդներ, որոնց մոտ յոթնամյա երեխաները թողնում են մահածեծ անել իրենց և նույնիսկ շեն գունատվում, ուր այնպես են խորշում հարստությունից, որ ամենաընչազուրկ քաղաքացին իր ար-

ժանապատվութիւնից ցածր կհամարեր մեկնել ձեռքը, բարձրացնելու համար ոսկով չի քսակը: Մեզ հայտնի են նաև շատ բարելի և ամեն տեսակ ուտելեղենով առատ վայրեր, ուր, այնուհանդերձ, սովորական և ամենահամեղ սնունդը համարում են հացը, վայրի սալաթն ու շուրը:

Սովորույթը շէ՞ր, որ հրաշք գործեց Քիոս կղզում, ուր ամբողջ յոթ հարյուր տարի շին հիշում մի դեպք, որ մի կին կամ աղջիկ կորցրած լինի ողջախոհութիւնը:

Կարճ ասած, որքան կարող եմ պատկերացնել, չկա մի բան, որ նա չկարողանար անել, չկարողանար ստեղծել, և եթե Պինդարոսը, ինչպես ինձ հայտնել են, նրան հորջորջել է «աշխարհի տերն ու տիրակալը»¹³, ապա ունեցել է բոլոր հիմքերը:

Մի մարդ, որին տեսան սեփական հորը ծեծելիս, պատասխանեց, թե այդպիսին է իրենց տոհմում ընդունված սովորույթը, թե հայրը նույնպես երբեմն դնգստում էր պապին, իսկ պապն, իր հերթին՝ նախապապին, և, ցույց տալով իր որդուն, ավելացրեց. «Իսկ սա, հասնելով իմ տարիքին, նույն բանը կանի ինձ»:

Եվ երբ որդին հորը բռնած իր հետևից քարշ էր տալիս փողոցով, նա հրամայեց կանգ առնել մի դռան մոտ, քանզի, իր ասելով, ինքը երբեք իր հորն ավելի հեռու չի տարել, այստեղ էր այն սահմանագիծը, որ, դեկավարվելով ժառանգած ընտանեկան սովորույթով, երեխաները երբեք չէին անցնում, երբ քարշ էին տալիս իրենց հայրերին, հիշոցներ թափելով նրանց հասցեին: Ըստ սովորույթի, նույնքան հաճախ, որքան հիվանդանալիս, ասում է Արիստոտելը, կանայք պոկում են իրենց մադերը, կրծում եղունգները, հող ու ածուխ ուտում¹⁴, և ավելի շուտ դարձյալ արմատավորված սովորույթի համաձայն, քան հետևելով բնական հակումներին, տղամարդիկ կենակցում են տղամարդկանց հետ:

Բարոյական օրենքները, որոնց մասին ընդունված է ասել, թե դրանք ծնել է հենց բնութիւնը, իրականում արգասիք են նույն սովորույթի, ամեն ոք, ներքուստ հարգելով համընդհանուր տարածում գտած և բոլորի հավանութեանն արժանացած հայացքներն ու բարքերը, չի կարող առանց խղճի խայթի հրաժարվել դրանցից, կամ, հետևելով դրանց, չգովել իրեն:

Կրետեի բնակիչները նախկինում, կամենալով անիծել որևէ մեկին, աղոթում էին աստվածներին, որ մի վատ սովորութիւն առաքի նրան:

Սակայն սովորութեան զորութիւնը հատկապես ակնհայտորեն երևում է հետևյալում. նա այնպես է մեզ կաշկանդում ու ենթարկում իրեն, որ մեծ դժվարութեամբ է միայն մեզ հաջողվում ձերբազատվել այդ ազ-

դեցությունից ու վերադարձնել նրա կանոնները զննելու և քննարկելու համար անհրաժեշտ մեր անկախությունը: Արդարև, քանի որ մենք դրանք ընդունում ենք մայրական կաթի հետ և մեր առաջին իսկ հայացքին աշխարհը հառնում է այնպիսին, ինչպիսին դրանք են պատկերում, մեզ թվում է, թե բուն ծնունդով մենք կոչված ենք ընթանալու նույն ճանապարհով: Եվ քանզի համատարած այդ պատկերացումները, որոնք բաժանում են բոլորը, մենք յուրացրել ենք հայրական սերմի հետ, դրանք մեզ թվում են համընդհանուր ու ընական:

Այստեղից էլ բխում է, որ բոլոր շեղումները սովորույթից, անխոհեմաբար (և լուկ ասածուն է հայտնի, թե, մեծ մասամբ, որքանով) համարվում են շեղումներ բանականությունից: Եթե ուրիշներն էլ մեզ նման, ուսումնասիրելին իրենց և անեին նույն բանը, ինչ մենք, ամեն մարդ, լսելով որևէ մի իմաստուն ասույթ, կաշխատեի անմիջապես հասկանալ, թե որքանով է դա կիրառելի իր նկատմամբ, և այդժամ նա կհասկանար, որ դա ոչ թե սոսկ դիպուկ խոսք է, այլև մտրակի դիպուկ հարված նրա սովորական դատողությունների հիմարությանը: Սակայն ամեն մի մարդ կամենում է այս խորհուրդներն ու ճշմարտության օրենքներն ընկալել որպես դիմում առհասարակ մարդկանց, այլ ոչ թե անձամբ իրեն, և, փոխանակ սեփական քարքերի նկատմամբ կիրառելու, դրանք ամբարում է հիշողության մեջ, իսկ դա միանգամայն անհեթեթ ու անօգուտ զբաղմունք է: Վերադառնանք, սակայն, սովորույթի բնագատությանը:

Ազատության մեջ դաստիարակված և ինքնահառաժարման սովոր ժողովուրդները կառավարման ցանկացած այլ ձև համարում են ինչ-որ հակաբնական ու հրեշավոր բան: Նրանք, ովքեր սովոր են միապետության, վարվում են ճիշտ նույն կերպ: Եվ պետական կարգը փոխելու ինչպիսի հարմար առիթ էլ ճակատագիրն ընձեռի, անգամ այն ժամանակ, երբ նրանք մեծագույն դժվարությամբ ազատվել են որևէ անտանելի տիրակալից, անապարում են նրա տեղը նստեցնել ուրիշին, քանզի շեն համարձակվում ատել ստրկացումը¹⁵:

Մի անգամ Դարեհը մի քանի հույների հարցրեց, թե ինչ պարզևով կհամաձայնեին յուրացնել իրենց հանգուցյալ հայրերին ուտելու հնդիկների սովորույթը (քանզի դա նրանց մոտ ընդունված էր, որովհետև նրանք գտնում էին, թե շկա թաղվելու ավելի լավ տեղ, քան իրենց մերձավորների փորը), հույները պատասխանեցին, որ աշխարհի ոչ մի բարիքի դիմաց դա չէին ուզի: Բայց երբ Դարեհը փորձեց հնդիկներին համոզել, որ հրաժարվեն թաղման իրենց եղանակից և փոխառեն մեռած հայրերին խարույկի վրա այրելու հույների ձևը, նրանց սարսափը եղավ

ավելի ուժգին, քան հույներինը: Եվ մեզանից յուրաքանչյուրն անում է նույնը, զի սովորությունը պատնեշում է իրերի իսկական տեսքը,

Nil adeo magnum, nec tam mirabile quicquam
Principio, quod non minuant mirarier omnes
Paulatim*.

Ժամանակին, ցանկանալով հաստատել շատերի կողմից անառարկելի համարվող բավական տարածված մեր մի կարծիք և, ինչպես հաճախ արվում է, շոտհանալով օրենքները ու համապատասխան օրինակների պարզ վկայակոչումով, այլ, ինչպես միշտ, ձգտելով հասնել բուն արմատին, ես, որ խնդիր էի դրել ուրիշներին համոզելու, թե այն ճիշտ է, նրա հիմքերը գտա այնքան խախուտ, որ քիչ մնաց ինքս հրաժարվեի նրանից:

Ահա այն միջոցը, որ Պլատոնը, ձգտելով արմատախիլ անել սիրո այն ժամանակ տարածում գտած հակաբնական ձևերը, համարում է ամենակարող ու հիմնական. հասնել այն բանին, որ հասարակական կարծիքը վճռականորեն գատապարտի, բանաստեղծները նշավակեն, ամեն մարդ ծաղրի դրանք: Մենք հենց այս միջոցին ենք պարտական, որ ամենասիրուն դուստրերն այլևս չեն բորբոքում հայրերի կրքերը, իսկ եղբայրները (ինչպիսի բացառիկ գեղեցկությամբ էլ աչքի ընկնեն)՝ քույրերինը, և նույնիսկ Թիեստեսի, էդիպի, Մակարեոսի մասին ավանդազրույցներն իրենց սքանչելի առղերի պատճառած հաճույքի հետ մեկտեղ, Պլատոնի կարծիքով, մանկական ճկուն ուղեղում ամրապնդում են այդ օգտակար նախազգուշացումը¹⁷:

Հարկավոր է ճիշտն ասել, ողջախոհությունը հիանալի առաքինություն է, և թե որքան մեծ է նրա օգուտը՝ հայտնի է յուրաքանչյուրին, սակայն ողջախոհություն ներարկելն ու այն պահպանել հարկադրելը, հենվելով բնության վրա, նույնքան դժվար է, որքան հեշտ է այն պահպանելը, հենվելով սովորույթի, օրենքների և կանոնների վրա: Նախասկզբնական ու համընդհանուր ճշմարտությունները հիմնավորելն այնքան էլ դյուրին չէ: Եվ մեր ուսուցիչները, մնալով մակերեսին, շտապում են հեռանալ կամ, մինչև իսկ չհամարձակվելով շոշափել այդ հարցերը, անմիջապես ապաստան են որոնում սովորույթի հովանու տակ, որտեղ փրվում են իրենց համակող գոռոզությունից ու ցնձում: Իսկ նրանք, ովքեր չեն ուզում քաղել ոչ մի տեղից, բացի սկզբնաղբյուրից, այսինքն՝

... 3

* Զկա մի բան, ինչքան էլ առաջին հայացքից այն թվա մեծ ու զմայլիչ, որին չվիսեն աստիճանաբար նայել ավելի պակաս զարմանքով¹⁶ (լատ.):

բնությունից, ավելի են մոլորվում և արտահայտում են անհեթեթ կարծիքներ, ինչպես, օրինակ, Քրիստիանոսը¹⁸, որն իր ստեղծագործություններում բազմիցս ցույց է տվել, թե ինչպիսի ներողամտությամբ է վերաբերվել արյունապղծիչ կապերին, որպիսիք էլ դրանք լինեին: Նա, ով կցանկանա ազատվել սովորույթի ամենազոր նախապաշարումներից, կգտնի բավական շատ բաներ, որոնք կարծես կասկած չեն հարուցում, բայց, ընդամին, շունեն այլ հենարան, քան վաղուց արմատավորված պատկերացումների կնճիռներն ու ալեհերքը: Իսկ դիմակազերծելով նման բաները և համեմատելով դրանք ճշմարտության ու բանականության հետ, այդպիսի մարդը կզգա, որ, թեև իր նախկին կարծիքները տապալվել են, բայց, այնուամենայնիվ, իր ինքնավստահությունն ավելացել է: Եվ այնժամ, օրինակ, ես նրան կհարցնեմ, թե հնարավո՞ր է արդյոք մի ավելի զարմանալի բան, քան այն, ինչ մեր առջև շարունակ տեսնում ենք, այսինքն՝ որ մի ամբողջ ժողովուրդ պետք է ենթարկվի այնպիսի օրենքների, որոնք միշտ իր համար եղել են հանելուկ, որ իր ընտանեկան բոլոր գործերում՝ ամուսնություններում, նվիրատվություններում, կտակներ կազմելիս, գնում, վաճառք կատարելիս նա կաշկանդված է այնպիսի կանոններով, որոնք անկարող է իմանալ, քանզի կազմված ու հրապարակված են ոչ իր լեզվով¹⁹, ուստի դրանց բացատրությունն ու պատշաճ կիրառումը ստիպված է գնել փողով: Այս ամենը բնավ նման չէ այն Իստիքատեսի սրամիտ առաջարկությանը, որն իր տիրակալին խորհուրդ է տալիս հպատակներին ընձեռել ազատ, շահավետ ու անարգել առևտուր անելու հնարավորություն, բայց, դրա հետ մեկտեղ, մեծ մաքսատուրքեր դնելով, նրանց համար սնանկացուցիչ դարձնել վեճերն ու զժտությունները²⁰, և միանգամայն համապատասխանում է այն հրեշավոր հայացքներին, ըստ որոնց մարդկային բանականությունն անգամ առևտրի առարկա է, իսկ օրենքները՝ շուկայական ապրանք: Եվ ես անսահմանորեն շնորհակալ եմ ճակատագրին, որ, մեր պատմագիրների ասելով, մեզ մոտ հոռմեական ու կայսերական իրավունք մտցնելու Կարլոս Մեծի մտադրությանն առաջինը հակառակվել է գասկոնցի մի ազնվական, իմ հայրենակիցը²¹: Կա արդյոք ավելի վայրագ բան, քան տեսնել մի ժողովուրդ, որի մոտ օրենքով սրբազորված սովորույթի համաձայն դատական պաշտոնները վաճառվում են²², իսկ դատավճիռները վճարվում են հնչուն դրամով, ուր, դարձյալ միանգամայն օրինավոր կերպով, արդարադատությունը չի գործում այն մարդկանց օգտին, ովքեր վճարելու բան չունեն, որ այդ առևտուրն ընդունում է այնպիսի շափեր, որ պետության մեջ, ի լրումն եղած հրեք դասերի՝ եկեղեցու, ազնվականության ու հասարակ ժողովրդի, ավելա-

նում է նաև շորրորդը, որը բաղկացած է նրանցից, ովքեր տնօրինում են դատարանը, այս վերջինը, հոգալով օրենքների մասին և ինքնիշխան տնօրինելով քաղաքացիների կյանքն ու ունեցվածքը, ազնվականության պես, կազմում է ինչ-որ մեկուսախումբ: Այստեղից էլ գոյանում է շատ բաներում իրար հակասող օրենքների երկու տեսակ. պատվի օրենքներ և օրենքներ, որոնց վրա հենված է արդարադատությունը: Առաջիններն, օրինակ, խստորեն դատապարտում են նրան, ով, մեղադրվելով խաբեության մեջ, տանում է նման մեղադրանքը, մինչդեռ երկրորդները դատապարտում են դրա համար վրեժ առնողին: Ասպետական զենքի օրենքներով, եթե որևէ մեկը վիրավորանք է հանդուրժում, զրկվում է պատվից և ազնվականի արժանապատվությունից, այնինչ քաղաքացիական օրենքներով՝ վրեժ լուծողը ենթակա է քրեական պատժի: Կնշանակի նա, ով իր վիրավորված պատիվը պաշտպանելու համար դիմում է օրենքին, պատվազրկում է իրեն, իսկ ով չի դիմում, նրան օրենքը հետապնդում և պատժում է: Եվ միթե իսկապես մեծագույն վայրագություն չէ, որ միանգամայն տարբեր, սակայն միևնույն տիրակալին ենթակա այդ երկու դասերից մեկը մտածում է պատերազմի մասին, մյուսը հոգ է տանում խաղաղության մասին, մեկի բախտաբաժինը շահն է, մյուսինը՝ պատիվը, մեկինը՝ գիտունությունն է, մյուսինը՝ քաջությունը, մեկինը՝ խոսքն է, մյուսինը՝ գործը, մեկինն՝ արդարությունն է, մյուսինը՝ խիզախությունը, մեկինը՝ խելքն է, մյուսինը՝ ուժը, մեկինը երկարափեշ պատմուճանն է, մյուսինը՝ կարճ բաճկոնը: —

Ինչ վերաբերում է նվազ կարևոր բաներին, ինչպես, օրինակ, մեր սոգուստին, ապա նրան, ով կմտածեր այն համապատասխանեցնել իր իսկական նպատակին, այսինքն՝ ծառայել մեր մարմնին և լինել հնարավորին շափ հարմար (ինչով պայմանավորվել է հագուստի ղեկեղևությունն ու վայելչությունը նրա երևան դալու ժամանակ), ես ցույց կտամ լավ այն՝ հիրավի ամենահրեշավոր բաները, որ, իմ կարծիքով, կարելի է պատկերացնել, և, մնացածների թվում, մեր քառակուսի գլխարկները, մեր կանանց գլխից կախ ընկած այս երկար, թավշե ծալավոր պոչը, որը, բացի այդ, խայտաբղետ վարդակարեր ունի, և, վերջապես, անիմաստ ու անօգուտ նմանությունն այն օրդանի, որի տնունն, առանց անպարկեշտության, չենք կարող տալ, և որի ընդօրինակությունը, այն էլ զղեստի ամբողջ շուքով, այնուամենայնիվ ցուցադրում ենք բոլոր ազնվի մարդկանց: Այս նկատառումները, սակայն, խելամիտ մարդուն հետ չեն պահում ընդունված մոդային հետևելուց, ավելին, թեպետ ինձ թվում է, որ մեր հագուստի ձևի բոլոր հնարանքներն ու տարօրինակություններն արգասիք են ավելի շուտ խելացնորության ու ամբարտավանության,

քան իսկական նպատակահարմարության, և իմաստուն մարդը պետք է ներքուստ իր հոգին զերծ պահի ամեն տեսակ ճնշումից, պահպանելու համար նրա ազատությունն ու ամեն ինչի մասին անբռնազբոս դատելու հնարավորությունը, այնուամենայնիվ, երբ խոսքն արտաքինի մասին է, նա ստիպված է խստիվ հետևել ընդունված կանոններին ու ձևերին: Հասարակությունն ամենևին գործ չունի մեր հայացքների հետ, սակայն մնացած ամեն ինչը՝ մեր գործունեությունը, մեր աշխատանքը մեր կարողությունն ու բուն կյանքը հարկավոր է դնել նրան ի սպաս հանձնել նրա դատին, ինչպես վարվեց քաջարի ու մեծն Սոկրատեսը, հրաժարվելով փրկել իր կյանքը, լուկ այն հիմունքով, թե դա կլիներ անհնազանդություն թեկուզև շատ անիրավ ու աշուու իշխանությանը: Քանզի կանոնների կանոնն ու օրենքների զլխավորագույն օրենքն այն է, որ ամեն ոք պարտավոր է ենթարկվել այն երկրի օրենքներին, որում ապրում է:

Νόμοις ἔπειθα: τοῖσιν ἐγγυρσίω καλόν*.

Ահա մեկ այլ բան: Շատ տարակուսելի է, թե կարող է արդյոք գործող օրենքի փոփոխությունը, ինչպիսին էլ այն լինի, բերել այնպիսի ակնհայտ օգուտ, որ գերազանցի դրանից գոյացող շարիքը, ախր պետությունը կարելի է որոշ առումով նմանեցնել փոխադարձ կապ ունեցող առանձին մասերից բաղկացած շինության, ուստի հնարավոր թեկուզ թեթևակիորեն տեղաշարժել նույնիսկ դրանցից մեկը, առան ազդելու ամբողջի վրա: Ֆուրիացիների օրենսդիրը հրամայել էր, որ հի օրենքներից մեկնումեկը շեղյալ հայտարարելու կամ նորը գործողության մեջ դնելու ձգտում ունեցող յուրաքանչյուր ոք պարանք վզին դուրս դաժողովրդի առաջ, և, եթե նրա առաջարկած նորույթը միաձայն հավանություն չէր գտնում, նա տեղնուտեղը խեղդամահ էր արվում²⁴: Իսկ լուկեղեմսնացիների օրենսդիրն²⁵ իր ամբողջ կյանքը նվիրեց այն բանի, որ համաքաղաքացիներից հաստատ խոստում առնե, թե իր օրենքները ոչ մեկը չեն վերացնի: Էքորոսը, որն այդպես անգթորեն կտրեց Թրին սոսի հրաժշտական գործիքին²⁶ նրա ավելացրած երկու նոր լարերը, առջև հարց չէր դնում, թե արդյոք Թրինիսոսը լավացրել էր գործիքն, հարստացրել ակորդները, որպեսզի դատապարտեր այդ նորույթը, նր համար բավական էր հին, սովորական նմուշի փոփոխությունը, նոր բանն էր հշտնակում նաև արդարադատության հին ժանգոտած սուրբ որը խնամքով պահվում էր Վարսելում:

* Սրանչևի է, երբ ենթարկվում ես երկրիդ օրենքներին²³ (հուն.):

Ես հիասթափվել եմ ամեն տեսակ նորույթներից, ինչ տեսքով էլ դրանք մեզ ներկայանան, և դրա համար ունեմ բոլոր հիմքերը, քանզի տեսել եմ, թե ինչպիսի կործանարար հետևանքներ են ունենում այդ նորույթները: Ճիշտ է, այն մեկը, որն արդեն քանի տարի է տանջում է մեզ, անմիջական պատճառը չէր ամբողջ տեղի ունեցածի, բայց և այնպես, կարելի է վստահորեն ասել, որ հանգամանքների ցավալի դուզապիպումով, հենց նա էր պատճառն ու արմատն ամեն ինչի, նույնիսկ այն աղետների ու սարսափների, որ առանց նրա մասնակցության և հակառակ նրա տեղի են ունենում առ այսօր²⁸: Ուստի թող նա իրեն մեղադրի:

Heul patior telis vulnera facta meis*.

Պետական կարգը խարխլողներն ամենից հաճախ իրենք են առաջինը կործանվում, երբ այն տապալվում է: Խոսվության պտուղները երբևէ չեն հասնում նրան, ով այն սերմանել է, նա միայն ծփել ու պղտորել է ջուրը, իսկ ձուկն արդեն ուրիշները կորսան: Քանի որ հիշյալ նորույթը սասանեց մեր միապետության ամբողջությունն ու միասնությունը, և նրա մեծաշուք շենքը թուլացավ ու սկսեց քայքայվել, և քանի որ դա, ի լրումն, տեղի ունեցավ նրա ծեր տարիքում, նրանում գոյացան բողբոջավիճակներ ու խոռոչներ, որոնք կարծես դարպասներ ծառայեցին նշված աղետների համար: Մի հին գրող ասում է, թե տիրակալի մեծությունն ավելի դժվար է տապալել զագաթից մինչև կեսը, քան կեփից մինչև հիմքը:

Սակայն, եթե նախաձեռնողներն ավելի մեծ վնաս են հասցնում, բուն նմանակողները, այնուամենայնիվ, վերջիններն առաջիններից հանցավոր են, երբ հետևում են այն օրինակներին, որոնց շարիքն ու սարսափն իրենք են զգացել ու պատժել: Եվ անգամ եթե շարագործությունները որոշ փառք են բերում, ապա առաջինները երկրորդների նկատմամբ ունեն այն առավելությունը, որ նախաձեռնության բուն միտքն ու հանդգնությունը հենց նրանցն է:

Նորագույն անկարգությունների բոլոր ձևերը պետական կարգը սասանելու օրինակներն ու խրատները հեշտությամբ վերցնում են այդ գրված խոսքերից ու անսպառ աղբյուրից³⁰: Նախասկզբնական այդ շարիքը խոսիանելու նպատակով ստեղծված մեր օրենքներում իսկ կարելի է գտնել ամեն տեսակ շարագործությունների խրատներ և դրանք արդարացինելու փորձեր: Այժմ մեզ հետ կառարվում է այն, ինչի մասին խո-

* Ավա՛ղ, ես տառապում եմ իմ սեփական զինքով հասցրած վերքերից²⁹ (լատ.):

սում է Թուկիդիդեսը³¹, պատմելով իր ժամանակվա քաղաքացիական պատերազմների մասին, այն ժամանակ, հաճոյանալով հասարակութեան արատներին և փորձելով դրանց արդարացում գտնել, դրանք կոչում էին ոչ թե իրենց իսկական անուններով, այլ, աղավաղելով ու մեղմացնելով վերջիններս, որակում էին նոր և ավելի պակաս սրութուն ունեցող բաներով: Եվ այդպիսով ուզում են ազդել մեր խղճի վրա, ուղղել մեր հայացքները: Honesta ratio est*. Սակայն որքան էլ պատրվակը հարմար լինի, այնուամենայնիվ, ամեն մի նորույթ հղի է վտանգներով. adeo nihil motum ex antiquo probabile est**.

Անկեղծ ասած, ինձ թվում է, թե չափից ավելի ինքնասիրութուն և մեծագույն ինքնահավանութուն է, երբ հայացքներդ դասում ես այնքան բարձր, որ հանուն դրանց հաղթանակի կանգ չես առնում հասարակական անդորրութեան խախտման, այնպիսի անխուսափելի աղետների և բարքերի զարհուրելի անկման առջև, որոնք իրենց հետ բերում են քաղաքացիական պատերազմները, պետական կարգի փոփոխման առջև, որն ունենում է խիստ զգալի հետևանքներ, և, ի լրումն, այդ ամենն անուանես քո սեփական երկրում: Եվ չի՞ սխալվում արդյոք նա, ով, ըստ էութեան, վիճելի ու կասկածելի թերութուններն արմատախիլ անելու համար ազատութուն է տալիս այդ բացահայտ և բոլորին հայտնի արատներին: Եվ կա՞ն արդյոք ավելի վատ արատներ, քան նրանք, որ անհանդուրժելի են սեփական խղճի ու առողջ դատողութեան համար³⁴:

Քրմական պաշտոնների բաշխման կապակցությամբ ժողովրդի հեղձութեան թեժ պահին Հոմերի սենատը որոշեց դիմել մի այսպիսի խորամանկութեան. Ad deos id magis quam ad se, pertinere: ipsos visuros ne sacra supolluantur***. —

ընդօրինակելով հույն-պարսկական պատերազմների ժամանակ Դելփի բնակիչներին պատգամախոսի տված պատասխանին: Երկյուղելով պարսիկների ներխուժումից, դելփիցիները դիմեցին Ապոլոնին, հարցնելով թե ինչ անեն նրա տաճարի սրբութունները՝ թաքցնեն ինչ-որ տեղ, թողուրս տանեն: Նա պատասխանեց, որ ոչ մի բանի ձեռք չտան. թե

* Պատրվակը հարմար է³² (լատ.):

** Չի կարելի հավանութուն առ հնութուններից շեղվելուն³³ (լատ.):

*** Դա ավելի շատ վերաբերում է աստվածներին, քան նրանց, աստվածներն իրենց կհոգան, որ չպղծվեն իրենց սրբութունները³⁵ (լատ.):

նրանք հոգ տանեն իրենց մասին, իսկ ինքը կկարողանա պաշտպանել իր սեփականությունը:

Քրիստոսնեից կրոնն ունի առավել արդար և օգտակար դավանաբանություն րուր հատկանիշները, սակայն ոչինչն այդ մասին չի վկայում այնպես, ինչպես իշխանություններին հնազանդվելու և գոյություն ունեցող պետական կարգը պահպանելու վերաբերյալ նրանում միանգամայն որոշակիորեն արտահայտված պահանջը: Ինչպիսի՞ ապշեցուցիչ օրինակ է թողել մեզ խորիմաստությունն աստծո, որը, ձգտելով փրկել մարդկային ցեղը և պանծալի հաղթանակ տանել մահվան ու մեղքի նկատմամբ, կամեցավ դա կատարել ոչ այլ կերպ, քան հենվելով մեր հասարակական կառուցվածքի վրա և այդ մեծ ու բարեգութ նպատակի իրականացումն ու կենսագործումը կախման մեջ դնելով մեր կույր ու մեղավոր սովորություններից ու հայացքներից, դրանով իսկ, թույլ տալով, որ թափվի իր բազմաթիվ սիրասուն զավակների անմեղ արյունը, հաշտվելով այդ անգին պտղի հասունացման վրա երկար տարիների կորստյան հետ:

Մի ամբողջ անդունդ կա իր երկրի սովորություններին ու օրենքներին ենթարկվողի և այն մարդու միջև, ով ջանում է վեր կանգնել դրանցից ու նորերով փոխարինել: Առաջինն արդարանում է, վկայակոչելով իր պարզասրտությունը, հնազանդությունը, ինչպես նաև ուրիշների օրինակը, ինչ էլ որ նա անի, դա կլինի ոչ թե կանխամտածված շարիք, այլ, վատագույն դեպքում՝ սոսկ դժբախտություն: *Quis est enim qui non viveat clarissimis monumentis testata consignataque antiquitate?*³⁷

Բացի այդ, ինչպես ասում է Իստկրատեսը, թերալրումն ավելի մոտ է շափավորությանը, քան գերալրումը³⁷: Երկրորդն արդարացիելը շատ ավելի դժվար է:

Քանզի, ով հանձն է առնում ընտրելու և փոփոխություններ մտցնելու գործը, նա յուրացնում է դատելու իրավունքը, ուստի պետք է միանգամայն վստահ լինի, որ իր վերացրածը սխալ էր և մտցրածն՝ օգտակար: Հենց այս պարզ ըմբռնումն էլ ինձ ստիպեց մնալ անմասն. նույնիսկ պատանեկությանս (իսկ այն շատ ավելի հանդուգն էր) օրերին ես չստոն էի դարձրել ուժերիցս վեր բեռ չբարդել ուսերիս, շտանձնել այդպիսի բացառիկ կարևորություն ունեցող վճիռներ կայացնելու պատասխանատվությունը, շամարձակվել անելու այն, ինչը, կշոտդատելով

³⁷ Կգտնվի՞ արդյոք մեկը, որի վրա ապավորություն չի թողնում բազում հիանալի արձաններով վկայված ու հավաստված հին աշխարհը³⁶ (լատ.):

ողջամտորեն, չէի համարձակվի անել անգամ ինձ սովորեցրած առավել պարզ բաներում, թեպետ, վերջին դեպքում համարձակ դատողությունները չէին կարող ոչ մի բանի վնասել: Ինձ վերին աստիճանի անարդարացի է թվում, երբ ձգտում են կայունացած հասարակական կանոններն ու սահմանադրումները ենթարկել մասնավոր կամայականության փոփոխականությանը (քանզի մասնավոր բանականությունն ունի միայն մասնավոր իրավագործություն) և, առավել ևս, աստվածային օրենքների դեմ ձեռնարկել այն, ինչն աշխարհի ոչ մի իշխանություն չէր հանդուրժի քաղաքացիական օրենքների նկատմամբ, որոնք, թեև ավելի մատչելի են մարդկային մտքին, բայց և այնպես գերագույն դատավորներն են իրենց դատավորների, առավելագույնը, որ մենք կարող ենք անել արդեն ընդունվածը բացատրելն ու լայն կիրառում տալն է, սակայն բնավ ոչ այն վերացնելն ու նորով փոխարինելը: Եթե աստվածային նախախնամությունը երբեմն նաև զանց է տանել այն կանոնները, որոնցով ըստ անհրաժեշտության սահմաններ է դրել մեր առջև, ապա բնավ ոչ այն բանի համար, որ ազատի մեզ դրանց ենթարկվելուց: Դրանք աստծո աջի հրամայական շարժումներն են, և մենք պետք է ոչ թե ընդօրինակենք, այլ զմայլվենք դրանցով, դրանք առանձնահատուկ դիտավորության պարզ արտահայտված կնիք կրող բացառիկ դեպքեր են, հրաշքներ, որոնք մեզ ցույց են տրվում որպես նրա ամենագործության վկայություն և գերազանցում են մեր ուժերն ու հնարավորությունները, նման բան վերարտադրելու ջանք թափելը կլինի խելագարություն և սրբապղծություն, մենք պետք է ոչ թե կրկնենք, այլ սրտի զոզով հայեցողականք: Դրանք գործողություններ են, որ մատչելի են աստծուն, բայց ոչ մեզ:

Այստեղ միանգամայն տեղին է բերել Կոտտայի բառերը. Cum de regione agitur T. Coruncanium, P. Scipionem, P. Scaevolam, pontifices maximos, et Zenonem aut Cleanthem aut Chrysippum, sequor*.

Ներկայումս մենք երկպառակության մեջ ենք. խոսքն ամբողջ հայտարար կարևոր ու նշանակալից դոգմաներ վերացնելու և նորերով փոխարինելու մասին է, իսկ արդյոք շատ մարդիկ կզանվեն, որ կարողանա պարծենալ, թե իրենց մանրամասնորեն հայտնի են ինչպես մի, այնպես էլ մյուս կողմի փաստարկներն ու հիմքերը: Նրանց թիվն այնքաննշան է (եթե միայն կարելի է իսկապես դա թիվ անվանել), որ նրա

* Երբ բանը վերաբերում է կրոնին, ես հետևում եմ Տ. Կորունկանիոսին, Պ. Սկիպիոնին, Պ. Սցևոլային, գերագույն քրմերին, այլ ոչ թե Ջենոնին, Կլեանթեսին և Կրիստիպոսին³⁸ (լատ.):

չէին կարող խռովութիւն սերմանել մեր միջև: Սակայն ո՞ւր է ընթանում մնացած ողջ խառնամբոխը: Ի՞նչ դրոշի ներքո են առաջ տրանում հարձակվողները: Այստեղ տեղի է ունենում նույն բանը, ինչ թույլ, անհաջող կերպով դեզ ընդունելիս. հանդիպելով օրգանիզմի վնասակար հյութերին, որոնք դեզը պետք է արտամղեր, իրականում, միայն ակտիվացնում, ուժեղացնում ու գրգռում է դրանք, իսկ ապա, գործելով այդ բոլոր շարիքները, մնում է մարմնում: Իր թուլութեան պատճառով այն չի կորոզանում փրկել մեզ հիվանդութիւններից և, Քրա հետ մեկտեղ, մեզ այնքան է հյուժում, որ ի վիճակի չենք լինում ազատվել նրանից, նրա ազդեցութիւնն արտահայտվում է լոկ այն բանով, որ մեզ տանջում են ներքին անվերջանալի ցավերը:

Սակայն, լինում է նաև, երբ ճակատագիրը, որի գորութիւնը միշտ դերազանցում է մեր կանխատեսումը, մեզ դնում է այնպիսի ծանր կացութեան մեջ, որ օրենքները ստիպված են լինում փոքր ինչ նահանջել ու որոշ զիջողութիւն անել: Եվ եթե, դիմագրելով այն նորի աճին, որը ձգտում է բռնի ուժով հարթել իր ճանապարհը, միշտ և ամեն ինչում գսպես քեզ ու խստորեն պահպանես սահմանված կանոնները, ապա նման ինքնասահմանափակումը սխալ ու վտանգավոր է տոյն մարդու դեմ պայքարելիս, ով ունի գործողութիւնների ազատութիւն, ում համար թույլատրելի է բացարձակապես ամեն ինչ, միայն թե դա օգուտ բերի իր դիտավորութիւններին, ով չի նանաչում ոչ ուրիշ օրենք, ոչ ուրիշ մղումներ, բացի նրանցից, որոնք շահ են խոտտանում. *Aditum non dicitur perfido praestat fides**.

Սակայն չէ որ կատարելապես առողջ պետութեան սովորական իրավակարգը չի նախատեսում նման բացառիկ դեպքեր. այն ենթադրում է սեփական գլխավոր հիմքերի վրա հենվող և իր պարտականութիւնները կատարող կարգավորված համակեցութիւն, ինչպես նաև այն պահպանելու և նրան ենթարկվելու բոլորի համաձայնութիւնը: Գործել, հետեւելով օրենքին, նշանակում է՝ գործել հանգիստ, համաշափ, զուսպ, իսկ դա բնավ էլ այն չէ, ինչ պահանջվում է անկարգ ու սանձազերծ գործողութիւնների դեմ պայքարելիս:

Հայտնի է, որ երկու մեծ պետական գործիչներ Օկտավիոսին ու Կատոնին առ այսօր պարսավում են, թե առաջինը Սուլլայի, իսկ երկրորդը՝ Կեսարի դեմ քաղաքացիական պատերազմում պարտաստ էլին ավելի քան ծայրահեղ վտանգների առաջ կանգնեցնել իրենց հայրենիքը, քան

* Սխտագրութիւն բնծայված հավասար նրան հնարավորութիւն է տալիս վնասել³⁹ (լատ.):

օգնություն ցույց տալ նրան, զանց առնելով օրենքները, և ոչ մի զնով
 չէին համաձայնում թեկուզ մի բանով խախտել այս վերջինները: Սա-
 կայն խիստ անհրաժեշտության դեպքում, երբ ամեն ինչ հանգում է այն
 բանին, որ մի կերպ դիմանաս, երբեմն խսկապես ավելի խելամիտ կլի-
 նի խոնարհես գլուխդ ու հարված կրես, քան ուժերիցդ վեր կոխվ մղես,
 շկամենալով ոչ մի բանում զիջել և բռնությանը հնարավորություն բն-
 ձեռնելով ճզմել ամեն ինչ ու ոտքի կոխան դարձնել հայրենիք⁴⁰: Եվ
 ավելի լավ է, օրենքները հետամտեն լոկ այն, ինչ իրենց ուժերի սահ-
 մանում է, երբ իրենց ուժերից վեր է այն ամենը, ինչին հետամտում են
 Օրինակ, այդպես է վարվել նա, ով հրամայել է քսանչորս ժամով շեղ-
 յալ հայտարարել օրենքներն ու դրանով իսկ այդ անգամ մեկ օրով
 կրճատել օրացույցը⁴¹, և նա, ով հունիսը դարձրել է երկրորդ մայիս⁴²,
 Նույնիսկ լակեդեմոնացիները, որոնք այդպիսի շերմեռանդությամբ պահ-
 պանում էին իրենց երկրի օրենքները, մի անգամ, կաշկանդված լինելով
 իրենց օրենքներից մեկով, որն արգելում էր նույն մարդուն երկրոր-
 անգամ ընտրել նավատորմի պետ (մինչդեռ հանգամանքները նրանցի-
 ստիպողաբար պահանջում էին, որ այդ պաշտոնը կրկին զբաղեցնե-
 լիսանդրոսը⁴³), գտան մի այսպիսի հնար. նրանք նավատորմի պետ
 կարգեցին Արակոսին, իսկ Լիսանդրոսին նշանակեցին ծովային ուժեր
 «գլխավոր տնօրեն»: Նման խորամանկության դիմեց նաև աթենացիներ
 մոտ ուղարկված նրանց մի դեսպանը, որի նպատակն էր հասնել այ-
 բանին, որ վերջիններիս հրապարակած մի կարգադրություն շեղյա-
 հայտարարվեր: Երբ Պերիկլեսն⁴⁴ ի պատասխան պատճառաբանեց, թե
 խստիվ արգելվում է վերացնել այն տախտակը, որի վրա օրենք է գրե-
 ված, դեսպանն առաջարկեց տախտակը շուտ տալ, քանզի դա, համե-
 նայնդեպս, չի արգելված: Ի վերջո, դա այն է, ինչի համար Պլուտար-
 քոսը գովարանում է Փիլոպեմենին. ծնված լինելով տնօրինելու համար
 նա կարող էր տնօրինել ոչ միայն համաձայն օրենքների, այլև հաս-
 րակական անհրաժեշտության դեպքում, նաև բուն օրենքները⁴⁵:

Փլուխ XXIV

ՄԻԵՎՆՈՒՅՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՇԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԱՐԲԵՐ ԼԻՆԵԼ

Ժակ Ամիրոն¹ պալատական գլխավոր քահանան՝ և Ֆրանսիայի թա-
 գավորի ողորմածություն բաշխողը մի անգամ մեր մի արքայազնի մա-
 սին² (ով-ով, բայց նա ոտից գլուխ մերն էր, թեև ծագումով՝ օտարեր)

րացի) ինձ պատմեց իրեն պատիվ բերող հետևյալ պատմութիւնը: Մեր խոսվութիւններն սկսվելուց քիչ անց, Ռուանի պաշարման³ ժամանակ մայր թագուհին⁴ այդ արքայազնին տեղեկացրեց, թե նրա դեմ մահափորձ է նախապատրաստվում, ըստ որում թագուհու նամակում ստույգ նշվում էր, թե ով է լինելու սպանողը: Դա ոչ այն է անժույցի, ոչ այն է մենցի մի ազնվական էր, որը միշտ այցելում էր արքայազնի տուն: Արքայազնն այդ նախազգուշացման մասին ոչ ոքի չասաց: Սակայն, հաջորդ օրը վերոհիշյալ գլխավոր ողորմութիւն բաշխողի և մի եպիսկոպոսի հետ զբոսնելով սուրբ Հեղինեի լեռան վրա, որտեղից ոմբակոծում էինք Ռուանը (քանզի այդ ժամանակ մենք այն պաշարել էինք), նա նկատեց այդ ազնվականին, որին դեմքով ճանաչում էր, և հրամայեց կանչել իր մոտ: Երբ ազնվականը կանգնեց արքայազնի դեմ, վերջինս, տեսնելով, որ նա գունատվել ու դողում է, քանզի խիղճը մաքուր չէր, ասաց հետևյալը. «Պարոն այսինչ, դուք, իհարկե, կոհնում եք, թե ինչ եմ ուզում ձեզանից, դա ձեր դեմքին է գրված: Դուք պետք է ամեն բան խոստովանեք, քանզի ես այնքան իրազեկ եմ ձեր գործին, որ, փորձելով ժխտել, միայն կվատացնեք ձեր վիճակը: Դուք քաջ գիտեք այս և այս բաները (նա ամենայն մանրամասնութեամբ պատմեց այն ամենը ինչ վերաբերում էր դավադրութեանը): Ուրեմն խաղ մի արեք ձեր կյանքի հետ և պատմեք ձեր դիտավորութեան մասին ողջ ճշմարտութիւնը»: Երբ խեղճը վերջնականապես հասկացավ, որ մերկացված է և դրանից խուսափել չի կարող (քանզի դավադրութեան մասին թագուհուն հայտնել էր իրենց հանցակիցներից մեկը), նրան ուրիշ ոչինչ չէր մնում, քան, աղերսագին ծալելով թևերը, արքայազնից ողորմածութիւն ու գթութիւն հայցել, և ազնվականն արդեն պատրաստվում էր նրա ոտքերն ընկել, բայց վերջինս, կանգնեցնելով նրան, այսպես շարունակեց. «Լսեք, ես երբևէ նեղացրե՞լ եմ ձեզ: Իմ ատելութեամբ հալածե՞լ եմ ձեր որևէ բարեկամին: Ընդամենը երեք շաբաթ է, ինչ ծանոթ եմ ձեզ, ի՞նչը կարող էր ձեզ դրդել մահափորձ կատարելու իմ դեմ»: Ազնվականը կմկմալով պատասխանեց, թե ոչ մի առանձին պատճառ չի ունեցել, սակայն ղեկավարվել է իր խմբի շահերով, նրան համոզել են, թե իրենց հավատի այդքան գորեղ թշնամուն ոչնչացնելը, ինչպիսի միջոցով էլ դա արվի, կլինի աստվածահաճո գործ: «Իսկ ես,— շարունակեց արքայազնը,— ուզում եմ ձեզ ցույց տալ, թե որքան ավելի անշար է իմ հավատն այն հավատից, որը դավանում եք դուք: Ձեր հավատը ձեզ խորհուրդ է տվել, որ սպանեք ինձ, նույնիսկ առանց լսելու, թե ես ձեզ ոչ մի բանով չեմ նեղացրել, իսկ իմ հավատը պահանջում է ձեզ ներում շնորհել, թեև դուք լիովին մերկացված եք այն բանում, որ պատրաստ-

վում էիք շարագործարար սպանել ինձ; շունենալով դրա համար ոչ մի հիմք: Դե ուրեմն, հեռացեք, չքվեք ու այլևս չտեսնեմ ձեզ այստեղ: Եվ եթե գոնե գույզն ինչ խոհեմություն ունեք, մի բան ձեռնարկելիս, խորհրդատու ընտրեցեք ավելի ազնիվ մարդկանց»:

Կտնվելով Կաղդիայում, Օգոստոս կայսրն արժանահավատ անդեկություն ստալավ իր դեմ Լուցիոս Յիննայի կազմակերպած դավադրության մասին. որոշելով պատժել վերջինիս, նա հաջորդ օրը խորհուրդ նշանակեց և հրամայեց կանչել իր մերձավոր բարեկամներին: Սակայն, խորհրդի նախօրեի գիշերը նա խիստ տագնապի մեջ էր, տանջվում էր այն մտքից, թե մահվան է դատապարտում լավ տոհմից սերող մի երիտասարդի, հուշակավոր Պոմպեոսի եղբորորդուն: Տրտնջալով իր ծանր կացությունից, նա զանազան փաստարկներ էր քերում. «Ուրեմն ինչ, — ասում էր նա, — մի՞թե ինքս ինձ պիտի ասեմ, թե ապրիլ տագնապն ու ահը սրտումդ և քեզ սպանել կամեցողին ազատ արձակիր: Մի՞թե պիտի թույլ տամ նրան ողջ ու առողջ հեռանալ, նրան, որ փորձել է վերջ տալ իմ կյանքին, որը պաշտպանել եմ այդքան քաղաքացիական պատերազմներում, ցամաքում ու ծովում մղած այդքան ճակատամարտերում: Մի՞թե պիտի ներեմ այն մարդուն, որը մտածում էր ոչ միայն սպանել (այն էլ երբ՝ ամբողջ աշխարհում խաղաղություն հաստատելուց հետո), այլև օգտագործել ինձ իբրև սուտվածներին մատուցվող զոհ»: Քանզի դավադիրները մտադիր էին նրան սպանել զոհաբերության ժամանակ: Այնուհետև, փոքր ինչ լռելով, նա դարձյալ, և ավելի հաստատ ձայնով, շարունակեց, դիմելով ինքն իրեն. «Ի՞նչ միտք ունի քո ապրելը, եթե շատերը քո մահն են ցանկանում: Ո՞ւր է քո վրեժխնդրության ու դաժանությունների վերջը: Քո կյանքն արժե՞ արդյոք այն ծախսերը, որ անհրաժեշտ է նրա պաշտպանության համար»: Այդ ժամանակ նրա կինը՝ Լիվիան, լսելով այդ տրտուները, ասաց. «Իսկ կինդ չի՞ կարող քեզ բարի խորհուրդ տալ: Վարվիր այնպես, ինչպես վարվում են բժիշկները, երբ սովորական դեղամիջոցները չեն օգնում, նրանք փորձում են այնպիսիք, որոնք թուղնում են հակառակ ազդեցություն: Դաժանությամբ դու ոչ մի բանի չհասար. Սալվիդիենին հետևեց Լեպիդոսը, Լեպիդոսին՝ Մուրենան, Մուրենային՝ Յեպիոնը, Յեպիոնին՝ Էգնատիոսը: Փորձիր, թե արդյոք չեն օգնի մեղմությունն ու ողորմածությունը: Յիննան մերկացված է, բայց ներիր նրան՝ չէ որ նա այլևս չի կարող քեզ վնասել, իսկ դա կմեծացնի փառքդ»: Օգոստոսը շատ զոհ էր, որ իր բարի մտադրություններին պաշտպանություն գտավ: Շնորհակալություն հայտնելով կնոջը և շեղյալ հայտարարելով բարեկամներին խորհրդի հրավերելու իր նախկին հրամանը, նա կարգադրեց իր մոտ կանչել միայն Յիննա-

յին: Եռլորին ննջարանից հեռացնելով և Յիննային նստեցնելով, նա ասաց հետևյալը. «Ամենից առաջ, Յիննա, ուզում եմ, որ հանգիստ ինձ լսես: Արի պայմանավորվենք, որ խոսքս շեռ ընդհատի, հարկ եղած պահին ես քեզ պատասխանելու հնարավորություն կտամ: Դու շատ լավ գիտես, Յիննա, որ ես քեզ բռնել եմ թշնամիներիս ճամբարում, ընդ որում դու ոչ թե թշնամացել ես ինձ, այլ, կարելի է ասել, ի ծնե իմ թշնամին ես, սակայն ես զթացել եմ քեզ, վերադարձրել եմ այն ամենը, ինչ քեզանից խլվել էր և ինչ հիմա ունես, ի վերջո, ես քեզ համար ապահովել եմ այնպիսի լիութուն ու հարստութուն, երբ հաղթողները նախանձում են պարտվողին: Դու ինձանից քրմի պաշտոն խնդրեցիր, և ես բավարարեցի խնդրանքդ, մերժելով ուրիշներին, որոնց հայրերը կողք կողքի մարտնչել են ինձ հետ: Եվ ահա, թեպետ դու ամեն ինչով ինձ ես պարտական, մտադրվել ես սպանել ինձ»: Երբ Յիննան ի պատասխան բացականչեց, թե իր մտքով իսկ չի անցել նման շարագործություն կատարել, Օգոստոսը նկատեց. «Յիննա, դու մոռացար մեր պայմանը, դու հո խոստացար, որ խոսքս շեռ ընդհատի: Այո, դու մտադրվել ես սպանել ինձ այսինչ տեղում, այսինչ օրը, այսինչ մարդկանց մասնակցությամբ և այսինչ ձևով»:

Տեսնելով, որ Յիննան խորապես ցնցված է լսածից ու լռում է, բայց այս անգամ արդեն ոչ թե պայմանավորվածության համաձայն, այլ նրա համար, որ խիղճն է տանջում, Օգոստոսն ավելացրեց. «Ի՞նչն է քեզ դրդում դրան: Գուցե, ի՞նքդ ես ձգտում կայսր դառնալ: Հիրավի, ողբալի են պետության գործերը, եթե միայն ես եմ կանգնած դեպի կայսերական իշխանություն տանող քո ճանապարհին: Ախր դու ի վիճակի շեռ պաշտպանելու անգամ քո մերձավորներին, և բոլորովին վերջերս ինչ-որ ազատարձակի միջամտության պատճառով տանուլ տվիր դատավեճդ: Կամ, դուցե, ոչ հնարավորություններդ, ոչ էլ ուժե՞րդ են բավականացնում այլ բանի համար, բան ասնձգություն կատարել Կեսարի կյանքի դեմ: Ես պատրաստ եմ ղիջել, ու մի կողմ քաշվել, եթե միայն ինձանից բացի չկա մեկը, որ խոչընդոտի քո հույսերին: Մի՞թե դու կարծում ես, թե Ֆաբիոսը, Քոստաների կամ Սերվիլիոսների⁵ կողմնակիցները կհանդուրժեն քեզ: Թե քեզ հետ կհաշտվի այն երևելիների ստվար բազմությունը, որոնք երևելի են ոչ միայն անվանապես, այլև երևնց առաքինություններով պատիվ են բերում իրենց երևելիությանը»: Եվ նման շատ բաներից հետո (քանզի նա խոսեց ավելի քան երկու մամ) Օգոստոսն ասաց նրան. «Ուրեմն այսպես. ես կյանքդ բաշխում եմ քեզ, Յիննա, քեզ՝ դավաճանիդ ու մարդասպանիդ, ինչպես արդեն բաշխել եմ անցյալում, երբ դու պաթզապես իմ թշնամին էիր, բայց հետ-

այսու մեր միջև պետք է բարեկամութիւն լինի: Տեսնենք, թե մեզանից՝ երկուսիցս ով ավելի պարզասիրտ կգտնվի, ե՞ս, որ կյանք պարզեփեցի քեզ, թե՞ դու, որ ստացար այն իմ ձեռքից»: Այսպիսով նրանք բաժանվեցին: Որոշ ժամանակ անց Օգոստոսը Յիննային կոնսուլի պաշտոն տվեց, նախատելով նրան, որ անձամբ շի դիմել իրեն այդ խնդրանքով: Այդ ժամանակվանից Յիննան դարձավ նրա առավել սիրելի մերձավորներից մեկը, և Օգոստոսը նրան դարձրեց իր ունեցվածքի միակ ժառանգը: Այս դեպքից հետո, որը տեղի ունեցավ, երբ Օգոստոսը քառասուն տարեկան էր, ամբողջ կյանքում նրա դեմ այլևս չեղավ ոչ մի դավադրություն, ոչ մի մահափորձ, և նա, կարելի է ասել, արդարացիորեն վարձատրվեց իր ներողամտության համար: Սակայն բոլորովին այլ կերպ եղավ մեր արքայազնի հետ, զի մեղմութիւնն ամենևին չօգնեց նրան, և նա հետագայում ընկավ դավաճանության ծուղակը⁶: Ահա թե որքան անհավատարիմ ու անհուսալի բան է մարդկային խոհեմութիւնը, քանզի հակառակ մեր բոլոր պլանների, որոշումների ու նախագուշտութիւնների, ճակատագիրը միշտ իր ձեռքում է պահում իրադարձութիւնների սանձերը:

Երբ բժիշկներին հաջողվում է բուժման լավ արդյունքի հասնել, մենք ասում ենք, թե նրանց բախտը բերել է, կարծես այդ արվեստը միակն է, որ պահանջում է արտաքին օժանդակություն, քանզի, հենվելով շահագանց խախուտ հիմքի վրա, շի կարող կանգուն մնալ, կարծես միայն նա կարիք ունի, որ հաջողութիւնն ուղեկցի իր գործողութիւններին: Ես պատրաստ եմ բժշկական արվեստի մասին մտածել ամեն ինչ՝ թե ամենավատը, թե ամենալավը, քանզի, փառք աստծո, մենք բոլորովին անծանոթ ենք նրան: Այս դեպքում ես բոլոր մյուսների հակապատկերն եմ, որովհետև միշտ, ցանկացած պարագայում, արհամարհում եմ նրա ծառայութիւնները, իսկ երբ հիվանդանում եմ, փոխանակ հնազանդվելու, սկսում եմ ավելի ատել ու վախենալ նրանից: Դեղ ընդունել ստիպողներին ես սովորաբար պատասխանում եմ, որ սպասեն գոնե այնքան, մինչև առողջութիւնս ու ուժերս վերականգնվեն, որպեսզի կարողանամ ավելի մեծ հաջողութեամբ դիմագրել նրանց թրմի ազդեցութեանն ու նրանում թաքնված վտանգներին: Ես լիակատար ազատութիւն եմ տալիս բնութեանը, ենթադրելով, որ նա ունի ատամներ ու ձիրաններ և հետ կմղի իր վրա կատարվող հարձակումներն ու կպահպանի ամբողջութիւնը, որի քաջբայումից ամեն կերպ աշխատում է խուսափել: Ես վախենում եմ, թե երբ բնութեանը գոտեմարտի բռնվի հիվանդութեան հետ, դեղը, փոխանակ նրան օժանդակելու, կօղնի հակառակորդին և ավելի մեծ աշխատանք կբարդի նրա վրա:

Եվ այսպես, ես պնդում եմ, որ ոչ միայն բժշկութեան մեջ, այլև մյուս, ավելի պակաս խախտւոտ արվեստներում, բախտը բնավ էլ վերջին տեղը չի զբաղեցնում: Իսկ բանաստեղծին կլանող ու խոյանք պարզեող ոգեշնչման պոռթկումները, ինչո՞ւ սրանք շվերագրենք նրա հաջողութեանը: Ախր նա ինքն էլ է խոստովանում, որ դրանք գերազանցում են այն, ինչ կարող էին ձեռք բերել նրա ուժերն ու ձիրքերը, ախր նա ինքն էլ է զգում, որ դրանք իրեն այցելել են առանց իր գիտութեան և անկախ են իրենից: Նույնն են ասում նաև հռետորները, որոնք խոստովանում են, թե անզոր են իրենց համակող այն պոռթկումի և արտասովոր հուզմունքի դեմ, որոնք ավելի հեռու են տանում իրենց սկզբնական մտադրությունից: Ճիշտ նույն բանն է նաև գեղանկարչության մեջ, քանզի այստեղ երբեմն նկարչի ձեռքը ստեղծում է գործեր, որոնք դերագանցում են և՛ նրա մտահղացումները, և՛ վարպետությունը, գործեր, որոնք հիացնում ու ապշեցնում են հենց իրեն: Սակայն, թե որքան մեծ է այդ ստեղծագործություններում հաջողության բաժինը, հատկապես պարզորոշ երևում է այն նորագեղությունից ու կատարելությունից, որոնց նկարիչը հասել է առանց մտադրվելու և նույնիսկ առանց իմանալու: Գիտակ ընթերցողը հաճախ ուրիշի գրվածքներում գտնում է բոլորովին այլ բարեմասնություններ, քան նրանք, որոնցով այդ ստեղծագործությունները կամեցել են օժտել և որոնք տեսել է ինքը հեղինակը, և շնորհիվ այդ բանի նա դրանց հաղորդում է ավելի խոր իմաստ ու արտահայտչականություն:

Ինչ վերաբերում է ռազմական գործին, ապա յուրաքանչյուրին է հասկանալի, թե այստեղ որքան շատ բան է կախված հաջողությունից: Եթե դիմենք թեկուզ մեր սեփական հաշիվներին ու նկատառումներին, ապա այստեղ էլ ստիպված կլինենք խոստովանել, որ գործը գլուխ չի դալիս առանց ճակատագրի ու հաջողության մասնակցության, քանզի այս բաներում մարդկային իմաստությունը քիչ արժեք ունի: Որքան ավելի սուր ու խորաթափանց է մեր միտքը, այնքան նա ավելի պարզորոշ է զգում իր անկարողությունն ու ավելի քիչ է վստահում իրեն: Ես նույն կարծիքին եմ, ինչ Սուլլան, և երբ ավելի ուշագիտ եմ դիտում առավել փառաբանվող ռազմական գործերը, տեսնում եմ, որ դրանց ղեկավարներն, ըստ իս, դատողություններ են անում ու պլաններ կազմում, այսուպես ասած, խիղճը հանգստացնելու համար, իրենց ձեռնարկման ամենազլխավորն ու հիմնականը թողնելով դիպվածին, և, ապավինելով նրա օգնությանը, համարձակվում են կատարել ողջախոհությամբ շարդարացվող գործողություններ: Նրանց դատողությունները երբեմն ընդհատվում են անակնկալ հոգեկան վերելքի կամ բուռն ցասման պահերով,

որոնք նրանց մղում են, հաժանաբար, ամենաանհիմն որոշումներ կա-
յացնելու և տալիս են խոհեմության սահմաններից դուրս եկող հա-
մարձակություն: Հենց սա է, որ հին աշխարհի բազմաթիվ մեծ գորա-
վարների հարկադրել է սեփական խելացնոր որոշումների նկատմամբ
զարքին վստահություն ներշնչելու համար վկայակոչել իրենց համակած
ողևորությունը կամ մարգարեությունների ու նշանների ձևով ի վերուստ
առաքված հրահանգը:

Ահա թե ինչու, գտնվելով առավել ճիշտ որոշում տեսնելու և ընտրե-
լու մեր անկարողությունից ծնվող անվստահության ու տազնապի մեջ,
քանզի զանազան պատահականությունների և հանգամանքների պատճա-
ռով ամեն մի դորձ կապված է դժվարությունների հետ, իմ կարծիքով,
ամենից հուսալի է (անգամ եթե ուրիշ նկատառումներ մեզ չեն հսկում
գրան) վարվել հնարավորին շափ ազնիվ ու արդարամիտ, և երբ մենք
երկմտում ենք, թե որն է ամենակարճ ճանապարհը՝ գերադասել միշտ
ամենաուղիղը: Ուրեմն վերը բերած իմ երկու օրինակներում նրանք, ում
դեմ մահափորձ է նախապատրաստվում, կյուցաբերելին հոգու ավելի
մեծ գեղեցկություն և ազնվություն, ներելով մահափորձ կատարողնե-
րին, քան վարվելով այլ կերպ: Եվ եթե առաջինի համար, այնուամե-
նայնիվ, վախճանը տխուր եղավ, ապա այստեղ նրա բարի մտադրու-
թյունները ոչ մի կասյ չունեն. չէ որ մեզ բոլորովին հայանի չէ, թե ար-
դյոք նա կիուսափեր ճակատագրի նախանշած կործանումից, եթե վար-
վեր այլ կերպ, սակայն մենք հաստատուպես դիտենք, որ այդ դեպ-
քում նա չէր հասնի այն փառքին, ոք Դավեց նրան այդքան զարմանալի
ողորմածությունը:

Պատմական ստեղծագործություններում մենք հանդիպում ենք բազ-
մաթիվ տիրակալների, որոնք գողում էին իրենց կյանքի համար, ըստ
որում նրանց մեծ մասը գերադասում էր դավադրություններին ու մահա-
փորձերին պատասխանել վրիժառություններ ու մահապատիժներով, սա-
կայն նրանց թվում ես տեսնում եմ շատ քչերին միայն, որոնց այդ մի-
ջոցը օգուտ է բերել, օրինակ՝ Հոոմի մի ամբողջ շարք կայսրեր: Նա,
ուր այդպիսի վտանգ է սպառնում, շպեաք է մեծ հույսեր կապի իր ուժի
և գգոնության հետ: Արդարև, ի՞նչ կա ավելի դժվար, քան զգուշանալ
մեր ամենահավատարիմ բարեկամի դիմակը կրող թշնամուց, կամ թա-
փանցել մշտապես մեր կողքին գտնվող մարդկանց նվիրական մտքերի
ու մղումների խորքերը: Այստեղ չեն օգնի օտարերկրյա վարձկան զին-
վորների ջոկատները, չի օգնի շուրջը պատող ստվար պահակախումբը.
Նա, ով արհամարհանքով է նայում սեփական կյանքին, միշտ կկարո-
ղանա կյանքից զրկել ուրիշին: Բացի այդ էլ մշտական կասկածամտու-

թյունը, որը տիրակալին ստիպում է թերահավատ լինել բուլորի նկատմամբ, չի կարող սաստիկ շտանջել նրան:

Եվ այնուամենայնիվ Դիոնը, որ զգուշացվել էր, թե Կալիպոսը նրան սպանելու միջոց է որոնում, չէր կարող իրեն ստիպել համոզվելու դրանում և հայտարարեց, թե ինքն ավելի շուտ պատրաստ է մեռնել, քան ապրել այդպիսի խղճուկ կյանքով, զգուշանալով ոչ միայն թշնամիներից, այլև բարեկամներից⁷: Նման ավելի վառ զղացմունքներ, և ըստ որում ոչ թե խոսքով, այլ գործով, դրսևորեց Ալեքսանդրը, երբ, Պարմենիոնի նամակից տեղեկանալով, թե* Փիլիպոսին՝ նրա ամենասիրելի բժշկին Դարևոնը կաշառել է, որ թունավորի իրեն, այդ նամակը տվեց Փիլիպոսին ու միաժամանակ խմեց նրա պատրաստած ըմպելիքը: Արդյոք նա դրանով ցույց չտվե՞ց, թե, եթե բարեկամներն ուղում են իրեն սպանել, ինքը ոչ մի առարկուծյուն չունի դրա դեմ: Ոչ ոք այնքան սխրանք չի գործել, որքան Ալեքսանդրը, սակայն ես նրա կյանքում չլիտեմ մի ուրիշ դեպք, որ նա դրսևորած լինի բուլոր առումներով ուշադրավ այդպիսի անասանություն և բարոյալիան այդպիսի գեղեցկություն: Նրանք, ովքեր իրենց թագավորներին խորհուրդ են տալիս լինել թերահավատ ու կասկածամիտ, քանզի իբր դա սրահանջվում է անվտանգության նկատառումներով, խորհուրդ են տալիս ընդառաջ գնալ սեփական խայտառակությանն ու կործանմանը: Ամեն ազնիվ գործ կապված է հնտրավոր վտանգի հետ: Ես գիտեմ բնականից միանգամայն գործունյա և քաջասիրտ մի տիրակալի, որին ամեն օր վնաս են հասցնում, խորհուրդ տալով մեկուսանալ իր մերձավորների նեղ շրջանակում, շմտածել իր նախկին թշնամիների հետ հաշտվելու մասին, մի կողմ քաշվել և, աստված մի արապե, վստահել ավելի ուժեղին, ինչպիսի խոստումներ էլ սր տա և ինչպիսի օգուտ էլ խոստանա: Ես գիտեմ նաև մի ուրիշ տիրակալի, որն անսպասելիորեն կարողացավ ձեռք բերել խոշոր հաջողություններ, քանզի հետևել էր հակառակ խորհուրդների: Քաջությունը, որով այգբան աենչում են փառաբանվել, կարող է առիթի դեպքում դրսևորվել նույն փայլով, անկախ նրանից, թե մենք տնային զգեստով ենք թե մաքառական ասպազենքով, գուր ձեր ասանն էք թե ուղմական ճամբարում, ձեր ձեռքն իջած է թե բարձրացրած վեր՝ հարվածելու համար: Ըղճիմ ու տագնապահույզ սղջամաությունը մեծ գործերի մահացու թշնամին է: Սկիպիոնը, ցանկանալով ձեռք բերել Սիփաքսոսի բարեկամությունը, շվարանեց թողնել նոր նվաճած, տակալին անհանգիստ Ըսպանիայում գտնվող իր զորքերը և երկու ոչ մեծ նավերով անցնել Աֆրիկա, որպեսզի թշնամի երկրում իր կյանքը վստահեր բուլորին անայտ մի բարբարոս արքայիկի, առանց նրա որևէ պարտավորության,

առանց պատանդների, ապավինելով միայն իր սրտի վեհությանը, իր հաջողությանը, այն բանին, ինչ խոստանում էին նրա վեհ հույսերը.

habita fides ipsam plerumque fidem obligat*.

Այն մարդը, որի կյանքը լի է փառասիրական ձգտումներով և պանծալի գործերով, պետք է զսպի կասկածամտությունն ու երբեք ազատություն չտա նրան. երկշտությունն ու թերահավատությունը հղի են վտանգով և հարուցում են այն: Մեր ամենակասկածամիտ միապետը հաջողությամբ կարգավորեց իր գործերը, զլիսավորապես շնորհիվ այն բանի, որ բարի կամքով սեփական կյանքն ու ազատությունը վստահեց իր վաղեմի թշնամիներին⁹, ընդամին ձևացնելով, թե միանգամայն հավատում է նրանց, որպեսզի նրանք պատասխանեին նույն կերպ: Կեսարն իր քմբոսաացած և զենք վերցրած լեգիոններին հակադրեց միայն իր իշխանադոր դեմքն ու հպարտ խոսքը, նա այնպես էր հավատում իրեն և իր բախտին, որ չվախեցավ այն վստահել խոովարար ու ինքնակամ զորքին¹⁰:

Stetit aggere fultus
Cespitis, intrepidus vultu, meruitque timeri
Nil metuens**.

Անկասկած է, սակայն, որ այդպիսի վստահություն ամբողջ անմիջականությամբ ու լիակատարությամբ կարող են դրսևորել միայն նրանք, ում չի վախեցնում ոչ մահը, ոչ այն վատթարադույնը, որ կարող է հետևել դրան: Իսկ եթե մի կարևոր դեպքում մենք զգացնել տանք, թե մեր վստահությունը շինծու է, իսկ իրականում մեզ համակել են վախը, կասկածներն ու տաղնապը, ուրեմն մեր ջանքերը զուր են կորել: Ուրիշների սրտերն ու համակրանքը նվաճելու հիանալի միջոցն այն է, որ կանգնես նրանց առջև, անձնատուր լինելով ու վստահելով նրանց, բայց, իհարկե, պայմանով միայն, որ դա արվի սեփական կամքով, այլ ոչ թե անհրաժեշտությունից դրդված, որ դուք վստահեք նրանց անկեղծորեն ու մինչև վերջ և, անշուշտ, թույլ չտաք ձեր դեմքի վրա դույզն իսկ տաղնապ նկատել: Մանկությանս օրերին ինձ վիճակվել է տեսնել մեծ քաղաք կառավարող, ապստամբ, կատաղի ժողովրդի առջև կատարելապես շփոթված մի ազնվականի: Ցանկանալով ճնշել ապստամբու-

* վստահությունը, մեծ մասամբ, հարուցում է պատասխան ազնվություն⁹ (լատ.):

** նա անվահեր բարձրացավ ճիմածածկ թմբի վրա և ստիպեց վախենալ, չվախենալով ոչ մի բանից¹⁰ (լատ.):

թյունը սաղմնային վիճակում, նա որոշեց թողնել միանգամայն անվտանգ իր տեղը և դուրս գալ խոռվարար ամբոխի դիմաց, դա նրա համայն վատ վերջացավ. նա անգթորեն սպանվեց¹²: Ես գտնում եմ, սակայն, որ նրա սխալը ոչ այնքան ժողովրդի առաջ դուրս գալն էր, ինչի համար նրան սովորաբար կշտամբում են, որքան խոնարհ ու հաճկատար դեմքով նրա դեմ կանգնելը, որ նա ուզում էր ժողովրդի ցասումը մեղմել, ավելի շուտ պիջելով նրան, քան հնազանդեցնելով իրեն, ավելի շուտ որպես խնդրող, քան որպես կարգի հրավիրող: Ես կարծում եմ նաև, թե շափավոր խստապահանջությունն ու հաստատակամ զինվորական իշխանագորությունը, որոնք ավելի են սազում նրա կոշմանն ու գրաված պաշտոնի կարևորությանը, թույլ կտային նրան ավելի մեծ հաջողությամբ և, համենայն դեպս, ավելի մեծ պատվով ու արժանավորությամբ դուրս գալ ծանր կացությունից: Ամենից քիչ կարելի է հուսալ, թե ամբոխը, այդ կատաղած հրեշքը, կդրսևորի մարդկայնություն ու հեզություն, նրան կարելի է ներշնչել ավելի շուտ վախ և ակնածանք: Ես գոհված ազնվականին կկշտամբեի նաև այն բանի համար, որ, որոշելով (ըստ իս, ավելի շուտ համարձակորեն, քան անմտորեն, թույլ ու անպաշտպան նետվել մոլազար մարդկանց այդ փոթորկուն ծովը, նա, փոխանակ մինչև վերջ կրելու իր տառապանքն ու ամեն զնով կատարելու ստանձնած դերը, վտանգի առաջ վախեցավ, և եթե սկզբում նրա ամբողջ տեսքը վկայում էր հաճկատարություն ու շողոթորթություն, ապա այնուհետև դրանց փոխարինեց սարսափի արտահայտությունը, իսկ ձայնում և աչքերում կարելի էր կարգալ վախ և գթության աղերսանք: Փորձելով թաքնվել ու ձվարել, նա է՛լ ավելի բորբոքեց ամբոխի կատաղությունն ու գրգռեց նրան իր դեմ:

Մի անգամ քննարկվում էր տարբեր ջոկատների ընդհանուր ստուգատես կազմակերպելու հարցը¹³, իսկ դա, ինչպես հայտնի է, անձնական հաշիվներ մաքրելու ամենահարմար առիթն է. այստեղ դա կարելի է անել ավելի ապահով, քան որևէ այլ տեղում: Թացահայտ և աներկբայելի նշանները ցույց էին տալիս, որ բանը կարող էր վատ վերջանալ մի քանի զորապետների համար, որոնց ուղղակի և անմիջական պարտականությունը զորահանդեսին ներկա գտնվելն էր: Այստեղ կարելի էր լսել բազում տարբեր խորհուրդներ, ինչպես միշտ լինում է մեծ էջանակություն ունեցող և հետևանքներով հզի ուզածը զժվարին գործում: Ես առաջարկեցի ձևացնել, թե այդ առթիվ ոչ մի երկյուղ չկա. թող այդ զորապետները գտնվեն զինվորական շարքերի ամենախիտ մասում, դրոշմները բարձր և դեմքները բաց, ես խորհուրդ տվի նաև բոլորովին լռելիք ընդունված կարգից և շահմանափակել համալարկերը (որին,

սակայն, հակվում էր մեծամասնության կարծիքը), այլ, ընդհակառակը, համոզել սպաներին, որ զինվորներին հրամայեն աշխույժ և միահամուռ կրակել ի պատիվ ներկաների, շխնայելով վառողը: Դա հարուցեց կասկածի տակ գտնվող զորամասերի երախտիքը և ապագայում ապահովեց երկուստեք բարերար վստահություն:

Ես գտնում եմ, որ Հուլիոս Կեսարի ընտրած գործողությունների եղանակը հնարավոր լավագույնն է: Ակզբից նա փորձում էր մեղմ վարվեցողությամբ ու ողորմածությամբ հասնել այն բանին, որ իրեն սիրեն նույնիսկ թշնամիները: Երբ իմանում էր դավադրությունների մասին, ահամանափակվում էր նրանով, որ պարզապես հայտարարում էր, թե ինքն ամեն ինչին տեղյակ է: Անելով այդ, նա, առանց վախի ու տագնապի, ազնիվ վճռահանությամբ սպասում էր, թե ապագան իրեն ինչ կբերի, իրեն վստահելով առավածների պաշտպանությանը և հանձնվելով ճակատագրի կամքին: Նրա վարքագիծն, անկասկած, նույնն էր նաև այն օրը, երբ դավադիրները սպանեցին նրան:

Միրակուսե եկած մի օտարական ամենուրեք շաղակրատում էր, թե եթե Դիոնիսիոսը՝ այնտեղի բռնապետը, իրեն լավ վճարի, ինքը նրա կոսովորեցնի անսխալ գուշակել ու կռահել հպատակների շար մտադրություններն ընդդեմ իրեն: Իմանալով այդ մասին, Դիոնիսիոսը եկվորի կանչեց մոտն ու խնդրեց ասել իր կյանքի պաշտպանության համաանհրաժեշտ այդ միջոցը: Օտարականը պատասխանեց, որ այդտեղ մի առանձին հմտություն չկա. թող Դիոնիսիոսը միայն իրեն հրամայվճարել մեկ տաղանդ արծաթով, իսկ ապա թող բոլորի մոտ պարծենալ թե իբր եկվորը մեծ դադունիք է հայտնել իրեն: Այդ հնարքը շատ գեղեկավ Դիոնիսիոսին, որը հրամայեց վեց հարյուր էկյու տալ օտարականին: Հիբափի, անհավանական կլիներ ենթադրել, թե նա այդքան դուր է վճարել ինչ-որ օտարերկրացու, շատանալով նրանից հույժ օգտակար տեղեկություններ: Եվ Դիոնիսիոսն օգտվեց այդ առթիվ ծայր առած առկոսներին, որպեսզի իր թշնամիներին պահեր վախի մեջ: Ահա թե ինչ թագավորները վարվում են միանգամայն խելամիտ, երբ ի լուր բոլոր հայտնում են իրենց կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների մասին և նախազգուշացումները, որ իրենք ստացել են, նրանք ուզում են հավատացնել, թե իբր քաջատեղյակ են ամեն ինչին և հնարավոր չէ իրեն դեմ ձեռնարկել մի այնպիսի բան, որ իրենք անմիջապես չիմանան այն: Աթենքի դուբոր¹⁴, դառնալով Ֆլորենցիայի բռնապետ, առաջին շրջանում բազմաթիվ հիմարություններ կատարեց, բնայդ «գրանցից» մեկ նազխավորն այն էր, որ, վաղօրոք նախազգուշացվելով ժողովրդի իր դեմ կազմակերպվող դավադրության մասին, նա հրամայեց սպան

իրեն տեղեկացնող Մատտեո դի Մորոզոյին՝ դավադրութեան մասնակիցներէից մեկին, որպեսզի այդ հաղորդումը մնար գաղտնի և ոչ ոք չմտածեր, թե քաղաքում թեկուզ մեկը կարող է նեղվել իր այնքան հիանալի կառավարումից:

Որքան հիշում եմ, ժամանակին կարգացել եմ մի շատ հարգարժան հոռմեացու պատմութիւն, մարդ, որք, փրկվելով Լոսպետութեան բռնակալութիւնից, շնորհիվ իր բացառիկ ճարպկութեան ու հնարամտութեան հարչուրավոր անգամ ճողոպրել էր հեղատնդողներից: Մի անգամ, հեծյալ ջոկատը, որին հանձնարարված էր բռնել նրան, անցավ այն թփուաի կողքով, ուր նա թաքնված էր, և շնկատեց նրան: Բայց և այնպէս, մտածելով բոլոր դառնութիւնների ու տառապանքների մասին, որն արդեն երկար ժամանակ ստիպված էր կրել, թաքնվելով անընդմեջ, նամառ և ամենուրեք կատարվող փնտրումներից, խորհելով նաև, թե արդյոք ապագայում նման կյանքը հաճույք կպատճառի իրեն և թե որտեղ անվելի հեշտ կլինէր կատարել վճռական մեկ քայլ, թե առաջիկայում էլ ապրել վախը սրտում, նա ձայն տվեց հեծյալներին և մասնեց իր թաքստոցը, կամովին անձնատուր լինելով նրանց դառնաւատանին, որպեսզի թե նրանց, և թե իրեն ազատեի հետագա հոգսերից: Վիզը իշնամուն դեմ անելը, թերեւս, շափազանց համարձակ որոշում է, սակայն, կարծում եմ, լավ է ընդունել այն, քան շարունակ դողալ, տենտազին սպասելով մի պատուհասի, որից պրծում չկա: Եվ քանզի նախազգուշական այն միջոցները, որոնց մասին հարկ է մշտապես հողալ, պահանջում են անվերջ ջանքեր և շեն կարող համարվել հուսալի, լավ է զինվել ազնիվ կամքով և պատրաստ լինել այն ամենին, ինչ կարող է պատահել, մասամբ մխիթարվելով, թե, գուցե, այնուամենայնիվ լինել շպատահի:

Գլուխ XXV

ՏԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեխա ժամանակ ես հաճախ վրդովվում էի, որ իտալական կառավարչութիւններում տառակերները՝ միշտ ծաղրածուներն են, սակայն մեզանում «մազիստրոս» բառը նույնպէս ավելի մեծ պատիվ ու պարգանք չի վայելում: Կարո՞ղ էի արդյոք ես անտարբեր վերաբերվել ինչ-որ բարի անվանք, հանձնված լինելով նրանց հսկողութեանն ու խնամքին: Ես փորձում էի դրան բացատրութիւն գտնել տգետների և այն մտրկականց միջև դոյութիւն ունեցող բնական համակրանքում, որոնք

նման շեն մնացածներին և աշքի են ընկնում իրենց խելքով ու գիտելիքներով, առավել ևս, որ նրանք ընթանում են բոլորովին այլ ճանապարհով, քան բոլոր մյուս մարդիկ: Սակայն ինձ կատարելապես շփոթեցնում է այն, որ ամենախորաթափանց մարդիկ ամենից շատ արհամարհում են տառակերներին, օրինակ, մեր շատ բարի Դյու Բելլեն ասել է.

Սակայն ասում եմ տառակեր մարդու տեսքը գիտուն²:

Այդպես ընդունված է վաղուց, չէ որ դեռ Պլուտարքոսն ասում էր, թե «հույն» և «հուետոր» բառերը հոմեոագիների մոտ նախատական ու արհամարհական են³: Հետագայում, տարիների ընթացքում, ես հասկացա, որ տառակերության հանդեպ նման վերաբերմունքը միանգամայն հիմնավոր է և magis magnos clericos, non sunt magis magnos sapientes⁴. Սակայն ես այժմ էլ չեմ հասկանում, թե ինչպես կարող է այդքան շատ բաների մասին գիտելիքներով հարստացած հոգին չդառնալ ավելի կարեկից ու աշխույժ, և ինչպես կարող է բուժ ու տափակ գլուխն, առանց դուլզն ինչ կատարելագործվելու, ընդգրկել այն ամենամեծ իմաստունների մտքերը, որոնք երբևէ ապրել են աշխարհում:

Օտար, և, բացի դրանից, այդքան մեծ ու զորեղ բազմաթիվ ուղեղներ տեղավորելու համար անհրաժեշտ է (ինչպես մի մարդու մասին արտահայտվել է մի աղջիկ՝ առաջինը մեր արքայադուստրերի մեջ), որ սեփական ուղեղը նեղվի, սեղմվի ու փոքրանա:

Ես պատրաստ եմ պնդելու, թե, ինչպես բույսերն են նվազում շափազանց շատ խոնավությունից, իսկ կանթեղները՝ ձեթի առատությունից, այդպես էլ մարդկային ուղեղը շափից ավելի պարապմունքների և գիտելիքների առատության դեպքում խճողվում ու ճնշվում է դրան խիստ բազմազանությունից, կորցնում այդ կույտից գլուխ հանելու ունակությունը և ուժից վեր բեռի տակ ճկվում ու թռչնում է: Սակայն իրականում բանն այլ է, քանզի մեր հոգին որքան շատ է լցվում, այնքա ավելի տարողունակ է դառնում, և հին ժամանակներում ապրողները մեջ, ընդհակառակը, կարելի է տեսնել, հասարակական ասպարեզու փառաբանված բավական շատ մարդիկ, օրինակ, մեծ զորավարներ կապետական գործիչներ, որոնք աշքի են ընկնում նաև գիտունությամբ:

Ինչ վերաբերում է հասարակական կյանքին մասնակցելուց խուսափող փիլիսոփաներին, ապա զուր չէ, որ իրենց ժամանակակից կատակերգությունն առանց ամաչելու երբեմն ծաղրում էր նրանց, քան նրանց կարծիքներն ու վարքագիծն իրոք թվում էին զվարճալի: Կուզե նրանց դարձնել դատավորներ, որոնք վճիռ՝ կկայացնեին՝ մեկի դատավեճին կամ կգնահատեին այս կամ այն անձի գործողությունները: Ս նրանք մեծ պատրաստակամությամբ հանձն կառնեին դա: Նախ և առա

նրանք կզբաղվեն հետևյալ հարցերով. կա՞ արդյոք կյանք, գոյություն ունի՞ շարժում: Արդյո՞ք մարդը մեկ այլ բան է, քան ցուլը: Ի՞նչ են նշանակում գործելն ու տառապելը: Այդ ի՞նչ գազաններ են օրենքներն ու արդարադատությունը: Կառավարողների մասին խոսելու լինեն հետեւից՝ թե զրուցեն անձամբ՝ նրանց խոսքը միատեսակ հանդուգն է և անհարգալից: Թեկուզ գովեստներ լսեն իրենց իշխանի կամ թագավորի հասցեին՝ նրանց համար այդ մարդն ավելին չէ, քան բոլոր հովիվների նման պարապ, թերևս ավելի բռի, մի հովիվ, որը բացառապես զբաղված է իբ հօտը խուզելով ու կթելով: Եթե դուք երկու հազար արպան⁵ հող ունեցողին բարձր եք դասում մյուսներից, նրանք սկսում են ծագրել դա, քանզի սովոր են ամբողջ աշխարհը դիտել որպես իրենց սեփականությունը: Եթե դուք հպարտ եք ձեր տոհմիկությունամբ, որովհետև յոթ մեծահարուստ նախնի ունեք, նրանք ձեզ բանի տեղ չեն դնի, քանզի, նրանց կարծիքով, դուք չեք ըմբռնել բնության ընդհանուր պատկերը և մոռացել եք, թե մեզանից յուրաքանչյուրի նախնյաց մեջ որքան հարուստներ ու աղքատներ, արքաներ ու ծառաներ, ուսյալ մարդիկ ու բարբարոսներ կան: Եվ անգամ եթե դուք հիստուներորդ պորտում Հերկուլեսի հետնորդներ եք, այդ ղեպքում նրանք կառեն, թե ունայնամիտ եք, եթե զնահատում եք ճակատագրի այդ պարզերը: Հենց սա է պատճառը այն արհամարհանքի, որ նրանց, իբրև ամենահասարակ հանրահայտ բաները շհասկացող, ըստ որում ինքնահավան ու զոռոզամիտ մարդկանց հանդեպ տածում է ամբոխը⁶: Սակայն Պլատոնի այս պատկերումը շատ հեռու է մեր տառակերներից: Հին աշխարհի փիլիսոփաները նախանձ էին հարուցում, քանզի բարձր էին ընդհանուր մակարդակից, արժամարհում էին հասարակական գործունեությունը, ապրում էին օտարացած, իրենց հատուկ ձևով, ղեկավարվելով մի քանի վեհ և համընդհանուր տարածում չունեցող կանոններով: Մեր տառակերներին, ընդհանուրապես, արհամարհում են, որովհետև նրանք ցածր են ընդհանուր մակարդակից, ընդունակ չեն հասարակական պարտականություններ կատարելու և, վերջապես, կողմնակից են ավելի բիրտ ու սուր կենսապի ու բարքերի, քան ամբոխի բարքերն ու կենսաձևը:

Odi homines ignava opera, philosopha sententia*.

Ուրեմն, այսպես, ինչ վերաբերում է հին աշխարհի փիլիսոփաներին, ապա, իմ կարծիքով այդ մեծ իմաստուններն ավելի մեծ էին կյան-

* Ես ատում եմ գործի համար ոչ պիտանի և ճապաղ դատողություններ անող մարդկանց⁷ (լատ.):

բում: Դատելով պատմություններից, այդպիսին էր սիրակուանցի այն մեծն երկրաչափը⁸, որը շեղվեց իր գիտական հետազոտություններից, դրանք մասամբ օգտագործելու համար կյանքում, հայրենիքը պաշտպանելու նպատակով, և անսպասելիորեն գործի դրեց արտասովոր մեքենաներ, որոնց ուժը գերազանցում էր այն ամենին, ինչ կարող է պատկերացնել մարդը: Սակայն նա ինքը խորապես ատում էր իր հայտնագործությունները, գտնելով, թե դրանցով զբաղված, նսեմացրել է իր գիտությունը, որի համար դրանք ավելին չէին, քան աշակերտական վարժություններ կամ խաղալիքներ: Այսպիսով, ամեն անգամ, երբ այդ իմաստուններն ստիպված էին լինում գործով ստուգել իրենց, նրանք վեր էին խոչանում, և յուրաքանչյուրի համար պարզ էր դառնում, որ նրան սրտերն ու հոգիներն այդպես զարմանալիորեն վեհացել ու հարստացել են շնորհիվ իրերի բուն էությունը ճանաչելու: Սակայն ոմանք տեսնելով, որ պետության մեջ կարևորագույն պաշտոնները զբաղեցրել է ապիկար մարդիկ, հրաժարվեցին հասարակությանը ծառայելուց, և նստով հարցրեց Կրատեսին⁹, թե ինչքան կարելի է փիլիսոփայել, ի պատասխան լսեց. «Մինչև որ իշապանները դադարեն գլխավորել մեր գործը»: Հերակլիտը հրաժարվեց թագավորությունից, այն գիշերով եղբոր և էփեսոսցիներին, որոնք նրան կշտամբում էին, թե իր ամբողջ ժամանակը նվիրում է տաճարի մոտ երեխաների հետ խաղալուն, պատասխանեց. «Մի՞թե դա ավելի լավ չէ, քան ձեզ հետ համատեղ գործեր կատարելը»: Ոմանք, մտովի վեր կանգնելով աշխարհիկ գործերից ու ճակատագրերից, ստոր ու անարգ համարեցին ոչ միայն դատավորակաթոռները, այլև հենց արքայական թագերը: Չէ որ էմպեդոկլեսը հրաժարվեց Ագրիգենտի բնակիչների առաջարկած գահից: Թալեսին¹⁰, որ բազմիցս մերկացրել է ժլատությունն ու հարստանալու տենչը, կշտամբեցին, թե առակի աղվեսի նման զրպարտում է այն, ինչին չի կարող հասնել: Ե՛վ ահա, մի անգամ նա զվարճության համար կամեցավ փրկատարել, օգուտին ու շահին ի սպաս դնելու շափ ստորացնելով՝ իմաստնությունը, նա զբաղվեց առևտրով, որը մեկ տարում բերեց ավիսի հարստություն, ինչպիսին իրենց ամբողջ կյանքում դժվարություն էր հաջողվում կուտակել նման գործերում առավել փորձառու մարդկանքը:

Արիստոտելը պատմում է, թե ոմանք Թալեսին, Անաքսագորասին և նրանց նմաններին անվանում էին իմաստուններ, բայց բնավ ոչ ի հեմ մարդիկ, քանզի նրանք բավականաչափ չէին հոգում ավելի օգտակար բաների մասին: Սակայն ասեմ, որ ես այնքան էլ չեմ ըմբռնում այդ երկու բառերի տարբերությունը, ասվածը ոչ մի կերպ չի արդարանում մեր տառակիրներին. իմանալով, թե ինչպիսի անարգ ու անգործ

վիճակի հետ են նրանք հաշտվում, մենք ավելի շուտ հիմք կունենայինք այդ երկու բառն. օգտագործել նրանց հասցեին, ասելով, թե ոչ իմաստուն են, ոչ խոհեմ:

Ես համակարծիք չեմ այն մարդկանց, որոնց մասին խոսում է Արիստոտելը, ես կարծում եմ, մենք ճշմարտութեանն ավելի մոտ կլինեինք, եթե ասեինք, որ ամբողջ շարիքը գիտութեան նկատմամբ նրանց սխալ մտայնության մեջ է: Ուշագրութեան առնելով մեր ուսման եղանակը, զարմանալի չէ, որ դրանից ոչ աշակերտներն են, դառնում ավելի իմաստուն, ոչ ուսուցիչները, թեև ուսում ձեռք են բերում: Եվ իրոք, մեր հայրերի հոգսերն ու ծախսերը չեն հետապնդում այլ նպատակ, քան մեր դուխը լցնել զանազն գիտելիքներով միայն, ինչ վերաբերում է բանականությանն ու առաքինությանը, ապա դրանց մասին գրեթե չեն մտածում: Որևէ անցորդի մասին մեր ամբոխին բղավեք. «Սա շատ գիտուն այր է», մեկ ուրիշի մասին. «Սա առաքինի՞ մարդ է», և այն չի հապաղի հայտնելն ու հարգանքն ուղղել առաջինին: Թեև հարկ է, որ մեկնումեկը գոռար. «Ո՞վ բթամիտներ: Մենք միշտ հարցնում ենք. այսինչը հունարեն կամ լատիներեն գիտե՞ արդյոք: Նա չափածո՞ է դրում, թե արձակ: Սակայն, ամենից քիչ մենք հետաքրքրվում ենք, թե արդյոք նա դրանից դարձել է ավելի բարի ու խելոք, որ, անշուշտ, ամենադժուրն է: Այնինչ, պետք է աշխատես որոշել ոչ թե շատ իմացողին, այլ լավ իմացողին»:

Մենք աշխատում ենք միայն, որ լցնենք մեր հիշողությունը, պատույթողնելով բանականությունն ու խիղճը: Երբեմն թուշունները՝ հարկ դրնելով, կտուցի մեջ պահած սանում են և, առանց համը տեսնելու, կերակրում ձտերին, այդպես էլ մեր սառակերները, ցրքերից գիտելիքներ քաղելով, պահում են շուրթերին, որ անմիջապես աղաավեն դրանց ու քամուն տան:

Սակայն, ես ինքս էլ կարող եմ նման հիմարության վառ օրինակ հառայել: Մի՞թե ես մեծ մասամբ նույն բանը չեմ անում այս ստեղծարծության մեջ: Ես առաջ եմ ընթանում, այս կամ այն գրքից կորզելով ինձ դուր եկած ասույթները ոչ թե իմ մեջ պահելու նպատակով, բռնովի դրա համար շունեմ շտեմարաններ, այլ որպեսզի այդ բոլորը անխողրեմ սույն պահոցը, ուր, անկեղծ ասած, դրանք ինձ պատկառում են ոչ ավելի, քան իրենց հին տեղին: Մեր գիտունությունը (համեմատյալ դեպս, ես այդպես եմ գտնում) լոկ այն է, ինչ գիտենք այս պահին. մեր նախկին, իսկ առավել ևս քապազա գիտելիքները ոչ մի կապ չունեն այստեղ:

Սակայն, որ ավելի վատ է, մեր տառակերների սշակերտներն ու

ճարերը չեն սողորվում նրանց գիտութեամբ և չեն յուրացնում այն, վերջինս միայն ձեռքից ձեռք է անցնում, ծառայելով լոկ այն բանին, որ իրենով պարծենան, զվարճացնեն ուրիշներին և դարձնեն հետաքրքիր դրույցի առարկա, հաշվային խաղանիշների պես մի բան, որը, բացի հաշվից կամ խաղից, պիտանի չէ այլ կիրառության և օգտագործման։

Apud alios loqui didicerunt, non ipsi secum.* — *Non est loquendum, sed gubernandum***

Բնությունը, ձգտելով ցույց տալ, որ իր տիրապետության տալ գտնվող աշխարհում չկա վայրի ոչինչ, երբեմն սակավ լուսավոր ժողովուրդների մեջ ծնում է սրամտության այնպիսի մարգարիտներ, որոնք կարող են մրցել արվեստի առավել կատարյալ ստեղծագործություններ հետ։ Որքան լավն է և որքան է իմ խոսակցության առարկային սազուն հասկոնական հետևյալ ասացվածքը. «Bouha prou bouha, mas a remuda lo ditz qu'era»—

«Փչես հա փչես, բայց ախր մատներդ էլ պիտի շարժես» (խոսքը սրին է վազելու մասին է)։

Մենք կարողանում ենք վեհակերպ տեսքով ասել. «Այդպես է ասում Յիցերոնը» կամ «այդպիսին է բարոյականության մասին Պլատոնի ուսմունքը», կամ «ահա Արիստոտելի իսկական բառերը»։ Իսկ ինքնե՞րս ի՞նչ կարող ենք ասել մեր անունից։ Ինչպիսի՞ն են մեր սեփական դատողությունները։ Ինչպիսի՞ն են մեր արարքները։ Թե չէ թուփակն է կարող էր դա ասել։ Այդ առթիվ միտս է գալիս հոմեացի մի հարուստ որը, կանգ շտանելով ծախսերի առաջ, շատ ջանք թափեց, որ իր տանը հավաքեր տարբեր գիտություններից քաջատեղյակ մարդկանց, նա վերջիններիս մշտապես պահում էր իր կողքին, որպեսզի, եթե խոսք բացվեց այս կամ այն առարկայի մասին, մեկը կարողանար իր փոխարեն դատողություն անել, մյուսը՝ Հոմերոսի բանաստեղծությունն արտասանել մի խոսքով, ամեն մեկն իր բնագավառից։ Նա գտնում էր, որ այդ գիտելիքներն իր անձնական սեփականությունն են, քանզի ամբարված է իրեն պատկանող մարդկանց գլուխներում։ Ճիշտ նույն կերպ են վաղվում նաև այն մարդիկ, որոնց բանիմացությունը հարուստ գրադարաններնալն է։

Ես ճանաչում եմ այդպիսի մեկին, երբ թեկուզ իրեն քաջ հայտնորևէ բան եմ հարցնում, նա անմիջապես պահանջում է գիրքը, որ գտնվում է իր գրադարանում։

[* Նրանք սովորել են խոսել ուրիշների առաջ, սակայն ոչ իրենք իրենց հետ¹² (լատ.)
** Հարկ է ոչ թե խոսել, այլ գործել¹³ (լատ.)։

հարկ եղած պատասխանը, և նա երբեք չի համարձակվի ասել, թե իր հետույքի վրա գոնջուկ է առաջացել, մինչև իր բառարանում չնայի ինչ է հետույքը և ինչ է գոնջուկը:

Մենք պահ ենք վերցնում ուրիշների մտքերն ու գիտելիքները, ահա և բոլորը: Սակայն, պետք է դրանք սեփականացնել: Մենք նմանվում ենք այն մարդուն, որը, կրակի կարիք ունենալով, գնում է հարևանի մոտ և, այնտեղ հիանալի, վառ կրակ տեսնելով, սկսում տաքանալ ուրիշի օջախի կողքին, մոռանալով սեփական տաք օջախ վառելու իր մտադրությունը: Ի՞նչ միտք ունի փորներս տավարի մտով լցնելը, եթե այն չենք մարսում, եթե այն չի դառնում մեր մարմնի հյուսվածքը, եթե չի ավելացնում մեր քաշն ու ուժերը: Կամ, գուցե, մենք կարծում ենք, թե լուկուլլոսը, որը ռազմական գործերին ծանոթ էր միայն գրքերից և, չնայած անձնական փորձի բացակայությանը, դարձել էր այդպիսի նշանավոր գորավար, մեզ նման էր ուսումնասիրում այն:

Մենք այնպիսի ուժով ենք հենվում ուրիշների ձեռքերին, որ, ի վերջո, ուժասպառ ենք լինում: Ուղում եմ հազթահարել մահվան սարսափը: Ես դա անում եմ ի հաշիվ Սենեկայի: Աշխատում եմ մխիթարվել կամ մխիթարել ուրիշին: Դիմում եմ Ցիցերոնին: Մինչդեռ, եթե ինձ հարկ եղածին պես դաստիարակած լինեիր, կղիմեի ինքս ինձ: Ոչ, ես չեմ սիրում աջից ձախից հավաքած այդ խիստ հարաբերական հարստությունը:

Եվ եթե գիտուն կարելի է լինել ուրիշի գիտունությանը, ապա իմաստուն մենք կարող ենք լինել միայն սեփական իմաստնությանը:

Μισῶ σοφιστήν, ὅστις οὐχ αὐτῷ σοφός*,

Eix quo Ennius: Nequicquam sapere sapientem, qui ipse sibi prodesse non quiret**.

si cupidus, si

Vanus et Euganea quantumvis vilior agna***.

Non enim paranda nobis solum, sed fruenda sepientia est****.

Դիոնիսիոսը ծաղրում էր այն քերականներին, որոնք ամենայն մանրակրկիտությամբ ուսումնասիրում են Ողիսևսին հասած պոտուհասնե-

* Ատում եմ այն իմաստունին, որն իմաստուն չէ իր համար¹⁴ (լատ.):

** Որի հիման վրա, էննիոս, իմաստունն օգուտ չունի իմաստնությունից, եթե ինքն իրեն չի կարող օգնել¹⁵ (լատ.):

*** Եթե նա աղահ է, ստախոս է և նրան գնելն ավելի դյուրին է, քան ելջանական օխարը¹⁶ (լատ.):

**** Քանզի մենք պետք է ոչ միայն կուսակենք իմաստնությունը, այլև օգուտ քաղենք նրանից¹⁷ (լատ.):

րը, սակայն չեն նկատում իրենցը, այն երաժիշտներին, որոնք դիտեն լարել իրենց ֆլեյտաները, սակայն չեն իմանում, թե ինչպես ներդաշնակութուն մտցնեն սեփական բարձրում, այն հոնտորներին, որոնք աշխատում են արդարութուն քարոզել, սակայն իրականում չեն պահպանում այն¹⁸:

Եթե ուսումը մեր հոգում չի հարուցում ոչ մի փոփոխություն դեպի լավը, եթե մեր դատողությունները նրա օգնությամբ չեն դառնում ավելի առողջ, ապա, իմ կարծիքով, մեր դպրոցականը, դիտություններով զրազվելու փոխաբեն կարող էր նույն հաջողությամբ զնդակ խաղալ, այդ դեպքում, համենայն գեպս, նրա մարմինը կգառնար ավելի ամրակազմ: Սակայն նայեցեք, ահա նա տասնհինգ թե տասնվեց տարի պարապելուց հետո վերադառնում է, կգտնվի՞ արդյոք մեկը, որ այդ աստիճան անընտել լինի պրակտիկ գործունեության: Իր լատիներենից ու հունարենից նա դարձել է ավելի դոկտրամիտ ու ինքնավստահ, քան առաջ էր, երբ թողեց հայրական տունը, ահա և նրա ամբողջ նվաճումը: Պետք է, որ նա գար լեցուն հոգով, իսկ նա գալիս է տոզած հոգով, պետք է, որ հոգին վեհանար, իսկ նրանք միայն փքվել է:

Մեր ուսուցիչները, ինչպես նրանց եզբայր-սոփեստները, որոնց մասին նույն բանն է ասում Պլատոնը¹⁹, մյուս բոլոր մարդկանցից նրանք են, ովքեր խոստանում են մարդկության համար լինել ամենից օգտակար, իսկ իրականում, մյուս բոլոր մարդկանցից միակն են, որոնք ոչ միայն չեն կատարելագործում մշակման համար իրենց տրված առարկաները, ինչպես, օրինակ, անում է քարտաշը կամ ատաղձագործը, այլ, ընդհակառակը, փշաջնում են այն, և ընդամին պահանջում, որ իրենց վարձատրեն այն ավելի վատ վիճակի հասցնելու համար:

Եթե մեզանում գործեր իր սաներին Պրոտագորասի առաջարկած կանոնը²⁰, այսինքն, կամ նրանք իր ուզածի շահով վճարում են, կամ, երգվելով, ի լուր ամենքի տաճարում հայտարարում, թե իրենք ինչքան են զնահատում նրա հետ պարապմունքներից ստացած օգուտը, և ըստ այդմ վարձատրում նրա աշխատանքը, ապա իմ ուսուցիչները չէին հարբստանա, ստանալով իմ երգման հիման վրա տված վտրձը:

Իմ հայրենակից պերիգորցիներն այդպիսի ուսյալ այրերին շատ դիպուկ անվանում են *lettererits* (գրքավորվածներ), նման այն բանին, թե ֆրանսիերեն ասես *lettre-ferus*, այսինքն՝ մարդիկ, որոնց գիտությունը կարծես շճեցրել է, խփելով գանգին: Եվ իրոք, ամենից հաճախ նրանք մեզ թվում են հուսաբեկ, նույնիսկ ամենասովորական ուղչամտությունների գուրկ: Վերցրեք գյուղացուն կամ կոշկակարին. տեսնում եք, որ նրանք

կամաց-կամաց ապրում են հասարակ և առանց խելքներին զոտ տալու, խոսելով սոսկ այն բաների մասին, որոնք իրենց ստույգ հայտնի են: Իսկ մեր ուսյալ այրերը, ձգտելով վեր կանգնել մյուսներից և պարծենալ իրականում խիստ մակերեսային իրենց գիտելիքներով, շարունակ սայթաքում են կյանքի ճանապարհին և անհարմար վիճակի մեջ ընկնում: Նրանք կարողանում են պերճախոսել, սակայն հարկ է, որ մեկ ուրիշն իրապես կիրառի նրանց խոսքերը: Նրանք քաջ գիտեն Գալենոսին²¹, բայց ընավ չեն իմանում հիվանդին: Չեր դատավեճից դեռ պուխ չհանած, նրանք ձեր գլուխը լցնում են անհաշիվ օրենքներով: Նրանց հայտնի է աշխարհի ամեն մի իրի տեսությունը, պետք է լուկ գտնել այն մարդուն, որը կկիրառի դա գործնականում:

Մի անգամ ինձ վիճակվել է իմ տանը հետևել, թե ինչպես բարեկամներիցս մեկը, հանդիպելով այդպիսի մանրախնդիր մի մարդու, զվարճության համար սկսեց ընդօրինակել նրանց անիմաստ ժարգոնին, անկապ շաղ տալով իմաստնագույն բառեր, խճողելով դրանք և միայն ժամանակ առ ժամանակ մեջ զցելով արտահայտություններ, որոնք վերաբերում էին իրենց բանավեճի նյութին: Նա այդ տխմարին, որը երեվակայում էր, թե պատասխանում է իրեն արվող առարկություններին, ստիպեց ամբողջ օրը վիճել: Սակայն չէ որ դա շատ գիտուն, ճանաչում վայելող և նշանավոր դիրք զբաղեցնող մարդ էր:

Vos, o patricius sanguis, quos vivere par est
Occipiti caeco, posticae occurrere sannae*.

Մարդկանց, պետք է ասել, բավական տարածված այդ տեսակին ուշադիր նայողը, ինձ նման, կգտնի, որ ամենից հաճախ նրանք ընդունակ չեն հասկանալու ոչ իրենք իրենց, ոչ ուրիշներին, ու, թեև նրանց հիշողությունը լիքն է ամեն տեսակ բաներով, գլուխներում բացարձակ դատարկություն է, բացի այն դեպքերից, երբ բնությունն ինքը կամեցել է այլ կերպ ստեղծել նրանց: Այսպիսին էր օրինակ, Ադրիան Տուրները²³, Չմտածելով ուրիշ ոչ մի բանի մասին, բացի գիտությունից, ուր նա, իմ կարծիքով, պետք է համարվի վերջին հազարամյակի մեծագույն հանճարը, նա չունեի մանրախնդիր մարդուն հատուկ ոչինչ, բացի միայն հագուստի ձևից և որոշ սովորություններից, որոնք չէին խրախուսվում, գուցե, արքունիքում: Սակայն, սրանք մանրուքներ են, որոնց

* Ո՞վ քեզ պատրիկներին: Դուք, որ պետք է ապրեք առանց հետ նայելու, զգուշացեք, որ ձեր հետևից չծագրեն ձեզ²² (լատ.):

փրա կարիք չկա ուշադրութեան դարձնել: Ես ասում եմ մեր մողայա-
մուկներին, որոնք ավելի անհանդուրժողաբար են վերաբերվում արատ
ունեցող զգեստին, քան այդպիսի հոգուն, և մարդու մասին դատում են
ըստ այն բանի միայն, թե որքանով է ճարպիկ նրա խոնարհ ողջույնը,
ինչպես է իրեն պահում մարդկանց մեջ և ինչպիսի կոշիկներ ունի հագին:
Բսկ ըստ էութեան, Տուբնեթի հոգին աշխարհում ամենաքնքուշն էր և ամե-
նազգայունը: Ես հաճախ նրան դիտավորյալ հակում էի իր սովորական
զրադմունքի առարկայից հեռու զրույցի, նրա աչքն այնքան սուր էր,
խելքն այնքան դյուրըմբռնող, դատողութուններն այնքան առողջ, որ
թվում էր, թե ռազմական հարցերից ու պետական գործերից զատ, եր-
բեք ուրիշ բանով չի զբաղվել: Ուժեղ ու շնորհալի անհատականութուն-
ները,

queis arte benigna
Ex meliore luto finxit praecordia Titan*.

մնում են միանգամայն ամբողջական, որքան էլ դաստիարակութունն
աղճատի նրանց: Սակայն, ըստական չէ, որ դաստիարակութունն ընդամե-
նը չփշացնի մեզ, հարկ է, որ այն մեզ բարեփոխի:

Մեր որոշ պառլամենտներ, պաշտոնյաներ ծառայության ընդունե-
լիս ստուգում են միայն նրանց գիտելիքները, սակայն ուրիշները զրա
հետ միասին փորձում են նաև նրանց խելքը, առաջարկելով կարծիք
հայտնել այս կամ այն դատական գործի վերաբերյալ: Ըստ իս, վեր-
ջինները վարվում են անհամեմատ ավելի ճիշտ, թեպետ անհրաժեշտ
են և՛ մեկը, և՛ մյուսը և հարկ է, որ այդ երկու հատկանիշներն էլ առ-
կա լինեն, բայց և այնպես, անկեղծ ասած, գիտելիքներն ինձ թվում են
ավելի պակաս արժեքավոր, քան խելքը: Վերջինը կարող է յուր գնալ
առանց առաջինի օգնության, մինչդեռ առաջինն առանց խելքի չի կար-
ող: Քանզի, ինչպես ասվում է հունական բանաստեղծությունում,

‘Ως οὐδὲν ἢ μάθῃσι, ἢν μὴ νοῦν παρῆ.

ինչի՞ է պետք գիտությունը, եթե չկա հասկացողություն²⁵: Տա ասված,
որ ի բարորություն մեր արգարագատության, այդ դատական հիմնարկ-

* Որոնց հոգիները ողորմած արվեստով ձեփակերտել է Տիտանը (այսինքն Պրոմե-
թեոսը) լավագույն կավից²⁴ (լատ.):

ներր դառնան նույնքան բանական ու խղճմտանք ունեցող, որքան հարուստ են գիտելիքներով:

Nam vitae, sed scholae discimus*.

Ախր բանն այն չէ, որ գիտելիքներն, այսպես ասած, կցես հոգուդ. դրանք պտք է արմատավորվեն նրանում. այն չէ, որ հոգիդ ցողես գիտելիքներով, հարկ է, որ այն ամբողջությամբ տողորվի դրանցով, ու եթե այն չի փոխվի և չի բարելավվի իր անկատար էությունը, ապա, անտարակույս, ավելի խելամիտ կլինի հրաժարվել նյգ ամենից: Գիտելիքները երկասյր զենք են, որը միայն ծանրաբեռնում է և կարող է վերք հասցնել իր տիրոջը, եթե բռնող ձեռքը թույլ է և վատ է տիրապետում նրան. ut fuerit melius non didicisse**.

Գուցե, հենց դա է պատճառը, որ թե մենք, թե աստվածաբանները կանանցից չենք պահանջում առանձին գիտելիքներ, և երբ Բրետոնի դուքս Ֆրանցիսկին²⁸ Հովհանես V-ի որդուն, նկատի առնելով Իզաբել Շոտլանդացու հետ նրա ենթադրվող ամուսնությունը, հայտնեցին, թե նա համեստ դաստիարակություն ունի և ծանոթ չէ գրքային խորիմաստությունը, նա պատասխանեց, որ հենց դա է իրեն դուր գալիս և կինը բովանդանաչափ կրթված է, եթե իր ամուսնու վերնաշապիկը չի շփոթում նրա բաճկոնի հետ:

Ուստի բնավ էլ զարմանալի չէ, ինչպես այդ մասին բղավում են ամենուր, որ մեր նախնիներն այնքան էլ չէին գնահատում գիտությունները և դրանց տիրապետող մարդիկ այժմ էլ տակավին բացառիկ երեվույթ են թագավորի մերձավոր խորհրդականների շրջանում: Եվ եթե նորստանալու (որին մեր օրերում կարելի է հասնել իրավաբանության, բժշկության, դասավանդման և աստվածաբանության օգնությամբ) համընդհանուր մարմաչք շահապաներ գիտության հեղինակությունը, մենք այն կտեսնեինք, անկասկած, նույնքան արհամարհված, որքան նախկինում էր: Ի՛նչ ցավալի է, սակայն, որ այն մեզ չի սովորեցնում ո՛չ ճիշտ մտածել, ո՛չ ճիշտ գործել: Postquam docti prodierunt, boni desunt***.

* Մենք սովորում ենք ոչ թե կյանքի, այլ դպրոցի համար²⁶ (այսինքն՝ սովորում ենք մե գործել կյանքում, այլ սոսկ դատողություններ տնել (լատ.):

** Այնպես որ լավ կլիներ առհասարակ շտովորել²⁷ (լատ.):

*** Այն բանից հետո, երբ երևան եկան գիտուն մարդիկ, չկան այլևս լավ մարդիկ²⁹ (լատ.):

Նրան, ով չի ըմբռնել բարու գիտութիւնը, ամեն մի այլ գիտութիւն միայն վնաս է բերում: Դրա պատճառը, որ ես հենց նոր փորձեցի պարզել, պուցե, նաև այն է, որ մեզ մոտ Ֆրանսիայում գիտութիւնների ուսուցումը, որպէս կանոն, չի հետապնդում այլ նպատակ, բացի ուղղակի շահից: Ես չեմ վերցնում այն սակավաթիվ մարդկանց, որոնք, հենց բնութիւն կողմից ստեղծված լինելով ավելի շուտ ազնիվ, քան շահութաբեր գրադմունքների համար, ամբողջ հոգով նվիրվում են գիտութիւնը, նրանցից ոմանք, չհասցնելով ինչպես հարկն է ճաշակել գիտութիւն հաճույքը, այն թողնում են հանուն մի գործունեութիւն, որը շունքի գրքերի հետ սչ մի ընդհանուր բան: Այսպիսով, գիտութիւնը տարվում են միայն շարաքախտ մարդիկ, որոնք նրանում գոյութիւն միջոցներ են փնտրում: Սակայն այդ մարդկանց հոգում, և՛ խառնվածքից, և՛ տնային դաստիարակութիւն հետևանքով, ինչպես նաև վատ օրինակների ազդեցութիւն տակ գիտութիւնն ամենից հաճախ տալիս է վատ պտուղներ: Չէ որ այն ի վիճակի չէ լուսավորել լույսից զուրկ հոգին, կամ ստիպել, որ տեսնի կույրը, նրա խնդիրը մարդուն տեսողութիւն պարզեցնել չէ, այլ այն, որ սովորեցնի շարժվելիս ճիշտ օգտագործել տեսողութիւնը, իհարկե, պայմանով, որ նա ունի առողջ և շարժունակ ոտքեր: Գիտութիւնը հիանալի գեղամիջոց է, բայց ոչ մի գեղամիջոց չէ լինում այնքան դիմացկուն, որ պահպանվի առանց փշանալու և փոփոխվելու, եթե վատն է սրվակը: Մեկը, կարծես, լավ տեսողութիւն ունի, բայց, ցավոք, շիլ է, ահա թե ինչու բարին տեսնում է, բայց մի կողմ շեղվում նրանից, գիտութիւնը տեսնում է, բայց չի հետևում նրա հրահանգներին: Պլատոնի պետութիւնում հիմնական կանոնը յուրաքանչյուր քաղաքացու վրա միայն նրա խառնվածքին համապատասխանող պարտականութիւններ դնելն է: Բնութիւնը կարող է և տեսնում է ամեն ինչ: Կազերը քիչ են պիտանի այն բանին, ինչը մարմնական ջանքեր է պահանջում, այդպէս էլ նրանք, ովքեր կազում են հոգով, քիչ են պիտանի այն բանին, ինչի համար պահանջվում են ոգու ջանքեր: Այլանգակ ստոր հոգին չի կարող վեհանալ մինչև փիլիսոփայութիւն: Հանդիպելով վատ կոշիկ հագած մարդու, ինքներս մեզ ասում ենք. զարմանալի չէ եթե նա կոշկակար է: Նույն կերպ, ինչպես ցույց է տալիս փորձը, հաճախ է լինում, երբ բժիշկն ավելի քիչ է հոգ տանում սեփական հիվանդութիւնների ապաքինման մասին, քան ուղածդ ուրիշ մարդ, աստվածաբանը՝ ինքնակատարելագործման, իսկ գիտնականը՝ իսկական գիտելիքների մասին:

Հին ժամանակներում քիսսի Արիստոնեսն անկասկած իրավասու էր, արտահայտելով այն միտքը, թե փիլիսոփաները վատ ազդեցութիւն

են թողնում իրենց ունկնդիրների վրա, քանզի մարդկային հոգին մեծ մասամբ ընդունակ չէ օգուտ քաղելու այն խրատներից, որոնք, և՛ մե բարիք չեն սերմանում, ապա շարիք են սերմանում. *ascetus ex Aristippi, acerbos ex Zenonis schola exire*”

Պարսիկների մոտ երեխաներին տրվող հիանալի դաստիարակության մասին Քսենոփոնի պատմությունից իմանում ենք, որ նրանք սովորեցնում էին առաքինություն, ինչպես մյուս ժողովուրդները երեխաներին սովորեցնում են գիտությունները: Պլատոնն ասում է³¹, թե նրանց թագավորների ավագ որդիները դաստիարակվում էին հետևյալ կերպ. նորածինն հանձնում էին ոչ թե կանանց, այլ իրենց առաքինությունների համար թագավորական ընտանիքի բարեհաճությունը վայելող ներքինիների խնամքին: Նրանք հետևում էին, որ երեխայի մարմինը լիներ գեղեցիկ ու առողջ, և ութ ասրեկանում սկսում էին նրան սովորեցնել ձիավարություն ու որսորդություն: Երբ տղան գառնում էր տասնչորս տարեկան, նրան հանձնում էին երկրի ամենախմաստուն, ամենաարդարամիտ, ամենաչափավոր և ամենախիզախ շորս դաստիարակների հսկողությունը: Առաջինը սովորեցնում էր կրոնական հավատալիքներն ու ծեսերը, երկրորդը՝ երբեք չստել, երրորդը՝ սիրապետել իր կրթերին, չորրորդը՝ չվախենալ ոչ մի քանից:

Շատ ուշադրավ է, որ Լիկորգոսի հիանալի, կարելի է ասել, իր կատարելությունը բացառիկ օրենքների ժողովածուի մեջ այդքան քիչ է խոսվում ուսուցման մասին, թեև երիտասարդության դաստիարակությանը հատկացվում է շատ մեծ ուշադրություն և դա դիտվում է որպես պետության կարևորագույն խնդիր, ըստ որում օրենսդիրը չի մոռանում նայնիսկ մուսանների մասին. ստացվում է, թե իբր ազնիվ պատանիները, որոնք արհամարհում էին ամեն մի լուծ, բացի առաքինության լծից, տարբեր գիտությունների մեր դասատուների փոխարեն կարիք ունեին քաջության, ողջախոհության ու արդարամտության ուսուցիչներն՝ օրինակ, ուրիշ իր օրենքներում հետևել է Պլատոնը: Նրանց սովորեցնում էին հետևյալ կերպ. սովորարար հարցնում էին, թե ինչ կարծիքի են այս կամ այն մարդու և նրա արարքների մասին, և եթե նրանք պատապարտում կամ, ընդհակառակը, գովում էին որևէ մեկին կամ որևէ գործողություն, ստիպում էին հիմնավորել իրենց կարծիքը, այդպիսով նրանք ճարտարացնում էին իրենց խելքը և, դրա հետ մեկտեղ, ուսում-

* Արիստիպոսի դպրոցից դուրս են գալիս անառակներ, Չենոնի դպրոցից՝ փնթփրկե-
րաններ, ³⁰ (լատ.):

նասիրում իրավունքը: Քսենոփոնն՝ մտալ Աստիագեսը Կյււրոսից պահանջում է րացաարություն տալ վերջին դասի ժամանակ տեղի ունեցած ամեն ինչի մասին: «Մեր դպրոցում, — ասում է նա, — մի բարձրահասակ տղա, որի թիկնոցը շափազանց կարճ էր, այն տվեց ավելի ցածրահասակ իր մի ընկերոջը, վերցնելով նրա երկար թիկնոցը: Ուսուցիչն ինձ հրամայեց դատավոր լինել դրա համար ծագած վեճին, և ես վճռեցի, որ ամեն բան պետք է մնա եղածին պես, քանզի տեղի ունեցածը միանգամայն ձեռնտու է վիճողներից և՛ մեկին, և՛ մյուսին: Ուսուցիչն ասաց, թե ես իրավացի չեմ, քանզի սահմանափակվել եմ հարմարության նկատառումներով, մինչդեռ սկզբից հարկ էր որոշել, թե շի տուժի արդյոք արդարությունը, որը պահանջում է, որպեսզի ոչ ոք բռնի կերպով չզրկվի սեփականությունից»: Տղան ավելացրեց, որ իրեն մտրակել են, ճիշտ այնպես, ինչպես մեր գյուղերում երեխաներին մտրակում են, երբ նրանք մոռանում են, թե ինչպես կլինի τώπω (ես խփում եմ) բայի անցյալ կատարչալը: Իմ ոեկտորը ստիպված կլինեի in genere demonstrativo գովեստի ճարտար խոսք ասել, ինձ համոզելու համար, որ իր դպրոցը չի զիջում նկարագրածին: Հներն ուզում էին կրճատել ճանապարհը և քանի որ ոչ մի գիտություն, նույնիսկ պատշաճ յուրացման դեպքում, վիճակի չէ մեզ տալ ավելին, քան ողջամտություն, ազնվություն ու վրձնականություն, անմիջապես դրանք ներարկել իրենց երեխաներին ուսուցանելով վերջիններիս ոչ թե լսողությամբ, այլ փորձով, նրանց հոգիներն ուղղելով ու ձևավորելով ոչ այնքան խրատներով ու բառերով, որքան օրինակներով ու գործերով, որպեսզի այդ հատկանիշներն ընկալվեին ոչ թե իբրև մի գիտելիք, այլ դառնային հոգու անբաժան առանձնահատկությունն ու սովորության պես մի բան, որպեսզի դրանք հոգու համար լինեին ոչ թե որպես կողմնակի ձեռքբերում, այլ դառնային նրբնական ու անքակտելի սեփականությունը: Այս առթիվ հիշեցնեմ, որ երբ Ագեսիլայոսին հարցրին, թե, իր կարծիքով ինչ պետք է սովորեցնել երեխաներին, նա պատասխանեց. «Այն, ինչ նրանք անելու են մեծանալուց հետո»: Զարմանալի չէ, որ նման դաստիարակությունը տալիս էր այդպիսի հիանալի պտուղներ:

Ասում են, թե հոետորներ, գեղանկարիչներ ու երաժիշտներ փրկարարում էին Հունաստանի այլ քաղաքներում, բայց օրենսդիրներ, դատավորներ ու զորավարներ՝ միայն Լակեդեմոնում: Աթենքում սովորեցնում էին լավ խոսել, այստեղ՝ լավ գործել, այնտեղ՝ թոթափել սովեստական փաստարկների կապանքներն ու դիմադրել բառային որոգայթների խա

* Հանդիսավորությամբ (լատ.):

բեռությանը, այստեղ՝ թոթափել կրքերի կապանքներն ու արհարար դիմադրել մահվանն ու ճակատագրի հարվածներին, այնտեղ հոգում էին բառերի մասին, այստեղ՝ գործի, այնտեղ՝ անընդհատ վարժեցնում էին լեզուն, այստեղ՝ հոգին: Ուստի զարմանալի չէ, որ, երբ Անտրիպատրոսը սպարտացիներից պահանջեց տալ հիսուն երեխա³², ցանկանալով պատանդ պահել, պատասխանը քիչ էր նման այն պատասխանին, որ նրանց փոխարեն կտայինք մենք, այսինքն՝ նրանք հայտարարեցին, թե գերադասում են տալ կրկնակի քանակությամբ շափահաս տղամարդիկ: Այդքան բարձր էին գնահատում նրանք դաստիարակությունն իրենց հայրենիքում և այդքան վախենում, թե իրենց երեխաները հանկարծ կզրկվեն դրանից: Ագեսիլայոսը Քսենոփոնին համոզում էր իր երեխաներին դաստիարակության ուղարկել Սպարտա ոչ թե այնտեղ հոետորություն կամ դիալեկտիկա ուսումնասիրելու, այլ նրա համար, որ յուրացնեին ամենահիանալի (ինչպես ինքն է արտահայտվել) գիտությունը՝ հնազանդվելու և հրամայելու գիտությունը:

Շատ հետաքրքիր է հետևել Սոկրատեսին, երբ նա, իր սովորության համաձայն ծաղրում է Հիպիասին, որը պատմում է, թե, զբաղվելով դասավանդությամբ, զլխավորապես Սիցիլիայի փոքր քաղաքներում, ինքը բավական շատ փող է վաստակել և, ընդհակառակը, Սպարտայում չի հայթայթել ոչ մի գրոշ, այնտեղ ապրում են բոլորովին խավարամիտ մարդիկ, որոնք գաղափար չունեն երկրաչափության ու թվաբանության մասին, ոչինչ չեն հասկանում տաղաչափությունից ու քերականությունից և հետաքրքրվում են միայն իրենց արքաների հաջորդականությունը, պետությունների ծագմամբ ու անկումով և նման դատարկ բաներով: Լսելով Հիպիասին³³, Սոկրատեսն աստիճանաբար, սրամիտ հարցերով, ստիպեց խոստովանել նրանց հասարակական կառուցվածքի գերազանցությունը, այն, թե ինչպիսի առաքինի և երջանիկ կյանք են վարում սպարտացիները, թողնելով, որ զրուցակիցն ինքը հետևություն անի նրանց համար իր դասավանդած գիտությունների անօգտակարության մասին:

Բազմաթիվ այն օրինակները, որ մեզ ցույց են տալիս և՛ ռազմական եղանակով կառավարվող այդ պետությունը, և՛ նրա նմանները, ստիպում են խոստովանել, որ գիտություններով զբաղվելն ավելի շուտ քնքշացնում է հոգիներն ու նպաստում դրանց փափկացմանը, քան ամբարայնում ու կոփում դրանք: Ներկայումս մեզ հայտնի ամենահզոր պետությունը թուրքերի կայսրությունն է, մի ժողովուրդ, որը դաստիարակված է հարգել զենքն ու արհամարհել գիտությունները³⁴: Ես գտնում եմ, որ Հռոմը նույնպես անհամեմատ ավելի հզոր էր, քանի դեռ այնտեղ

չէր տարածվել կրթութիւնը: Եվ մեր օրերում ամենաազմատենչ ժողովուրդները միաժամանակ ամենից վայրին են ու անկիրթը: Ապացույց կարող են ծառայել նաև սկյութացիները, պարթևները, Լենկթեմուրը³⁵: Հունաստանի վրա գոթերի ասպատակութեան ժամանակ գրադարանները շճրկիզվեցին միայն շնորհիվ այն նվաճողի, որը ճիշտ համարեց թողնել այդ ամբողջ, ինչպես ինքն արտահայտեց, սպասքը հակառակորդին, որպեսզի այն շեղեր վինվորական վարժութիւններից և հակեր խաղաղ և նստակյաց զվարճութիւնների: Երբ մեր թագավոր Կարլոս VIII-ը, նույնիսկ առանց սուրբ պատյանից հանելու, տիրեց Նեապոլի թագավորութեանն ու Տոսկանայի մեծ մասին³⁶, նրա մերձավոր անձինք անսպասելի հեշտ հաղթանակը վերագրեցին լոկ այն բանին, որ Իտալիայի արքաներն ու ազնվականութիւնն անհամեմատ ավելի մեծ ջանքեր էին գործադրում նրբաճաշակ և կիրթ լինելու, քան ուժեղ ու ռազմաշունչ գառնալու համար:

Գլուխ XXVI

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տիկին Իրանա զը Ֆուային՝ կամսուհի զը Գյուստունին՝

Ես շեմ տեսել մի հայր, որ խոստովաներ, թե իր որդին քոստուել է կամ կուզ ունի, թեկուզ դա լինի ակնհայտ ճշմարտութիւն: Եվ ոչ թե (եթե միայն հայրական զգացմունքը վերջնականապես չի կուրացրել նրան) այն բանի համար, որ չի նկատում այդ թերութիւնները, այլ, որովհետև դա իր սեփական որդին է: Այդպես էլ ես եմ. ես հո ուրիշներից լավ եմ տեսնում, որ այս տողերը ոչ այլ ինչ են, եթե ոչ մոզոնվածք մի մարդու, որը ճաշակել է գիտութեան լոկ ցողունները, այն էլ մանուկ հասակում, և հիշողութեան մեջ պահել նրա կերպարանքի մասին ամենաընդհանուր և միանգամայն աղոտ պատկերացում. մի քիչ սրանից, մի քիչ նրանից, իսկ ընդհանրապես գրեթե ոչինչ՝ ըստ Ֆրանսիացիների սովորութեան: Իրոք, ես գիտեմ, օրինակ, բժշկութեան, իրավագիտութեան, մաթեմատիկայի շորս բաժինների մասին², և, շատ մոտավորապես, թե որն է դրանց առարկան: Գիտեմ նաև, որ գիտութիւններն, առհասարակ, հավակնութիւն ունեն ծառայելու մարդկութեանը: Սակայն խորանալ դրանց անմատչելի ոլորտներում, կրծել եզունգներս, ուսումնասիրելով ժամանակակից գիտութեան տիրակալ Արիստոտելին, կամ գլխովին թաղվել նրա որևէ անդաստանում, նման բան ինձ հետ երբեք չի եղել, և չկա դարոցական ուսուցման մի առարկա, որի տարրերը կարողանայի շարագրել: Ուսումնարանների միջին դասարաններում դուք չեք գտնի

մի երեխա, որն իրավունք չունենար՝ ասեղու, թե ինձանից կրթված է, քանզի ես չէի կարող նրան քննության ենթարկել իրեն տրված նույնիսկ առաջին դասերից, համենայն դեպս, դա կախված կլիներ դասի բովանդակությունից: Եթե ինձ այնուամենայնիվ հարկադրեին դրան, ապա, շունենալով ուրիշ քնտրություն, ես նման դասից կընտրեի, և ըստ որում շատ անշնորհք կերպով, ամենաընդհանուր տեղերը, ստուգելու համար աշակերտի մտավոր կարողությունները (քննություն, որին նա նույնքան անձանոթ է, որքան նրա դասը ինձ):

Ես հարկ եղածին պես շփտեմ ոչ մի հիմնավոր գիրք, եթե չհաշվենք Պլուտարքոսին ու Սենեկային, որոնցից քաղում եմ, ինչպես դանայունահները³, անընդհատ համակվելով դրանցով ու արտահայտելով դրանցից ստացածս: Որոշ բաներ այնտեղից հասել են նաև այս էջերը, իսկ ինձանում մնացել է այնքան քիչ բան, որ, կարելի է ասել, գրեթե ոչինչ:

Պատմությունն ինձ շատ է տալիս. նույնն է նաև պոեզիան, որի նկատմամբ ես առանձնահատուկ հակում ունեմ: Քանզի, Կլեանթեսի⁴ խոսքերով, ինչպես նեղ խողովակից դուրս թռչող ձայնն ավելի հզոր է ու զիլ, այդպես էլ, ինձ թվում է, մեր միտքը, կաշկանդված լինելով բանաստեղծական տարբեր չափերով, անհամեմատ ավելի պոռթկուն է և ավելի ուժգին է ցնցում ինձ: Ինչ վերաբերում է իմ բնասուր բնդունակություններին, որոնց նմուշներն այս տողերն են, ապա ես զգում եմ, թե դրանք ինչպես են նվազում այս խնդրի բեռի տակ: Իմ խելքն ու միտքը զեզերում են խարխափելով, երերալով ու սայթաքելով, և անգամ երբ ինձ հաջողվում է հասնել այն սահմաններին, որոնք գերազանցել չեմ կարող, ես երբեք չեմ զոհանում իմ ձեռք բերածով, միշտ իմ առջևում տեսնում եմ անհայտ հեռաստաններ, բայց տեսնում եմ ազոտ և ասես մշուշում, որն ի վիճակի չեմ ցրել: Եվ երբ սկսում են դատողություններ անել մտքովս անցած բառացիորեն ամեն ինչի մասին, շղիմելով կողմնակի օգնության և ապավինելով միայն սեփական հասկացողությանս, ապա, եթե վիճակվում է (իսկ դա այնքան էլ հաճախ չի պատահում), հուրախություն ինձ, մի որևէ լավ գրողի մոտ հանդիպել այն մտքերը, որոնք մտադիր էի զարգացնել (այդպես էր, օրինակ, բուրբուկին վերջերս մեր երևակայության ուժի մասին Պլուտարքոսի դատողությունները նայելիս), ևս սկսում եմ հասկանալ, թե, այդպիսի մարդկանց համեմատությամբ, ես որքան չնչին եմ ու թույլ, խրթին ու խամրած, և ինքս իմ նկատմամբ համակվում եմ խղճահարություն ու արհամարհանքով: Սակայն միևնույն ժամանակ ես շնորհավորում եմ ինքս ինձ, քանզի տեսնում եմ, որ իմ վարժիքները պատիվ ունեն երբեմն համ-

ընկնել նրանց կարծիքներին և նրանք, թեկուզ հեռավոր կերպով, հաստատում են իմ իրավացիությունը: Ինձ ուրախացնում է նաև, որ ես խոստովանում եմ (իսկ դա ամեն մարդ չի կարող ասել իր մասին), թե ինչպիսի անդունդ է ընկած նրանց ու իմ միջև: Բայց և այնպես, հակառակ ամեն ինչի, ես առանց մտածմունքի հրապարակում եմ իմ այս հորինվածքները, որքան էլ թույլ ու անարժան լինեն դրանք, և ըստ որում այն տեսքով, ինչպես ստեղծել եմ, առանց կարկատաններ դնելու և լրացնելու այն բացերը, որոնք ինձ համար պարզվեցին տվյալ համեմատության շնորհիվ: Պետք է ունենաս բավականաչափ ամուր ստեղծող, որպեսզի փորձես կողք կողքի քայլել այդպիսի մարդկանց հետ: Մեր դարի դատարկագլուխ գրչակները, փառաբանվելու համար, իրենց շնչին ստեղծագործություններում գրեթե ամբողջ բաժիններ բերելով հին գրողներից, հասնում են միանգամայն հակառակ բանի: Քանզի ցայտունության խիստ տարբերությունը նրանց գրչի արգասիքը դարձնում է այնքան դորշ, խամրած ու այլանդակ, որ դրանից նրանք անհամեմատ ավելի շատ կորցնում են, քան շահում:

Տարբեր հեղինակներ վարվել են տարբեր կերպ: Օրինակ, փիլիսոփա Քրիստիանոսն իր գրքերում ուրիշ հեղինակներից բերում էր ոչ միայն հատվածներ, այլև ամբողջ ստեղծագործություններ, իսկ դրանցից մեկում նա մտցրել էր նույնիսկ Եվրիպիդեսի «Մեդեան»: Ապոլլոդորոսն ասում էր⁵, թե եթե նրա գրքերից հանես այն ամենը, ինչ իրենք չէ, ապա, բացի համատարած սախտակությունից, ոչինչ չի մնա: Էպիկուրի մոտ, ընդհակառակը, նրանից հետո մնացած երեք հարյուր փաթեթաձև ձեռագրերում չես գտնի ոչ մի մեջբերում:

Մի անգամ ես պատահել եմ նման փոխառյալ հատվածի: Ես ձանձրույթով թերթում էի ֆրանսերեն տեքստը, անարյուն, թույլ, այնքան դուրկ բովանդակությունից ու մտքից, որ չես անվանի այլ կերպ, քան ֆրանսերեն տեքստ, մինչև, երկար տաղտկալի դեզերումից հետո, վերջապես, հասա ինչ-որ սքանչելի, ճոխ, ամուլաքեր բանի: Եթե լանջը, որով բարձրանում էի, լիներ սակավաթեք և վերելքը՝ տևական, ամեն ինչ կարգին կլիներ, բայց դա մի այնպիսի զառիթափ, ուղղաբերձ անդունդ էր, որ իմ կարգացած սուաջին իսկ բառերից հետո զգացի, որ հասել եմ բոլորովին այլ աշխարհ: Հայտնվելով այնտեղ, ես հայացք նետեցի դեպի ցածրավայրը, որտեղից բարձրացել էի, և այն ինձ թվաց այնքան օխուր ու հեռու, որ կորցրի հետ իջնելու ամենայն ցանկություն: Եթե ես անցյալի գանձերով վարդարեի իմ որևէ դատողություն, դա միայն կընդգծեր մնացածի շնչինությունը:

Ուրիշի մեջ քո սեփական թերությունները պախարակելն, ըստ իս,

նույնքան թույլատրելի է, որքան (իսկ դա էս շատ հաճախ եմ անում) քո մեջ ուրիշներինը պախարակելը: Իրանք պետք է մերկացնել միշտ և ամենուր, շթողնելով դրանց համար ոչ մի հանգրվան: Ես հո քաջ գիտեմ, թե նորքան հանդգնորեն եմ ամեն անգամ փորձում համեմատվել իմ կողմատված հեղինակների հետ, համարձակորեն հույս ունենալով խաբել դատավորներինս. գուցե ոչինչ չնկատեն: Սակայն էս դրան հասնում եմ ավելի շուտ ջանասիրությամբ, քան երևակայության օգնությամբ: Բացի դրանից էլ, էս այդ փորձառու մարտիկների հետ չեմ կռվում իսկականի պես, չեմ բախվում կուրծք կրծքի, այլ ժամանակ առ ժամանակ թեթևակի հարձակումներ եմ գործում: Ես չեմ համառում այդ գոտեմարտում, միայն հավում եմ իմ հակառակորդներին և ավելի շուտ ձևացնում, թե մրցում եմ նրանց հետ, քան դա անում եմ իրականում:

Եվ եթե ինձ հաջողվեր դառնալ արժանի մրցակից, կլինեի ազնիվ խաղացող, քանզի էս նրանց հետ պայքարի եմ բռնվում լոկ այնտեղ, ուր նրանք ամենից ուժեղ են:

Բայց անել այն, ինչ վերը նշածիս պես անում են ոմանք, այսինքն. մինչև եղունգների ծայրը զինվել ուրիշի գենք ու զրահով, ընդհանուր տեղյակություն ունեցող մարդկանց նման մտածածը կատարել, օգտագործելով հին իմաստության ծվենները, խցկելով դրանք այս ու այն տեղ, մի խոսքով, փորձել քաղել ու յուրացնել ուրիշի բարիքը՝ նախ, անազնվություն ու ստորություն է, քանզի, շունենալով ոչինչ, որի հաշվին իրենք կկարողանային ստեղծագործել, այդ գրչակներն այնուամենայնիվ փորձում են ուրիշի արժեքները հրամցնել որպես սեփական, և երկրորդ, մեծագույն հիմարություն է, քանզի նրանք ստիպված են դոհանալ խարդախությամբ նվաճած տգետ ամբոխի հավանությամբ, իրենք իրենց վարկաբեկելով բանիմաց մարդկանց աչքում, որոնք արհամարհանքով քիթ են կնճում, տեսնելով ամեն կողմից կորոզած այդ խայտաբղետությունը, մինչդեռ նշանակություն ունի միայն նրանց գովեստը: Ինչ վերաբերում է ինձ, ապա չկա մի բան, որ էս այդքան քիչ կամենայի: Եթե էս երբեմն խոսում եմ ուրիշի բառերով, ապա լսկ նրա համար, որ ավելի լավ արտահայտեմ ինքս ինձ: Ասածս չի վերաբերում ցենտոններին⁶, որոնք հրապարակվում են որպես այդպիսիք, ջահել ժամանակ դրանց մեջ էս տեսել եմ մեծ վարպետությամբ կազմած մի քանիսը, օրինակ, ինչպես Կապիլուպոսի⁷ լույս ընծայածը, շխոսելով արդեն հնում ստեղծվածների մասին: Նրանց հեղինակները, մեծ մասամբ, ձիրք են դրսևորել նաև այլ ստեղծագործություններում, այդպիսին է, օրինակ, Լիպսիոսը⁸ իմաստնագույն, բանաքաղական վիթխարի աշխատանք պահանջած «Քաղաքականության» հեղինակը:

Ինչպես էլ լինի՝ ուզում եմ ասել. ինչպիսին էլ լինեն իմ թույլ տված անհեթեթությունները, ես մտադիր չեմ կոծկել դրանք, նմանապես մտադիր չեմ նաև հրաժարվել իմ դիմանկարից, ուր կիսաճաղատ եմ և ալեհեր, քանզի նկարիչը պատկերել է ոչ թե մարդկային կատարյալ դեմքի նմուշ, այլ սոսկ իմ սեփական դեմքը: Այսպիսին են իմ հակումներն ու հայացքները, և ես դրանք առաջարկում եմ որպես այն, ինչին հավատում եմ, և ոչ թե որպես այն, ինչին պետք է հավատալ: Ես նույնպես եմ դնում այստեղ ինձ ցույց տալ այնպիսին, ինչպիսին այսօր եմ, քանզի վաղը, գուցե փոխվեմ, եթե իմանամ մի բան, որը կարող է փոփոխություն հարուցել ինձանում: Ես բավականաչափ հեղինակություն չեմ վայելում, որ իմ յուրաքանչյուր խոսքին հավատան, և չեմ էլ ձգտում դրան, քանզի գիտակցում եմ, որ ուրիշներին սովորեցնելու համար ինքս շափազանց վատ եմ սովորած:

Եվ այսպես, մեկը, ծանոթանալով նախորդ գլխին, մի անգամ իմ տանն ասաց, թե հարկ է ավելի մանրամասնորեն շարադրել երեխաների դաստիարակության մասին մտքերս: Տիկին, եթե ես իրոք որևէ դիտելիք ունեմ այդ բնագավառում, ես ի վիճակի չեմ դրանց տալ ավելի բավ կիրառություն, քան շնորհ բերել այն մարդուն, որը սպառնում է շուտով հաղթականորեն աշխարհ գալ ձեզանից (դուք շափազանց խիզախ եք, որ սկսեք այլ կերպ, քան տղայից): Ախր, ժամանակին զգալի մասնակցություն ցուցարեղելով ձեր ամուսնության կազմակերպմանը, ես որոշ իրավունք ունեմ հոգալու նրան հետևող ամեն ինչի մեծության ու ծաղկման մասին, ես արդեն չեմ ասում, որ իբրև վաղեմի խոնարհ ծառա ձեր տրամադրության տակ լինելն ինձ պարտավորեցնում է ամբողջ հոգով ամենայն բարիք ու հաջողություն ցանկանալ այն ամենին, ինչ կապված է ձեզ հետ: Սակայն, ճիշտն ասած, վերոհիշյալ առարկայից ես չեմ հասկանում ոչինչ, բացի, թերևս, այն, որ մարդկային իմացությունը մեծագույն ու կարևորագույն դժվարությունների է հանդիպում գիտության հենց այն բնագավառում, ուր խոսվում է մանկանց դաստիարակության և ուսուցման մասին:

Երկրագործության մեջ ցանքին նախորդող անելիքները, ասենք, ինչպես նաև բուն ցանքը, քաջ հայտնի են և դժվարություն չեն ներկայացնում, սակայն հենց որ ցանածն սկսում է կենդանություն ստանալ, մեր առջև ծառանում են զանազան դժվարություններ ու բազում այդպիսի անելիքներ, որոնք անհրաժեշտ են այն աճեցնելու համար: Նույնն են նաև մարդիկ. նրանց ծնունդ տալը դժվար չէ, սակայն հենց նրանք աշխարհ են գալիս, ձեզ վրա ծանրանում են անհաշիվ հոգսեր,

գործեր ու տաղնապաներ, թե ինչպես պիտի մեծացնեք ու դաստիարակեք նրանց:

Վաղ մանկությունում երեխաների հակումները դրսևորվում են այնքան թույլ և այնքան ազոտ, նրանց ձիրքերն այնքան խաբուսիկ ու անորոշ են, որ այդ առթիվ որոշակի կարծիք կազմելը շատ դժվար է:

Նայեցեք Կիմոնին, նայեցեք Թեմիստոկլեսին և շատ ուրիշներին: Որքան տարբեր էին նրանք իրենցից, երբ երեխա էին: Արջի քոթոթների և շնիկների մոտ դրսևորվում են նրանց բժական հակումները, իսկ մարդիկ, որ արագորեն յուրացնում են սովորությունները, օտար կարծիքներն ու օրենքները, հեշտությամբ փոփոխվում են և ընդամին թաքցնում իրենց իսկական դեմքը:

Ուստի, դժվար է վերափոխել այն, ինչը մարդու մեջ արմատավորված է հենց ընտելան կողմից: Դրանից է, որ, սխալ ճանապարհ ընտրելու հետևանքով, հաճախ իզուր աշխատանք ու ժամանակ են կորցնում, երեխաներին սովորեցնելով այն, ինչը նրանք ի վիճակի չեն հարկ եղածին պես յուրացնել: Ես դտնում եմ, որ այդ դժվարին հանգամանքներում անհրաժեշտ է մշտապես ձգտել երեխաներին ուղղություն տալու դեպի ամենալավն ու ամենաօգտակարը, առանձնապես հույս չղնելով թեթևամիտ նախանշանների և դուշակությունների վրա, որոնք մենք կորչում ենք մանկական հոգու մղումներից: Նույնիսկ Պլատոնն, իմ կարծիքով, դրանց չափազանց մեծ նշանակություն էր տալիս իր «Պետությունում»:

Տիկին, գիտությունը մեծ զարդ և միանգամայն օգտակար գործիք է հատկապես երբ նրան տիրում են մարդիկ, որոնց ճակատագիրը փաշփայել է ինչպես ձեզ: Քանզի, հիրավի, ստոր ու կոպտարարյո մարդկանց ձեռքում այն չի կարող պատշաճ կիրառություն գտնել: Այն անհամեմատ ավելի շատ է հպարտանում, երբ իր միջոցները տրամադրում է պատերազմներ մղելուն կամ ժողովուրդ կառավարելուն, օտարերկրյա թագավորի և նրա հպատակների բարյացակամ վերաբերմունքը պահպանելուն, քան այն ժամանակ, երբ իրեն են դիմում փիլիսոփայական բանավեճում փաստարկ բերելու կամ դատավեճ շահելու կամ մի տուփ դեղահար նշանակելու համար: Եվ այսպես, տիկին, ենթադրելով, որ, ձեր երեխաներին դաստիարակելիս դուք չեք մոռանա հարցի նաև այս կողմը, քանզի ինքներդ էլ ճաշակել եք գիտության քաղցրությունը և լուսավորյալ տոհմից եք (չէ որ պահպանվել են ստեղծագործությունները դր Ֆուա կոմսերի⁹, որոնցից սերում է նաև պարոն 'կոմսը' ձեր ամուսինը և դուք ինքներդ, և պարոն Ֆրանսուա դը Կանդալը՝ ձեր հորեղբայ-

որ այժմ էլ տակավին ամեն ծրարաբար է նոր ստեղծագործություններին վրա, որոնք դարերով կերկարացնեն՝ ձեռք ընտանիքի այդ ձիրքերի մասին հիշողությունը), ես ուզում եմ այդ առթիվ ձեզ հայտնել իմ խորհրդածությունները, որոնք հակասում են ընդունված տեսակետներին, ահա և այն ամենը, ինչով կարող եմ ձեզ ծառայություն մատուցել սույն գործում:

Ձեր երեխայի ուսուցչի պարտականությունները (հաշվի առնելով, որ նրա ընտրությունից, ի վերջո, կախված է երեխայի հաջող դաստիարակությունը) ամփոփում են նաև բազում այլ բաներ, սակայն ես այդ ամենի վրա չեմ ծանրանա, քանզի այստեղ ոչ մի կարգին բան ավելացնել չեմ կարող: Իսկ ինչ վերաբերում է իմ շոշափած առարկային, որի առթիվ համարձակվում եմ մի շարք խորհուրդներ տալ ուսուցչին, ապա այստեղ էլ թող նա ինձ հավատա ճիշտ այնքան, որքան համոզիչ կթվան իմ նկատառումները: Լավ ընտանիքի երեխային գիտություն են ուսուցանում, նպատակ ունենալով դարձնել նրան ոչ այնքան գիտուն, որքան լուսավորյալ մարդ, ոչ թե վաստակի (քանզի նման նպատակը ստոր է ու արժանի չէ մուսանների բարյացակամությանն ու հովանավորությանը և, բացի այդ էլ, ենթադրում է շոգոքորթություն և կախածություն ուրիշից), և ոչ թե պատշաճություն պահպանելու, այլ նրա համար, որ նա իրեն զգա ավելի ամուր, հարստանա ու գեղեցկանա ներքուստ: Ահա թե ինչու ես կուզենայի, որ նրա համար ուսուցիչ ընտրելիս դուք դրան վերաբերվեիք հնարավորին շափ խնամքով, ցանկալի է, որ նա ունենա ավելի շուտ պայծառ, քան գիտություններով լցված գլուխ, քանզի, թեև հարկ է փնտրել և մեկը և մյուսն ունեցող մարդու, այնուամենայնիվ լավ բարքերն ու խելքը մերկ գիտությունից գերադասելի են, որ անհրաժեշտ է նաև, որ կատարելով իր պարտականությունները, նա կիրառի ուսուցման նոր եղանակ:

Մեզ անընդհատ կրկնում են միևնույն բանը, տայիս են զանազան գիտելիքներ, լցնում դրանք մեր գլուխը, ինչպես ջուրը ձաղարի մեջ, և մեր պարտականությունը սոսկ այդ լսածը կրկնելն է: Ես կուզեի, որ ձեր որդու ուսուցիչը հրաժարվեր այդ սովորական եղանակից և հենց սկզբից, համակերպվելով իրեն վստահված երեխայի հոգեկան հակումներին, նրան հնարավորություն տար ազատորեն դրսևորել այդ հակումները, առաջարկելով ճաշակել տարբեր բաներ, ինքնուրույն զանազանել դրանք, երբեմն ցույց տալով ուղղություն, երբեմն, ընդհակառակը, թույլ տալով, որ ինքը գտնի ճանապարհը: Ես չեմ ուզում, որ ուսուցիչը մեռնակ վճռի ամեն բան և միայն ինքը խոսի, ես ուզում եմ, որ նա լսի նաև

իր սունին: Սովորաբար, իսկ հետագայում նաև Արվեստիչայոսը ստիպում էին, որ սկզբից խոսեն աշակերտները, իսկ ապա խոսում էին իրենք:

Obest plerumque iis qui discere volunt auctoritas eorum, qui docent*.

Թող նա ստիպի երեխային քայլել իր առջև ու այդպիսով հնարավորություն ստանա դատել նրա քայլվածքի, հետևաբար, նաև այն մասին, թե ինչքանով պետք է շափավորի ինքն իրեն, որպեսզի հարմարվի աշակերտի ուժերին: Այստեղ համաշափություն չպահպանելով, մենք կարող ենք ամբողջը փշացնել, նմանահամապատասխանություն զրտնելն ու այն խելամտորեն պահպանելը իմ իմացած ամենադժվարին խնդիրներից մեկն է: Երեխայի հակումների նկատմամբ ներողամիտ լինելու և դրանք ղեկավարելու ունակությունը հատուկ է միայն վեհ և ուժեղ հոգուն: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ավելի հաստատ ու վրստահ բարձրանում եմ սարն ի վեր, քան իջնում այնտեղից:

Եթե ուսուցիչները, ինչպես դա սովորաբար արվում է, իրենց բազմաթիվ աշակերտներին լուսավորում են, մատուցելով բոլորին միևնույն դասը և պահանջելով միատեսակ վարք, թեև նրանց ընդունակությունները բնավ էլ նույնը չեն, այլ տարբեր են ըստ բնույթի և ուժի, ապա շկա զարմանալի ոչինչ, երբ մանկանց վիժխարի բազմությունից գտնվում են ընդամենը երկու կամ երեք երեխա, որոնք իսկական օգուտ են քաղում նման ուսուցումից:

Թող ուսուցիչը երեխայից պահանջի ոչ միայն սերտած դասի բաները, այլև դրա իմաստն ու բուն էությունը, և իր տված օգուտի մասին դատի ոչ թե ըստ սանի հիշողության ցուցանիշների, այլ ըստ նրա կյանքի: Եվ թող աշակերտին ինչ-որ բան բացատրելիս դա ցույց տա նրան հարյուրավոր կողմերից և կիրառի բազում տարրեր առարկաների նկատմամբ, ստուգելու համար, թե արդյոք աշակերտը հասկացել է հարկ եղածին պես և որքանով է յուրացրել դա, և իր բացատրությունների հետևողականության հարցում թող ղեկավարվի Պլատոնի օրինակով¹¹: Եթե մեկը կերակուրը փսխում է նույն տեսքով, ինչ տեսքով կուլ է տվել, ապա դա վկայում է կերակրի դժվարամարսության և ստամոքսի անմարսողության մասին: Եթե ստամոքսը չի փոխել իր մարսելիքի սրակն ու ձևը, ուրեմն չի կատարել իր գործը:

Մեր հոգին իր շարժումները կատարում է օտար աղդեցության, տակ, հետևելով ու ենթարկվելով ուրիշների օրինակին ու խրատներին: Մեզ

* Ինչ-որ բան սովորել ցանկացողներին ամենից առաջ խոչընդոտում է սովորեցնողների հեղինակությունը¹⁰ (լատ.):

այնքան են վարժվել քայլաթուկի, որ այլևս ի վիճակի չենք ապրել առանց դրա: Մենք կորցրել ենք մեր ազատությունն ու սեփական ուժը: Nunquam tutelae suae fiunt*.

Ես Պիզայում ճանաչում էի մի շատ արժանավոր մարդու, որն այնքան էր մեծարում Արիստոտելին, որ նրա ամենաառաջնային կանոնը հետևյալն էր. «Յուրաքանչյուր հաստատուն կարծիքի և յուրաքանչյուր ճշմարտության փորձաքարն ու հիմքը Արիստոտելի ուսմունքի հետ դրանց համապատասխանությունն է, այն ամենը, ինչ դուրս է դրանից, ցնորք է և ունայնություն, քանզի Արիստոտելը բացարձակապես ամեն բան նախատեսել է և ամեն բան ասել»: Չափազանց լայնորեն ու սխալ մեկնաբանված այդ դրույթը նրան կանգնեցրեց հռոմեական ինկվիզիցիայի կողմից շատ երկար սպառնացող խիստ վտանգի առաջ:

Թող ուսուցիչն աշակերտին ստիպի, այսպես ասած, մաղով անցկացնել այն ամենը, ինչ ինքը մատուցում է, և թող ոչինչ զոռով չմացնի նրա գլուխը, հենվելով իր հեղինակության ու ազգեցության վրա, թող Արիստոտելի սկզբունքները շղառնան նրա դասավանդման անփոփոխ հիմքերը, ինչպես շեն դառնում ստոիկյանների և էպիկուրականների սկզբունքները: Թող ուսուցիչը բացատրի, թե ինչով են տարբերվում իրարից այդ ուսմունքները, իսկ աշակերտը, եթե ուժերը ներեն, թող ինքնուրույն ընտրություն կատարի կամ, ծայրահեղ դեպքում, մնա տարակուսանքի մեջ: Միայն հիմարները կարող են անզրգվելի մնալ իրենց համոզվածության մեջ: Che non men che saper dubiar m'aggrada**.

Քանզի, եթե նա, խորհելով դրանց վրա, որդեգրի Քսենոփոնի կամ Պլատոնի կարծիքները, դրանք կդադարեն լինել նրանց սեփականությունը, այլ կդառնան նաև իրենք: Ով ստրկաբար հետևում է ուրիշին, նա չի հետևում ոչ մի բանի: Նա ոչինչ չի գտնում, ասենք չի էլ փրկություն ունի:

Non sumus sub rege; sibi quisque se vindicet***.

Գլխավորն այն է, որ նա իմանա իր իմացածը: Հարկ է, որ նա համակվի հին մտածողների ոգով, այլ ոչ թե սերտի նրանց խրատները: Եվ

* Նրանք երբևր դուրս չեն գալիս խնամակալության տակից¹² (լատ.):

** Կասկածն ինձ գիտելիքից պակաս հաճույք չի պատճառում¹³ (լատ.):

*** Մեր գլխին թագավոր չկա, ուրեմն, թող ամեն ոք ինքը տնօրինի իրեն¹⁴ (լատ.):

թող, եթե կհաճի, չվախենա մոռանալ, թե որտեղից են իր այդ հայացքները, միայն կարողանա դրանք դարձնել իր սեփականությունը: Ճշմարտությունն ու բանականության փաստարկները բոլորինն են, և դրանք առաջին անգամ ասողների սեփականությունն են ոչ ավելի, քան հետագայում ասողներինը: Այս կամ այն բանը Պլատոնի կարծիքին համապատասխանում է այնքան, որքան իմ կարծիքին, քանզի մենք այստեղ համախոհ ենք և հարցին նայում ենք միատեսակ: Մեղուները ծաղիկից ծաղիկ են թռչում և հավաքում նեկտարը, որն ամբողջովին մեզր են դարձնում, չէ որ դա այլևս ծոթոր կամ խնկածաղիկ չէ: Ճիշտ այդպես էլ մարդն ուրիշներից փոխառածը վերափոխում և վերահալում է, որպեսզի դարձնի իր սեփական ստեղծագործությունը, այսինքն՝ սեփական դատողությունը: Նրա դաստիարակությունը, նրա աշխատանքը, նրա ուսմունքը ծառայում են գեթ մի բանի. ձևավորել նրա անհատականությունը:

Թող նա իր մեջ պահի ուրիշներից վերցրածը և հրապարակի լսկ այն ինչ ստեղծել է դրանից: Կողոպտիչներն ու ընչաքաղցներն ի ցույց են դնում իրենց կառուցած տներն ու իրենց ձեռքբերումները, և ոչ թե այն, ինչ կորզել են ուրիշների քսակներից: Դուք չեք տեսնում խնդրատուններից պառլամենտի որևէ անդամի ստացած ընծաները. դուք տեսնում եք լսկ այն, որ նա ունի լայն կապեր և նրա երեխաները հարգանք են վայելում: Ոչ ոք չի հաշվում իր եկամուտները մարդկանց ներկայությամբ, ամեն մեկը դրանք հաշվում է մտքում: Պարապմունքներից մեր քաղաք օգուտն այն է, որ դառնում ենք ավելի լավ և ավելի իմաստուն:

Միայն բանասիրահությունն է ամեն ինչ տեսնում և ամեն ինչ լսում, ասում էր Էպիքարմոսը¹⁵, միայն նա կարող է բացարձակապես ամեն ինչ գործադրել իր օգտին, միայն նա է ամեն ինչ տնօրինում իր հայեցողությամբ, միայն նա է իսկապես գործուն՝ նա է տիրում ու իշխում ամեն ինչին, մնացած ամեն ինչը կույր է, խուլ, անհոգի: Թեև, մենք նրան ստիպում ենք լինել հաճկատար ու վախկոտ, որպեսզի շատնք գոնե մի բանում ինքնուրույն գործելու ազատություն: Ո՞վ է հարցնում աշակերտի կարծիքը ճարտասանության ու քերականության, Ցիցերոնի այս կամ այն ասույթի վերաբերյալ: Դրանք մեր հիշողության մեջ են մխրճում միանգամայն պատրաստի վիճակում, ինչպես գուշակության որոշ գրքեր, որոնցում տառերն ու վանկերը փոխարինում են իրերի էությունը: Մակայն անգիր իմանալը դեռ բնավ չի նշանակում իմանալ, դա նշանակում է լսկ հիշողության մեջ պահել այն, ինչը նրան պահ են տվել: Իսկ այն, ինչ գիտես հարկ եղածին պես, կարող ես տնօրինել առանց տիրոջից քաշվելու, առանց գրքին նայելու: Զուտ գրքային գիտունությունը խղճուկ գիտություն է: Ծս գտնում եմ, որ այն զարդ է, բայց

բնավ ոչ հիմք, այստեղ ես հետևում եմ Պլատոնին, որն ասում է, թե իսկական փիլիսոփայությունը հաստատակամություն է, հավատարմություն և բարեխղճություն, իսկ մյուս գիտելիքները և այն ամենը, ինչ ուղղված է ուրիշ նպատակների, ավելին չեն, քան կարմրաներկ:

Կուզենայի տեսնել, թե ինչպես են Պալյուելը կամ Պոմպեոսը՝ մեր ժամանակի այդ հիանալի պարողները, մեզ սովորեցնում պիրուետներ, միայն ցույց տալով և առանց մեզ տեղից շարժելու: Ծիշտ նույն կերպ շատ ուսուցիչներ ուզում են զարգացնել մեր միտքը, առանց խոռվելու այն: Կարելի՞ է արդյոք սովորեցնել ձի նստել, տիրապետել նիզակին, ջնարին կամ ձայնին, շտիպելով անընդհատ վարժություններ կատարել, այնպես, ինչպես ոմանք ուզում են սովորեցնել մեզ առողջ դատողություններ անել և ճարտասանել, շտիպելով վարժվել ոչ դատողությունների, ոչ ճարտասանության: Մինչդեռ, մեզանում այդ ունակությունները դաստիարակելիս մեր աչքով տեսած ամեն բանը մի խրատական գիրք արժե, մանկավիճի արարմունքը, ծառայի բթամտությունը, խընջույքի սեղանի շուրջ տարվող զրույցը՝ այս ամենը նոր սնունդ է մեր խելքի համար:

Այդ առումով հատկապես օգտակար է շփումն ուրիշ մարդկանց հետ, ինչպես նաև ճանապարհորդություններն օտար երկրներ, իհարկե, ոչ նրա համար, որ, հետևելով մեր ֆրանսիական ազնվականության սովորությանը, հետզ բերես զանազան տեղեկություններ, օրինակ, այն մասին, թե քանի քայլ է Սանտա-Մարիա Ռոտոնդա եկեղեցու¹⁶ լայնությունը, կամ թե որքան ճոխ է տիկին Լիվիայի վարտիքը, կամ, ուրիշների պես, թե որքանով է Ներոնի դեմքն այսինչ հին արձանի վրա ավելի երկարավուն ու լայն այսինչ մեղալի վրա եղած նրա դիմապատկերից, այլ նրա համար, որ ճանաչես այդ ժողովուրդների ոգին և նրանց կենսաձևը, հղկես ու մշակես միտքդ, շփվելով ուրիշների հետ: Ես խորհուրդ կտայի մեր երիտասարդությանն արտասահման ուղարկել հնարավորին շափ վաղ հասակում և, մի գնդակով երկու նապաստակ սպանելու համար, մեր այն հարևանների մոտ, որոնց լեզուն բոլորից քիչ է նման մերին, այնպես որ, եթե այն շտվորես ջահել հասակից, հետազայում այլևս ոչ մի կերպ չես յուրացնի:

Զուր չէ, որ բոլորը գտնում են, թե երեխային ծնողների թևի տակ դաստիարակելը սխալ է: Վերջիններիս մեջ հենց բնության կողմից արժատավորված սերն ամենախելամիտներին անգամ ներշնչում է շափազանց մեղմություն և ներողամտություն: Նրանք ի վիճակի չեն ոչ պատժել իրենց երեխաներին զանցանքների համար, ոչ թույլ տալ, որ նրանք իմանան կյանքի ծանր կողմերը, ենթարկվելով որոշ վտանգներին: Նրանք

չեն կարող հաշտվել այն մտքի հետ, որ իրենց երկխաները զանազան վարժություններից հետո վերադառնում են քրտնած ու սաստիկ կեղտաված, որ խմում են, ինչ պատահի՝ մերթ սառը, մերթ տաք բաներ, նրանք չեն կարող իրենց երեխաներին տեսնել կամակոր ձիուն նստած կամ ուժեղ հակառակորդի հետ սուսերամարտելիս, կամ երբ նրանք առաջին անգամ պատրույգավոր հրացան են վերցնում: Բայց ախր ուրիշ ոչինչ անել չես կարող. ով ուզում է, որ իր որդին իսկական տղամարդ դառնա, պետք է հասկանա, որ երիտասարդությունն այդ ամենից չես կարող հետ պահել և այստեղ, ուզես շուզես, հաճախ հարկ է լինում զանց առնել բժշկության հրամանները:

Vitamque sub divo et trepidis agat
In rebus*.

Երեխայի հոգին կոփելը բավական չէ, նույնքան անհրաժեշտ է կոփել նրա մարմինը: Մեր հոգին շափազանց գերբեռնված է հոգսերով, և թե շունի կարգին օգնական. նրա վրա դրվում է ուժից վեր բեռ, քանզի կրում է երկու հոգու փոխարեն: Ես հո լավ դիտեմ, թե հոգուս համար սրբան դժվար է ընկերակցել մշտապես նրա պաշտպանությունը փրկարող այնպիսի մի թույլ ու զգայուն մարմնի հետ, ինչպիսին իմն է: Եվ, կարդալով տարբեր հեղինակների, ես բազմիցս նկատել եմ, որ այն, ինչ նրանք ներկայացնում են իրրև հոգու մեծություն ու արիություն, անհամեմատ ավելի շատ վկայում է հաստ մաշկի և ամուր ոսկորների մասին: Ինձ վիճակվել է հանդիպել ի ծնե այնպիսի անզգա այրերի, կանանց և անգամ երեխաների, որոնց համար մահակի հարվածներն ավելի քիչ բան էին, քան ինձ համար մատնազարկը քթիս. հարված ստանալով, այդպիսի մարդիկ ոչ միայն չեն ճշա, այլ նույնիսկ հոնքը չեն շարժի: Երբ ատլետներն իրենց դիմացկունությամբ նմանվում են փիլիսոփաներին, ապա այստեղ դրսևորվում է ավելի շուտ նրանց մկանների ամրությունը, քան հոգու կայունությունը: Քանզի համբերատար աշխատելու սովորությունը նույնն է, ինչ համբերատար ցավին դիմանալու սովորությունը: labor callum obducit dolori**.

Անհրաժեշտ է ծանր ու դժվար վարժություններով կոփել սեփական մարմինը, որպեսզի այն սովորի դիմանալ հողախախտումների, ծակծկոցների, այրումների ցավին ու տառապանքներին և նույնիսկ բանտային կալանքի ու խոշտանդումների տանջանքներին: Քանզի հարկ է պատրաստ լինել նաև այն վնասիներին, չէ որ երբեմն բարիներն էլ են կիսում շարերի բախտաբա-

* Թող նա ապրի բաց երկնքի տակ ձախորդությունների մեջ¹⁷ (լատ.):

** Աշխատանքը մեղմացնում է ցավը¹⁸ (լատ.):

Ժինը: Մենք դա քաջ դիտենք մեր օրինակով: Ով ոտնահարում է օրենքները, նա ամենաբարեպաշտ մարդկանց սպառնում է մտրակով ու կախաղանով: Ավելացնեմ նաև, որ ծնողների այդպիսի միջամտությունից սասանվում ու խախտվում է նաև դաստիարակի հեղինակությունը, որն աշակերտի համար պետք է լինի անառարկելի: Բացի դրանից, այն ակնածանքը, որով երեխային շրջապատում են սպասավորները, ինչպես նաև իր տոհմի հարստության ու մեծության մասին նրա իրազեկությունը, ըստ /ւս, բավական շատ են խանգարում այդ տարիքի երեխաների ճիշտ դաստիարակությանը:

Ինչ վերաբերում է ուրիշ մարդկանց հետ շփվելուց ձեռք բերվող փորձին, ապա այստեղ ես հաճախ հանգիպել եմ մի սովորական արատի. փոխանակ ձգտելու, որ ճանաչենք ուրիշներին, մենք աշխատում ենք միայն ցուցադրել մեզ, և մենք ավելի շուտ մտահոգված ենք, որ շմնա մեր ապրանքը, քան, որ ձեռք բերենք նորը: Սակավախոսությունն ու համեստությունը հասարակության մեջ միանգամայն արժեքավոր հատկանիշներ են: Հարկ է երեխային սովորեցնել, որ խնայողաբար ու չափավոր ծախսի իր կուտակած գիտելիքները, որ շառարկի իր ներկայությամբ ասված հիմարություններին և անհեթեթ հնարանքներին, քանզի մեծ անբաղաբավարություն ու անբարեկրթություն է ժխտել այն, ինչը մեզ դուր չի գալիս: Թող նա գոհանա ինքն իրեն ուղղելով և չդատապարտի ուրիշին այն բանի համար, ինչն իր սրտով չէ, թող նա չբորոստանա նաև ընդունված սովորույթների դեմ: Licet sapere sine pompa, sine invidia*

Թող նա խուսափի գոռոզ ու ամբարտավան տեսք ընդունելուց, խուսափի երեխայական սնափառությունից՝ մյուսների մեջ աչքի ընկնելու և մյուսներից խելոք երևալու ցանկությունից, թող չձգաի հռչակվել իրրե մի մարդ, որը փնտվում է ամեն ինչ և տքնում մի նոր բան հնարել: Ինչպես մեծ բանաստեղծներին է միայն վայել կամայականություն թույլ տալ իրենց արվեստում, այնպես էլ միայն մեծ ու վսեմ հոգիներին թույլատրվում իրենց վեր դասել սովորույթից: Si quid Socrates et Aristippi contra morem et consuetudinem fecerint, idem sibi ne arbitretur licere: magnis enim illi et divinis bonis hanc licentiam assequebantur**.

* Կարելի է կիրթ լինել առանց մեծամտության ու սնապարծության¹⁹ (լատ.):

** Աթեն Սոկրատեսն ու Արիստիպոսն ինչ-որ բան արել են նաև հակառակ էությունացած բարբերի ու սովորույթների, թող ուրիշներին չթվա, թե իրենց էլ է թույլատրվում նույն բանը, քանզի այդ երկուսը նման աղատության իրավունք են ստացել ընդդեմ իրենց մեծ ու աստվածային արժանիքների²⁰ (լատ.):

Հարկ է երեխային սովորեցնել, որ զբույցի կամ վեճի բռնվի լուկ այն դեպքում, երբ գտնի, որ հակառակորդն արժանի է նման պայքարի, պետք է սովորեցնել նաև, որ նա կիրառի ոչ թե անհրաժեշտ բոլոր առարկությունները, այլ միայն ամենաուժեղները: Հարկ է նրան սովորեցնել, որ ինամբով ընտրի փաստարկները, գերապատվությունը տալով առավել ճշգրիտ, հետևաբար, նաև հակիրճ փաստարկներին: Սակայն, թող նրան նախ սովորեցնեն խոնարհվել ճշմարտության առաջ և, այն տեսնելուն պես, վայր դնել զենքը, անկախ այն բանից, դա հակառակորդն է ասել, թե հենց իր գլխում է ծագել: Չէ որ նա ստիպված չի լինի բարձրանալ ամբիոն՝ կարդալու նախապես հրամայվածը: Ոչ մի բան նրան չի պարտավորեցնում պաշտպանել այն կարծիքները, որոնց հետ ինքը համաձայն չէ: Նա չի պատկանում այն մարդկանց թվին, որոնք կանխիկ դրամով վաճառում են սեփական մեղքերը խոստովանելու և քավելու իրավունքը: Neque, ut omnia quae praescripta et imperata sint, defandat, necessitate ulla cogitur*.

Եթե նրա ուսուցիչը լինի իմ խառնվածքի մի մարդ, կաշխատի իր թագավորին հավատարիմ, անձնուրացաբար, անվերապահորեն նվիրված և քաջությամբ ծառայելու ցանկություն արթնացնել նրանում, սակայն, դրա հետ մեկտեղ, նա կմարի իր սանի կիրքը, եթե վերջինս թագավորի նկատմամբ դրսևորի այլ կապվածություն, քան մեզանից պահանջում է հասարակական պարտքը: Չխոսելով արդեն մեզ վրա այդ տանձնահատուկ կապերի դրած զանազան սահմանափակումների մասին, վարձու կամ կաշառված մարդու ասածները, որոնք այնքան էլ անկեղծ ու անբռնազրոս չեն, կարող են ընդունվել որպես անխելքություն ու ապերախտության դրսևորում: Պալատականը չի կարող, և հետո է այն ցանկությունից, որ իր տիրակալի մասին խոսի այլ կերպ, քան միտյն լավը, ախր հազարավոր հպատակներից թագավորն ընտրել է նրան, որպեսզի առատորեն շնորհի իր ողորմածությունն ու վեր դասի մյուսներից: Միապեսի այդ բարեհաճությունը և դրա հետ կապված օգուտները, բնականաբար, նրանում սպանում են անկեղծությունն ու կուրացնում նրան: Ահա թե ինչու մենք տեսնում ենք, որ այդ պարսնուկի լեզուն, որպես կանոն, տարբերվում է մյուս բոլոր դասերի լեզվից և նրանց բառերն այնքան էլ արժանի չեն վստահություն:

Թող աշակերտի խիղճն ու առաքինություններն արտացոլվեն նրա

* Եվ ոչ մի անհրաժեշտություն նրան չի ստիպում պաշտպանել այն ամենը, ինչ կարողորագրված է և հրամայված²¹ (լատ.):

խոսքում և շճանաչեն ուրիշ ղեկավար, բացի բանականությունից: Թող նրան ստիպեն հասկանալ, որ իր դատողություններում թույլ տված սխալը խոստովանելը, եթե նույնիսկ այն, բացի իրենից, ոչ ոք չի նկատել, վկայություն է խելքի ու պարզասրտության, որին նա առաջին հերթին պետք է ձգտի, որ սեփական մտլորությունների մեջ համառուն ու դրանք պաշտպանելն ամենից հաճախ առավել ստոր հոգիներին բնորոշ միանգամայն սովորական հատկություններ են և որ ուշքի գալու և իրեն ուղղելու, թունդ վեճի պահին իր թույլ տված սխալը խոստովանելու կարողությունը բացառիկ, արժեքավոր և փիլիսոփաներին վայել հատկանիշ է:

Հարկ է նրան խրատել նաև, որ, լինելով հասարակության մեջ, ուշադիր նայի ամեն ինչին և ամենքին, քանզի ես գտնում եմ, որ սովորաբար առավել բարձր դիրքի են հասնում ոչ այնքան շնորհալի մարդիկ, և ճակատագիրը ճոխ բնժաներ է շնորհում բնավ ոչ ամենատրժանավորներին: Այսպես, օրինակ, ես բազմիցս նկատել եմ, թե ինչպես սեղանի վերին ծայրում, ինչ-որ զարգապաստանների գեղեցկության և մալվազիայի համի մասին խոսելիս, բաց էին թողնում հետաքրքրական շատ բաներ, որ խոսվում էին հակառակ ծայրում: Ում էլ որ հանդիպի հովվի, քարտաշի, անցորդի, նա պետք է թափանցի ամեն մեկի ներքև հարկ է օգտագործել ամեն ինչ և յուրաքանչյուրից վերցնել ըստ նրա հնարավորությունների, քանզի պետք է գալիս ամեն բան, բացարձակապես ամեն բան՝ նույնիսկ ինչ-որ մեկի հիմարությունն ու թերությունները խրատական բան են պարունակում: Գնահատելով յուրաքանչյուրի արժանիքներն ու առանձնահատկությունները, պատանին մեջ դաստիարակում է հակում նրանց լավ գծերի և արհամարհանալի վատ գծերի նկատմամբ:

Թող նրա հոգում արթնացնեն ազնիվ հետաքրքրասիրություն, թե նա տեղեկանա անխտիր ամեն ինչի մասին, թող դնի իրեն հանդիպող ուշադրավ ամեն բան՝ որևէ շենք, շատրվան, մարդ, հնում տեղի ունեցած ճակատամարտի դաշտ, Կեսարի կամ Կարլոս Մեծի անցած վայրեր:

Quae tellus sit lenta gelu, quae putris ab aestu,
Ventus in Italiam quis bene vela ferat*.

Թող նա տեղեկանա այս կամ այն թագավորի բարքերին, եկամուտներն ու կապերին: Այդ ամենին ծանոթանալը միանգամայն հետաքրքիր և իմանալը՝ շատ օգտակար:

* Ո՛ր հողն է քարանում սառնամանիքից, ո՛րն է փխրունանում ամռանը, և քամին է համբժաց այն առագաստին, որն ուղղություն է տալիս դեպի Իտալիա²² (լատ.

Ասարդկանց հետ այս շփման մեջ էս, անշուշտ, ներառում էմ, ըստ
 որում առաջին հերթին, նաև շփումն այն անձանց հետ, որոնց մասին
 հուշն ապրում է միայն գրքերում: Դիմելով պատմությունը, պատանին
 կշփվի երանելի ժամանակների մեծ հոգիների հետ: Անցյալի այսպիսի
 ուսումնասիրությունը մեկի համար զուր ժամանակի կորուստ է, իսկ
 մեկ ուրիշին բերում է անգնահատելի օգուտ: Պատմությունը միակ գի-
 տությունն է, որը, Պլատոնի խոսքերով²³, երկրպագում էին լակեդեմո-
 նացիները: Ինչ պես, որ շի հայտնաբերի նա, կարդալով մեր սիրելի
 Պլուտարքոսի «Կենսագրությունները»: Սակայն, թող մեր դաստիարակը
 չմոռանա, որ ինքը ձգտում է աշակերտի հիշողության մեջ տպավորել
 ոչ այնքան Կարթագենի ավերման տարեթիվը, որքան Հաննիբալի և
 Սկիպիոնի բարբերը, ոչ այնքան Մարցելլոսի մահվան վայրը, որքան
 այն, թե ինչու, կյանքն ավարտելով այս կամ այն կերպ, նա իր դիրքին
 անվայել մահ ընդունեց²⁴: Թող նա պատանուն տա ոչ այնքան պատ-
 մական փաստեր, որքան զրանց մասին դատելու կարողություն: Դա, իմ
 կարծիքով, մյուս գիտությունների շարքում իմացության հենց այն ան-
 գաստանն է, որին մեր մտածողները մոտենում են ամենատարբեր շա-
 փանիշներով: Ես Տիտոս Լիվիոսի մոտ գտել էմ հարյուրավոր այնպիսի
 բաներ, որոնք ոմանք շեն նկատել, իսկ Պլուտարքոսը՝ հարյուրավոր
 այնպիսիք, որ ես չեմ կարողացել գտնել, և, երբեմն, անգամ այնպիսի
 բաներ, որ նկատի չի ունեցել հենց հեղինակը: Ոմանց համար դա զուտ
 քերականական պարապմունքներ են, ուրիշների համար՝ կաղմախոսու-
 թյուն, փիլիսոփայություն, որը, հնարավորություն է տալիս թափանցել
 մեր էության առավել նվիրական գաղտնարանները: Պլուտարքոսի մոտ
 մենք կարող ենք գտնել ամենասևեռուն ուշադրության արժանի ընդար-
 ձակ դատողություններ, քանզի, իմ կարծիքով, նա այստեղ մեծ վար-
 պետ է, սակայն դրա հետ մեկտեղ՝ նաև հազարավոր այնպիսի բաներ,
 որոնք նա շոշափում է միայն թեթևակիորեն: Նա ընդամենը մատնա-
 ցույց է անում, թե ուր գնանք, եթե կամենանք, երբեմն դոհանում է
 նրանով, որ հարևանցիորեն մի ակնարկ է նետում, թեկուզ հարցը վե-
 րաբերի ամենակարևոր, ու հիմնական բաներին: Հարկավոր է այս սմե-
 նը դուրս կորզել նրանից և ի ցույց դնել: Այսպես, օրինակ, նրա այն դի-
 տողությունը, թե Ասիայի բնակիչները, միայն մեկ միապետի ստրուկ-
 նեքն էին, որովհետև չէին կարող արտաբերել գեթ մեկ վանկ՝ «ոչ», գու-
 ցե, կա Բոեսիին նյութ ու առիթ տվեց գրելու «Կամավոր ստրկույնու-
 նը»²⁵: Երբեմն նա նշում է նաև մարդու արտաքուստ աննշան մի վար-
 մունք կամ նրա պատահաբար ասած խոսք, բայց իրականում դա ար-
 ժանի է մի ամբողջ դատողության: Ի՞նչ ցավալի է, որ բացսույնի խելքի

տեր մարդիկ այդքան սիրում են համառոտ լինել: Դրանից նրանց փառքըն, անկասկած, աճում է, բայց մենք վնաս ենք կրում: Պլուտարքոսի համար ավելի կարևոր է, որ մենք գովաբանենք նրան խելքի, քան գիտելիքների համար, նա գերազասում է թողնել ծարավի, միայն թե մենք գերհագեցում չզգանք: Նրան քաջ հայտնի էր, որ նույնիսկ այն ճամանակ, երբ խոսքը շատ լավ բաների մասին է, կարելի է ավելորդութուններ դուրս տալ և որ Ալեքսանդրը միանգամայն արգաբացիորեն կշտամբել է հիանալի, բայց չափազանց երկար խոսքով էփորներին դիմող հռետորին. «Մ՛վ օտարական, դու ասում ես, այն ինչ պետք է, բայց ոչ այնպես, ինչպես հարկն է»²⁶: Վտիտ մարմին ունեցողը շատ է շոր հագնում, աղքատիկ միտք ունեցողն այն զարդարում է ճոռոմ բառերով:

Ուրիշների հետ շփվելով մարդու միտքը զարմանալիորեն պայծառանում է: Չէ որ մենք խորասուզված, ամփոփված ենք ինքներս մեր մեջ, մեր մտահորիզոնը շատ նեղ է, մենք մեր քթից այն կողմ շենք տեսնում: Մի անգամ Սոկրատեսին հարցրին, թե ծնունդով որտեղացի է: Նա չպատասխանեց՝ «Աթենքից», այլ ասաց՝ «Տիեզերքից»: Այդ իմաստունը, որ ուներ անկաշկանդ ու հարուստ միտք, տիեզերքը դիտում էր որպես իր հարազատ քաղաքը, ամբողջ մարդկությանը նվիրաբերելով իր գիտելիքները, ինքն իրեն, իր սերը և ոչ թե մեզ նման, որ նկատում ենք լոկ այն, ինչը մեր ոտքերի տակ է: Երբ իմ գյուղում խաղողի այգիները թեթեակի ցրտահարվում են, մեր քահանան դա բացատրում է նրանով, թե մարդկային ցեղը զայրացրել է աստծուն, և գտնում է, որ այդ նույն պատճառով աշխարհի մյուս ծայրում մարդակերները կոկորդիները թրջելու բան չունեն: Տեսնելով մեր քաղաքացիական պատերազմները, ո՞վ չի բացականչում, թե քանդվում է աշխարհը և մոտենում է վերջին դատաստանը, մոռանալով հանդերձ, որ եղել են ավելի վատ բաներ և հազարավոր ուրիշ պետութուններ այդ նույն պահին լիակատար բարոյության մեջ են: Իսկ ես, հիշելով մեզանում տիրող անպատիժ սանձաքձակութունը, հակված եմ զարմանալու, որ այդ պատերազմները աակավին ընթանում են այդքան մեղմ ու անհիվանդագին: Կարկտահարվողին թվում է, թե ամբողջ կիսագունդն ամպրոպի ու փոխորկի մեջ է: Չէ որ մի սավոյացի ասել է, թե, եթե այդ տխմարը՝ Յրանտիայի թագավորը, կարողանար կարգին վարել իր գործերը, թեևս իր դքսին հարմար ժառայապետ կլիներ: Այդ սավոյացին շէր կարող պատկերացնել ոչինչ իբր տիրակալից ավելի վեհասքանչ: Առանց գիտակցելու, նույնանման մոլորության մեջ ենք նաև մենք, այնինչ այդ մոլորությունն իր հետ լքերում է շատ հետևանքներ և վիթխարի վնաս պատ-

ճառում: Սակայն ով ի վիճակի է նկարի պես պարզ պատկերացնել մեր մայր բնությունն իր ամբողջ արքայական շքեղությամբ, ով կարողանում է նկատել նրա խիստ փոփոխական ու բազմազան հատկանիշները, ով իրեն զգում է (և ոչ միայն իրեն, այլև ողջ թագավորությունը) որպես անհուն ամբողջության մի փոքրիկ, հազիվ նշմարելի կաթիլ, լսկ նա է ընդունակ առարկաները գնահատել ըստ իրենց իսկական շափերի:

Այս վիթխարի աշխարհք, որը, բացի այդ, բազմապատկում են նրանք, ովքեր այն դիտում են որպես սեռի մի տեսակ, հենց այն հայելին է, որին մենք պետք է նայենք մինչև վերջ ճանաչելու համար ինքներս մեզ: Կարճ ասած, ես ուզում եմ, որ այն լինի իմ պատանու գիրքը: Մանոթանալով բազմազան բնավորությունների, աղանդների, գատողությունների, հայացքների, սովորույթների և օրենքների, մենք սովորում ենք ողջամտորեն գառել մեր սեփականների մասին, ինչպես նաև մեր խելքը վարժեցնում ենք հասկանալու իր անկատարությունն ու բնածին անկարողությունը. իսկ չէ որ այդ գիտությունն այնքան էլ դյուրին չէ: Պետական այդքան խռովությունների և տարբեր ժողովուրդների ճակատագրերի փոփոխությունների պատկերը մեզ սովորեցնում է, որ այնքան էլ չհպարտանանք մեզանով: Մոռացության փոշու մեջ թաղված բազում անունները, բազում հաղթանակները ծիծաղելի են դարձնում միայն անկումից հետո ինչ-որ շափով հայտնի դարձած մի հավաքուն գրավելով, կամ մի տասնյակ հեծյալ ռազմիկ գերեվարելով պատմության մեջ անուններս հավերժացնելու մեր հույսը: Ուրիշ պետություններում կատարվող ճոխ ու ամբարհավաճ տոնակատարությունները, բազմաթիվ տիրակալների և արքունիքների վեհությունն ու գոտողությունը կուժեղացնեն մեր տեսողությունը և կօգնեն առանց կկոցելու նայել մեր սեփական արքունիքի ու տիրակալի շուքին, ինչպես նաև հաղթահարել մահվան սարսափն ու հանգիստ գնալ այն աշխարհ, ուր մեզ սպասում է հիանալի ընկերակցություն: Նույնն է նաև մնացած ամեն ինչը:

Մեր կյանքը, ասում էր Պյութագորասը, հիշեցնում է օլիմպիական խաղերի հավաքված մեծ ու բազմամարդ մի ամբոխ: Ոմանք մարզում են իրենց մարմինը, որպեսզի փառք նվաճեն մրցումներում, մյուսներն այնտեղ են քարշ տալիս վաճառքի իրենց ապրանքները, որպեսզի շահույթ կորզեն դրանից: Բայց կան նաև այնպիսիք (և նրանք վատագույնները չեն), որոնք այստեղ չեն փնտրում ոչ մի շահ. նրանք ուզում են միայն նայել, թե ինչպես և ինչու է արվում այս կամ այն բանը, նրանք ուզում են լինել պարզապես ուրիշների կյանքը դիտող հանգիսական-

ներ, որպեսզի ավելի ճիշտ դատեն՝ դրա մասին և համապատասխան կերպով դասավորեն իրենցը:

Օրինակներին՝ բնականաբար կարող են հետևել առավել օգտակար փիլիսոփայական կանոններ, որոնց հետ հարկ է համեմատել մարդու արարքները: Թող դաստիարակն իր սանին պատմի,

quid fas optare: quid asper
Utile nummus habet; patriae carisque propinquis
Quantum elargiri deceat; quem se deus esse
Iussit, et humana qua parte locatus es in re:
Quid sumus, aut quidnam victuri gignimur*.

որ նշանակում է. իմանալ և շիմանալ, որն է իմացության նպատակը, ինչ բան է քաջությունը, ժուժկալությունն ու արդարամտությունը, որն է ազահության ու փառասիրության, ստրկության ու հնազանդության, սանձարձակության ու ազատության տարրերությունը, որ նշաններն են թույլ տալիս ճանաչելու իսկական ու կայուն գոհունակությունը, ինչքան կարելի է վախենալ մահից, ցավից, կամ անարգանքից,

Et quo quemque modo fugiatque feratque laborem**.

որ շարժիչ ուժերն են մեզ գործի դնում և ինչպես են մեզանում այդքան տարբեր մղումներ ծնվում: Քանզի ես գտնում եմ, թե նրա ուղեղը սնելու համար պարտադիր դատողությունները պետք է լինեն նրանք, որոնք կոչված են կարգ ու կանոն մտցնելու նրա բարքերում և զգացմունքներում, սովորեցնելու ճանաչել ինքն իրեն, ինչպես նաև ապրել ու մեռնել ըստ պատշաճին: Անցնելով ազատ արվեստներին, մենք կսկսենք նրանից, որը մեզ դարձնում է ազատ:

Իրանք բոլորն էլ այս կամ այն շափով սովորեցնում են, թե ինչպես ապրենք և ինչպես օգտվենք կյանքից՝ ի միջի այլոց, նույն նպատակին է ծառայում մնացած ամեն ինչը: Սակայն, ընտրենք այն արվեստը, որն ուղղված է կյանքին և անմիջապես ծառայում է նրան:

Եթե մեզ հաջողվեր մեր կյանքի պահանջմունքները հասցնել իրենց բնական ու օրինական սահմաններին, կտեսնեինք, որ առօրյա գիտելիքների մեծ մասը պետք չէ առօրյայում, և որ նույնիսկ այս կամ այն

* Ին ի՞նչը կարելի է ցանկանալ, ո՞րն է վերջերս հատած դրամի արժեքը, որքանով պետք է առատաձեռն լինել հայրենիքի և սիրելի մերձավորների հանդեպ, ի՞նչ դեք է հատկացրել քեզ աստված, և իսկապես ի՞նչ տեղ ես զբաղեցնում մարդկանց մեջ, ի՞նչ ենք ներկայացնում մենք մեզանից կամ ինչպիսի՞ կյանքի համար ենք ծնվել²⁷ (լատ.):

** Ինչպես և ինչպիսի գծավորություններից նա պետք է խուսափի և ինչպիսիք՝ կրի²⁸:

կերպ կիրառութիւն գտնող գիտութիւններում, այնուամենայնիւ, հայտնաբերվում են ոչ ոքի պետք չեկող բազում այնպիսի բարդութիւններ ու մանրամասներ, որոնք կարելի կլինեն դեն նետել, Սոկրատեսի խորհրդով, սահմանափակվելով միայն աներկբայորեն օգտակար բաների ուսումնասիրութեամբ²⁹։

Sapere aude,
Incipe: vivendi recte qui prorogat horam,
Rusticus exspectat dum defluat amnis; at ille
Labitur, et labetur in omne volubilis aevum*.

Մեծագույն թերամտութիւն է՝ մեր երեխաներին սովորեցնել

Quid moveant Pisces, animosaque signa Leonis,
Lotus et Hesperia quid Capricornus aqua**.

կամ աստղերի և ութերորդ ոլորտի շարժման մասին գիտութիւնն ավելի շուտ, քան նրանց սեփական հոգեկան մղումների մասին գիտութիւնը.

Τὶ κλεισθὲ παύει
Τὶ δ' ἄβορᾶσι Βωώτεω

Անաքսիմենեսը³³ Պլյութագորասին գրել է. «Կարո՞ղ եմ արդյոք ես տարվել աստղերի գաղտնիքներով, երբ աչքիս առաջ միշտ մահ է կամ ստրկութիւն»։ (Քանզի դա այն ժամանակ էր, երբ Պարսկաստանի թագավորները պատրաստվում էին արշավանքի ելնել նրա հայրենիքի դեմ)։ Ամեն ոք պետք է ասի իրեն. «Կմտածե՞մ արդյոք երկնային ոլորտների շրջապատույտի մասին, համակված լինելով փառասիրութեամբ, ազահութեամբ, խելացնորութեամբ, սնահավատութեամբ և զգալով, որ ինձ բզկտում են կյանքիս սպառնացող բազում այլ թշնամի ուժեր»։

Այն բանից հետո, երբ պատանուն կբացատրեն, թե իրեն իսկապես ինչ է պետք ավելի լավ ու ավելի խելամիտ դառնալու համար, հարկ է նրան ծանոթացնել տրամաբանութեան, ֆիզիկայի, երկրաչափութեան ու ճարտասանութեան հիմունքներին, և այս գիտութիւններից որն էլ

* Վճռի դառնալ խելամիտ, սկսիւ նա, ով հապաղում է կարգավորել իր կյանքը, նման է այն կարճամիտ մարդուն, որը գետի մոտ սպասում է, թե երբ այն կհոսի կվերջանա, իսկ գետը հոսում է և կհոսի առհասարակ³⁰ (լատ.)։

** Թե ինչպիսին է Ձկան, անվեհեր Առյուծի կամ հեսպերիական շրերով ողողվող Այծեղջյուրի համաստեղութեան ազդեցութիւնը³¹ (լատ.)։

*** Ես ի՞նչ գործ ունեմ Բազումքի և Տավարածի հետ³² (հուն.)։

ընտրի (քանի որ մինչ այդ միտքն արդեն զարգացած կլինի) նա արագորեն հաջողութիւններ ձեռք կբերի: Հարկ է նրան ուսուցանել մերթ հարցադրույցի միջոցով, մերթ գրքերի օգնութեամբ, երբեմն ուսուցիչը նրանց պարզապէս ցույց կտա նպատակահարմար հեղինակին, իսկ երբեմն էլ ինքր մանրամասնորեն բացատրելով կշարադրի գրքի բովանդակութիւնն ու էութիւնը: Իսկ եթե ինքը դաստիարակն այնքան էլ գրքերի գիտակ չէ, որ նրանցում իր նպատակին հարմար տեղեր գտնի, ապա կարելի է օգնութեան կանչել մի ուսուցիչ մարդու, որն ամեն անշամ կտա այն, ինչ պահանջվում է, իսկ հետո արդեն ուսուցիչն ինքը դրանք կառաջարկի իր սանին: Կարելի՞ է արդյոք կասկածել, որ նման ուսուցումը շատ ավելի հաճելի ու բնական է, քան դասավանդումը Գալայի³⁴ եղանակով: Այնտեղ կանոնները ձանձրալի ու դժվար են, բառերը դատարկ ու կարծես անմարմին. ոչինչ չի հրապուրում ձեզ, ոչինչ միտք չի շարժում: Իսկ այստեղ մեր հոգին չի մնա առանց հարստանալու, այստեղ կգտնվի ձեռք բերելու բան և տեղ: Պտուղներն այստեղ անհամեմատ ավելի խոշոր են և արագ են հասունանում:

Տարօրինակ է, բայց մեր օրերում, նույնիսկ մտածող մարդկանց համար, փիլիսոփայութիւնը սոսկ անիմաստ բառ է, որն, ըստ էութեան, ոչինչ չի նշանակում, այն կիրառութիւն չի գտնում և ոչ մի արժեք չունի ոչ որևէ մեկի աչքում, ոչ գործնականում: Կարծում եմ, դրա պատճառն անվերջ բանակոխվներն են, որոնցում այն թաղվել է: Խորապէս սխալվում են նրանք, ովքեր այն պատկերում են երեխաներին անմաշկելի, խոժոռ ճակատով, երկար, թավ հոնքերով, որոնք վախ են ներշնչում: Ո՞վ է նրան հազցրել այդքան մոռյլ ու զգվելի այդ խարուսիկ դիմակը: Իսկ իրականում շեւ գտնի ոչինչ այդքան հաճելի, առույգ, զվարթ, քիչ մնաց ասեի՝ չարաճճի: Փիլիսոփայութիւնը կոչում է միայն պարապութեան ու ուրախութեան: Եթե ձեր առջև ինչ-որ մեղամաղձոտ ու մոռյլ բան է, ուրեմն այդտեղ փիլիսոփայութեան մասին խոսք անգամ չկա: Դեմետրիոս Քերականը, Դելփիի տաճարում հանդիպելով միասին նստած մի խումբ փիլիսոփաների, ասաց. «Կամ ես սխալվում եմ, կամ դատելով ձեր այդքան խաղաղ և ուրախ տրամադրութիւնից, դուք զբոցում եք դատարկ բաների մասին»: Այստեղ նրանցից մեկը՝ դա Հերակլետոն Մեգարացին էր, պատասխանեց. «Դիտութեան մասին զրուցելիս ճակատները կնճոտտում են նրանք, ովքեր վիճում են, թե βάλω բալ ապառնի ժամանակը երկու լամբդա է պահանջում թե մեկ, կամ ինչ պէս է կազմված χείρον և βέλτιον բառերի համեմատական աստիճանը և χείριστον և βέλτιστον³⁵ բառերի գերադրականը: Իսկ ինչ վերաբերում է փիլիսոփայական գրույցներին, ապա դրանք զվարճացնում և ուրա-

խացնում են իրենց մասնակիցներին և բնավ չեն ստիպում ձախատ խո-
ժուել ու տխրել»:

Deprendas animi tormenta latentis in aegro
Corpore, deprendas et gaudia; sumit utrumque
Inde habitum facies*.

Փիլիսոփայության շտեմարան դարձած հոգին անպայման առող-
ջությամբ կլցնի նաև մարմինը: Այն չի կարող շճառագել իրենում տիրող
անդորրն ու լիությունը. ճիշտ նույն կերպ, այն իր պատկերով ու նմա-
նությամբ կփոխի մեր արտաքինը, հազորգելով նրան արժանապատվու-
թյամբ լի հպարտություն, զվարթություն և կայտառություն, գոհունա-
կության ու բարեհոգության արտահայտություն: Իմաստնության տարբե-
րիչ հատկանիշը կյանքը մշտապես ուրախ ընկալելն է, նրան, ինչ
պես նաև վերլուսնյա աշխարհի ամեն ինչին, բնորոշ է հավերժ անմար
պայծառությունը: Իրենց երկրպագուներին սևացնում ու մրոտում են
baroco -ն և baralipton -ը³⁷, այլ բնավ ոչ նա. ի միջի այլոց, նա նրանց
հայտնի է միայն լսածով: Արդարև, նա է, որ հանգստացնում է հոգեկան
փոթորիկները, սովորեցնում ժպիտով տանել հիվանդություններն ու սո-
վըր ոչ թե ինչ-որ երևակայական էպիցիկլերի օգնությամբ³⁸, այլ հեն-
վելով բանականության միանգամայն շոշափելի, բնական փաստարկ-
ների վրա: Նրա վերջնական նպատակը առաքինությունն է, որը բնավ
չի գտնվում թեք, ուղղաբերձ ու անմատչելի ինչ-որ լեռան գաղաթին,
ինչպես պնդում են սխոլաստիկները: Ում վիճակվել է մոտենալ առաքի-
նությանն, ընդհակառակը, հավատացնում են, թե այն ապրում է մի
սքանչելի, բարեբեր ու ծաղկուն բարձրավանդակում, որտեղից սյարզ
տեսնում է ներքևում գտնվող աճեն ինչ, տակայն, նրան կարող է հաս-
նել լոկ այն մարդը, ամ հարսնի է նրա գտնվելու տեղը, այնտեղ են
տանում ստվերոտ պրահեւաները, որոնք անցնում են խոտով ու ծաղիկ-
ներով ծածկված մաքրագետիկներով, փոքր ինչ թեք, վերելքի հարմար,
երկնքի պես հարթ շանջով: Սախայն քանի որ իմ առած վայ փիլիսոփա-
ներին չի հաջողվել ծանոթանալ այդ սքանչելի, հաղթական, սիրաղեզ,
հեզ, բայց, միևնույն ժամանակ, նաև առնական, շարիքի, դժգոհության,
վախի ու ճնշման նկատմամբ անհաշտ ատելությամբ լցված բարձրագույն
առաքինությանը, սրի ուղեվարը բնությունն է, իսկ ուղեկիցը՝ երջան-

* Գու կարող ես հայտնաբերել հիվանդ մարմնում՝ ծվարած հոգու տառապանքներ,
կարող ես հայտնաբերել նաև ուրախություն. չէ՛ որ գեմքն արտահայտում է և՛ մեկը, և՛
մյուսը³⁶ (լատ.):

կությունն ու վայելքը, ապա, սեփական թուլության պատճառով, նրանք հնարել են այդ հիմար ու ոչ մի բանի շնամնվող կերպարը, մոռալլ, կրովարար, քմահաճ, սպառնալից, շարաթույն մի առաքինություն և կանգնեցրել այն մի մենավոր ժայռի վրա, տատասկների մեջ, գարձնելով մարդկային ցեղը սարսափեցնող խրտվիլակ:

Իմ ասած դաստիարակը, գիտակցելով իր պարտքը՝ սանին ցանկություն ներարկել ոչ միայն հարգելու, այլև հավասարապես, գուցե նաև առավել սիրելու առաքինությունը, նրան կբացատրի, որ բանաստեղծները, մնացած բոլորի նման, ունեն նույն թուլությունները, նա կհասկացնի նաև, որ անգամ աստվածներն ավելի շատ ջանք են գործադրել, թափանցելու համար վեներայի, քան Պալլասի ննջարանը: Եվ երբ աշակերտն սկսի բոլոր երևտասարդներին հատուկ տոչոր զգալ, գաստիարակը, որպես նրա պաշտամունքի հնարավոր առարկաներ, կողք կողքի կներկայացնի Բրադամանտային ու Անժելիկային³⁹. գործունյա, ազնիվ, արի, բայց բնավ ոչ առնանման, սեփական գեղեցկությանն անտեղյակ առաջինին, և իր ամբողջ անմիջականությամբ ու կանացի հմայքով լի, փափկակյաց, քնքուշ, նուրբ, սեթևեթ երկրորդին, մեկին՝ պատանու հագուստով, գլխին սրածայր փայլուն սաղավարտ, մյուսին՝ կույսի շորերով, մազերին մարգարտազարդ ժապավեն: Եվ, ընտրելով բնավ ոչ այն մեկին, որին կգերազասեր այդ կանացիակերպ փոյուզիացի հովիվը⁴⁰, պատանին կապացուցի գաստիարակին, որ իր սերն արժանի է տղամարդուն: Թող նրա դաստիարակը տա նաև մի այսպիսի դաս. իսկական առաքինության արժեքն ու վեհությունը որոշվում են այն պահպանելու հեշտությամբ, օգտակարությամբ և հաճելիությամբ, նրա բեռն այնքան աննշան է, որ կրել կարող են ինչպես մեծերը, այնպես էլ երեխաները, ինչպես պարզամիտները, այնպես էլ խորամանկները: Այն մեղանից պահանջում է ոչ թե ուժ, այլ կանոնավորություն: Եվ Սոկրատեսը, նրա ամենաառաջին սիրեցյալը, գիտակցաբար մոռացավ իր ուժը, որպեսզի ուրախությամբ ու պարզամտորեն անձնատուր լիներ նրանում կատարելագործվելուն: Նա է մարդկային վայելքները սնուցող մայրը՝ Դրանք զնելով օրինական շրջանակներում, նա հաղորդում է գրանց մաքրություն և կայունություն, շափավորելով՝ պահպանում դրանց թարմությունն ու գրավչությունը: Մերժելով այն վայելքները, որոնք համարում անարժան, նա մեղանում ավելի է ուժեղացնում հակումն իր թուլատրածների նկատմամբ, այդպիսիք անչափ շատ են, քանզի լիովին հագնալու, և անգամ գերհագնալու շափ նա մայրական առատաձեռնությամբ մեղ է տրամադրում այն ամենը, ինչ ներդաշնակ է բնության պահանջներին:

Չէ որ մենք չենք պնդի, թե այն որոշ սահմանափակումները, որոնք խմելու սիրահարին գերծ են պահում հարբեցողությունից, որկրամոլին՝ ստամոքսի անմարսողությունից և անառակին՝ ամբողջովին ճաղատանալուց, մարդկային վայելքների թշնամիներ են: Եթե առաքինությանը սովորական առօրյա հաջողություն բաժին չի ընկնում, նա երես է թեքում նրանից, բավարարվում է առանց դրա և ինքն է կռում սեփական բախտը, որն ավելի քիչ երերուն է և փոփոխվող: Նա կարող է լինել հարուստ, գորեղ և գիտուն, ընկողմանել անոռարույր մահճում: Նա սիրում է կյանքը, սիրում է գեղեցկությունը, փառքը, առողջությունը: Սակայն նրա գլխավոր ու հիմնական խնդիրն է սովորեցնել օգտվել այդ բարիքներից, պահպանելով որոշակի շափ, ինչպես նաև մնալ տոկուն, կորցնելով դրանք, խնդիր, որն ավելի շատ ազնիվ է, քան դժվարին, գիտաանց դրա մեր կյանքի ընթացքն աղճատվում է, պղտորվում, այլանդակվում, այստեղ մեզ դարանում են ստորջրյա քարեր, խորխորատներ և ամեն տեսակ հրեշներ: Իսկ եթե աշակերտը դրսևորի մեր սպասելիքներին շհամայատասխանող հակումներ, եթե նա դատարկ գրույցները դերադասի ճանապարհորդության մասին հետաքրքրական պատմությունից կամ խրատական խոսքերից, որոնք կարող էր ունկնդրել, եթե, լսելով իր պատանի ընկերների մարտական ավյունը բորբոքող թմբկահարությունը, նա ականջն ուղղի ուրիշ թմբուկի, որը հրավիրում է տոնավաճառներում պարողների ներկայացման, եթե նա փոշոտ ու ցեխոտ, բայց հաղթանակով ուղմի դաշտից վերադառնալը շհամարի ավելի քաղցր ու հրապուրիչ, քան գնդակախաղերում կամ պաբախաղերում մրցանակ շահելը, ապա ես չեմ տեսնում ուրիշ ոչինչ, քան հետևյալ միջոցները. թող դաստիարակը (և որքան շուտ, այնքան լավ, ըստ որում, իհարկե, առանց վկաների) խեղդի նրան կամ ուղարկի մի առևտրական քաղաք և աշակերտելու տա մի հացթուխի, անգամ, եթե նա դքսորդի է: Քանզի, Պլատոնի խրատով, «երեխաներին կյանքում տեղ պետք է հատկացնել ոչ թե ըստ նրանց հոր ունակությունների, այլ ըստ նրանց հոգու կարողությունների»:

Քանի որ փիլիսոփայությունը ապրել է սովորեցնում և մանկական տարիքը, մյուս բոլոր տարիքների նման, ճիշտ նույն կերպ կարիք ունի այդպիսի դասերի, ուրեմն ինչո՞ւ երեխաներին նույնպես հաղորդակից չդարձնենք նրան:

Udum et molle lutum est; nunc nunc properandus et acri
Fingendus sine fine rota*.

* Կավը խոնավ է ու փափուկ. հարկ է աճապարել և, չկորցնելով ոչ մի վայրկյան, մշակել բրուտագործական դուրդի վրա⁴¹ (լատ.):

Այնինչ մեզ սովորեցնում են ապրել, երբ կյանքն արդեն անցել է: Հարյուրավոր աշակերտներ վարակվում են սիֆիլիսով նախքան ինքնազսպմանը նվիրված արիստոտելյան դասին հասնելը: Յիցերոնն ասում էր: Թե, եթե ինքը նույնիսկ երկու կյանք ունենար, միևնույն է, քնարական բանաստեղծներին ուսումնասիրելու ժամանակ չէր գտնի: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես նրանց նայում եմ ավելի մեծ արհամարհանքով, նրանք բոլորովին անօգտակար շաղակրատներ են: Մեր պատանյակը ստիպված է ավելի շտապել, չէ որ ուսմանը կարող են նվիրվել նրա կյանքի առաջին տասնհինգ-տասնվեց տարիները, մնացածը նախատեսված է գործունեության համար: Ուրեմն, եկեք այդ կարճ ժամկետն օգտագործենք ինչպես հարկն է, սովորեցնենք նրան միայն անհրաժեշտ բաները: Ավելորդություններ հարկավոր չեն. դեն նեաեցեք դիալեկտիկայի բոլոր այդ փշոտ խճողամտությունները, որոնցից մեր կյանքն ավելի լավը չի դառնում, կանգ առեք փիլիսոփայության պարզագույն դրույթների վրա և կարողացեք հարկ եղածին պես ընտրել ու մեկնաբանել դրանք, չէ որ դրանք հասկանալն ավելի հեշտ է, քան Բուկաչոյի նովելը, և մանկիկը, սանտուի ձեռքից իջնելուն պես, ավելի շատ պատրաստ է ըմբռնել դրանք, քան կարդալու և գրելու արվեստը: Փիլիսոփայության մեջ դատողություններ կան ինչպես կյանք մտնողներին, այնպես էլ զառամյալ ծերերի համար:

Ես համամիտ եմ Պլուտարքոսի հետ, թե Արիստոտելն իր մեծ աշակերտին ուսուցանում էր ոչ այնքան հետևաբանություններ կազմել, խորիմաստություններն ու երկրաչափության հիմունքները, որքան ձրտում էր սովորեցնել քաջության, համարձակության, մեծահոգության, ժուժկալության և անվեհեր ինքնավստահության բարի կանոնները, ահա հանդերձանքով նա իր տակավին երեխա սանին ուղարկեց նվաճելու ասիայի, ունենալով ընդամենը երեսուն հազար հետևակային, չորս հազար հեծյալ զինվոր և քառասուներկու հազար էկյու: Ինչ վերաբերում է մյուս գիտություններին ու արվեստներին, ապա, ինչպես ասում է Պլուտարքոսը, թեև Ալեքսանդրը դրանց վերաբերվում էր հարգանքով և գովարանում դոցա օգուտն ու մեծ արժեքը, այնուամենայնիվ, շնայած հաճույք էր ստանում, սակայն դժվարանում էր հաճույքով զբաղվել դրանցով:

Petite hinc, iuvenesque senesque,
Finem animo certum, miserisque viatica canis*.

* Պատանիներ, ծերունիներ: Այստեղ փնտրեցեք ձեր ողու իսկական նպատակը՝ թշվառ ալեկորության պաշտպանությունը⁴² (լատ.):

Իսկ ահա թե ինչ է ասում էպիկուրը Մենիկեսին ուղղված իր նամակի սկզբում. «Փիլիսոփայությունից չի փախչում պատանջակը, չի հոգնում զառամյալ ծերը»⁴³: Ով վարվում է այլ կերպ, նա կարծես դրանով ցույց է տալիս, թե իր համար երջանիկ կյանքը կամ դեռ չի հասել, կամ արդեն անցել է:

Ուստի, ես չեմ ուզում, որ կաշկանդեն մեր մանչուկի ազատությունը: Ես չեմ ուզում նրան դարձնել մի ինչ-որ դաժան ուսուցչի մոայլ տրամադրության զոհը: Ես չեմ ուզում այլանդակել նրա հոգին, ստեղծելով իսկական դժոխք և ստիպելով, ինչպես ոմանց մոտ ընդունված է, աշխատել օրական տասնչորս կամ տասնհինգ ժամ, ասես բեռնակիր լինի: Իսկ եթե նա, չակրված լինելով մենության ու մեղամաղձության, իրեն ներարկած շափազանց ջանասիրությամբ տքնի զրքեր ուսումնասիրելու վրա, ապա դրանում էլ, իմ կարծիքով, քիչ լավ բան կա. դա նրան կդարձնի ուրիշ մարդկանց հետ շփվելու անընդունակ և կվանի ավելի օգտակար զբաղմունքներից: Եվ իմ կյանքում ես որքա՞ն եմ տեսել այնպիսիներին, որոնք, կարելի է ասել, գիտության նկատմամբ խելահեղ մոլության պատճառով կորցրել են մարդկային կերպարանքը: Կառնեադեսը⁴⁴ դրանից այնքան էր խելքը թոցրել, որ շէր կարողանում մազերն ու եղունգները կտրելու ժամանակ գտնել: Ես չեմ ուզում, որ նրա ազնիվ բնավորությունը կոպտանա, շփվելով վայրագությանն ու բարբարոսությանը: Ֆրանսիական խոհեմությունը վաղուց ի վեր դարձել է ասացվածք, խոհեմություն, որը թեև դրսևորվում է շատ վաղ, բայց փոխաբերելով պահպանվում է կարճ: Եվ իրոք, դժվար է գտնել մի այնպիսի սքանչելի բան, բան Ֆրանսիայի փոքր երեխաները, սակայն, որպես կանոն, նրանք չեն արգարացնում մեր հույսերը և, դառնալով շափահաս, աչքի ընկնող ոչինչ չեն դրսևորում: Ես խոհուն մարդկանցից լսել եմ, որ նման բթացման պատճառը հենց քուեջներն են (դրանք հիմա շատ շատ են մեզ մոտ), ուր իրենց ուղարկել են սովորելու:

Ինչ վերաբերում է մեր սանին, ապա նրա համար լավ են բոլոր ժամերը և պարապմունքների համար հարմար են բոլոր տեղերը, լինի դա դասասենյակ, այգի, սեղան կամ անկողին, միայնություն կամ ընկերախումբ, առավոտ կամ երեկո, քանզի փիլիսոփայությունը՝ նրա ուսումնասիրության գլխավոր առարկան, որը ձևավորում է մարդկանց մտածելակերպն ու բարքերը, ունի բառացիորեն ամեն ինչում մասնակից դառնալու առանձնաշնորհություն: Երբ մի անգամ խնջույքի ժամանակ Իսոկրատես հռետորին խնդրեցին խոսք ասել իր արվեստի մասին, պատասխատնեց (և ամեն ոք կխոստովանի, որ նա իրավացի էր) հետևյալ բառերով. «Հիմա ժամանակը չէ այն բանի, ինչ ես կարող եմ, հիմա

Ժամանակն է նրա, ինչ շեմ կարող»։ Քանզի, իսկապես, ուրախանալու և քեֆ անելու համար հավաքված հասարակության առաջ ճառ ասելը կամ լիզվահնարքների գիրկն ընկնելը կնշանակեր համատեղել անհամատեղելի բաները։ Նույնը կարելի է ասել մյուս բոլոր գիտությունների մասին։ Սակայն երբ խոսք է բացվում փիլիսոփայության և նրա հենց այն բաժնի մասին, ուր քննարկվում է մարդը, ինչպես նաև նրա պարտքն ու պարտականությունները, այս, համաձայն բոլոր իմաստունների կարծիքի, բանն այստեղ բոլորովին այլ է, և վայել չէ նրանից հրաժարվել ոչ խնջույքի, ոչ խաղերի ժամանակ, այնքան քաղցր է զրույցը նրա մասին։ Եվ մենք տեսնում ենք, թե ինչպես, Պլատոնի հրավերով ներկայանալով նրա խնջույքին⁴⁵, փիլիսոփայությունը նրբագեղորեն, տեղին ու ժամանակին զվարճացնում է ներշնչողին, թեև ընկնում է ամենախրատական ու վեհ դատողությունների գիրկը։

Aequè pauperibus prodest, locupletibus aequè;
Et neglecta, aequè pueris senibusque nocebit*.

Այսպիսով, մեր սանն, անկասկած, ուրիշներից քիչ կմտնվի պարայության։ Սակայն, ինչպես սրահում ճեմելիս մեր արած քայլերը, թեկուզ լինեն երեք անգամ ավելի շատ, մեզ չեն հոգնեցնում այնքան, որքան մի որոշակի ճանապարհ հաղթահարելը, այդպես էլ դասը, լինելով կարծես պատահական, առանց պարտադիր տեղի ու ժամանակի, զուգակցվելով մեր բոլոր մյուս գործողությունների հետ, կանցնի միանգամայն աննկատելի։ Նույնիսկ խաղերն ու վարժությունները կդառնան ուսուցման անկապտելի ու բավական նշանակալի մասը. ես նկատի ունեմ վազքը, ըմբշամարտը, երաժշտությունը, պարերը, որսը, ձիավարությունը, սուսերամարտը։ Ես ուղում եմ, որ աշակերտի դաստիարակվածությունը, նրբակրթությունը, արտաքինը կատարելագործվեն նրա հոգու հետ միասին։ Չէ որ դաստիարակում են ոչ թե միայն հոգին, միայն մարմինը, այլ ամբողջովին մարդուն. նրան երկատել չի կարելի։ Եվ, ինչպես ասում է Պլատոնը, չի կարելի դաստիարակել մեկն ու մյուսը առանձին-առանձին, ընդհակառակը, հարկ է կառավարել դրանք, առանց տարբերություն դնելու, այնպես, ինչպես մի առեղով լծված զույգ ձիերին⁴⁷։ Եվ Պլատոնին լսելիս, մեզ չի՞ թվում արդյոք, թե նա ավելի շատ ժամանակ և ավելի շատ ջանք է հատկացնում մարմնական մարզանքներին, գտնելով, որ հոգին է մարզվում մարմնի հետ, այլ ոչ թե հակառակը։

* Այն օգտակար է ինչպես աղքատին, այնպես էլ հարուստին, արհամարհելով և՛ պատանին, և՛ ծերը կվնասեն իրենց⁴⁶ (լատ.)։

Իսկ առհասարակ ուսուցումը պետք է հիմնվի խստության ու մեղմության միակցման վրա, և ոչ թե այնպես, ինչպես արվում է սովորաբար, երբ, փոխանակ երեխաներին գիտության տրամադրելու, այն մատուցում են որպես համատարած սարսափ ու դաժանություն: Հրաժարվեք բռնությունից և հարկադրանքից, իմ կարծիքով, չկա մի բան, որ այդպես այլանդակի ու այլասերի լավ տվյալներ ունեցող խառնվածքը: Եթե ուզում եք, որ երեխան վախենա ամոթից ու պատժից, մի ընտելացրեք այդ բաներին: Ընտելացրեք նրան քրտինքին ու ցթտին, քամուն ու կիզիչ արեգակին, բոլոր այն վտանգներին, որոնք նա պետք է արհամարհի, զերծ պահեցեք փափկակեցությունից ու պահանջկոտությունից, թող նա անտարբեր լինի հագուստին, անկողնուն, ուտելիքին ու ըմպելիքին. թող վարժվի բացարձակապես ամեն ինչին: Թող չլինի մայրիկի բալիկ, շնամանվի փափկասուն օրիորդի, այլ լինի ուժեղ ու ամրակազմ պատանի: Զահել ժամանակ, հասուն տարիքում, ծերությունս օրերին՝ ես միշտ մտածել ու հարցին նայել եմ հենց այդպես: Եվ, բազմաթիվ այլ բաների թվում, մեր քոլեջների մեծ մասում սահմանված կանոնները երբեք ինձ գուր չեն եկել: Գուցե, դրանց հասցրած վնասը լինեք ավելի քիչ, եթե դաստիարակները գոնե մի փոքր ավելի ներողամիտ լինեին: Բայց ախր դրանք իսկական բանտեր են այնտեղ փակված երիտասարդության համար: Այնտեղ զարգացնում են այլասերվածությունը, դրա համար պատժելով ավելի շուտ, քան այն դրսևորվում է: Մտեք մի այդպիսի քոլեջ պարապմունքների ժամանակ. դուք չեք լսի ոչինչ, բացի ճիպոտահարվող դպրոցականների և զայրույթից խելքները թոցրած ուսուցիչների ճիչերից: Կարելի՞ է արդյոք նման եղանակով պարապմունքների նկատմամբ սեր արթնացնել երեխաների մեջ, կարելի՞ է արդյոք նման սարսափելի մոտթով, մտրակը ձեռքին դեկավարել այդ վախվորիկ ու քրնքուչ հոգիները: Կե՛ղծ ու կործանարա՛ր միջոց: Ավելացնենք այդ առթիվ Քվինտիլիանոսի ճիշտ դիտողությունը. ուսուցչի այդպիսի անսահման իշխանությունը հղի է ամենավտանգավոր հետևանքներով, հատկապես եթե հաշվի առնենք մեզ մոտ ընդունված պատիժների բնույթը⁴⁸: Որքա՛ն ավելի վայելուչ կլինեք դասասենյակների հատակներին սփռել ծաղիկներ ու տերևներ, ուռենու արյունոտ ճիպոտների փոխարեն: Ես կհրամայեի այնտեղի պատերը նկարազարդել Ուրախության, Զվարճության, Ֆլորայի, Փարիսների պատկերներով, ինչպես իր դպրոցում արել էր փիլիսոփա Սպուսիպոսը⁴⁹: Ուր երեխաների օգուտն է, այնտեղ պետք է լինի նաև հաճույքը: Երբ երեխային կերակրում ես, հարկ է օգտակար և տեղիքները փոքր ինչ քաղցրացնել շաքարով, իսկ վնասակարները՝ ցտոնացնել:

Զարմանալի է, թե իր «Օրենքներում» Պլատոնը որքան ուշադրու-
թյուն է դարձնում իր պետութեան երիտասարդութեան ուրախ ժամանց-
ներին ու զվարճություններին, որքան հանգամանորեն է խոսում նրանց
վազքի, խաղերի, երգերի, ցատկումների ու պարերի մրցումների մասին,
որոնց ղեկավարութեանն ու հովանավորութեանը, նրա խոսքերով, հնում
հանձնված էր հենց աստվածներին՝ Ապոլոնին, մուսաներին, Միներվա-
յին: Մենք նրա մոտ կդանենք իր գիմնասիաների վերաբերյալ հազար
կարգադրեր, սակայն, գրքային գիտելիքները նրան շատ քիչ են հետա-
քրքրում, և նա, ինձ թվում է, խորհուրդ է տալիս պոեզիայով գրադ-
վել սոսկ նրա համար, որ այն կապված է երաժշտութեան հետ:

Հարկ է մեր վարք ու բարքում խուսափել ամեն տեսակ տարօրի-
նակ ու անսովոր բաներից, քանի որ դրանք մեզ խանգարում են շփվել
մարդկանց հետ և ընդհանրապես այլանդակութեանն ենք: Ո՞ւմ չէին
զարմացնի Ալեքսանդրի սեղանապետ Դեմոփանեսի արտասովոր հատ-
կանիշները, որը քրտնում էր ստվերում և մրսելուց դուրս արևի տակ:
Ես տեսել եմ մարդիկ, որոնց համար խնձորի հոտն ավելի սարսափելի
էր, քան հրացանների կրակոցները, այնպիսիներին, որոնք մահու շափ
վախենում էին մկներից, այնպիսիներին, որոնք սերուցք ածանելիս սրտ-
խառնութեան էին զգում, այնպիսիներին, որոնք չէին կարողանում նա-
յել, երբ խրենց ներկայութեամբ փետրաներքնակ էին թափ տալիս, ինչ-
պես Գեորգիանիկոսը⁵⁰ չէր կարողանում տանել աքաղաղների ոչ տեսքը,
ոչ կանչը: Գուցե, դա տեղի է ունենում խառնվածքի ինչ-որ գաղտնի
առանձնահատկության հետևանքով. սակայն իմ կարծիքով, ժամանա-
կին միջոցների դիմելու դեպքում այդ ամենը կարելի է հաղթահարել:
Ես դաստիարակվել եմ այնպես, որ իմ ճաշակը, թեև ոչ առանց դժ-
վարության, հարմարվել է սեղան մատուցվող ամեն ինչին, բացի գարե-
ջրից: Քանի դեռ մարմինը ճկուն է, անհրաժեշտ է այն մարդել բոլոր
միջոցներով ու բոլոր ձևերով: Եվ եթե մեր պատանու կամքն ու ճաշ-
ակը ճկուն են, հարկ է համարձակորեն նրան վարժեցնել ուղած դրջապա-
տի և ուղած դժողովրդի կենսաձևին, առիթի դեպքում, նույնիսկ ցոփու-
թյան ու ջռայլութեան, եթե դա պետք լինի: Թող նա հարմարվի ժա-
մանակի սովորույթներին: Ես պետք է կարողանա անել անխտիր ամեն
ինչ, բայց պետք է սիրի անել միայն լավը: Իրենք՝ փիլիսոփաները, հա-
վանութեան շեն տալիս կալիսթենեսի վարքագծին, որը կորցրել էր մեզ
Ալեքսանդրի բարյացակամութեանը, հրաժարվելով խմել նույնքան շատ
որքան նա: Թող պատանին քրքջա, թող շարաճճի լինի, թող իր թագա-
վորի հետ միասին ցոփութեան անի: Ես կուզենայի, որ նույնիսկ դինավ

բուք: հարցում նա տոկունությամբ ու դիմացկունությամբ գերազանցեր իր ընկերակիցներին: Եվ թող նա ոչ ոքի վնաս չպատճառի ոչ թե հնարավորությունների ու կարողության պակասի, այլ շար կամքի պակասի պատճառով: Multum interest utrum peccare aliquis nolit aut nesciat¹.

Մի անգամ, ուրախ ընկերախմբում, մի մեծատոհմիկ աստիճանավորի, որը Ֆրանսիայում երբեք աչքի չէր ընկել անկանոն կենսաձևով, ես հարցրի, թե Գերմանիայի թագավորին ծառայած ժամանակ քանի անգամ է հարբել: Այս հարցը տալով ես ուզում էի հարգանք հավաստել նրան, և նա այդպես էլ ընդունեց: Նա պատասխանեց, որ երեք անգամ, և իսկույն պատմեց, թե ինչ հանգամանքներում է դա տեղի ունեցել: Ես գիտեմ մարդկանց, որոնք, շունենալով նման ունակություններ, ընկել են շատ ծանր դրության մեջ, գործ ունենալով, այդ ազգի հետ: Ես բազմիցս հիացել եմ Ալկիբիադեսի⁵² դարմանալի անհատականությամբ, որը կարողանում էր, առանց իր առողջությանը վնաս հասցնելու, շատ հեշտությամբ հարմարվել ամենատարբեր պայմանների, մերթ շուքով ու շռայլությամբ գերազանցելով հենց պարսիկներին, մերթ ժուժկալությամբ ու խիստ բարքով՝ լակեդեմոնացիներին, մերթ բոլորին ապշեցնելով առաքինությամբ, երբ Սպարտայում էր, մերթ հեշտասիրությամբ, երբ գտնվում էր Հոնիայում:

Omnis Aristippum decuit color, et status, et res**.

Ես կուզեի այդպես դաստիարակել նաև իմ սանին,

quem duplici panno patientia velat
Mirabor, vitae via si conversa decebit,
Personamque feret non inconcinnus utramque***.

Ահա իմ խրատները: Եվ ավելի շատ դրանցից օգուտ կբաղի ոչ թե նա, ով անգիր կանի, այլ նա, ով գործնականում կկիրառի դրանք: Եթե դուք դա տեսնում եք, ուրեմն նաև լսում եք, եթե դուք լսում եք, ուրեմն նաև տեսնում եք:

* Մեծ աստիճանի կազանցանք կատարել շքանկանալու և շարողանալու միջև⁵¹ (լատ.):

** Արիստիպոսը հեշտությամբ հարմարվում է իրերի ուզածը ընթացքին ու վիճակին⁵³ (լատ.):

*** Որ նա լինի խիստ համբերատար, և ես անշափ գոհ կմնայի, եթե նա սովորեք հարմարվել փոփոխվող հանգամանքներին և հեշտությամբ կատարեր թե մեկ, թե մյուս դերը⁵⁴ (լատ.):

Ասաված մի՛ արասցե, սառւմ է ինչ-որ մեկը Պլատոնի մոտ, որ փիլիսոփայութեան պարապմունքները նպատակամղված լինեին սոսկ տարբեր գիտելիքներ ձեռք բերելուն և գիտութեան մեջ թաղվելուն:

Hanc amplissimam omnium artium bene vivendi disciplinam vita magis quam litteris persecuti sunt*.

Չլիունտի տիրակալ Լեոնը մի անգամ Հերակլիդես Պոնտացուն հարցրեց, թե նա ինչ գիտութեամբ կամ ինչ արվեստով է զբաղվում. «Ես չգիտեմ ոչ գիտութիւն, ոչ արվեստ, — պատասխանեց նա, — ես փիլիսոփա եմ»⁵⁶,

Դիոգենեսին կշտամբում էին, թե, լինելով անուս, համարձակվում է զբաղվել փիլիսոփայութեամբ: «Ես զբաղվում եմ էլ ավելի մեծ հիմքով», — պատասխանել էր նա: Հեգեսիասը⁵⁷ նրան խնդրեց իր համար կարդալ մի ինչ-որ գիրք: «Դու ինձ ծիծաղեցնում ես, — պատասխանեց Դիոգենեսը: — Ախր դու իսկական թուզը գերադասում ես նկարածից. ինչո՞ւ եմ քեզ ավելի շատ գուր գալիս ոչ թե իրական գործերը, այլ դրանց մատին պատմութիւնները»:

Թող մեր պատանին սովորի ոչ այնքան պատասխանել դասերը, որքան կենսագործել դրանք: Թող նա դրանք կրկնի իր գործողութիւններում: Եվ այնժամ կերևա, թե արդյոք նրա ձեռնարկումների հիմքում ողջամտութիւն է ընկած. նա իր վարքում ցուցաբերում է արդարամտութիւն ու բարութիւն, խոսքում՝ խելք ու նրբագեղութիւն, հիվանդութիւններում՝ տոկունութիւն, զվարճութիւններում՝ համեստութիւն, վայելքներում՝ շափավորութիւն, ուտելիս և խմելիս՝ անքմահաճութիւն (լինի դա միս կամ ձուկ, գինի կամ ջուր), կարողանում է կարգ ու կանոն պահպանել իր տնային գործերում.

Qui disciplinam suam, non ostentationem scientiae, sed legem vitae putet, quique obtemperet ipse sibi, et decretis pareat**.

Մեր մտածելակերպի իսկական հայելին մեր կյանքն է:

Այն մարդուն, որը հարցրեց, թե ինչու լակեղեմոնացիները գրավոր չեն շարադրում քաջութեան վերաբերյալ իրենց հրահանգները և չեն տալիս երիտասարդութեանը կարդալու, Զեքսիդամոսը պատասխանեց:

* Ծիշտ ապրելու այդ ամենաբարձր գիտութիւնը նրանք յուրացրել են ավելի շատ կյանքից, քան գրքերից⁵⁵ (լատ.):

** Հարկ է, որ նա իր գիտութիւնը դիտի ոչ թե որպէս պարծանք սեփական իր գեղեցկութեան, այլ որպէս իր կյանքի օրենքը, և որ կարողանա ենթարկվել ինքն իր հնազանդվել իր որոշումներին⁵⁸ (լատ.):

«Որովհետև ուզում են նրան ընտելացնել գործերի, այլ ոչ թե խոսքերի»⁵⁹: Համեմատեցեք նրանց տասնհինգ կամ տասնվեցամյա պատանուն և մեր լատինագետ աշակերտներից մեկին, որը նույնքան ժամանակ է ծախսել միայն կարգին խոսել սովորելու համար: Բարձրախավ հասարկությունը շափազանց շաղակրատ է, ես դեռ չեմ հանգիպել մեկին, որ խոսի ոչ թե ավելի շատ, այլ ավելի քիչ, քան պետք է, համենայն դեպս, մեր կյանքի կեսը ծախսվում է խոսակցությունների վրա: Չորս կամ հինգ տարի մեզ սովորեցնում են ճիշտ հասկանալ բառերը և դրանցով նախադասություններ կազմել, նույնքան ժամանակ՝ անել չորս կամ նույնիսկ հինգ մասից բաղկացած ոչ երկար դատողություններ, միավորելով նախադասությունները, նույնքան էլ, եթե ոչ ավելի՝ կարողանալ հմտորեն գուգակցել ու միահյուսել այլ դատողությունները: Թողնենք այդ զբաղմունքը նրանց, ովքեր այն դարձրել են իրենց արհեստը:

Մի անգամ Օուլեան մեկնելիս, ես Կլերիի մոտ դաշտում պատահեցի դպրոցի երկու դասատուի, որոնք մեկը մյուսից մոտ հիսուն քայլ հեռու ընկած գնում էին Բորդո: Ավելի հեռվում տեսա զինվորների մի ջոկատ՝ սպայի գլխավորությամբ, որը ներկայումս հանգուցյալ կոմս գը Լարոշֆուկոն էր: Ինձ ուղեկցող անձանցից մեկն առաջին ուսուցչին հարցրեց, թե ով է այն ազնվականը: Նա, շնկատելով փոքր-ինչ հեռվից քայլող զինվորներին և մտածելով, թե իր հետ խոսում են իր ընկերոջ մասին, ծիծաղելի պատասխանեց. «Նա ամենևին էլ ազնվական չէ, քերական է, իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես տրամաբան եմ»: Սակայն քանի որ մենք աշխատում ենք դաստիարակել ոչ թե տրամաբանի կամ քերականի, այլ ազնվականի, թողնենք նրանց տնօրինելու իրենց ժամանակն այնպես անհեթեթորեն, ինչպես իրենք կուզեն, իսկ մեզ ուրիշ գործեր են սպասում: Եվ այսպես, միայն թե մեր սանը հարկ եղածին պես սովորի գործերի, իսկ խոսքերն ինքնուստինքյան կզան, իսկ եթե շուգենան գալ, նա ուժով կբերի: Ես լսել եմ, թե ինչպես ոմանք հավատացնում են իբր իրենց գլուխը լի է ամեն տեսակ հիանալի մտքերով, բայց չեն կարողանում արտահայտել դրանք. իբր, պերճախոսության բացակայության պատճառով: Բայց դրանք սին պատրվակներ են: Իմ կարծիքով, բանն այսպես է: Այդ մարդկանց գլուխներում պատվում են ինչ-որ տձև կերպարներ և մտքերի պատառիկներ, որոնք նրանք չեն կարողանում կարգի բերել ու ըմբռնել, հետևաբար նաև, հաղորդել ուրիշներին. նրանք տակավին չեն սովորել հասկանալ իրենք իրենց: Ու թեև ինչ-որ բան են թոթովում, կարծես մի կուռ միտք պիտի ծնվի, դուք պարզ տեսնում եք, որ դա ավելի շուտ նման է բեղմնավորման, քան երկունքի, և որ նրանք միայն հեռվից հազիվ մոտենում են առջևում թույլ

առկայծող մտքին: Ես գտնում եմ (և այստեղ կարող եմ վկայել մոկ-
րատեսին), որ նա, ով ինչ-որ բանի մասին կազմել է կենդանի ու պարզ
պատկերացում, կկարողանա այն հաղորդել ուղածդ, թեկուզ խառնա-
փնթոր չեզվով, իսկ եթե համր է՝ դիմաշարժությամբ.

Verbaque praevisam rem non invita sequentur*.

Ինչպես ասել է Սենեկան (թեև արձակ, բայց միանգամայն բանաս-
տեղծորեն).

cum res animum occupavere verba ambulant**.

Կամ, ինչպես ասել է մի ուրիշ հին հեղինակ. Ipsae res verba rapiunt***.
Հոգ չէ, եթե իմ սանը երբեք չի լսել գործիական հոլովի, ստորագասա-
կան եղանակի և գոյականի մասին և առհասարակ քերականություն գի-
տե ոչ ավելի, քան նրա սպասավորը կամ փողոցում ծովատառեխ վա-
ճառող կինը: Եվ այդ նույն սպասավորն ու այդ կինը, եթե թույլ տաս,
անվերջ կխոսեն և իրենց մայրենիի կանոնները կխախտեն ոչ ավելի,
քան գիտությունների ամենաառաջնակարգ մագիստրոսը Ֆրանսիայում:
Թող որ մեր աշակերտը չգիտե ճարտասանությունը, թող որ չի կարո-
ղանում նախաբանում արժանանալ դյուրահավատ ընթերցողի բարեհա-
ճությունը, սակայն նրան պետք էլ չէ իմանալ այդ ամենը: Ախր, ան-
կեղծ ասած, այդ բոլոր ճոխ նախշերը հեշտությամբ խամրում են այն
լույսի ներքո, որ ճառագում է պարզ ու անպաճույճ ճշմարտությունը: Այդ
ճոռոմ դարձվածքները կարող են հրապուրել ավելի հիմնավոր ու կոշտ
մի բան ճաշակելու անընդունակ տգետներին միայն, ինչպես դա հստա-
կորեն ցույց է տալիս Ապրոսը Տակիտոսի մոտ⁶³, Սամոսցիների դեսպան-
ները ներկայացան Սպարտայի թագավոր Կլեոմենեսին, նախապատրաս-
տելով մի հիանալի ու երկար ճառ, որով ուզում էին նրան հակել պա-
տերազմի ընդդեմ բռնապետ Պոլիկրատեսի: Նրանց արտահայտվելու
հնարավորություն տալով, Կլեոմենեսը պատասխանեց. «Ինչ վերաբե-
րում է ձեր ելույթի նախասկզբին ու ներածականին, ես դրանք մոռացա,
ճիշտ այնպես, ինչպես և միջնամասը, իսկ ինչ վերաբերում է եզրա-
փակիչ մասին, ապա ես համաձայն չեմ»: Ահա, իմ կարծիքով, մի հիա-
նալի պատասխան, որն այդ շատախոսներին դրեց հիմար դրություն մեզ:

* Երբ հարցի էությունը նախապես կշռադատված է, բառերը զալիս են ինքնարբե-
րար⁶⁰ (լատ.):

** Երբ հարցի էությունը լցնում է հոգիդ, բառերն ուղեկցում են նրան⁶¹ (լատ.):

*** Բուն նյութը բառեր է հուշում⁶² (լատ.):

Իսկ ի՞նչ կասեք հետևյալ օրինակի մասին: Աթենացիները պետք է ընտրություն կատարեին երկու շինարարների միջև, որոնք իրենց ծառայություններն էին առաջարկում ինչ-որ խոշոր շենք կառուցելու համար: Մեկը, որն ավելի խորամանկ էր, հանդես եկավ նախապես կշռադատված հիանալի մի ճառով, թե ինչպիսին պիտի լինի այդ կառույցը, և ժողովրդին գրեթե հակեց իր կողմը: Իսկ մյուսը սահմանափակվեց հետևյալ բառերով. «Այրեր Աթենքի, ես կանեմ այն, ինչ նա ասաց»:

Շատերը հիանում էին Ցիցերոնի պերճախոսությամբ, երբ նա ծաղկման շրջանում էր, բայց Կատոնը միայն՝ ծիծաղում էր նրա վրա. «Մենք շատ զվարճալի կոնսուլ ունենք» — ասում էր նա: Խոսքի վերջում թե սկզբում, օգտակար ասույթը կամ դիպուկ խոսքը միշտ տեղին են: Եվ եթե այն չի սազում ոչ իրենից առաջ եղած, ոչ իրենից հետո եկող խոսքին, այնուամենայնիվ այն լավ է ինքնին: Ես այն մարդկանցից չեմ, որոնք գտնում են, թե եթե բանաստեղծության շափն անթերի է, ուրեմն այն անթերի է ամբողջովին, իմ կարծիքով, հոգ չէ, եթե բանաստեղծն ինչ-որ տեղ կարճ վանկի փոխարեն դնում է երկար վանկ, միայն թե բանաստեղծությունը հնչի հաճելի, միայն թե այն ունենա խոր իմաստ ու բովանդակություն՝ և ես կասեմ, որ մեր առջև լավ բանաստեղծ է, թեև վատ ոտանավոր գրող.

Emunctae naris, durus componere versus*.

Նրա բանաստեղծությունից հանեցեք երկար ու կարճ վանկերի հերթագայությունը, ասում էր Հորացիոսը, հանեցեք շափերը, դրանից այն

Tempora certa modosque, et quod prius ordine verbum, est,
 Posterium facias, praeponeas ultima primis,
 Invenias etiam disiecti membra poetae**.

չի դառնա ավելի վատը, նույնիսկ առանձին մասերը կլինեն սքանչելի: Ահա թե ինչ պատասխանեց Մենանդրոսը⁶⁶, երբ իրեն կշտամբում էին, որ դեռևս ձեռնամուխ չի եղել խոստացած կատակերգությունը գրելուն, թեև այն ավարտելու ժամկետն արդեն անցնում էր. «Այն լիովին հորինված ու պատրաստ է, մնում է միայն շարադրել շափածո»: Մտքում մշակելով կատակերգության պլանն ու դասավորելով ամեն ինչ, նա մնա-

* Կինելով նրբաճաշակ մարդ, նա հորինում էր վատ ոտանավորներ⁶⁴ (լատ.):

** Շփոթիր երկար ու կարճ վանկերը, խախտիր սիմմը, փոխիր բառերի դասավորությունը՝ առաջին բառը դիր վերջինի տեղը և վերջինն՝ առաջինի... դու կգտնես նույնիսկ բզկտված բանաստեղծի մնացորդը⁶⁵ (լատ.):

ցածր համարում էր դատարկ բան: Այն ժամանակվանից, երբ Ռոնսարն ու Դյու Բելլեն ստեղծեցին մեր Ֆրանսիական պոեզիայի փառքը, չկան այլևս բանաթուխներ (որքան էլ անտաղանդ լինեն) որ չփքվին բառերով, շարեն վանկեր, ընդօրինակելով նրանց. Plus sonat quam valet*. Մենք դեռ երբեք չենք ունեցել մայրենի լեզվով գրող այսքան բանաստեղծներ: Սակայն թեև նրանց համար հեշտ է յուրացնել հիշյալ երկու բանաստեղծների ուրիշը, այնուամենայնիվ նրանք չեն հասել այնտեղ, որ ընդօրինակեն առաջինի ճոխ նկարագրություններին ու երկրորդի քնքուշ երազներին:

Սակայն ինչպե՞ս պիտի վարվի մեր սանը, եթե սկսեն նրան ձանձրացնել այնպիսի սոփեստական նրբություններով, ինչպիսին այս հետևաբանությունն է. խոզապուխտը ծարավեցնում է, իսկ ըմպելիքը հագեցնում է ծարավը, կնշտնակի, խոզապուխտը ծարավ է հագեցնում: Թող նա ծիծաղի սրա վրա: Շատ ավելի խելամիտ է ծիծաղել նման հիմարությունների վրա, քան քննարկել դրանք: Թող նա Արիստիպոսից փոխառի հետևյալ սրամիտ դիտողությունը. «Ինչո՞ւ պարզաբանեմ այս խճողամտությունը, եթե, լինելով նույնիսկ խճճված, այն բավական շփոթեցնում է ինձ»: Մեկը, դիալեկտիկական խորամանկություններով կատարելապես ղինված, որոշեց հանդես գալ ընդդեմ Կլեանթեսի: Քրիստիպոսն ասաց. «Այդ հնարքներով զվարճացրու երեխաներին և նման բարբառանքով մի շեղիր շափահաս լուրջ մտքերը»:

Եթե այդ սոփեստական անհեթեթությունները, այդ contorta et acuta sophismata** ի վիճակի են աշակերտին ներշնչել կեղծ գաղափարներ, դա իսկապես վտանգավոր է, բայց եթե դրանք նրա վրա ոչ մի ազդեցություն չեն գործում և նրանում չեն հարուցում ոչինչ, բացի ծիծաղից, ես չեմ տեսնում դրանցից խուսափելու ոչ մի հիմք: Կան հիմարներ, որոնք պատրաստ են ճանապարհից շեղվել և մի սրամիտ բառի հետևից ընկած՝ քառորդ լյո շրջանցում կատարել. aut qui non verba rebus aptant, sed res extrinsecus arcassunt, quibus verba convenient***.

Իսկ ահա թե ինչ ենք տեսնում մի ուրիշ գրողի մոտ. sunt qui alicuius verbi decore placentis vocentur ad id quod non proposuerant scribere****.

* Ավելի շատ գնդոց, քան իմաստ⁶⁷ (լատ.):

** Խճճված ու հնարամիտ սոփեստությունները⁶⁸ (լատ.):

*** ... կամ այնպիսիք, որոնք ոչ թե բառերն են համապատասխանեցնում առարկային, այլ փնտրում են առարկաներ, որոնք կազմեն այդ բառերին⁶⁹ (լատ.):

**** Լինում են նաև մարդիկ, որոնք, հրապուրվելով մի սիրված բառով, դիմում են այն բանին, ինչի մասին մաաղիր չէին գրել⁷⁰ (լատ.):

Ես ավելի մեծ հաճույքով կփոխեմ լավ ասույթը, որ այն մտցնեմ իմ սեփական գրոտվածքի մեջ, քան կկտրեմ մտքիս թելը, որ նրա համար համարապատասխան տեղ գտնեմ: Իմ կարծիքով, բառերը պետք է ենթարկվեն ու հետևեն մտքերին, այլ ոչ թե հակառակը, և այնտեղ, ուր անկարող է ֆրանսերենը, թող նրան փոխարինի գասկոներենը: Ես ուզում եմ, որ առարկաները գերակշռեն, իրենցով լցնեն ունկնդրի երեւակայությունը, նրանում չթողնելով բառերի մասին ոչ մի հիշողություն: Իմ սիրած խոսքը պարզ, անպաճույճ խոսքն է, ո՞րք նույնն է ինչպես թղթի վրա այնպես էլ շուրթերին, խոսք, որը հյութեղ է ու սուր, հակիրճ ու սեղմ, ոչ այնքան նուրբ ու կոկ, որքան հզոր ու խիստ:

Haec demum sapiet dictio, quae feriet*.

ավելի շուտ դժվար ըմբռնելի է, քան ձանձրալի, զերծ է ամեն տեսակ վերամբարձությունից, անբռնազրոս է, անհամաչափ, համարձակ, նրա յուրաքանչյուր մասը պետք է կատարի իր գործը, այն չպետք է լինի ոչ մանրախնդիր մարդու, ոչ վանականի, ոչ դատամտլի խոսք, այլ, ավելի շուտ, զինվորի, ինչպես Սվետոնիոսն անվանում է Կեսարի խոսքը⁷², թեև, անկեղծ ասած, ինձ այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու:

Ժամանակին ես հաճույքով ընդօրինակում էի այն անփութությունը, որով ինչպես տեսնում ենք, հագնվում է մեր երիտասարդությունը. կապերից կախ ընկած թիկնոց, ուսին գլխանոց, մի կերպ ոտքերին քաշած գուլպաներ՝ այս ամենը կոչված է հպարտ արհամարհանք արտահայտելու այդ օտարերկրյա զգեստների, ինչպես նաև քամահրանք՝ ամեն տեսակ շուքի նկատմամբ: Սակայն ես գտնում եմ, որ նույն բանն ավելի տեղում կլինեն մեր խոսքի վերաբերյալ: Ամեն տեսակ նազուտուղը, հատկապես մեր ֆրանսիական աշխուժության ու անբռնադրոսության պայմաններում, բնավ սաղական չէ պալատականին, իսկ ինքնակալական պետությունում ուզածդ ազնվական պետք է իրեն պահի պալատականի պես: Ուստի, իմ կարծիքով, մենք ճիշտ ենք վարվում, թեթևակիորեն ընդգծելով մեր միամտությունն ու անփութությունը:

Ես ատում եմ հանգույցներով ու վրակարերով նախշված գործվածքը, այնպես, ինչպես գեղեցիկ դեմքը չպետք է լինի այնպիսին, որ մեկ-մեկ երևան նրա բոլոր ոսկորներն ու երակները: Quae veritati operam dat oratio, incomposita sit et simplex**.

* Ախր վերջ ի վերջո, դուր է գալիս լոկ այն խոսքը, որը ցնցում է⁷¹ (լատ.):

** Ճշմարիտ խոսքը պետք է լինի պարզ ու անպաճույճ⁷³ (լատ.):

Quis accurate loquitur, nisi qui vult putide loqui*.

Պերճախոսությունը, շեղելով մեր ուշադրությունն իր վրա, վնաս է հասցնում իրերի բուն էությունը:

Ոչ ընդունված և արտասովոր ձևք ունեցող հագուստով մշուսներից տարբերվելու ցանկությունը խոսում է հոգու ճղճիմության մասին. նույնն է և լեզվի հարցում. նոր արտահայտությունների ու քիչ հայտնի բառերի լարված որոնումներն արդյունք են մանրախնդիրների երեխայական սնափառության: Ինչո՞ւ ես չեմ կարող խոսել այնպես, ինչպես խոսում են Փարիզի շուկայում: Արիստոֆան Քերականը⁷⁵, ոչինչ դրանում չհասկանալով, կշտամբում էր էպիկուրին պարզ խոսելու և այն բանի համար, որ նա իբրև հոնտոր իր առջև նպատակ էր դնում խոսել բացառապես հստակ լեզվով: Մատչելիության պատճառով ուրիշի խոսքին ընդօրինակելը մի բան է, որով մշտապես զբաղվում է մի ողջ ժողովուրդ, սակայն մտածողությանն ու երևակայությանն ընդօրինակելը այնքան էլ դյուրին չէ: Ընթերցողների մեծ մասը, տեսնելով, որ հագուստը նույնն է, խորապես մոլորվում է, կարծելով, թե դրա տակ թաքնված են միատեսակ մարմիններ:

Ուժն ու շլեթը փոխառել հնարավոր չէ, փոխառել կարելի է միայն հանդերձն ու թիկնոցը: Ինձ այցելողների մեծ մասը խոսում է այնպես, ինչպես գրված են այս «Փորձերը», բայց ես, ճիշտն ասած չգիտեմ. նրանք մտածում են այդպես, թե այլ կերպ:

Աթենացիները, ասում է Պլատոնը, հոգ են տանում առավելապես իրենց խոսքի հարստության ու նրբագեղության, լակեղեմոնացիները՝ համառոտության մասին, իսկ Կրետեի բնակիչներն ավելի շատ մտածում են մտքերի առատության, քան բուն լեզվի մասին. հենց նրանք են բոլորից ճիշտ վարվում⁷⁶: Զենոնն ասում էր, թե ինքն ուներ երկու տեսակի աշակերտներ. մի մասը, ինչպես ինքն է անվանում, φιλολόγοι էին, որոնք ծարավի էին իմանալ բուն իրերը, և սրանք նրա սիրելիներն էին, մյուսները՝ λογοφίλοι, որոնք հոգ էին տանում միայն լեզվի մասին⁷⁷: Սրանով ամենևին չի ժխտվում, որ գեղեցիկ խոսելու կարողությունը հիանալի է և շատ օգտակար, բայց և այնպես դա բոլորովին էլ այնպիսի լավ բան չէ, ինչպես համարում են, և ես ափսոսում եմ, որ մեր ամբողջ կյանքը լի է՝ դրա ձգտումով: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ամենից առաջ կուզեի հարկ եղածին պես իմանալ իմ մայրենին, իսկ ապա հարևան այն ժողովուրդների լեզուն, որոնց հետ ամենից հաճախ եմ շփվում:

* Ո՞վ է հղկում իր բառերը, եթե ոչ նա, ով խնդիր է դնում խոսել սեթևեթով⁷⁸ (լատ.):

Հունարենին և լատիներենին տիրապետելն, անկասկած, սքանչելի և կարևոր բան է, բայց դա ձեռք է բերվում շափաղանց թանկ գնով: Ես այստեղ կպատմեմ այդ գիտելիքները սովորականից շատ ավելի էժան ձեռք բերելու այն եղանակի մասին, որն անձամբ ինձ վրա է փորձվել: Այն կարող է կիրառել ամեն ոք, ով կամենա:

Հանգուցյալ հայրս, ուսյալ և բանիմաց մարդկանցից հանգամանորեն տեղեկանալով, թե ինչպես կարելի է լավագույնս ուսումնասիրել հին լեզուները, նրանց կողմից նախազգուշացվել էր սովորաբար այստեղ առաջացող խոչընդոտների մասին. նրան ասել էին, որ միակ պատճառն այն բանի, թե ինչու մենք ի վիճակի չենք հասնել հին հույների և հռոմեացիների մեծությանն ու իմաստնությանը, նրանց լեզուների ուսումնասիրության երկարատևությունն է, մինչդեռ իրենցից դա ոչ մի ճիգ չէր պահանջում: Սակայն, ես չեմ կարծում, թե դա իսկապես միակ պատճառն էր: Այսպես թե այնպես հայրս գտել էր ելքը՝ հենց ստնտուիս ձեռքից, նախքան իմ առաջին թոթովանքը, ինձ հանձնել էր մի գերմանացու խնամքին⁷⁸, որը շատ տարիներ անց մահացավ Ֆրանսիայում, երբ հայտնի բժիշկ էր: Իմ ուսուցիչը բոլորովին չգիտեր մեր լեզուն, բայց հիանալի տիրապետում էր լատիներենին: Ժամանելով հորս հրավերով, որը նրան հրաշալի պայմաններ էր առաջարկել բացառապես հանուն իմ ուսուցման, նա մշտապես լինում էր իմ կողքին: Նրա աշխատանքը թեթևացնելու համար, սվեյ էին երկու ոչ իր նման ուսյալ օգնական, որոնք կարգվել էին իբրև դայակ-սպասավորներ: Նրանք բոլորն ինձ հետ խոսում էին միայն լատիներեն: Ինչ վերաբերում է մնացածներին, ապա նրանք պահպանում էին մի անխախտ կանոն, համաձայն որի ոչ հայրս, ոչ մայրս, ոչ ծառան կամ աղա՛նինն ինձ չէին դիմում այլ կերպ, քան լատիներենով, որը նրանցից յուրաքանչյուրը յուրացրել էր ինձ հետ մի կերպ հաղորդակցվելու համար: Ապշեցուցիչ է սակայն, թե նրանք ինչքան շատ բանի էին հասել դրանում: Հայրս ու մայրս այնքան էին լատիներենը սովորել, որ լավ հասկանում էին, իսկ անհրաժեշտության դեպքում կարողանում էին բացատրվել, նույնը կարելի է ասել նաև այն ծառաների մասին, որոնք ավելի շատ էին շփվում ինձ հետ: Կարճ ասած, մենք այնպես լատինացանք, որ մեք լատիներենը հասավ նույնիսկ շրջակա գյուղերը, ուր հաճախակի գործածելուց արևատավորված, մինչև օրս էլ պահպանվում են որոշ արհեստների և դրանց գործիքների լատինական անվանումները: Ինչ վերաբերում է ինձ, ապա նույնիսկ յոթ տարեկանում ես ֆրանսերենը կամ ինձ շրջապատող սլոնիկոսյան խոսվածքը հասկանում էի այնքան, որքան, ասենք, արաբերեն: Եվ առանց ամեն տեսակ հնարքների, առանց գրքերի, առանց քե-

րականության ու որևէ կանոնի, առանց ճիպոտի ու արցունքների ես սովորեցի այն անաղարտ լատիներենը, որին տիրապետում էր իմ ուսուցիչը, քանզի ես շգիտեի ուրիշ ոչինչ, որ փշացնեի ու աղավաղեի այն: Երբ ստուգելու համար ինձ առաջարկվում էր լատիներեն գրավոր թարգմանություն, ապա հանձնարարվող տեքստը լինում էր ոչ թե ֆրանսերեն, ինչպես գպրոցներում, այլ աղավաղված լատիներեն, որը ես պիտք է դարձնեի մաքուր լատիներեն: Եվ Նիկոլա Գրուշին, որը գրել է «De comitiis Romanorum -ը», Գիլիոմ Գերանտը, որ կազմել է Արխատոտելի մեկնաբանությունները, շոտլանդացի մեծ բանաստեղծ Զորջ Բյուքենենը, Մարկ Անտուան Մյուրեն⁷⁹, որին և Ֆրանսիայում, և Իտալիայում համարում են մեր ժամանակի լավագույն հռետորը, նույնպես լինելով իմ ուսուցիչները, բազմիցս ասել են, թե երեխա ժամանակ ես այնքան հեշտությամբ ու ազատ էի խոսում լատիներեն, որ իրենք վախենում էին մոտենալ ինձ: Բյուքենենը, որին ես տեսել եմ ավելի ուշ, հանգուցյալ մարշալ դը Բրիսակի շքախմբում, ինձ հայտնեց, թե մտադրվելով գրել երեխաների դաստիարակության մասին, իմ դաստիարակությունը վերցրել է որպես օրինակ, այն ժամանակ նրա խնամքի տակ էր երիտասարդ կոմս դը Բրիսակը, որը հետագայում ապացուցեց իր խիզախությունն ու քաջությունը:

Ինչ վերաբերում է հունարենին, որը համարյա բոլորովին շգիտեմ, ապա հայրս մտադիր էր այդ լեզուն ինձ սովորեցնել, օգտագործելով միանգամայն նոր եղանակ՝ տարբեր տեսակի զվարճություններ ու վարժություններ: Մենք հոլովումներ էինք փոխանակում ինչպես այն պատանիները, որոնք որոշակի խաղի, օրինակ, տամայի օգնությամբ ուսումնասիրում են թվաբանությունն ու երկրաչափությունը: Քանզի մյուս բաների հետ միասին, հորս խորհուրդ էին տվել, որ իմ մեջ արթնացնի ձրգտում դեպի գիտությունն ու պարտքի կատարումը, շքանանալով իմ կամքին և հենվելով բացառապես իմ սեփական ցանկության վրա, Առհասարակ հորս խորհուրդ էին տալիս իմ հոգին դաստիարակել մեղմությամբ, առանց խստության ու հարկադրանքի, տալով նրան լիակատար ազատություն: Եվ դա իրագործվում էր այնպես անշեղորեն, որ, ուշադրության առնելով ոմանց կարծիքը, թե իբր երեխայի նուրբ ուղեղի համար վնասակար է, երբ նրան հանկարծակի արթնացնում են առավոտները, զոռով և միանգամից հանելով քնից, որը նրանց մոտ շատ ավելի խորն է, քան մեզ՝ մեծերիս մոտ, հայրս կարգադրել էր, որ ինձ արթնացնեին երաժշտական գործիքի հնչյուններով և որ այդ ժամանակ իմ սպասավորներից մեկն անպայման կողքիս լիներ:

Այս օրինակը բավական է, դատելու համար մնացած ամեն ինչի

մասին, ինչպես նաև պատշաճ կերպով պատկերացնելու այն բացառիկ հոր հոգատարությունն ու սերը, որին բնավ չի կարելի մեղադրել. թե չի, քաղել այնպիսի պտուղներ, ինչպիսիք կարող էր ակնկալել այդքան խնամքով մշակելուց հետո: Դրա պատճառը երկու հանգամանք էին. նախ՝ անպտուղ և անշնորհակալ հողը, քանզի, թեպետ ես աչքի էի ընկնում հիանալի առողջությամբ և զիջող, մեղմ բնավորությամբ, այնուամենայնիվ, դրանով հանդերձ, այնքան դանդաղաշարժ էի, ալարկոտ ու քնկոտ, որ ինձ չէին կարողանում պարապ լինակից հանել նույնիսկ մի քիչ խաղալ ստիպելու համար: Այն, ինչ ես տեսնում էի, տեսնում էի հարկ եղածին պես, և այդ ծանրաշարժ արտաքինի հետևում անձնատուր էի լինում համարձակ երազների ու տարիքիս շազող հասուն մաքերի օնիքս ճկուն չէր. չէր գնում ավելի հեռուն, քան հասցրել էին, ես յուրացնում էի ոչ միանգամից, քիչ էի հնարամիտ, և, ի լրումն այդ ամենի, գրեթե կատարելապես (դժվար է նույնիսկ հավատալ) զուրկ էի հիշողությունից: Ուստի շկա զարմանալի ոչինչ, որ հորս այդպես էլ չհաջողվեց մի արժեքավոր բան կորզել ինձանից: Երկրորդ՝ նման այն մարդկանց, որոնք համակված են առողջանալու կրքոտ ցանկությունք և ականջալուր են ամեն տեսակ խորհուրդների, այդ բարի անձնավորությունը, սաստիկ վախենալով անհաջողություն կրել այն բանում, ինչը սրտին շատ մոտ էր ընդունում, ի վերջո, զիջեց ընդհանուր կարծիքին, որը միշտ հետ է մնում առջևից ընթացող մարդկանցից, ինչպես երամագլխին հետևող կռունկները, և, իր շրջապատում այլևս շտենելով նրանց, ուղբեր տվել էին Խալիլայից իր բերած առաջին ցուցումները, հնազանդվեց սովորությին: Եվ այսպես, երբ ես մոտ վեց տարեկան էի, նա ինձ ուղարկեց գիենյան դպրոցը, որն այն ժամանակ ծաղկման մեջ էր ու համարվում էր լավագույնը Ֆրանսիայում: Եվ հագիվ թե կարելի լիներ էլի ինչ-որ բան ավելացնել այն հոգսերին, որոնցով նա այնտեղ ինձ ծանոթեցնեց, ընտրելով ինձ հետ առանձին պարապող առավել արժանավոր ուսուցիչների և խնդրելով ինձ համար վերապահել մի շարք ուրիշ, դպրոցներում չնախատեսված արտոնություններ: Բայց և այնպես դա դպրոց էր: Այստեղ շուտով իմ լատիներենն սկսեց փշանալ, ու, շօգտագործելով խոսակցության մեջ, ես արագ կերպով մոռացա այն: Եվ ուսուցման նոր եղանակի շնորհիվ ձեռք բերած իմ բոլոր գիտելիքները մատուցեցին ինձ լոկ այն ծառայությունը, որ թույլ տվին անմիջապես փոխադրվել ավագ դասարաններ: Սակայն, տասներեք տարեկանում դուրս գալով դպրոցից և ավարտելով գիտությունների դասընթացը (ինչպես դա կոչվում է նրանց լեզվով), ես, անկեղծ ասած, այնտեղից շատացա ոչինչ, որ այժմ ինձ համար գոնե մի արժեք ունենար:

Կրթերի նկատմամբ իմ առաջին հակումները երևան են եկել շնորհիվ այն բանի, որ հաճույք եմ ստացել Սվիդիոսի «Կերպարանափոխություններում» եղած պատմություններից: Յոթ-ութ տարեկանում ես հրաժարվում էի մյուս բոլոր հաճույքներից, ըմբռնելու համար դրանց ընթերցանությունը, բացի այն, որ լատիներենն ինձ համար մայրենի լեզու էր, դա ինձ հայտնի բոլոր գրքերից ամենաթեթևն էր և իր բովանդակությամբ առավել մատչելի իմ տհաս խելքին: Քանզի ինձ դաստիարակում էին այնքան խիստ, որ այն ժամանակ նույնիսկ չէի լսել (և այժմ էլ կարգին չգիտեմ դրանց բովանդակությունը) ամեն տեսակ Լանսելոտ Լճեցիների, Ամադիսների, Հյուսն Բորդոցիների և այլ անպետք գրքույկների մասին⁸⁰, որոնցով հրապուրվում են պատանի տարիքում: Եվ ավելի անփուլթ էի ինձ հանձնարարվող մյուս դասերի նկատմամբ: Եակայն այստեղ ինձ փրկեց այն հանգամանքը, որ ունեի խելամիտ ուսուցիչ, որը կարողանում էր շատ սիրալիր կերպով աչք փակել այդ և նման ուրիշ իմ դանցանքների վրա: Շնորհիվ այդ բանի ես հափշտակությամբ հերթով կարգացի Վերգիլիոսի «էնեականը», այնուհետև Տերենտիոսին, Պլավտոսին, ի վերջո, իտալական կատակերգությունները, որոնք միշտ ինձ հրապուրում էին իրենց հետաքրքիր բովանդակությամբ: Եթե իմ ուսուցիչը ցուցաբերեր բթամիտ համառություն և բռնի ընդհատեր այդ ընթերցանությունը, ես դպրոցից կստանայի միայն սաստիկ ատելություն գրքերի նկատմամբ, ինչպես դա տեղի է ունենում մեր գրեթե բոլոր երիտասարդ ազնվականների հետ: Սակայն նա իրեն պահում էր շատ իմաստուն: Ձևացնելով, թե իրեն ոչինչ հայտնի չէ, նա ավելի էր բորբոքում գրքերի ընթերցանության իմ կիրքը, թույլ տալով վայելել դրանք միայն գաղտնի և մեղմորեն ստիպելով կատարել պարտադիր դասերը: Քանզի գլխավոր հատկանիշները, որոնք, հորս կարծիքով, պիտի ունենային նրանք, ում ինքը հանձնարարում էր իմ դաստիարակությունը, բարեհոգությունն ու մեղմ բնավորությունն էին: Իմ բնավորության մեջ նույնպես չկար ոչ մի արատ, բացի դանդաղկոտությունից և ծուլությունից: Հարկ էր վախենալ ոչ թե նրանից, որ ես կանեմ ինչ-որ վատ բան, այլ նրանից, որ չեմ անի ոչինչ: Ոչ մի բանից չէր երևում, թե ես կլինեմ շար, սակայն ամեն ինչից՝ թե կլինեմ անօգտակաբ: Կարելի էր կանխատեսել, որ ինձ հատուկ կլինի սերը դեպի անգործությունը, բայց ոչ դեպի վատը:

Ես տեսնում եմ, որ դա այդպես էլ եղել է: Ինձ ձանձրացրել են հետևյալ գանգատները. «Նա ալաբկոտ է, անտարբեր է բարեկամության ու ազգակցության, ինչպես նաև հասարակական պարավորությունների նկատմամբ, շափազանց շատ է իրենով զբաղված»: Եվ նույնիսկ նրանք,

ովքեր բուրբից քիչ են բարյացակամ իմ նկատմամբ, այնուամենայնիւմ շեն ասի. «Ի՞նչ հիմունքով է նա զավթել այս կամ այն բանը: Ի՞նչ հիմունքով չի վճարում»: Նրանք ասում են. «Ինչո՞ւ նա չի գիջում: Ինչո՞ւ չի տալիս»:

Ես ուրախ կլինեմ, եթե իսկապես ինձ ուղղվեն լոկ այդպիսի, գերպահանջկոտոթյամբ ծնված կշտամբանքներ: Սակայն ոմանք անարդարացիորեն ինձանից պահանջում են անել այն, ինչը պարտավոր չեմ անել, և ըստ որում անհամեմատ ավելի համառոտեմ, քան իրենք իրենցից պահանջում են այն, ինչը պարտավոր են անել: Դատափետելով ինձ, նրանք նախապես հրաժարվում են հատուցել իմ ամեն մի արաբքի դիմաց և շնորհապարտ լինել, որը կնշանակեր միայն արդարացիորեն պատշաճը մատուցել ինձ: Ընդ որում, խնդրում եմ նաև հաշվի առնել, որ իմ կատարած ամեն մի լավ գործ պետք է գնահատվի առավել բարձր, քան դի ինքս ուզածդ մարդուց ավելի քիչ եմ օգտվել այլոց բարեգործություններից: Որքան ավելի շատ է իմ ունեցվածքն իմը, այնքան ես ավելի ազատորեն կաբող եմ տնօրինել այն: Եվ եթե ես սիրեի գրի առնել այն ամենը, ինչ անում եմ, ինձ համար հեշտ կլինեի մերժել այդ կշտամբանքները: Իսկ այդ պարոններից ոմանց ես կկարողանայի առանց դժվարության ապացուցել, որ նրանք ջղայնացած են ոչ այնքան նբանից, թե ես անում եմ քիչ, այլ նրանից, որ իրենց համար կաբող էի անել զգալիորեն ավելի շատ:

Միևնույն ժամանակ ինքնին հոգիս բնավ զուրկ չէր ուժգին մզումներից, ինչպես նաև շրջապատի մասին հստակ ու պարզ տեսակետից, շրջապատ, որը նա բավականաչափ լավ էր հասկանում ու գնահատում միայնության մեջ, շփվելով ոչ մեկի հետ: Եվ այլ բաների թվում ես, իսկապես, կարծում եմ, թե նա ընդունակ չէր լինի խոնարհվել ուժի ու հարկադրանքի առջև:

Հարկ կա՞ արդյոք հիշատակել ևս մի ընդունակություն, որը դրսեվորում էի մանկուսթյանս օրերին: Ես նկատի ունեմ դեմքիս արտահայտությունը, ձայնիս ու մարմնիս շարժունությունն ու ճկունությունը, կատարածս դերին հարմարվելու իմ ունակությունը: Քանզի գեռ վաղ հասկում, Alter ab undecimio tum me vix ceperal annus*,

ևս կարողանում էի կատարել հերոսների դերեր Բյուրենենի, Գերանտի և Մյուրեի լատիներեն ողբերգություններում, որոնք հիանալիորեն բեմադրվում էին Գիենյան մեր դպրոցում: Մեր պետը՝ Անդրեա

* Ես այն ժամանակ նոր էի տասներկու տարեկան⁸¹ (լատ.):

դը Գուվեան⁸², ինչպես բոլոր այն բաներում, ինչ վերաբերում էր իր կատարած պարտականություններին, այնպես էլ այդ առումով, անկասկած, ամենանշանավորն էր մեր դպրոցների պետերից: Այսպես ուրեմն, այդ ներկայացումներում ինձ համարում էին առաջին դերասան: Դա մի զբաղմունք է, որը ես բնավ չէի պարսավի, եթե տարածում գտներ մեր ազնվատոհմ տների երեխաների շրջանում: Հետագայում ինձ վիճակվել է տեսնել նաև մեր արքայորդիներին, որոնք անձնատուր էին լինում դրան, ի պատիվ իրենց և հաջողութամբ նմանվելով հներից ոմանց:

Հին Հունաստանում միանգամայն պատշաճ էր համարվում, երբ ազնվատոհմ մարդն այն դարձնում էր իր արհեստը. Aristoni tragico actori rem aperit; huic et genus et fortuna honesta erant; nec ars, quia nihil tale apud Graecos pudori est, ea deformabat*.

Ես միշտ դատապարտել եմ այդ զվարճությունների դեմ ելնողների անհանդուրժողությունը, ինչպես նաև այն մարդկանց անարդարությունը, որոնք փորձված դերասաններին չեն թողնում մի փառապանծ քաղաքները, ժողովրդին զրկելով այդ հրապարակային զվարճությունից: Խելամիտ կառավարիչներն, ընդհակառակը, շատ ջանք են թափում, որ հավաքեն ու միավորեն քաղաքացիներին ինչպես մեզ վրա բարեպաշտության դրած պարտականությունների համատեղ կատարման, այնպես էլ զանազան վարժությունների ու խաղերի համար. բարեկամությունն ու միասնությունը դրանից միայն ամրապնդվում են: Եվ հետո, հնարավոր է արդյոք առաջարկել նրանց ավելի անմեղ զվարճություններ, քան այն, որ տեղի են ունենում մարդկանց և իշխանությունների ներկայությամբ: Եվ, իմ կարծիքով, ճիշտ կլիներ, եթե իշխանություններն ու թագավոր, ժամանակ առ ժամանակ իրենց հաշվին քաղաքի համայնքին հաճույք պատճառեին նման տեսարաններով, դրսևորելով իրենց բարեհաճությունը ու, կարծես, հայրական հոգատարությունը, եթե մեծաքանակ բնակչություն ունեցող քաղաքներում հատկացվեին համապատասխան տեղեր նման ներկայացումների համար, որոնք քաղաքացիներին կշեղեին վատթար ու մութ գործերից:

Իստանալով իմ խոսակցության նյութին, կրկնեմ, որ ամենազլխավորը գիտության նկատմամբ ճաշակ և սեր ներարկելն է, այլապես մենք

* Նա իր մտահղացումը հայտնեց ողբերգու դերասան Արիստոնեսին, վերջինս տոհմից էր, ընդամին հարուստ, և դերասանական արվեստը, որը հույների մոտ անթափախ համարվում, բնավ չէր ստորացնում նրան⁸³ (լատ.):

կղաստիարակենք պարզապես զըքային խորիմաստությամբ բեռնված ավանակներ: Ճիպոտի հարվածներով խրախուսելով, նրանց պահ են տալիս տարբեր գիտելիքներով լի տոպրակը, սակայն որպեսզի դրանք լինեն իսկական բարիք, բավական չէ պահել մոտները, հարկ է համակվել դրանցով:

Փյունի XXVII

ՅՆՈՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐ ԻՐԱՁԵԿՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴԱՏԵԼ, ԹԵ ԻՆՉՆ Է ՃՇՄԱՐԻՏ ԵՎ ԻՆՉԸ՝ ՍՈՒՏ

Թերևս, ոչ առանց հիմքի մենք միամտությանն ու տգիտությանը վերադրում ենք դյուրահավատության հակում և կողմնակի համոզմունքի ազդեցության տակ ընկնելու պատրաստակամություն: Չէ որ ինձ, կարծեմ, մի ժամանակ սովորեցրել են, թե հավատը մի բան է, որն, ասես, ապավորվում է մեր հոգում, իսկ եթե այդպես է, ապա որքան հոգին բարի է և որքան քիչ է ընդունակ դիմադրելու, այնքան հեշտ է նրանում ինչ-որ բան ապավորելը: Ut necesse est lancem in libra ponderibus impositis deprimi, sic animum perspicuis cedere*.

Իրոք, որքան քիչ է զբաղված և որքան սակավ տոկոսնություն ունի մեր հոգին, այնքան հեշտ է այն կքվում իրեն ուղղված առաջին համոզմունքի ծանրության տակ: Ահա թե ինչու երեխաները, հասարակ մարդիկ, կանայք ու հիվանդները հակված են, որ իրենց, այսպես ասած, կառավարեն: Սակայն, մյուս կողմից, հիմար սնապարծություն կլիներ իբրև սուտ արհամարհել ու դատապարտել այն, ինչը մեզ թվում է անհավանական, իսկ դա սովորական արատն է բոլոր այն մարդկանց, ովքեր գտնում են, թե իրենք գիտելիքներով գերազանցում են մյուսներին: Մի ժամանակ ես էլ էի տառապում դրանով, և եթե ինձ վիճակվում էր լսել տեսիլքների, ապագայի գուշակությունների, հմայության, կախարդանքի կամ էլի ինչ-որ բաների մասին, որ բացահայտորեն վեր էին իմ սովորից,

Somnia, terrores magicos, miracula, sagas,
Nocturnos lemures portentaque Thessala**.

* Ինչպես կշեռքի նժարն է բռնի ծանրության տակ իջնում, այնպես էլ մեր ոգին ենթարկվում ակնհայտ ներգործությանը¹ (լատ.):

** Երազներ, մոգերի կախարդանք, արտասովոր երևույթներ, վհուկներ, գիշերային տեսիլքներ և թեսալական հրաշքներ² (լատ.):

ինձ համակում էր կարեկցանքը այդ գառանցանքներով «հագեցած» խեղճ ժողովրդի հանդեսը: Այժմ, սակայն, ես կարծում եմ, որ նույնքան, եթե ոչ ավելի, ես պետք է խղճայի ինքս ինձ, և ոչ այն պատճառով, որ փորձրն ինձ տվել է որևէ նոր բան, ինչին ես մի ժամանակ հավատում էի (թեպետ ես հետաքրքրասիրության պակաս երբեք չեմ ունեցել), այլ նրա համար, որ այն ժամանակվանից ի վեր բանականությունս ինձ սովորեցրել է, թե նման վճռականությամբ որևէ բան իբրև սուտ ու անհնարին դատապարտելը նշանակում է իրեն վերագրել աստծո կամքի սահմաններն ու մեր մայր բնության հզորությունն իմանալու առավելությունը, ինչպես նաև այն պատճառով, որ աշխարհում չկա ավելի մեծ անխոհեմություն, քան դրանք չափել մեր ընդունակությունների և մեր իրազեկության չափանիշով: Եթե մենք դարմանալի բան կամ հրաշք ենք անվանում այն, ինչը հասու չէ մեր բանականությանը, ապա որքա՞ն այդպիսի հրաշքներ են շարունակ հառնում մեր աչքի առջև: Հիշենք, թե ինչպես խարխափելով և որքան անվստահ ենք մենք հասնում այն բաների մեծ մասի իմացությանը, ինչի հետ միշտ գործ ունենք, և մենք, անշուշտ, կհասկանանք, որ եթե նրանք դադարել են մեզ տարօրինակ թվալի, ապա դրա պատճառն ավելի շուտ սովորությունն է, քան գիտելիքը՝

iam nemo, Iessus satiate videndi,
Suspiciere in coeli dignatur lucida templa*.

Եվ որ, եթե այդ նույն բաները մեր առջև հառնեին առաջին անգամ, մենք դրանք կհամարեինք նույնքան կամ նույնիսկ ավելի անհավանական քան մեր ընկալածները որպես այդպիսիք,

si nunc primum mortalibus adsint
Ex improviso, ceu sint obiecta repente,
Nil magis his rebus poterat mirabile dici,
Aut minus ante quod auderent fore credere gentes**.

Նա, ով երբեք չի տեսել, առաջին անգամ հանդիպելով գեափ, կկարծի, թե իր առջև օվկիանոս է: Եվ ընդհանրապես, այն բաները, որ մե

* Եվ յուրաքանչյուր ոք, հոգնելով ու գերհագեցնալով հայեցողությունից, այլևս նայում փայլող երկնքին³ (լատ.):

** Եթե նրանք առաջին անգամ հանկարծ հառնեին մահկանացուների առջև, չէր լինի նրանցից ավելի ապշեցուցիչ, ինչի էլ որ հանդգնած լինեիր մարդու երևակայությանը նախքան այդ⁴ (լատ.):

հայտնի են իբրև ամենամեծ, մենք համարում ենք այն ամենի սահմանը, որ կարող էր ստեղծել բնությունը նույն ձևով,

Scilicet et fluvius, qui non est maximus, ei est
Qui non ante aliquem maiorem vidit, et ingens
Arbor homoque videtur; et omnia de genere omni
Maxima quae vidit quisque, haec ingentia fingit*.

Consuetudine oculorum assuescunt animi, neque admirantur, neque requirunt rationes earum rerum quas semper vident**.

Ոչ այնքան մեծությունն այս կամ այն իրի, որքան նրա նորությունն է մեզ մղում գտնելու նրա պատճառը:

Հարկավոր է ավելի հարգալից վերաբերվել բնության այդ հիրավի անսահման կորությունը և ավելի պարզ գիտակցել մեր սեփական տգիտությունն ու թուլությունը: Աշխարհում որքա՞ն քիչ հավանական բաներ կան, որոնք, սակայն, հաստատվել են ամենայն վստահություն վայելող մարդկանց կողմից: Ու եթե մենք ի վիճակի չենք համոզվելու այդ բաների իրական զոյություն մեջ, ապա դրանց հարցը պետք է մնա, վատագույն դեպքում, չլուծված, քանզի մերժել դրանք որպես անհնարին, կնշանակի ոչ այլ ինչ, քան հանդուգն սնապարծությունը հավաստել, թե գիտես հնարավորի սահմանները: Եթե մարդիկ բավականաչափ լավ տարբերեին անհնարին անսովորից և այն, ինչը հակասում է ընդունված կարգին ու բնության օրենքներին, նրանից, ինչը հակասում է համատարած կարծիքներին, եթե նրանք չլինեին ոչ անմտորեն դյուրահավատ, ոչ նույնքան անմտորեն հավատարմություն, այն ժամանակ կոյակ-պանվեր Զիլոնի⁷ կանոնը. «Ոչ մի բան չափից ավելի»:

Երբ մենք Ֆրուասարի մոտ կարդում ենք, որ կոմս դը Ֆուան, Բեաունում եղած ժամանակ իմացել է Ալխուրառոտի⁸ մոտ Հովհաննես Կաստիլիացի թագավորի պարտության մասին ճակատամարտի արդեն հաջորդ օրը, ինչպես նաև այդ հրաշքի բացատրությունը, ապա դրա վրա կարելի է ծիծաղել միայն, նույն բանը վերաբերում է նաև մեր տարեդրքում⁹ եղած պատմությանը Հոնորիոս պապի մասին, որն այն նույն

* Այդպես էլ գետը, չլինելով ամենամեծը, այդպիսին է նրա համար, ով չի տեսել ավելի մեծը, հսկա են թվում և ծառը, և մարդը, և առհասարակ նրա աչքում նույն ձևի առարկաներին գերազանցող սովորն ունի նրան թվում է վիթխարի⁶ (լատ.):

** Աչքերի հետ հողիներն ընտելանում են առարկաներին, ու այդ առարկաներն այլևս չեն աղչեցնում, և նրանք չեն որոնում պատճառներն այն բանի, ինչը միշտ նրանց աչքի տեսչ է⁶ (լատ.):

օրը, երբ Ֆիլիպ Օգոստոս թագավորը մահացավ Մանտում¹⁰, հրամայեց կատարել նրա թաղման հանդիսավոր արարողությունը Հռոմում, ինչպես նաև ամբողջ Իտալիայում, քանզի այդ վկաների հեղինակությունն այնքան էլ մեծ չէ, որ մենք անտրտունջ ենթարկվենք նրան: Բայց արդյո՞ք դա միշտ այդպես է: Երբ Պլուտարքոսը, բացի այլ օրինակներից, որ նա բերում է հին ժողովուրդների կյանքից, ասում է, թե, ինչպես ինքը գիտե արժանահավատ աղբյուրներից, Գոմիցիանոսի ժամանակներում ինչ-որ տեղ Գերմանիայում Անտոնիոսին հասցրած պարտության լուրը բազմօրյա ճանապարհների հեռավորությունից այդ ճակատամարտը տանուլ տալու օրը ևեթ հասել է Հռոմ և իսկույն տարածվել¹¹, երբ Կեսարը հավատացնում է, թե հաճախ լուրերը կանխում են իրադարձություններին¹², արդյո՞ք մենք կասենք, թե այդ միամիտ, ոչ մեզ նման խորաթափանց մարդիկ խաբվել են, ինչպես տգետ ամբոխը: Կա՞րդյոք մի այնպիսի խորաթափանց, ճշգրիտ ու կենդանի բան, ինչպիսին Պլինիոսի դատողություններն են, երբ նա անհրաժեշտ է համարում հաղորդել դրանք ընթերցողին, չխոսելով արդեն նրա գիտելիքների բացառիկ հարստության մասին: Էլ ինչո՞վ ենք մենք գերազանցում նրան մեկում և մյուսում: Սակայն չկա մի դպրոցական, որքան էլ նա պատանի լինի, որ չբռնի նրա սուտը և շտոշորվի բնության օրենքների մասին նրան դասախոսություն կարդալու ցանկությունից:

Երբ մենք Բուշեի¹³ մոտ կարդում ենք սուրբ Հիլարիոսի մասունքների դործած հրաշքների մասին, ապա դրա վրա կանգ չենք առնում՝ այդ գրողի նկատմամբ վստահությունն այնքան էլ մեծ չէ, որ մենք չհամարձակվենք կասկածել նրա պատմությունների ճշմարտությանը: Բայց նման բոլոր պատմությունները ժխտելը ես համարում եմ անթույլատրելի հանդգնություն: Սուրբ Օգոստինոսը՝ մեր այդ մեծագույն սուրբն ասում է, որ ինքը տեսել է, թե ինչպես Հերվասիոս և Պրոտասիոս սրբերի մասունքները, որ ցուցադրված էին Միլանում, վերադարձրել են մի կույր երեխայի տեսողությունը, թե ինչպես Կարթագենում նոր մկրտված մի կին խաչակնքումով բուժել է մեկ ուրիշ կնոջ խոցը, թե ինչպես իր բարեկամներից մեկը՝ Հեսպերիոսը, մեր աստծո դերեզմանից վերցրած մի բուռ հողի օգնությամբ իր տանից քշել է շար ոգիներին և ինչպես այնուհետև եկեղեցի բերած այդ հողը վայրկենապես ապաքինել է մի անդամալույծի, թե ինչպես մի կին, որ մինչ այդ շատ տարիներ կույր էր, կրոնական երթի ժամանակ իր ծաղկեփունջը դիպցրել է սուրբ Ստեփանոսի տապանին, այդ ծաղկեփունջը քսել աչքերին և իսկույն սկսել է տեսնել, և շատ ուրիշ հրաշքներ, որոնք, ինչպես ինքն է ասում, տեղի են ունեցել իր ներկայությամբ: Ուրեմն ի՞նչ մեղադրանք կարող ենք ներկա-

յացնել, թե նրան, թե սուրբ եպիսկոպոսներ Ավրելիոսին ու Մաքսիմի-
 նոսին, որոնց նա վկայակոչում է որպես վկաներ: Տգիտությո՞ւն, հիմա-
 րությո՞ւն, դյուրահավատությո՞ւն: Կամ նույնիսկ շար դիտավորություն և
 խաբեությո՞ւն: Մեր ժամանակներում կգտնվի՞ արդյոք մի այնպիսի հան-
 դուգն մարդ, որ կարծի, թե ինքը կարող է համեմատվել նրանց հետ
 առաքինությամբ կամ բարեպաշտությամբ, խելքով ու գիտունությամբ:
 Qui, ut rationem nullam afferent, ipsa auctoritate me frangerent*.

Արհամարհել այն, ինչք մենք շենք կարող հասկանալ, վտանգա-
 վոր համարձակություն է, որը հղի է ամենատհաճ հետևանքներով, էլ
 չեմ ասում, որ դա անհեթեթ խելացնորություն է: Չէ որ ձեր գերիմաս-
 տուն հասկացողությամբ որոշելով իրականի ու ստի սահմանները, դուք
 ստիպված կլինեք անմիջապես հրաժարվել դրանցից, քանզի անխուսա-
 փելիորեն կհայտնաբերեք, որ հարկ է լինում հավատալ ավելի տարօրի-
 նակ բաների, քան այն, որ դուք մերժում եք: Եվ ինչպես ինձ թվում է,
 հավատի հարցերում կաթոլիկների ցուցաբերած զիջողականությունը բա-
 վական շատ է խոտվում թե մեր խիղճը, թե այն կրոնական տարածայնու-
 թյունները, որ մենք ունենք: Նրանց թվում է, թե իրենք ցուցաբերում են
 հանդուրժողականություն և իմաստնություն, երբ այս կամ այն վիճելի
 կետում զիջում են իրենց հակառակորդներին: Սակայն, այդ կետերը, որ
 նրանք ընտրել էին որպես ամենաքիչ կարևոր, որոշ իմաստով խիստ
 էական են, շխոսելով արդեն այն մասին, թե ինչպիսի մեծ առավելու-
 թյուն է տալիս հարձակվող կողմին այն, որ հակառակորդն սկսում է
 ընկրկել ու նահանջել, և որքանով է դա նպատակին հասնելու դորժում
 մղում նրան համառության: Հարկավոր է կամ լիովին ենթարկվել մեր
 եկեղեցական իշխանությունների հեղինակությանը, կամ կտրականա-
 պես մերժել այն: Մեզ չի վիճակված սահմանելու շափն այն հնազանդու-
 թյան, որ մենք պարտավոր ենք ցուցաբերել նրան: Ես դա կարող եմ ասել
 իմ սեփական փորձի հիման վրա, քանզի մի ժամանակ ինձ թույլ էին
 տալիս որոշել և իմ հայեցողությամբ ընտրել, թե հատկապես ինչով կա-
 րող եմ խախտել կաթոլիկ եկեղեցու ծեսերը, որոնցից մի քանիսն ինձ
 թվում էին կամ բոլորովին աննշան, կամ հատկապես տարօրինակ, բայց,
 խոսելով իրազեկ մարդկանց հետ, ես գտա, որ այդ ծեսերն էլ ունեն
 միանգամայն խոր ու ամուր հիմք և որ միայն թերամտությունն ու տգի-
 տությունն են մեզ դրդում դրանց վերաբերվել ավելի պակաս հարգան-
 քով, քան մնացած ամեն ինչին: Ինչու չհիշենք, թե մենք ինքնևրս որ-

* Որոնք, եթե նույնիսկ ոչ մի փաստարկ չբերեին, միևնույն է իրենց հեղինակու-
 թյամբ կջախջախեին ինձ¹⁴ (լատ.):

քա՛ն հակասութիւն ենք զգում մեր դատողութիւններում: Որքա՛ն շատ բաներ տակաւին երեկ մեղ համար անխախտ դոգմաներ էին, իսկ այսօր ընկալւում են ինչպես հեֆիաթներ: Սնափառութիւն և հետաքրքրասիրութիւն՝ ահա մեր հոգու երկու պատուհասները: Վերջինը մեզ մղում է ամենուր քթներս խոթելու, առաջինն՝ արգելում ինչ-որ բան թողնել անորոշ ու չլուծված:

Գլուխ XXVIII

ԲԱՐԵՎԱՍՏՌԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զննելով ինձ մոտ գտնվող մի գեղանկարչի ոճաձևերը, ես բռնկվեցի նրա օրինակին հետևելու ցանկութեամբ: Նա ընտրում է ամենալավ տեղը յուրաքանչյուր պատի կենտրոնում և այնտեղ գետեղում իրեն հատուկ ամբողջ վարպետութեամբ արված նկարը, իսկ շուրջը եղած ազատ տարածութիւնը լցնում է գրոտեսկներով, այսինքն՝ ֆանտաստիկ նկարներով, որոնց ամբողջ հմայքը բազմազանութեան ու արտասովորութեան մեջ է: Եվ, ճիշտն ասած, ի՞նչ է իմ գիրքը, եթե ոչ նույն գրոտեսկները, նույնպիսի տարօրինակ մարմիններ, որ ծեփված են տարբեր մասերից անկանոն, առանց որոշակի ուրվագծերի, հետևողականութեան ու համաչափութեան, դուռ պատահականորեն:

Desinit in piscem mulier formosa superne*.

Վերջինում ես հավասար եմ իմ գեղանկարչին, իսկ ինչ վերաբերում է մշտափն, նրա աշխատանքի լավագույն մասին, ես նրանից շատ եմ հետ մնում, քանզի իմ կարողութիւնն այնքան չէ, որ համարձակվեմ հզանալ սքանչելի, ինձամքով մշակված մի նկար, որ արված լինի արվեստի կանոններին համապատասխան: Իմ խելքին փշեց այն փոխառել էտյեն դը Լա Բոեսիից, և դա պատիվ կբերի սույն աշխատութիւնում եղած մնացյալ ամեն ինչին: Ես նկատի ունեմ, նրա այն դատողութիւնը, որն ինքը հորջորջել է «Կամափոր ստրկութիւն» և որն այդ մասին շիմացող մարդիկ, միանգամայն հաջող կերպով վերանվանել են «Ընդդեմ մեկի»²: Նա այն գրել է գեուես շատ ջահել ժամանակ, հանուն ազատութեան և ընդդեմ բռնապետների փորձի ոճով: Այն վաղուց ի վեր լուսավորյալ մարդկանց ձեռքին է և նրանց կողմից արժանացել է բարձր ու արդարացի դնահատականի, քան որ գրված է հիանալի և լի է հրաշալի մտքերով: Անհրաժեշտ է, սակայն, ավելացնել, որ դա բնավ այն լավագույնը չէ, որ նա

* Վերը հմայիչ կին է, ներքևը՝ ձուկ՝ (լատ.):

կարող էր ստեղծել, և եթե ավելի հասուն տարիքում, երբ ես նրան ճանաչում էի, նա ունենար ինձ նման մտադրություն՝ դրել մաքին եկած ամեն ինչ, մենք կունենայինք բավական բազմաթիվ հազվադյուտ երկեր, որոնք կկարողանային նմանվել հենրի նշանավոր ստեղծագործություններին, քանզի ես չգիտեմ մեկը, որ կարողանար այդ ասպարեզում ունեցած բնատուր ձիրքերով համեմատվել նրա հետ: Սակայն մեզ հասել է, այն էլ պատահաբար, նրա լոկ այդ գատողությունը, որը, կարծեմ, նա գրելուց հետո այլևս երբեք չի տեսել, և էլի որոշ նշումներ հունվարյան հրովարտակի մասին³ (այդ նշումները, գոցե, կհրապարակվեն: մեկ այլ տեղում), այն հրովարտակի, որն այդքան հայտնի է շնորհիվ մեր քաղաքացիական պատերազմների: Ահա՛ և ամբողջը (եթե չհաշվենք նրա ստեղծագործությունների այն գրքույկը, որ ես հրատարակել եմ⁴), որ ինձ հաջողվել է գտնել նրանից մնացած թղթերում այն բանից հետո, երբ նա արդեն մահվան մահճում, ի նշան սիրո և համակրանքի, կտակով ինձ դարձրեց թե իր գրադարանի, թե իր ձեռագրերի ժառանգորդը: Ես չափազանց պարտական եմ այդ ստեղծագործությանը, առավել ևս, որ այն առիթ ծառայեց մեր միջև ծանոթության հաստատման: Այն ինձ ցույց էին տվել մեր հանդիպելուց շատ առաջ, և, ծանոթացնելով ինձ նրա անվանը, այն նպաստեց մեր միջև բարեկամության ստեղծմանը, բարեկամություն, որ տաժում էինք միմյանց նկատմամբ, քանի դեռ աստծուն էր հաճո, այնպիսի խոր ու կատարյալ բարեկամության, որ գրքերում անգամ նմանը չեք գտնի, էլ չեմ ասում, որ մեր մամանակակիցների միջև հնարավոր չէ համանման բանի հանդիպել: Նման բարեկամության ստեղծման համար պահանջվում է այնպիսի բազմաթիվ հանգամանքների ղուգադիպություն, որ եթե ճակատագիրը շնորհում է երեք հարյուրամյակը մի անգամ, դա էլ է շատ:

Թվում է, չկա մի բան, որին բնությունը մեզ մղի ավելի շատ, քան բարեկամական շփման: Արիստոտելը նշում է, որ լավ օրենսդիրներն ավելի շատ հոգում են բարեկամության, քան արդարության մասին⁵: Չէ որ նրա կատարելության բարձրագույն աստիճանը հենց արդարությունն է: Քանզի, ընդհանուր առմամբ, ամեն մի բարեկամություն, որը ծնում են ու տաժում վայելքը կամ շահը, մասնավոր կամ հասարակական կարիքները, այնքան ավելի քիչ է հիանալի ու ազնիվ և այնքան ավելի քիչ է իսկական բարեկամություն, որքան ավելի շատ են նրան խառնում բուն բարեկամությանն օտար պատճառներ, նկատառումներ ու նպատակներ:

Բարեկամության հետ հավասարապես չեն համընկնում նաև կապվածության այն շորս տեսակները, որ սահմանել են հները. աղդակցա-

կան, հասարակական, հյուրընկալութեամբ պարտագրվող և սիրային՝ ոչ չուրաքանչյուրն առանձին, ոչ բոլորը միասին վերցրած:

Ինչ վերաբերում է ծնողների հետ երեխաների կապվածութեանը, ապա դա ավելի շուտ հարգանք է: Բարեկամութիւնը սնվում է այնպիսի շփումներից, որոնք նրանց միջև չեն կարող լինել տարիքային շարժանք մեծ տարբերութեան պատճառով, և բացի դրանից, այն երբեմն կիսանգարեր երեխաների բնական պարտականութիւնների կատարմանը: Քանզի հայրերն առանց անթույլատրելի անպարկեշտութիւն հարուցելու չեն կարող երեխաներին հաղորդակից դարձնել իրենց ամենանվիրական մտքերին, ինչպես և երեխաները չեն կարող ծնողներին դիմել նախազգուշացումներով ու հորդորներով, որը բարեկամների ամենաառաջնային պարտականութիւններից մեկն է: Եղել են ժողովուրդներ, որոնց մոտ, սովորույթի համաձայն, երեխաները սպանել են իրենց հայրերին, ինչպես նաև այնպիսիք, որոնց մոտ, ընդհակառակը, հայրերը սպանել են երեխաներին, կարծես և առաջինները, և մյուսներն ինչ-որ բանով խանգարել են միմյանց և առաջինների կյանքը կախված է եղել մյուսների մահվանից: Եղել են նաև փիլիսոփաներ, որոնք արհամարհանքով են վերաբերվել այն բնական կապերին, ինչպես, օրինակ, Արիստոտելը. երբ նրան ապացուցում էին, թե ինքը պետք է սիրի իր երեխաներին թեկուզ այն բանի համար, որ նրանք ծնվել են իրենից, նա սկսեց թքել, ասելով, որ այդ թուրքը նույնպես իր արգասիքն է և որ մենք ծնունդ ենք տալիս նաև ոջիլների ու որդերի: Իսկ մեկ ուրիշ փիլիսոփա, որին Պլուտարքոսն ուզում էր հաշտեցնել նրա եղբոր հետ, հայտարարել է. «Ես մեծ նշանակութիւն չեմ տալիս այն հանգամանքին, որ մենք երկուսս էլ դուրս ենք եկել միևնույն անցքից»: Մինչդեռ «եղբայր» բառը սերտ կապվածութիւն և սեր արտահայտող հիրավի սքանչելի բառ է, ուստի ես ու իմ Բոեսին շարունակ օգտագործում էինք այն, որպեսզի պատկերացում տանք մեր բարեկամութեան մասին: Բայց գուցեի այս ընդհանրութիւնը, նրա բաժանումները, և այն, որ մեկի հարստութիւնը միևնույն ժամանակ մյուսի աղքատութիւնն է, այս ամենը խիստ թուլացնում և այլանդակում է արնակցական կապերը: Չղտելով բարեկեցութեան աճի, եղբայրները ստիպված են համընթաց քայլել մի արահետով, ուստի կամա թե ակամա հաճախ իրար են դիպչում և խանդարում միմյանց: Բացի այդ, ինչո՞ւ պետք է անպայման նրանց հատուկ լինի հակումների այն համապատասխանութիւնն ու հոգեկան նմանութիւնը, որոնք էլ հենց ծնում են իսկական և կատարյալ բարեկամութիւնը: Հայր և որդի իրենց բնավորութեան առանձնահատկութիւններով կարող են միանգամայն հեռու լինել միմյանցից, նույնն էլ եղբայրները: Մա իմ որ-

դին է, սա հայրս է, բայց միևնույն ժամանակ նա դաժան, շար կամ հիմար մարդ է: Եվ ապա, քանի որ նման բարեկամությունը մեզ հանձնարարվում է օրենքով կամ բնության պարտադրած կապերով, ապա այստեղ մեր ընտրությունն ու ազատ կամքն անհամեմատ ավելի քիչ են: Մինչդեռ ոչինչ մեր ազատ կամքի այնպիսի արտահայտություն չէ, ինչպես կապվածությունն ու բարեկամությունը: Սա բնավ չի նշանակում, թե ես չեմ ճաշակել այն ամենը, ինչ կարող են տալ ազգակցական զգացմունքները, քանզի ունեցել եմ աշխարհի ամենալավ հայրը՝ անշափ ներողամիտ ընդհուպ մինչև խոր ծերություն, և ընդհանրապես ես սերում եմ մի ընտանիքից, որը հայտնի է նրանով, որ եղբայրների միջև օրինակելի համերաշխությունը փոխանցվել է սերնդե սերունդ.

et ipse

Notus in fratres animi paterni*.

Ոչ մի կերպ չի կարելի բարեկամության հետ համեմատել կամ նրան նմանեցնել սերը դեպի կիներ, թեև այդ սերը ծնվում է մեր ազատ բնությունում: Հաճույքով խոստովանում եմ, որ նրա հուրը,—

neque enim est dea nescia nostri

Quae dulcem curis miscet amaritiam**.

ավելի աննահանջ է, ավելի այրող ու տանջալից: Թայց դա խելացնոր ու վաղանցիկ, անհաստատ ու փոփոխական հուր է, տենդագին խանդավառություն է՝ մերթ մարող, մերթ նոր ուժով բռնկվող, և մեր հոգու սոսկ մի անկյունում ձվարու: Իսկ բարեկամության ջերմությունն ընդհանուր է և ամենաթափանց, մեղմ, ավելին՝ համաշափ, մշտական ու կայուն ջերմություն է, իսկը բավականություն ու քնքշանք, ուր չկա կլորուկ և խոցող ոչ մի բան: Ավելին, սերը խելահեղ հակում է դեպի այն, ինչը փախչում է մեզանից.

Come segue la lepre il cacciatore

Al freddo, al caldo, alla montagna, al lito;

Nè più l'estima poi che presa vede,

Et sol dietro a chi fugge affretta il piede***.

* Ես ինքս էլ հայտնի եմ եղբայրներիս նկատմամբ իմ հայրական զգացմունքով⁶ (լատ.):

** Ձէ որ ես էլ ծանոթ եմ այն աստվածունն, որը քաղցր դառնությունը խառնում է սիրո հոգսերին⁷ (լատ.):

*** Այդպես որսորդն է սար ու ձորերով հալածում նապաստակին և՛ ցրտին, և՛ տառապան, նա վառվում է նապաստակին հասնելու ցանկությամբ լուկ այնքան ժամանակ, քանի դեռ որսը փախչում է իրենից, իսկ տիրելով նրան, արդեն քիչ է գնահատում⁸ (իտ.):

Հենց որ այդպիսի սերը վերածվում է բարեկամության, այսինքն՝ ցանկությունների համաձայնության, նվազում է և մարում: Վայելքը, հանգելով մարմնին տիրանալուն, ուստի և նախատրամադիր լինելով գերհագեցման, սպանում է այն: Բարեկամությունն, ընդհակառակը, դառնում է այնքան ավելի ցանկալի, որքան ավելի լրիվ ենք վայելում այն, բարեկամությունն աճում, սնվում և ուժեղանում է միայն շնորհիվ այն վայելքի, որ մեզ է պատճառում, և քանի որ դա հոգևոր վայելք է, սպա հոգին, տրվելով նրան, վեհանում է: Այս կատարյալ բարեկամության հետ մեկտեղ երբեմն ինձ էլ է թռուցիկ սիրահարություն համակել, ես չեմ ասում, որ նրանով տարված էր նաև բարեկամս, որը միանգամայն անկեղծորեն խոստովանում է իր բանաստեղծություններում: Այսպիսով, այդ երկու կրթերն էլ ինձ ծանոթ են եղել, միանգամայն հաշտ ապրելով իմ հոգում, բայց նրանք երբեք ինձ համար համեմատելի չեն եղել. առաջինը վեհորեն ու հպարտորեն սավառնելով անցնում էր իր ճանապարհը, արհամարհանքով նայելով երկրորդին, որը մլուլ էր տալիս ինչ-որ տեղ ներքևում, նրանից հեռու:

Ինչ վերաբերում է ամուսնությանը, ապա, շխտելով արդեն այն մասին, որ դա գործարք է, որը կամավոր է լինում լոկ այն պահին, երբ տեղի է ունենում (քանզի նրա երկարատևությունը մեղ պարտադրվում է և կախված չէ մեր կամքից), և, ավելին, մի գործարք, որ սովորաբար կատարվում է բոլորովին այլ նպատակներով, նրանում լինում են էլի հազար կողմնակի հանգամանքներ, որոնցից գլուխ հանելը դժվար է, բայց որոնք միանգամայն բավարար են թեև կտրելու և կենդանի զգացմունքի զարգացումը խախտելու համար: Մինչդեռ, բարեկամության մեջ ամենևին չկան ուրիշ հաշիվներ ու նկատառումներ, բացի բուն բարեկամությունից: Արան ավելացնենք, որ, ճշմարիտն ասած, կանանց սովորական մակարդակը բնավ այն չէ, որ նրանք ընդունակ լինեն պահպանելու այն հոգևոր մերձեցումն ու միասնությունը, որոնցով սնվում է այդ վսեմ միությունը, և նրանց հոգին էլ, երևի, շունի բավականաչափ տոկունություն, որ շճանճրանա նման սերտ և տեսիլաճ կապի անհարմարություններից: Եվ, իհարկե, եթե դա խոչընդոտներ չհարուցեր, և եթե ծագեր մի այնպիսի կամավոր ու ազատ միություն, որում ոչ միայն հոգիներն են ճաշակում այդ կատարյալ վայելքը, այլև մարմիններն են այն կիսում, մի միություն, որին մարդը տրվում է անմնացորդ, ապա, անտարակույս, բարեկամությունն էլ նրանում կլիներ ավելի լիակատար ու անվերապահ: Բայց թույլ սեռը դեռևս ոչ մի անդամ նման օրինակ մեզ չի ցույց տվել, և, հին աշխարհի փիլիսոփայական բոլոր դպրոցների միջև համուռ կարծիքով, այստեղ ստիպված ենք կանանց բացառել:

Սիրո մեջ հին հույների սանձարձակութունը, որ միանգամայն առանձնահատուկ բնույթ ունի, մեր այժմյան բարքերի պայմաններում արդարացիորեն մեզ զգվանք է պատճառում: Սակայն, բացի դրանից, նրանց մոտ ընդունված սովորույթի համաձայն, այդ սերն անխուսափելիորեն ենթադրում է սիրահարների տարիքային այնպիսի անհավասարություն և հասարակական դիրքի այնպիսի տարբերություն, որ ոչ մի շահով չէր ներկայացնում այն կատարյալ միասնությունն ու համապատասխանությունը, որի մասին այստեղ խոսում ենք. Quis est enim iste amor amicitiae? Cui neque deformem adolescentem quisquam amat, neque formosum senem?*

Եվ նույնիսկ սիրո այն նկարագիրը, որ տալիս է Ակադեմիան¹⁰, իմ կարծիքով, չի խլում իրավունքս՝ ասելու հետևյալը. երբ Վեներայի որդին առաջին անգամ խոցում է սիրահարի սիրտը քնքուշ ջահելության ծաղկուն շրջանում գտնվող նրա պաշտամունքի առարկայի (որի նկատմամբ հույները թույլ էին տալիս այնպիսի անամոթ ու բուռն ոտնձգություններ, ինչպիսիք կարող է ծնել միայն անզուսպ ցանկությունը) հանդեպ տածած կրքով, ապա այդ կրքի հիմքում ընկած է բացառապես արտաքին գեղեցկությունը, մարմնական էության սոսկ խաբուսիկ սլափերը: Քանզի ոգու մասին այստեղ խոսք անգամ չէր կարող լինել, որովհետև այն տակավին չէր հասցրել դրսևորել իրեն, որովհետև այն միայն նոր է ծնվում և չի եկել այն ժամանակը, երբ տեղի է ունենում նրա հասունացումը: Եթե նման կրքով բռնկում էր ստոր հոգին, ապա այն միջոցները, որոնց նա դիմում էր իր նպատակին հասնելու համար, հարստությունն էր, նվերները, հետադաշում բարձր պաշտոններ ապահովելու խոստումը և այլ ստոր խայծեր, որոնք պախարակել են փիլիսոփաները: Իսկ եթե այն ծագում էր ավելի ազնիվ հոգում, ապա հրապուրման ձևերն էլ լինում էին ավելի ազնիվ՝ փիլիսոփայական խրատներ, կրոնը հարգելու, օրենքներին հնազանդվելու, հարկ եղած դեպքում հանուն հայրենիքի բարօրության կյանքը նվիրաբերելու հորդորներ, զրույցներ, որոնցում բերվում էին անձնվիրության, խոհեմության, արդաբամտության օրինակներ, ըստ որում սիրահարը զործադրում էր ամեն ջանք, որպեսզի բարեհաճությամբ և հոգու գեղեցկությամբ ավելի գրավիչ լինի, հասկանալով, որ իր մարմնի գեղեցկությունը վաղուց արդեն կորել է, և հույս

* Ուրեմն իրենից ի՞նչ է ներկայացնում բարեկամների այդ սիրահարությունը Ինչու ոչ ոք չի սիրում տղեղ պատանուն կամ գեղեցիկ ծերունու՞ (լատ.):

ունենալով այդ մտավոր շփման օգնութեամբ ավելի երկարատև ու ամուր կապ հաստատել սիրելի էակի հետ: Եվ երբ երկարատև ջանքերը պսակվում էին հաջողութեամբ (քանզի անգամ եթե զգացմունքներն արտահայտելու գործում սիրահարից զգուշութիւնն և շրջահայացութիւնն չէր պահանջվում, ապա այդ հատկանիշներն անպայման պահանջվում էին սիրված անձնավորութիւնից, որը պետք է գնահատեր սովորաբար անորոշ և դժվարութեամբ նշմարվող ներքին գեղեցկութիւնը), սիրված անձնավորութեան մեջ ցանկութիւնն էր առաջանում հոգեպես բեղմնավորվելու սիրահարի հոգևոր գեղեցկութեամբ: Նրա մտտ գլխավորը վերջինն էր, իսկ մարմնականը՝ պատահական ու երկրորդական, մինչդեռ սիրահարի մշտ ամեն ինչ ընդհակառակն էր: Հենց այդ պատճառով հին փիլիսոփաները սիրվածին դասում էին ավելի բարձր, պնդելով, թե աստվածներն էլ նույն կարծիքին են: Այդ նույն պատճառով նրանք կշտամբում էին էսքիլեսին, որը, պատկերելով Աքիլլեսի ու Պատրուկլեսի սերը, սիրահարի դերը հատկացրել էր Աքիլլեսին, թեև նա մի անմորուս պատանյակ էր, որը նոր-նոր էր թեկակոխել իր ծաղկման շրջանը և, բացի այդ էլ, հույներից ամենագեղեցիկն էր: Քանի որ այն ամբողջութեան մեջ, որ իրենից ներկայացնում է նման ընկերակցութիւնը, գլխավոր և առավել արժանի կողմը կատարում է իր դերը և գերիշխում, այն, նրանց խոսքերով, տալիս է պտուղներ, որոնք վիթխարի օգուտ են բերում ինչպես առանձին անձանց, այնպես էլ ամբողջ հասարակութեանը, նրանք ասում են, թե հենց դրանում էր այն երկրների ուժը, որտեղ ընդունվել էր այդ սովորույթը, թե դա էր հավասարութեան ու ազատութեան գրլխավոր պատվարը և թե դրա վկայութիւնը Հարմոգիսի և Արիստոգիտոնեսի¹¹ այդքան բարեբար սերն է: Ուստի նրանք այն անվանում են աստվածային և սուրբ: Եվ նրանց կարծիքով, միայն բունապետների կամայականութիւնն ու ժողովուրդների վախկոտութիւնը կարող են դեմ կանգնել նրան: Ի վերջո, այն ամենը, ինչ կարելի է ասել ի արդարացումն Ակադեմիայի, հանգում է լոկ մի բանի՝ թե այդ սերն ավարտվում էր իսկական բարեկամութեամբ, իսկ դա այնքան էլ հեռու չէ սիրո ստիկյանների ընտրողութեանից:

Amorem conatum esse amicitiae faciendae ex pulchritudinis specie*.

* Սերը մի ձգտում է ձեռք բերելու այն մարդու բարեկամութիւնը, որը դրավում է իր գեղեցկութեամբ¹² (լատ.):

Վերադառնում եմ իմ նյութին, ավելի բնական և ոչ այնքան անհավասար բարեկամությունը: Omnino amicitiae corroboratis iam confirmatisque ingeniis et aetatibus, iudicandae sunt*.

Էնդհանրապես, այն, ինչը մենք սովորաբար անվանում ենք բարեկամներ և բարեկամություն, ավելին չեն, քան կարճատև և մերձավոր ծանոթություններ, որ մենք ստեղծել ենք պատահականորեն կամ հարմարության նկատառումներով և որոնց շնորհիվ մեր հոգիները շփման մեջ են մտնում: Իսկ այն բարեկամության Ֆեջ, որի մասին ես այստեղ խոսում եմ, նրանք միախառնվում են և դառնում մի այնպիսի միասնական բան, որ մի ժամանակ նրանց իրար միացնող կարբքն իսպառ անհետանում են և նրանք իրենք էլ այլևս չեն կարողանում գտնել դրանց հետքերը: Եթե ինձանից համառորեն պահանջեին պատասխանել, թե ինչու եմ սիրել բարեկամիս, ես զգում եմ, որ չէի կարող արտահայտել դա այլ կերպ, քան ասելով. «Որովհետև այդ նա էր, և որովհետև այդ ես էի»:

Ինչ-որ տեղ հեռու իմ խելքի մատչելիության սահմաններից և այն բանից, որ ես կարող էի ասել այդ առթիվ, կա անբացատրելի և անկասելի մի ուժ, որը մեր միջև ստեղծել է այդ միությունը: Մենք իրար փնտրել ենք նախքան հանդիպելը, և այն կարծիքները, որ լսել ենք մեկս մյուսի մասին, մեր մեջ հարուցել են ավելի ուժեղ փոխադարձ ձգտում, քան դա կարելի էր բացատրել բուն կարծիքների բովանդակությամբ: Կարծում եմ, որ երկնքի հրամանն էր այդպիսին: Մեր անուններն իսկ դրկախառնվում էին: Եվ արդեն առաջին հանդիպմանը, որ պատահաբար տեղի ունեցավ մի մեծ տոնախմբության ժամանակ, քաղաքային բազմամարդ հասարակությունում, մենք այնքան հմայված էինք միմյանցով, այնքան ծանոթ, այնքան իրար կապված, որ այդ պահից ի վեր մեզ համար չկար ավելի մոտ բան, քան նա ինձ, իսկ ես՝ նրան: Իր դրած և հետագայում հրատարակած լատինական հիանալի երգիծանքում¹⁴ նա արդարացնում և բացատրում է այն, թե ինչպես մենք արտասովոր արագ եկանք մի փոխըմբռնման, որն այդքան շուտ հասավ իր կատարելությունը: Մնունդ առնելով այդքան ուշ և իր տրամադրություն տակ ունենալով այդքան քիչ ժամանակ (մենք երկուսս էլ արդեն ձևավորված մարդիկ էինք, ըստ որում նա մի քանի տարով մեծ էր¹⁵), մեր

* Բարեկամության մասին կարող է ճիշտ դատել արդեն կոփված հոգի և հասուն սարիք ունեցող մարդը միայն¹³ (լատ.):

ղզացմունքը շէր կարող ժամանակ կորցնել և օրինակ վերցնել այն համաշափ ու հանգիստ բարեկամութիւնից, որը ենթադրում է այդքան զգուշութիւն և կարիք ունի իրեն նախորդող տեական շփումների: Մեր բարեկամութիւնն իրենից բացի ոչ մի բանի մասին չէր մտածում, և հենարան էր փնտրում միայն իր մեջ: Պատճառն այստեղ մեկը չէր, ոչ էլ երկուսը, ոչ էլ երեքը, ոչ էլ շորսը, չկային հազար առանձնահատուկ պատճառներ, այլ մի բուն էություն կամ բոլոր պատճառների միախառնուրդ, որը կլանեց իմ կամքը, սափպեց սուզվել նրա կամքի մեջ և լուծվել նրանում, ճիշտ այնպես, ինչպես ամբողջովին կլանեց նրա կամքը, սափպելով սուզվել իմ կամքի մեջ և լուծվել նույնպիսի ազահուստամբ, նույնպիսի ավլունով: Ծա ասում եմ «լուծվել», քանզի մեր մեջ չմնաց ոչինչ, որ լինէր միայն մեկիս կամ միայն մյուսիս տեփականութեանց, ոչինչ, որ լինէր միայն նրանը կամ միայն իմը:

Երբ Տիրերիոս Գրակքոսին դատապարտելուց հետո վերջինիս բոլոր համախոհներին հալածանքների ենթարկող հոռմեացի կոնսուլների ներկայութեամբ Լելիոսն սկսեց հարցաքննել Գայոս Բլոսիոսին (իսկ նա Գրակքոսի ամենամերձավոր բարեկամներից մեկն էր) և հարցրեց, թե ինչ կարող էր անել հանուն Գրակքոսի, նա պատասխանեց. «Ամեն ինչ»:— «Այսինքն, ինչպե՞ս թե ամեն ինչ,— շարունակեց հարցաքննել Լելիոսը:— Իսկ եթե նա հրամայեր հրկիզել մեր տաճարե՞րը»:— «Ծա այդ չէր հրամայի ինձ»,— առարկեց Բլոսիոսը: «Իսկ եթե այնուամենայնիվ աներ դա՞»,— պնդեց Լելիոսը: «Ծա կհնազանդվի՞ նրան»,— ասաց Բլոսիոսը: Ինչպես պնդում են պատմագիրները, եթե նույնիսկ երբ իրոք այդպիսի կատարյալ բարեկամ էր Գրակքոսին, այնուամենայնիվ հարկ չկար համարձակ խոստովանութեամբ գրգռելու կոնսուլներին, բացի այդ, նա չպետք է հրաժարվեր իր այն համոզվածութիւնից, թե անհնար էր, որ Գրակքոսը նման հրաման տար: Համենայն դեպս, նրանք ովքեր դատապարտում են այդ պատասխանը որպէս խոտովարար, հարեղածին պես չեն հասկանում իսկական բարեկամութեան գաղտնիքները և չեն կարող ըմբռնել, որ Գրակքոսի կամքը՝ նրա կամքն էր, որ նա գետեր և կարող էր տնօրինել այն: Նրանք ավելի շատ բարեկամներ էին քան քաղաքացիներ, քան իրենց երկրի բարեկամներ կամ թշնամիներ, քան փառասիրութեան կամ խոռովութեան բարեկամներ: Լիովին միմյան վստահելով, նրանցից յուրաքանչյուրը լիովին կառավարում էր մյուսի հակումները, ասես ձեռքին սանձ լինէր, և որովհետև նրանք պիտի ընթանային այդ լծասարքով, ղեկավարվելով առաքինութեամբ և բարեկանութեան թելադրանքով (քանզի այլ կերպ նրանց զսպելն անհնար

կլիններ), Բլոսիոսի պատասխանն այնպիսին էր, ինչպիսին պետք է լիներ, Եթե նրանց արարքները միանման շինեին, նրանք, համաձայն այն շափանիշի, որից ես օգտվում եմ, բարեկամ չէին լինի ոչ մեկը մյուսին, ոչ իրենք իրենց, նկատեմ, որ Բլոսիոսի պատասխանը հնչել է այնպես, ինչպես կհնչեր իմը, եթե որևէ մեկը դիմեր ինձ հետևյալ հարցով. «Եթե ձեր կամքը հրամայեր, գուք կսպանեի՞ք ձեր դստերը», և ես դրական պատասխան կտայի: Նման պատասխանը դեռևս չի վկայում դրան պատրաստ լինելու մասին, որովհետև ես բնավ չեմ կասկածում իմ կամքին, ինչպես նաև այդպիսի բարեկամի կամքին: Աշխարհում ոչ մի փաստարկ չէր կարող խախտել իմ այն վստահությունը, որ ես գիտեմ իմ բարեկամի կամքն ու մտքերը: Նրա ամեն ճի արարքում, ինչ տեսքով էլ դրանք ինձ եերկայացնելու լինեն, ես իսկույն կարող եմ կռահել դրդապատճառը: Մեր հոգիներն այնքան միաբան էին, նրանք այնպիսի կրքոտ զգացմունքով էին նայում իրար և, անձնատուր լինելով այդ զգացմունքին, այնքան էին բացվել միմյանց առջև, ցույց տալով իրենց խորքերը, որ ես ոչ միայն գիտեի նրա հոգին, ինչպես իմ սեփականը, այլև ինձ վերաբերող ամեն ինչում կհավատայի նրան ազելի, քան ինքս ինձ:

Թող շփորձեն սովորական բարեկամական կապերը նմանեցնել այդ բարեկամությունը: Ես, ինչպես ցանկացած մեկ ուրիշը, ծանոթ եմ դրանց, և ըստ որում ամենախոր ձևերին: Սակայն, չի կարելի դրանք շփոթել իսկական բարեկամության հետ. նման բան անողը մեծ սխալ գործած կլինի: Սովորական բարեկամության մեջ պետք է միշտ զգոն լինել, բաց շփոթել ձրասանը, միշտ դրսևորել զսպվածություն և շրջահայացություն, քանզի նման բարեկամության կապերն այնպիսին են, որ ամեն վայրկյան կարող են կտրվել: «Բարեկամիդ սիրիր այնպես, — ասում է Քրիստը, — ինչպես եթե հարկ լիներ երբևէ ատել նրան, և ատիր այնպես, ինչպես եթե հարկ լիներ երբևէ սիրել նրան»¹⁶: Այս կանոնը, որ թվում է զգվելի, երբ խոսքը վեհ, ամենակուր բարեկամության մասին է, միանգամայն բարերար է սովորական, ոչնչով աչքի չընկնող այն բարեկամական կապերի կիրառմամբ, որոնց վերաբերյալ միանգամայն տեղին է հիշել Արիստոտելի սիրած հետևյալ ասույթը. «Օ՛ իմ բարեկամներ, շկա այլևս ոչ մի բարեկամ»¹⁷:

Այդ ազնիվ շփումների մեջ ուրիշ տեսակի բարեկամական կապերը սնող տարբեր ծառայություններն ու բարեգործություններն արժանի չեն, որ հաշվի առնվեն, դրա պատճառը երկու բարեկամների կամքի լիակատար և զերջնական միաբանությունն է: Քանզի նման այն բանին, թե

ինչպես իմ նկատմամբ տաժաժ սերս ոչ մի շափով չի աճում նրանից, որ ըստ անհրաժեշտության ես ինձ օգնում եմ (այդ առթիվ ինչ էլ ասելու լինեն ստոիկյանները), կամ նման այն բանին, ինչպես ինձ երախտապարտ շեմ համարում ինքս ինձ մատուցած ծառայության համար, այնպես էլ այդտեսակ բարեկամների միասնությունը, լինելով մեր բարեկամության պես հիրավի կատարյալ, նրանց զրկում է այն բանն զգալու ընդունակությունից, թե նրանք այս կամ այն կերպ պարտական են միմյանց և ստիպում է նրանց մերժել ու գործածությունից հանել բաժանում կամ տարբերություն նշանակող բառերը, ինչպես, օրինակ. բարեգործություն, պարտավորություն, երախտագիտություն, խնդրանք, շնորհապարտություն և նման բաներ: Քանի որ նրանց մոտ իսկապես ընդհանուր է ամեն ինչ՝ ցանկությունները, մտքերը, դատողությունները, կնոջ ունեցվածքը, երեխաները, պատիվն ու բուն կյանքը, և քանի որ նրանց միությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ Արիստոտելի միանգամայն հաջող բնորոշմամբ, մի հոգի երկու մարմնում¹⁸, նրանք չեն կարող մեկը մյուսից ոչ պարտք վերցնել, ոչ տալ որևէ բան: Ահա թե ինչու օրենսդիրները, ամուսնությունն այդ աստվածային միաբանության հետ մի ինչ-որ թեկուզ երևակայական նմանությամբ վեհացնելու համար, արգելում են նվիրաբերություններն ամուսինների միջև, կարծես կամենալով ցույց տալ, թե նրանց մոտ ամեն բան ընդհանուր է և թե նրանք ոչինչ չունեն կիսելու և բաշխելու միմյանց միջև:

Եթե այն բարեկամության մեջ, որի մասին ես եմ խոսում, մեկն այնուամենայնիվ կարողանար որևէ բան նվիրել մյուսին, ապա հենց բարեկամից լավությունն ընդունողը դրանով կպարտավորեցներ նրան. չէ որ նրանք երկուսն էլ չեն կամենում ավելի լավ բան, քան միմյանց լավություն անելը, և հենց նա, ով իր բարեկամին նման հնարավորություն ու առիթ է ընձեռում, ցուցաբերում է առատաձեռնություն, գոհացնում նրան, քանզի ինքը հնարավորություն է ստանում իրագործել իր ամենաբուռն ցանկությունը: Երբ փիլիսոփա Դիոգենեսը դրամի կարիք էր ունենում, չէր ասում, թե պարտք կվերցնի բարեկամներից, նա ասում էր, որ բարեկամներին կխնդրի վերադարձնել իրենց պարտքը: Եվ, ցույց տալու համար, թե դա գործնականում ինչպես է տեղի ունենում, ես կրեթեմ՝ մի հիանալի օրինակ հին ժամանակներից:

Կորնթոսցի էվզամիզոսն ուներ երկու բարեկամ. սիկիոնցի Խարիքսենեսը և կորնթոսցի Արետեոսը: Կինելով աղքատ, մինչդեռ նրա երկու բարեկամները հարուստ էին, նա, զգալով մոտալուտ մահը, կարմեց հետևյալ կտակը. «Կտակում եմ Արետեոսին՝ կերակրել մորս և նե-

ցուկ լինել նրա ծերությանը, իսկ Խարիքսենեսին՝ ամուսնացնել դստերս և տալ նրան հարուստ օժիտ, ինչպիսին կկարողանա, իսկ եթե նրանցից մեկը մահանա, ոչարտականությունների նրա բաժինը ես դնում եմ կենդանի մնացածի վրա»։ Այս կտակի առաջին ընթերցողները ծիծաղեցին, սակայն Էվդամիդոսի կտակակատարները, իմանալով կտակի բովանդակությունը, այն ընդունեցին մեծազույն գոհունակությամբ։ Իսկ երբ նրանցից մեկը՝ Խարիքսենեսը հինգ օր հետո մահացավ և նրա պարտականություններն անցան Արեստեսին, ճա սկսեց հոգատարությամբ խնամել Էվդամիդոսի մորը և իր կարողությունը կազմող հինգ տաղանդի երկու և կեսը օժիտ տվեց իր միակ դստերը, իսկ մյուս երկու և կեսը՝ Էվդամիդոսի աղջկան, որին մարդու ավեց նույն օրը, ինչ իր աղջկան։

Այս օրինակը կլինեի միանգամայն լավ, եթե չլինեի մի հանգամանք՝ այն, որ Էվդամիդոսն ուներ երկու բարեկամ, այլ ոչ թե մեկ։ Քանզի այն կատարյալ բարեկամությունը, որի մասին ես եմ խոսում, անբաժանելի է. յուրաքանչյուրն այնպիսի լիակատար շափով է իրեն նվիրաբերում բարեկամին, որ այլևս ուրիշ մեկին տալու բան չի ունենում, ընդհակառակը, նա շարունակ վշտանում է, որ ինքը միայն մի էակ է, այլ ոչ թե երկու, երեք, չորս, որ ինքը շունի մի քանի հոգի և մի քանի կամք, իր պաշտամունքի առարկային տալու համար։ Սովորական բարեկամական կապերում կարելի է կիսել զգացմունքը. կարելի է սիրել մեկի գեղեցկությունը, մյուսի՝ համեստ բարքը, երրորդի՝ առատաձեռնությունը, մեկի հայրական զգացմունքները, մյուսի՝ եղբայրական, և այլն։ Սակայն ինչ վերաբերում է այն բարեկամությանը, որը հոգին ամբողջությամբ ենթարկում է իրեն և առանց սահմանափակության տիրում նրան, այստեղ ոչ մի երկատում հնարավոր չէ։ Եթե երկու բարեկամ միաժամանակ ձեզանից օգնություն խնդրեին, նրանցից ո՞ր մեկի մոտ կշտապեիք։ Եթե նրանք ձեզ խնդրեին մատուցել ծառայություններ, որոնք համատեղելի անհնար է, ինչպե՞ս դուրս կգայիք այդ դրությունից։ Եթե նրանցից մեկը վստահեր ձեզ մի գաղտնիք, որն օգտակար լինեի իմանալու մյուսին, ինչպե՞ս կվարվեիք։

Բայց միակ, մնացած ամեն ինչը մթազնող բարեկամությունն ուրիշ ոչ մի պարտավորության հետ հաշվի չի նստում։ Այն գաղտնիքը, որ ես երգվել եմ շհայտնել ուրիշ ոչ մեկին, կարող եմ առանց երգմանազանցության կիսել նրա հետ, ով ինձ համար ոչ թե «ուրիշ» է, այլ ես ինքս։ Իրեն կրկնապատկելը մեծ հրաշք է, և այդ մեծությունն անմատչելի է նրանց, ովքեր պնդում են, թե կարող են եռապատկվել։ Չկա մի բարձրագույն բան, որ ունենա իր նմանը։ Եվ նա, ով կենթադրի, թե իմ

երկու իսկական քարեկամներին ես կարող եմ սիրել միևնույն ուժով և որ նրանք կարող են հավասարապես սիրել միմյանց, իսկ դրա հետ մեկտեղ, նաև ինձ նույն ուժով, որ ես եմ նրանց սիրում, մի ամբողջ միաբանություն կզարձնի միանգամայն միասնական, այն, ինչն առհասարակ անշափ դժվար է գտնել աշխարհում:

Իմ պատմության վերջնամասը միանգամայն համընկնում է այն բանին, որ ես նոր ասում էի, քանզի էվզամիդոսը, բարեկամներին հանձնարարելով հոգալ իր կարիքները, առաջնորդվել է նրանց նկատմամբ տաժաժ սիրով ու համակրանքով: Նա բարեկամներին ժառանգեց իր առատաշնորհությունները՝ այն, որ հենց նրանց հնարավորությունն էր տվեց իր համար բարիք գործել: Եվ, անկասկած, նրա արարքում բարեկամության ուժը դրսևորվեց ավելի ցայտունորեն, քան այն բանում, որ նրա համար արեց Արետեոսը: Մի խոսքով, բարեկամության այդ դրսևորումներն անհասկանալի են նրան, ով անձամբ չի ճաշակել դրանք: Ահա թե ինչու ես անշափ զնահատում եմ այն երիտասարդ զորականի պատասխանը Կյուրոսին, որը թագավորի հարցին, թե քանիսո՞վ կվաճառեք ձիարշավում իրեն առաջին պարգև բերած նժույզը, և համաձայն չե՞ք արդյոք նրան փոխանակել մի ամբողջ թագավորության հետ, պատասխանեց. «Ոչ, տեր: Բայց ես հաճույքով կտայի նրան, եթե կարողանայի այդ գնով մարդկանց մեջ գտնել նույնքան հավատարիմ բարեկամ»:

Նա լավ է արտահայտվել, ասելով «եթե կարողանայի գտնել», քանզի հեշտ է գտնել լուրջ այնպիսի մարդկանց, որոնք հարմար են մակերեսային բարեկամական կապերի համար: Բայց այն բարեկամության մեջ, որ ես նկատի ունեմ, շոշափվում են մեր հոգու ամենանվիրական խորքերը. մեզ անմնացորդ կլանող բարեկամության մեջ, անշուշտ, անհրաժեշտ է, որ մարդու հոգեկան բոլոր մղումները լինեն մաքուր ու անբասիր:

Երբ բանը վերաբերում է այն հարաբերություններին, որ հաստատվում են մի որոշակի նպատակով, պետք է հոգ տանել սոսկ այդ նպատակին ուղղակիորեն առնչվող պակասությունները վերացնելու մասին: Ինձ համար բացարձակապես միևնույնն է, թե ինչ կրոնական հայացքներ ունի իմ բժիշկը կամ փաստաբանը: Այդ հանգամանքը ոչ մի կապ չունի բարեկամական այն ծառայությունների հետ, որը նրանք պարտավոր են մատուցել ինձ: Նույնն է նաև իմ ծառաների վերաբերյալ: Ես շատ քիչ եմ հոգում իմ սպասավորի բարձի մաքրության մասին, ես նրանից միայն ջանասիրություն եմ պահանջում: Ես թղթախաղաց ձիապանից

այնքան չեմ վախենում, որքան հիմար ձիապանից: Ըստ իս հող չէ, որ խոհարարս զազրախոս է, միայն թե իր գործն իմանա: Սակայն ես մտադիր չեմ ուրիշներին խրատել, թե ինչպես պիտի վարվեն (այդ ձգտումն ունեցողներ շատ կգտնվեն), ես խոսում եմ լոկ այն մասին, ինչպես ինքս եմ վարվում:

Mihi sic usus est; tibi, ut opus est facto, face*.

Ես գերադասում եմ սեղանի շուրջ տեսնել հետաքրքիր, քան բարեկիրթ զրուցակից, անկողնում՝ գեղեցկութուն, քան բարութուն, լուրջ զրույցների համար՝ խոհեմ, բայց մանրախնամությունից զերծ մարդկանց: Նույնն էլ մնացած բոլոր բաներում:

Ոմն հայր, որին մի մարդ տեսավ, թե ինչպես իր երեխաների հետ խաղալիս փայտին հեծած քշում է, նրան խնդրեց այդ մասին դատողություններ շանել, մինչև իր հայր դառնալը. նրր իր հոգում արթնանա հայրական զգացմունքը, ինքը կկարողանա ավելի սթափ և արդարամտորեն դատել նրա վարմունքի մասին²⁰: Ճիշտ այդպես էլ ես եմ, և ես կուզենայի բարեկամության մասին խոսել միայն նրանց հետ, ում վիճակվել է ճարտարել աչն, ինչի մասին պատմում եմ: Սակայն իմանալով, որ դա արտասովոր և կյանքում հազվագեղ հանդիպող բան է, ես այնքան էլ հույս չունեմ այդ հարցերում իրազեկ դատավոր դոնել: Քանզի բարեկամության մասին նույնիսկ աչն դատողությունները, որ թողել են մեզ հին ժամանակները, շափազանց դժգույն են թվում իմ զգացմունքների համեմատությամբ: Իրականությունն այստեղ գերազանցում է փիլիսոփայության բոլոր խրատներին.

Nil ego contulerim iucundo sanus amico**.

Հին աշխարհի բանաստեղծ Մենանդրոսն ասում է. երջանիկ է նա, ում վիճակվել է տեսնել իսկական բարեկամի գոնե սովերը²²: Նա, անշուշտ, հիմքեր է ունեցել դա ասելու, հատկապես, եթե անձամբ նման լան է ճաշակել: Եվ իրոք, երբ համեմատում եմ ամբողջ հետագա կյանքս, որ, փառք ասածո, անց եմ կացրել խաղաղ, բարեհաջող, և, եթե շխոսեմ այդպիսի բարեկամիս կորցնելու մասին, առանց մեծ վշտի, ոգու անխախտ պայծառությամբ, բավարարվելով ունեցածով, շրնկնելով մեծ բաների հե-

* Իմ սովորությունն այսպիսին է, իսկ դու՝ վարվիր ինչպես քեզ է պետք¹⁹ (լատ.):

** Քանի գեո խելոս տեղն է, սիրելի բարեկամիս ոչ մի բանի հետ չեմ համեմատի²¹ (լատ.):

տևից, այսպես ուրեմն, ասում եմ, երբ համեմատում եմ մնացած ողջ կյանքս և այն շորս տարիները, որ ինձ վիճակվեց անցկացնել այդ մարդու հետ բերկրալի մոտիկության ու քաղցրալից շփման մեջ, ուզում եմ ասել, որ այս ամբողջ ժամանակը մառախուղ է, մութ ու տրտում գիշերու Այն օրվանից, երբ կորցրի նրան,

quem semper acerbum,
Semper honoratum (sic, dii, voluistis) habebo*,

ես տանջալի, անբովանդակ կյանք եմ վարում, և անգամ այն հաճույքները, որ երբեմն ճաշակում եմ, փոխանակ միսիթարություն բերելու, միայն սաստկացնում եմ իմ կորստյան վիշտը: Մեր ունեցած ամեն ինչը մենք հավասար կիսում էինք, և ինձ թվում է, թե նրա բաժինն եմ խլում,

Nec fas esse ulla me voluptate hic frui
Decrevi, tantisper dum ille abest meus particeps**.

Ես այնպես եմ սովորել միշտ և ամեն ինչում լինել նրա երկրորդ «ես»-ը, որ ինձ թվում է, թե հիմա ընդամենը կես մարդ եմ:

Illam meae si partem animae tulit
Maturior vis, quod moror altera,
Nec carus aequae, nec superstes
Integer? Ille dies utranque
Dulci: uinam***

Եվ ինչ էլ որ անելու լինեմ, ինչ էլ մտածեմ, ես մտքում շարունակ կրկնում եմ այդ բանաստեղծությունը, ինչպես կաներ նա, մտածելով իմ մասին, քանզի որքան բարձր էր նա ինձանից ամեն տեսակ տրժանիք-

* ... (օր), որը միշտ համարելու եմ ամենասուկալին և որի հիշատակը միշտ հարգելու եմ, քանզի այդպիսին է եղել ձեր կամքը, օ՞ր աստվածներ²³ (լատ.):

** Եվ ես վճռեցի, որ ինձ համար այլևս վայելքների չպիտի լինեն, քանզի չկա նա, ում հետ կիսում էի դրանք²⁴ (լատ.):

*** Եթե մահը վաղաժամ տաներ (քեզ)՝ հոգուս այդ կեսը, էլ ինչո՞ւ պիտի այստեղ մնայի ես՝ նրա երկրորդ կեսը, որ այնքան էլ թանկագին չէ և խեղ է առանց քեզ: Այդ օրը մեզ երկուսիս էլ մահ կբերեր²⁵ (լատ.):

ներով ու առաքինութեամբ, այնքան էլ զերազանցում էր բարեկամական պարտքը կատարելու գործում:

Quis desiderio sit pudor aut modus
Tam cari capitis?*

O misero frater adempte nihil
Omnia tecum una perierunt gaudia nostra,
Quae tuus in vita dulcis alebat amor.
Tu mea, tu moriens fregisti commoda, frater;
Tecum una tota est nostra sepulta anima,
Cuius ego interitu tota de mente fugavi
Haec studia atque omnes delicias animi.

Alloquar? audiero nunquam tua verba loquentem?
Nunquam ego te, vita frater amabilior,
Aspiciam posthac? At certe semper amabo?*

Սակայն լսենք այս տասնվեցամյա պատանուն:

Քանզի ես իմացա, որ այս ստեղծագործությունը շարամիտ նպատակներով արդեն տպագրել են մարդիկ, որոնք ձգտում են խախտել և փոխել մեր պետական կարգը, առանց հոգ տանելու, թե արդյոք կկարողանան բարելավել այն (և բացի այդ, տպագրել են իրենց ճաշակին համապատասխան ամեն տեսակ թխածո բաների հետ միասին), ես որոշեցի այն չզետեղել սույն էջերում²⁶, Եվ որպեսզի հեղինակի հիշատակը շխամբի այն մարդկանց աչքում, ովքեր հնարավորություն չեն ունեցել ավելի մոտիկից ծանոթանալու նրա հայացքներին ու արարքներին, ես նրանց նախազգուշացնում եմ, որ այդ առթիվ իր դատողությունները նագրել է վաղ պատանեկության շրջանում որպես վարժություն տարածված ու ծեծված մի թեմայով, որը հազար անգամ մշակված էր տարբեր գրքերում: Ես բնավ չեմ կասկածում, որ նա հավատարիմ էր իր ստեղծագործության մեջ շարադրած հայացքներին, քանզի նա չափադանց խրղճ-

* Հարկ կա՞ արդյոք ամաչել սեփական վշտից և խուլընդոտներ հարուցել նրան, և՞թե այդպիսի սիրելի մարդու հոգի ես կորցրել²⁶ (լատ.):

** Ո՛հ, թշվառիցս խլված եղբայր! Քեզ հետ միասին անհետացան բոլոր այն ուրախություններս, որ սնվում էին քո քաղցրալից սիրուց, քանի դեռ ողջ էիր: Հեռանալով կյանքից, եղբայր իմ, ինձ զրկեցիր նրա բոլոր բարիքներից, քեզ հետ թողվեց նուև իմ ողջ հոգին. ախր քո մահից հետո ես հրաժարվել եմ արվեստին ծառայելուց և հոգեկան բոլոր վայելքներից... Թե որ դիմեմ քեզ՝ պատասխան խոսք լեմ լսի բեկտե՛րից, հետայսու երբեք չեմ տեսնի քեզ, եղբայրս, որին կյանքից ավելի եմ սիրում: Բայց, համենայն դեպս, ես քեզ սիրելու եմ հավե՛ր²⁷ (լատ.): Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:

մըտանքով մարդ էր, որ ստեր, թեկուզ կատակով: Ավելին, ես գիտեմ, որ եթե նա ի վիճակի լիներ ընտրել իր ծննդավայրը, Սարլակից²⁹ կգերադասեր Վենետիկը (և լիակատար հիմունքով): Բայց, դրա հետ մեկտեղ, նրա հոգում վառ կերպով տպավորված էր մեկ այլ կանոն՝ սրբությամբ հնազանդվել այն հրկրի օրենքներին, ուր նա ծնվել էր: Դեռ երբեք չի եղել ավելի լավ մի քաղաքացի, որն առավել հոգ տաներ իր հայրենիքի խաղաղության մասին և ավելի թշնամի լիներ խռովություններին ու իր ժամանակի նորամուծություններին: Նա իր ունակություններն ավելի շուտ կտրամադրեր այդ հրդեհը մարելուն, քան թե ժացնելուն: Նրա ոգին ստեղծված էր այլ դարերի օրինակով, քան մերն է:

Ուստի խոստացած լուրջ աշխատության փոխարեն, ես այստեղ կբերեմ ավելի ավարճալի ու կենսուրախ մեկ ուրիշը, որ նա գրել է նույն տարիքում³⁰:

Գլուխ XXIX

ԷՏԻՆ ԴԸ ԼԱ ԲՈՒՆԻԻ ՔՍԱՆԻՆԸ ԱՐՆԵՏՆԵՐԸ

Տիկին զը Գրամոնին, կոմսուհի զը Գիսենին

Տիկին, ես ձեզ չեմ առաջարկում իմը, քանզի առանց այդ էլ այն ձերն է և ես ձեզ արժանի ոչինչ չեմ գտնում: Սակայն ուզում եմ, որ այս բանաստեղծությունները, որտեղ էլ լույս տեսնեն, վերնագրերում հիշատակեն ձեր անունը և պատիվ ունենան արժանանալու սքանչելի Կորիզանդա Անդուանեցու՝ հովանավորությանը: Ինձ թվում է, այս նվերն առավել ևս տեղին է, քանզի Ֆրանսիայում քիչ կգտնվեն կանայք, որոնք ի վիճակի են այնպես ողջամտորեն դատել պոեզիայի մասին և այնպիսի հաջողությամբ օգտագործել այն, ինչպես ձեզ է հատուկ: Եվ էլիախը չկա մեկը, որ կարողանա նրան այնքան կյանք ու հոգի ներարկել, որքան դուք եք ձեր մի ամբողջ միլիոն այլ կատարելությունների հետ միասին տալիս շնորհիվ բնության պարզևած ձայնի հարուստ ու սքանչելի հնչեղության: Տիկին, այս բանաստեղծություններն արժանի են ձեր բարչացակամ վերաբերմունքին, դուք, անշուշտ, կհամաձայնեք ինձ հետ, որ մեր Գասկոնը դեռևս չի ծնել ավելի նուրբ ու բանաստեղծական ստեղծագործություններ, որոնք կարողանային վիայել, թե արգասիք են ավելի տաղանդավոր հեղինակի գրչի: Եվ մի վշտանաք, որ դուք տիրում եք միայն մնացորդին, քանզի այս բանաստեղծությունների մի մասը ես մի առիթով արդեն տպագրել եմ, ձոնելով դրանք ձեր արժանավոր ազգա-

կանին՝ պարոն դը Ֆուային, չէ որ ձեզ բաժին ընկած բանաստեղծություններում ավելի շատ կյանք ու խանդավառություն կա, քանզի դրանք գրվել են վաղ պատանեկության օրերին և ջերմացված են սքանչելի ու ազնիվ կրքով, որի մասին ես երբևէ կպատմեմ ձեր ականջին: Իսկ ինչ վերաբերում է այն մյուս բանաստեղծություններին, նա գրել է ավելի ուշ, իր հարսնացուի պատվին, երբ պատրաստվում էր ամուսնանալ, և դրանցից արդեն ամուսնական սառնություն է փչում: Իսկ ես համակարծիք եմ այն մարդկանց, ովքեր գտնում են, թե պոեզիան ժպտում է լոկ այնտեղ, ուր գործ ունի շարաճճի ու թեթևամիտ բաների հետ: (Այդ բանաստեղծությունները կարելի է կարդալ ուրիշ տեղում²):

Գլուխ XXX

ՉԱՓԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

Կարելի է մտածել, թե մեր հպումը վարակ է բերում, այսր ինչին ձեռք ենք տալիս փչացնում ենք, որքան էլ այն ինքնին լավն ու սքանչելի լինի: Կարելի է առաքինությանն էլ այնպես կառչել, որ արատավորվի. դրա համար բավական է միայն շափազանց կոպիտ ու անդուսպ հակում դրսևորել նրա նկատմամբ: Նրանք, ովքեր պնդում են, թե իբր առաքինությունը շափազանց չի լինում, որովհետև ոչ մի շափազանց բան առաքինություն չէ, պարզապես բառախաղ են անում.

Insani sapiens nomen ferat, aequus iniqui,
Ultra quam satis est virtutem si petat ipsam³.

Դա ավելին չէ, քան փիլիսոփայական խորամանկություն: Կարելի է և շափազանց սիրել առաքինությունը և ծայրահեղության մեջ ընկնել, խանդելով արդարամտությանը: Այստեղ կարելի է հիշել տուաբյալի խոսքերը.

«Մի եղեք ավելի իմաստուն, քան անհրաժեշտ է, այլ եղեք իմաստուն չափավոր»³:

Ես տեսել եմ այս աշխարհի մեծերից մեկին, որը խախտել էր հավատն իր բարեպաշտության հանդեպ, լինելով իր դիրքի մարդկանց համար չափազանց բարեպաշտ⁴:

Ես սիրում եմ չափավոր և բոլոր առումներով միջին անհատականու-

² * Իմաստունին էլ կարող են անվանել խենթ, արդարամիտ մարդուն՝ անարդար, և թե՛ առաքինության նրանց ձգտումն անցնում է բոլոր սահմանները² (լատ.):

թյուններ: Ամեն ինչի, նույնիսկ բարիքի շափազանցությունը, եթե չի վիրավորում, ապա, համենայն դեպս, զարմացնում է ինձ, և ես դժվարանում եմ այն որևէ կերպ հորջորջել: Թե Պավսանիասի⁵ մայրը, որն առաջինը մերկացրեց որդուն և բերեց առաջին քարը, որ զնդանի նրան, թե դիկտատոր Պոստումուսը⁶, որը մահվան դատապարտեց իր որդուն սոսկ նրա համար, որ թշնամու դեմ հաջող ճակատամարտի ժամանակ վերջինիս համակեց պատանեկան ավյունը, և նա իր շարքից մի փոքր առաջ ընկավ, ինձ թվում են ավելի շուտ տարօրինակ, քան արդարամիտ: Եվ ես դուզն ինչ ցանկություն չունեմ ոչ կոչ անելու նման բիրտ և թանկ գնով գնված առաքինության, ոչ էլ հետևելու գրան:

Այն աղեղնավորը, որի նետն անցել է նշանակետի վրայով, արժանի է նրան, ում նետը չի հասել մինչև նշանակետը: Իմ աչքերին հանկարծակի պայծառ լույսը նույնքան ցավոտ է, որքան խավարին հառելը: Պլատոնի մոտ Կալիկլեսն ասում է, որ փիլիսոփայությամբ շափազանց տարվելը վնասակար է⁷, և խորհուրդ է տալիս օգտակարության սահմանից ավելի չխորանալ նրանում, եթե փիլիսոփայությամբ զբաղվես շափավոր, այն հաճելի է ու հարմար, բայց, ի վերջո, մարդուն դարձնում է արատավոր և վայրագ, ընդհանուր հավատալիքներն ու օրենքներն արհամարհող, հաճելի վարվեցողության, մարդկային բոլոր վայելքների թշնամի, հասարակական գործունեությամբ զբաղվելու և ոչ միայն ուրիշին, այլև ինքն իրեն օգնելու անընդունակ, վիրավորանքներն անտրտունջ տանելու պատրաստակամ: Նա միանգամայն իրավացի է, եթե փիլիսոփայության մեջ ավելորդությունների գիրկն ենք ընկնում, այն խլում է մեր բնական ազատությունը և իր ձանձրալի հնարքներով շեղում այն հիանալի հարթ ճանապարհից, որ մեզ համար նախորոշել է բնությունը:

Մեր կանանց նկատմամբ մեր կապվածությունը միանգամայն օբիեկտիվ է, սակայն, աստվածաբանությունն ամեն կերպ զսպում ու սահմանափակում է այն: Մի անգամ ես սուրբ Թովմայի⁸ մոտ, այնտեղ, ուր նա դատապարտում է մերձավոր ազգականների ամուսնությունները, այլ փաստարկների շարքում գտա նաև հետևյալը. վտանգ կա, որ ազգական կնոջ նկատմամբ ունեցած զգացմունքը կարող է դառնալ ոչ շափավոր, չէ որ, եթե ամուսինն ըստ պատշաճին իսկական ու կատարյալ ամուսնական կապվածություն է զգում կնոջ նկատմամբ և դրան ավելանում է նաև այն կապվածությունը, որ մենք պիտի տաժենք ազգականի հանդեպ, ապա ոչ մի կասկած չկա, որ այդ ավելցուկը կստիպի նրան դուրս գալ խոհեմության սահմաններից:

Մարդկանց վարքն ու բարքերը բնորոշող գիտությունները, ինչպիսիք սին փիլիսոփայությունն ու աստվածաբանությունն են, միջամտում են

ամենուր. մեր գործերի ու զբաղմունքների մեջ չկա մի բան (որքան էլ այն անձնական ու նվիրական լինի), որ կարողանա թաքնվել նրանց սեեռուն հայացքներից ու նրանց դատից: Նրանցից կարողանում են խուսափել լոկ այն մարդիկ, որոնք խնամքով պահպանում են իրենց ազատությունը: Այդպիսին են այն կանայք, որոնք տրամադրում են իրենց գեղեցկություններն ամեն մի ցանկացողի, սակայն ամոթը չի թողնում նրանց դիմել բժշկի: Եվ այսպես, ես ուզում եմ այդ գիտությունների անունից խրատել ամուսիններին (եթե ցակավին գտնվեն այնպիսիք, որ ամուսնական կյանքում էլ անզուսպ կիրք են դրսևորում), որ անգամ իրենց կանանց հետ մերձեցումից ճաշակած վայելքներն արժանի են պարսավանքի, եթե նրանք մոռանում են պատշաճ շափի մասին, և որ օրինական ամուսնության մեջ նույնպես կարելի է ընկնել անառակության ու սանձարձակության գիրկը, ինչպես անհավատարիմ կապի ժամանակ: Այն անամոթ քնքշանքները, որոնց մղում է մեզ կրքի առաջին բռնկումը, ոչ միայն լի է անվայել բաներով, այլև կործանում է բերում մեր կանանց: Ավելի լավ է թող մեկ ուրիշը նրանց անամոթություն սովորեցնի: Նրանք առանց այդ էլ միշտ պատրաստ են ընդառաջել մեզ: Ինչ վերաբերում է ինձ, ես հետևել եմ լոկ բնական ու սովորական այն հակումներին, որ հենց բնությունն է մեզ ներշնչում:

Ամուսնությունը սուրբ ու բարեպաշտ միություն է, ասա թե ինչու նրա տված վայելքները պետք է լինեն զուսպ, լուրջ, նույնիսկ, սրոշ շափով, խիստ: Այդ կիրքը պետք է լինի խղճմտանք ունեցող և հպարտ: Եվ քանի որ նման միության հիմնական նպատակը որդեծնությունն է, ոմանք կասկածում են, թե թուլլատրելի է արդյոք մերձեցումը կուրջ հետ այն դեպքերում, երբ մենք չենք կարող բնական պտուղների հույս ունենալ, օրինակ, երբ կինը հղի է կամ երբ անցել է նրա տարիքը: Պլատոնի կարծիքով, դա նույնն է, ինչ սպանությունը: Որոշ ժողովուրդներ և, ի միջի այլոց, մահամեղականները խորշում են հղի կանանց հետ սեռական հարաբերություններից, ուրիշները՝ երբ կինը դաշտան է: Զենսրիան¹⁰ ամուսնուն մոտ էր թողնում լոկ մեկ անգամ, իսկ ապա հղիության ամբողջ ընթացքում թուլլ շէր տալիս դիպչել իրեն, և միայն, երբ հասնում էր վերստին հղիանալու ժամանակը, ամուսինը կրկին գալիս էր նրա մոտ: Ահա ամուսնության մի գովելի ու ազնիվ օրինակ:

Այդ զվարճության համար տանջահար լինող և անկշտում ոմն բանաստեղծից Պլատոնը փոխառել է մի այսպիսի պատմություն: Մի անգամ Յուպիտերն այնպես բռնկվեց կնոջը վայելելու ցանկությամբ, որ, համբերություն չունենալով սպասելու մինչև կինը կպառկեր մահճին, նրան զցեց հատակին: Ճաշակած լիակատար հաճույքից նա բոլորովին

մոռացավ այն որոշումները, որ աստվածների հետ համատեղ հենց նոր էր ընդունել Լեփնային պապատական խորհրդում: Դրանից հետո նա պարծինում էր, թե այդ անգամ իր համար նույնքան չավ էր, որքան այն ժամանակ, երբ կնոջ և իր ծնողներից թաքուն, նրան գրկել էր կուսութանից¹¹:

Պարսկաստանի թագավորները թեև իրենց կանանց հրավիրում էին խնջույքների, բայց երբ գինուց ցանկություններն արթնանում էին և նրանց սկսում էր թվալ, թե քիչ հետո ստիպված կլինեն սանձազերծել իրենց կրքերը, կողակիցներին ուղարկում էին կանանց հարկարածինը, որպեսզի մասնակից չդարձնեն իրենց անզուսպ հեշտանքին, և նրանց փոխարեն կանչում էին ուրիշ կանանց, որոնց հետ պարտավոր չէին նման հարգանքով վերաբերվել:

Ոչ ամեն հաճույք և ոչ ամեն ողորմածություն է միատեսակ վայել տարբեր գիրք թունեցող մարգկանց: Էպամինոնգասը հրամայեց զնգան նետել մի ցոփ պատանու, Պելոպիդասը խնդրեց ի սեր իրեն ազատ արձակել բանտարկյալին, Էպամինոնգասը մերժումով պատասխանեց, բայց զիջեց նույն բանը խնդրող իր ընկերուհիներից մեկի միջնորդությանը: Նա իր վարքագիծը բացատրեց հետևյալ կերպ. դա ընկերուհու նկատմամբ ցուցաբերած ողորմածությունն էր, բայց արժանի չէր զորապետին: Սոֆոկլեսը, որ Պելոպիդեսի հետ միաժամանակ պրեստոր էր, մի անգամ տեսավ կողքով անցնող մի գեղեցիկ պատանու: «Տես ի՞նչ հմայիչ պատանի է», — ասաց Պելոպիդեսին, որը պատասխանեց. «Նա կարող է ցանկալի լինել ուղածդ մեկի համար, բայց ոչ սյրեսորի, որը պետք է անարատ պահի ոչ միայն ձեռքերը, այլև աչքերը»:

Երբ էլիոս Վերոս կայսեր կինն սկսեց գանգատվել, թե նա ուրիշ կանանց հետ սիրային զվարճություններ է որոնում, նա պատասխանեց, որ ինքը դա անում է հանգիստ իղճով, քանզի ամուսնությունն արժանապատվությամբ չի, ազնիվ միությունն է, այլ ոչ թե թեթևաոլիկ ու վավաշուտ մի կապ: Մեր հին եկեղեցական հեղինակները նույնպես գովեստով են հիշում այն կնոջ մասին, որն ապահարզան տվեց ամուսնուն, քանզի չէր կամենում հանդուրժել նրա շափազանց հեշտայից ու անամոթ քնքշանքները: Եվ, ասհասարակ, չկա մի թույլատրելի ու օրինական վայելք, որում ավելորդություններն ու անժողովակալությունը շարժանան մեր պարսավանքին:

Սալայն, խղճով ասած, որքան դժբախտ կենդանի է մարդը: Հենց բնությունը նրան ստեղծել է այնպես, որ նրա համար մատչելի է միայն մեկ լիակատար ու ամբողջական վայելք, սակայն նա ինքը ձգտում այն կրճատել իր անհեթեթ խմաստակումներով: Երևի, նա ղեռկա

վականաչափ խղճուկ չէ, եթե գիտակցաբար ու դիտավորյալ չի սառստկացնում իր դառը վիճակը.

Fortunae miseras auximus arte vias*.

Մարդկային իմաստնությունը միանգամայն հիմաքաբար է վարվում, փորձելով սահմանափակել մեզ տրված վայելքների քանակն ու քաղցրությունը (ճիշտ այնպես, երբ այն ջանադրաբար ու բարեհաճությամբ գործի է դնում իր խորամանկությունները, որպեսզի հաբթի ու մի փոքր զարդարի տառապանքները, բթացմի մեր զգայունությունը դրանց նկատմամբ): Եթե ես որևէ աղանդի առաջնորդ լինեի, կընտրեի մեկ ուրիշ, ավելի բնական ճանապարհ, որը հիրավի թե՛ ավելի հաբմար է, թե՛ ավելի արդար, և ես, գուցե կկարողանայի մարդկանց տանել այդ ճանապարհով:

Այնինչ, մեր և՛ մարմնի, և՛ հոգու բժիշկները, ասես խոսքները մեկ արած, չեն գտնում ոչ ապաքինման ուրիշ ճանապարհ, ոչ ուրիշ դեղամիջոցներ հոգու և մարմնի հիվանդությունների դեմ, բացի տառապանքներից, ցավից ու պատիժներից: Հսկումները, այսպես, մազազգեստը, արտաքսումը հեռավոր ու ամառի վայրեր, ցմահ բանտարկությունը, խառազանումը և այլ տանջանքներ մտցվեցին հենց դրա համար և ըստ որում պարտադիր պայմանով, որ լինեն ամենախսկական տանջանքներ և մենք ամենայն սրությամբ զգանք դրանց դառնությունը և որ շատացվի այնպես, ինչպես կատարվեց ոմն Գալլիոնի¹³ հետ, որը, արտաքսված լինելով Կեսթոս կղզին, ինչպես այնտեղից հայտնեցին Հուսոմ, ապրում էր իր հաճույքներով, և այն, ինչ սահմանված էր որպես պատիժ, նրա համար դարձավ բարօրություն, այդժամ սենատը, փոխելով նախկինում բնդունած որոշումը, նրան վերադարձրեց իր կնոջ մոտ և հրամայեց տանից չբացակայել, որպեսզի նա իսկապես զգար, որ պատժված է: Քանզի, ում պասը բերում է առողջություն և կայտառություն, ում ձուկն ավելի շատ է դուր գալիս, նրա համար պասն արդեն հոգին տաքիննող միջոց չի լինի, և ճիշտ նույն ձևով՝ մարմինը բուժելիս դիպերն օգտակար ազդեցություն չեն ունենում այն մարդու վրա, ով դրանք բնդունում է պատրաստակամությամբ ու հաճույքով: Դառնասամն ու զղվանքը, որ հարուցում են դեղերը, դրանց բուժիչ հատկություններին օժանդակող հանգամանքներ են: Այն մարդը, որ կարողանում է խաշնդեղն օգտագործել որպես սովորական կերակուր, դրանից ոչ մի օգուտ չի ստա-

* Մենք արհեստականորեն երկարացրել ենք ճակատագրի տխրալի ճանապարհները¹² (լատ.):

նա. անհրաժեշտ է, որ խաշնդեղը խիստ գրգռի ստամոքսը, լոկ այդ դեպքում այն կարող է օգտակար ազդեցություն ունենալ: Այստեղից հետևում է մի ընդհանուր կանոն, որ ամեն բան ամոքվում է իր հակադրությամբ, բանգի միայն ցավն է բուժում ցավը:

Սա հանգեցնում է մեկ այլ, միանգամայն տարօրինակ կարծիքի, թե իբր երկնքին ու բնությանը կարելի է գոհացնել արյունահեղությամբ ու մարդասպանությամբ, ինչպես ընդունում էին բոլոր կրոնները: Գեոևս մեր հայրերի ժամանակներում Մուրադը¹⁴, գավթելով Կորնթոսի պարանոցը, իր հոր հոգու համար զոհաբերեց վեց հարյուր երիտասարդ հույների, որ նրանց արյունը թողություն բերի հանգուցյալի մեղքերին: Եվ արդեն մեր օրերում հայտնաբերված, մեր երկրների համեմատությամբ այդքան մաքուր և կուսական նոր երկրներում նման սովորույթն ամենուր տարածված է¹⁵, նրանց բոլոր կուռքերը խեղդվում են մարդկային արյան մեջ, ընդ որում հաճախադեպ են աներևակայելի դաժանության օրինակները: Զոհերին ողջ-ողջ խորովում են և կիսախորով դուրս քաշում բովարանից, որ հանեն սիրտն ու փորոտիքը: Մյուսներին, այդ թվում նույնիսկ կանանց, ողջ-ողջ մաշկում են ու այդ տակավին արյունոտ մաշկը փաթաթում իրենց և ուրիշների վրա: Եվ մենք այդ ժողովուրդների մոտ տոկունության ու արիության օրինակների ենք հանդիպում ոչ պակաս, քան մեզ մոտ: Քանզի զոհաբերության համար նախատեսված այդ թշվառները՝ ծերերը, կանայք, երեխաները ծիսակատարությունից առաջ շրջում են տները, ողորմություն հավաքում, որպեսզի զոհաբերության ժամանակ նվեր բերեն, և այդ սպանդանոցն են ներկայանում իրենց ուղեկցող ամբոխի հետ միասին պար գալով ու երգելով: Մեքսիկայի տիրակալի դեսպանները, Ֆեռնանդո Կորտեսին նկարագրելով իրենց տիրոջ հզորությունն ու մեծությունը, ամենից առաջ հայտնեցին, որ նա ունի երեսուն վասալ և յուրաքանչյուրը կարող է հարյուր հազար զինվոր ուղարկել, որ նա ապրում է աշխարհի ամենազեղեցիկ ու ամենաամուր քաղաքում, և վերջում ավելացրին, թե նրանից պահանջվում է տարեկան հիսուն հազար մարդ զոհաբերել աստվածներին: Նա հարևանությամբ ապրող որոշ մեծ ժողովուրդների դեմ անընդհատ պատերազմներ է մղում ոչ միայն իր երկրի երիտասարդությանը վարժեցնելու համար, այլև իր պետության մեջ ուսումնասիրելու զոհաբերություններ ապահովելու նպատակով, — ասում էին դեսպանները: Մի ուրիշ անդամ, նրանց քաղաքներից մեկում, Կորտեսի ժամանման առթիվ միանգամից զոհաբերվեց հիսուն մարդ: Պատմեմ նաև հեռևյալը. այն ժողովուրդները, որոնց Կորտեսը ջախջախել էր, իրենց պարտված ճանաչելով և ձգտելով ձեռք բերել նրա բարեկամությունը, ներկայացուցիչներ ուղարկե-

կեցին նրա մոտ: Դեսպանները, հանձնելով երեք տեսակի նվերներ, ասացին. «Տեր, ահա քեզ հինգ սարուկ: Եթե դու ահարկու աստված ես ու սնվում ես մսով ու արյունով, լափիր սրանց, և մենք քեզ ավելի կսիրենք, եթե դու մեղմաբարո աստված ես, ահա խունկ և փետուրներ, իսկ եթե դու մարդ ես, ընդունիր այս թռչուններն ու այս պտուղները»:

Գլուխ XXXI

ՍԱՐԴԱԿԵՐՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Պյուռոս արքան¹, ծովով անցնելով Իտալիա և տեսնելով իր դեմ ուղարկված հռոմեական զորքի մարտակարգը, ասաց. «Ես չգիտեմ, թե այստեղ ինչ բարբարոսներ են (քանզի հույներն այդպես էին անվանում բոլոր օտարերկրացիներին), բայց զորքի այն դասավորությունը, որ ես իմ առջև տեսնում եմ, ամենևին էլ բարբարոսական չէ»: Նույն բանն էին ասում նաև հույները Ֆլամինիոսի ուղարկած զորքի մասին², նույն կարծիքը հայտնեց նաև Փիլիպոսը, բլրի վրայից դիտելով իր երկրում Պուբլիոս Սուլպիցիոս Գալբալի³ խփած հռոմեական ճամբարի կարգն ու դիրքը: Դա ցույց է տալիս, թե որքան զգուշորեն պետք է վերաբերվել ընդունված կարծիքներին, ինչպես նաև, պետք է որևէ բանի մասին դատել, հենվելով բանականության, այլ ոչ թե ընդհանուր կարծիքի վրա:

Ինձ մոտ բավական երկար ժամանակ ծառայել է մի մարդ, որը տասը թե տասներկու տարի անցկացրել է արդեն մեր օրերում հայտնագործված նոր աշխարհում, նա ապրել է այն վայրերում, ուր ափ է իջել Վիլգանիոնը⁴, որն այդ երկիրն անվանել էր Հարավքեեռային Ֆրանսիա: Հավանաբար, այդ անծայրածիր երկրի հայտնաբերումը միանգամայն կարևոր է: Սակայն, ես չէի կարող երաշխավորել, թե ապագայում չի հայտնագործվի մեկ ուրիշը, չէ որ մեզանից անհամեմատ ավելի գիտուն բազմաթիվ մարդիկ են սխալվել այդ գործում: Բայց ես երկյուղում եմ, թե մեր աչքերն ավելին են փափագում, քան կարող է տեղավորել ստամոքսը, ինչպես նաև մեր հետաքրքրասիրությունը գերազանցում է մեր հնարավորություններին: Մենք ճանկում ենք կատարելապես ամեն ինչ, սակայն մեր որսը քամին է:

Պլատոնի մոտ Ատլոնը⁵ կրկնում է Եգիպտոսի Սիս քաղաքի քրմերից լսածը: մի ժամանակ, դեռևս նախքան ջրհեղեղը, եղել է Ատլանտիդա անունով մի մեծ կղզի, որն ընկած է եղել օվկիանոսի հետ Զիրրալթարի նեղուցի միացման տեղից ուղիղ դեպի արևմուտք: Այդ կղզին ավելի մեծ է եղել, քան Աֆրիկան ու Ասիան միասին վերցրած, և այդ

երկրի թագավորները, որ տիրում էին ոչ միայն կղզուն, այլ հաստատվել էին նաև մայր ցամաքում (այնպես որ նրանք իշխում էին Աֆրիկայում ընդհուպ մինչև Եգիպտոս, իսկ Եվրոպայում՝ մինչև Տոսկանա), հղացան ներխուժել նույնիսկ Ասիա և հնազանդեցնել այն ժողովուրդներին, որոնք բնակվում էին Միջերկրական ծովի ափերին, մինչև այն ծոցը, որ հայտնի է որպես Մեծ ծով⁶։ Այդ նպատակով նրանք անցան Իսպանիա, հատեցին Գաղղիան, Իտալիան և հասան մինչև Հունաստան, որտեղ նրանց շարժումը կասեցրին աթենացիները։ Սակայն որոշ ժամանակ անց և նրանց, և աթենացիներին, և նրանց կղզին կլանեց ջրհեղեղը։ Միանգամայն հնարավոր է, որ ջրի հասցրած այդ սոսկալի ավերածությունները բազմաթիվ անսովոր փոփոխություններ են մտցրել մարդու բնակության վայրերում, չէ որ գտնում են, թե ծովն է Սիցիլիան կտրել Իտալիայից,

Haec loca, vi quondam et vasta convulsa ruina,
Dissiluisse ferunt, cum protinus utraque tellus
Una foret*;

Կիպրոսը՝ Սիրիայից, նեզրեպոնտոս կղզին⁸ մայրցամաքային Բեոտիայից և, ընդհակառակը, միացրել է նախկինում բաժան ուրիշ տարածքների, նրանց միջև եղած խորությունները լցնելով ավազով ու տիղմով.

sterilisque diu palus aptaque remis
Vicinas urbes alit, et grave sentit aratrum**.

Սակայն, ըստ երևույթին, դա չէ վերջերս մեր հայտնագործած Նոր աշխարհը, քանզի վերոհիշյալ կղզին համարյա սահմանակից է եղել Իսպանիային, և դժվար է հավատալ, թե ջուրը կարող էր ողողել ավելի քան հազար երկու հարյուր լյո տարածք ունեցող երկիրը, բացի այդ էլ, մեր ժամանակվա ծովագնացների հայտնագործությունները ճշտիվ պարզել են, որ դա եղել է ոչ թե կղզի, այլ մայր ցամաք, որը մի կողմից սահմանակցել է Արևելյան Հնդկաստանին, իսկ մյուս կողմից՝ թե մեկ, թե մյուս բևեռներին հարող տարածքներին, կամ, եթե այնուամենայնիվ այն չի սահմանակցել դրանց, սույա բաժանված է եղել այնպիսի փոքր նեղուցով, որ դա հիմք չի տալիս նորահայտ երկիրն անվանել կղզի¹⁰։

* Ասում են, այդ տարածքները ժամանակին իրարից անջատվել են մեծ ու կործանարար երկրաշարժի պատճառով, իսկ նախկինում դա միասնական երկիր է եղել? (լատ.):

** Եվ նախկինում անպտուղ ծովալճակը, ուր նավեր էին լողում, այժմ փորված, անողոր դուխանով, կերակրում է հարևան քաղաքները⁹ (լատ.):

Հավանաբար, այդ երկու վիթխարի մարմիններին, ինչպես և մեզ, հատուկ է երկու ձևի շարժում՝ բնական և ջղաձգային: Երբ ես հիշում եմ այն փոփոխությունները, որ, կարելի է ասել, աչքիս առաջ կատարել է իմ հարազատ Գորգոնը աջ ափին հոսանքն ի վար, և այն, որ քսան տարում հունն այնքան է տեղաշարժվել, որ ողողել է շատ կառույցների հիմքերը, ես պարզ տեսնում եմ՝ շարժումն այստեղ ոչ թե բնական է, այլ ջղաձգային, քանզի, եթե այն առաջ էլ նման արագությունով տեղաշարժեր հունը և առաջիկայում էլ այդպես՝ հոսեր, ապա միայնակ կփոխեր ամբողջ աշխարհի տեսքը: Բայց գետերը, որպես կանոն, միշտ միատեսակ շեն հոսում. տեղաշարժվում են մերթ մի կողմ, մերթ մյուս, կամ էլ հին հունով են տանում իրենց ջրերը: Ես չեմ խոսում հանկարծակի հեղեղումների մասին, որոնց պատճառները մեզ քաջ հայտնի են: Մեդոնում¹¹ ծովն ավազը քշել լցրել է եղբորս՝ պարոն գ'Արսակի տարածքը, երեւում են միայն տանիքների կատարները, նրանց վարձակալած հողամասերն ու մշակած դաշտերը դարձել են աղքատիկ արոտավայրեր: Այդ վայրերի բնակիչներն ասում են, թե մի որոշ ժամանակից ծովն այնքան արագ է բարձրանում, որ իրենք արդեն չորս լյո մերձափնյա հողեր են կորցրել: Այդ ավազներն, ասես, նրա զորաբնակարանատերը լինեն, մենք տեսնում ենք դրանց վիթխարի կույտերը, որ շարժվում են ծովից կես լյո առաջ ընկած, նվաճելով ցամաքը:

Հին ժողովուրդների մեկ այլ վկայություն, որի հետ նույնպես ուզում են կապել նոր աշխարհի հայտնագործությունը, մենք գտնում ենք Արիստոտելի մոտ, եթե իհարկե այն գրքույկը, որտեղ պատմվում է շլաված հրաշքների մասին, իսկապես նրանն է¹²: Այնտեղ նա պատմում է, թե մի քանի կարթագենցիներ, անցնելով Զիրբալթարի նեղուցը և դուրս գալով Աալանսյան օվկիանոս, բոլոր մայր ցամաքներից հեռու երկար նավարկելուց հետո վերջապես հայտնաբերեցին մի մեծ բարեբեր կղզի, որն ամբողջովին ծածկված էր անտառներով և ողողվում էր ջրառատ ու խոր գետերով, հետագայում թե նրանք, թե նրանց հետևից ուրիշները, հրապուրվելով այդ կղզու գեղեցկությամբ ու քերթիսությամբ, իրենց կանանց ու երեխաների հետ մեկնեցին այնտեղ և սկսեցին տնավորվել: Սակայն, կարթագենի տիրակալները, տեսնելով, որ իրենց երկիրը կամաց-կամաց ամաչանում է, հրապարակեցին մի խիստ հրաման, որով մահվան ապառնալիքի տակ բոլորին արգելվում էր այնտեղ վերաբնակվել, նույն հրամանով նրանք այնպիսի քշեցին նախկինում բոլոր վերաբնակվածներին, վախենալով, թե վերջիններս կբազմանան և իրենց կճրնշեն ու կավերեն իրենց պետությունը: Սակայն Արիստոտելի այս պատ-

մությունը ևս ոչ մի առնչութիւն չունի վերջերս հայտնագործված երկրորդների հետ:

Այն ծառան, որի մասին ես խոսում եմ, հասարակ և խավարամիտ մարդ էր, իսկ դա հենց ցուցմունքների հավաստիութեան անհրաժեշտ պայմաններից մեկն է, քանզի ավելի խորաթափանց միտք ունեցող մարդիկ, ճիշտ է, զննում են ավելի մանրակրկիտ և տեսնում են ավելի շատ, սակայն հակված են ամեն ինչին տալ իրենց մեկնաբանութիւնը, և, ցանկանալով բարձրացնել դրա գինն ու համոզել լսողներին, չեն կարող իրենց զսպել, որ, թեկուզ մի քիչ, շաղավաղեն ճշմարտութիւնը, նրանք երբեք երևույթներն այնպես չեն պատկերում, ինչպիսին դրանք կան, փոփոխում և չափազանցում են համապատասխան այն բանին, թե դրանք ինչպես են թվացել իրենց, և իրենց կարծիքը ծանրակշիռ դարձնելու, ձեզ իրենց կողմը թեքելու նպատակով նրանք որոշ բաներ հորինում են, այսպես ասած, ընդլայնելով և երկարացնելով ճշմարտութիւնը: Այստեղ պետք է կամ բացառիկ բարեխիղճ, կամ այնքան հասարակ մարդ, որի հեքիաթներ հորինելու և հնարովի բաներին հավաստիութեան տեսք տալու կարողութիւնը գերազանցի նրա ընդունակութիւններին, և ընդհանրապես, անկանխակարծ մտքերի տեր մարդ: Հենց այդպիսին էր իմ ծառան: Բացի այդ, նա հաճախ ինձ մոտ էր բերում նավաստիների ու վաճառականների, որոնց հետ ծանոթացել էր իր ճանապարհորդութեան ժամանակ: Եվ այսպես, ինձ միանգամայն գոհացնում են այն տեղեկութիւնները, որ նրանք են հաղորդել, և ես հարցուփորձ չեմ անի, թե այդ բաների մասին ինչ են ասում տիեզերագիրները:

Մեզ պետք են աշխարհագրագետներ, որոնք ճշտորեն կնկարագրեն այն վայրերը, ուր եղել են: Սակայն մեր նկատմամբ ունենալով այն առավելութիւնը, որ սեփական աչքով տեսել են, օրինակ, Պաղեստինը, նրանք աշխատում են օգտվել այդ առավելութիւնից և պատմել նաև աշխարհում ամեն ինչի մասին: Ես կուզենայի, որ ոչ միայն այս, այլև մյուս բոլոր բնագավառներում յուրաքանչյուր ոք գրեր լոկ այն, ինչ ինքը գիտե, և այնքան, որքան ինքը գիտե, քանզի մեկը կարող է շատ ստույգ տեղեկութիւններ ունենալ որևէ դեպքի կամ աղբյուրի հատկութիւնների մասին, որոնք, գուցե, անձամբ տեսել է, բայց դրա հետ մեկտեղ շիմանալ այն ամենը, ինչ հայտնի է յուրաքանչյուրին: Սակայն փոխանակ շրջանառութեան մեջ գնելու իր գիտելիքների շնչին մասը, նա անպայման կսկսի գրել մի ամբողջ բնագիտական պատմութիւն: Այս թերութիւնը ծնում է բազմաթիվ անհարմարութիւններ միանգամայն կարևոր բաներում:

Եվ այսպես, ես դատում եմ (որպեսզի, վերջապես, վերագառնամ իմ

նյութին), որ այդ ժողովուրդների մոտ, համաձայն նրանց մասին ինձ պատմածի, չկա բարբարոսական ու վայրի ոչինչ, եթե բարբարոսություն չհամարենք այն, ինչն անսովոր է մեզ համար: Չէ որ, անկեղծ ասած, մեզանում հավանաբար, չկա ճշմարիտի ու բնականի այլ շափանիչ, քան մեզ համար օրինակ ու նմուշ ծառայող կարծիքներն ու մեր երկրի սովորությունները: Այստեղ միշտ ամենակատարյալ կրոնն է, ամենակատարյալ պետական կարգը, ամենակատարյալ ու քաղաքակիրթ սովորությունները: Նրանք վայրի են այնպես, ինչպես լավայրի են ազատ, բնականորեն աճող պտուղները. իրականում ավելի շուտ պետք էր վայրի անվանել այն պտուղները, որոնք մարդն արհեստականորեն ձևախեղել է, փոխելով նրանց բնական հատկությունները: Վայրեբուսակ պտուղներում լիովին պահպանվում են նրանց իսկական և առավել օգտակար հատկությունները, մինչդեռ արհեստականորեն մեր աճեցրած պտուղներում մենք այդ բնական հատկությունները միայն աղավաղել ենք, հարմարեցնելով մեր փշացած, վատ ճաշակին: Եվ այնուամենայնիվ, նույնիսկ մեր ճաշակով, մեր պտուղները համով ու հոտով զիջում են այդ երկրների ոչ մի խնամք չտեսած պտուղներին: Եվ հիմք էլ չկա, որ արվեստը թեկուզ մի բանում դերազանցի մեր մեծ ու ամենակարող մայր բնությունը: Մենք մեր հնարանքներով այնքան ենք ծանրաբեռնել նրա ստեղծածի գեղեցկությունն ու հարստությունը, որ, կարելի է ասել, գրեթե խեղճել ենք նրան: Բայց ամենուր, երբ նա իր մաքրությունը բացվում է մեր աչքի առաջ, սուշեցուցիչ ուժով խայտառակության է մատնում մեր բոլոր ապարդյուն ու հանդուգն նկրտումները.

Et veniunt hederæ sponte sua melius
 Surgit et in solis formosior arbutus antris,

 Et volucres nulla dulcius arte canunt*

Մեր բոլոր ջանքերը չեն կարող վերարտադրել նույնիսկ ամենափոքրիկ թռչնակի բույնը, նրա շինվածքը, գեղեցկությունն ու կառուցվածքի նպատակահարմարությունը, ինչպես նաև, խղճուկ սարդի ոստայնը: Ամեն քան ստեղծում է կամ բնությունը, կամ դիպվածը, կամ մարդու արվեստը, ասում է Պլատոնը: Առաջինն ու երկրորդը՝ ստեղծում են ամենամեծերն ու սքանչելիները, վերջինը՝ ամենաաննշաններն ու անկատարները¹⁴:

* Բաղեղն ավելի լավ է աճում, երբ անխնամ է, թփուտն ավելի գեղեցիկ է ամառի անձամբներում... թռչուններն ամենամեծարվեստ երգիչներից քաղցր են երգում¹³ (լատ.):

Եվ այսպես, այդ ժողովուրդներն ինձ թվում են բարբարոս սոսկ այն իմաստով, որ նրանց խելքը տակավին քիչ է մշակված և նրանք դեռևս շատ մոտ են նախաստեղծ անմիջականությունն ու պարզությունը: Նրանք տակավին կառավարվում են բնական, մեր օրենքներով՝ զրեթե չիսեղաթյուրված օրենքներով: Նրանք դեռևս այնքան ազնիվ են, որ ես երբեմն ափսոսում եմ, թե ինչու նրանց մասին տեղեկությունները մեզ չեն հասել ավելի վաղ, այն ժամանակներում, երբ ապրում էին մարդիկ, որոնք կարող էին այդ մասին դատել ավելի լավ, քան մենք: Ես ափսոսում եմ, որ նրանց մասին ոչինչ չեն իմացել ոչ Լիկուրգոսը, ոչ Պլատոնը, քանզի այն, ինչ մեր աչքով տեսնում ենք այդ ժողովուրդների մոտ, ըստ իս, գերազանցում է ոչ միայն բոլոր պատկերները, որոնցով պոեզիան զարդարել է ոսկե դարը, և մարդկության երջանկության մասին նրա բոլոր հնարանքներն ու երազները, այլև նույնիսկ փիլիսոփայության բուն պատկերացումներն ու ցանկությունները: Փիլիսոփաներն ի վիճակի չեն եղել պատկերացնել այն պարզ ու անբասիր անմիջականությունը, որ մենք տեսնում ենք սեփական աչքով, նրանք չէին կարող հավատալ, թե մեր հասարակությունը կարող է գոյություն ունենալ առանց մարդու վրա դրվող ամեն տեսակ արհեստական սահմանափակումների: Ես Պլատոնին կասեի, ահա մի ժողովուրդ¹⁵, որի մոտ չկա ոչ առևտուր, ոչ զիր, ոչ հաշիվ, իշխանության կամ մնացածների նկատմամբ գերազանցության ոչ մի նշան, ստրկության ոչ մի հետք, ոչ ունևարություն և ոչ աղքատություն, ոչ ժառանգություն, ոչ դույքաբաժանում. պարապությունից բացի ոչ մի զբաղմունք, ոչ մի առանձնահատուկ հաբզանք ազգակցական կապերի նկատմամբ, ոչ հագուստ, ոչ երկրագործություն, ոչ մեծաղների, դինու կամ հացի օգտագործում: Չկան նույնիսկ խարեություն, դավաճանություն, կեղծավորություն, ժլատություն, նախանձ, զազրախոսություն, ներում արտահայտող բառեր: Կատարելությունից որքան հեռու պիտի ճանաչեր նա իր հորինած պեսությունը: Viri a diis recentes*.

Hos natura modos primis dedit**.

Բացի այդ, նրանք ապրում են շատ հաճելի և մեղմ կլիմա ունեցող երկրում, այնպես որ, ինչպես ինձ ասել են ականատեսները, այնտեղ շատ հազվադեպ է հիվանդ մարդ պատահում, նրանք ինձ համոզում էին, թե այդ երկրում ոչ մի անգամ չեն տեսել մի ծերունի, որն ունենար դո-

* Սրանք աստվածների ձեռքերից հենց նոր իջած մարդիկ էն¹⁶ (լատ.):

** Այսպիսին են բնության սահմանած առաջին օրենքները¹⁷ (լատ.):

ղացող ձեռքեր, թարախածոր աչքեր, կորացած մեջք կամ անատամ բերան: Նրանք ապրում են ծովափին, և մայր ցամաքի կողմից պաշտպանված են վիթխարի, բարձր լեռներով, ըստ որում լեռների ու ծովի միջև կա մոտ հարյուր լյո լայնութուն ունեցող մի գոտի: Նրանց մոտ առատ է ձուկն ու մեր կենդանիներից միանգամայն տարբեր, դանազան կենդանիների միսը և այդ սնունդը նրանք ընդունում են առանց որևէ համեմունքի, միայն խորովելով: Նրանց մոտ հայտնված ձիուն նստած առաջին մարդը, որին գիտեին իր նախորդ ճանապարհորդութուններից, այնպիսի աննկարագրելի սարսափ է հարուցել, որ նետերի տարափով սպանել են նրան, շհասցնելով ճանաչել: Նրանց կացարանները շատ երկար են և տեղավորում են երկու հարյուրից երեք հարյուր հոգի, դրանք ծածկած են մեծ ծառերի կեղևով, ընդ որում շերտաձև կեղևակտորները մի ծայրով հենվում են գետնին, իսկ մյուսով՝ միանում իրար, գոյացնելով կատար և պահելով միմյանց, նման մեր կալսատեղերին, որոնց ծածկերն իջնում են մինչև գետին, միաժամանակ ծառայելով նաև որպես կողմնալին պատեր:

Նրանց մոտ կա մի այնպիսի ամուր փայտ, որից սրեր ու միս խորովելու շամփուրներ են պատրաստում: Նրանց անկողինները բամբակե գործվածքից են, և կախվում են առաստաղից, այնպես, ինչպես մեզ մոտ նավերի վրա է ընդունված, ըստ որում ամեն ոք ունի իր սեփական անկողինը, քանի որ նրանց մոտ կինն ամուսնուց առանձին է քնում: Նրանք վեր են կենում արևածագին և անմիջապես սկսում են սնվել, ուտելով միանգամից ամբողջ օրվա համար, քանզի ուրիշ հացկերույթ նրանց մոտ չի չիսում: Ըստ որում, նրանք բոլորովին չեն խմում, ինչպես արևելքի որոշ ժողովուրդներ, որոնք, Սուգայի¹⁸ ասելով, ուտելիս երբեք չեն խմում, բայց դրա փոխարեն օրվա ընթացքում խմում են մի քանի անգամ և շատ: Նրանց ըմպելիքը ինչ-որ արմատի թուրմ է, և իր դուլնով հիշեցնում է մեր կարմիր թուլլ գինին: Նրանք այն խմում են միայն գոլ վիճակում, պահում երկու-երեք օրից ոչ ավել, թուրմն ունի փոքր-ինչ տոխպ համ, ամենևին չի հարբեցնում և օգտակար է ստամոքսին, սակայն, անսովոր մարդու վրա ազդում է որպես լուծողական, իսկ սովոր մարդու համար դա շատ հաճելի ըմպելիք է: Հացի կոխարեն նրանք օգտագործում են ինչ-որ սպիտակ նյութ, որը հիշեցնում է շաքարով եփած գինձ¹⁹: Ես համտեսել եմ, այն բաղադրանք համ ունի: Նրանք ամբողջ օրը պարում են: Երիտասարդները որսի են դնում, գազանների որսն անում են աղեղնազենով: Այգ ընթացքում կանանց մի մասը զբաղվում է նրանց ըմպելիքը տաքացնելով, և դա նրանց պխավոր զբաղմունքն է: Ծերունիներից մեկն՝ առավոտները, նախքան մյուս-

ները կսկսեն ուտել, տան բոլոր բնակիչներին քարոզ է կարդում, քայլելով մի ծայրից մյուսը մրմնջալով միևնույն բանը, մինչև որ մոտենա բոլորին (չէ որ նրանց շինություններն ունեն հարյուր քայլ երկարություն): Նա մարդկանց խրատում է միայն երկու բան. խիզախություն թշնամիների դեմ կռիվներում և բարի զգացմունքներ իրենց կանանց հանդեպ, ըստ որում երբեք չի մոռանում կրկներգի նման ավելացնել, թե անհրաժեշտ է շնորհապարտ լինել կանանց, որոնք հոգ են տանում, որ իրենց ըմպելիքը լինի տաք ու համեղ: Շատերի և, մասնավորապես, ինձ մոտ կարելի է տեսնել այնտեղի անկողիների, սյարանների, սրերի ու փայտե դաստակապանների (որոնցով կռիվների ժամանակ պաշտպանում են իրենց դաստակը), ինչպես նաև երկար, մի ծայրը փորած եղեգնափայտի նմուշներ, որը փշելով արձակում են հնչյուններ, որի տակ պարում են: Նրանք սափրում են դեմքերը, զլուխներն ու ամբողջ մարմինը, ըստ որում մեզանից մաքուր, թեպետ նրանց ածելիները քարից են կամ փայտից: Այդ մարդիկ հավատում են հոգու անմահությանը և ենթադրում, որ աստվածների առաջ դրան արժանացածները դռնվում են երկնքի այն կողմում, որտեղից ծագում է արևը, իսկ դատապարտվածները՝ այնտեղ, ուր մայր է մտնում:

Նրանց մոտ կան յուրատեսակ քրմեր ու մարգարեներ, որոնք, սակայն, շատ հազվադեպ են երևում ժողովրդին, քանզի ապրում են ինչ-որ տեղ լեռներում: Նրանց հայտնվելու պատվին կազմակերպվում է մեծ տոնախմբություն, որին հավարվում են մի քանի գյուղերի բնակիչներ (իմ նկարագրած յուրաքանչյուր կացարան իրենից ներկայացնում է մի գյուղ, և դրանք ընկած են միմյանցից մոտ մեկ ֆրանսիական լյո հեռավորության վրա): Այդ մարգարեն ճառ է ասում բնակիչների առաջ, կոչելով նրանց առաքինության ու պարտքի կատարման, ասենք, նրանց ամբողջ բարոյախոսությունը հանգում է երկու պատգամի. կովում լինել խիզախ և սիրել իրենց կանանց: Այդպիսի մարգարեն գուշակում է նրանց ապագան և բացատրում, թե իրենց ձեռնարկումներից ինչպիսի արդյունք կարելի է սպասել, զրդում է նրանց կովի, կամ, ընդհակառակը, հետ պահում այդ մտքից: Նա պետք է ճիշտ գուշակի, որովհետև, եթե իր ասածը չկատարվի նրան կհայտարարեն կեղծ մարգարե և, բռնելով, հազար կտոր կանեն: Ուստի, այն մարգարեն, որը սխալվել է իր գուշակություններում, աշխատում է ընդմիջտ կորչել իր համերկրացիների աչքից:

Մարգարեության ձիրքն ասածո պարզն է. ահա թե ինչու գրաչարաշահումը մի խաբեություն է, որը ենթակա է պատժի: Երբ սկյութացիների մոտ պատահում էր, որ իրենց մարգարեի գուշակությունը չէր

արդարանում, նրա ոտ ու ձեռք կապում էին և դցում ցախ փոած եղա-
սալլի մեջ, իսկ ապա դրա վրա այրում: Ներել կարելի է այն մարդկանց
սխալները, որոնք դատում են մարդկային բանականության և ընդունա-
կաթյունների սահմաններում գտնվող բաների մասին, եթե նրանք ուժե-
րի ներածին չափ արել են ամեն ինչ: Բայց խոստումը չկատարելու և հան-
դուզն խաբեության համար արդյո՞ք չպետք է պատժել նրանց, ովքեր
պարծենում են մարդկային բանականության ուժը գերազանցող արտա-
սովոր ընդունակություններով:

Նրանք պատերազմներ են մղում մայր ցամաքի խորքերում, սարե-
րից այն կողմ ապրող ժողովուրդների հետ, ընդ որում կռիվ են գնում
բոլորովին մերկ, շունենալով այլ զենք, բացի նեա ու աղեղից կամ փայ-
տե սրերից, որոնց ծայրերը սրած են մեր նիզակների երկաթե ծայրա-
կալների նման: Ապշեցուցիչ է, թե որքան համառ են նրանց մարտերը,
որոնք երբեք չեն ավարտվում այլ կերպ, քան սարսափելի արյունահեղու-
թյամբ ու կոտորածով, քանզի նրանք չգիտեն ոչ վախ, ոչ փախուստ:
Ամեն մեկը որպես ավար բերում է իր սպանած թշնամու գլուխը և կա-
խում իր կացարանի մուտքի մոտ: Գերիների հետ նրանք երկար ժամա-
նակ լավ են վարվում, տրամադրելով բոլոր այն հարմարությունները,
ինչ կամենում են, բայց հետո գերու տերը հրավիրում է իր բաղմաթիվ
բարեկամներին ու ծանոթներին, պարանք կապելով գերու թևին և ծայրն
ամուր սեղմելով, նա հեռանում է մի քանի քայլ, որ գերու ձեռքն իրեն
չհասնի, իսկ լավագույն բարեկամին առաջարկում է բռնել նրա մյուս
թևը, ճիշտ նույն ձևով կապելով պարանք, որից հետո բոլոր հավաքված-
ների աչքի առաջ երկուսով սրահարում են նրան: Անելով դա, նրանք խո-
րովում են գերուն և բոլորը միասին ուտում, մսի կտորներ ուղարկելով
այն բարեկամներին, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել ներ-
կայանալ: Հակառակ ոմանց կարծիքի, նրանք դա անում են ոչ թե կշտա-
նալու համար, ինչպես հնում անում էին, օրինակ, սկյութացիները, այլ
դերագույն վրեժ իրականացնելու նպատակով: Եվ այն, որ դա իրոք այդ-
պես է, ապացուցվում է հետևյալով. տեսնելով, որ իրենց թշնամիների
հետ դաշն կնքած պորտուգալացիները գերեվարած իրենց ցեղակիցնե-
րին մահապատժի են ենթարկում այլ կերպ, այսինքն՝ մինչև դուակատեղը
թաղելով հողում և մարմնի բաց մասի վրա նետերի տարափ տեղաւում,
իսկ ապա կախելով, նրանք մտածեցին, թե ուրիշ աշխարհից իրենց մոտ
հայտնված այդ մարդիկ, որոնք իրենց հարեանների մեջ արմատավորել
էին նախկինում անհայտ բազում արատներ և, շարագործություններ անե-
լիս՝ ավելի հմուտ էին, քան նրանք, հավանաբար ոչ առանց հիմքի, կի-
րանում են վրեժի՝ այնպիսի տեսակ, որը, երևի, ավելի տանջալից է,

քան իրենց մոտ ընդունվածը, և ահա, նրանք սկսեցին հրաժարվել իրենց հին ձևից և անցնել նորին: Ինձ վշտացնում է ոչ թե այն, որ մենք նկատում ենք նման գործողությունների ամբողջ սարսափն ու բարբարոսությունը, այլ այն, որ, ըստ պատշաճի գնահատելով այդ մարդկանց մեղքերը, այսքան կույր ենք մեր մեղքերի նկատմամբ: Ես գտնում եմ, որ անհամեմատ ավելի մեծ բարբարոսություն է մարդուն լափել ողջ-ողջ, քան մեռած, ավելի մեծ բարբարոսություն է խոշտանգումներով ու տվայտանքներով ծվատել, մարմանդ կրակի վրա խորովել, շների ու խոզերի առաջ հոշոտելու նետել տակավին կենդանի զգայություններով օժտված մարմինը (իսկ մենք ոչ միայն կարգացել ենք այդ սոսկալի բաների մասին, այլև բուրրովին վերջերս եղել ենք դրանց ականատեսը²⁰, երբ այդպես էին անում ոչ թե հին ատելություններ քարացած թշնամիներին, այլ հարևաններին, իրենց համաքաղաքացիներին, և, որ ամենավատն է, քողարկվելով բարեպաշտությամբ ու կրոնով), քան խորովել մարդուն և ուտել այն բանից հետո, կրք նա մեռած է:

Քրիստիպոսն ու Ջենոնը՝ ստոիկյան դպրոցի հիմնադիրները, ենթադրում էին, թե դատապարտելի ոչինչ չկա այն բանում, որ կարիքի գեպում, ցանկացած ձևով օգտագործենք մեր դիակները, և նույնիսկ սընվենք դրանցով, հենց այդպես են վարվել մեր նախնիները, որոնք Ալեղիա քաղաքում²¹ պաշարված լինելով Կեսարի կողմից, որոշել են մեղմել այդ պաշարման հետևանքով առաջացած սովը, որպես սնունդ օգտագործելով ծերերի, կանանց և զենք բռնելու անընդունակ բուրբի մարմինները:

Vascones, fama est, alimentis talibus usi
Produxere animas*.

Մեր առողջությունը վերագարձնելու նպատակով բժիշկները նույնպես չեն ամաչում դիակներից պատրաստել տարբեր դեղամիջոցներ, նշանավելով դրանք մերթ խմելու, մերթ արտաքին գործածության համար²³, բայց ոչ ոք երբևէ չի ունեցել այնպիսի անբարոյական հայացքներ, որ արդարացնի դավաճանությունը, անազնվությունը, բռնակալությունը, դաժանությունը, աշխինքն՝ մեր սովորական մեղքերը:

Եվ այսպես, մենք, իհարկե, կարող ենք նոր աշխարհի բնակիչներին անվանել բարբարոսներ, եթե դատենք բանականության պահանջների տեսակետից, բայց ոչ հիմնվելով հենց մեզ հետ համեմատելու վրա, քանզի ուղածդ բարբարոսության մեջ մենք շատ ենք առաջ անցել նրան-

* Ասում են, գասկոնցիները ձման սնունդով երկարացրել են իրենց կյանքը²² (լատինացիները):

ցից: Նրանց պատերազմ վարելու եղանակը ազնիվ է ու առաքինի, և նույնիսկ ներելի ու ղեղեցիկ է այնքանով, որքանով ներելի ու գեղեցիկ կարող է լինել մարդկության այդ ախտը. նրանց պատերազմների համար հիմք է հանդիսանում բացառապես սխրագործության հակումը: Նրանք պատերազմ են սկսում ոչ նոր հողեր նվաճելու համար, քանզի տակավին վաղելում են բարեբեր կոսաական բնութեամբ, որն առանց նրանց ջանքերի այնպիսի առատութեամբ է մատակարարում կյանքի համար անհրաժեշտ ամեն բան, որ նրանց կարիք չունեն: Ընդհանրապես իրենց սահմանները: Նրանք այնպիսի օրհնյալ հողավեճակում են, երբ մարդը դեռևս իր բնական պահանջմունքներից ավելին ունենալու ցանկություն չունի, այն ամենը, ինչ գերազանցում է այդ պահանջմունքները, նրանց հարկավոր չէ: Մոտավորապես հասակավից բոլոր համախոհներին նրանք անվանում են եղբայրներ, փոքրերին՝ զավակներ, իսկ ծերերին՝ հայրեր: Այս վերջիններն իրենց ունեցվածքը, բացի այն ամենից, ինչ պարզևս է բնությունն իր ստեղծած էակներին լույս աշխարհ բերելով նրանց, ժառանգում են ամբողջ համայնքին, առանց բաժանման և առանց դրանց տիրելու որևէ այլ իրավունքի: Եթե հարևանները, անցնելով լեռները, հարձակվում են նրանց վրա և հաղթում, այսա հաղթողի ամբողջ ավարը միայն փառքն է և իր ուժի ու քաջության դերազանցության դիտակցումը. նրանք գործ չունեն պարտվածների ունեցվածքի հետ, վերադառնում են իրենց տիրույթները, ուր պակաս չունեն ոչ մի բանի, իսկ զլխավորը՝ այն մեծագույն բարիքի, որ ունեցածը վայելել ու դրանով բավարարվել կարողանալն է: Իրենց հերթին նույն կերպ են վարվում նաև հենց իրենք, երբ վիճակվում է հաղթող լինել: Նրանք գերիներից չեն պահանջում ուրիշ փրկագին, քան բարձրաձայն հայտարարել, թե իրենց պարտված են ճանաչում, սակայն մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում չի դառնվել մեկը, որ չգերազասեր մեռնել, քան խոսքով կամ գործով դուլզն ինչ ոտնահարեր քաջի պատիվը, և նրանց մեջ չեն հանդիպի մեկին, որը սպանվելու և կեր դառնալու ահից ներում հայցելու շափ նվաստանար: Նրանք գերիներին լիովին աղատ են պահում, որպեսզի կյանքն է՛լ ավելի քաղցր թվա, և շարունակ հիշեցնում են մոտալուտ մահվան, կրելիք տանջանքների, այդ նպատակով կատարվող նախապատրաստությունների մասին, այն մասին, թե ինչպես իրենք կտոր-կտոր կանեն և կլափեն նրանց խրախճանքի ժամանակ: Այդ ամենն արվում է միայն նրա համար, որ նրանցից կորզեն վախի և նվաստացման գոնե մի քանի բառ, կամ նրանց մեջ արթնացնեն փախչելու ցանկություն և, սասանելով ու կոտրելով նրանց տոկունությունը, դգան իրենց

գերազանցությունը նրանց հանդեպ: Քանզի, ըստ էության, հենց դրանում է իսկական հաղթանակը.

victoria nulla est

Quam quae confessos animo quoque subiugat hostes*.

Հնում հռոմեացիները՝ միանգամայն ուղղատեսչ մի ազգ, երբեք թշնամիներին չէին սպանում, եթե նրանք սկսում էին գթություն աղերսել: Սակայն, նրանցից կորզելով պարտության այդ խոստովանությունը, հունգարները, առանց վնաս հասցնելու, առանց փրկագնի բաց էին թողնում նրանց, առավելագույնը, խոստում վերցնելով, որ հետագայում այլևս երբեք չեն ելնի իրենց դեմ:

Շատ հաճախ թշնամուն գերազանցելու համար մենք պարտական ենք լինում արտաքին, պատահական առավելությունների, այլ ոչ թե մեր արժանիքներին: Ուժեղ ձեռքերն ու ոտքերը լավ են բեռնակրի համար, բայց ոչ մի առնչություն չունեն քաջության հետ, մեր կազմվածքն անհոգի և դուր մարմնական հատկանիշ է, եթե մեր հակառակորդը սայթաքել է կամ արևն է նրան շլացրել, դա ճակատագրի պարգևն է և ոչ ավելին, լավ սրամարտելը ոչ այլ ինչ է, քան գիտելիք ու արվեստ, որ կարող են յուրացվել վախկոտ ու չնչին մարդկանց կողմից: Մարդու գինն ու արժանիքը նրա սրտում և կամքի մեջ են, հենց այստեղ է նրա իսկական պատվի հիմքը: Քաջությունը ոչ թե մեր ձեռքերի կամ ոտքերի, այլ արիության և հոգու ուժն է, այն կախված է ոչ թե մեր ձիու կամ զենքի, այլ միայն մեր սեփական հատկանիշներից: Ով ընկել է, շղավաճանելով իր արիությունը, si succiderit, de genu pugnata**, ով սպառնացող մահվան առաջ չի կորցնում իրեն տիրապետելու ունակությունը, ով շունչը փչելիս իր թշնամուն նայում է ուղիղ և արհամարհանքով, նա ընկած է, բայց ոչ պարտված:

Երբեմն ամենաքաջերը լինում են ամենազոքախտները:

Լինում են պարտություններ, որոնց փառքը հարուցում է հաղթողների նախանձը: Չորս հաղթանակները, այդ ամենաչքնաղ քույրերը, որ երբևէ տեսել է արեգակը (Սալամինի, Պլատեայի, Միկալեի մոտ և Սիցիլիայում), չհամարձակվեցին իրենց ամբողջ միասնական փառքը հակադրել Թերմոպիլեի կիրճում կենդիվառ արքայի և նրա զինվորների պարտության փառքին²⁶:

* Իսկական կարելի է համարել լոկ այն հաղթանակը, երբ թշնամիներն իրենք են իրենց պարտված ճանաչում²⁴ (լատ.):

** նույնիսկ գետին տապալված ժամանակ շարունակում է կռվել²⁵ (լատ.):

Արդյոք որեէ մեկը նման հիանալի ու հպարտ արիությամբ երբեք սլացե՞լ է իր հաղթանակին ընդառաջ, ինչպես Իսքուլայոսը ²⁷ սլացավ անխուսափելի պարտությանն ընդառաջ: Ո՞վ է այդպես հմտորեն ու հեռատեսորեն գործել հանուն իր փրկության, ինչպես նա՝ հանուն մահվան: Նրան հանձնարարված էր արկադիացիներից պաշտպանել Պելոպոնես տանող կիրճերից մեկը: Պարզելով, որ տեղանքի և ուժերի անհավասարության պատճառով դա բոլորովին անիրագործելի է, և հասկանալով, որ թշնամու դեմ ելնող ամեն ոք անխուսափելիորեն տեղնուտեղը կզոհվի, բայց, դրա հետ մեկտեղ, դրված խնդիրը չկատարելը համարելով իր քաջությանը, մեծությանն ու լակեղեմոնացու անվանն անվայել բան, նա այդ երկու ծայրահեղություններից ընդունեց հետևյալ միջին որոշումը: Հայրենիքին ծառայելու և պաշտպան կանգնելու համար՝ առավել ուժեղ ու՞ երիտասարդ զինվորներին խնայելու նպատակով նրանց հեռացրեց իրենից, իսկ մյուսների հետ (որոնց մահն այնքան էլ զգալի չէր) նա որոշեց պաշտպանել կիրճը, որպեսզի իր և նրանց մահով թըշնամիներին ստիպեր հնարավորին չափ թանկ գնով վճարել այդ արշավանքի դիմաց: Այդպես էլ եղավ, քանզի, գրեթե բոլոր կողմերից շրջապատված լինելով արկադիացիներով, որոնց մեջ իրենք սարսափելի կոտորած էին սարքել, և նա, և նրա բոլոր զինվորներն իրար հետևից սպանվեցին: Կա՞ արդյոք մի հաղթանշան, որ վայել չլիներ թերևս այդպիսի պարտվողներին: Այն, թե ով է իսկական հաղթողը, վճռվում է ոչ թե ճակատամարտի արդյունքով, այլ նրա ընթացքով, զինվորի և փառքը, և քաջությունը մարտնչելն է, այլ ոչ թե թշնամուն ջախջախելը:

Սակայն վերադառնամ իմ պատմությանը: Որքան էլ գերիներին վախեցնում են, չի հաջողվում ստիպել նրանց թուլակամություն ցուցաբերել, ընդհակառակը, երկու-երեք ամիս, քանի դեռ նրանց ձեռք չեն տալիս, նրանք կայտառ են ու զվարթ, հաղթողներին շտապեցնում են իրենց շուտ ենթարկել վերջին փորձությանը, անարգում են նրանց, հայհույում և կշտամբում վախկոտության համար, թվարկում նրանց և ցեղակիցների տանուլ տված ճակատամարտերը: Ես ունեմ գերիներից մեկի հորինած մի երգ, որում ասվում է. թող բոլորը համարձակ դան ու հավաքվեն, որ կշտանան իրենով, չէ որ նրանք ուտելու են սեփական հայրերին ու նախնիներին, որոնք սնունդ են եղել ու մեծացրել իրեն: «Այս մկանները,— ասում է նա,— այս միսն ու երակները ձերն են, խղճո՞ւկ հիմարներ: Դուք չե՞ք ուզում ընդունել, որ սրանք տակավին այն մարմինն է, որ ունեցել են ձեր նախնիները: Դե մի լավ կերեք, և կզգաք ձեր սեփական մսի համը»:

Այսպիսի պոեզիայից բոլորովին բարբարոսության հոտ չի գալիս:

Մարդիկ, որոնք տեսել են, թե ինչպես են նրանք կյանքից բաժանվում, նկարագրելով մահապատժի տեսարանը, պատմում են, որ գերին թքում է իրեն սպանողների երեսներին և ջղայնացնում նրանց: Հիրավի, մինչև վերջին շունչը նրանք մնում են հանդուգն և խոսքերով ու շարժումներով արհամարհանք արտահայտում: Իրոք, մեր համեմատ նրանց կարելի է անվանել իսկական վայրենիներ, քանզի, անկեղծորեն առած, երկուսից մեկն է՝ կամ նրանք են վայրենիներ, կամ մենք. այնքան մեծ է նրանց և մեր կենսաձևերի տարբերությունը:

Նրանց մոտ տղամարդիկ ունեն մի քանի կին, և որքան տղամարդը հայտնի է իր քաջությամբ, այնքան շատ է կին ունենում: Ահա նրանց ամուսնությունների մի հիանալի ու զարմանալի առանձնահատկություն. որքան մեր կանայք աշխատում են մեզ խոչընդոտել ձեռք բերելու ուրիշ կանանց համակրանքն ու մերձեցումը, այնքան նրանց կանայք ինքներն են ձգտում դրան: Ամենից շատ հոգ տանելով իրենց ամուսինների պատվի մասի, կանայք ջանք չեն խնայում, որ նրանք ունենան հնարավորին շափ շատ ընկերուհիներ, քանզի դա իրենց ամուսինների քաջության վկայությունն է:

Մեր կանայք գուցե կասեն, թե դա հրաշքների հրաշքն է: Բնավ ոչ. իսկական ամուսնական առաքինությունը դրսևորում է, միայն թե նրա ամենապսեմ ձևը: Նայեցեք Աստվածաշունչը. Լիան, Ռահիլը, Սառան և Հակոբի կանայք²⁸ գեղեցիկ ստրկուհիներին բերում էին իրենց ամուսիններին, Էիվիան նույնպես, ի վնաս իրեն, ներողամտությամբ քաջալերում էր Օդոստոսի տարփանքը, իսկ Ստրատոնիկան՝ Դեյոտարոսի²⁹ կինը, ոչ միայն իր ամենալազնի սպասուհուն տվեց ամուսնուն, այլև նույնիսկ հոգատարությամբ դաստիարակեց նրա երեխաներին և օգնեց նրանց ժառանգելու հոր թագավորությունը:

Սակայն, որպեսզի որևէ մեկը չմտածի, թե այս սոսկ վաղուց հաստատված կացութաձևի հեղինակությամբ ներշնչող սովորական սարկական հնազանդություն է ընդունված սովորություններին, կացութաձև, որը նրանք ընդունում են անտրտունջ և առանց առարկությունների, քանզի նրանց միտքն այնքան թերզարգացած է, որ ի վիճակի չէ որևէ այլ բան պատկերացնել, ես կարող եմ բերել նրանց շնորհալիության ու խելքի մի քանի ապացույց: Վերը ես արդեն բերեցի մի հատված նրանց զինվորի երգից, այժմ կբերեմ մեկ այլ՝ սիրային երգ, որն սկսվում է այսպես. «Կանգ առ լորտու, կանգ առ, որ քույրս կարողանա տեսնել քո մաշկի նախը և պատրաստել դրա նման մի սքանչելի ժապավեն, որ նվիրեմ իմ սիրելիին, և թող քո գեղեցկությունը, քո տեսքն ընգմիշտ գերազատելի լինեն մյուս բոլոր լորտուններից»: Այսպիսին է երգի, արանջին

տունը, նույնն է նաև կրկներգը: Ես բավականաչափ ծանոթ եմ պոեզիային, պնդելու համար, թե այս երգում ոչ միայն չկա բարբարոսական ոշինչ, այլև սա ամենաիսկական անակրեոսյան ստեղծագործությունն է³⁰: Ի դեպ ասած, նրանց լեզուն շատ մեղմ է, ականջ շոյող, վերջավորությունները հիշեցնում են հունարենը:

Այդ բնիկներից երեքը եկել էին Ռուան այն ժամանակ, երբ Կարլոս IX³¹ թագավորն այնտեղ էր: Չկասկածելով, թե ապագայում իրենց հանգրստի ու երջանկության վրա որքան ծայր կնստի ծանոթությունը մեր անբարոյության հետ, շիմանալով, որ մեզ հետ շփվելն իրենց կործանում կբերի (իսկ ես ենթադրում եմ, որ այն իսկապես արդեն շատ մոտ է), այդ թշվառները, հրապուրվելով նորույթի ծարավով, թողեցին իրենց մտերմիկ հայրենիքի բարի երկինքը, որ նայեն, թե իրենից ինչ է ներկայացնում մերը: Թագավորը երկար զրուցեց նրանց հետ, նրանց ցույց տվին մեր ապրելակերպը, մեր ճոխությունը, հիանալի քաղաքը: Իրանից հետո ինչ-որ մեկը կամեցավ իմանալ, թե նրանք ինչ կարծիքի են ամբողջ տեսածի մասին և ինչը բոլորից շատ զարմացրեց նրանց, բնիկները թվարկեցին երեք բան, որոնցից երրորդը մոռացել եմ և շատ եմ ափսոսում դրա համար, բայց առաջին երկուսը մնացել են հիշողությանս մեջ: Նրանք ասացին, թե ամենից առաջ իրենց տարօրինակ թվաց, որ մեծահասակ, մորուքավոր, ուժեղ ու զինված բազմաթիվ մարդիկ, որոնց տեսել էին թաղավորի շրջապատում (միանգամայն հնարավոր է, որ նրանք խոսում էին շվեյցարական գվարդիականների մասին), անարտունջ ենթարկվում են մի մանչուկի, և ինչու իրենք չեն ընտրում իրենց միջավայրից որևէ մեկին, որ կառավարի, երկրորդ, (նրանց լեզվում կա մի առանձնահատկություն, որ մարդկանց անվանում են միմյանց «կիսրարներ»), նրանք նկատել էին, որ մեր մեջ կան մարդիկ, որոնք առատորեն ունեն այն ամենը, ինչ կարելի է կամենալ միայն, մինչդեռ սովից ու կարիքից ուժասպառ նրանց «կիսրարները» ողորմություն են խնդրում նրանց դռների մոտ, և նրանք տարօրինակ էին համարում այն, թե ինչպես են այդքան կարիքավոր «կիսրարները» կարողանում հանդուրժել նման անարգարությունը, ինչու չեն բռնում մյուսների կոկորդից ու չեն հրկիզում նրանց տները:

Ես շատ երկար զրուցել եմ այդ բնիկներից մեկի հետ, բայց իմ թարգմանն այնքան վատ էր թարգմանում բառերս, և իր բթամտության պատճառով այնքան դժվարությամբ էր որսում մտքերս, որ այդ խոսակցությունից ոչ մի հաճույք չստացա: Իմ այն հարցին, թե ինչպիսի տաավելություններ է տալիս ցեղակիցների մեջ իր բարձր դիրքը (քանզի նա առաջնորդն էր և մեր նավաստիները նրան թագավոր էին անվա-

նում), նա պատասխանեց. «Պատերազմ գնալ բոլորի առջևից»: Երբ ես հարցրի, թե ինչքան մարդ է տանում իր հետևից, նա ձեռքի շարժումով ցույց տվեց մի տարածություն, կամենալով նշել, թե նրանք այնքան են, որքան կտեղավորվի այդտեղ, ստացվեց մոտ շորս կամ հինգ հազար մարդ: Վերջապես այն հարցին, թե արդյոք պատերազմի հետ իր իշխանությունը չի վերջանում, նա պատասխանեց, որ պահպանվում է նաև խաղաղ ժամանակ և որ իշխանությունն այն է, երբ իր ենթակայության տակ գտնվող գյուղերն այցելելիս, դրանց բնակիչները թավ անտաններում բացում են արահետներ, որոնցով ինքը կարող է հանգիստ անցնել:

Այս ամենն այնքան էլ վատ չէ: Բայց, ի սե՛ր աստծո, նրանք տաբատներ չեն կրում:

Գլուխ XXXII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՐԿ Է ԽՈՍԵԼ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ

Խարեության համար իսկական ու լավագույն ասպարեզ է անհայտությունը: Պատմածի արտասովորությունն արդեն իսկ հավատ է ներշնչում, և, բացի դրանից, շենթարկվելով մեր տրամաբանության սովորական օրենքներին, այդ պատմությունները մեզ զրկում են որևէ բան հակազրելու հնարավորությունից: Այդ պատճառով, նկատում է Պլատոնը, անհամեմատ ավելի հեշտ է ունկնդիրներին գոհացնել, խոսելով աստվածների, քան մարդկանց էության մասին, քանզի լսողների տգիտությունը լայն ասպարեզ և անսահմանափակ ազատություն է տալիս խորհրդավոր բաներ նկարագրելու համար¹:

Ուստի, մարդիկ ոչնչին այնպես հաստատ չեն հավատում, ինչպես այն բաներին, որոնց մասին բոլորից քիչ գիտեն, և ոչ ոք այնպիսի ինքնավստահությամբ չի շաղակրատում, ինչպես ամեն տեսակ հեքիաթներ հնարողները՝ օրինակ, ալքիմիկոսները, աստղագուշակները, գուշակները, ձեռնագուշակները, բժիշկները, id genus omne*: Եթե համարձակվեի, ես հաճույքով դրանց կավելացնեի էլի մի շարք մարդկանց՝ երգվյալ մեկնիչներին և աստծո մտադրությունների գուշակներին, որոնք իրենց պարտականությունն են համարում գտնել տեղի ունեցող ամեն ինչի պատճառները, աստծո կամքի գաղտնիքներում դիտել աստծո արարքների անհիմանալի մղումները, ու թեև տեղի ունեցող իրադարձությունների տա-

* Եվ նման բոլոր մարդիկ² (լատ.):

րատեսակութիւնն ու մշտական անհամաձայնութիւնը նրանց ստիպում են ընկնել այս կամ այն կողմ, մի ծայրահեղութիւնից մյուսը, նրանք այնուամենայնիվ չեն հրաժարվում իրենց խաղից և նույն վրձինով ամեն ինչ անխտիր ներկում են մերթ սպիտակ, մերթ սև:

... Հնդկական ցեղերից մեկն ունի մի գովելի սովորույթ. երբ որևէ ընդհարման ժամանակ կամ կռվում նրանց բախտը շի բերում, ամբողջ համայնքով ներողութիւն են խնդրում արևից՝ իրենց աստծուց, կարծես մեղք են գործել, քանզի իրենց հաջողութիւնն ու անհաջողութիւնը վերագրում են աստծո բանականութեանը, սեփական հնարանքներն ու դատողութիւնները համարելով նրա համեմատութեամբ ոչինչ:

Քրիստոնյայի համար բավական է հավատալ, որ ամեն ինչ աստծուց է, ամեն ինչ ընդունել երախտագիտութեամբ և ճանաչելով նրա անհմանալի աստվածային իմաստնութիւնը, բարիք համարել իրեն բաժին ընկած ամեն բան, ինչ կերպարանքով էլ այն առաքված լինի: Բայց ես ոչ մի կերպ չեմ կարող համակերպվել այն բանին, ինչ տեսնում եմ ամենուր, իսկ հատկապես՝ մեր գործերի հաջողութիւնն ու ծաղկումը վկայակոչելով մեր կրօնը հաստատելու և ամրապնդելու ձգտմանը: Մեր հավատն ունի բավականաչափ այլ հիմքեր և կարիք շի զգում իրադարձութիւնների այդպիսի վկայակոչումների, ախր վտանգ կա, որ ժողովուրդը, ընտելանալով այդ գայթակղիչ և իրեն դուր եկած փաստարկներին, հանկարծահաս որևէ հակառակ և անհաճո բանից կարող է կորցնել հավատը: Ահա ձեզ մի օրինակ ներկայումս մեզ մոտ տեղի ունեցող կրօնական պատերազմներից: Լարոշլաբեյլի մոտ տեղի ունեցած ճակատամարտի հաղթողներն արտակարգ ցնծութեան մեջ էին հաջողութեան առթիվ և նրանում տեսնում էին իրենց գործի արդարութեան ապացույցը: Իսկ երբ պարտութիւն կրեցին Մոնկոնտուրի և Ժարնակի³ մոտ, իրենց անհաջողութիւնները որևէ կերպ բացատրելու համար, ստիպված եղան հիշել և հայրական ճիպոտները, և հայրական պատիժները: Եվ եթե ժողովուրդն ամբողջովին նրանց ձեռքում չլինէր, անմիջապես կզգար, որ դա միևնույնն է, թե մի պարկ հացահատիկ աղալու վճարը երկու անգամ վերցնես կամ, փչելով, միաժամանակ հովացնես ու տաքացնես մատներդ: Շատ ավելի լավ կլինէր նրան ասել դուտ ճշմարտութիւնը: Մի քանի ամիս առաջ Դոն Խուան Ավստրիացու հրամանատարած ղորքը ծովում փայլուն հաղթանակ տարավ թուրքերի նկատմամբ⁴, սակայն աստված բազմիցս կամեցել է նաև, որ թուրքերը հաղթեն քրիստոնյաներին: Կարճ ասած, դժվար է մեր շափանհիշներով բնութագրել աստծո գործերը, առանց դրանց վնաս հասցնելու: Եվ նրան, ով կկամենար առանձնահատուկ իմաստ վերադրել այն բանին, որ Արիոսն ու մոսածելակեր-

պով նրան մոտ կռն պապը՝ արիոսականների հերետիկոսության կարևորագույն պարագլուխները⁵, մահացել են թեև տարբեր ժամանակ, բայց շատ տարօրինակ ու միանման մահով (նրանք երկուսն էլ, ստամոքսում ծակոցներ զգալով, թողել են բանավեճը և հանկարծամահ եղել արտաքնոցում) և, ավելին, հատուկ շեշտել այն հանգամանքներն ու տեղը, ուր կատարվել է աստծո վրեժը, ես, ի լրումն, մատնացույց կանեի նաև Հելիոգաբալոսին, որը նույնպես սպանվել է արտաքնոցում⁶: Սակայն աստված սիրեք: Սուրբ Իրինեասին⁷ նույնպես այդ բախտը վիճակվեց: Կամենալով մեզ ցույց տալ, թե բարիքը, որի հույսը կարող է ունենալ բարի մարդը, և չարիքը, որից պետք է սարսափի շարը, ոչ մի ընդհանուր բան չունեն այս աշխարհի հաջողությունների ու անհաջողությունների հետ, աստված տնօրինում է դրանք և բաշխում ըստ իր գաղտնի նախասահմանումների, դրանով իսկ մեզ զրկելով այդ առթիվ անհեթեթ գատողություններ անելու հնարավորությունից: Եվ հիմար վիճակի մեջ են ընկնում նրանք, ովքեր փորձում են գլուխ հանել այդ բաներից, հենվելով իրենց մարդկային բանականության վրա: Նրանց յուրաքանչյուր դիպուկ հարվածին հաջորդում է առնվազն երկու վրիպում: Դա լավ է ցույց տվել սուրբ Օգոստինոսն իր հակառակորդների օրինակով: Այն վեճը լուծվում է ավելի շուտ զենքի, քան բանականության զենքի միջոցով: Հարկավոր է բավարարվել այն լույսով, որ արևը պարզեում է մեզ իր շողերով, իսկ նա, ով մի փոքր ավելի շատ լույս կլանելու նպատակով հայացքն ուղղի վեր, թող չգանգատվի, եթե իր հանդգնության համար զրկվի տեսողությունից: Quis hominum potest scire consilium dei? aut quis poterit cogitare quid velit dominus?*

ՓԼՈՒԽ XXXIII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿՅԱՆԷԻ ԳՆՈՎ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՆ ՎԱՅԵԼԸՆԵՐԻՑ

Ես համոզվել եմ, որ հների կարծիքները, մեծ մասամբ, համընկնում են հետևյալում. երբ մարդու կյանքում շարն ավելի շատ է, քան բարին, ուրեմն հասել է մեռնելու ժամը, և էլի. պահպանել մեր կյան-

* Քանզի ո՞ր մարդը կարող է ըմբռնել աստծո խորհուրդը: Կամ ո՞վ կարող է հասկանալ, թե ինչն է աստծուն հաճո՞ք:

քը տառապանքների ու կեղեքումների համար՝ նշանակում է խախտել բնության բուն օրենքները, այդ մասին են խոսում ստորև բերվող ասույթները.

Ἦ ζῆν ἀλύτως, ἢ θανεῖν εὐδαιμόνως.
Καλόν τό θνήσκειν οἷς ὕβριν το ζῆν φέρει.
Κρεῖσσον τό μή ζῆν ἔστιν ἢ ζῆν ἀλλίως*.

Թայց մահն արհամարհելը հասցնել այն աստիճանի, որ այն օգտագործես իբրև միջոց՝ ազատվելու մեծարանքից, հարստությունից, բարձր դիրքից և այլ առավելություններից ու բարիքներից, որ մենք երջանկություն ենք անվանում, մեր բանականության վրա ավելացնես նաև այդ նոր բեռը, կարծես առանց դրա էլ այն քիչ է աշխատել, որ մեզ համոզի հրաժարվել դրանցից՝ ես չէի հանդիպել ոչ նման խորհուրդների, ոչ այդպիսի իրական դեպքերի հիշատակումների, քանի դեռ պատահաբար ձեռքս չէր ընկել հետևյալ հատվածը Սենեկայից: Դիմելով Լուցիլիոսին՝ այդ գորեղ և կայսեր վրա մեծ ազդեցություն ունեցող մարդուն, խորհուրդ տալով իր ճոխ, վայելքներով լի կյանքն ու վերնախավի ունայնությունը փոխարինել փիլիսոփայական խոհերով հագեցված խաղաղ ու մեկուսի գոյությունմբ, և, իմանալով, որ Լուցիլիոսը վկայակոչում է դրա հետ կապված որոշ դժվարություններ, Սենեկան ասում է. «Ես այն կարծիքին եմ, որ դու պետք է հրաժարվես կամ այդ ապրելակերպից, կամ ընդհանրապես կյանքից, սակայն, խորհուրդ եմ տալիս ընտրել հեշտ ճանապարհ և ավելի շուտ քանդել, քան կտրել այն հանգույցը, որ դու այդքան անհաջող կապել ես, իհարկե, պայմանով, որ, եթե քանդել չհաջողվի, դու այնուամենայնիվ կկտրես այն: Չկա մի մարդ, ինչքան էլ նա վախկոտ լինի, որ չգերադասի մեկ անգամ ընկնել, քան շարունակ երերալ»²: Ես հակված էի մտածելու, որ նման խորհուրդը սազական է միայն ստոիկյանների անողոք ուամունքին, սակայն, դարմանալի բան է՝ այն փոխառված էր էպիկուրից, որն այդ առթիվ Իդոմենեսին գրել է միանդամայն համանման բաներ:

Ինձ թվում է, նման մի բան նկատել եմ նաև մեր դավանանքի մարդկանց մեջ, ճիշտ է, որոշ շափով քրիստոնեությունմբ մեղմացած: Պուլատիե քաղաքի եպիսկոպոս սուրբ Հիլարիոսը³ արիոսական հերետիկոսություն այդ հանրահոշակ թշնամին, գտնվելով Սիրիայում, տեղեկացավ, որ իր միակ գուստրը՝ Աբրան, որին մոր հետ միասին թողել էր տանը, շըր-

* Կամ անհոգ կյանք, կամ երջանիկ մահ: Լավ է մեռնի նա, ում անարգանք է բերում կյանքը: Լավ է շապրել, քան ապրել վշտերի մեջ¹ (ճուն.):

ջապատված է բազմաթիվ երկրպագուներով՝ այդ կողմերում շատ հայտ-
 նի մարդկանցով, որոնք համառորեն ձգտում էին ամուսնանալ նրա հետ,
 քանզի միանգամայն լավ դաստիարակություն ունեւր, գեղեցիկ էր, հա-
 րուստ և ծաղկուն տարիքում: Նա գրեց դատերը (ինչպես մեզ է հայտնի),
 որ հեռու մնա իրեն առաջարկվող բոլոր դայթակղություններից ու վա-
 յելքներից, նա ավելացնում էր, թե իր ճանապարհորդության ժամանակ
 գտել է անհամեմատ ավելի բարձր ու արժանի, շատ ավելի մեծ իշխա-
 նություն ու վեհություն ունեցող ամուսին, որն անչափ թանկարժեք
 զգեստներ ու զարդեր կնվիրի: Նրա մտադրությունն էր արմատախիլ
 անել աշխարհիկ վայելքների նկատմամբ դատեր հակումն ու սովորու-
 թյունը և ամբողջովին ուղղել նրան աստծո կողմը: Բայց քանի որ նրան
 թվում էր, թե դրա համար ամենապարզ ամենաապահով միջոցը կլինեւր
 աղջկա մահը, անընդհատ դիմում էր աստծուն, խնդրելով ու աղերսելով,
 որ նրան իր մոտ կսնչի այս աշխարհից, և այդպես էլ եղավ, քանզի
 Հիլարիոսի վերադառնալուց քիչ անց դուստրը մահացավ, որի համար նա
 անչափ ուրախ էր: Այս Հիլարիոսը, թերևս, իր եռանդով գերազանցեց
 մնացածներին, քանզի նման միջոցի դիմեց անմիջապես, մինչդեռ ուրիշ-
 ները դրան դիմում են այն ժամանակ, երբ ուրիշ ելք չի մնում, ինչպես
 նաև նրա համար, որ այդ բանն արեց իր միակ դատեր հանդեպ: Սակայն
 ևս ցանկանում եմ ավարտել այս պատմությունը, թեև վերջնամասն ան-
 միջականորեն չի առնչվում իմ դատողության առարկային: Սուրբ Հիլա-
 րիոսի կինը, նրանից իմանալով, որ իրենց դատեր մահը դիտմամբ ու
 դիտակցաբար հարուցել է ամուսինը, ինչպես նաև այն, թե դուստրը,
 փոխանակ տառապելու այստեղ, ավելի երջանիկ է դարձել, թողնելով
 մեր աշխարհը, այնպիսի բուռն հակում զգաց երկնային հավերժ երա-
 նություն նկատմամբ, որ անվերջ թախանձանքներով ձանձրացնելով
 ամուսնուն, ստիպեց նույն բանն անել նաև իր համար: Եվ առաված,
 անսալով նրանց աղաչանքներին, որոշ ժամանակ անց կանչեց նաև կնո-
 ջը, և նրանք երկուսն էլ մեծագույն ուրախությամբ ընդունեցին այդ
 մահը:

Գլուխ XXXIV

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՀԱՃԱՆ ԽԵԼԱՄԻՏ Է ՎԱՐՎՈՒՄ՝

Ճակատագրի փոփոխականությունն ու անկայունությունը հաճախ
 հանգեցնում են նրան, որ այն մեր առջև հառնում է ամենատարբեր կեր-
 պարանքներով: Աբղարադատությունը երբևէ իրականացել է այնպիսի
 սրբնթացությամբ, ինչպես հետևյալ դեպքում: Դուքս Վալանտինուան²,

որոշելով թունավորել Կորնետոյի կարգինալ Ազրիանին, որի մոտ Վատիկանում ընթրելու էին ինքը և հայրը՝ Ալեքսանդր VI պապը, նախապես նրա ննջասենյակն է ուղարկում մի շիշ թունավորած գինի, սեղանապետին հրամայելով խնամքով պահել այն: Պապը, որդուց շուտ ժամանելով այնտեղ, խմելու բան է խնդրում, և սեղանապետը, մտածելով, թե գինին իր հատուկ հսկողութեանն է հանձնվել միայն ընտիր որակի համար, առաջարկում է պապին: Այդ պահին, խնջույքն սկսվելուց առաջ, հայտնվում է նաև դուքսը: Կարծելով, թե իր շշին ձեռք չեն տվել, նա խմում է նույն գինին: Եվ ահա, հայրը հանկարծամահ է լինում, իսկ որդին, երկար ու ծանր հիվանդանալով, կենդանի մնում, որ ավելի վատթար բախտի արժանանա:

Երբեմն թվում է, թե ճակատագիրը սպասում է որոշակի ժամի, որ մեր գլխին խաղ խաղա: Պարոն դ'էստրեն՝ այն ժամանակ պարոն Վանդոմի գնդի դրոշակակիրը, և պարոն դը Լիկը՝ դուքս դ'Ասկոյի ջոկատի պետի տեղակալը, թեև թշնամի կողմերի շարքերում էին, միաժամանակ սիրահետում էին (ինչպես լինում է այն հարևանների մոտ, որոնց բաժանում է սահմանը) պարոն դը Ֆուկերոլի քրոջը, որն, ի վերջո, գերապատվութիւնը տվեց երկրորդին: Բայց հարսանիքի օրը, և, որ ավելի վատ է, նախքան նորահարսի հետ մահիճ մտնելը, երիտասարդ ամուսինը ցանկացավ նիզակ կոտրել ի պատիվ իր կնոջ և այդ նպատակով դարան մտավ Սենտ-Օմերի մոտակայքում, որտեղ պարոն դ'էստրեն, ավելի ուժեղ գտնվելով, գերեվարեց նրան, և ի լրումն դ'էստրեի հաղթանակի, եղավ այնպես, որ նորատի տիկինը,

Coniugis ante coacta novi dimittere collum,
 Quam veniens una atque altera rursus hiems
 Noctibus in longis avidum saturasset amorem*

դիմեց նրան, խնդրելով բարի լինել և թողնել գերուն, ինչը և նա արեց, քանզի ֆրանսիացի ազնվականը երբեք և ոչինչ չի մերժում կնոջը:

Երբեմն չի՞ թվում արդյոք, որ ճակատագիրը սրամիտ հնարող է: Հեղինեի որդի Կոստանտինոսը հիմնեց Կոստանդնուպոլսի կայսրութիւնը, և շատ հարյուրամյակներ անց Հեղինեի որդի Կոստանտինոսով ավարտվեց նրա բաղմագարյան գոյութիւնը⁴:

Երբեմն այն կամենում է տնազ անել աստծո գործած հրաշքներին: Պատմում են, թե իբր, երբ Խլոդվիգ թագավորը պաշարել էր Անգուլյեմը, բաղաքի պարիսպներն իրենք իրենց փլվել էին նրա առջև, բացի այդ,

* Մտիպված լինելով երիտասարդ ամուսնուն բաց թողնել գրկից ավելի շուտ, քան մեկ կամ երկու ձմեռվա երկար գիշերները կհագեցնեն նրանց սիրո ծարավը³ (լատ.):

Բուշեն՝ նույնպես, փոխառելով այս պատմութիւնը ինչ-որ հեղինակից, հայտնում է, թե մտքերտ արքան պաշարել էր մի քաղաք, իսկ ապա հեռացել զորքից, որպեսզի, կատարելով խոստումը, մեկնի Օուեան՝ սուրբ Ազնանի օրը տոնելու, բայց երբ նա հանդիսավոր ժամերդութեան էր, պատարագի ժամանակ, պաշարված քաղաքի պարիսպներն, առանց պաշարողների կողմից որևէ ջանք գործադրելու, իրենք իրենց փուլ եկան: Ինչորովին այլ մի բան տեղի ունեցավ Միլանի դքսութեան համար մեր մղած պատերազմների ժամանակ: Զորավար Ռիենցին, կովելով մեր կողմից, Պաշարեց էրոննա քաղաքը և ամբողջի պարսպի տակ, բավական երկար տարածութեան վրա, ական փորեց: Երբ ժամը հասավ, պարսպի մի մասն ամբողջովին վեր թռավ, իսկ ապա, ուղիղ դեպի երկինք արձակած և վայր բնկած նետի նման, նույնպես ամբողջութեամբ իջավ իր հին տեղը, այնպես, որ պաշարվածները դրանից ոչինչ չկորցրին:

Երբեմն ճակատագիրը նաև բժշկութիւն է անում. Յասոն Ֆերեցին՝ կրծքի թարախապալար ուներ, և բժիշկները նրանից ձեռք էին քաշել, համարելով, թե անհուսալի է: Կրքոտութեամբ ցանկանալով, թեկուզ մահվան դնով, ազատվել տառապանքներից, նա մարտի ժամանակ զուխը կորցրած նետվեց թշնամիների ամենախիտ տեղը, և վիրավորվեց, բայց այնպես հաջող, որ թարախապալարը պատուվեց և նա առողջացավ:

Զգերազանցե՞ց արդյոք ճակատագիրը նկարիչ Պրոտոգենեսին նրա արվեստում: Անթերի նկարելով մի հոգնած ու տանջահար շուն, նա լիովին գոհ մնաց իր աշխատանքից, սակայն մի բացառութեամբ. նրան ոչ մի կերպ չէր հաջողվում ուղածին պես պատկերել շան բերանի թուքն ու փրփուրը: Դրանից սրտնեղած, նա վերցրեց տարբեր ներկերում թաթախված սպունգն ու խփեց նկարին, որ ջնջի ամբողջը, սակայն, ճակատագիրը, միանգամայն տեղին, հարվածն ուղղեց շան մոթին և կատարեց այն, ինչը վեր էր արվեստի ուժերից:

Արդյոք ճակատագիրը երբեմն մեր ծրագրերը չի՞ կառավարում և չի՞ ուղղում: Անգլիայի թագուհի Իզաբելը, հոր դեմ պայքարում որդուն օգնելու համար զորքով Զելանդիայից իր թագավորութիւնը գալիս կգոհվեր, եթե ժամանէր այն նավահանդիստը, ուր ուղում էր, քանզի թշնամիները հենց այնտեղ էին սպասում, սակայն ճակատագիրը, հակառակ նրա կամքի, նավերը քշեց ուրիշ տեղ, ուր նա բարեհաջող ափ իջավ: Եվ արդյոք հենց նա, որ քարը շան վրա շարտելով, խփեց խորթ մորն ու սպանեց, հիմք շուներ ասելու հետևյալ չափածո տողը.

.. Ταύτοματον ἡμῶν καλλιῶ βουλευεται,

այսինքն. ճակատագիրը մեզանից լավ գիտե, թե ինչ պետք է անել⁸:

Ի կեսերը՝ երկու զինվորի դրոշեց սպանել Տիմուկոնին, որն այն ժամանակ ապրում էր Ադրանում, Սիցիլիայում: Նրանք պայմանավորվեցին, որ հենց նա ձեռնամուխ լինի զոհաբերության, կանեն դա, և, խառնվելով ամբոխին, արդեն իրար նշան էին տվել, թե իրենց մտադրությունն իրագործելու ժամանակն է: Բայց այդ պահին հայտնվեց մի երրորդ զորական, որը սրով այնպես խփեց նրանցից մեկի գլխին, որ սա անշքնշացած վայր ընկավ: Այդ անելով նա ծլկեց: Սպանվածի ընկերը, կարծելով, թե ամեն ինչ բացահայտվել է, և ինքը կորած է, նետվեց դեպի զոհասեղանը և, գթություն աղերսելով, երգվեց ամեն բան խոստովանել: Բայց մինչ նա պատմում էր դավադրության մասին, հաջողվեց բռնել երրորդ զինվորին և սուսկալի հրմշտոցի մեջ, հարվածներ տեղալով, որպես մարդասպանի քարշ տալ Տիմուկոնի և տոնակատարությանը ներկա գտնվող առավել նշանավոր անձանց մոտ: Բռնվածը, ներումն աղերսելով, հայտարարեց, թե արդար դատաստան է տեսել, սպանելով իր հոր սպանողին, և վկաները, որոնց ճիշտ ժամանակին ուղարկեց րարյացակամ ճակատագիրը, հաստատեցին, թե, իրոք լեոնտինացիների քաղաքում նրա հայրը սպանվել էր այն մարդու ձեռքով, որից նա նոր վրեժ էր լուծել: Նրան անմիջապես տվեցին տասն ատտիկական մինա, քանզի այդ մարդուն բախտ էր վիճակվել, իր հոր վրեժն առնելով, մահից ազատել սիցիլիացիների հորը: Ինչպես տեսնում ենք, ճակատագիրը խորամանկությամբ գերազանցեց մեր հաշիվների խորամանկությանը:

Եվ էլի մի օրինակ՝ վերջինը: Արդյո՞ք այն բանում, որ ես ուզում եմ պատմել, չի դրսևորվել ճակատագրի առանձնահատուկ բարությունը, ողորմածությունն ու մարդասիրությունը: Հայր և որդի Իգնացիոսները, որոնց հոռմեական եռապետները մտցրել էին սև ցուցակի մեջ, ազնիվ որոշում ընդունեցին իրենց կյանքը տալ մեկը մյուսին, դրանով իսկ խաբելով դաժան բռնապետներին, և ահա, սրերը մերկացնելով, նրանք նետվեցին միմյանց վրա: Ճակատագիրը հաճեցավ սրերի սայրերն ուղղել այնպես, որ թե հայրը, թե որդին մահացու խոցվեցին, և նույն ճակատագիրը, հարզանքի տուրք մատուցելով նման զարմանալի ու սքանչելի սիրուն, նրանց թույլ տվեց պահպանել բավականաչափ ուժ, որպեսզի յուրաքանչյուրը սուրը դուրս քաշելով մյուսի մարմնից, կարողանար արնաթաթախ, ղենքը պահող ձեռքով ամուր գրկել իր մերձավորին, և դահիճները, որոնք իսկույն երկու գլուխն էլ կտրեցին, ստիպված եղան մարմինները թողնել այդ ազնիվ գրկախառնության մեջ, այնպես, որ մեկի վերքը հավել էր մյուսի վերքին, և նրանք սիրով ըմբռնվում էին միմյանց արյան ու կյանքի մնացորդները:

ՄԵՐ ԿԵՆՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՂԱԾ ՄԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանգուցյալ հայրս՝ ամբողջ կյանքում փորձով ու բնատուր ուշիմությամբ ղեկավարվող պայծառ մտքի տեր այդ մարդը մի ժամանակ ինձ ասում էր, թե ինքր շատ կուզենար, որ բոլոր քաղաքներում լիներ մի հայտնի տեղ, ուր հավաքվեին բոլոր նրանք, ովքեր որևէ պետք ունեն, և կարողանային հայտնել այդ մասին, իսկ սպասարկման համար կարգված պաշտոնյան գրի առներ նրանց ցանկությունները, օրինակ. «Ուզում եմ մարգարիտ վաճառել, ուզում եմ մարգարիտ գնել», «այսօր ինչը փնտրում է մի ուղեկից՝ Փարիզ մեկնելու համար», «այնինչը՝ մի ծառա, որը կարող է այս կամ այն բանն անել», «այս մեկը՝ ուսուցիչ», «այն մյուսին ենթավարպետ է պետք», մի խոսքով մեկին՝ մի բան, մեկ ուրիշին՝ մի այլ բան, ում ինչ պետք է: Եվ ինձ թվում է, թե նման միջոցառումը բավականին կհեշտացներ հասարակական շփումները, քանզի միշտ և ամենուր կան մարդիկ, որոնց համար հանգամանքներն այնպես են դասավորվում, որ նրանք միմյանց կարիք են գգում, բայց, այդպես էլ իրար չգտնելով, ծայրահեղ անհարմարություններ են կրում:

Ինձ հայտնի է, որ ի մեծն ամոթ մեր դարի, մեր աչքի առաջ սովամահ են եղել բացառիկ գիտելիքների տեր երկու մարդ՝ Լիլիո Գրեգորիո Զիրալդին Իտալիայում և Սերաստիան Կաստալիոնը Գերմանիայում՝, կարծում եմ, եթե նրանց աղետալի վիճակի մասին իմանային, կգտնվեին բավական շատ մարդիկ, որոնք միանգամայն լավ պայմաններով կհրավիրեին իրենց մոտ կամ, համենայն դեպս, կօգնեին նրանց, որտեղ էլ նրանք ապրելիս լինեին: Աշխարհը դեռևս այնքան չի փչացել, որ չգտնվեր մի մարդ (և ես ճանաչում եմ նման մեկին), որն ամբողջ սրտով չկամենար ծնողներից ժառանգած միջոցները (քանի դեռ ճակատագրին հաճո է, որ ինքը դրանք տնօրինի) ծախսել նշանակութուն ունեցող որևէ բնագավառի արտասովոր և բացառիկ մարդկանց աղքատությունից փրկելու համար, քանզի հաճախ ճակատագիրը կրնակալու հետապնդում է նրանց և հասցնում ծայրահեղության: Այդ մարդը նրանց համար կստեղծեր առնվազն այնպիսի պայմաններ, որ անգամ եթե նրանց մեջ գտնվեր զժգոհ մեկը, ապա դրա պատճառը կլիներ սոսկ նրա սեփական անխոհեմությունը:

Տնտեսական գործերում նույնպես հայրս սահմանել է կանոններ, որոնք ես համարում եմ գովելի, սակայն, ցավոք, ի վիճակի չեմ պահպանել: Չէ որ բացի զանազան տնտեսական գործերի վարմանը վերաբե-

բող այն գրառումներից, ուր մտցվում էին համեմատաբար փոքր հաշիվները, վճարումները, նոտարի վավերացում շտապանշող գործարքները (քանզի դրանց հաշվառումը հանձնարարվում է կառավարական հարկահավաքին), նա իր հավատարիմ ծառաներից մեկին, որին օգտագործում էր իբրև գրագիր, վստահել էր նաև վարել օրագիրը, որտեղ պետք է նշվեին ուշադրութան արժանի բոլոր անցքերը, ինչպես նաև մեր տան պատմութանը վերաբերող բացարձակապես բոլոր իրադարձություններն ըստ օրերի: Եվ հիմա, երբ ժամանակն սկսում է ջնջել կենդանի հուշերս, այդ տարեգրությունը թերթելն անշափ հաճելի և նույնքան օգտակար է, քանզի հաճախ փարատում է մեր կասկածները. ե՞րբ է ծրագրովել այսինչ գործը: Ե՞րբ է ավարտվել: Ինչպե՞ս է ընթացել: Ինչպե՞ս է վերջացել: Այստեղ մենք կարող ենք կարդալ նաև մեր ճանապարհորդությունների, մեր բացակայությունների, ամուսնությունների, մահացությունների, ուրախ կամ տխուր լուրերի, մեր կարևոր ծառաների փոփոխության և նման այլ բաների մասին: Դա հնամենի սովորություն է, և կարծում եմ, վատ չէր լինի, եթե ամեն ոք այն թարմացներ բուխարիկի մոտ: Իսկ ինքս ինձ համարում եմ հիմար, որ չեմ հեռակել դրան:

Գլուխ XXXVI

ՀԱԳՈՒՍ ԿՐԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչ էլ ձեռնարկեմ, ստիպված եմ լինում հաղթահարել սովորության հարուցած խոչընդոտները՝ այնքան կաշկանդում է այն մեր յուրաքանչյուր քայլը: Տարվա այս ցուրտ եղանակին ես մի առիթով մտածում էի, թե արդյոք վերջերս հայտնաբերված ժողովուրդների համար բուրբուլին մերկ ման գալը օդի քարձր ջերմաստիճանի հետևանք է, ինչպես մենք դա պնդում ենք հնդկացիների ու մավրերի վերաբերյալ, թե դա ի սկզբունե յուրահատուկ է եղել բոլոր մարդկանց: Բայց քանի որ երկնքի ներքո տարող ամեն բան, ինչպես Սուրբ գիրքն է ասում, ենթակա է միևնույն օրենքներին¹, մտածող մարդիկ, առնչվելով նման հարցերի, երբ անհրաժեշտ է զանազանել ընական և հնարովի օրենքները, սովորություն ունեն դիմելու աշխարհի ընդհանուր կարգին, ուր ոչ մի կեղծիք չի կարող լինել: Եվ այսպես, քանի որ ամբողջ գոյք, իր կեցությունը պահպանելու համար, այսպես ասած, զինված է թել ու ասեղով, հիրավի, դժվար է հավատալ, թե միայն մենք ենք ստեղծված այդքան անգոր ու խղճուկ, որ չենք կարող ինքներս մեզ պահել առանց կողմնակի օգնության: Ուստի, ես գտնում եմ, որ, ինչպես ուղածդ բույսը, ծառը, կենդանին, և

առհասարակ այն ամենը, ինչ ապրում է, բուն բնության կողմից ապահովված է խստաշունչ եղանակից պաշտպանվելու համար բավարար ծածկույթով.

Proptereaque fere res omnes aut corio sunt
Aut seta, aut conchis, aut callo, aut cortice tectae*,

Ճիշտ նույնը մի ժամանակ եղել է նաև մեզ հետ. սակայն նման այն մարդկանց, որոնք ցերեկային լույսը փոխարինում են արհեստական լույսով, մենք նույնպես բնական միջոցները փոխարինել ենք փոխառյալ միջոցներով: Եվ դժվար չէ համոզվել, որ այդ սովորությունը մեզ համար անհնար է դարձնում այն, ինչն իրականում բնավ այդպիսին չէ: Իրոք, հագուստի մասին ոչ մի պատկերացում չունեցող ժողովուրդներն ապրում են մոտավորապես նույն կլիմայի պայմաններում, ինչ մենք, և, բացի այդ, մեր մարմնի առավել զգայուն մասերը, օրինակ աչքերը, բերանը, քիթը, սականջները, իսկ մեր գյուղացիների (ինչպես և մեր նախնիների), դրանից դատ, նաև կուրծքն ու փորը բաց են մնում: Եվ եթե մեզ ի ծնե կանխորոշված շիներ տաբատներ ու շրջագրեստներ կրել, ապա կարելի է շտարակուսել, որ բնությունը ցուրտ եղանակի համար խոցելի թողած մեր մարմնի մասերը կապահովեր ավելի հաստ մաշկով, ինչպես մատների ծայրերն ու ոտքերի ներբաններն են:

Ուրեմն ինչո՞ւ է դրան հավատալը դժվար: Իմ և մեր կողմերի գյուղացու հազնեղաձևի միջև ես ավելի մեծ տարբերություն եմ գտնում, քան նրա հագուստի և իր մաշկով ծածկված մարդու հագուստի միջև:

Իսկ ինչքա՞ն մարդիկ, հատկապես Թուրքիայում, մերկ են ման գալիս բարեպաշտությունից:

Մի մարդ, ձմեռվա թունդ ժամանակ տեսնելով մեր աղքատներից մեկին, որը, վերնաշապիկից բացի վրան ոչինչ չունենալով, այնուամենայնիվ ավելի վատ չէր զգում, քան նա, ով մինչև ականջները փաթաթված է կզաքիսի մորթով, հարցրեց, թե ինչպես է դիմանում այդ ցրտին: «Իսկ դուք, պարոն,— պատասխանեց նա,— չէ որ ձեր դեմքն էլ ոչ մի բանով չի ծածկված: Այդպես էլ ես՝ ասես ամբողջովին դեմք լինեմ»: Իտալացիները պատմում են, եթե շեմ սխալվում, Ֆլորենցիայի դքսի ծաղրածուի մասին, որն իր տիրոջ այն հարցին, թե ինչպես է կարողանում, այդքան վատ հազնված լինելով, դիմանալ ցրտին, երբ ինքը՝ դուրսը, այդպես տանջվում է, պատասխանեց. «Հետևեք իմ խորհրդին, ինձ

* Ահա թե ինչու համարյա ամեն կենդանի բան ծածկված է կամ մաշկով, կամ բրդով, կամ խեցիներով, կամ պալարներով կամ կեղևով² (լատ.):

նման, հազեք այն ամենը, ինչ ունեք և այլևս սառնամանիքից չեք տանջվի»։ Մասինիսսա՝ արքային մինչև խոր ծերություն ոչ սառնամանիքին, ոչ բքին, ոչ անձրևին հնարավոր չէր համոզել, որ ծածկի գլուխը³։ Նույն բանն են ասում նաև Սևերոս⁴ կայսեր մասին։

Հերոդոտոսը պատմում է, թե պարսիկների դեմ եգիպտացիների պատերազմների ժամանակ և ինքը, և ուրիշները նկատել են, որ սպանված եգիպտացիների կառափներն անհամեմատ ավելի պինդ են, քան պարսիկներինը, որովհետև առաջինները մանկուց ածիլում են դլուխները և բաց պահում, մինչդեռ երկրորդները միշտ Փածկում են՝ պատանի հասակում թասակներով, իսկ ավելի ուշ՝ շալմաներով⁵։

Ագեսիլայոս թագավորը մինչև խոր ծերություն, ամառ, ձմեռ միատեսակ հագուստ էր կրում։ Կեսարը, ինչպես հայտնում է Սվետոնիոսը, գնում էր միշտ զորքի առջնից և շատ հաճախ հետիոտն, բաց գլխով՝ արևը կիզեր, թե անձրև դար⁶, նույն բանն են պատմում նաև Հաննիբալի մասին։

tum vertice nudo

Excipere insanos imbres coeliqu. ruinam*.

Մի վենետիկցի, որը երկար ժամանակ ապրել է Պեգուի թագավորությունում⁸ և միայն վերջերս է վերադարձել, գրում է, թե այնտեղի տղամարդիկ ու կանայք, թեև մարմնի մնացած մասերը ծածկում են հագուստով, միշտ բոկոտն են և այդպես էլ ձի են նստում։

Եվ հատկանշական է, որ Պլատոնը նույնպես խորհուրդ է տալիս հանուն մեր ամբողջ մարմնի առողջության ոչ մեր ոտքերը, ոչ գլուխը չծածկել ուրիշ ոչ մի բանով, բացի նրանից, ինչ տվել է բուն բնությունը⁹։

Թագավորը, որին ընտրել են լեհերը մեր թագավորից հետո¹⁰ (նա իսկապես մեր դարի ամենամեծ տիրակալներից մեկն է), երբեք ձեռնոց չի կրում և ոչ ձմռանը, ոչ վատ եղանակին չի փոխում այն գլխարկը, որ տանն է դնում¹¹։

Եթե ես տանել չեմ կարող, երբ բաճկոնիս կոճակները բաց են, ապա իմ հարևան հողագործներն, ընդհակառակը, շատ կնեղվեին, եթե ստիպված լինեին այդպես ման գալ։ Վառոնը գտնում է, որ եթե նրանք, ովրեր հոռմեացիներին հրամայել էին աստվածների և պաշտոնյաների ներկայությամբ հանել գլխարկները, դա արել էին ոչ թե մեծերի նկատ-

* ... որը գլխաբաց դիմանում էր սարսափելի տեղատարափներին ու երկնային ամպրոպներին⁷ (լատ.)։

մամբ ունեցած հարգանքից, այլ ավելի շուտ, նկատի ունենալով քաղաքացիների առողջութիւնը¹², ինչպես նաև ցանկանալով կոփել նրանց:

Ու քանի որ խոսք բացվեց ցրտերի և անհաշիվ խայտաբղետ քրջեղենը զոռով վրաները քաշելու սովոր ֆրանսիացիների մասին (ես իմ մասին չեմ ասում, քանզի, ընդօրինակելով հանգուցյալ հորս, հագնում եմ միայն սև ու սպիտակ), ապա կավելացնեմ, որ, համաձայն մեր զորավար Մարտեն Դյու Բելլեի պատմութեան, Լյուքսեմբուրգ կատարած արշավանքի ժամանակ¹³ նրան վիճակվել է տեսնել այնպիսի դժնդակ սառնամանիքներ, որ գինին պարենի պահեստում կոտրում էին կացիներով ու սրաշեղբերով, կշեռքով բաժանում զինվորներին, որոնք այն տանում էին զամբյուղներով: Ճիշտ այնպես, ինչպես Օվիդիոսի մոտ է.

Nudaque consistunt formam servantia testae
Vina, nec hauri ta meri, sed data frusta bibunt*.

Մեռտիսյան լճի մոտ սառնամանիքներն այնքան ուժեղ են, որ այն տեղում, ուր զորավար Միհրդատը ճակատամարտ տվեց թշնամիներին և ջախջախեց հեյուկակային մարտում, նա նաև շահեց ծովամարտը ամռանը¹⁴:

Հոռմեացիները Պլացենցիայի մոտ կարթագենցիների դեմ ճակատամարտելիս¹⁶ շատ դժվարութիւններ կրեցին, քանզի թշնամու վրա հարձակվելու ժամանակ նրանց արյունը ցրտից սառչում էր, ոտքերն ու ձեռքերը փայտանում էին, մինչդեռ Հաննիբալը հրամայեց խարույկներ վառել, որպեսզի իր բոլոր զինվորները կարողանային տաքանալ, ինչպես նաև ձեթ բաժանել ջոկատներին, որպեսզի մարմիններին քսելով, նրանք իրենց մկանները դարձնեին ավելի ճկուն ու շարժուն, ծակոտիները պաշտպանեին սաւր օդից և ցուրտ քամու պոռթկումներից:

Բարելոնից հայրենիք հույների նահանջը նշանավոր է այն զրկանքներով ու դժվարութիւններով, որը նրանք ստիպված եղան հաղթահարելու Հայաստանի լեռներում վրա հասած սոսկալի ձնաբքի պատճառով նրանք մոլորվեցին և կորցրին ճանապարհը, մնալով վատ եղանակի, կարելի է ասել, կատաղի պաշարման մեջ, նրանք մի օր ու գիշեր ոչինչ չկերան ու չխմեցին, նրանց անասունների մեծ մասը սատկեց, բազմաթիվ զինվորներ մահացան, շատերը կարկտից ու ձյան ճերմակութիւնից կուրացան, ոմանց ձեռքերն ու ոտքերը խեղվեցին, մյուսներն այնպես քցմեցին, որ անշարժացան, թեև նրանց գիտակցութիւնը լիովին տեղն էր:

* Այլ ամանից հանած (սառած) գինին պահպանում է նրա ձևը, և այն ոչ թէ կամերով են խմում, այլ կոտրատում են¹⁴ (լատ.):

Ալեքսանդրը տեսել է մի երկիր, որտեղ ձմռանը պաղատու ծառերը, ցրտահարությունից պաշտպանելու համար, թաղում են:

Ինչ վերաբերում է հագուստին, ապա Մեքսիկայի թագավորն օրական շորս անգամ փոխում էր զգեստը, շնայած մեկ անգամ հագած շորն այլևս երբեք չէր հագնում: Նա դրանք բաժանում էր որպես նվերներ ու պարգևներ, նույն ձևով, ոչ մի խեցաման, սկուտեղ կամ խոհանոցի ու սեղանի սպասք երկրորդ անգամ չէր մատուցվում նրան:

Գլուխ XXXVII

ԿՐՏՍԵՐ ԿԱՏՈՆԻ ՄԱՍԻՆ

Ես հետու եմ այն համընդհանուր մոլորությունից, որ բոլորին իմ արշինով չափեմ: Ես լավ հասկանում եմ այն մարդկանց, որոնք նման չեն ինձ: Եվ, ունենալով որոշակի հատկանիշներ, ես դրանք չեմ պարտադրում ամբողջ աշխարհին, ինչպես անում է չուրաբանչյուրը, ես ըմբռնում և պատկերացնում եմ հազարավոր այլ կենսաձևեր, և, հակառակ ընդհանուր սովորության, ավելի մեծ պատրաստակամությամբ ընդունում եմ ուրիշի տարրերությունն ինձանից, քան նմանությունը: Ես բնավ ուրիշին չեմ պարտադրում իմ հայացքներն ու սովորությունները և նրան տեսնում եմ այնպես, ինչպիսին նա կա, առանց որևէ համեմատության, բայց չափելով նրան, այսպես ասած, նրա իսկ չափանիշով: Ինքս ամենևին չիմնելով ժուժկայ, ես սրտանց հիանում եմ ֆելյանցիների և կապուցիների՝ ժուժկայությամբ, համարելով նրանց կենսաձևեր միանգամայն արժանավայել, և իմ երևակայության ուժով առանց դժվարության ինձ դնում եմ նրանց տեղը:

Ես առավել ևս սիրում ու հարգում եմ նրանց, որոնք հետևաբար են ինձանից: Եվ ես չէի ուզենա ոչինչ, բան, որ մեզանից չուրաբանչյուրի մասին դատեին առանձին և ինձ բոլորի նման շղնահատելին:

Իմ սեփական թուլությունը բնավ չի նսեմացնում այն բարձր կարծիքը, որ պիտի ունենամ արժանի մարդկանց տոկունության մասին: Sunt qui nihil laudant, nisi quod se imitari posse confidunt*. Սողալով փոշու մեջ, ես, այնուամենայնիվ, չեմ կորցրել ինչ-որ տեղ բարձր ամպերում սավառնող սրոշ հերոսական հոգիների անցուզական

* Կան մարդիկ, որոնք գովարանում են լոկ այն, ինչին, իրենց կարծիքով, կարող են ընդօրինակել² (լատ.):

վեհությունը նկատելու ունակութունս: Եթե ինձ չի վիճակված գործել ըստ պատշաճին, ապա գոնե ճիշտ դատողություններ անելը և, համե- նայն դեպս, իմ էության այդ ամենագլխավոր մասն անաղարտ պա- հելն, ըստ իս, արդեն մեծ բան է: Չէ որ բարի կամք ունենալը նույն- պես ինչ-որ բան արժե, եթե անգամ ձեռքիցս ոչինչ չի գալիս: Այն դա- րաշրջանը, որ մենք ձեզ հետ ապրում ենք, համեմայն դեպս մեր եր- կրնրի տակ այնքան ծանր է, որ ոչ միայն բուն առաքինությունը, այլև նրա գաղափարն իսկ անժանոթ է, երևի այն դարձել է սոսկ ճարտասա- նության դայրոցական վարժությունների մի բառ.

virti tem verba putant, ut
Lucum ligna*.

Quam vereri deberent, etiamsi percipere non possent**.

Դա մի գեղեցիկ իր է, որն իբրև զարդ կարելի է կախել պատից կամ լեզվի ծայրից, կամ ականջից:

Այլևս չեն նկատվում առաքինությամբ տոգորված արարքներ, այդ- պիսին թվացողներն իրականում այդպիսին չեն, քանզի մեզ հրապուրում է շահը, փառքը, վախը, սովորությունը և առաքինությունից նույնքան հեռու այլ մղումներ: Ըստ որում, մեր դրսևորած արդարամտությունը, քաջությունը, բարությունը այդպես կարող են անվանել միայն կողքից նայողները, հիմնվելով այն բանի վրա, թե դրանք ինչ տեսքով են հառ- նում մարդկանց առջև, սակայն անձամբ գործողի համար դա բնավ էլ առաքինություն չէ, նա հետապնդում է բոլորովին այլ նպատակներ, նրան ղեկավարում են այլ զրդապատճառներ: Մինչդեռ առաքինությունն իրենն է համարում լուկ այն, ինչ կատարվում է իր միջոցով, և միայն հանուն իրեն:

Պոտիդեայի մեծ ճակատամարտից հետո⁵, որում հույները Պավսա- նիոսի առաջնորդությամբ սարսափելի պարտության մատնեցին Մար- դոնիոսին ու պարսիկներին, հաղթողները, հետևելով իրենց մոտ ընդուն- ված սովորութիւն, սկսեցին մտածել, թե ում է պատկանում այդ մեծ սխրագործության փառքը, և դտան, որ այդ կովում առավել քաջություն են ցուցաբերել սպարտացիները: Իսկ երբ սպարտացիները՝ առաքինու- թյան հարցերում այդ հիանալի դատավորներն, իրենց հերթին, սկսեցին

* Նրանց համար առաքինությունը լուկ բառ է, իսկ սուրբ պուրակը՝ վառելավայտ³ (լատ.):

** Նրանք պետք է այն (առաքինությունը) հարգեին, եթե անգամ ի վիճակի լին հասնել զրան³ (լատ.):

որսչել, թե իրենցից ով է արժանի այդ օրվա առավել սւշքի ընկնող արարքը կատարողի պատվին, եկան այն եզրակացութեանը, որ բոլորից խիղախ մարտնչել է Արիստոգեմոսը, և այնուամենայնիվ, նրան շնորհեցին այդ պատվավոր պարգևը, քանզի նրա քաջութեան դրդապատճառը նրա ցանկութունն էր վրայից սրբել այն բիծը, որ մնացել էր Թերմոպիլիսի ժամանակվանից, և նա, իր նախկին խայտառակութունից ազատվելու համար, տենչում էր ընկնել քաջի մահով: Հետևելով բարքերի ընդհանուր փշացմանը, խախտվեցին նաև մեր դատողութունները: Ես տեսնում եմ, որ իմ ժամանակվա մտածողների մեծ մասը հմտանում է հին աշխարհի հիանալի ու ազնիվ գործերը նսեմացնելու մեջ, տալով դրանց մի որևէ ստոր մեկնաբանութուն և բացատրելու համար փնտրելով ճզճիմ առիթներ ու պատճառներ:

Մեծ բան: Ցույց տվեք ինձ մի շատ ազնիվ ու նշանավոր գործ, և ես հանձն եմ ստնում նրանում գտնել միանգամայն ճշմարտանման հիսուն անբարո զիտավորութուններ: Միայն աստծուն է հայտնի, թե, ցանկութեան դեպքում, որքան տարբեր մղումներ կարելի է հայտնաբերել մարդկային ձգտումներում: Բայց նման զազրախոսութեամբ զբաղվելու սիրահարներն ապշեցնում են նույնիսկ ոչ այնքան շարախնդրությամբ, որքան կոպտությամբ ու բթամտությամբ:

Նույնպիսի եռանդով ու պատրաստակամությամբ, ինչպես հիմարներն են ջանում նսեմացնել այդ մեծ անունները, ես կուզենայի գործի դնել բոլոր ուժերս, որ վերատին բարձրացնեմ դրանք: Ես հույս չեմ փայփայում, թե ինձ կհաջողվի իրենց նախկին արժանիքներով հանդերձ վերականգնել այդ ամենաթանկ տիպարները, որոնք, իմաստունների կարծիքով, կարող են օրինակ ծառայել ամբողջ աշխարհին, բայց և այնպես, կաշխատեմ դրա համար օգտագործել ինձ մատչելի բոլոր հնարավորութուններն ու իմ փաստարկումների ամբողջ ուժը, որքան էլ այն անբավարար լինի: Քանզի հարկ է հիշել, որ մեր երևակայության բոլոր ջանքերն ի վորու շեն բարձրանալ նրանց ծառայութունների մակարդակին:

Ազնիվ մարդկանց պարտքն է՝ առաքինութունը ներկայացնել հնարավորին շափ գեղեցիկ, և հոգ չէ, եթե մենք կրքով տարվենք այդ սուրբ էակների հանդեպ: Իսկ ինչ վերաբերում է մեր կարծեցյալ խելոքներին, ապա այդ մարդիկ ամեն կերպ սևացնում են նրանց կամ շարութունից, կամ ամեն ինչ իրենց արշինով շափելու արատավոր հակումից, որի մասին ես արդեն ասել եմ վերը, կամ (սա ինձ ամենահավանականն է թվում) այն բանից, որ շունեն բավականաչափ պարզ ու սուր տեսողութուն՝ տարբերելու առաքինության փայլն իր ամբողջ տնարատ մաք-

րությամբ. նրանց աչքն անսովոր է նման բաների: Այսպես, օրինակ, Պլուտարքոսն ասում է, թե իր ժամանակ ոմանք Կատոն Կրտսերի ինքնասպանության պատճառը համարում էին նրա թվացյալ վախը Կեսարից, և, միանգամայն հիմնավոր կերպով, վրդովվում է այդ մեկնաբանությունից⁶, կարելի է պատկերացնել, թե նրա մոտ ինչպիսի՞ դայրույթ կառաջացնեին մեր այն ժամանակակիցները, որոնք Կատոնի անձնասպանությունը վերագրում են նրա փառասիրությանը: Հիմարնե՛ր: Նա սքանչելի, ազնիվ ու վեհ գործ կկատարեր, եթե անգամ դրա համար սպասվեր խայտառակութուն, այլ ոչ թե փառք: Հիրավի, բնությունն այդ մարդուն ընտրել էր իբրև մի տիպար, որ մեզ ցույց տար, թե ուր կարող են հասնել մարդկային առաքինությունն ու հաստատակամությունը⁷:

Ես չեմ փորձի այստեղ սպառել այս ազնիվ թեման: Սակայն, ուզում եմ բանաստեղծությունների մի յուրօրինակ մրցույթ կազմակերպել լատինական այն հինգ բանաստեղծների միջև, որոնք գովերգել են Կատոնին և դրանով հուշարձան են կանգնեցրել ոչ միայն նրան, այլև, որոշ իմաստով, նաև իրենց: Ամեն մի փոքրիշատե զարգացած երեխակնկատի, որ առաջին երկու ասույթները մյուսների համեմատությամբ մի քիչ կաղում են, իսկ երրորդը, թեև ավելի թունդ է, բայց հենց իր ուժի ավելցուկի պատճառով աչքի է ընկնում որոշ շորությամբ, մի խոսքով, դրանք բանաստեղծական կատարելության մի ամբողջ, կամ նույնիսկ երկու աստիճան ցածր են շորորդից, որը կարդալուց հետո ամեն ոք հիացմունքից ծափ կտա: Վերջապես, նա կշանթահարվի, զմայլված կբարանա, կարդալով վերջինը կամ, ավելի լավ է ասել, գլխավորը, որն ընթանում է մնացած բոլորի առջևում որոշ տարածության վրա, բայց այնպիսի տարածության, որը, պատրաստ եմ երգվել, մարդկային մտքի ոչ մի լարումով հնարավոր չէ հաղթահարել:

Սակայն տարօրինակ բան է՝ մեզ մոտ ավելի շատ բանաստեղծներ կան, քան պոեզիայի մեկնաբաններ ու դատավորներ: Գրելն ավելի հեշտ է, քան դրանից գլուխ հանելը: Որոշ, միանգամայն ցածր մակարդակ շքերազանցող պոեզիայի մասին կարելի է դատել բանաստեղծական արվեստի հանձնարարականների ու կանոնների հիման վրա: Սակայն գեղեցիկ, նշանավոր, աստվածային պոեզիան վեր է կանոններից և վեր է մեր բանականությունից: Նա, ով կարող է հաստատ ու վստահ հայացքով որսալ այդ գեղեցկությունը, կտեսնի ոչ ավելին, քան կայծակի փայլը: Այն բնավ չի հարստացնում, գերում ու ամայացնում է մեր միտքը: Նա, ով կարող է խորամուխ լինել այդպիսի պոեզիայի գաղտնիքներում, իր հիացմունքով վարակում է նաև նրանց, ովքեր ունկնդրում են դրանց վերաբերյալ դատողությունները կամ դրանց նմուշների ըն-

թերցումը, դա նման է մագնիսի, որը ոչ միայն ձգում է ասեղը, այլև օժտում նրանք իր հերթին ուրիշ ասեղներ ձգելու հատկությամբ: Եվ ամենից պարզորոշ դա նկատվում է թատրոնում: Մենք տեսնում ենք, թե ինչպես մուսանների սուրբ ոգևորությունը, սկզբում բանաստեղծին տողորելով զայրույթով, վշտով, ատելությամբ, *ինքնամոռացությամբ*, այն ամենով, ինչ իրեն է հաճո, այնուհետև ցնցում է դերասանին բանաստեղծի միջոցով և, վերջապես, հանդիսատեսներին՝ դերասանի միջոցով: Դա մեկը մյուսից կախված մեր մագնիսական ասեղների մի ամբողջ շղթա է: Ամենավաղ մանկությունից պոեզիան ինձ արբեցնում էր և համակում ողջ էությունս: Սակայն նրա նկատմամբ հենց բնության կողմից իմ մեջ արմատավորված ընկալունակությունը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի էր սրվում և կատարելագործվում շնորհիվ նրա ամբողջ բազմազանության հետ իմ ծանոթության՝ ես նկատի ունեմ ոչ թե զեղեցիկ կամ վատ պոեզիան (քանզի միշտ ընտրել եմ բանաստեղծական յուրաքանչյուր ձևի առավել վսեմ նմուշներ), այլ նրա հրանգների տարբերությունը, սկզբում դա ուրախ ու կայծասփյուռ թեթևություն է, ապա վեճ ու աղնիվ նորագեղություն և, ի վերջո, հասուն, անսասան ուժ: Այդ մասին ավելի պարզ կասեն օրինակները. Օվիդիոս, Լուկանոս, Վերգիլիոս: Բայց ահա իմ բանաստեղծները, թող ամեն մեկն ինքը խոսի իր մասին.

Sit Cato, dum vivit, sane vel Caesare maior*,

հայտարարում է մեկը:

Et invictum, devicta morte, Catonem**,—

հիշում է մյուսը:

Երրորդը, հիշատակելով Կեսարի ու Պոմպեոսի միջև քաղաքացիական պատերազմները, ասում է.

Victrix causa diis placuit, sed victa Catoni***.

Չորրորդը, գովերգելով Կեսարին, ավելացնում է.

Et cuncta terrarum subacta,
Praeter atrocem animum Catonis****.

* Եվ Կատոնը, բանի գեռ ողջ էր, ավելի մեծ էր, քան ինքը Կեսարը⁸ (լատ.):

** Եվ մահին հաղթած անհաղթ Կատոնին⁹ (լատ.):

*** Աստվածները հաղթողների կողմն էին, Կատոնը՝ պարտվածների¹⁰ (լատ.):

**** Եվ երկրի երեսին ամեն ինչ հնազանդվեց, բացի Կատոնի անզիշող հոգուց¹¹ (լատ.):

Սվ, վերջապես, այս խմբի կորիֆեյը, թվարկելով բոլոր առավել համբավավոր հռոմեացիներին, որոնց պատկերել է իր նկարում, ավարտում է Կաստոնի անունով:

His dantem iura Catonem.*

Գլուխ XXXVIII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵՆՔ ԺԺԱՂՈՒՄ ՈՒ ԼԱԼԻՍ ԵՆՔ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՆԻՑ

Պատմական ստեղծագործություններում կարդալով, թե Անտիգոնոսը զայրացել է որդու վրա, երբ վերջինս բերել է թշնամու՝ իր զորքերի դեմ ճակատամարտում հենց նոր սպանված Պյուռոս արքայի գլուխը, և, անսնելով այն, Անտիգոնոսը լաց է եղել¹, կամ թե դուքս Ռենե Լոթարինգացին նույնպես ողբացել է դուքս Կարլոս Բուրգունդացու² մահը, որին ինքր հենց նոր պարտության էր մատնել, և նրա թաղմանը սգազգեստ է հագել, կամ թե Սրայի ճակատամարտում³, որտեղ կոմս դը Մոնֆորը հաղթեց Շառլ դը Բլուալին՝ Բրետոնյան դքսության համար մղվող պայքարում իր հակառակորդին, հաղթողը, տեսնելով իր թշնամու դիակը, սաստիկ վշտացավ, եկեք շանենք հետևյալ բացականչությունը.

Et così avven che l'animo ciascuna
Sua passion sotto'l contrario manto
Ricopre, con la vista or' chiara, or bruna**.

Պատմագիրները հայտնում են, թե, երբ Պոմպեոսի գլուխը բերին Կեսարին, նա փախցրեց աչքերը, ինչպես սոսկալի ու ծանր տեսարանից՝ նրանց միջև այնքան երկար ժամանակ էր համերաշխություն տիրում, այնքան երկար ժամանակ էին միասին կառավարում պետական գործերը, նրանց կապում էր ճակատագրի այնպիսի մի ընդհանրություն, այնքան փոխադարձ ծառայություններ ու համատեղ գործեր, որ չկա ոչ մի հիմք

* Նրանց նկատմամբ դատաստան տեսնող Կաստին¹² (լատ.):

** Այդպես հոգին իր նվիրական զգացմունքները ծածկում է դիմակով. թախիճն՝ ուրախությամբ, ուրախությունը՝ թախիճով⁴ (իտ.):

ենթադրելու, թե իբր Կեսարի վարքագիծն ավելին չէր, քան կեղծավորութուն, թեպետ այդ կարծիքին է հետևյալ տողերի հեղինակը.

tutumque putavit
iam bonus esse socer: lacrimas non sponte cadentes
Effudit, gemitusque expressit pectore laeto*.

Քանզի թեև մեր արարքների մեծ մասը ոչ այլ ինչ է, եթե ոչ դիմակ ու երեսպաշտութուն, ուստի, երբեմն իրականությունը լիովին համապատասխանում է այն, որ Haeredis fletus sub persona risus est**, այնուամենայնիվ, դատելով վերը բերված դեպքերի մասին, հարկ է հաշվի առնել, թե որքան հաճախ են հակասական կրքերը կեղեքում մեր հոգին: Բժիշկներն ասում են, թե մեր մարմնում կան մի ամբողջ շարք տարբեր հյուսթեք, որոնց մեջ գերիշխողն այն է, որ սովորաբար գերակշռում է՝ կախված մեր կազմվածքից, այդպես էլ մեր հոգին է. որքան էլ նրան տարբեր մղումներ հուզեն, դրանց մեջ կան այնպիսիները, որոնք միշտ հաղթում են: Սակայն, նրա հաղթանակը երբեք չի լինում այնքան վճռական, որ, մեր հոգու հարմարվողության ու փոփոխականության պատճառով, ավելի թույլ մղումներն առիթի դեպքում տեղ չնվաճեն և իրենց հերթին կարճատև գերազանցության չհասնեն, Հենց այդ պատճառով, ինչպես տեսնում ենք, միևնույն քանը կարող է ստիպել և ծիծաղել, և լաց լինել ոչ միայն երեխաներին, որոնք ամեն ինչում անմիջականորեն հետևում են բնությունը, այլև հաճախ նաև հենց մեզ, հիրավի, չէ որ մեղանից ոչ մեկը չի կարող պարծենալ, թե, մեկնելով ճանապարհորդության, որքան էլ դա ցանկալի լինի, և կտրվելով ընտանիքից ու բարեկամներից, չի զգում, որ սիրտը ճմլվում է, ու, եթե նա իսկույն չի արտասվում, այնուամենայնիվ, ոտքն ասպանդակին է դնում, առնվազն, տխուր ու թախծոտ դեմքով: Եվ որքան էլ քնքուշ բոցը ջերմացնի բարեբարո աղջկա սիրտը, այդ առթիվ ինչ էլ որ ասի մեր սիրելի բարեկամ Կատուլլոսը.

Estne novis nuptis odio Venus, anne parentum
Frustrantur falsis gaudia lacrimulis,
Ubertim thalami quas intra limina fundunt?
Non, ita me divi, vera gemunt, iuverint***,

* Եվ այդ ժամանակ, մտածելով, որ առանց իրեն վտանգելու կարող է բարի քեռի լուսդալ, նա սկսեց կեղծ արտասուքներ թափել և հողոցներ հանել իր ցնձացող կրծքից⁶ (լատ.):

** Ժառանգորդի լացը՝ ծիծաղ է դիմակի տակ? (լատ.):

*** Կամ նորապսակներին ատելի է վեներան, կամ, ամուսնական ննջատենյակի շեմքին լաց լինելով, նրանք կեղծ արտասուքներով ուզում են խափանել ճնողների ուրախությունը: Ո՛չ, վկայակոչում եմ աստվածներին, նրանք կեղծ են լալիս⁶ (լատ.):

կարելի է ասել, հարկ է լինում ամուսնուն հանձնելու համար նրան ուժով պոկել մոր գրկից:

Այսպիսով, շկա զարմանալի ոչինչ, երբ որևէ մեկը ողբում է այն մարդու մահը, որին բնավ չէր կամենա կենդանի տեսնել:

Երբ ես նախատում եմ իմ ծառային, նախատում եմ ամբողջ սրբաբան, և իմ անեծքներն անկեղծ են, ոչ թե շինծու, բայց հենց վրդովմունքս անցնի, և նույն ծառան իմ կարիքն ունենա, ես ուժերիս ներածին շափ, հաճույքով կանեմ ամեն բան, ասես ոչինչ չի եղել: Երբ ես նրան անվանում եմ տխմար կամ ավանակ, մտքովս էլ չի անցնում այդ մականուններն ընդմիշտ կպցնել նրան, և ես չեմ գտնում, թե հակասում եմ ինքս ինձ, երբ, կարճ ժամանակ անց նրան հիանալի մարդ եմ հորջարջում: Չկան հասկանիչներ, որ լիովին ու ամբողջությամբ գերիշխեն մեզանում: Եթե ինքն իրեն խոսելը հատուկ շիներ գծերին, ապա ամեն օր կարելի կլիներ լսել, թե ես ինչպես եմ փնթփնթում ինձ վրա և ինքս ինձ տակա՞նք անվանում: Բայց և այնպես ես չեմ գտնում, թե այդ բանը ճիշտ է բնութագրում իմ էությունը:

Հիմար կլիներ նա, ով, կնոջս մոտ ինձ տեսնելով մերթ անտարբեր, մերթ սիրահար, կմտածեր, թե երկու դեպքում էլ ձևացնում եմ: Երբ ներսնի մորը նրա հրամանով տանում էին ջրում խեղդելու. հրածեղտ տալիս նա, այնուամենայնիվ, համակվեց որդիական զգացմունքով, ցնցվեց ու խղճաց նրան⁹:

Ասում են, թե արևի լույսն ինչ-որ հոծ բան չէ, այլ արևն այնքան հաճախ է իրար հետևից արձակում իր ճառագայթները, որ մենք ի վիճակի չենք նկատել դրանց ընդմիջումները:

Largus enim liquidus fons luminis, aetherius sol
Irrigat assidue coelum candore recenti,
Suppedilatque novo coeolestim lumina lumen*,

այդպես էլ մեր հոգին, անորսալիորեն անցնելով մեկից մյուսին, ճառագում է դանաղան շողեր:

Արտաբանեսը, մի անգամ նկատելով իր զարմիկի՝ Քսերքսեսի դեմքի արտահայտության հանկարծակի փոփոխությունը, հանդիմանեց նրան: Քսերքսեսն այդ ժամանակ նայում էր Հունաստան ներխուժելու

* Զէ որ լույսի հոսքի անսպառ ազրյուրը՝ արեգակը, եթերային բարձունքներից երկինքը ողողում է նորանոր լույսով և անընդհատ հաջորդականությամբ ճառագում շող շող: Հետևից¹⁰ (լատ.):

համար Հելլեսպոնտոսն անցնող անթիվ զորքերին: Տեսնելով իրեն . ենթակա հաղարավոր մարդկանց, նա հաճույքից դողաց և դեմքին հազթական արտահայտություն նշմարվեց: Բայց հանկարծ նույն պահին նա մտածեց, թե, չի անցնի նույնիսկ հարյուր տարի, ու այդ ամբողջ բազմությունից կենդանի չի մնա ոչ մի մարդ, և նրա ճակատը կնճռտվեց, նա արտասովելու շափ տխրեց:

Մենք, առանց տատանվելու, վրեժ ենք լուծել մեզ հասցրած վիրավորանքի համար և, հասնելով մեր ուղաձիին, խոր գոհունակություն ապրել, և հանկարծ արտասովել ենք: Իհարկե, մեզ լացացնողը հաջողությունը չէ, և ամեն ինչ առաջվա նման է, սակայն մեր հոգին այժմ գործին նայում է ուրիշ աչքով, և այն սլատկերանում է նոր տեսքով, քանզի ամեն բան բազմազան է և ըաղմագույն: Այժմ մեր երևակայությանը տիրում են ազգակցական կապերի, վաղեմի ծանոթության ու բարեկամության մասին հուշեր, և, այն ցնցվում է, կախված դրանց գունդությունից, միայն թե այդ պատկերները մեր մտքով անցնում են այնքան արագ, որ մենք ի վիճակի չենք կանգ առնել դրանց վրա.

Nil adeo fieri celeri ratione videtur
 Quam si mens fieri proponit et inchoat ipsa.
 Ocius ergo animus quam res se perciet ulla,
 Ante oculos quarum in promptu natura videtur*

Ուստիև, ցանկանալով այդ բոլոր հաջորդական ապրումները միավորել մի ինչ-որ ամբողջության մեջ, մենք սխալ ենք գործում: Երբ Տիմոլեոնը ողբում է վեհ ու կշռադատված մտորումներից հետո իր կատարած սպանությունը, նա ողբում է ոչ թե իր արարքով հայրենիքին վերադարձրած ազատությունը, նա ողբում է ոչ թե բռնապետին, ոչ, նա ողբում է եղբորը¹²: Իր պարտքի մի մասը նա կատարել է, ուրեմն թողնենք, որ կատարի նաև մյուսը:

Գլուխ XXXIX

ՄԵՆԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի կողմ թողնենք մենակեցիկ և գործուն կյանքի մանրամասն համեմատությունները: Իսկ ինչ վերաբերում է այն գեղահունչ ասույթին,

* Հավանաբար, ոչինչ այնպես արագորեն չի իրականանում, ինչպես այն, ինչ ծրարում և ի կատար է ածում միտքը: Այսպիսով, հոգին շարժվում է ավելի արագ, քան բոլոր այն բաները, որ տեսանկիւններն մեր աչքի առջև են¹¹ (լաա.):

որով քողարկվում են փառասիրությունն ու ընչաքաղցությունը, այսինքն. «Մենք ծնվել ենք ոչ թե մեզ, այլ հասարակության համար», ապա թող այն պնդեն նրանք, ովքեր առանց ամաչելու բոլոր մյուսների հետ պարում են նույն նվագի տակ: Բայց եթե նրանք գոնե դույզն ինչ խիղճ բան են, պիտի խոստովանեն, որ իրենք արտոնությունների, պաշտոնների և աշխարհիկ այլ խաբուսիկ շքեղության հետևից են ընկնում բնավ ոչ հասարակությանը ծառայելու նպատակով, այլ ավելի շուտ հանուն նրա, որ հասարակական գործերից օգուտ կորզեն իրենց համար: Այն անագնիվ միջոցները, որոնց օգնությամբ մեր օրերում շատերը վեր են բարձրանում, պարզորոշ ասում են, որ նպատակները նույնպես արժանի չեն բարի խոսքի: Իսկ փառասիրությանը եկեք պատասխանենք, որ հենց ինքն է մեզ մենակեցության ճաշակ ներարկում, քանզի ինչի՞ց է նա ավելի շատ խորշում, քան հասարակությունից, և ինչի՞ն է այդպիսի համառությունամբ ձգտում, եթե ոչ այն բանին, որ ձեռքերն ազատ լինեն: Բարիք ու շարիք կարելի է գործել ամենուր. սակայն, եթե ճշմարիտ են Բիանթոսի այն խոսքերը, թե «մեծ մասը միշտ վատթարագույն մասն է»¹, կամ նաև էբլեգիաստինը՝ «և ամբողջ հազարի մեջ շես գտնի մեկին որ բարի լինի», —

Rari quippe boni: numero vix sunt totidem, quot
Thebarum portae, vel divitis ostia Nili*,

ապա այդ հրմշտոցի մեջ վարակվելն էլ դյուրին է: Հարկավոր է կամ ընդօրինակել արատավոր մարդկանց, կամ ասել նրանց: Վտանգավոր են թե մեկը, թե մյուսը. թե նրանց նմանվելը, քանզի նրանք անչափ շատ են, թե ուժգնորեն ատելը, քանզի նման չեն մեզ:

Վաճառականները բոլոր հիմքերն ունեն անդրծով մեկնելիս ուշադիր զննելու նավում իրենց ուղեկիցներին, թե հո նրանք անառակներ, աստվածանարդողներ, շարագործներ չեն, գտնելով, որ նման ընկերախումբը դժբախտություն է բերում: Ահա թե ինչու Բիանթոսը, դիմելով նրանց, ովքեր փոթորիկի ժամանակ իր հետ ծովում էին և աստվածների անաղաչում էին աղատել վտանգից, կատակով ասաց. «Լոեցե՛ք, որ աստվածները շնկատեն, թե դուք էլ այստեղ ինձ հետ եք»:

Ավելի համոզիչ է Պորտուգալիայի թագավոր Մանվելի տիրապետության ժամանակ Հնդկաստանի փոխարքա Ալբուկերկեի³ օրինակը:

¹ էբլեգիաստ — հին կտակարանի գրքերից մեկը (դիրք ժողովուրդ): Մ. հ. ք.

* Կամ մարդիկ հազվադեպ են. հազիվ լինեն այնքան, որքան դարպասներ կան Թեբեում կամ որքան գետաբերան ունի քարերի նեղուցը² (լատ.):

Երբ նրա նավին մոտալուտ կործանում էր սպառնում, նա իր ուսերին նստեցրեց մի մանչուկի, միակ նպատակով, որ այդ անմեղ երեխան, որի հետ կապել էր իր ճակատագիրը, օգներ արժանանալ ու ապահովեր երկնավորի ողորմածությունը, և փրկեր կործանումից:

Ասվածը ընավ չի նշանակում, թե իմաստուն մարդը չէր կարողանա իր հաճույքի համար ապրել ուղած տեղում, միայնակ զգալով նույնիսկ պալատականների ամբոխում, բայց եթե նրան վիճակված լիներ ընտրել, ապա, ինչպես սովորեցնում է փիլիսոփայությունը, նա կաշխատեր նույնիսկ շնայել այդ մարդկանց: Եթե անհրաժեշտ լինի, նա պատրաստ է տանել դա, բայց եթե հարցը կախված լինի հենց իրենից, նա կընտրի բոլորովին այլ բան: Եթե հարկ լինի պայքարել մյուսների արատների դեմ, նրան կթվա, թե ինքն էլ լիովին չի ձերբազատվել արատներից:

Քարոնդը որպես հանցապորժների պատժում էր անգամ նրանց, ովքեր մերկացվում էին վատ մարդկանց հետ ընկերություն անելու մեջ: Եվ չկա մեկ ուրիշ էակ, որ լինի այնքան չհարմարվող և նույնքան էլ հազորգասներ, ինչպիսին մարդն է. նախ իր արատների պատճառով, երկրորդ՝ իր էությունից:

Եվ, երբ ինչ-որ մեկն Անտիսթենեսին հանդիմանեց, թե վատ մարդկանց հետ է ընկերություն անում, նա, իմ կարծիքով, ոչ այնքան համողիչ, պատասխանեց, վկայակոչելով այն, թե բժիշկները նույնպես իրենց կյանքն անցկացնում են հիվանդների մեջ: Բանն այն է, որ հոգալով հիվանդների առողջության մասին, բժիշկներն, անտարակույս, վնաս են հասցնում սեփական առողջությանը, քանզի շարունակ շփվում են և գործ են ունենում նրանց հետ, ենթարկվելով վարակվելու վտանգին:

Կարծում եմ բոլորի նպատակը միշտ մեկն է՝ ապրել ազատ ու անկախ, սակայն միշտ չէ, որ մարդիկ գրան հասնելու ճիշտ ճանապարհ են ընտրում: Հաճախ նրանք մտածում են, թե հեռացել են գործերից, բայց պարզվում է, որ միայն մեկը մյուսով են փոխարինել: Ոչ պակաս տառապանք է կառավարել սեփական ընտանիքը, քան մի ամբողջ պետություն. չէ որ եթե մի բան տանջում է հոգիդ, այն լիովին տրվում է դրան, ու թեև տնտեսական հոգսերն այնքան էլ կարևոր չեն, այնուամենայնիվ շատ ծանձրալի են: Ավելին, ազատվելով արքունիքից և գործերից, մենք չենք ազատվում մեր գոյության հիմնական ու դիտարկող տառապանքներից:

ratio et prudentia curas,

5

Non locus effusi late maris arbiter, aufert*.

* Հոգսերից ազատում են բանականությունն ու իմաստությունը, այլ ոչ թե ընդարձակ ձովի մերձսփինյա տեղանքը¹ (լատ.):

Բնակատեղը փոխելով սնափառութիւնը, ազահութիւնը, անվճար-
կանութիւնը, վախն ու տոփանքը շին լքում մեզ:

Et post equitem sedet atra cura*.

Դրանք մեզ հալածում են հաճախ նույնիսկ վանքում, նույնիսկ փի-
լիսոփայութեան ապաստանում: Դրանցից շին փրկում ոչ անապատները,
ոչ քարայրները, ոչ մազազգեստը, ոչ պասը.

haeret lateri letalis arundo**.

Մի մարդու մասին Սոկրատեսին ասացին, թե ճանապարհորդու-
թիւնը բնավ չի ուղղել նրան: «Սիրով հավատում եմ,— նկատեց Սոկ-
րատեսը:— Չէ որ նա ինքն իրեն է տարել հետը»:

Quid terras alio calentes
Sole mutamus? patria quis exul
Se quoque fugit?***

Եթե նախապես հողիդ շագատես տանջող բեռից, ապա ճանապարհի
ցնցումներից այն ավելի զգայուն կդառնաս: Չէ որ նույնն է նաև նավը.
այն հեշտ է լողում, երբ բեռը լավ դասավորված ու ամրացված է: Հի-
վանդին ստիպելով փոխել դիրքը, դուք ավելի շատ վնաս եք հասցնում
նրան, քան օգուտ, նրան շարժելով, դուք հիվանդութիւնը ներս եք
զցում: Որքան շատ ենք մենք ցցերը տարուբերում ու սեղմում, այնքան
դրանք ավելի են խորանում ու թաղվում: Ուստի մարդկանցից հեռանա-
լը բավական չէ, տեղը փոխելը բավական չէ, հարկավոր է հեռանալ ամ-
բոխի այն առանձնահատկութիւններից, որոնք արմատավորվել են մե-
զանում, հարկ է, որ բաժանվենք ինքներս մեզանից և ապա վերստին
դանենք մեզ:

Rupi iam vincula dicas:

Nam luctata canis nodum arripit; attamen illi,
Cum fugit, a collo trahitur pars longa catenae****.

* Հեծյալի թիկունքում նույնպես նստած է մուսլ հսգսը⁵ (լատ.):

** Մահարեր նետը կողս մխրճվեց⁶ (լատ.):

*** Ինչո՞ւ փնտրենք հողեր, որոնք ուրիշ արևով են ջերմանում: Ո՞վ կարող է փախ-
չել ինքն իրենից, լքելով հայրենիքը⁷ (լատ.):

**** Գու կասես, թե ազատվե՞լ ես շղթաներից: Ծունը երկար ճիգերից հետո, վերջապես
կտրում է կապն ու փախչում, բայց նրա վզին դեռևս ճոճվում է շղթայի կտորը⁸ (լատ.):

Մենք հետևներիցս քարշ ենք տալիս մեր շղթաները, այստեղ տակալին չկա լիակատար ազատություն՝ մենք հայացքներս ուղղում ենք այն բանին, ինչ թողել ենք մեր հետևում, մեր երևակայությունը տակալին սուգորված է դրանով,

Nisi purgatum est pectus, guae quoelia robis
Atque pericula tunc ingratis insinuandum?
Quantae conscindunt hominem cuppedinis acres
Sollicitum curae, quantiguae perinde timores?
Quidve superbia, spurcitia, ac petulantia, quantas
Efficiunt clades? quid luxus dezidiesque?*

Զարիքը բույն է դրել մեր հոգում, իսկ նա անկարող է փախչել ինքն իրենից.

In culpa est animus qui se non effugit u iquam¹⁰

Եվ այսպես, նրան պետք է թարմանալ ու ինքն իր մեջ ամփոփվել. հենց դա էլ կլինի իսկական մենակեցությունը, որը կարելի է ըմբռնել քաղաքների եռուղեռում և թագավորների արքունիքներում, թեև դրա հաճույքն ամենից ազատ ու լրիվությունը կարելի է վայելել միայնություն մեջ: Իսկ եթե մենք մտադիր ենք ապրել միայնակ և զուխներս պահել առանց հասարակության, անենք այնպես, որ մեր բավարարվածությունը կամ շբավարարվածությունն ամբողջովին կախված լինեն մեզանից, ձերբզատվենք մերձավորների հետ կապող բոլոր կապերից, ստիպենք մեզ դիտակցաբար ապրել միայնակ, և ըստ որում այնպես, որ դա մեզ հաճույք պատճառի:

Ստիլպոնեսին հաջողվեց փրկվել իր հարազատ քաղաքն ամայացրած հրդեհից, բայց կրակում այրվեցին նրա կինը, երեխաներն ու ամբողջ ունեցվածքը: Հանդիպելով նրան և դեմքին չկարդալով ոչ վախ, ոչ նուզմունք, շնայած նրա հայրենիքին հասած այդ սոսկալի աղետին, Գեմետրիոս Պոլիորկետեսը¹¹ հարցրեց, թե միթե նա ոչ մի կորուստ չի կրել: Ստիլպոնեսը պատասխանեց, թե ամեն ինչ վերջացել է առանց մնասների և, փառք աստծո, ինքը սեփական ոչինչ չի կորցրել: Նույն միտքն է արտահայտել փիլիսոփա Անտիսթենեսը, կատակով խորհուրդ

* Ոթն մեր հոգին չի մաքրվել, դեռևս որքան (ներքին) ճակատամարտի պիտի մղենք մենք՝ թշվառներս, որքան վտանդներ պիտի հաղթահարենք: Ինչպիսի տանջալից տաղապաններ, ինչպիսի վախ է կեղեքում կրքերով համակված մարդուն: Ինչպիսի պոտուհասներ կրկրեն նրան գոտոզամությունը, ցոփությունը, շղսպվածությունը, ինչպիսիք՝ շրկությունն ու պարապությունը⁹ (լատ.):

տալով հետևյալը. «Մարդ պետք է իր հետ վերցնի լուկ ալյն, ինչ մնում է ջրի երեսին, որպեսզի նավաբեկության ժամանակ դրանց հետ միասին կարողանա լողալով հասնել ափ»¹²:

Եվ իրոք, մտածող մարդը, քանի դեռ տիրապետում է իրեն, ոչինչ չի կորցրել: Երբ բարբարոսներն ավերեցին Նույն քաղաքը, այնտեղի եպիսկոպոս Պավլինասը, կորցնելով ամեն ինչ և գերի ընկնելով հաղթողներին, դիմեց աստծուն այսպիսի աղոթքով. «Տեր աստված, մի թող, որ զգամ այս կորուստը, քանզի, ինչպես դիտես, նրանք իմ ոչ մի բանին ձեռք չեն տվել»: Այն հաբաստությունները, որ նրան դարձնում էին հարուստ, և այն բարիքը, որ նրան դարձնում էր բարի, մնացել էին անվնաս:

Ահա թե ինչ է նշանակում ընտրել այնպիսի գանձեր, որոնք հնարավոր չէ առևանգել, և թաքցնել այնպիսի գաղտնարանում, ուր ոչ ոք չի կարող թափանցել, այնպես, որ նրա տեղը կարող ենք ցույց տալ միայն մենք: Ում որ վիճակված է, պետք է ունենա կին, երեխաներ, զույք և, ամենից առաջ, առողջութուն. սակայն հարկ չկա այդ ամենի հետ կապվել շափից ավելի՝ այնպես, որ դրանից կախված լինի մեր երջանկությունը: Հարկավոր է պահել մի անկյուն, որն ամբողջովին լինի մերը, միշտ մեր տրամադրության տակ, ուր մենք լիովին ազատ կլինենք, ուր կլինի մեր գլխավոր ապաստարանը, ուր կկարողանանք մեկուսանալ: Հենց այստեղ էլ պետք է զրույցներ վարենք ինքներս մեզ հետ, և ըստ որում այնքան գաղտնի, որ շիմանան ոչ մեր ընկերները, ոչ կողմնակի անձինք, այստեղ պետք է խորհենք և ուրախանանք, մոռանալով, որ ունենք կին, երեխաներ, զույք, տնտեսություն, ծառաներ, որպեսզի նրանց կորցնելու դեպքում, մեզ համար առանց այդ ամենի ապրելն անսովոր բան չլինի: Մենք տեր ենք մի հոգու, որը կարող է հաղորդակցվել ինքն իր հետ, կարող է ընկերակցել իրեն, ունի մեկը, որի վրա կարող է հարձակվել, պաշտպանվել նրանից, ունի ստանալու և նվիրելու բան: Մենք պատճառ չունենք վախենալու, թե այդ միայնություն մեզ կբարանանք տանջալի պարապությունից.

*In solis sis tibi turba locis**.

Անտիսթենեսն ասում է, թե առաքինությունը գոհանում է իրենով. նա պետք չունի ոչ կանոնների, ոչ կողմնակի ազդեցության:

Մեր հազարավոր սովորական արարքներից շենք գտնի ոչ մեկը, որը կատարած լինենք անմիջականորեն մեզ համար: Նայիր. ահա գայրացած և ափերից դուրս եկած մի մարդ, որը մաղկցում է կիսաքանդ

* Իր միայնակ ես, ինքդ քեզ համար աղբոխ եղեր¹³ (լատ.):

պատն ի վեր, թիրախ ծառայելով պատրույգավոր հրացանների կրակոցների համար, ահա և ամբողջովին սպիներով ծածկված, հոգնատանջ, սովից դալկացած մեկ ուրիշը, որը որոշել է՝ ավելի շուտ մեռնել, բայց բաղաքի դարպասները շրացել առաջին պատահած մարդու առջև: Արդյո՞ք կարծում ես, թե նրանք այստեղ են հանուն իրենց: Նրանք այստեղ են հանուն այն մարդկանց, ում երբեք չեն տեսել, ովքեր բնավ իրենց չեն ծանրաբեռնում, մտածելով նրանց սիրտնեղների մասին, այդ նույն ժամանակ թաղվելով անբանության ու վայելքների մեջ: Ահա ևս մեկը. խիտղ, թարախածոր աչքերով, անվաճ ու մազ-գուզ, նա իր աշխատասենյակը թողնում է ու զհիշերին. արդյո՞ք կարծում ես, թե նա զրբերը քրքրում է, որ դառնա ավելի առաքինի, ավելի երջանիկ ու ավելի իմաստուն: Ամենևին: Նա պատրաստ է տանջամահ անել իրեն, բայց միայն հայտնել սերունդներին, թե ինչ շափով է իր բանաստեղծությունները գրել Պլավտոսը, կամ թե ինչպես է ավելի ճիշտ գրվում լատինական այսինչ բառը: Ո՞վ մեծ հաճույքով չէր համարձայնի իր առույջությունը, հանգիստը կամ հենց կյանքը տալ համբավի ու փառքի՝ այդ ամենաանօգուտ, անպետք ու կեղծ դրամի փոխարեն, որ շրջանառության մեջ է մեզ մոտ: Մեզ քի՛չ է վախը սեփական կյանքի համար, դե եկեք զողանք նաև մեր կանանց, երեխաների, տնեցիների կյանքի վրա: Մեզ քի՛չ են մեր սեփական գործերի հոգսերը, դե եկեք տանջվենք ու գլուխ կտրենք մեր բարեկամների ու հարևանների գործերի համար:

Vahl quemquamne hominem in animum instituere aut Parare, quod sit carius quam ipse est sibi?*

Մենակեցությունն, ըստ իս, խելամիտ հիմքեր ունի ավելի շուտ նրանց համար, ովքեր արդեն հասցրել են աշխարհին տալ իրենց ամենագործուն և ծաղկուն տարիները, ինչպես արել է, ասենք, Քալեսոս:

Մենք բավականաչափ ապրել ենք ուրիշների համար, ուրեմն գոնե կյանքի մնացած մասն ապրենք մեզ համար: Մեր բոլոր ծրագրերն ու հղացումները կենտրոնացնենք մեր սեփական բարօրության ու մեզ վրա: Չէ որ դժվարին գործ է՝ նահանջել, չկորցնելով հոգու արիությունը, ուզածդ նահանջ ինքնին բավականաչափ հոգսաշատ բան է, որ դրան զուամարես նաև ուրիշ հոգսեր: Երբ աստված մեզ հնարավորություն է տալիս նախապատրաստվել մեր վերաբնակմանը, օգտագործենք այն

* Երևակայեցե՞ք: Կապվել մեկին կամ այնպիսի զգացմունք տա՞ծել, որ նա քեզ համար ավելի թանկ լինի, քան դու ի՞նքզի՞4 (լատ.):

խելքով, դասավորենք տան եղած-չեղածը, նախապես հրաժեշտ տանք շրջապատի մարդկանց, ձերբազատվենք այն ճնշող կապերից, որոնք մեզ կապում են արտաքին աշխարհի հետ և բաժանում հենց մեզանից: Հարկավոր է կտրել այդ բացառիկ ամուր կապերը: Կարելի է դեռևս սիրել այսինչը կամ այնինչը, մինչև վերջ չկապվելով սակայն որևէ բանի հետ, բացի հենց քեզանից: Այլ կերպ ասած. թող ամեն ինչ առաջվա նման մոտ լինի մեզ, բայց թող շմիհայտնությամբ ու շտերտաճի մեզ հետ այնպես, որ հնարավոր չլինի առանց մեր մաշկն ու միսը պոկելու բաժանել մեզանից: Աշխարհում ամենամեծ բանն ինքն իրեն տիրապետելն է:

Հասել է ժամը, երբ մենք պետք է բաժանվենք հասարակությունից, քանզի այլևս առաջարկելու ոչինչ չունենք: Եվ նա, ով չի կարող պարտք տալ, չպետք է նաև պարտք վերցնի: Մենք կորցնում ենք ուժերս, դե ուրեմն, հավաքենք ու խնայենք դրանք մեզ համար: Նա, ով կարող է զանց առնել, իր վրա բարեկամության ու սերտ կապերի դրած պարտականությունները և հիշողությունից իսպառ ջնջել դրանք, թող անի՝ այդ: Սակայն նա պետք է զգուշանա, որ իրեն ուրիշների համար ոչ պիտանի, տհաճ ու ձանձրալի դարձնող մայրամուտի այդ ժամերին նա ձանձրալի, ինչպես նաև տհաճ ու ոչ պիտանի չդառնա նաև հենց իր համար: Թող նա ինքն իրեն փայփայի ու սիրաշահի, սակայն, գլխավորը, թող կառավորի իրեն, սեփական բանականությանն ու խղճին վերաբերվելով հարգալից ու երկյուղածությամբ՝ այնպես, որ շամաշի դրանց համար: *Ratum est enim ut satis se quisque vereatur**.

Սովորատեսն ասում էր, թե սլատանիները սլետք է սովորեն, մեծերը՝ իրենց վարժեցնեն բարի գործեր կատարելու, ժերերը՝ հեռանան ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական ամեն տեսակ գործերից և իրենց հայեցողությամբ ապրեն առանց որոշակի պարտականությունների¹⁶:

Կան այնպիսի խառնվածքի մարդիկ, որոնց հեշտությամբ հաջողվում է պահպանել մենակեցության կանոնները: Այն անհատականությունները, որոնց զգացմունքները հույլ են ու խամրած, իսկ կամքն ու կրքերն աչքի չեն ընկնում մեծ խանդավառությամբ, որի հետևանքով նրանք դժվարությամբ են անձնատուր լինում դրանց, տարվում են ինչ-որ բանով (այդպիսին եմ, օրինակ, ես թե բնավորությանս բնական կերտվածքով, թե իմ համոզմունքներով), նման անհատականություն-

* Ահիք հազվագեղ է լինում, որ որևէ մեկը բավականաչափ վտիտեա ինքն իրենից¹⁶ (լատ.)

ներն ավելի շուտ և ավելի հաճույքով կընդունեն այդ խորհուրդը, քան գործուն ու աշխույժ հոգիները, որոնք ձգտում են ընդգրկել կատարելապես ամեն բան, միջամտում են ամենուր, հափշտակվում են աշխարհին ընկած ամեն ինչով, կյանքի բոլոր պահերին առաջարկում են իրենց ու իրենց ծառայությունները և պատրաստ են ստանձնել ուղածղ գործը: Անհրաժեշտ է օգտվել կյանքի պարզևած պատահական և մեղանից կախում չունեցող հարմարություններից, եթե դրանք մեզ հաճույք են պատճառում, սակայն չի կարելի դրանց վրա նայել որպես մեր գոյության գլխավոր երևույթների, դա այդպես չէ, և դա չի ուզում ոչ բանականությունը, ոչ բնությունը: Ինչո՞ւ, հակառակ նրա օրենքների, մեր հոգու բավարարվածությունը կամ անբավարարվածությունը կախման մեջ դնենք մեզանից չկախված բաներից: Ճակատագրի հնարավոր հարվածները կանխագործելը, մեր տրամադրության տակ եղած հաճույքներից մեզ զրկելը (ինչպես շատերն էին անում բարեպաշտությունից, իսկ որոշ փիլիսոփաներ՝ համապատասխան իրենց հայացքների), ծառաների օգնությունից հրաժարվելը, մերկ տախտակներին քնելը, սեփական աչքերը հանելը, հարստությունը դետը գցելը, սառսալանքներ որոնելը (առաջինները նրա համար, որ այս կյանքում կրած տվայտանքներով երանության արժանանան գալիք կյանքում, մյուսները՝ որ, իշնելով սանդուղքի ամենաստորին աստիճանին, իրենց ապահովեն ավելի ցած ընկնելուց) առաքինության շափից դուրս դրսևորումներ են: Իսկ իրենց գազտնարանը սեփական փառքի ազրյուր դարձնելու և մյուսներին օրինակ ծառայեցնելու գործով թող զբաղվեն ուրիշները՝ նրանց, ովքեր ավելի հաստատակամ են ու ավելի տոկուն:

tuta et parvula laud.,

Cum res deficient, satis inter vilia fortis:

Verum ubi quid melius contingit et unctius, idem

Hos sapere et solos aio bene vivere, quorum

Conspicitur nitidis fundata pecunia villis*.

Ինչ վերաբերում է ինձ, ապա իմ գործերն էլ բավական են, որ այդքան հեռու չգնամ: Քանի դեռ ճակատագիրը բարեհաճ է իմ հանդեպ, ինձ համար ավելի քան բավարար է նախապատրաստվել նրա անբարեհա-

* Երբ ևս աղքատության մեջ եմ, բավարարվում եմ իմ փոքր եկամտով, պահպանելով ոպուս կայունությունը նաև պակասության մեջ: Իսկ երբ ինձ ավելի լավ ու յուզալի պատաս է բաժին ընկնում, ասում եմ. «Իմաստուն են և հարկ եղածին պես են ապրում միայն նրանք, ում շքեղ կարվածքներում ներդրված հարստությունը բոլորի աչքի առաջ է»¹⁷ (լատ):

ճությանը և, գտնվելով բարօրության մեջ, պատկերացնել այնպիսի մոռյլ առագա, ինչպիսին թույլ է տալիս երևակայությունս, նման այն բանին, ինչպես մենք մեզ վարժեցնում ենք սուսերամարտի և զինամրցումների, պատերազմ խաղալով անխախտ խաղաղության պայմաններում:

Փիլիսոփա Արկեսիլայոսի¹⁸ նկատմամբ իմ հարգանքը բնավ չի նվազում այն բանից, որ նա, ինչպես հայտնի է, գործածել է ոսկե ու արծաթե ամանեղեն, քանզի նրա կարողությունը թույլ էր տալիս այդ, և ինձ ավելի մեծ հարգանք է ներշնչում, որ նա իրեն չի վրկել այդ բոլոր բարիքներից, բայց օգտվել է շափավոր և, դրա հետ մեկտեղ, աչքի ընկել մշտական առատածեռնությամբ:

Ես տեսնում եմ, թե որքան սահմանափակ են մարդու բնական պահանջմունքները, և, նայելով դուանս մոտ գտնվող խեղճ աղքատին, որն անհամեմատ ավելի կենսուրախ է ու առողջ, քան ես ինքս, մտովի ինձ դնում եմ նրա տեղը, աշխատում մտնել նրա դրություն մեջ: Ու թեև ես քաջ գիտեմ, որ մահը, չքավորությունը, արհամարհանքն ու հիվանդությունները դարանում են ինձ ամեն քայլափոխում, այնուամենայնիվ, հիշելով այդ աղքատի և նման շատ այլ բաների մասին, ինձ համոզում եմ շարսափել նրանից, ինչն ինձանից ցածր կանգնած մարդն ընդունում է այդպիսի համբերությամբ: Ես չեմ կարող ինձ ստիպել, որ հավատամ, թե չզարգացած միտքը կարող է ստեղծել ավելին, քան ուժեղ ու զարգացած միտքը, թե հնարավոր չէ խորհրդածելով հասնել այն նույն բանին, ինչը ձեռք է բերվում հասարակ սովորությամբ: Եվ իմանալով, թե որքան անհուսալի են այդ երկրորդական կենսական հարմարությունները, ես, ապրելով լիության մեջ, անընդհատ դիմում եմ աստծուն իմ ամենագլխավոր խնդրանքով, այսինքն՝ որ նա ինձ օժտի ինքս ինձանով և իմ ստեղծած բարիքներով գոհանալու ունակությամբ: Ես գիտեմ ծաղկուն պատանիների, որոնք իրենց արկղիկներում մշտապես պահում են մրսածության դեմ բազմապիսի հաբեր, և, կարծելով, թե հակամիջոց ունեն, ավելի քիչ են վախենում այդ հիվանդությունից: Պետք է այստեղ ընդօրինակել նրանց, իսկ բացի այդ, եթե դուք նախատրամադիր եք որևէ ավելի լուրջ հիվանդության, հարկ է ձեռք բերել այնպիսի դեղամիջոցներ, որոնք հանգստացնում են ցավը և ընդարմացնում ախտահարված օրգանները:

Նման կենսածևի դեպքում անհրաժեշտ է ընտրել այնպիսի զբաղմունք, որը չլինի ոչ շափազանց հոգսաշատ, ոչ շափազանց ձանձրալի, հակառակ դեպքում, ձեզ համար մենակյաց գոյությունն անտեղի կլինի: Դա կախված է անձնական ճաշակից, ինչ վերաբերում է ինձ, ապա

տնտեսությունն ակնհայտորեն իմ ճաշակով չէ: Իսկ ով սիրում է, թող
զբաղվի դրանով, բայց բնավ ոչ շահից ավելի:

Conentur sibi res, non se submittere rebus*.

Հակառակ դեպքում տնտեսական գործերով այդ տարվածությունը
կդառնա, Սալլուստիոսի խոսքերով ասած, յուրօրինակ ստրկություն²⁰,
Այստեղ կան նաև ավելի ավելի բնադավառներ, օրինակ, պտղաբուծու-
թյունը, որի նկատմամբ, ըստ Քսենոփոնի, հակում ունեն կյուրոսը²¹:
Իսկ առհասարակ այստեղ կարելի է գտնել մի միջին բան մշտական
շտապողականության հետ կապված սովորական ու խղճուկ հոգսերի, որ
նկատում ենք այն մարդկանց մոտ, ովքեր գլխավին թաղվում են ուզածդ
գործի մեջ և խոր, կատարյալ անտարբերության միջև, որը թույլ է տա-
լիս ամեն ինչ անկման հասցնել, ինչպես դա տեսնում ենք ոմանց մոտ:

Democriti pecus edit agellos

Cultaque, dum peregre est animus sine corpore velo**.

Սակայն լսենք նույն մենակեցության առթիվ Պլինիոս Կրտսերի խոր-
հուրդը իր բարեկամ Կոռնելիոս Ռուֆուսին. «Ես քեզ խորհուրդ եմ տա-
լիս տնտեսության այդ սովորական ու զովելի հոգսերը հանձնարարել քո
մարդկանց և, օգտվելով լիակատար ու վերջնական միայնությունից, ամ-
բողջովին նվիրվել գիտությանը, որպեսզի քեզանից հետո թուղնես գտնե
մի փոքրիկ բան, որը պատկանի միայն քեզ»²³: Նա այստեղ նկատի ունի
փառքը, ճիշտ այնպես, ինչպես Ցիցերոնը, որը հայտարարում էր, թե
ուզում է մարդկանցից իր հեռանալն ու հասարակական գործերից ձեր-
բազատվելն օգտագործել, որպեսզի իր ստեղծագործություններով իր
համար հավերժական կյանք ապահովի²⁴.

usque adeone

Scire tuum nihil est, nisi te scire hoc sciat alter***.

Ինձ թվում է, դա միանգամայն ճիշտ կլիներ, եթե խոսքը վերաբե-
րեր աշխարհից հեռանալուն, դիտելով այն որպես քեզանից դուրս գտնվող
մի բան, իսկ իմ հիշատակած հեղինակները դա անում են միայն կիսով

* Թող նրանք ձգտեն հանգամանքներն իրենց ենթարկել, այլ ոչ թե իրենք ենթարկ-
վեն հանգամանքներին¹⁹ (լատ.):

** Քանի դեռ Դեմոկրիտի հոգին, մարմինը թողնելով, գտնվում էր հեռունեում, անա-
սունն ուտում էր նրա դաշտերն ու ցանքերը²² (լատ.):

*** Միթե քո գիտելիքը գին չունի, եթե որեէ մեկը չգիտե, որ դու այդ գիտես²⁵
(լատ.):

չափ: Նրանք խորհում են այն բանի վրա, ինչը լինելու է այն ժամանակ, երբ իրենք այլևս չեն լինելու, բայց այստեղ ստացվում է մի զվարճալի հակասություն, քանզի նրանք հույս ունեն իրենց մտադրությունների պտուղները քաղել այս աշխարհում, սակայն լուկ այն ժամանակ, երբ իրենք արդեն դուրս կլինեն նրա սահմաններից: Ինձ անհամեմատ ավելի ողջամիտ են թվում այն մարդկանց նկատառումները, որոնք մենակեցություն են որոնում բարեպաշտությունից, իրենց արիությունը պահպանելով ապագա կյանքի հավատով, կյանք, որը նրանց կրեթի աստծո կողմից մեզ խոստացածի իրագործում: Նրանք իրենց նվիրում են աստծուն՝ անսահման ողորմած ու հզոր էակին, և հոգու առջև բացվում է մի անծայրածիր ասպարեզ իր իղձերն իրականացնելու համար: Նրանց օգտակար են թե հիվանդությունները, թե տառապանքները, քանզի դրանց միջոցով ձեռք են բերում հավերժական առողջություն և հավերժական բերկրանք, և մահն անգամ ցանկալի է նրանց, որովհետև դա անցումն է այդ կատարյալ վիճակին: Շնորհիվ սովորության, նրանց խիստ կարգապահությունը շուտով դադարում է բեռ թվալուց, նրանց մարմնական ցանկությունները, ճնշվելով, հանդարտվում են ու մարում, քանզի մեզ մոտ դրանք պահպանվում են բացառապես այն պատճառով, որ մենք անարգել բավարարում ենք դրանք: Նրանց այս միակ նպատակը (երանելի և անմահ կյանքը) իսկապես արժանի է, որ հրաժարվենք մեր փուլ գոյության ուրախություններից ու վայելքներից: Եվ նա, ով կարող է հարկ եղածին պես ու ընդմիջտ իր հոգում վառել այս կենդանի հավատի, ինչպես նաև հուսո կրակը, իր համար անապատում էլ կստեղծի այնպիսի վայելքներով և ուրախություններով լի կյանք, որոնք կգերազանցեն ուզածդ այլ կենսաձևով ձեռք բերված ամեն ինչին:

Եվ այսպես, Պլինիոսի առաջարկած ոչ նպատակը, ոչ միջոցներն ինձ չեն գոհացնում, հետևելով նրան, մենք միայն կրակից ազատվում բոցն ենք ընկնում: Այդ գրքային զբաղմունքները նույնքան ծանր են, որքան մնացած ամեն ինչը, և նույնքան վնասակար են առողջությանը, որը պետք է լինի մեր գլխավոր հոգսը: Եվ երբեք չի կարելի թույլ տալ, որ մեր զբաղմունքների պատճառած հաճույքները մթազնեն մնացած ամեն ինչը. ախր դրանք հենց այն հաճույքներն են, որոնք կործանում են ազահ սեփականատիրոջը, շահամոլին, հեշտասերին ու սնափառին: Իմաստունները բավական շատ ջանք են թափել, որ մեզ նախազգուշացնեն մեր կրքերի ծուղակներից և սովորեցնեն տարբերել իսկական, լիակատար հաճույքներն այնպիսի հաճույքներից, որոնց հետ միախառնվում են հոգսերը և որոնք պղտորված են դրանցով: Քանզի հաճույքնե-

րի մեծ մասը, նրանց ասելով, շոյում ու հրապուրում է մեզ միայն խեղ-
 դամահ անելու համար, ինչպես դա անում էին այն ավագակները, որոնց
 եզրույտացիք փիլիսոններ էին անվանում: Եվ եթե գլխացավն սկսեր մեզ
 տանջել նախքան հարբելը, մենք կզգուշանայինք շափից ավելի խմելուց:
 Սակայն վայելքը, մեզ խաբելու համար, ընթանում է առջևից, խանգա-
 րելով տեսնել իր ուղեկիցներին: Գրքերը հաճելի են, բայց եթե, խորա-
 սուզվելով դրանցում, մենք, ի վերջո, կորցնում ենք մեր առողջութունն
 ու աշխատությունը մեր ամենաթանկ սեփականությունը, ապա ավելի լավ
 չէ արդյոք թողնենք նաև դրանք: Ես պատկանում եմ այն մարդկանց
 թվին, ովքեր գտնում են, թե դրանց տված օգուտը չի կարող հատուցել
 այդ կորուստը: Այնպես, ինչպես երկարատև տկարությունից թուլացած
 մարդիկ ի վերջո իրենց հանձնում են բժիշկների ձեռքը և համաձայնում
 իրենց կյանքը ենթարկել նրանց նշանակած մի քանի կանոններին,
 որոնք ջանում են շխախտել, ինչպես նաև նման այն մեկին, որը, հոգ-
 նած ու հիասթափված, լքում է մարդկանց. անհրաժեշտ է կյանքը դա-
 սավորել համաձայն բանականության օրենքների, կանոնավորել ու հա-
 մաշափել այն, նախապես կշռադատելով ամեն բան: Նա պետք է հրա-
 ժեշտ տա ուղածող աշխատանքին, ինչպիսին էլ այն լինի, և, առհասա-
 րակ, նա պետք է զգուշանա մեր մարմնական ու հոգեկան անդորրը խախ-
 տող կրթերից, նա պետք է ընտրի այն ճանապարհը, որը բոլորից շատ
 է դուր գալիս իրեն.

Unusquisque sua noverit ire via²⁶

Եթե դուք զբաղվում եք տնտեսությամբ, գիտություններով, որսոր-
 դությամբ կամ որևէ այլ բանով, պետք է դրան նվիրվեք առանց անց-
 նելու այն սահմանը, որտեղ վերջանում է հաճույքը, զգուշացեք՝ չհափըշ-
 տակվեք և շլանաք առաջ՝ դեպի այնտեղ, ուր հաճույքին միախառնվում
 է ջանքը: Հարկավոր է դբաղմունքներին ու հոգսերին նվիրվել սոսկ այն-
 քանով, որքան դա անհրաժեշտ է կայտառությունը պահպանելու և
 հակառակ ծայրահեղությամբ, այսինքն՝ հույլ ու քնկոտ անգործությամբ
 ծնվող տհաճություններից ինքդ քեզ վտանգավերժելու համար: Կան ան-
 պտուղ ու անօգնական գիտություններ, և դրանցից շատերը ստեղծված
 են հանուն առօրյա վազվզուքի, դրանք պետք է թողնել այն մարդկանց,
 ովքեր զբաղված են աշխարհիկ գործերով:

Ինչ վերաբերում է ինձ, ապա ես սիրում եմ միայն զվարճալի ու
 թեթև գրքեր, կամ այնպիսիները, որոնք զրգում են հետաքրքրասիրու-

Քյունս, մխիթարում կամ խորհուրդ են տալիս, թե ինչպես կարգավորեմ կյանքս ու մահս.

tacitum silvas inter reptare salubres
Curantem quidquid dignum sapiente bonoque est*.

Ավելի իմաստուն մարդիկ, ունենալով անվեհեր և ուժեղ հոգի, անկախ ամեն ինչից, կարող են պահպանել իրենց հոգեկան անդորրը: Բայց քանի որ իմ հոգին շատ սովորական է, ստիպված եմ լինում այն պահպանել մարմնական հաճույքներով, և քանզի տարիքն ինձանից խլում է այն հաճույքները, որոնք ամենից շատ էին դուր գալիս, ես ինձ սովորեցնում եմ ավելի սրությամբ ընկալել մյուսները, որոնք ավելի են համապատասխանում կյանքիս այդ նոր ժամանակաշրջանին: Հարկավոր է ստամներով ու եղունգներով կառչել կյանքի այն հաճույքներին, որոնք մեկը մյուսի հետևից մեզանից խլում են տարիները.

carpamus dulcia: nostrum est
Quod vivis: cinis et manes et fabula fies**

Ինչ վերաբերում է փառքին, որն իբրև նպատակ մեզ են առաջարկում Ցիցերոնն ու Պլինիոսը, ապա ես շատ հեռու եմ նման ձգտումներից: Փառասիրությունն անհամատեղելի է մենակեցության հետ: Փառքն ու անդորրը շնն կարող միևնույն տանիքի տակ ապրել: Որքան տեսնում եմ, իմ հիշատակած երկու գրողներն առօրյա եռուղեոց տարել են միայն ձեռքերն ու ոտքերը, իսկ հոգով ու մտքով՝ ավելի խորն են թաղվել նրանում, քան երբևէ.

Tun, vetule, auriculis alienis colligis escas?***

Նրանք ընդամենը փոքր ինչ ընկրկել են, որ ցատկեն ավելի հեռու և ավելի լավ, որ, լարվելով ինչպես հարկն է, մխրձվեն խիտ ամբոխի մեջ: Ուզո՞ւմ եք համոզվել, թե որքան թեթևամիտ են նրանց դատողությունները: Համեմատենք միանգամայն տարբեր դպրոցների սլատկանող երկու փիլիսոփաների կարծիքները³⁰, որոնք գրում են իրենց բարեկամներին՝ մեկը՝ Իդոմենեսին, մյուսը՝ Լուցիլիոսին, համոզելով նրանց հրաժարվել գործերից ու մեծարանքից և մեկուսանալ աշխարհից: Դուք մինչև

* Լուս թափառելով բարեբեր անտառներում և հայացքս սեռեծով այն բանին, ինչը վայել է իմաստուն ու օրինավոր մարդուն²⁷ (լատ.):

** Հաճույք վայելիք: Այս օրը մերն է, իսկ հետո դու կդառնաս փոշի, սովեր, ավանդություն²⁸ (լատ.):

*** Սերուկ, շլինի՞ հոգ ես տանում, թե ինչպես զվարճացնես ուրիշներին²⁹ (լատ.):

այժմ ապրել էք լողալով և ալիքների վրա ճոճվելով, ասում են նրանք, հասեք վերջապես նավահանգիստ, որ այնտեղ մեռնեք: Ձեր ողջ կյանքը տվել էք լույսին, մնացած մասն անցկացրեք սովերում: Անհնար է հրաժարվել գործերից, առանց հրաժարվելու նրանց պտուղներից, ուստի, թողեք ձեր անվան ու փառքի հոգսը: Վտանգ կա, որ ձեր նախկին գործերի փայլը ձեզ կպարտւրի շափազանց պայծառ լուսապսակով և ձեզ չի լքի նաև ձեր ապաստանում: Բոլոր մյուս վայելքների հետ միասին հրաժարվե՞նք նաև այն մեկից, որն ստջանում էք, երբ ձեզ հավանություն են տալիս ուրիշները. իսկ ինչ վերաբերում է ձեր գիտելիքներին ու տաղանդին, ապա մի տագնապեք, դուք չեն կորցնի իրենց նշանակութունն այն բանից, որ դուք դառնաք դրանց տվելի արժանի: Հիշեցե՞ք այն մարդուն, որն այն հարցին, թե ինչու է ինքը ճիգ ու ջանք նվիրում մի արվեստի, որն անմատչելի է մարդկանց մեծ մասի համար պատասխանեց. «Ինձ համար բավական են շատ քչերը, ինձ համար բավական է նաև մեկը, ինձ համար բավական է, եթե նույնիսկ ոչ ոք չլինի»: Նա ասել է զուտ ճշմարտությունը: Դուք և ձեր բարեկամներից թեկուզ մեկը՝ արդեն մի ամբողջ թատրոն էք երկուսիդ համար, և անգամ միայն դուք՝ թատրոն էք ինքներդ ձեզ համար: Թող մի ամբողջ ժողովուրդ մեզ համար լինի այդ «մեկը» և այդ «մեկը»՝ մի ամբողջ ժողովուրդ: Սեփական պարապութունից ու սեփական ճգնափորութունից փառք կորզելու ցանկությունը սին փառամոլութուն է: Հարկավոր է անել այնպես, ինչպես անում են վայրի գաղանները, որոնք իրենց որջի մոտ վերացնում են սեփական հետքերը: Դուք այլևս չպետք է ձրգտեք, որ ձեր մասին խոսի ամբողջ աշխարհը, բավական է նաև այն, որ կարողանաք ինքներդ ձեզ հետ խոսել ձեր մասին: Ներփակվեք, սակայն սկզբից հոգ տարեք, որ դա անեք պատշաճ ձևով, խելագարութուն կլինե՞ր ինքներդ ձեզ վստահելը, եթե չեք կարողանում ձեզ կառավարել: Կարելի է մենակեցության հարցում սխալվել այնպես, ինչպես ձեզ նմաններից շրջապատ ընտրելիս: Մինչև չդառնաք այնպիսին, որ ինքներդ ձեր առջև շհամարձակվեք խոսք դրժել, մինչև ինքներդ ձեզ հարդանք ու թեթևակի երկյուղ չներշնչեք,— *observentur species honestae animo**, միշտ հիշեցե՞ք Կատոնին, Փոկիոնին³² ու Արիստիդեսին, որոնց ներկայությամբ նույնիսկ խելագարներն աշխատում էին թաքցնել իրենց մոլորութունները, նրանց ընտրեցե՞ք որպես դատավորներ ձեր բոլոր հղացումներին. եթե այս վերջիններն ընթանան ծուռ ճանապարհով, հիշյալ հերոսների հանդեպ ունեցած հարգանքը ձեզ վերստին ճիշտ ուղու վրա

* Թող նրանք իրենց հոգում առաքինության տիպարներ պատկերեն³¹ (լատ.):

կղնիւ նրանք ձեզ կստարեն, նրանք ձեզ կօգնեն գոհանալ ձեզանով, ոչինչ չփոխառել ոչ մեկից, բացի ինքներդ ձեզանից, ձեր հոգին կենսորոնացնել ու հաստատել որոշակի և խիստ սահմանափակ այնպիսի խոհերի վրա, ուր նա կկարողանա բերկրանք գտնել և, վերջապես, ճաշակելով իսկական բարիքներ, որոնց հաճույքը մեծանում է վայելումի հետ, բավարարվել այդ տմենով, չկամենալով ոչ կյանքիդ երկարացում, ոչ անվանդ հավերժացում: Ահա խորհուրդն իսկական ու պարզ, այլ ոչ թե շաղակրատ ու պարծենկոտ փիլիսոփայության, ինչպիսին իմ հիշատակած առաջին երկու մտածողներինն է:

Կլուխ XI

ՊԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՑԻՑԵՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Ահա ևս մի հատկանիշ, որն օգտակար է այս երկու ղուլգին համեմատելու համար: Ցիցերոնի ու Պլինիոսի (որն, ըստ իս, խելքի կերտվածքով շատ քիչ է նման իր հորեղբորը) ստեղծագործություններն իրենց հեղինակների շափազանց փառասիրության վկայությունների մի անվերջ շարան են: Ի միջի այլոց, բոլորին է հայտնի, որ նրանք ժամանակի պատմագիրներից պահանջում էին իրենց ստեղծագործություններում շմոռանալ նրանց: Իսկ ճակատագիրը, կարծես ծաղրաբար, այդ նկրտումների մասին տեղեկությունները հասցրել է մինչև մեր ժամանակները, իսկ բուն պատմությունները՝ վաղուց մատնել մոռացության: Սակայն նման դիրք զբաղեցնող մարդկանց հոգեկան ստորության բոլոր սահմաններն անցնող հանգամանքը շաղակրատանքով ու ճոռոմախոսությամբ մեծագույն փառք ձեռք բերելու ձգտումն է, որը հասնում էր այնտեղ, որ այդ նպատակով նրանք օգտվում էին նույնիսկ բարեկամներին ուղղված իրենց անձնական նամակներից, ըստ որում այն դեպքերում, երբ նամակը ժամանակին ուղարկված չէր լինում, նրանք այնուամենայնիվ հրապարակում էին արժանավայել օրգարացումով, թե իբր, չէին ուզում զուր կորցնել ծախսված աշխատանքն ու արթուն ժամերը: Վայե՞ր էր արդյոք հոռմեական երկու կոնսուլներին՝ աշխարհին աիրող պեսուսության գերագույն պաշտոնյաներին, իրենց ազատ ժամերն օգտագործել նամակում խնամքով գեղեցիկ դարձվածքներ մշակելու վրա, նրա համար, որ փառաբանվեն իրենց դայակի սովորւցրած լեզվի լավ իմացությամբ: Միթե՞ ավելի վատ էր գրում այս կամ այն դպրոցական ուսուցիչը, որը պրանով էր հաց վաստակում: Չեմ կարծում, թե Քսենոփոնը կամ Կեսարը կնկարագրեին իրենց պործերը, եթե այդ գործերը բազմապատիկ անգամ չգերազանցեին իրանց պերճախոսությանը: Նրանք աշ-

խատում էին փառաբանվել ոչ թե խոսքերով, այլ գործերով: Եվ եթե գրական ոճի կատարելությունը կարողանար նախանձելի փառք բերել խոշոր դեմքին, երևի Սկիպիոնն ու Լելիոսը գեղեցկությամբ և լատիներեն լեզվի (որով դրանք գրված են) նրբագույն երանգներով աչքի ընկնող իրենց կատակերգությունների ստեղծագործման պատիվը չզիջեին աֆրիկացի մի սարուկի¹. այդ երկերի գեղեցկությունն ու կատարելությունը խոսում են այն մասին, որ դրանք պատկանում են նրանց, ու ինքը Տերենտիոսն ընդունում է այդ: Եվ ես կառարկեի դրանում ինձ տարճամոզելու ամեն մի փորձի դեմ:

Մաղբ ու վիրավորանք է, երբ աշխատում են մարդուն փառաբանել այն հատկանիշների համար, որոնք վայել չեն նրա դիրքին, և առավել էական չեն նրա համար, թեկուզ ինքնին դրանք արժանի լինեն զովեստի, ինչպես օրինակ, եթե մի որևէ թագավորի փառաբանեին հանուն այն բանի, որ նա լավ դեղանկարիչ կամ լավ ճարտարապետ է, կամ լավ հրաձիգ է, կամ արագավազ է: Նման զովեստները պատիվ են բերում լոկ այն դեպքում, եթե զուգակցվում են թագավորի համար կարևոր հատկանիշները, այսինքն՝ նրա արդարամտությունը և խաղաղ օրերին ու պատերազմի ժամանակ ժողովրդին կառավարելու արվեստը փառաբանող այլ զովեստների հետ: Այս իմաստով Կյուրուսին պատվի է բերում հողագործության նրա իմացությունը, իսկ Կարլոս Մեծին՝ նրա ճարտասանությունն ու ծանոթությունը գեղեցիկ գրականությանը: Ինձ վիճակվել է հանդիպել այնպիսի մարդկանց, որոնց համար գրչին տիրապետելը բարձր դիրք ապահովող ճանաչում էր, բայց որոնք, այնուամենայնիվ, հրաժարվում էին իրենց արվեստից, դիտավորյալ փշացնում իրենց ոճը, և պարծենում էին այնպիսի տգիտությամբ, որը մեր ժողովուրդը համարում է անհնարին, եթե մաղբ կրթված է, նրանք աշխատում էին հարգանքի արժանանալ, իրենց համար ընտրելով ավելի բարձր բնագավառ:

Դեմոսթենեսի ընկերակիցները, որոնք նրա հետ միասին որպես զեսպաններ ուղարկվել էին Փիլիպոսի մոտ, սկսեցին այդ թագավորին գովերգել նրա գեղեցկության, ճարտասանության և այն բանի համար, թե խմելու վարպետ է: Իսկ Դեմոսթենեսը գտավ, որ նման զովեստներն ավելի շատ սագում են կնոջը, փաստաբանին և լավ սպունդին, բայց բնավ ոչ թագավորին:

Imperet bellante prior, iacentem
Lenis in hostem*.

* Թող նա անողոր լինի մարտում և խնայի պարտված թշնամուն² (լատ.):

Կավ որսորդ կամ պարող լինելը նրա գործը չէ,

Orabunt causas alii, coelique meatus
Describent radio, et fulgentia sidera dicent;
Hic regere imperio populos sciat*

Ավելին, Պլուտարքոսն ասում է, թե ոչ այնքան էական բաների գերազանց իմացությունն դրսևորելը նշանակում է տեղիք տալ արդարացի կշտամբանքի, որ դու վատ ես օգտագործել ազատ ժամերդ ե բավականաչափ չես ուսումնասիրել ավելի սխտանի ու օգտակար բաները⁴: Մակեդոնիայի թագավոր Փիլիպոսը, մի անգամ խնջույքի ժամանակ լսելով իր որդուն՝ մեծն Ալեքսանդրին, որը երգում էր, շարժելով փառապանծ երաժիշտների նախանձը, նրան ասաց. «Ամոթ չէ՞ քեզ, որ այդքան լավ ես երգում»: Ոմն երաժիշտ, որն իր արվեստի շուրջը վեճի էր բռնվել այդ նույն Փիլիպոսի հետ, նրան ասաց. «Տեր իմ, աստված մի արասցե, որ երբևէ դժբախտություն ունենաս այս ամենին հասու լինել ավելի, քան ես»:

Թագավորը պետք է հնարավորություն ունենա պատասխանել այնպես, ինչպես պատասխանել է Իֆիկրատեսը մի հռետորի, որը նրան կշտամբում էր իր ճառում. «Իսկ դու ո՞վ ես, որ այդպես քաջ ես ձևանում: Զորակա՞ն: Նետածի՞ր: Նիզակակի՞ր», — «Ես ոչ մեկն եմ, ոչ մյուսը, ոչ երրորդը, բայց ես այն մարդն եմ, որը կարողանում է նրանց բուրիսն ղեկավարել»:

Անտիսթենեսը նույնպես Իսմենիոսի ոչնչության ապացույցն էր համարում այն հանգամանքը, որ նրան զոչում էին որպես հիանալի Ֆլեյտահարի⁵:

Երբ ես լսում եմ իմ «Փորձերի» լեզուն մեկնարանողներին, պիտի ասեմ, գերադասում եմ նրանք լռեն, քանզի ոչ այնքան զովաբանում են իմ ոճը, որքան նսեմացնում են իմ մտքերը, և այդ քննադատությունը հասկապես ցավալի է, որովհետև անուղղակի է: Գուցե, ես սխալվում եմ, սակայն հազիվ թե ուրիշներն ինձանից շատ են հոգ տարել հենց բովանդակության մասին: Կավ է, թե վատ, բայց չեմ կարծում, որ մի այլ գրող իր ստեղծագործություններին ավելի հարուստ բովանդակություն հաղորդած լինի կամ, համեմայն դեպս, տված լինի ավելի առատածեղևորեն, քան ես այս էջերում: Որպեսզի բովանդակությունն ավելի հա-

* Ոմանք կպերճախոսեն դատարանում, մյուսները՝ կարկինի օգնությամբ կպատկերեն երկնակամարի պտույտը և կթվարկեն փայլող լուսատուները, իսկ հռոմեական ժողովրդի բախտարածիներ թող լինի ժողովուրդներին իշխելու արվեստը³ (լատ.):

րուստ ստացվի, ես ըստ էութեան այստեղ գետեղել եմ միայն ամենա-
 զլխավոր դրույթները, իսկ եթե սկսեի դրանք նաև զարգացնել, սախոյ-
 ված կլինեի բաղմապատիկ անգամ մեծացնել սույն հատորի ծավալը:
 Իսկ ամեն տեսակի որքա՞ն պատմություններ եմ այստեղ սփռել, պատ-
 մություններ, որոնք ինքնին, կարծես, էական նշանակություն չունեն:
 Բայց նա, ով կուզենա հիմնավորապես քրքրել դրանք, նյութ կգտնի էլի
 անսահման քանակությամբ փորձերի համար: Ոչ այդ պատմություննե-
 րը, ոչ իմ սեփական դատողություններն ինձ համար սոսկ օրինակ, հե-
 ղինակավոր վկայակոչումներ կամ ժարդարանքներ չեն: Ես դրանց եմ
 դիմում ոչ միայն այն պատճառով, որ օգտակար են ինձ համար: Անկախ
 նրանից, թե ես ինչի մասին եմ խոսում, հաճախ դրանցում կան ավելի
 հարուստ ու համարձակ մտքերի սերմեր⁶, և, կարծես թաքուն ակնար-
 կում են այդ մտքերը թե ինձ, որ չեմ կամենում տարածվել այդ հար-
 ցում, թե նրանց, ովքեր կարող են որսալ այն նույն հնչյունները, ինչ որ
 ես: Անգրադառնալով պերճախոսության ձիրքին, պետք է ասեմ, որ մեծ
 տարբերություն չեմ գտնում միայն անշնորհք կերպով արտահայտվողի
 և նրանց միջև, ովքեր, բացի գեղեցիկ արտահայտվելուց, ոչինչ չեն կա-
 րողանում անել: Non est ornamentum virile concinnitas*.

Իմաստունները պնդում են, թե իմացության համար փիլիսոփայու-
 թյունն է, իսկ գործունեության համար՝ առաքինությունը, ահա այն, ին-
 չը պիտանի է ուզածդ դիրք ու կոչում ունեցող մարդկանց:

Նման մի բան է դրսևորվում նաև մեզ ծանոթ երկու փիլիսոփաների
 մոտ, քանզի նրանք նույնպես հավերժություն են խոստանում այն նա-
 մականերին, որ գրել են իրենց բարեկամներին⁸:

Սակայն նրանք դա անում են բոլորովին այլ կերպ, բարի նպատա-
 կով ներողամիտ լինելով մերձավորի սնափառության նկատմամբ: Քան-
 զի իրենց բարեկամներին գրում են, թե եթե գալիք դարերում հուշակ-
 վելու ձգտումն ու փառքի ծարավը տակավին խանդարում են այդ բա-
 րեկամներին թողնել գործերը և ստիպում են վախենալ մենակեցությու-
 նից ու ճգնավորությունից, որոնց իրենք կոչ են անում, ապա դրա հա-
 մար անհանգստանալու հարկ չկա. չէ որ իրենք՝ փիլիսոփաները սերունդ-
 ների մոտ բավականաչափ համբավ կվայելեն, ուստի և կարող են պա-
 տասխան տալ այն բանի համար, որ բարեկամներից նրանց ստացած
 միայն նամականերն իսկ բարեկամների անունները կդարձնեն ավելի
 հուշակավոր և ավելի կփառաբանեն նրանց, քան նրանք այդ բանին
 կհասնեին իրենց հասարակական գործունեությամբ: Եվ բացի նշված տար-

* Գեղեցկությունն արժանավոր տղամարդու զարդը չէ՞ (լատ.):

բերութիւնից, դրանք բնավ էլ սին ու անբովանդակ նամակներ չեն, որոնց ամբողջ իմաստը որոշակի ութմով միավորված և զետեղված բառերի նրբանկատ ընտրութիւնն է. նրանք լի են գեղեցիկ և իմաստուն դատողութիւններով, որոնք սովորեցնում են ոչ թե ճարտասանութիւն, այլ իմաստնութիւն, որոնք սովորեցնում են ոչ թե լավ խոսել, այլ լավ վարվել: Կորչի՛ ճարտասանութիւնը, որը մեզ մղում է դեպի իրեն, այլ ոչ թե իր հետևում կանգնած բաներին: Սակայն, ցիցերոնյան ոճի մասին ասում են, թե, հասնելով բացառիկ կատարելության, այստեղ էլ ձեռք է բերում իր բովանդակութիւնը:

Ավելացնեմ Յիցերոնի մասին ևս մի պատմութիւն, որը շոշափելի ակնբերութիւնամբ պատկերում է նրա անհատականութիւնը: Նա պետք է հրապարակավ խոսք ասեր և ժամանակը շէր բավարարում, որ ինչպես հարկն է նախապատրաստվել: Էրոտես անունով նրա ստրուկներից մեկը հայտնեց, թե Ելույթը տեղափոխվում է հաջորդ օրը: Նա այնքան ուրախացավ, որ այդ լավ լուրի համար ստրուկին ազատ արձակեց:

Նամականքի առթիվ ուզում եմ ասել, որ, բարեկամներիս կարծիքով, ես դրանք հորինելու ձիրք ունեմ: Եվ իմ հորինվածքները տարածելու համար ես հաճույքով կօգտվեի այդ ձևից, եթե հարմար զրուցակից ունենայի: Ես կարիք եմ զգում զրուցակցի (մի ժամանակ ունեի՛) հետ այնպիսի շփման, որը նեցուկ կլիներ ու կոգեշնչեր ինձ: Քանզի քամուն տալ խոսքերս, ինչպես անում են ուրիշները, ես թերևս կկարողանայի միայն երազում, իսկ նշանավոր բաների մասին գրելու նպատակով գոյութիւն չունեցող մարդիկ հորինելը նույնպես տհաճ կլիներ ինձ համար, որովհետև ես ամեն տեսակ կեղծարարության ոխերիմ թշնամի եմ: Եթե ես դիմեի լավ բարեկամի, ապա ավելի ուշադիր և ավելի ինքնավստահ կլինեի, քան այժմ, երբ իմ առջև տեսնում եմ բազմադեմ ամբոխ, և հազիվ թե սխալվեմ, եթե ասեմ, որ այդ դեպքում ավելի հաջող կգրեի: Բնութիւնն ինձ պարզեւել է ծաղրական ու անբունագրոս մի գրելաոճ, սակայն շարադրման ինձ հատուկ ձևը, ինչպես նաև առհասարակ իմ շափազանց հակիրճ, անկանոն, կցկտուր լեզուն պիտանի չեն պաշտոնական հարաբերութիւնների համար: Եվ ես աչքի չեմ ընկնում այնպիսի ձևապատշաճ ուղեբրձներ գրելու կարողութիւնամբ, որոնք, բացի սիրալիր բառերի գեղեցիկ շարանից, չունեն այլ իմաստ: Ես չունեմ ընդարձակորին ամեն տեսակ հարգանք և ծառայելու պատրաստակամութիւն հայտնելու ոչ ունակութիւն, ոչ հակում: Ես դա բնավ չեմ զգում և ինձ համար տհաճ է ասել ավելին, քան զգում եմ: Այստեղ ես շատ հեռու եմ այժմյան սովորութիւնից, քանզի դեռ երբեք չի եղել մեծարանք ու հարգանք արտահայտող բառերի այսքան զարշելի ու ստոր

պոռնկացում. «կյանք», «հոգի», «հավատարմություն», «անհուն սեր», «ստրուկ», «ծառա»՝ այս ամենն այնպես է գոեհկացվել, որ, երբ մարդիկ կամենում են արտահայտել հիրավի ջերմ ու իսկական հարգանք, արդեն բառեր չեն գտնում դրա համար:

Ես մահու շափ ատում եմ այն ամենը, ինչից թեկուզ շնչին շափով շողոքորթության հոտ է գալիս, ուստի, բնականաբար, հակված եմ խոսելու շոր, սեղմ ու շիտակ, իսկ ինձ վատ իմացողներին դա թվում է մեծամտություն: Ես առավել հարգանքով եմ քվերաբերվում նրանց, ում շեմ շռայլում առանձնահատուկ հարգալից արտահայտություններ, և եթե իմ հոգին ուրախությամբ թռչում է ինչ-որ մեկի մոտ, ես արդեն շեմ կարող նրան ստիպել, որ ընթանա դանդաղ, ինչպես պահանջում է քաղաքավարությունը: Նրանց, ում իսկապես պատկանում եմ ամբողջ հոգով, ես ինձ առաջարկում եմ ժլատորեն ու արժանապատվությամբ, և ամենից քիչ եմ նվիրվածություն արտահայտում նրանց, ում ամենից շատ եմ նվիրված: Ինձ թվում է, թե նրանք պետք է կարդան իմ սիրտը, և իմ զգացմունքների ամեն մի բառային արտահայտություն միայն կազավաղի դրանք:

Ես շգիտեմ ոչ ոքի, որ ունենա այնպիսի բուժ ու անձարտար լեզու, ինչպիսին իմն է, երբ բանը վերաբերում է ժամանման, հրաժեշտի առթիվ արվող ամեն տեսակ ողջույններին, երախտագիտությանը, շնորհավորանքներին, ծառայություններ առաջարկելուն և մեր քաղաքավարության ձևապատշաճ կանոնների թելադրած բառային այլ հնարաբանություններին:

Եվ ոչ մի անգամ ինձ չի հաջողվել գրել մի այնպիսի հանձնարարական նամակ կամ որևէ մեկին լավություն անելու խնդրագիր, որ նա, ում համար գրվել է, չհամարեր այն շոր ու դժգույն:

Նամակներ կազմելու մեծագույն վարպետներ են իտալացիները: Եթե շեմ սխալվում, ես ունեմ ոչ պակաս, քան հարյուր հատոր այդպիսի նամակներ, նրանցից լավագույններն, իմ կարծիքով, Աննիբալե Կարոչի⁹ նամակներն են: Եթե հիմա լիներ այն ամբողջ թուղթը, որ ժամանակին ես գրոտել եմ, դիմելով կանանց, ապա այն օրերին, երբ ձեռքիս ուղղություն էր տալիս իսկական կիրքը, իմ գրածից գուցե և գտնվեր մի էջ, որի հետ արժեր ծանոթացնել սիրո հրով բռնկված մեր ավարա երիտասարդությանը: Ես իմ նամակները միշտ գրում եմ հապճեպորեն և այնչափ արագ, որ թեև զղվելի ձեռագիր ունեմ, գերադասում եմ գրել իմ ձեռքով, այլ ոչ թե թելադրել ուրիշին, քանզի շեմ կարող գտնել մեկին, որ հասցնի իմ հետևից, և երբեք շեմ մաքրագրում: Ինձ ծանոթ բարձրուս-

տիճան անձանց սովորեցրել եմ հանդուրժել ծալատեղեր ու լուսանցքնե շունեցող թղթի վրա խմ թողած թանաքաբծերն ու ջնջվածքները: Հեն այն նամակները, որոնց վրա ես ամենից շատ եմ աշխատանք թափում ամենաանհաջողներն են. եթե նամակն ինձ անմիջապես չի հաջողվել ուրեմն, չի հաջողվել հոգի դնել նամակում: Ինձ համար ամենահաճելի առանց որևէ պլանի սկսելն է. թող մի բանից բխի մյուսը: Մեր ժամանակներում նամակների մեջ ավելի շատ ամեն տեսակի շեղումներ և նախաբաններ կան, քան գործնական բովանդակություն: Քանի որ ե գերադասում եմ գրել երկու նամակ, քան թե ծալել ու կնքել մեկը, այ բանը ես միշտ հանձնարարում եմ ուրիշին: Ճիշտ նույն ձևով, երբ սպասվել է այն ամենը, ինչ պետք էր ասել նամակում, ես հաճույքով մե ուրիշին կհանձնարարեի ավելացնել բոլոր այն երկարաշունչ դիմումները, առաջարկություններն ու խնդրանքները, որոնցով մեզանում ընդունված է համեմել նամակի վերջը, և շատ կցանկանայի, որպեսզի մի նոր սովորույթ մեզ ազատեր դրանից, ինչպես նաև բոլոր աստիճաններն ու տիտղոսները գրելու անհրաժեշտությունից: Այստեղ շփոթելով և չսխալվելու համար, ես բազմիցս հրաժարվել եմ հատկապես դատավորական ու ֆինանսական աշխարհի մարկանց գրելու մտադրությունից: Այնտեղ մշտապես գոյանում են նոր պաշտոններ, քառս է տիրում բարձր կուշումներ բաշխելու և շնորհելու գործում, իսկ դրանք գրելվում են այնքան թանկ, որ չի կարելի մոռանալ կամ առանց վիրավորանք հասցնելու մեկը շփոթել մյուսի հետ: Ճիշտ նույն ձևով ես անհարիր բան եմ համարում աստիճանների ու տիտղոսների թվարկումով ձեզ հետևողին այն գրքերի անվանաթերթերում, որոնք մենք ուղարկում ենք տպագրություն:

Գլուխ XII

ՍԵՓԱԿԱՆ ՓԱՌԸ ԶԻԶԷԼ ԶԿԱՄԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեր աշխարհի բոլոր ցնորական ձգտումներից ամենասովորականն ու տարածվածը մեր բարի անվան ու փառքի հոգսն է: Այդ խաբուսի սովերի, դատարկ հնչյունի, աննշմար ու անկերպարության հետևից ընկած, մենք զոհաբերում ենք իրական ու էական բարիքներ՝ և հարստություն, և հանգիստ, և կյանք, և առողջություն.

La fama, ch'invaghisce a un dolce suono
 Gli superbi mortali, et par si bella.

E un'echo, un sogno, anzi d'un sogno un'ombra
Ch'ad ogni vento ci delegua e sgombra*.

Մարդկային բոլոր անխոհեմ հակումներից դա, կարծես հենց այն
որից նույնիսկ փիլիսոփաները հրաժարվում են ամենից ուշ և առա-
վել տհաճությամբ: Իսկ եղածներից ամենաանուղղելին ու համառն է.
quia etiam bene proficientes animos temptare non cessat*⁴. Չես գտնի
մի ուրիշ նախապաշարմունք, որի ունայնությունը բանականությունն
այդքան հստակ մերկացնե: Սակայն դժբա արմատներն այնքան
խորն են թաղվել մեզանում, որ չդիտեմ, որևէ մեկին հաջողվել է
որդյոք լիովին ձերբազատվել դրանից: Այն՝ բանից հետո, երբ դա մեր-
կացնելու համար դուք բերում եք ձեր բոլոր փաստարկները, ձեր դատո-
ւթյուններին հակադրվում է փառքի մի այնպիսի ուժգին տենչ, որ
դուք դժվարանում եք դիմանալ դրան: Քանզի, ինչպես ասում է Ցիցե-
սոնը, նույնիսկ դրա դեմ ընդվզողները ձգտում են, որ այդ առթիվ իրենց
ընթացքը կրեն իրենց անունը, և ուզում են փառաբանվել նրանով,
որ արհամարհել են փառքը³: Մնացած ամեն ինչը կարող է դառնալ
ընդհանուր, հարկ եղած դեպքում մենք բարեկամների համար զոհա-
վերում ենք թե մեր ունեցվածքը, թե կյանքը: Սակայն զիջել սեփական
դատիվը, ուրիշին նվիրել սեփական փառքը՝ նման բան սովորաբար
չեն տեսնի: Կիմբերի դեմ պատերազմում Կատուլոս Լուտացիոսը, թըշ-
վամուց փախչող իր զինվորներին կանգնեցնելու համար սպառելու է բո-
լոր միջոցները, անձամբ գլխավորեց փախստականներին և իրեն ներկա-
նացրեց վախկոտ, սրպեսզի բոլորին թվար, թե նրանք ավելի շուտ հե-
ռանում են իրենց պետին, քան փախչում են ոստիսից. այդպես նա զոհա-
վերեց իր ազնիվ անունը, որ կոծկեր ուրիշի ամոթը: Ասում են, թե երբ
Կատուլոսը թ. Կարլոս V ներխուժեց Պրովանս, Անտոնիո դը Լեյվան², տեսնե-
լով, որ կայսրը հաստատ որոշել է ձեռնարկել այդ արշավանքը, և գրտ-
աբանվել, որ այն կարող է պսակվել արտասովոր փառքով, այնուամենայ-
նիվ առարկում էր և հակառակ խորհուրդ էր տալիս կայսերը, լսել այն
և դատակոխվել, որպեսզի այդ որոշման ամբողջ փառքն ու պատիվը վերա-
դրվեր իր տիրակալին և սրպեսզի բոլորի աչքում թաղավորի իմաստնու-

* Մնափառությունը համակված մահկանացուներին իր քաղցրանուշ ձայնով հմայող
և այնքան դյուրիշ թվացող համբավը ոչ այլ ինչ է, քան արձագանք, երազ կամ նույն-
իսկ երազի եզրվեր, որը քամու ամենաթույլ շնչից ճապաղվում է և շքանու... (լատ.):

** Քանզի նա (սատանան) չի դադարում գայթակղեցնել նույնիսկ այն մարդկանց
որոշները, որոնք դարձել են առաքինի² (լատ.):

Թյունն ու հեռատեսությունը երևար այնքան մեծ, որ, նույնիսկ հակա-
 ապ շրջապատի խորհուրդների, նա հաջողութեամբ ավարտած լինե-
 այդ փայլուն ձեռնարկումը: Այդպիսով նա ձգտում էր ի հաշիվ իրեն
 փառաբանել նրան: Երբ Թրակիայի դեսպանները, մխիթարելով որդեկո-
 րույս Արքիլեոնիդային՝ Բրասիդասի՝ մորը, փառաբանում էին նրան ընդ-
 հուպ մինչև այն պնդումը, թե իբր նա իրեն հավասարը չի թողել, մայրը
 մերժեց այդ մասնավոր ու անձնական գովեստը, որպեսզի այն հառ-
 ցեազրեր ողջ ժողովրդին. «Դա ինձ մի ասեք,— ասաց նա,— ես գիտեմ,
 որ Սպարտան ունի նրանից ավելի մեծ ու քաջարի քաղաքացիներ»:
 Կրեսիի՝ ճակատամարտում Ուելսի արքայազնը, որն այն ժամանակ դեռ
 ևս պատանի էր, գլխավորում էր առաջապահ ջոկատը: Հենց այստեղ է
 բռնկվեց ամենակատաղի գոտեմարտը: Նրա մոտ գտնվող մերձավոր
 անձինք, տեսնելով, որ նեղն են ընկնում, օղնություն ցույց տալու խընդ-
 րանքով մարդ ուղարկեցին էդուարդ Թագավորի մոտ: Վերջինս հարցրեց,
 թե ինչ վեճակում է հիմա իր որդին, և, պատասխան ստանալով, որ նա
 ողջ և առողջ է և առաջվա նման ձիու վրա է, ասաց. «Ես նրան կվնասեի,
 եթե խլիի այս ճակատամարտում հաղթանակի պատիվը, ճակատամարտ,
 որում նա այդպես սոկունորեն դիմանում է: Ու թեև հիմա նրա համար
 դժվար է, թող հաղթանակը բաժին ընկնի միայն իրեն»: Եվ նա լկամե-
 ցավ ոչ անձամբ օգնութեան հասնել որդուն, ոչ ուղարկել որևէ մեկին,
 հիմանալով, որ եթե ինքը մեկներ այնտեղ, կսկսեին խոսել, թե առանց իր
 օժանդակութեան ամեն ինչ կխորտակվեր, և այդ հերոսական մարտի
 հաջողութունը կվերագրեին միայն իրեն: *Semper enim quod postremum ad-*
*fectum est, ad rem totam videtur traxisse**.

Հոռմում շատերը համարում էին և ամեն տեղ ասում, թե իր գլխա-
 վոր հաղթանակների համար Սկիպիոնը մեծ շափով պարտական է Լելիոս-
 սին, որը, սակայն, միշտ և բոլոր միջոցներով աջակցում էր Սկիպիոնի
 մեծութեան փայլին ու փառքին, բնավ չմտածելով իր մասին՝: Իսկ
 Սպարտայի Թագավոր Թևոլոմպոսը, երբ ինչ-որ մեկն ասաց, թե պե-
 տությունը կանգուն է, որովհետև նա լավ է կառավարում, պատասխա-
 նեց. «Ոչ, ավելի շուտ նրա համար, որ ժողովուրդը կարողանում է այդ-
 պես լավ հնազանդվել»:

Ինչպես պերի կոչում ժառանգած կանայք, շնայած իրենց սեռին

* Չէ որ միշտ թվում է, թե հենց վերջում մարտի մեջ մտած ջոկատներն են վճռել
 նրա կյանքը (լատ.):

իրավունք ունեին ներկա գտնվել պերերի իրավասությանը ևնթակա
գործերի քննարկմանը և արտահայտվել, այդպես էլ եկեղեցուն պատկա-
նուց պերերը, շնայած իրենց հոգևոր աստիճանին, պարտավոր էին պա-
տերազմի ժամանակ օգնել մեր թագավորներին ոչ միայն իրենց մարդ-
կանց ու ծառաներին ուղարկելով, այլև անձնական ներկայութեամբ:

Բովե քաղաքի եպիսկոպոսը, Բուվինի⁹ ճակատամարտի ժամանակ
յտնվելով Ֆիլիպ Օգոստոս թագավորի մոտ, մարտնչում էր արիարար:
Սակայն նա կարծում էր, թե ինքը չպետք է¹⁰ քաղի այդպիսի արյունա-
հեղ և կատաղի մարտի պատուհներն ու վստաբը: Այդ օրը նա իր ձեռքով
հնազանդեցրեց բազմաթիվ թշնամիների, բայց շարունակ նրանց հանձ-
նում էր առաջին հանդիպած ազնվականին, վերջինիս հայեցողությանը
թողնելով վարվելաձևը՝ սպանել կամ գերի վերցնել: Այդպես նա Սուս-
բերի կոմս Վիլյամին հանձնեց մեսիր ժան դը Նելին: Խղճի հարցերում
գրականորեն նույնպիսի նորանկատություն, ինչպիսին այն էր, որի մա-
տին հենց նոր խոսում էր, նա համաձայնում էր ուշաթափ անել թշնա-
մուն, բայց վերք չհասցնել, և կովում էր միայն լախտով: Արդեն մեր
ժամանակներում, ոմն ազնվական, որին թագավորը կշտամբում էր քա-
հանայի վրա ձեռք բարձրացնելու համար, հաստատապես ու վճռակա-
նորեն ժխտում էր դա: Իսկ ճշմարտությունն այն էր, որ նա ծեծել ու
ոտնուտակ էր տվել նրան:

Գլուխ XIII

ՊՐԵՍԵՆՏԱՆԻ ՊՐԵՍԵՆՏԱՆԻ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՇԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

Պլուտարքոսը մի տեղ ասում է, թե կենդանին կենդանուց այն-
քան չի տարբերվում, որքան մարդը՝ մարդուց²: Նա նկատի ունի մարդու
նույնպես անձնական հատկություններն ու ներքին հատկանիշները: Եվ
իրոք, ինչպես ես եմ պատկերացնում, էպամինոնդասից մինչև ինձ հայտ-
նի այս կամ այն մարդը, որը թեկուզ և զուրկ չէ ողջամտորեն դատելու
ընդունակությունից, ըստ իս, այնքան հեռավորություն կա, որ նա կար-
տահայտվեի Պլուտարքոսից ավելի խիստ և կասեի, թե ոմանց միջև
նախա տարբերությունն ավելի մեծ է, քան որոշ մարդկանց և որոշ
կենդանիների միջև,—

Heml vir viro quid praestat?*

և հոգևոր կատարելության աստիճաններն այնքան են, որքան ստժեն
և բնկած այստեղից մինչև Երկինք, չէ որ դրանք անթիվ են:

* Երբան է մի մարդը գերադանցում մյուսին³ (լատ.):

Բայց, եթե խոսենք մարդկանց գնահատելու մասին, ապա՝ դարձանալի բան է, մեզանից բացի, ամեն ինչ գնահատվում է միայն ըստ իր հատկանիշների: Մենք ձիուն գովում ենք ուժի և վարդունության

volucrum

Sic laudamus equum, facili cui plurima palma
Fervet, et exultat raucio victoria circo*.

այլ ոչ թե լծասարքի համար, քերծեին՝ արագ վաղքի, այլ ոչ թե վզնոց համար, որսկան թռչունին՝ թեերի, այլ ոչ թե շղթայիկների ու զանգուլակների համար: Ուրեմն ինչո՞ւ նույն կերպ շատենք մարդու մասին թե նրան ինչ է հատուկ:

Նա փառահեղ կյանք է վարում, ունի հիանալի պալատ, ունի այս պիսի ազդեցություն, այսքան եկամուտ, բայց այս ամենը նրա հետ են այլ ոչ թե նրանում: Դուք աչքներդ խուփ գնում չեք կատարում: Ձի գնելիս դուք նրա վրայից հանում եք մարտական հանդերձանքը, զննում բնական տեսքով, իսկ եթե նա, այնուամենայնիվ, ծածկված է սթարով ինչպես դա անում էին հնում, թագավորներին ձի վաճառելիս, ապա այժմ ծածկում է ամենաքիչ էական բաները, որպեսզի դուք չհրապուրվեք բրդի գեղեցկությամբ կամ գավալի լայնությամբ, այլ ուշադրություն դարձնեք գլխավորապես ոտքերին, աչքերին, սմբակներին՝ յուրաքանչյուր ձիու առավել կարևոր մասերին.

Regibus hic mos est: ubi equos mercantur, opertos
Inspiciunt, ne, si facies, ut saepe, decora
Molli fulta pede est, emptorem inducat hiantem,
Quod pulchrae clunes, breve quod caput, ardua cervix**.

Ուրեմն, ինչո՞ւ մարդուն գնահատելիս դուք նրա մասին դատում եք երբ բոլոր զգեստները հագին են: Նա մեզ ցուցադրում է լոկ այն, ինչ բնավ նրա էությունը չէ, և թաքցնում է այն ամենը, որի հիման վրա միայն կարելի է դատել նրա արժանիքների մասին: Չէ՞ որ դուք կամենում եք հիմանալ սրի, այլ ոչ թե պատյանի գինը. այն մերկացված տեսնելու դուք, գուցե, մի գրոշ էլ չտաք:

Մարդու մասին պետք է դատել ըստ նրա հատկանիշների, այլ ոչ

* Այդպես մենք հիանում ենք այն ձիու արագավազությամբ, որը հեշտությամբ մրցանակներ է շահում, արժանանալով կրկեսը լցնող բազմության ուժգին ծափողջույններին⁴ (լատ.):

** Թագավորներն ունեն մի սովորություն. երբ ձի են գնում, զննում են ծածկված վիճակում, քանզի հաճախ հիանալի կազմվածքը հենվում է թույլ ոտքերի վրա, զմայլված գնորդին կտրող են գայթակղել գեղեցիկ գավակը, ոչ մեծ գլուխն ու հպարտորեն թեքված վիզը⁵ (լատ.):

լի զգեստաների, և, ինչպես սրամտորեն ասում է մի հին հեղինակ, «գիտե՞ք արդյոք, թե ինչու է նա այդքան բարձրահասակ թվում: Չեզ խաբում են նրա բարձր կրունկները»⁶: Պատվանդանը դեռևս արձան չէ: Արդու հասակը շափեք առանց նրա ստնափայտերի: Թող նա մի կողմ խոզի իր հարստությունն ու կոշումները և ձեռք առջև կանգնի միայն վերստացալիկով: Արդյո՞ք նրա մարմինն առողջ է և ուժեղ, հարմարված է արդյոք իրեն հատուկ զբաղմունքներին: Ինչպիսի՞ հոգի ունի: Գեղեցի՞կ է այն, օժտված է ընդունակություններով ու բոլոր անհրաժեշտ հատկանիշներով: Նրա՞նն է արդյոք իր ունեցած հարստությունը, թե՞ փոխառյալ է: Արդյո՞ք ամեն ինչի համար այն պարտական չէ երջանիկ գիպվածին: Կարո՞ղ է արդյոք սառնասրտորեն նայել մերկ սրերի փայլին: Կարո՞ղ է արդյոք աներկյուղ ընդունել և բնական, և բռնի մահը: Արդյո՞ք բավականաչափ վճռական է, հավասարակշռված և գոհացած: Ահա լի ինչը պիտի գիտակցես, ուստի և հարկավոր է դրա հիման վրա դասակարգել մեր միջև գոյություն ունեցող վիթխարի տարբերությունների մասին: Եթե մարդ է,

sapiens, sibiq; imperiosus

Quem neque pauperies, neque mors, neque vincula terrent,
 Responsare cupidinibus, contemnere honores
 Fortis, et in se ipso totus teres atque rotundus,
 Externi ne quid valeat per laeve morari,
 In quem manca ruit semper fortuna?*

ապա նա հինգ հարյուր սաժեն բարձր է բոլոր թագավորություններից ու կրթություններից, ինքն իր մեջ գտնելով մի ամբողջ արքայություն:

Sapiens... pol ipse fingit fortunam sibi**.

Նրան ի՞նչ է մնում կամենալ:

Nonne videmus

Nil aliud sibi naturam latrare, nisi ut quoi
 Corpore seiunctus dolor absit, mente fruatur,
 Iucundo sensu cura semetus metuque?***

* ... եթե նա իմաստուն է և իր գլխի տերը, և նրան չեն վախեցնում ոչ աղքատությունը, ոչ մահը, ոչ շղթաները, եթե, ողով անասան, կարողանում է տիրել իր կրքերին ու արհամարհել մեծարանքը, և եթե նա ամբողջովին, կարծես, ողորկ է ու կտր, անպես որ արտաքին ոչինչ չի կարող նրան մոլորեցնել, ապա միթե՞ նրան կհնազանդեցնեն ճակատագրի անակնկալները⁷ (լատ.):

** Իմաստուն մարդը հիրավի ինքն է կռում իր բախտը⁸ (լատ.):

*** Միթե՞ չտրաքանչյուրին պարզ չէ, որ մեր բնությունը սլահանջում է լսկ մի բան՝ սրբանգի մարմինը տառապանքներ չզգա և մենք կարողանանք վայելել մեր խոհերն ու անկյի զգացումները, շիմանալով վախ ու տազնապ⁹ (լատ.):

Նրան համեմատեք մեզ շրջապատող բթամիտ, ստոր, քծնի, անկա-
յուն և իրենց մի կողմից մյուսը քշող տարբեր կրթերի կատաղի ալիքնե-
րի վրա շարունակ ճոճվող, ամբողջովին ուրիշի կամքից կախված մարդ-
կանց ամբոխի հետ. սրանք ավելի հեռու են նրանից, քան երկինքը
գետնից: Եվ այնուամենայնիվ, մեր սովորական կուրացումն այնպիսի
է, որ մենք դրա հետ շատ քիչ ենք հաշվի նստում կամ բոլորովին չենք
նստում: Իսկ երբ տեսնում ենք գեղջուկին ու թագավորին, աղնվականին
ու ռազմիկին, բարձրաստիճան պաշտոնյային ու մասնավոր անձին, հա-
րուստին ու աղքատին, մեր աչքում նրանք երևում են միմյանցից խիստ
տարբեր, մինչդեռ, պարզապես ասած, նրանք իրարից տարբերվում են
միայն շորերով:

Թրակիայում թագավորին իր ժողովրդից զանազանում էին մի զվար-
ճալի, բայց չափազանց անսովոր եղանակով. նա ուներ տռանձնահա-
տուկ կրոն, միայն իրեն պատկանող աստված՝ Մերկուրին, որին նրա
հպատակները պաշտելու իրավունք չունեին: Իսկ ինքն արհամարհում
էր նրանց աստվածներին՝ Մարսին, Բաքոսին, Դիանային: Եվ այնու-
ամենայնիվ, դա սոսկ դատարկ, առերևույթ բան է, որը ոչ մի էական
տարբերություն չի ներկայացնում: Նրանք նման են բեմերի վրա թա-
ղավորներ ու կայսրեր խաղացող դերասանների, սակայն ներկայացու-
մից անմիջապես հետո կրկին դառնում են խղճուկ ծառաներ կամ օրա-
մշակներ, վերադառնալով իրենց սկզբնական վիճակին: Նայեցեք այն
կայսերը, որի շուքը ձեզ կուրացնում է հանդիսավոր բեմելների ժա-
մանակ.

Scilicet et grandes viridi cum luce smaragdi
Auro includuntur, t'eritu-que Thalassina vestis
Assidue, et Veneris sudore-n exercita potat*.

Իսկ այժմ նրան տեսեք վարագույրի հետևում. դա շատ սովորա-
կան մարդ է և, գուցե, նույնիսկ ավելի շնչին, քան իր հպատակներից
ամենախղճուկը. Ille beatus introrsum est. Istius bracteata felicitas e-1**
Վախկոտությունը, անվճռականությունը, սնափառությունը, սրամտանքն
ու նախանձը նրան հուզում են, ինչպես ուղածդ ուրիշ մարդու.

Non enim gazae neque consularis
Su nmovet lictor miseros turritus

* Որովհետև նա կրում է ոսկով ազուցված կանաչափայլ վիթխարի զմրուխտներ
և միշտ զգեստավորված է ծովագույն, սիրային գվարճությունների քրտինքով ներթձվա-
հագուստով¹⁰ (լատ.):

** Այդպիսի (իմաստուն) մարդը երջանիկ է ներքուստ, իսկ սրա երջանկությունը
միայն արտաքուստ է¹¹ (լատ.):

Mentis et curas laqueata circum
Tecta volantes*.

տազնապն ու վախը բռնում են նրա կոկորդը, երբ նա գտնվում է իր
զորքերում.

Re veraque metus hominum, cu aequae sequaces,
Nec metuunt sonitus armorum, nec fera tela;
Audacterque inter reges, rerumque potentes
Versantur, neque fulgorem reverentur ab auro**.

Իսկ միթե՞ տենդը, գլխացավը, հոդատապը նրան ավելի շատ են
խնայում, քան մեզ: Երբ ծերությունը կորացնի նրա ուսերը, արդյոք
թիկնապահները կազատե՞ն նրան այդ բեռից: Երբ մահվան սարսափը
սառեցնի նրան, արդյոք նա կհանգստանա՞ իր արքունիքի մեծամեծերի
ներկայությունից: Երբ նրան համակի խանդը կամ հանկարծակի քմա-
հաճությունը, արդյոք ծնրադրություններն ուշքի կբերե՞ն նրան: Նրա
մահի՞ճը պարուրող վարագույրը, որը փոնթ է կանգնում ոսկեկարից ու
մարգարտաշարից, չի կարող նրան օգնել հաղթահարելու ստամոքսաշու-
վի նոպաները:

Nec calidae citius decedunt corpore febres,
Textilibus si in picturis ostroque rubenti
Iacteris, quam si plebeia in veste cubandum est***.

Ալեքսանդր Մեծի շողորթները նրան համոզում էին, թե Յուպի-
տերի որդին է: Մի անգամ, վիրավորվելով, նա նայեց վերքից հոսող
արյանն ու նկատեց. «Դեհ, հիմա ի՞նչ կասեր: Մի՞թե սա կարմիր, հա-
սարակ մարդկային արյուն չէ: Կարծում եմ, նման չէ այն արյանը, որ
Հոմերոսի մոտ հոսում է աստվածներին հասցրած վերքերից»: Բանաս-
տեղծ Հերմոգորոսն ի պատիվ Անտիգոնոսի գրել էր մի բանաստեղծու-
թյուն, որում նրան անվանում էր աստծո որդի: Բայց Անտիգոնոսն
առարկեց. «Նա, ով դուրս է տանում իմ գիշերանոթը, քաջ գիտե, որ պա

* Քանզի ոչ գանձերը, ոչ կոնսուլի բարձր աստիճանը չեն վանի այն հոգեկան շար-
տազնապններն ու սրամտությունը, որոնք թևում են առաստաղի ոսկեղօծ նախշերի ներ-
քո¹² (լատ.):

** Եվ իբրք, մարդկային-երկշուղեն ու ձանձրացուցիչ հոգսերը չեն վախենում ոչ
զձեքի շաշյունից, ոչ մահարեր տեղերից, և հանդգնորեն հախրում են արքունների ու այս
աշխարհի մեծերի միջև, լսարձափեղավ-ձրանց ոսկու փայլից¹³ (լատ.):

*** Եվ եթե դու-դալարվում ես ծիրանագույն կամ նկարադարձ գործվածքի վրա, անդե
ավելի շուտ շե-անցնում, քան եթե պտուկում լինեիր սովորական մահճում¹⁴ (լատ.):

սուտ է»¹⁵; Թագավորն ընդամենը մարդ է: Եվ եթե նա ի ծնե վատն է, ապա նույնիսկ ամբողջ աշխարհին տիրելը նրան չի բարեփոխի.

puelle

Hunc rapiant: quicquid calcaverit hic, rosa fiat*.

Ի՞նչ օգուտ այդ ամենից, եթե որպես մարդ նա հոգեպես չնշին է ու բիրտ: Բավականության ու երջանկության համար անհրաժեշտ են և հոգեկան ուժեր, և բանականություն.

haec perinde suat, ut lilius animus qui ea possidet,
Qui uti scit, ei bona: illi qui non utitur recte, mala**.

Ինչպիսին էլ լինեն ճակատագրի պարզևած բարիքները, դուք պետք է նաև կարողանաք զգալ դրանց հմայքը: Մեզ երջանիկ է դարձնում ոչ թե որևէ բան ունենալը, այլ վայելելը.

Non domus et fundus, non aeris acervus et auri
Aegrotō domini deduxit corpore Iebres.
Non animo curas. valeat possessor oportet,
Qui comportatis rebus bene cogitat uti.
Qui cupit aut metuit, iuvat illum sic domus aut res,
Ut lippum pictae tabulae fomenta podagram***.

Նա, ով հիմար է, ով անճաշակ է ու բոխ, դրանցից հաճույք կզգա ոչ ավելի, քան հոտառությունն ու համի զգացումը կորցրած մարդը հունական գիեղծերի քաղցրությունից, կամ ձին՝ իր ճոխ լծասարքից: Ճիշտ է ասում Պլատոնը, պնդելով, թե առողջությունը, գեղեցկությունը, ուժը, հարստությունը և այն ամենը, ինչ բարիք է կոչվում, անխոհեմ մարդու համար նույնքան վատ են, որքան լավ են խոհեմ մարդու համար, և ընդհակառակը¹⁹: Բացի այդ էլ, ինչի՞ են պետք կյանքի այդ բոլոր արտաքին հարմարությունները, եթե մարմինն ու հոգին հիվանդ են: Չէ որ

* Թող կույսերը ձեռքից ձեռք խլեն նրան, և թող ամեն անգ, ուր նա ոտք դնի, վարդեր բացվեն¹⁶ (լատ.):

** ... բոլոր առարկաներն այնպիսին են, ինչպիսին իրենց տիրոջ ոգին է, օգտվել կարողացողների համար դրանք լավն են, իսկ ովքեր սխալ են օգտվում, նրանց համար վատն են¹⁷ (լատ.):

*** Ոչ տունը, ոչ կալվածքը, ոչ բրոնզի ու ոսկու կույտերն իրենց տիրոջ հիվանդ մարմնից դուրս չեն մղում տենդը, հոգուց՝ թախիժը. Եթե առարկաների այդ ամբողջ կույտի տերն ուզում է լավ օգտվել դրանցից, պետք է առողջ լինի: Իսկ ով ազահություն է անում կամ վախենում է, տունն ու հարստությունը նրան բերում են այնքան օգուտ, որքան նկարները թարախածոր աչքեր ունեցողին, կամ քաղեղը՝ հողատապով առապողին¹⁸ (լատ.):

գնդասեղի մի փոքրիկ ծակոցը, մի փոքրիկ հուզմունքը բավական են, որպեսզի մարդուց խլեն աշխարհակալության ամեն ուրախություն: Մի՞թե նա, ինչպիսի թագավոր կամ մեծություն էլ լինի,

Totus et argento conflatus, totus et auro*,

հողատապալին ցավերի առաջին իսկ նուպայից չի մոռանում իր պալատներն ու մեծությունը: Եթե նա զայրացած է, մի՞թե թագավորական արժանապատվությունը՝ հօգնի շկարմթատակել, շգունատվել և խելագարի պես ատամները չլորձտացնել: Իսկ եթե նա ազնիվ ու խոհեմ մարդ է, հազիվ թե թագավորական գահը որևէ բան ավելացնի նրա երջանկությանը:

Si ventri bene, si lateri est pedibusque tuis, nil
Divitiae poterunt regales addere maius**.

Նա տեսնում է, որ դա սոսկ խաբուսիկ դիմակ է: Գուցե, նա նույնիսկ կհամաձայնի Սելևկոս արքայի կարծիքին, թե «այն մարդը, ով գիտե որքան ծանր է թագավորական գայիսոնը, չի վերցնի, եթե գետնին ընկած տեսնի»²², նա այդպես էր ասում, որովհետև լավ թագավորին բաժին էր ընկել մեծ ու ծանր բեռ: Եվ իրոք, ուրիշներին կառավարելը հեշտ բան չէ, երբ ինքն իրեն կառավարելն անգամ բավականաչափ դժվար է: Իսկ ինչ վերաբերում է հրամայելու հնարավորությանը, որն այդքան քաղցր է թվում, ապա, ուշադրության առնելով մարդկային հասկացողության խղճուկ թուլությունը և նոր ու կասկածելի բաների միջև ընտրություն կատարելու դժվարությունը, ես այն կարծիքին եմ, թե ավելի դյուրին ու հաճելի է հետևել ինչ-որ մեկին, քան առաջնորդել, և արդեն նախանշված ուղիով ընթանալն ու միայն ինքդ քեզ համար պատասխանատու լինելը մեծ թեթևացում է հոգու համար:

Ut satius multo iam sit parere quietum,
Quam regere imperio res velle***.

Բացի այդ էլ, Կյուրոսն ասում էր, թե հրամայել կարող է լուրջ այն մարդը, որն ավելի լավն է, քան նրանք, ում հրամայում է: Սակայն Քսենոփոնի մոտ Հիերոն արքան պնդում է, թե նույնիսկ իրենց վայելք-

* Ամբողջովին արծաթով զարդարված, ոսկով զարդարված²⁰ (լատ.):

** Եթե քո ստամոքսը, կուրծքը, ոտքերը կարգին են, թագավորական գանձերը ոչինչ չեն կարող ավելացնել (քո բարօրությանը)²¹ (լատ.):

*** Այսպիսով, ավելի լավ է հանգիստ ենթարկվել, քան ցանկանալ ինքնուրույնաբար իշխել²³ (լատ.):

ների մեջ արքաների դրուժյունն ավելի վատ է, քան հասարակ մարդկանցը, քանզի, հարմարությամբ ու հեշտությամբ անձնատուր լինելով վայելքներին, նրանք չեն գտնում այն տտիպ թունդ քաղցրությունը, որ մենք ենք զգում²⁴:

Pinguis amor nimiumque potens in taedia nobis
Vertitur, et stomacho dulcis ut esca nocet*.

Մի՞թե երաժշտությունը մեծ հաճույք է պատճառում եկեղեցական երգչախմբում երգող երեխաներին: Գերհագեցումը նրանց մոտ ավելի շուտ ձանձրույթ է ստաջացնում: Տոնախմբությունները, պարերը, դիմակահանդեսները, մրցախաղերն ուրախացնում են նրանց, ովքեր հազվադեպ են լինում դրանցում և ձգտում են այնտեղ: Սակայն սովոր մարդուն դրանք թվում են անհետաքրքիր ու սափակ: Եվ կանանց բնկերակցությունը չի գրգռում այն մարդկանց, ովքեր կարող են գերհագենալու շափ վայելել նրանց, ով չի ծարավում, հաճույքով չի խմում: Խեղկատակների արարմունքները մեզ գվարճացնում են, իսկ իրենց համար դա ծանր աշխատանք է: Այգսիս էլ ստացվում է, որ բարձրաստիճան անձանց համար տոն, հաճույք է, երբ, գգեստափոխվելով, նրանք երբեմն կարող են որոշ ժամանակով անձնատուր լինել ուսմիկ ժողովրդի հասարակ կենսաձևին:

Plerumque gratae principibus vices,
Mundaeque parvo sub lare pauperum
Cenae, sine aulaeis et ostro,
Sollicitam explicuere frontem**.

Ոչինչ այնպես չի ջղայնացնում և այնպիսի գերհագեցում չի ստաջացնում, ինչպես առատությունը: Ո՞ր հեշտասերը զղվանք չի ապրի, եթե նրա իշխանության տակ լինեն երեք հարյուր կին, ինչպես սուլթանի հարեմում: Եվ որսորդության ինչպիսի՞ հակում, ինչպիսի՞ ճաշակ կարող էր ունենալ նրա այն նախնին, որը դաշտ էր դուրս գալիս յոթ հազարից ոչ պակաս բազեապանների ուղեկցությամբ: Բացի այդ, ես գտնում եմ, որ մեծության բուն փայլը լրացուցիչ բավական շատ անհարմարություններ է հարուցում առավել քաղցր հաճույքներ վայելե-

* Չափազանց ջերմ ու կրակոտ սերն, ի վերջո մեզ ձանձրույթ է բերում և վնասակար է ճիշտ այնպես, ինչպես շափազանց համեղ կերակուրը վնասակար է ստամոքսին²⁵ (լատ.):

** Հաճելի է նրբագեղութունն այս աշխարհի մեծէշին, մինչդեռ գորգեր ու ծիրանի շունեցող աղբատների համեստ սան հասարակ կերակուրը հաճախ է հարթել նրանց ճակատի կնճիռները²⁶ (լատ.):

լիս. աշխարհի տերերն ամեն կողմից տեսանելի են, նրանց վրա շատ աչք կա: Եվ ես չեմ հասկանում, թե ինչպես կարելի է նրանց ուրիշներից ավելի մեղադրել այն բանի համար, որ աշխատում են թաքցնել կամ կոծկել իրենց մեղքերը: Քանզի այն, ինչը մեզ համար սոսկ թուլություն է, նրանց մոտ, ժողովրդի կարծիքով, բռնակալության դրսևորում է, օրենքների բամաճրում և զանցառում. թվում է, թե բացի իրենց արատավոր հակումներից հագուրդ տալուց, նրանք զվարճանում են նաև այն բանով, որ վիրավորում և ոտնամհարում են հասարակական կանոնները: Արդարև, «Գորգիասում» Պլատոնը բռնապետին բնութագրում է²⁷, որպես մի մարդու, որը հնարավորություն ունի պետության մեջ անել այն ամենը, ինչ կամենում է: Ուստի և հաճախ նրանց արատների բացահայտ ցուցադրումն ավելի շատ է վիրավորում, քան բուն արատը: Ոչ ոքի դուր չի գա, որ իրեն հետևեն ու ստուգեն իր արարքները: Նրանցից աչք չեն կտրում, հետևելով նրանց կեցվածքին և աշխատելով թափանցել անգամ նրանց մտքերի մեջ, քանզի ամբողջ ժողովուրդը գրտնում է, որ այդ մասին դատելն իր իրավունքն է և իր օրինական շահը: Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ երևացող ու լավ լուսավորված մակերևույթի վրա բծերն ավելի մեծ են թվում, և որ ճակատի քերծվածքը կամ գորտնուկն ավելի շատ են աչքի զարնում, քան ոչ այնքան տեսանելի տեղում եղած սպիւն:

Ահա թե ինչու բանաստեղծները ներկայացնում են, թե իբր Յուպիտերն իր սիրային արկածների ժամանակ տարբեր կերպարանքներ էր րնդունում, և նրան վերագրվող բոլոր սիրային պատմություններում, ըստ իս, կա միայն մեկը, որտեղ նա հանդես է գալիս թագավորական իր ամբողջ մեծությամբ:

Սակայն վերադառնանք Հիերոնին: Նա նույնպես վկայում է, թե ինչպիսի անհարմարություններ է կրում թագավորական իշխանությունից, որը թույլ չի տալիս ազատ ճանապարհորդել և հարկադրում է, գերունման, մնալ իր երկրի սահմաններում, և, թե իր բոլոր գործողություններում ենթարկվում է ամենացավալի սահմանափակումների: Եվ ճիշտն ասած, տեսնելով, թե ինչպես մեր թագավորները բոլորովին միայնակ նստած են սեղանի մոտ, իսկ շուրջը խմբվում են մեծ թվով օտար մարդիկ, սրտնք նայում են նրանց ու բամբասում, ես հաճախ ավելի շատ կարեկցանք եմ ապրում, քան նախանձ:

Ալֆոնս արքան ասում էր²⁸, թե այդ առումով նույնիսկ ավանակներն ավելի լավ դրություն մեջ են, քան սիրակալները. նրանց տերերը թույլ են տալիս արածել ազատ, որտեղ ուզում են, մի բան, որ թագավորները ոչ մի կերպ չեն կարողանում ստանալ իրենց ծառաներից:

Իսկ ես երբեք չեմ պատկերացրել, թե խոհեմ մարդուն կարող է ինչ-որ առանձնահատուկ հարմարություն թվալ իր զուգարանի նստոցին քսան վերահսկիչ ունենալը, և չեմ համարել, թե տասը հազար լիվր եկամուտ ունեցող, կամ Կազալեն վերցրած ու Սիենը պաշտպանած²⁹ մարդու ծառայությունները նրա համար ավելի հարմար ու ընդունելի են, քան լավ, փորձված սպասավորի ծառայությունները:

Քաղաքական աստիճանի առավելությունները մեծ մասամբ կարծեցյալ են. հարստության և իշխանության ուզածը աստիճանում կարելի է թագավոր զգալ: Կեսարը փոքրիկ թագավորներ էր կոչում բոլոր այն տիրակալ անձանց, ովքեր նրա օրոք դատի ու դատաստանի իրավունք ունեին Տրանսիայում: Իրականում, բացի «մեծություն» տիրուցից, ուզածը սենյորի դիրքն, ըստ էության, քիչ է զիջում թագավորականին: Նայեցեք արքունիքից հեռու գտնվող գավառներին՝ ասենք, օրինակ, Բրետանին. ինչպես է ապրում այնտեղ իր կալվածքում առանձնացած, ծառաներով շրջապատված սենյորը, տեսեք նրա շքախումբը, ենթականերին, այն, թե ինչպիսի ծիսակարգով է շրջապատված, և նայեցեք, թե ուր է տանում նրա երևակայության թռիչքը՝ շկա ավելի արքայական ուշինչ. սենյորն իր թագավորի ու տիրակալի մասին լսում է տարին հազիվ մեկ անգամ, կարծես նա պարսից արքան լինի, և ճանաչում է միայն նրա հետ իր հինավուրց ազգակցությունը, որը վավերացված է քարտուղարի մոտ պահվող թղթերում: Ճիշտն ասած, մեր օրենքները բավականին ազատ են, և գերագույն իշխանությունն իրեն զզացնել է տալիս ֆրանսիացի ազնվականին, զուգե՛, երկու անգամ նրա ամբողջ կյանքում: Իրականում մեզ բոլորիցս ստորադրյալ են զգում հիրավի միայն նրանք, ովքեր իրենք են դիմում այլ բանին, կամենալով իրենց ծառայությամբ հասնել մեծարանքի ու հարստության: Քանզի նա, ով ուզում է խաղաղ նստել իր տանը և կարողանում է իր տնտեսությունը վարել առանց գծությունների ու դատավեճերի, նույնքան ազատ է, որքան վենետիկի դոքը: *Paucos servitus, plures servitute tenent**.

Ավելին, Հիերոնը հատկապես նշում է, որ արքայական արժանապատվությունը թագավորին կատարելապես զրկում է բարեկամական կապերից ու մարդկանց հետ կենդանի շփումներից, իսկ չէ որ հենց դրանում է մարդկային կյանքի մեծագույն ուրախությունը: Քանզի ևս ինչպե՞ս կարող եմ անկեղծ բարյացակամության ու բարի կամքի արտահայտության հույս ունենալ այն մարդուց, ով ուզած շուրջած ամեն ինչով կախ-

* Ստրկությունը կաշկանդում է բշերին, մեծ մասամբ մարդիկ իրենք ևն կաշում ստրուկի քախտին³⁰ (լատ.):

ված է ինձանից: Կարո՞ղ եմ արդյոք վստահել նրա խոնարհ խոսքերին ու հարգալից ողջույններին, եթե նա առհասարակ իրեն այլ կերպ պահելու հնարավորություն չունի: Մեզանից վախեցողների մեղ ցուցարերած մեծարանքը մեծարանք չէ. այս գեպքում հարգանք է մատուցվում ոչ թե ինձ, այլ թագավորական աստիճանին.

maximum hoc regni bonum est,
Quod facta domini cogitur populus sui
Quam ferre tam laudare*.

Մի՞թե մենք չենք տեսնում, որ և՛ բարի, և՛ շար տիրակալին, և՛ նրան, ում ատում են, և՛ նրան, ում սիրում են, մատուցում են միևնույնը: Հարգանքի նույնպիսի բարձրագույն նշաններով, նույնպիսի ծիսակարգով ծառայել են իմ նախորդին և կծառայեն իմ հաջորդին: Եթե հպատակներս ինձ չեն վիրավորում, դա նրանց կապվածության արտահայտությունը չէ. ես ի՞նչ իրավունք ունեմ մտածելու, թե դա կապվածություն է, եթե նույնիսկ ցանկանալու դեպքում, նրանք չեն կարող ուրիշ կերպ վարվել: Ոչ ոք իմ հետևից չի գալիս, առաջնորդվելով մեր միջև ծագած բարեկամական զգացմունքով, քանզի չի կարող բարեկամություն ստեղծել այնտեղ, ուր այդքան քիչ են փոխադարձ կապերն ու դիրքերի համապատասխանությունը: Այն բարձրությունը, որի վրա ես եմ, ինձ դուրս է թողել մարդկային շփումներից: Նրանք ինձ հետևում են ըստ սովորույթի կամ ըստ սովորության, կամ, ավելի ճիշտ, ոչ թե ինձ, այլ իմ երջանկությանը, որպեսզի բազմապատկեն իրենցը: Այն ամենը, ինչ նրանք ինձ ասում են, կամ անում ինձ համար, լոկ պաճուճանքներ են, քանզի նրանց աղատությունը բոլոր կողմերից սահմանափակված է նրանց վրա իմ ունեցած մեծ իշխանությանը: Այն ամենը, ինչ ես տեսնում եմ շուրջս, ծածկված է դիմակներով:

Մի անգամ սլալատականներն արդարամտության համար զովաբանում էին Հուլիանոս կայսերը: «Ես հաճույքով կհպարտանայի այդ զովեսաներով,— ասաց նա,— եթե դրանք ասեին այն մարդիկ, որոնք կհամարձակվեին դատապարտել կամ պարսավանքի ենթարկել հակառակ գործողությունները, եթե ես կատարեի այդպիսիք»:

Բոլոր իսկական բարիքները, որոնցից օգտվում են թագավորները, ընդհանուր են նրանց և միջին ունեցվածքի տեր մարդկանց համար. միայն աստվածներին է վիճակված նստել թեավոր ձիեր և սնվել ամբ-

* Թագավորական իշխանություն ունենալու ամենամեծ առավելությունն այն է, որ ժողովուրդները ստիպված են լինում ոչ միայն հանդուրժել, այլև փառասուհել իրենց տիրակալների յուրաքանչյուր արարքը³¹ (լատ.):

բոսով: Նրանց քունն ու ախորժակն այնպիսին են, ինչպիսին մերը, նրանց պողպատն ավելի լավ կոփվածք շունի, քան այն, որով մենք ենք զինվում, թագը նրանց չի պաշտպանում արևից ու անձրևից: Դիոկղևտիանոսը, որը թագավորեց այդքան երջանիկ և այդպես հարգված էր բոլորի կողմից, ի վերջս հրաժարվեց իշխանությունից ու գերադասեց մասնավոր կյանքի ուրախությունները, իսկ երբ որոշ ժամանակ անց հանգամանքները պահանջում էին, որ նա վերադառնար պետական գործերին, նա խնդրողներին պատասխանեց. «Գուք չէիք համարձակվի հորդորել ինձ, եթե տեսնեիք իմ այգում իմ ձեռքով տնկած ծառերի սքանչելի շաքերն ու իմ աճեցրած հիանալի սեխերը»:

Անաբարսիսի կարծիքով, լավագույն կառավարումը կլինեի այն, երբ մնացած ամեն ինչի համընդհանուր հավասարության պայմաններում, առաջին տեղերն ապահովված կլինեին առաքինության համար, իսկ վերջինները՝ արատի³²:

Երբ Պյուտոս արքան մտադրվել էր շարժվել Իտալիայի վրա³³, նրա իմաստուն խորհրդատու Կինեադոսը, ցանկանալով զգացնել տալ նրա փառամոլության ամբողջ ունայնությունը, հարցրեց. «Տեր իմ, հանուն ինչի՞ ես ծրագրել այդ մեծ ձեռնարկումը»:— «Որպեսզի նվաճեմ Իտալիան»,— անմիջապես պատասխանեց արքան:— «Իսկ հետո՞,— շարունակեց Կինեադոսը,— երբ հասնե՞ս դրան»:— «Ես կշարժվեմ Գաղղիա և Իսպանիա»,— ասաց նա:— «Իսկ հետո՞»:— «Ես կհնազանդեցնեմ Աֆրիկան, և ի վերջո ինձ ենթարկելով ամբողջ աշխարհը, կհանգստանամ և կապրեմ իմ լիակատար հաճույքի համար»:— «Երդվում եմ աստվածներով, տեր իմ,— շարունակեց Կինեադոսը,— իսկ ի՞նչն է խանդարում քեզ հիմա էլ, եթե ուզում ես, վայելել այդ ամենը: Ինչո՞ւ միանգամից շքնակվես այնտեղ, ուր, քո հավաստիացումներով, ձգտում ես, և շխուստփես այն բոլոր դժվարություններից ու պատահականություններից, որ կանգնած են քո նպատակի ճանապարհին»

Nimirum, quia non bene noiat quae esset habendi
Finis, et omnino quoad crescat vera voluptas*:

Այս դատողությունները կավարտեմ մի հին հեղինակի կարճ ասույթով, որն, ըստ իս, դարմանալիորեն համընկնում է սույն դեպքին. *Mores cuique sui fingunt fortunam***.

* Նվ դարմանալի չէ, քանզի նա ստույգ չգիտեր, թե որտեղ պետք է կանգ առնի, և բոլորովին չգիտեր, թե որքան կարող է մեծանալ հաճույքը³⁴ (լատ.):

** Մեր բախտը կախված է մեր բարքերից³⁵ (լատ.):

ՇԵՆՂՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այն միջոցը, որով մեր օրենքները ձգտում են սահմանափակել ուտելիքի և հագուստի խելահեղ ու զուր ծախսերը, իմ կարծիքով, տանում է զեպի միանգամայն հակառակ նպատակ: Ավելի ճիշտ կլիներ մարդկանց արհամարհանք ներշնչել ոսկու և մետաքսի, որպես փուչ ու անօգտակար բաների նկատմամբ: Սակայն մենք դրա փոխարեն մեծացնում ենք նրանց արժեքն ու դրավչությունը, իսկ դա նրանց նկատմամբ զրգվանք հարուցելու ամենաանհեթեթ միջոցն է: Քանզի հայտարարել, թե միայն թագավորական արյուն ունեցող անձինք կարող են վահանաձուկ ուտել կամ թավիշ ու ոսկե բավթա կրել, և արգելել դա հասարակ մարդկանց, մի՞թե չի նշանակում բարձրացնել այդ բաների արժեքը և յուրարանչուրի մոտ դրանցից օգտվելու ցանկություն ստաշացնել: Թող արքաները համարձակորեն հրաժարվեն մեծության այդ նշաններից՝ նրանք բավարար չափով ուրիշ մեծություններ ունեն, իսկ նման ավելորդությունները ներելի են ում ուզեք, միայն թե ոչ թագավորներին: Օրինակ վերցնելով ուրիշ ժողովուրդներից, մենք կարող ենք սովորել անհամեմատ ավելի լավ միջոցով արտաքինից տարբերել մարդկանց ըստ սոստիճանի (ինչը, իմ կարծիքով, պետության մեջ իսկապես անհրաժեշտ է), շարմատավորելով բարբերի այգախոսի բացահայտ փշացածություն ու փափկասունություն: Զարմանալի է, թե որքան հեշտությամբ ու արագ է անդրադառնում սովորության իշխանությունն այդ, ըստ էության, անարժեք բաների վրա: Մի տարի էլ չի անցել այն ժամանակվանից, երբ մենք, հետևելով արքունիքի օրինակին, սկսեցինք Հենրի II թագավորի մահվան առթիվ մահուդ հագնել ի նշան սգո, իսկ մետաքսն այնպես կորցրեց իր համընդհանուր համարումը, որ, որևէ մեկին մետաքսե հագուստով տեսնելիս, դուք իսկույն կուահում էիք, որ նա ոչ թե ազնվական է, այլ քաղաքի բնակիչ: Մետաքսե գործվածքները բամբին ընկան բժիշկներին ու վիրաբույժներին: Ու թեև բոլորը հաղնված էին քիչ թե շատ միանման, մնում էին մարդկանց դիրքի բավական թվով արտաքին տարբերանշաններ:

Որքա՞ն սրագ են մեր զորքերում մուտք գործում թավշակաշվե և բաթանե ճարպոտած կուրակաները, իսկ մաքուր ու ճոխ հագուստը հարույցում է նախատինք ու արհամարհանք:

Թող արքաները վերջ տան այդ վատնողությունը, և ամեն ինչ կար-

վի մեկ ամսում, առանց որոշումների ու հրամանագրերի, մենք անմիջապես կհետևենք նրանց:

Ընդհակառակը, օրենքը պետք է հայտարարեր, թե կարմիր գույն ու ոսկերչական զարդեղենն արգելված են բոլոր մարդկանց, բացի կատակերգուներից ու կուրտիզանուհիներից: Այդպիսի օրենքներով Զալեկոսն² ուղղեց լոկրիացիների այլասերված բարքերը: Նրա հրամանագրերն այսպիսին էին. «Ազատ կնոջը, եթե նա հարբած չէ, արգելվում դուրս գալ ավելի քան մեկ աղախնու ուղեկցությամբ: Արգելվում է նա դիշերները դուրս գալ քաղաքից, կրել ոսկե թանկարժեք իրեր և նախշա կար զգեստներ, եթե նա հասարակաց կին չէ և անսուակ չէ: Ոչ մի տղամարդու, բացի անառակներից, չի թույլատրվում կրել ոսկե մատանին և բարակ, ինչպես, օրինակ, Միլետ քաղաքում գործված բրդե հագուստ: Ծնորհիվ այդ ամոթալի բացառությունների նա քաղաքացիներին հմտորեն հետ սլահեց ավելորդություններից ու կործանարար փափկակեցությունից:

Դա շատ խելամիտ միջոց է՝ մարդկանց կոշել պարտքի կատարման ու հնազանդության, գայթակղելով հարգանքով ու սնամիտ ձգտումները բավարարմամբ: Մեր արքաներն ամենազոր են այդպիսի արտաքին բարեփոխումների ասպարեզում: *Quidquid principes faciunt, praecipere videntur**.

Ամբողջ Ֆրանսիան կանոն է համարում այն, ինչը կանոն է արձույնի բում: Թեզ նրանք հրաժարվեն այն անձոնի տաբատներից, որոնք ցույց են դնում մեր մարմնի սովորաբար ծածկվող մասերը, հաստ առ տառով բաճկոններից, որոնք մեզ տալիս են այնպիսի տեսք, ինչպիսի մենք իրականում չունենք, և դենք կրելու համար շատ անհարմար են երկար, կանացի խոպոպներից, մեր բարեկամներին արվող առարկաները, կամ ողջույնի շարժում անելիս մեր մատները համբուրելու սովորությունից (հնում այս կարգն ընդունված էր միայն արքայազների նկատմամբ), պահանջից, թե այն վայրերում, ուր անհրաժեշտ է իր արժանավայել պահել, աղնվակներ կարող է լինել առանց կողքից կախված սուսերի, թափթփված, չկոճկած բաճկոնով, ասես հենց նոր է դուրս եկել զուգարանից, այն բանից, որ, հակառակ մեր հայրերի սովորույթի և մեր թագավորության ազնվականների առանձնահատուկ ազատությունների, մենք պիտի հանենք գլխարկներս, անգամ եթե շատ հեռու են

² Թագավորներն ինչ էլ անեն, թվում է, թե նրանք այդ են հրամայում նաև բոլոր մյուսներին³ (լատ.):

...նոր... թագավորից, ուր էլ որ նա լինի, պիտի հանենք նույնիսկ ոչ
...այն նրա ներկայութեամբ, այլև հարյուրավոր ուրիշների, քանզի հիմա
...մտ շատ են այնպիսիները, որոնք թագավոր են մեկ երրորդով կամ
...նույնիսկ մեկ քառորդով: Այդպես են նաև նույնանման մյուս վնասակար
...դրամուծութիւնները. սրանք անմիջապես կկորցնեն իրենց հմայքն
...կանհետանային: Այս ամենը մակերեսային մոլորութիւններ են, սա-
...կայն ոչ մի լավ բան չեն գուշակում, հո քաջ հայտնի է, որ երբ սկսում
...նա ճաքճքել ներկն ու սվաղը, փշանում է նաև պատի հիմքը:

Պլատոնն իր «Օրենքներում» գտնում է⁴, թե պետութեան համար
...կա ավելի կործանարար ժանտախտ, քան երիտասարդներին շարունակ
...մի ձևից մյուսին անցնելու (և՛ հագուկապի մեջ, և՛ շարժումում, և՛
...դարերում, և՛ մարմնամարզական վարժութիւններում, և՛ երգերում),
...ծնկայուն կարծիքներ ունենալու, ամեն տեսակ նորույթների ձգտելու և
...դրանց հնարողներին մեծարելու ազատութիւն տրամադրելը, քանզի այդ-
...պիսով տեղի է ունենում բարքերի փշացում, և բոլոր հին օրենքներն
...սկսում են արհամարհվել ու մոռացվել: Պետք է զգուշանալ այն ամենի
...փոփոխութիւններից, ինչը բացահայտորեն վատը չէ. դա վերաբերում է
...ն տարվա եղանակներին, և՛ քամիներին, և՛ սնունդին, և՛ տրամադրու-
...թիւններին: Եվ իսկական հարգանքի են արժանի լոկ այն օրենքները,
...որոնց համար աստվածն ապահովել է մի այնպիսի երկարատև գոյու-
...թիւն, որ ոչ ոք չգիտե, թե դրանք երբ են գոյացել և արդյոք դրանցից
...տաջ եղե՞լ են ուրիշները:

Գլուխ XLIV

ՔՆԻ ՄԱՍԻՆ

Բանականութիւնը մեզ հրամայում է շարունակ բնթանալ միևնույն
...նախարհով, բայց ոչ միշտ միատեսակ արագութեամբ, ու թեև իմաս-
...տուն մարդը չպետք է սեփական կրքերին թույլ տա իրեն շեղելու ար-
...դար ճանապարհից, նա կարող է, առանց պարտքն անտեսելու, դրանց
...թույլ տալ մերթ արագացնել, մերթ գանդաղեցնել քայլքը, և նրան վայել
...լ կոթուղի պես անշարժ ու անտարբեր կանգնել տեղում: Նույնիսկ ամե-
...նատաքինի մարդու զարկերակն, իմ կարծիքով, ավելի արագ է բա-
...րակում գրոհի գնալիս, քան ճաշասեղանին մոտենալիս, նույնիսկ ան-
...բրամեկտ է, որ նա երբեմն ջղայնանա և հուզվի: Այդ առթիվ որպէս
...բացատրիկ երևույթ ես նկատել եմ, որ երբեմն մեծ մարդիկ իրենց ամե-

նազանս ձեռնարկումներում և կարևորագույն գործերում պահպանում են այնպիսի սառնասրտութուն, որ նույնիսկ քունը չեն կրճատում:

Այն օրը, երբ նշանակված էր Գարեհի դեմ վճռական ճակատամարտը, Ալեքսանդր Մեծը քնել էր այնքան խոր և երկար, որ Պարմենիոնն ստիպված եղավ մտնել նրա ննջարանը և, արթնացնելու համար մոտենալով մահճին, երկու թե երեք անգամ ձայն տալ թագավորին, բանդի արդեն ճակատամարտն սկսելու ժամանակն էր:

Օտոն՝ կայսրը, որը մտադրվել էր ինքնասպան լինել, այդ նույն գիշերը, երբ որոշել էր մեռնել, կարգի բերելով իր տնային գործերը փողը բաժանելով ծառաներին, սրելով սրաշեղբը և լուր սպասելով, թե իր բոլոր կողմնակիցները հասցրել են թաքնվել անվտանգ տեղերում այնպիսի խոր քուն մտալ, որ մերձավոր ծառաները լսում էին նրա խոսքերը:

Այդ կայսեր մահը նույնիսկ մանրուքներում շատ ընդհանուր բանունի մեծն Կատոնի մահվան հետ. բանդի Կատոնը, որ մտադիր էր ինքնասպան լինել և տեղեկություն էր սպասում, թե սենատորները, որոնց ուզում էր փրկել, մեկնել են Ուտիկայի նավահանգստից, այնպես խոր քնեց, որ հարևան սենյակում լսվում էր նրա շնչառությունը: Եվ երբ նավահանգիստ ուղարկված մարդն արթնացրեց նրան, որ հայտնի, թե ուժեղ քամու պատճառով սենատորները չեն կարող դուրս գալ բաց ծով նա նավահանգիստ ուղարկեց ուրիշ մեկին, իսկ ինքը, նորից անկողնի մտնելով, դարձյալ նիրհեց, մինչև որ բանքերը տեղեկացրեց սենատորների մեկնման մասին:

Մենք իրավունք ունենք նույն Կատոնին համեմատել Ալեքսանդրի հետ, երբ Կատիլինայի խռովության օրերին Կատոնի գլխին մեծ ահարկու վտանգ էր կախվել այն տրիբուն Մետելլոսի բարձրացրած խռովության հետևանքով, որն ուզում էր հրապարակել Պոմպեոսի նրա գորքերի վերադառնալու մասին որոշումը: Քանի որ միայն Կատոն էր առարկում դրա դեմ, ապա բանը հասավ այնտեղ, որ սենատում ինքուր Մետելլոսն անցան խիստ խոսքերի և կոպիտ սպառնալիքների: Սակայն վերջնական որոշումը պիտի ընդունվեր միայն հաջորդ օրը հրապարակում, ուր Մետելլոսը, որն առանց այդ էլ ուժեղ էր ժողովրդի այն ժամանակ իր հետ միասին հօգուտ Պոմպեոսի դավադրություն կազմած Կեսարի օժանդակությամբ, պետք է ներկայանար մեծ բանակության մեջ օտարերկրացի ստրուկների և կատաղի սուսերամարտիկներ ուղեկցությամբ, իսկ Կատոնը՝ միայն իր աննկուն կամքով զինված Ուտի, նրա մերձավորները, ընտանիքի անդամները և բազմաթիվ պատվարժան մարդիկ սաստիկ տագնապի մեջ էին, նրանց թվում կային:

այնպիսիները, որոնք նրան սպառնացող վտանգի պատճառով, դիշերն ունցկացրել էին նրա հետ, շկամենալով ո՛չ քնել, ո՛չ խմել, ո՛չ ուտել: Ենույնիսկ կինն ու քույրերը, նրա տանը նստած, միայն լալիս էին ու տազնապում: Իսկ ինքն, ընդհանգառակը, բուլորին հանգստացնում էր և, սովորականի պես ընթրելով, զնաց քնելու և խոր քնեց մինչև առավոտ, երբ տրիբունատի իր ընկերներից մեկն արթնացրեց նրան, որ զնա առաջիկա գոտեմալք¹: Այն, ինչ մենք գիտենք այդ մարդու մեծության ու արիություն մասին նրա հետագա կյանքից, թույլ է տալիս վրստահորեն ասելու, թե այդ ամենը բխում էր նրա հոգուց, որն այնքան բարձր էր կանգնած նման եղելություններից, որ նա վայել շէր համարում դրանց մասին մտածել այլ կերպ, քան ինչ- որ ամենասովորական բաների:

Միցիլիայի ափերի մոտ տեղի ունեցած ծովամարտում, ուր Օգոստոսը հաղթանակ տարավ Մեքստոս Պոմպեոսի² նկատմամբ, նա, այդ նույն պահին, երբ հարկավոր էր կռիվ զնալ, այնպիսի խոր քուն էր մտել, որ բարեկամները ստիպված եղան նրան արթնացնել, որ մարտն սկսելու տղզանշան տա, դա Մարկոս Անտոնիոսին թույլ սովեց հետագայում հանդիմանել նրան, թե իբր քաջություն չի ունեցել սեփական աչքով դիտելու դորքերի դասավորությունը և չի համարձակվել ներկայանալ գինվորներին, մինչև Ագրիպոսի գալը նրա մոտ և թշնամու նկատմամբ տարած հաղթանակի մասին հայտնելը: Ինչ վերաբերում է Մարիոս Կրտսերին³, ապա նրան ավելի վատ բան պատահեց, քանդի Սուլլայի հետ իր վերջին ճակատամարտի օրը, դասավորելով դորքերն ու մարտն սկսելու հրաման տալով, նա պառկեց ծառի ստվերում հանգստանալու և այնպես խոր քնեց, որ դժվարությունը արթնացավ, երբ նրա պարտված դորքերը դիմել էին փախուստի, և նույնիսկ մարտը շտեսավ. ասում են, դա տեղի ունեցավ այն պատճառով, որ նա ուժասպառ էր եղել աշխատանքից ու հարկադրական անքնությունից, և ի վերջո, բնությունն արել էր իր գործը: Այստեղ պետք է բժիշկները որոշեն, թե արդյոք քունն այդքան անհրաժեշտ է, որ նրանից կարող է կախված լինել մեր կյանքը. բանդի մենք գիտենք, օրինակ, որ Մակեդոնիայի արքա Պերսեոսին⁴ հոռմեական դերություն մեջ հասցրին մահվան, շթողնելով քնել, սակայն, Պլինիոսն օրինակ է բերում ուրիշներին, որոնք երկար ապրել են ստանց քնի:

Հերոդոտոսը հիշատակում է այնպիսի ցեղեր, որոնք տարվա կեսը քնում են, կեսը՝ արթուն մնում⁵:

Իսկ նրանք, ովքեր նկարագրել են իմաստուն էպիմենիդեսի կյանքը, պնդում են, թե նա, առանց արթնանալու քնել է հիսունյոթ տարի⁶:

ԴՐՅՈՅԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Դրյոյի՝ ճակատամարտում եղել են բազմաթիվ նշանավոր դեպքեր: Սակայն նրանք, ում սրտովն է եղել պարոն դը Գիզի² փառքը, համառորեն, շեշտում են, թե նրան ոչ մի ներում չկա իրեն ենթակա զորամասերի ուշացման և այն ժամանակ ցուցաբերած դանդաղկոտություն համար, երբ հրետանու օգնությամբ ճեղքվել էր պարոն կոնետաբլի՝ բանակի հրամանատարի զորաճակատը. նրանք պնդում են նաև, թե ավելի լավ կլիներ հույս դնել պատահականության վրա և հակառակորդի խփել թևից, քան այդպիսի ծանր կորուստներ կրել, սպասելով բարենպաստ պահի, թե նա երբ հարվածի տակ կդնի իր թիկունքը: Սակայն անկախ այն բանից, թե ինչ է ցույց տվել ճակատամարտի ելքը, յուրաքանչյուր անաշառ դատող մարդ, իմ կարծիքով, կխոստովանի, որ ոչ միայն զորապետի, այլև ամեն մի զինվորի նպատակն ու ձգտումը պետք է լինի վերջնական հաղթանակը և ցանկացած մասնակի ու պատահական հաջողություն, ինչպիսի օգուտ էլ այն ներկայացնի, չի կարող շեղել նրանց այդ մտադրությունից: Մաքանիդեսի³ հետ իր ընդհարումներից մեկի ժամանակ Փիլոպոմենը⁴ հարձակման համար առաուղարկեց աղեղներով ու տեգերով զինված մի ուժեղ ջոկատ, թշնամիները հետ մղեցին այն, տարվեցին սրբնթաց հետապնդմամբ և սլացալ այդ զորաճակատի ամբողջ երկայնքով, ուր գտնվում էր Փիլոպեմենը: Թեև նրա զինվորները սաստիկ հուզված էին, նա որոշեց տեղից չշարժվել և իր մարդկանց օգնելու համար հակառակորդի վրա չհարձակվել այդպես նա թույլ տվեց հեռացնել և իր աչքի առաջ ոչնչացնել նրանց իսկ երբ տեսավ, որ հեծելազորն առանց պաշտպանության է թողել հետևակը, գրոհն ուղղելով վերջինիս դեմ, հարձակվեց թշնամու վրա, և քանի որ նրան հաջողվեց թշնամիներին բռնացնել այն պահին, երբ նրանք, համոզված էին թե մարտը շահել են և խախտել էին իրենց շարքերը, Փիլոպեմենը հեշտությամբ հաղթեց նրանց, թեև նրանք լակեղեմոնացիներ էին, և ապա նետվեց Մաքանիդեսին հետապնդելու: Այդպես ամեն ինչով նման է պարոն դը Գիզի կովին:

Ազեսիլայոսի և բեոտացիների միջև տեղի ունեցած դաժան ճակատամարտում, որը նրա մասնակից Քսենոփոնը համարում է երբևէ ի տեսածներից ամենաժանրը, Ազեսիլայոսը քամահրեց ռազմական բախտի ընձեռած հնարավորությունը՝ բեոտական զորքերին թողնել, որ անցնեն, և հարվածել նրանց թիկունքից, ենթադրելով, թե այդպես անել

կրօնականները ստանալով ավելի շատ հմտութիւն, քան քաջութիւն, իր հե-
րաստութիւնը ցուցաբերելու համար նա գերադասեց խիզախութիւնն ապ-
փայտեցիչ բռնկումով գրոհել ճակատից, սակայն, ջախջախված ու վիրա-
վար, ստիպված եղավ նահանջել և ընդունել այն որոշումը, որից սկզբ-
բում հրաժարվել էր՝ հետ քաշվել և բեռտացիների այդ ամբողջ հոսքը
բայ թողնել իր զորամասերի միջով, այնուհետև, նրանց անցնելուց հե-
տա, համոզվելով, որ նրանք շարժվում են անկանոն, ասես իրենց ոչինչ
չի սպառնում, նա հրամայեց սկսել հետապնդումը և հարձակվել թևե-
րից: Բայց և այնպես նրան չհաջողվեց խառնաշփոթ փախուստի մատ-
նել բեռտացիներին, նրանք նահանջում էին դանդաղորեն, շարունակ
նայհոյելով, այնքան ժամանակ, մինչև որ հասան ապահով տեղ:

Գլուխ XI VI

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որքան էլ խոտատեսակները տարբեր լինեն, բոլորը կարելի է ան-
վանել մեկ բառով. «սալաթ»: Այդպես էլ այստեղ, անունների մասին
դատողութիւնների ձևով, ես կատեղծեմ ամեն տեսակ բաների մի խառ-
նուրդ:

Յուրաքանչյուր ժողովրդի մոտ կան որոշ անուններ, որոնք, չգի-
տեմ ինչու, հարգի չեն. մեզ մոտ դրանք հետևյալներն են՝ Ժան, Գիլիոմ,
Բենուա:

Այնուհետև, թագավորների տոհմաբանութիւնն մեջ կան անուններ,
որոնք շարաբաստիկ կերպով հանդիպում են միշտ. այդպիսիք են Պաղո-
մեսաները Եգիպտոսում, Հենրիներն Անգլիայում, Կարլոսները Ֆրան-
սիայում, Բալդուինները Ֆլանդրիայում, իսկ հնում մեր Արվիտանիայում՝
Գիլիոմները, որանդից նույնիսկ, ինչպես պնդում են, առաջացել է Գիեն
անունը. այսպիսի ստուգաբանութիւնը պետք է որ համարվեր շատ շին-
ձու, եթե անգամ Պլատոնի մոտ չհանդիպեին դրա նույնքան կուլիտ-
արինականներ¹: Որպես օրինակ կարելի է բերել նաև աննշան, բայց այնու-
ամենայնիվ ընդգծելու արժանի և ականատեսների նկարագրած մի դեղք-
նորմանդիայի դուքս Հենրին՝ Անգլիայի թագավոր Հենրի II որդին, մի
անգամ Ֆրանսիայում կազմակերպել էր խնջույք, որին ներկա էին այն-
բան մեծատոհմիկ ազնվականներ, որ զվարճութիւն համար նրանք կող-
մեցին ջոկատներ ըստ անունների. առաջին՝ Գիլիոմների ջոկատում սե-
զանի շուրջ կար այդ անունը կրող հարյուր տասն ասպետ, չհաշված
նասարակ ազնվականներն ու ծառաները:

Հյուրերին ըստ անունների սեղան նստեցնելը նույնքան զվարճալի հնարանք էր, որքան խնջույքի ժամանակ անվանումների առաջին տառերով ճաշատեսակներ մատուցելու Գետա կայսեր² սահմանած կարգը: Կայսրուհի, օրինակ, ծառաները մատուցում էին «խ» տառով սկսվող ճաշատեսակներ. խոյի միս, խոզի միս, խավիար և այլն:

Այնուհետև, կա մի արտահայտություն, թե լավ է, երբ անունդ բարի է, այսինքն՝ վայելում ես փառք և վստահություն: Բայց չէ որ, բաց դրանից, ընդունված է ունենալ նաև գեղեցիկ, հեշտ արտասանվող ու հիշվող անուն: Քանզի այդ դեպքում արքաներն ու մեծամեծերը ավելի հեշտությամբ կհիշեն մեզ և ուշ կմոռանան: Մենք ինքներս էլ ավելի հաճախ կարգադրություններ ենք անում ու հանձնարարություններ ենք տալիս մեր այն ծառաներին, որոնց անուններն ամենից հեշտ են դուրս թուշում մեր բերանից:

Ես ինքս տեսել եմ, թե ինչպես Հենրի II թագավորը չէր կարողանում ճիշտ արտասանել ոմն գասկոնացի ազնվականի ազգանունը, նաև նաև որոշեց պալատական մի օրիորդի հորջորջել նրա ծննդավայրի անունով, քանզի նրա տոհմական կալվածքի անվանումը թվում էր չափազանց դժվար արտասանվող:

Սովորաբար նույնպես երեխայի համար գեղեցիկ անուն ընտրելը համարում էր հոր անմիջական հոգսը:

Այնուհետև, Պուատիեում Աստվածամոր եկեղեցու կառուցման մասին պատմում են, թե առաջ այդ տեղում ապրող ոմն անառակ պատանի մի անդամ մի աղջիկ բերելով իր մոտ, հարցրեց նրա անունը, իսկ երբ իմացավ, որ Մարիամ է, հանկարծ այնպիսի կրոնական վախ ապրեց և մեր փրկչի մոր՝ Կույսի սուրբ անվան նկատմամբ այնպիսի հարգանքով լցվեց, որ ոչ միայն անմիջապես վռնդեց թեթևաբարո աղջկան, այլ ամբողջ կյանքում զղջում էր իր մեղքի համար: Եվ, ի նշանավորումն այդ հրաշքի, այն տեղում, ուր պատանու տունն էր, կառուցեցին Աստվածամոր մի մատուռ, իսկ ապա նաև այժմյան եկեղեցին: Այստեղ բարեպաշտ ուղղումը տեղի ունեցավ ուղղակի հոգու խորքը թափանցող բառի միջոցով: Ահա նույնանման մեկ այլ օրինակ, երբ տարփանքի վրա ազդել են երաժշտական հնչյունները: Մի անգամ Պյութագորասը, գտնելով երիտասարդ տղաների միջավայրում, զգաց, որ նրանք, խնջույքի գինսվացած, պայմանավորվում են գնալ և բռնություն գործել մի տամեջ, ուր ծաղկում էր առաքինությունը: Այդժամ Պյութագորասը ֆլեյտա հար կնոջը հրամայեց փոխել տոնայնությունը և համաչափ, դասակարգաշնաշեշտ ու թմ ունեցող երաժշտության ձայներով հետզհետե հանդարտեցրեց ու մարեց նրանց կիրքը:

Այնուհետև, արդյոք այն ռեֆորմների մասին, որոնց ժամանակակից-ները մենք ենք, սերունդները չե՞ն ասի, թե նրանք իրենց խորաթափանցությունն ու ճշմարտացիությունը ցույց են տվել ոչ միայն նրանով, որ պայքարել են արատների և մոլորությունների դեմ, ամբողջ աշխարհը լցնելով բարեպաշտություն, հնազանդություն, ապաշխարություն, խաղաղություն ու ամեն տեսակ առաքինություններով, այլև հասել են այնտեղ, որ ըմբոստացել են մկրտվելիս մեզ տրվող Շառլ, Լուի, Ֆրանսուա հին անունների դեմ, աշխարհը բնակեցնելու համար Մաթուսաղաներով, Եզեկիելներով, Մալաքիոսներով, որոնցից ավելի շատ է հավատքի հոտ փչում: Ոմն ազնվական, իմ հարևանը, որը հին սովորույթները դերադասում էր նորերից, չէր մոռանում վկայակոչել անցյալ ժամանակների գոռոզ անունները՝ դոն Գրյումեդան, Կեդրագան, Ադեզիլան՝ պնդելով, թե նույնիսկ հնչողությունից զգացվում է, որ այն մարդկանց խոյանքն այլ էր, քան ինչ-որ Պիեռների, Գիլիոմներին ու Միշելներինը:

Այնուհետև, ես շատ երախտապարտ եմ ժակ Ամիոյին, որ մի անգամ ֆրանսերեն քարոզ կարդալիս, նա լատինական բոլոր անունները թողեց անձեռնմխելի, և շաղավաղեց դրանք ու շփոփոխեց այնպես, որ հնչելին ֆրանսիական ձևով: Սկզբում դա փոքր-ինչ ականջ էր ծակում, բայց հետո, շնորհիվ Պլուտարքոսի «Կենսագրությունների» հաջող թարգմանության, մտավ համընդհանուր գործածության մեջ և դադարեց տարօրինակ թվալ մեզ: Ես հաճախ ցանկություն եմ արտահայտել, որ լատիներենով պատմական աշխատություններ գրողները թողնեն մեր անուններն այնպիսին, ինչպիսին մենք գիտենք, քանզի երբ Վոդեմոնը դառնում է Վալլեմոնտանուս³ և առհասարակ ամեն ինչ այլափոխվում է հունական ու լատինական ձևով, մենք արդեն դադարում ենք ինչ-որ բանից գլուխ հանել և հասկանալ ինչ-որ բան:

Ի վերջո ասեմ, որ ամեն մեկին իր կալվածքի կամ ավատի անունով կոչելու սովորությունը մեզ մոտ Ֆրանսիայում վատթարագույն հետևանքների հանգեցնող վատ սովորություն է. աշխարհում ոչ մի բանն այդքան չի նպաստում ծագումնաբանական շփոթին ու թյուրիմացություններին: Ազնվական տոհմի կրտսեր զարմը, տեր դառնալով հողին, իսկ դրա հետ մեկտեղ նաև այն անվանը, որով ձեռք է բերում համրավ ու հարգանք, չի կարող առանց սեփական պատիվը վարկաբեկելու հրաժարվել դրանից, նրա մասվանից տասը տարի հետո հողն անցնում է բոլորովին օտար մարդու, որը վարվում է ճիշտ նույն կերպ. կարող եք ինքներդ ենթադրել, թե արդյոք դյուրին կլինի գլուխ հանել նրանց

տոհմաբանութիւննից: Օրինակների համար հետո գնալու հարկ չկա՝ հիշենք մեր թագավորական ընտանիքը, որտեղ աչնքան ճշուղ կա, որքան տոհմական մականուն, իսկ տոհմածառի արմատներն անհայտութեան մեջ են:

Եվ այդ բոլոր փոփոխութիւնները տեղի են ունենում այնքան ազատորեն, որ մեր օրերում եւ շեմ տեսել ճակատագրի քմահաճույքով արտակարգ բարձր գիրքի հասած ոչ մի մարդ, որն իսկույն ձեռք չբերէր իր հորն անհայտ և որևէ նշանավոր տոհմից վերցված նոր կոչումներ, և հեշտ է հասկանալ, որ հատկապէս ոչ ազնվական տոհմերը հաճույքով են դիմում նման կեղծիքի: Ինչքան ազնվականներ կան մեզ մոտ Ֆրանսիայում, որոնք թագավորական տոհմին պատկանելու իրավունք են հայտնում: Կարծում եմ՝ ավելի շատ, քան դրան շահավակեողները: Բարեկամներիցս մեկն ինձ մի այսպիսի զվարճալի դեպք է պատմել: Մի անգամ հավաքվում են մի քանի ազնվական և սկսում քննարկել երկու սենյորների միջև ծագած ինչ-որ վեճ: Այդ սենյորներից մեկը, շնորհիվ իր տիտղոսների և ամուսնական կապերի, որոշ առաջնութիւններ ունէր հասարակ ազնվականների նկատմամբ: Նրա այդ առաջնութիւնը պատճառ էր, որ ոմանք փորձեն հավասարվել նրա հետ. յուրաքանչյուրը իրեն վերագրում էր այս կամ այն ծագումը, վկայակոչելով կամ իր տոհմական անվան նմանութիւնն ինչ-որ այլ անվան, կամ գերբերի նմանութիւնը, կամ իր տանը պահվող մի հին նամակ, և ամենախղճուկ ազնվականը դառնում էր անդրժովյան ինչ-որ թագավորի հետնորդ: Քանի որ այդ վիճաբանութիւնը տեղի էր ունենում ճաշելիս, նա, ով ինձ պատմել է գրա մասին, փոխանակ զրոյեցնելու իր տեղը, խոր գլուխ տալով հետ-հետ է գնացել, աղաչելով հավաքվածներին ներել իրեն, որ այդքան ժամանակ հանդգնել է լինել նրանց միջազայրում, իբրև հավասար, իսկ այժմ, իմանալով նրանց բարձր ծագման մասին, կմեծարի ըստ աստիճանների, և իրեն վայել չէ նստել այդքան արքայազների ներկայութեամբ: Այդ խեղկատակային արարքից հետո նա խիտ հանդիմանել է բոլորին. «Ի սեր աստժո, զոհացեք նրանով, ինչով զոհացել են մեր հայրերը, և նրանով, ինչ իրականում ներկայացնում ենք մեզանից, մենք առանց այդ էլ մեծ բան ենք ներկայացնում՝ միայն թե կարողանանք բարձր պահել մեր անվան պատիվը, եկեք շնորհարկներ մեր նախնայաց բախտից ու ճակատագրերից և դեն նետենք այդ հիմար հետքերը, որ միայն վնասում են նրանց, ովքեր անամոթաբար վկայակոչում են դրանք»:

Գերբերը տոհմական մականուններից հուսալի չեն: Օրինակ, իմը

ուսկն երեքնալկներով ծածկված լազուր դաշա է, և առյուծի ոսկե թաթը պահում է կարմիր շերտադիծ ունեցող վահանը: Ո՞ր առանձնահատուկ իրավունքով պետք է այդ պատկերները մնան միայն իմ ընտանիքում: Փեսաներից մեկն այն կտանի ուրիշ ընտանիք, փողով հող գնած մի անազգի մարդ գրանցով նոր գերը կստեղծի իր համար: Ուրիշ ոչ մի բանում այսքան փոփոխություն ու շփոթ չկա:

Սակայն այս դատողությունն ինձ ստիպում է անցնել մեկ այլ հարցի: Եկեք լավ մտածենք և, ի սեր ասածո, ուշադիր զննենք, թե ինչի վրա են հիմնված փառքն ու պատիվը, հանուն որոնց մենք պատրաստ ենք սող աշխարհք շուռ տալ, ինչի վրա է հենված համբավը, որին այդպիսի տանջանքով ձգտում ենք: Վերջ ի վերջո, մի ինչ-որ Պիեռ կամ Գիլիոմ է այդ հատրի կրողը, պաշտպանը, և այն ամենից մոտ է նրա՛ն: Օ՛հ խիզախությամբ լի մարդկային հույս: Ինչ-որ պահի ծնունդ առնելով մի մահկանացուի մեջ, այն պատրաստ է տիրելու անընդգրկելիի՛ն, անվերջի՛ն, հավերժի՛ն: Բնությունը մեզ զվարճալի՛ խաղալիք է պարզեկ: Իսկ ի՞նչ են այդ Պիեռը կամ Գիլիոմը: Ընդամենը դատարկ հնչյուն, գրչի երևք կամ շորս շարժում, որի ժամանակ (նկատեցե՛ք սա) հեշտությունը կարելի է սխալվել: Արդարև, ես պատրաստ եմ հարցնել. վերջոպես ո՞ւմն է այդքան հազթանակների պատիվը՝ Գեկենի՞նը, Գլեկենի՞նը, թե՞ Գեակենի՞նը⁴: Այստեղ նման հարցն ավելի տեղին է, քան Լուկիանոսի մոտ, ուր Տ-ն վիճում է Դ-ի հետ, քանզի

non levia aut ludicra petuntur
Praemia*.

Սա կարևոր է. խոսքն այն մասին է, թե այս տառերից որին շնորհենք այդքան պաշարումների, ճակատամարտերի, վերքերի, դերություն մեջ անցկացրած օրերի և ֆրանսիական թագին նրա այդ հռչակավոր կոնեստաբլի մատուցած ծառայությունների փառքը: Նիկոլա Դենիգոն⁶ նեղություն էր կրել պահպանելու իր անունը կազմող աստերը միայն, բայց բոլորովին փոխել էր դրանց հաջորդականությունը, որպեսզի այդ վերադասավորմամբ իր համար ստեղծեր նոր անուն՝ կոմս դ'Ալսինուա, որը և պսակեց փառքով իր բանաստեղծական ու նկարչական արվեստով: Խե՛ղ պատմագիր Մվետոնիոսին թանկ էր իր անվան լոկ նշանակությունը, և նա իր գրական փառքի ժառանգորդ դարձրեց Տրանկվիլլոսին, մերժելով Լենիս⁷ մականունը կրող իր հորը: Ո՞վ կհավատար, թե Բայարդ դորավարին պատկանում է լոկ այն պատիվը, որ նա փոխառել է Պիեռ

* ... այստեղ խոսքն էժանազին ու դատարկ պարզեկ մասին շե՛ (լատ.):

Տեոայլի⁸ գործերից: Եվ թե Անտուան էսկալենը թույլ է տվել, որ իր աչքի առաջ կապիտան Պուլենն ու բարոն դը Լա Գարդը⁹ գողանան այդքան ծովային ճանապարհորդությունների և ծովում ու ցամաքում կատարած դժվարին գործերի իր փառքը:

Բացի դրանից, գրչի այդ շարժումները նույնն են հազարավոր մարդկանց համար: Որքա՞ն են միանման անուններ ու մականուններ կրողներն այս կամ այն ժողովրդի մոտ: Իսկ որքա՞ն են նրանք տարրեր երկրների տարբեր ժողովուրդների մեջ և դարերի ընթացքում: Պատմությունը դիտե երեք Սոկրատես, հինգ Պլատոն, ութ Արիստոտել, յոթ Քսենոփոն, քսան Դեմետրիոս, քսան Թեոգորոս: Իսկ փորձեցեք գուշակել, թե նրանցից քանի՞ քանիսը շեն պահպանվել պատմության հիշողության մեջ: Ո՞վ իմ ձիապանին կխանգարի կոչվել Մեծ Պոմպեոս: Սակայն, վերջ ի վերջո, ի՞նչ եղանակներ, ի՞նչ միջոցներ կան այդ հնչյունների հուշակավոր դուզակցումն ու տառերի գծագրերը կապելու իմ հանգուցյալ ձիապանի և Եգիպտոսում գլխատված այն մյուս մարդու հետ, որ նրանք կարողանան հպարտանալ դրանցով:

Id cimeter et manes credis curare sepultos?*

Ի՞նչ գիտեն մարդկանց կողմից միատեսակ բարձր գնահատված երկու այրերը՝ էպամինոնդասն իրեն փառաբանող այն տողի մասին, որը դարեր շարունակ անցնում է բերնեբերան.

Consiliis nostris laus est attonsa Laconum?*

և Սկիպիոն Աֆրիկացին իրեն վերաբերող մեկ այլ տողի մասին.

A sole exoriente supra Maeotis paludes
Nemo est qui factis me aequiparare queat?***

Նրանցից հետո ապրող մարդկանց շույում է նման գովաբանությունների քաղցրությունը, շարժելով նրանց խանդն ու փառքի տենչը, և անգիտակցաբար, երևակայության խաղով, նրանք իրենց սեփական զգացմունքները վերագրում են մեռածներին, իսկ խաբուսիկ հույսը

* Մի՞թե դու կարծում ես, թե հանգուցյալների աճյունն ու հողին հողում են այդ մասին¹⁰ (լատ.):

** Մեր ջանքերով սպարտացիների փառքը նվազեց¹¹ (լատ.):

*** Արևածագից ի վեր Մեոտական լճի մոտ չկա ոչ մեկը, որ կարողանար սխրագործություններով համեմատվել քնձ հետ¹² (լատ.):

պտիպում է հավատալ, թե նրանք ինքներն ընդունակ են նույնպիսի գործերի: Աստծուն է դա հայտնի: Եվ այնուամենայնիվ,

ad haec se
Romanus, Graiusque, et Barbarus induperator
Erexit, causas discriminis atque laboris.
Inde habuit: tanto maior famae sitis est quam
Virtutis*.

Գլուխ XLVՈՒ

ՄԵՐ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լավ է ասվում հետևյալ տողում.

Ἐπέων δὲ πολὺς νόμος ἔνθα καὶ ἔνθα.

Մինչդեռ խոսքի ասպարեզը անսահման է, բյուրատեսակ¹...: Օրինակ.

Vinse Hannibal, et non seppe usar' poi
Ben la vittoriosa ventura**

Նա, ով բաժանում է այս կարծիքը և պնդում, թե մերոնք սխալ գործեցին Մոնկոնտուրի ճակատամարտում, շարագացնելով իրենց հաջողությունը, կամ նա, ով դատապարտում է Իսպանիայի թագավորին, որ չի օգտագործել Սեն Կանտենի մոտ մեր նկատմամբ տարած իր հաղթանակը³, կարող է ասել, թե այդ սխալներում մեղավոր է հոգին, որն արբենում է իրեն բաժին ընկած հաջողությունից, և քաջությունը, որը, միանգամայն հագենալով առաջին հաղթանակներով, կորցնում է դրանք բազմապատկելու ամենայն ցանկություն և դժվարությամբ մարտում ձեռք բերածը. նա վերցնում է որքան հնարավոր է, ավելին չի կարող, նա արժանի չէ ճակատագրի պարգևին: Քանզի ի՞նչ իմաստ ունի այն, եթե թշնամուն հնարավորություն է տրվել ուշքի գալու: Կարելի՞ է արդյոք հուսալ, որ այն մարդը, որ քաջություն չի ունեցել հետապնդելու

* ... ահա թե ինչն էր ոգեշնչում հույն, հռոմեացի և բարբարոսական զորապետներին, ահա թե ինչը ստիպեց նրանց մարտահրավեր նետել վտանգին և այդրան զրկանքներ կրել, քանզի հիրավի մարդիկ ավելի շատ փառք են տենչում, քան ատարինություն¹³ (լատ.):

** Հաննիբալը հաղթեց, բայց չկարողացավ ինչպես հարկն է օգտվել հաղթանակի պատվներից² (իտ.):

թշնամուն, երբ նա ջախջախված ու շփոթված էր, կհամարձակվի երկրորդ անդամ հարձակվել շարքերը խտացրած, հանգստացած և իր վրդովմունքով ու վրեժի ծարավով կրկին զինված ոսոխի վրա, և մի՞թե նա

Du n fortuna calet, dum conficit omnia terror¹.

այդպիսի կորստից հետո որևէ լավ բանի կհասնի: Չէ որ դա սուսերամարտ չէ, ուր հաղթում է նա, ով վարժասուսերթով ավելի շատ է խոցում մրցակցին: Քանի դեռ թշնամին պարտված չէ, հարկավոր է հասցնել հարված հարվածի հետևից, հաջողությունը լուկ այն ժամանակ է հաղթանակ, երբ վերջ է դնում ուղմական գործողություններին: Կեսուրը, որի բախտը շքերեց Սրիկի մոտ տեղի ունեցած գոտեճարտում, կըլտամբում էր Պոմպեոսի զինվորներին, պնդելով, թե ինքը կործանված կլինեք, եթե նրանց զորապետը կարողանար մինչև վերջ հաղթել իրեն, իսկ երբ եկավ իր հերթը, նա կռիվն այլ կերպ վարեց: Իսկ ինչո՞ւ, ընդհակառակը, շասել, թե սեփական անհաղուրդ նկրտումներին վերջ տալու անկարողությունն ավելորդ շտապողականության ու ազահության գրսևորում է: Թե երկնքի ողորմածությունից հենց տիրոջ սահմանած շափից ավելի օգտվելու ցանկությունն աստծո բարեգթության շարաշահում է: Թե արդեն հաղթանակ տանելուց հետո վտանգի ձգտելը նշանակում է վերստին բախտ փորձել: Թե ուղմական արվեստի ամենախմաստուն կանոններից մեկը հակառակորդին հուսահատության շհասցնելն է: Սուլլան ու Մարիոսը, որոնք Դաշնակցային պատերազմում ջախջախեցին մարսերին⁵ և տեսան, որ մի փրկված ջոկատ մտադիր է վայրի գազանների կատաղությանը նետվել իրենց վրա, շսպասեցին ու առաջինը հարձակվեցին: Եթե պարոն դը Ֆուան⁶, սեփական խանդավառությանը տարված, շափազանց կատաղորեն շհետապնդեր Ռավեննայի մոտ ջախջախված չշնամուն, իր մահով շէր մթազնի հաղթանակը, զուր շէ, որ այդ թարմ օրինակը ծառայություն մատուցեց պարոն դ'Անգրեներին և Սերիզուի⁷ ճակատամարտում նրան հետ պահեց նման սխալից: Վտանգավոր գործ է՝ հարձակվել այն մարդու վրա, որին մնացել է փրկության միայն մեկ միջոց՝ զենքը, բանզի անհրաժեշտությունը դաժան խրատտու է.

gravissimi sunt morsus irritatae necessitatis**.

Vincitur haud gratis iugulo qui provocat hostem***.

* Հաջողության թեժ պահին, երբ թշնամուն սարսափ է պատել⁴ (լատ.):

** Կատաղած անհրաժեշտության խայթոցներն առավել վտանգավոր են⁸ (լատ.):

*** Դժվար է հաղթել նրան, ով կովում է՝ մեռնելու պատրաստ⁹ (լատ.):

Ահա թե ինչու Փարաքսոսը մանտինեացիներին հաղթած լակեդեմոնացիների թագավորին խանգարեց հարձակվել հազար արգիվացիների վրա, որոնք խուսափել էին ջախջախումից, նա թույլ տվեց նրանց հանդիստ նահանջել, որ շղզային անհաջողությունից շղայնացած ու վրդովված այդ մարդկանց քաջությունը: Աքվիտանիայի թագավոր Խլոգոմիրը, հաղթանակ տանելով, սկսեց հետապնդել ջախջախված ու փախուստի դիմած Գունդեմարին՝ Բուրգունդիայի թագավորին, և ստիպեց նրան մարտն ընդունել, բայց սեփական համառությունը Խլոգոմիրից խլից հաղթանակի պտուղները, քանզի նա զոհվեց այդ գոտեմարտում:

Ճիշտ նույն կերպ, եթե որևէ մեկը ստիպված է լինում ընտրություն կոտարել իր զինվորներին ճոխ ու շքեղ ռազմական հանդերձանք տալու և միայն ամենաանհրաժեշտ բաներով հանդերձելու միջև, հօգուտ առաջին կարծիքի, որին կողմնակից էին Սերտորիոսը, Փիլոպեմենը, Բրուտոսը, Կեսարը և այլոք, կարելի է ասել, որ զինվորի համար ճոխ հանդերձանքը մեծարանք ու փառք որոնելու և մարտում ավելի համառ լինելու ավելորդ առիթ է, քանզի ինքը պետք է փրկի թանկարժեք զենքը որպես իր ունեցվածքն ու սեփականությունը: Ուստի, ասվում է Քսենոփոնի մոտ, ասիական ժողովուրդները հետներն արշավանքի էին տանում իրենց կանանց ու հարձերին՝ նրանց ամբողջ հարստությամբ ու թանկարժեք զարդեղենով հանդերձ¹⁰: Սակայն, մյուս կողմից, դրան կարելի է առարկել, թե անհամեմատ ավելի ճիշտ է զինվորի մոտ ինքնապահպանման միտքն արմատախիլ անելը, քան այն պահպանելը, թե, հոգ տանելով թանկարժեք իրերի մասին, նա հակված կլինի իրեն ավելի քիչ վտանգել, և թե, դրան ավելացրած, հնարապետ հարուստ ավարը միայն կմեծացնի թշնամու հաղթանակի ձգտումը: Եկատվել է, որ հենց դա է զարմանալիորեն նպաստել հռոմեացիների խիզախությունը սամնիտների դեմ մղած ճակատամարտում: Երբ Անտիոքոսը Հաննիբալին ցույց տվեց հիանալիորեն ու շքեղ հանդերձված զորքը, որ պատրաստել էր ընդդեմ հռոմեացիներին, և հաբցրեց. «Այս զորքը դուր կգա՞ հռոմեացիներին», Հաննիբալը նրան պատասխանեց. «Դուր կգա՞ Իհարկե, ախր նրանք այնքան ազահ են»: Կիկուրգոսն իր զինվորներին արգելում էր ոչ միայն ճոխ հանդերձանք կրել, այլև նույնիսկ թալանել պարտվածներին, կամենալով, ինչպես ինքն էր ասում, որ կովից վերադարձողներին զարգարեն աղքատությունն ու շափավորությունը:

Պաշարման ժամանակ և այլ դեպքերում, երբ մեկ հաջողվում է մոտենալ հակառակորդին, մենք հաճույքով զինվորներին թույլ ենք տալիս իրենց գոռոզարար պահել, արհամարհանք արտահայտել և ամեն տեսակ հայհոյանք թափել նրա հասցեին: Եվ ունենք որոշ հիմք, քանզի

քիչ բան չէ, երբ նրանցից խլում են գթության կամ թշնամու հետ համա-
ձայնության գալու ամենայն հույս, ցույց տալով, որ հարկ չկա նման
բան սպասել նրանցից, ում իրենք այդպես խիստ վիրավորել են, և
որ միակ ելքը հաղթանակն է: Այդպես էլ եղավ Վիտելլիոսի հետ, քանզի,
ելնելով Օտոնի դեմ, որն իրենից ավելի թույլ էր, որովհետև նրա զին-
վորները հետ էին վարժվել պատերազմից և մեղկացել էին մայրաքա-
ղաքային զվարճություններից, նա, խայթողաբար ծաղրելով նրանց վախ-
կատությունը և Հոմմում թողած կանանց ու խնջույքների կարոտը, ի վեր-
ջո, այնպես ջղայնացրեց զինվորներին, որ միայն դրանով վերադարձ-
րեց նրանց արիությունը, մի բան, որ չէր կարող ներշնչել ոչ մի կոշ,
և ինքը ստիպեց նրանց անսպասելիորեն նետվել իր վրա: Եվ իրոք, երբ
վիրավորանքները խորն են խոցում, կարող են հասցնել այնտեղ, որ
իր տիրակալի համար այնքան էլ կովի շճատող զորականը նոր ավյու-
նով կնետվի մարտի, վրեժ առնելով սեփական անարգանքի դիմաց:

Եթե ուշադրության առնենք այն, որ առաջնորդի կյանքն առանձնա-
հատուկ նշանակություն ունի ամբողջ զորքի համար և թշնամին միշտ
ձգտում է ջարդել հենց այդ գլուխը, որից կախված են բոլոր մյուսները,
հաճախ կովի ժամանակ բազմաթիվ խոշոր զորապետների զգեստա-
փոխվելու և ուրիշ տեսք ընդունելու որոշման ճշտությունը կասկած չի
հարույցի: Սակայն այդ միջոցառման անհարմարությունն ավելի պակաս
չէ, քան այն, որից ցանկալի կլիներ խուսափել: Քանզի արիությունը կա-
րող է լքել իրենց զորավարին շճանաչող զինվորներին, զորավար, որի
ներկայությունն ու գործելակերպը ոգեշնչում էր նրանց, և, շտեմնելով
նրա սովորական տարբերիչ նշանները, զինվորները կարող են մտածել,
թե նա զոհվել է կամ, կորցնելով հաղթանակի հույսը, փախել է ուսզմի
դաշտից: Իսկ ինչ վերաբերում է այդ բանը փորձով ստուգելուն, ապա
մենք աեսնում ենք, որ այն խոսում է մերթ մեկ, մերթ մյուս կարծիքի
օգտին: Իտալիայում Պյուոսսի և կոնսուլ Լեինոսսի միջև տեղի ունեցած
ճակատամարտում կատարված դեպքը թե մեկի, թե մյուսի ապացույ-
ցը կարող է ծառայել մեզ համար: Քանզի, վերցնելով Դեմոգակլեսի
ասպագենքը և նրան տալով իրենը, նա, իհարկե, փրկեց իր կյանքը,
բայց դրա փոխարեն ճաշակեց մեկ այլ փորձանք՝ տանուլ տվեց ճա-
կատամարտը¹¹: Ալեքսանդրը, Կեսարը, Լուկուլլոսը սիրում էին մարտե-
րում մյուսներից տարբերվել իրենց ճոխ ու շլացուցիչ զգեստով ու զեն-
քով: Ագիսը, Ագեսիլայոսը և մեծն Գիլիպոսն¹², ընդհակառակը, ճակա-
տամարտ էին գնում աչքի շրնկնող հագուստով և առանց ամեն տեսակ
արքայավայել շուքի:

Փարսալոսի¹³ ճակատամարտի կապակցությամբ Պոմպեոսը ենթարկ-

վել է բազմաթիվ հարձակումների և, մասնավորապես, այն բանի համար, որ կանգնեցրել է իր զորքը, սպասելով թշնամուն: Դրանով իսկ նա (ես այստեղ կրեմ Պլուտարքոսի խոսքը, որն ավելին արժե, քան իմը) «թուլացրել է այն ուժը, որով օժտված է լինում վազբաթափով հասցվող հարվածը, իսկ քանի որ Պոմպեոսը արգելել է և գրոհը, որն ամենից շատ է ոգևորությանը ու եռանդով տոգորում զորականներին, բանզի գոչունն ու սրընթաց շարժումը ուժգնացնում են նրանց արիությանը, ապա դրանով նա սառեցրել է և կաշկանդել նրանց հաղթանակի կամքը¹⁴»: Ահա թե ինչ է ասում նա այդ առթիվ: Սակայն եթե պարտվեր Աեսարը, մի՞թե չէր կարելի պնդել, թե, ընդհակառակը, ամենաուժեղ ու ամենաամուր դիրքը նրանն է, ով անշարժ կանգնած է տեղում, զբաղում է իրեն և ուժ հավաքում, որպեսզի վճռական հարվածը հասցնի ավելի մեծ առավելությանը, քան նա, ով իր զորքերը շարժել է առաջ, որպեսզի վազբից շնչակտուր անելով նրանց: Բացի այդ էլ, չէ որ զորքը բազմաթիվ մասերից բազկացած մի մարմին է. այն չի կարող կատարի գրոհի ժամանակ շարժվել այնպես, որ շխախտի մարտակարգն ու զուաշարքերը և որ ամենաարագավազ զինվորները գտեմարտի շրջվեն ավելի շուտ, քան ընկերները կկարողանան նրանց օգնել: Երկու պարսիկ նղբայրների միջև տեղի ունեցած շարաբաստիկ ճակատամարտում¹⁵ լակեղեմոնացի Կլեարքոսը, որը Կյուրոսի բանակում հրամանատարում էր հույներին, նրանց հարձակման տարավ առանց առանձին շտապողականություն, իսկ երբ հիսուն քաչլ մնաց, հրամայեց վազել թշնամուն ընդառաջ, հույս ունենալով, թե բավականաչափ կարճ տարածությունը չի հյուծի նրանց, և նրանք կստանան այն առավելությունը, որ տալիս է կատաղի գրոհը թե զինվորին, թե նրա զենքին: Ուրիշներն իրենց բանակներում այդ երկմտանքը լուծեցին հետևյալ կերպ. եթե թշնամին շարժվում է առաջ, սպասիր նրան տեղդ կանգնած, իսկ եթե պաշտպանական դիրքեր է գրավել, անցիր հարձակման:

Երբ Կարլոս V կայսրը որոշեց ներխուժել Պրովանս¹⁶, Ֆրանցյակ թագավորը կարող էր ընդունել հետևյալ երկու որոշումներից մեկը, կամ շարժվել Իտալիա՝ նրան ընդառաջ, կամ սպասել իր հողերում: Նա, իհարկե, քաջ գիտակցում էր, թե որքան կարևոր էր երկիրը զերծ պահել պատերազմի արհավիրքից, որպեսզի, լիովին տնօրինելով իր ուժերը, այն անընդհատ կարողանար միջոցներ տրամադրել պատերազմ վարելու համար և, անհրաժեշտության դեպքում, օգնել մարդկանցով: Նա հասկանում էր, որ պատերազմական դրության մեջ ակամայից ստիպված ես լինում դիմել ավերումների, մի բան, որից հարկ է խուսափել սևփական հայրենիքում, քանզի գյուղացին յուրայինների ավերածությունն այնպես

անարտունջ շի հանդուրժի, ինչպես թշնամունք, սւտի և մեզանում կարող են խռովություններ բռնկվել. որ բնակիչներին թալանելն ու կողոպտելը՝ սեփական տանը գինվորներին շթուլատրվող մի բան, շատ է թեթևացնում պատերազմի դժվարությունները և որ դժվար է դասալիք լինելուց հետ պահել նրան, ով շունի ալլ եկամուտ, բացի իր գինվորական ռոճիկը, և միևնույն ժամանակ իր կնոջից ու տանից երկու քայլ է հեռու, որ նա, ով ուրիշի համար սեղան է բացում, ինքն է վճարում ճաշի դիմաց, որ հարձակումն ավելի է ոգեշնչում, քան պաշտպանությունը, որ երկրի ներսում ճակատամարտ տանուլ աալն ամբողջ պետությունը սասանող սոսկալի բան է, ուշադրության առնելով այն, թե ինչքան վարակիչ է վախը, ինչքան հեշտությամբ է այն համակում մարդկանց և ինչքան արագորեն է տարածվում, և որ իրենց պարիսպների մոտ այդ ամպրոպի ճայթյունները լսող քաղաքները, որպես փախստականներ ընդունելով տակավին դուրացող ու շնչակտուր սեփական հրամանատարներին ու գինվորներին, մոլուցքի մեջ կարող են դիմել ուզածդ քայլին: Եվ, այնուամենայնիվ, նա գերադասեց իր զորքերը հանել Իտալիայից ու սպասել թշնամու հարձակմանը: Քանզի, մյուս կողմից, նա կարող էր պատկերացնել, որ, գտնվելով իր տանը՝ բարեկամների շրջանում, առատորեն կստանա բոլոր տեսակի մթերքները, որովհետև գետերով ու ճանապարհներով առանց հատուկ գինվորական պահակախմբի կրերվի անհրաժեշտ քանակությամբ պարեն ու դրամ, որ, հպատակներին սպառնացող վտանգն ինչքան մոտ լինի, այնքան նրանց քաջալիրանքը հաստատա կլինի, որ, միշտ հնարավորություն ունենալով թաքնվել բողմաթիվ քաղաքներում ու ամրություններում, նա կկարողանա թշնամու դեմ կովելու շահավետ և հարմար ժամանակ ու տեղ ընտրել և որ, եթե կամենա սպասել, գտնվելով հուսալի թաքստոցում, կկարողանա թշնամուն ուժասպառ անել ու քայքայել նրա զորքերը, քանզի հակառակորդի առջև կծառանան անհաղթահարելի դժվարություններ՝ նա կլինի թշնամի երկրում, ուր շուրջն ամեն ինչ կովում է իր դեմ և՛ առջևից, և՛ հետևից, նա բոլորովին հնարավորություն չի ունենա ոչ թարմացնել ու համալրել իր զորքը, եթե հիվանդություններ սկսվեն, ոչ որևէ տեղ պատսպարել վիրավորներին, նա կարող է միայն զենքի ուժով փոզ ու պարեն հայթայթել, նա շունի հանգստանալու և ուժ հավաքելու տեղ, նա շունի բավականաչափ հստակ պատկերացում այն տեղանքի մասին, որը կապահովեր դարանակալումներից ու ալլ պտտահականություններից, իսկ ճակատամարտը անուղ տալու դեմքում՝ ջախջախված՝ լրանակի մնացորդները փրկելու ոչ մի հնարավորություն:

Եվ այսպես, կան բավականաչափ օրինակներ ինչպես մի, այնպես

էլ մյուս կարծիքի օգտին: Սկիպիոնը, փոխանակ պաշտպանելու իր տարածքները և մնալու Իտալիայում, գերադասեց թշնամու վրա հարձակվել նրա աֆրիկյան տիրույթներում, դա հաջողութուն ապահովեց նրան¹⁷: Եվ, ընդհակառակը, այդ նույն պատերազմում Հաննիբալը պարտվեց, որովհետև հանուն իր երկրի պաշտպանության հրաժարվեց օտար երկիր նվաճելուց: Ճակատագիրն անողորմ գտնվեց աթենացիների նկատմամբ, երբ նրանք թշնամուն թողին իրենց երկրում, իսկ իրենք հարձակվեցին Սիցիլիայի¹⁸ վրա, սակայն Սիրակուսեի թագավոր Ագաթոկլեսի նկատմամբ այն բարեհաճ էր, թեև նա Պուլչպես արշավեց Աֆրիկա, թշնամուն թողնելով իր հայրենիքում¹⁹: Դրա համար է, որ մենք սովորաբար ոչ առանց հիմքի ասում ենք, թե և՛ իրադարձությունները, և՛ գրանցելը, հատկապես պատերազմի ժամանակ, մեծ մասամբ կախված են ճակատագրից, որը բնավ մտադիր չէ հաշվի նստել մեր նկատառումների հետ և ենթարկվել մեր իմաստնությունը, ինչպես ասվում է հետևյալ բանաստեղծության մեջ.

Et male consultis pretium est: prodentia fallax,
Nec fortuna probat causas sequiturque merentes;
Sed vaga per cunctos nullo discrimine fertur;
Scilicet est aliud quod nos cogatque rogatque
Maius, et in proprias ducat mortalia leges*.

Սակայն, ըստ էության, մեր բուն կարծիքներն ու դատողությունները, հավանաբար, ճիշտ նույն կերպ կախված են ճակատագրից, և այն հաղորդում է գրանց իրեն հատուկ անորոշություն և անվստահություն: «Մենք դատում ենք թեթևամիտ ու համարձակ, — ասում է Տիմոստր Պլատոնի մոտ, — քանզի ինչպես մենք ինքներս, այդպես էլ մեր դատողությունները ենթակա են պատահականության»:

Գլուխ XLVIII

ՄԱՐՏԱԿԱՆ ՉԻԵՐԻ ՄԱՍԻՆ

Ահա և ես էլ դարձա քերական, ես, որ միշտ այս կամ այն լեզուն ուսումնասիրում էի միայն գործնական վարժվածությամբ, և մինչև օրս

* Անխոհեմությանը նույնպես հաջողություն է բաժին ընկնում. խոհեմությանը հաճախ խաբում է, և բախտը, քիչ զլուխ հանելով ծառայություններից, միշտ չէ, որ նպաստում է պողար զործին: Կենելով փոփոխական, այն անցնում է մեկից մյուսին, շղենելով ոչ մի տարբերություն: Կնշանակի, մեզանից վեր կա մի գերագույն իշխանություն, որը տնօրինում է մահկանացուների գործերը, ղեկավարվելով սեփական օրենքներով²⁰ (լատ.):

էլ շփտեմ, թե ինչ է ածական անունը, ստորագասական եղանակը կամ գործիական հոլովը: Ես մեկից լսել եմ, թե հռոմեացիներն ունեցել են ձիեր, որոնց անվանել են funales կամ dextrarii¹, սրանք վազոսմ էին հեծյալի աջ կողքով իբրև պահեստային ձիեր, որպեսզի կարիքի գեպքում հնարավոր լիներ օգտագործել դրանց թարմ ուժերը: Դրա համար էլ լրացուցիչ ձիերին մենք անվանում ենք destriers: Իսկ նրանք, ովքեր օգտագործում են ռոմաներենը, սովորաբար accompaignier -ի փոխարեն ասում են adestrer: Հռոմեացիները desultorii equi էին անվանում նաև այն ձիերին, որոնք վարժեցված էին հետևյալ կերպ. երբ առանց թամբի ու երասանի սրարշավ վարգում էին կողք կողքի, զույգերով, հռոմեացի հեծյալները լիովին զինված կարող էին ընթացքի ժամանակ ցատկել մեկից մյուսին: Նումիդիացի զինվորները մարտի ամենաթեժ պահին օգտագործելու համար միշտ ունեին երկրորդ ձի. Quibus, desultorum In modum, binos trahentibus equos, inter acerrimam saepe pugnam in recentem equum ex fesso armatis transsultare mos erat: tanta velocitas ipsis, tamque docile equorum genus*.

Կան վարժեցրած այնպիսի ձիեր, որ իրենց տերերին օգնում են նետվել նրանց դեմ սրամերկ կանգնած ուղածղ մարդու վրա, տրորում ու կծոտում են գրոհողներին ու հարձակվողներին: Բայց ավելի հաճախ ստացվում է այնպես, որ նրանք ավելի շատ վնաս են հասցնում յուրայիններին, քան թշնամիներին: Ավելացնենք, որ եթե այդ ձիերը մարտի են բռնվել, արդեն զսպել հնարավոր չէ, և հեծյալի բախտն ամբողջովին կախված է կովի պատահականություններից: Այդպես, երբ պարսից զորքերի հրամանատար Արտյուրիոսը նման ձևով վարժեցրած ձիով մենամարտի բռնվեց Սալամիսի արքա Օնեսիլայոսի հետ, ժանր փորձանքի եկավ³, քանզի այդ ձին դարձավ նրա մահվան պատճառը. Օնեսիլայոսին ուղեկցող հետևակային զինվորը տապարով խորտակիչ հարված հասցրեց Արտյուրիոսի մեջքին հենց այն ժամանակ, երբ Արտյուրիոսի ձին հարձակվել էր Օնեսիլայոսի վրա և ծառս կանգնել նրա գլխավերևում:

Իսկ իտալացիները պատմում են, որ Ֆոռնուովոյի⁴ ճակատամարտում թագավորի ձին, քացի տալով ու թռչկոտելով փրկել է նրան նեղող թըշնամիներից այլապես նա կզոհվեր, եթե նույնիսկ դա ճիշտ է, ուրեմն, պարզապես երջանիկ պատահականություն է:

* Նրանք սովոր են, կրկեսային հեծյալների նման, ունենալ պահեստային ձի, և հաճախ կովի թեժ պահին, զինված, նրանք հողմած ձիուց ցատկում են թարմ ձիու մեջքին՝ այգբուն ճարպիկ են նրանք, և այդպես հնազանդ են ձիերի նրանց ցեղատեսակները² (լատ.):

Մամլուքները պարծենում են, թե աշխարհի ամենալավ մարտական ձիերը իրենցն են, թե դրանց ցեղատեսակն այնպիսին է, և վարժեցրած են այնպես, որ երբ ձայնով կամ շարժումով նշան ես անում, ճանաչում ու տարբերում են թշնամիներին: Եվ իբր ճիշտ նույն կերպ, իրենց տիրոջ հրամանով, ատամներով բարձրացնում ու նրան են տալիս ռազմի դաշտում ցիրուցան ընկած նիզակներն ու տեղերը, ինչպես նաև տեսնում են ու տարբերում...⁵

Կեսարի և Պոմպեոս Մեծի մասին աժում են, թե, իրենց մյուս նշանավոր հատկանիշների հետ մեկտեղ, նրանք հիանալի ձիավարներ էին: Կեսարը ջահել ժամանակ հետնառաջ նստում էր ամենհի ձիուն, ձեռքերը դնում մեջքին, և սրընթաց վարգում: Հենց բնությունն է ի դեմս այդ մարդու և Ալեքսանդրի ստեղծել ռազմարվեստի երկու հրաշք և, կարելի է ասել, աշխատել է արտասովոր կերպով զինել նրանց: Քանզի հայտնի է, որ Ալեքսանդրի ձիու՝ Բուկեփալի գլուխը նման է եղել եզան գլխի, որ նա միայն իր տիրոջն է թույլ տվել վրան նստելու, բացի նրանից ոչ ոքի չի ենթարկվել, իսկ սատկելուց հետո արժանացել է մեծարանքի, և նրա անունով նույնիսկ մի քաղաք է կոչվել:

Կեսարի ձին նույնքան զարմանալի էր, առջևի ոտքերը հիշեցնում էին մարդու ոտքեր, իսկ սմբակներին, ասես մատներ լինեին: Նա նույնպես ոչ ոքի չէր թողնում վրան նստել ու քշել, բացի Կեսարից, որը ձիու սատկելուց հետո նրա պատկերը նվիրաբերեց Վենետիկի աստվածուհուն:

Երբ ես ձի եմ նստած լինում, դժկամությամբ եմ իջնում, քանզի, առողջ լինեմ, թե հիվանդ, ամենից լավ ձիու վրա եմ զգում: Պլատոնը խորհուրդ է տալիս առողջ լինելու համար ձի նստել, Պլինիոսը նույնպես համարում է, որ ձիավարությունը շատ օգտակար է ստամոքսին ու հոդերին⁶: Սակայն վերադառնանք մեր խոսակցությանը: Քսենոփոնի մոտ կարգում ենք, թե օրենքը ձի ունեցողին արգելում էր ճանապարհորդել ոտքով⁷: Թրոգոսն ու Հուստինոսը պնդում են, թե պարթևները սովորություն ունեին ձի հեծած ոչ միայն կովել⁸, այլև կատարել իրենց բոլոր հասարակական ու անձնական գործերը (առևտուր անել, բանակցություններ վարել, զրուցել ու զրոսնել), և կարևորը, նրանց մոտ ազատ մարդու՝ և ստրուկի տարբերությունն այն էր, որ մեկը ձիով էր ման գալիս, մյուսը՝ ոտքով, այդ օրենքը մտցրել էր Կյուրոս արքան:

Հոռմի պատմության մեջ մենք գտնում ենք բազմաթիվ օրինակներ (Սվետոնիոսը դա նշում է հատկապես Կեսարի մասին գրելիս)⁹, երբ հրամանատարները մարտի ամենավտանգավոր պահերին իրենց հեծյալներին հրամայում էին իջնել ձիերից, որպեսզի նրանց զրկեին փա-

խուստի որևէ հույսից, ինչպէս նաև, օգտագործելն հետեակային կովի բոլոր առավելութունները. quo haud dubie superat Romanus*,— ասում է Տիտոս Լիվիոսը:

Նոր հնազանդեցրած ժողովուրդների խռովութիւնները կանխելու նպատակով հռոմեացիներն առաջին հերթին խլում էին նրանց զենքն ու ձիերը. այս է պատճառը, որ մենք հաճախ Կեսարի մոտ կարդում ենք. arma proferri, iumenta produci, obsides dari iubet**. Մեր օրերում թուրք սուլթանը քրիստոնեական կամ հրեական դավանանքի իր հպատակներին ոչ մեկին թույլ չի տալիս սեփական ձիեր ունենալ:

Մեր նախնիները, հատկապես անգլիացիների դեմ պատերազմելիս, բոլոր նշանավոր կռիվներում և պատմութեան մեջ փառաբանված ճակատամարտերում մեծ մասամբ մարտնչում էին հետիոտն, քանզի վախենում էին կշանքի ու պատվի նման թանկ բաները վստահել որևէ այլ բանի, քան սեփական ուժերին, արիութեանը և ամրակազմ մարմնին: Քրիստոնեացի Քսենոփոնի մոտ¹² ինչ էլ որ ասի, դուք միշտ ձեր քաջութիւնն ու բախտը կապում եք ձեր ձիու քաջութեան ու բախտի հետ, նրա վիրավորվելը կամ սպանվելը բերում է նաև ձեր մահը, նրա վախը կամ կատաղութիւնը ձեզ դարձնում են վախկոտ կամ արիասիրտ, եթե նա վատ է ենթարկվում սանձին կամ կոշկախթանին, դուք պատասխան եք աւելի ձեր պատվով: Ուստի, ես տարօրինակ չեմ համարում, որ հետեակային կռիվներն ավելի համառ ու կատաղի են, քան հեծյալ մարտերը.

cedebant pariter, pariterque ruebant
Victores victique, neque his fuga nota neque illis***

Այն ժամանակներում հաղթանակները ձեռք էին բերվում ավելի դժվար, քան հիմա, երբ ամեն ինչ հանգեցվում է գրոհի ու փախուստի. primus clamor atque impetus rem decernit****.

Եվ անշուշտ, այդքան կարևոր և մեր հասարակութիւնում այդքան պատահականութեանների ենթակա գործը պետք է ամբողջովին գտնվի մեր

* ... որում հռոմեացիներն, անկասկած, ավելի ուժեղ էին¹⁰ (լատ.):

** Հրամայում է հանձնել զենքը, արամագրիչ ձիերը, տալ պատանդներ¹¹ (լատ.):

*** ... նահանջում ու դարձյալ առաջ էին նետվում և՛ հաղթողները, և՛ պարտվողները, ոչ որ շփտեր ինչ է փախուստը¹³ (լատ.):

**** Առաջին գրոհն ու առաջին զոտոցները որոշում են հարցը¹⁴ (լատ.):

ձեռքում: Ճիշտ այդպես ես խորհուրդ կտայի ընտրել առավել կարճ տարածություն վրա գործող այնպիսի զենք, որին մենք ամենից վստահորեն ենք տիրապետում: Ակնհայտ է, որ մեր ձեռքում բռնած սուսերն անհամեմատ ավելի հուսալի է, քան այն ատրճանակից թռչող գնդակը, որը բազկացած է տարբեր մասերից՝ վառողից, կայծքարից, ձգանից. բավական է դրանցից որևէ մեկը շարժի, և ձեզ մահացու վտանգ է սպառնում:

Մենք շենք կարող վստահ լինել մեր հարվածի անվրեպությունը, եթե այն հակառակորդին պետք է հասնի ոչ թե անմիջականորեն, այլ օդով.

Et quo ferre velint permittere vulnera ventis;
Ensis habet vires, et gens quaecunque virorum est,
Bella gerit gladiis*.

Ինչ վերաբերում է հրազենին, այդ մասին ես ավելի հանգամանորեն կխոսեմ հին ժողովուրդների զենքը մերի հետ համեմատելիս: Եթե հաշվի չառնենք խլացուցիչ դրոշմները, որին այժմ արդեն բոլորն ընտելացել են, ապա ես այն համարում եմ սակավազոր և հույս ունեմ, որ մենք շուտով կհրաժարվենք դրանից:

Մի ժամանակ Իտալիայում գործածվող զենքը (նևաման և հրձիգ արկերը) անհամեմատ ավելի սարսափելի էր: Հները երեք ուսնաչափ երկարության երկաթե ծայրակալ ունեցող իրենց հատուկ նիզակատեսակըն անվանում էին phalarica, որը կարող էր շամփրել լրակազմ զենք կրող զինվորին. կարճատև մարտում այն նետում էին ձեռքով, իսկ պաշարված ամրոցները պաշտպանելիս, տարբեր հարմարանքների օգնությամբ: Նիզակի կոթը, որին փաթաթում էին ձյութի ու յուղի մեջ թաթախված խժուժ, նետելիս այրում էին, իսկ թռիչքի ժամանակ կրակը թեժանում էր. մխրձվելով զինվորի մարմինը կամ մնալով վահանին, այն զրկում էր զենքով կամ ձեռքուտքով գործելու հնարավորությունից: Այնուամենայնիվ ինձ թվում է, թե երբ բանը հասնում էր ձեռնամարտի, այդ նիզակները խանդարում էին նաև նետողներին, և ուղմի դաշտում սփռված խանձողները զոտեմարտի ժամանակ խանգարում էին երկու կողմերին էլ.

magnum stridens contorta phalarica venit
Fulminis acta modo**.

* Եվ այդպիսով երանք բաժուն են հանձնարարում հարվածներն ուղղել այնտեղ, սփ կկամենաւ: Ուժեղ է միայն սուրը, և ուղմական քաջութուն ունեցող ամեն ժողովուրդ պատերազմներ է վարում սրերով¹⁵ (լատ.):

** ... և սուլոցով թռչում է կայծակի պես նետված փալարիկան¹⁶ (լատ.):

Նրանք ունեին նաև մեր վառողին ու ումբազնգերին փոխարինող ուրիշ միջոցներ, և այդ միջոցներից օգտվում էին մեզ համար պարզապես անհավատալի հմտությամբ, քանզի մենք դրանց հետ վարվել չգիտենք:

Նրանք նիզակները նետում էին այնպես ուժղին, որ հաճախ շամփրում էին միանգամից երկու վահան և երկու զինված մարդու, որոնք կարծես շարվում էին մի նիզակի վրա: Նույնքան դիպուկ և նույնպիսի մեծ *saxis globosis funda mare apertum incessentes: coronas modici circuli, magno ex intervallo loci, assueti tralicere: non capita modo hostium vulnerabant, sed quem locum destinassent**. Հեռավորությունից թշնամուն խոցում էին նրանց պարսատիկները. Նրանց բաբանները նույնպիսի թնդյունով կատարում էին նույն գործողությունը, ինչ որ մերը.

ad ictus moenium cum terribili sonitu editos pavor et trepidatio cepit**.

Գաղատները՝ մեր ասիացի ցեղակիցները, ատում էին այդ նենդալի թռչող արկերը. նրանք սովոր էին ավելի մեծ քաջությամբ ձեռնամարտել.

Non tam patentibus plagis moventur: ubi latior quam altior plaga est, etiam gloriosius se pugnare putant, idem, cum aculeus sagittae aut glandis abditae introrsus tenui vulnere in speciem urit, tum, in rabiem et pudorem tam parvae perimentis pestis versi, prosternunt corpora humi***.

Այս պատկերը շատ նման է շախմատավոր հրացաններ կրող զինվորների կովի:

Տասը հազար հույն իրենց երկարատև ու հանքահայտ նահանջի ճանապարհին հանդիպեցին մի ցեղի, որը մեծ ու պիրկ աղեղներից նետեր արձակելով զգալի կորուստներ հասցրեց նրանց, այդ մարզկանց նետերն այնքան երկար էին, որ շամփրում էին ղինակիր մարտիկի վա-

* Սովորելով ծովում պարսատիկով կլոր քարեր նետել և զղալի հեռավորությունից հարվածել փոքր շրջանի կենտրոնին, նրանք խփում էին թշնամիների ոչ միայն զլխին, այլև նշան բռնած յուրաքանչյուր մասին¹⁷ (լատ.):

** Ահ ու դողը համակեց պաշարվածներին, երբ զարհուրելի թնդյունով սկսեցին քանդել պարիսպները¹⁸ (լատ.):

*** Նրանք շեն վախենում վերքերից: Երբ վերքի լայնությունն ավելին է, քան խորությունը, նրանք համարում են, որ դա մեծ պատիվ է կոհվը շարունակողի համար: Բայց երբ նետի սլաքը կամ պարսատիկով արձակած արճիճե գնդիկը մխրճվում է նրանց մարմինը, և, արտաքինից տննշան վերք հասցնելով, ատնչում, նրանք, խենթացած, որ մեռնելու են այդքան շնչին վնասվածքից, սկսում են զայրույթից ու ամոթից գալստիվել գետնի վրա¹⁹ (լատ.):

հանր և հենց իրեն, իսկ ձեռքում ունենալով այդ նետը, կարելի էր օգտագործել որպես տեղ: Զոալի հեռավորության վրա և մեծ արագությամբ հասա ծանր նիզակներ ու վիթխարի քարեր նետելու համար Դիոնիսիոս Միրակուսեցու²⁰ հնարած հարմարանքները շատ նման են մեր գյուտերին²¹:

Տեղին կլինի հիշել ոմն ուսուցիչ աստվածաբան Պիեռ Պոլի ծիծաղելի նստելաձևը, որի մասին Մոնտրելեն պատմում է, թե սովորություն ուներ թեք, կնոջ նման, ջորի հեծած շրջել Փարիզի փողոցներում: Մի այլ տեղում նա ասում է, թե գասկոնցիներն ունեին սարսափելի, սրընթաց վարզի ժամանակ կտրուկ շրջվելու վարժված ձիեր, և դա մեծ զարմանք էր առաջացնում ֆրանսիացիների, պիկարդացիների, ֆլամանդացիների ու բրաբանտացիների մոտ, քանզի, ինչպես ինքն է ասում, «նրանք սովոր շէին նման բան տեսնել»²²: Կեսարը սվևների մասին ասում է. «Հեծելամարտերի ժամանակ նրանք հաճախ ցատկում են վայր, հետևակային կռիվ մղելու, իսկ ձիերը սովոր են նման դեպքերում մնալ տեղում, որպեսզի նրանք կարողանան հարկ եղած պահին նորից հեծնել: Ըստ նրանց սովորույթի, թամբ ու սթար օգտագործելը խիզախ զինվորի համար ամոթալի բան է, և նրանք թամբ գործածողներին այնպես են արհամարհում, որ մի բուռ սվևներ համարձակվում են հարձակվել նրանց խոշոր ջոկատների վրա»²³:

Մի ժամանակ տեսնելով միայն մտրակի միջոցով, առանց սանձի հնազանդվելու վարժված ձի, ես շատ էի զարմանում, սակայն դա ընդունված բան էր մասիլիացիների մոտ, որոնք իրենց ձիերը քշում էին առանց թամբի ու երասանի:

Et gens quae nudo residens Massilia dorso
Ora ievi flectit, frenorum nescia, virga*.

Et Numidae infreni cingunt**.

Equi sine frenis, deformis ipse cursus, rigida cervice et extento capite currentium***.

Ալֆոնս արքան²⁷, նա, որ Իսպանիայում հիմնեց Ժապավենի կամ Լանչագոտու ասպետական միաբանությունը, այդ միաբանության մյուս կանոնների թվում սահմանեց նաև մի այնպիսի կարգ, համաձայն որի

* Եվ Մասիլիացի բնակիչները նստում են ոչ մի բանով չծածկված ձիերի մեջքին ու քշում սանձի փոխարեն փոքրիկ մտրակի օգնությամբ²⁴ (լատ.):

** Եվ նումիդիացիները զսպում են ամեհի ձիերին²⁵ (լատ.):

*** Նրանց ամեհի ձիերը վազում են տղեղ, վազելիս ձիերի վիզը լարվում է, և դուրսըն առաջ ձգվում²⁶ (լատ.):

ոչ մի ասպետ իրավունք չուներ ջորի կամ մտրուկ նստել, այլապես կտուգանվեր մեկ արծաթե մարկ, ես դա կարդացել եմ վերջերս Գևարայի²⁸ «Նամակներում», որոնք «ոսկե» անվանող մարդիկ գնահատում են բնավ ոչ այնպես, ինչպես ես:

«Պալատականը»²⁹ գրքում ասվում է, թե անցյալում այդ կենդանիներին նստելը համարվում էր աղնվականին անվայել բան: Ընդհակառակը, առավել բարձրաստիճան և իրենց թագավորի՝ երեց Հովհաննեսի մերձավոր հաքեշներն³⁰ ի նշան բարձր դիրքի, պերադասում են ջորի նստել: Քսենոփոնը պատմում է³¹, թե ասորիները կայանատեղիում ձիերին ոտնակապ էին դրում՝ այդքան կատաղի էին ու վայրագ, իսկ ոտնակապերը հանելու և սանձելու համար պահանջվում էր այնքան ժամանակ, որ թշնամու անակնկալ հարձակումը կարող էր զորքը լիակատար շփոթմունքի մատնել, ուստի իրենց արշավային ճամբարները նրանք միշտ բոլորափակում էին հողապատնեշով ու փոսով:

Ձիերի հետ վարվելաձևի մեծ գիտակ կյուրոսն անձամբ էր վարժեցնում իր նժույգներին, ու մինչև նրանք որևէ վարժություն կատարելով չբրտնեին, չէր թողնում, որ կեր տային:

Արշավանքների ժամանակ քաղցած մնալիս սկյութացիները թողնում էին ձիերի արյունը և զրանով հագեցնում իրենց սովն ու ծարավը.

Venit et epoto Sarmata pastus equo*.

Կրետեցիները, որոնց պաշարել էր Մետելլոսը, այնպես էին տառապում ջուր չունենալուց, որ ստիպված խմում էին իրենց ձիերի մեզր³³:

Ապացուցելու համար, թե թուրքական զորքերը որքան ավելի դիմացկուն ու անպահանջկոտ են, քան մերոնք, սովորաբար վկայակոչում են այն հանգամանքը, թե նրանք խմում են միայն ջուր և ուտում միայն բրինձ ու աղը դրած աղացած միս, որի միամսյա պաշարը յուրաքանչյուր ոք հեշտությամբ կարող է տանել հետը, ինչպես նաև, թաթարների ու մոսկվացիների նման՝ իրենց ձիերի աղը դրած արյունը:

Երբ Հնդկաստանի վերջերս հայտնաբերված ժողովուրդները³⁴ տեսան իսպանացիներին, իրենց մոտ եկած մարդկանց ու ձիերին ընդունեցին իբրև աստվածներ կամ այնպիսի բարձր հատկություններով օժտված կենդանիներ, որոնք հասուկ չեն մարդկային էությանը: Պարտվելուց հետո ոմանք ներկայացան իսպանացիներից հաշտություն ու գթություն խնդրելու, բերելով ոսկի ու սնունդ, նույնպիսի ընժանկրով նրանք

* Ահա և ձիու արյունով սնված մի սարմատ³² (լատ.):

մոտենում էին նաև ձիերին և դիմում այնպես, ինչպես մարդկանց, նրանց խրխնջոցն ընդունելով իրրև համաձայնության ու հաշտության արտահայտություն:

Իսկ մերձավոր Հնդկաստանում հնում բարձրագույն ու արքայական պատիվ էր համարվում փիղ նստելը, երկրորդ կարգի պատիվ էր քանաձի կառք նստելը, երրորդ՝ ուղտ հեծնելը, և, վերջապես, ամենավերջինն ու ամենացածրը՝ ձի հեծնելը կամ միաձի սայլ նստելը:

Մեր ժամանակակիցներից մեկը գրում է, թե այն կողմերում ինքք տեսել է երկրներ, ուր եղ են հեծնում, օգտագործելով դրաստային թամբեր, ասպանդակներ ու երասաններ, և դա համարվում է շատ հարմար:

Քվինտոս Փարիոս Մաքսիմոս Ռուտիլիանոսը³⁵ սամոնյանների դեմ ճակատամարտում, տեսնելով, որ նույնիսկ երեք թև շորս գրոհից հետո իր հեծյալներին շահողվեց միաբանել հակառակորդի շարքերը, հրամայեց հանել ձիերի սանձերը և ամբողջ ուժով խթանել նրանց, այժմ արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել ձիերին, սրանք նետվեցին առաջ, գետին տապալելով զինված մարդկանց, և ճանապարհ հարթեցին հետեվակիս, որն արյունահեղ պարտության մատնեց թշնամիներին:

Նույնպիսի հրաման ավելց Քվինտոս Փուլբիոս Փլակոսը քելտիկերների դեմ ճակատամարտում:

d cum maiore vi equorum facietis, si effrenatos in hostes equos immittitis; quod saepe Romanos equites cum laude facisse sua, memoriae proditum est. Detractisque frenis, bis ultro citroque cum magna strage hostium, infractis omnibus hastis, transcurrerunt'.

Հին ժամանակներում Մոսկվայի մեծ իշխանը պետք է թաթարներին մեծարեր հեռույալ կերպ. երբ դեսպաններ էին ժամանում, նա քայլում էր ընդառաջ և զամբիկի կաթով լի գավաթ առաջարկում (այս րմպելիքը նրանք համարում են ամենահամեղը), իսկ եթե խմելիս նրանք թևկուղ մի քանի կաթիլ թափում էին ձիու բաշին, նա պարտավոր էր լիզելով մաքրել այն:

Սուլթան Բայազետի Ռուսաստան ուղարկած գորբն այնպիսի ահավոր ձևաքթի մեջ քնկավ, որ պատասպարվելու և ցրտից փրկվելու համար, շատերը որոշեցին սպանել իրենց ձիերին. պատում էին նրանց փորը, մտնում մեջը, տաքանալով կենդանական ջերմությամբ:

* ... Ձեր ձիերի գրոհն ափսի ուժգին կրկնի, եթե թշնամու վրա նետվելուց առաջ սանձազերծեք նրանց, հայանի է, որ հաճախ այդ հնարքը հաշտություն օգտագործել է համեմական հեծելազորը: (Նրանք հետևեցին նրա խորհրդին) սանձազերծելով ձիերը, նրանք թշնամու գորբի միջով երկու անգամ հետ ու առաջ վարվեցին, հասցնելով սարսափելի կորուստներ և կոտորատելով թշնամու բոլոր նիզակները³⁶ (լատ.):

Այն դաժան ճակատամարտից հետո, որում Լենկթեմուրը շախչախեց Բայազետին³⁷, նրան կհաջողվեր փրկվել, ճողոպրելով արաբական զամբիկով, եթե ստիպված չլիներ գետն անցնելիս թողնել նրան կուշտ խմելու, դրանից հետո ձին դարձավ այնքան անտարբեր և այնպես թուլացավ, որ հետապնդողները հեշտությամբ հասան սուլթանին: Ասում են, թե ձին թուլանում է, եթե թողնում ես միզելու, իսկ ինչ վերաբերում է խմելուն, ապա, իմ կարծիքով, դա պետք է ավելի շուտ թարմացնի և ուժ տա նրան:

Կրեսոսը, անցնելով Սարգես քաղաքի մոտով, տեսավ մարգագետիններ, ուր վխտում էին մեծ քանակությամբ օձեր, որոնց հաճույքով ուտում էին նրա զորքի ձիերը, և դա, ասում է Հերոդոտոսը, վատ նախանշան եղավ նրա համար³⁸:

Մենք համարում ենք, թե ձին նորմալ վիճակում է, եթե անվնաս են բաշն ու ականջները, և միայն այդպիսիներին ենք թողնում ստուգատեսների ու շքերթների: Լակեղեմոնացիները, Սիցիլիայում պարտության մատնելով աթենացիներին և, հաղթանակ տարած, հանդիսավորությամբ վերադառնալով Սիրակուսե, բացի թշնամիներին տարբեր կերպ ծանակելուց, խուզեցին նրանց ձիերի բաշերը և այդպես տարան իրենց հաղթական երթին: Ալեքսանդրը պատերազմում էր դադեր³⁹ կոչվող մի ժողովրդի դեմ. սրանք կովի էին ելնում լավ դինված, երկուսով մի ձի նստած, սակայն մարտի ժամանակ մերթ մեկը, մերթ մյուսը ցատկում էր ձիուց և այդպես հերթով՝ մեկը հեծյալ, մյուսը հետիոտն կոչում:

Ես կարծում եմ, որ ձիավարության և վայելուչ նստելաձևի հարցում մեզ ոչ մի ժողովուրդ չի դերազանցում: Սակայն, խոսելով լավ հեծյալի մասին, սովորաբար նկատի են ունենում ավելի շուտ անվահերությունը, քան նրբադեղությունը: Իմ իմացածներից ամենահմուտ, ինքնավստահ ու ճարպիկ ձիավարն, ըստ իս, պարոն դը Կառնեալեն էր, որն իր այդ արվեստով ծառայում էր մեր Հենրի II թագավորին: Ես տեսել եմ, թե ինչպես մի մարդ վարվում էր երկու ոտքով թամբին կանգնած, ինչպես նա դեն նետեց թամբը, իսկ ապա, հետդարձի ժամանակ վերցրեց, հարմարեցրեց ու նստեց վրան, անելով այդ ամենը սրբնթաց վարդի ժամանակ, առանց սանձը բռնելու: Սլանալով դետնին ընկած գլխարկի վրայով, նա շրջվեց ու նետով խփեց դրան, գետնից վերցնում էր նաև ուղածո իրը, իջեցնելով մի ոտքը, իսկ մյուսով կառչած մնալով ասպանդակին, և անում էր էլի բազմաթիվ այդպիսի աճարարություններ, որոնցով հաց էր վաստակում:

Մեր օրերում Կոստանդնուպոլսում տեսել են երկու մարդ, որոնք, մի ձի հեծած, սրբնթաց վարդի ժամանակ հերթով ցատկում էին վար,

իսկ ապա կրկին թռչում թամբին: Տեսել են նաև այնպիսի մեկին, որը միայն ատամներով սանձում ու թամբում էր ձին: Եվ էլի մեկին, բրնամբողջ թափով վարդում էր միանգամից երկու ձիով, մի ոտքով կանգնելով մի ձիու թամբին, իսկ մյուսով՝ մյուսի, և միևնույն ժամանակ ուսերին պահում էր երկրորդ մարդուն, իսկ այդ երկրորդը, ամբողջ հասակով կանգնած, շատ դիպուկ նետ էր արձակում: Այնտեղ կային նաև այնպիսիք, որոնք ձին սրարշավ քշելով, կանգնում էին դլխիվայր, ըստ որում դուխը գտնվում էր թամբին ամրացված երկու սրերի արանքում: Մանկությանս օրերին Սուլմոնե իշխանը մի անգամ նեապոլում ամեն տեսակ հնարքներով զսպում էր վայրագ մի ձի. իր ամուր նստելաձևը ցույց տալու համար, նա ծնկների ու ոտքերի բթամատերի տակ պահում էր մի քանի ռեալ⁴⁰, որոնք բոլորվին անշարժ էին, ասես մեխած լինեին:

Գլուխ XLIX

ՀԻՆԱՎՈՒՐՑ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ես հաճույքով կներեի մեր ժողովրդին, որ իրենք կասարելագործելու համար շունի ոչ մի ուրիշ օրինակ և կանոն, բացի իր սովորույթներից ու բարքերից: Քանզի ի ծնե իրենց կենսապայմաններից ելնելով սեփական ցանկություններն ու հայացքները որոշելու այդ արատը հատուկ է ոչ միայն հասարակ ժողովրդին, այլև գրեթե բոլոր մարդկանց: Ես պատրաստ եմ հաշտվել այն բանի հետ, որ, եթե մեր ժողովրդին վիճակվեր տեսնել Ֆարրիցիոսին կամ Լելիոսին¹, նրանց արտաքինն ու վարքը կհամարեր բարբարոսական, որովհետև նրանց հազուստն ու վարվեցողությունը չեն համապատասխանում մեր մոդային: Սակայն ինձ զայրացնում է, թե ինչպիսի բացառիկ թեթևամտությամբ են մեր մարդիկ թույլ տալիս, որ այսօրվա ճաշակները կուրացնեն ու հիմարացնեն իրենց այնքան, որ նրանք կարող են ամեն ամիս փոխել իրենց հայացքներն ու կարծիքները, եթե դա պահանջում է մոդան, և պատրաստ են ամեն անգամ իրենց մասին դատել տարբեր կերպ: Երբ նրանց բաճկոնի ճարմանդը կրծքի վրա էր, նրանք ամենահամոզիչ բառերով ապացուցում էին, թե հենց դա է ամենահարմար տեղը: Բայց ահա անցել է մի քանի տարի, այն իշել է ցած ու հիմա գրեթե ազդրերի մոտ է, և մարդիկ ծիծաղում են նախկին ձևի վրա, համարելով այն անհեթեթ ու անճոռնի: Այսօր ընդունված հագնելակերպն անմիջապես նրանց ստիպում է դատափետել

երեկվանք, ըստ որում այնպես վճռականորեն ու այնպես միահամուռ, որ, թվում է, թե նրանց համակել է ուղեղացունց մի մոլուցք:

Մեր ճաշակները փոխվում են այնքան արագ ու անակեկալ, որ ամենահնարագետ դերձակներն անգամ չեն կարող հասնել նրանց հետեւից և այդքան նորաձևություններ հորինել: Ուստի, անխուսափելիորեն ստացվում է այնպես, որ մերժված ձևերը հաճախ վերստին սկսում են վայելել համընդհանուր ճանաչում, որպեսզի շուտով կրկին արժանանան կատարյալ արհամարհանքի: Եվ ստացվում է, որ տասնհինգ-քսան տարվա ընթացքում միևնույն մարզը միևնույն առիթով ապշեցուցիչ փոփոխականություններ ու թեթևամտություններ արտահայտում է երկու կամ երեք ոչ միայն տարբեր, այլև ուղղակի հակադիր կարծիքներ: Եվ մեզանում չկա այնպիսի խոհեմ մեկը, որ տեղի շտա և ներքին, և արտաքին տեսողությունը շլացնող այդ բոլոր կերպարանափոխությունների կախարդանքի առջև:

Ես ուզում եմ այստեղ օրինակ բերել հիշողությանս մեջ պահպանված որոշ հին սովորություններ (նրանց մի մասը նման է մեր սովորություններին, մյուսը՝ տարբերվում է), որպեսզի, շարունակ տեսնելով իրերի այդ մշտական փոփոխականությունը, մենք կարողանանք այդ մասին սուսվել խոհեմ ու հիմնավոր կարծիք հայտնել:

Այն, ինչ մեզ մոտ կոչվում է թիկնոցով սուսերամարտ, հայտնի է եղել դեռևս հռոմեացիներին, ինչպես ասում է Կեսարը.

Sinistris sagae involvunt, gladiisque dstringunt.*

Նա նշում է նաև մեր սերնդի հետևյալ վատ սովորությունը, կանգնեցնել ճանապարհին հանդիպող անցորդներին, հարցուփորձ անել, թե ովքեր են, և վիրավորանք ու դժտության առիթ համարել, եթե նրանք հրաժարվում են պատասխանել³:

Ամեն անգամ ուտելուց առաջ լվացումներ կատարելիս, այնպես, ինչպես մենք ձեռքերս ենք լվանում, հները սկզբնապես լվանում էին միայն ձեռքերը մինչև արմունկները և ոտքերը, բայց հետագայում հաստատվեց այն ժամանակվա ժողովուրդների մեծամասնության մոտ դարեր շարունակ պահպանվող սովորություն՝ տարբեր խառնուրդներ ունեցող անուշաբույր ջրով լվանալ ամբողջ մարմինը, այնպես որ սովորական ջրով լվացումը համարվում էր կենցաղում մեծագույն զոհհիլության դրսևորում: Առավել նրբաճաշակներն ու փափկակյացներն օրական իրեքշորս անգամ օձանելիք էին ցանում վրաները: Հաճախ նրանք փետում

* նրանք թիկնոցը փաթաթում են ձախ ձեռքին և մերկացնում են ոտը² (լատ.):

էին իրենց ամբողջ մաշկի մազերը, այնպես, ինչպես ֆրանսիացի կանայք վերջերս սովորութիւն են դարձրել փետել հոնքերը,

Quod pectus, quod crura tibi, quod bracchia vellis*.

Թեև նույն բանի համար ունեին հատուկ քսուքներ.

Psilotro nitet, aut arida laet oblita creta**.

Նրանք սիրում էին փափուկ անկողիները և սովորական ներքնակի վրա քնելը համարում էին առանձնահատուկ դիմացկունութիւն նշան: Նրանք ուտում էին մահճում ընկողմանած, մոտավորապես մեր ժամանակվա թուրքերի նման,

Inde toro pater Aeneas sic orsus ab alto***.

Իսկ Կատոն Կրտսերի մասին պատմում են, թե Փարսալոսի ճակատամարտից հետո հասարակական գործերի վատ վիճակի պատճառով իր համար սուգ էր հայտարարել և սնվում էր նստած, քանզի առհասարակ սկսել էր դժնդակ կյանք վարել: Ի նշան հարգանքի ու ողջույնի նրանք համբուրում էին մեծամեծերի ձեռքերը, իսկ բարեկամները, բարեկիս համբուրվում էին, ինչպես անում են վենետիկցիները.

Gratatusque darem cetera dulcibus oscula verbis****.

Իսկ բարձր աստիճանավորին ողջունելիս կամ որևէ բան խնդրելիս ձեռք էին տալիս նրա ծնկին: Մի անգամ, նման պարագայում, փիլիսոփա Պասիկլեսը՝ Կրատեսի եղբայրը, շոշափեց ոչ թե ծնկները, ոչ սեռական օրգանները: Երբ այն մարդը որին դիմում էր, շեշտակի հրեց նրան, Պասիկլեսը հարցրեց. «Իսկ միթե՞ այդ մասերը քոնը չեն, ինչպես ծնկներդ»:

Մեզ նման նրանք միթզն ուտում էին ճաշից հետո:

Նրանք իրենց հեռուէքը (կարիք չկա կնօջ պես վախենալ բառերից) սրբում էին սպունգով. սրա համար է, որ լատիներենում sponsia***** բառը համարվում է անպարկեշտ: Յուպի ծայրին կապած այդպիսի սպունգի մասին խոսվում է մի մարդու պատմութիւն մեջ, որին տանում էին ժո-

* Գու փետում ես կթօրիդ, ձեռքերիդ ու ոտքերիդ մազերը⁴ (լատ.):

** Նա ամբողջապես փայլում է քսուքից, կամ, (այն) մարմնին քսելով, վրան շոր կավիճ է ցանում⁵ (լատ.):

*** Եվ այդժամ ծնող էնեասն այդպես սկսեց բարձր մահճից⁶ (լատ.):

**** Ես կհամբուրեի (քեզ), ողջունեիլով քնքուշ խոսքերով? (լատ.):

***** Սպունգ (լատ.):

դովրդի աչքի առաջ գազանների փայ դարձնելու: Նա խնդրեց իրեն թողնել արտաքնոց և, շունենալով ինքնասպան լինելու այլ հնարավորութուն, սպունգով փայտը մտցրեց իր կոկորդն ու խեղզվեց՝: Միզելուց հետո նրանք մաքրվում էին անուշաբույրով օծված բրդե լաթերով:

At tibi nil faciam, sed lecta mentula lana⁹.

Հոռմի խաշմերուկներում դրվում էին հատուկ ամաններ ու ցածրիկ դուռեր, որպեսզի անցորդները կարողանային միզել դրանց մեջ:

Pusi saepe lacum propter, se ac dolia curta
Somno devincti credunt extollere vestem*.

Օրվա հացկերույթների արանքում նրանք թեթևակի սնվում էին: Ամառանը գինիները սառեցնելու համար նրանց մոտ ձյուն էին վաճառում, իսկ ոմանք ձյունն օգտագործում էին նաև ձմռանը, դինին համարելով ոչ այնքան սառը: Ազնվատոհմ անձինք ունեին գինին լցնող և միսը կտրող հատուկ ծառաներ, ինչպես նաև իրենց զվարճացնող ծաղրածուներ: Ձմռանը ուտեստները նրանց մատուցվում էին թավաներով, որոնք դրվում էին սեղանին: Նրանք ունեին նաև շարժական խոհանոցներ (ես ինքս տեսել եմ այդպիսիք)՝ կերակուր պատրաստելու ընդհանուր հարմարութուններով. դրանք օգտագործվում էին ճանապարհորդության ժամանակ,

Has vobis epulas habete lauti;
Nos offendimur ambulante cena**.

Իսկ ամռանը նրանք հաճախ հատուկ ջրատարների միջոցով կենդանի ձկներով լի ջուր էին անցկացնում ներքնահարկ, և ներկաներն ընտրում ու իրենց ձեռքով հանում էին դուր եկած ձկները, որպեսզի պատրաստել տան ըստ իրենց ճաշակի: Չուկն այն ժամանակ էլ հարգի էր, ինչպես մինչև օրս է. աշխարհիս մեծերն անձամբ էին միջամտում ձուկ պատրաստելուն, իրենց համարելով այդ գործի գիտականեր: Եվ իրոք, համենայն դեպս իմ կարծիքով, նրա համը շատ ավելի ընտիր է, քան մսի համը: Սակայն ուզածդ շոպյության, ցոփության, քաղցրալից քմայքների, փափկակեցության ու ճոխության մեջ մենք, ճիշտն ասած, անում ենք ամեն բան, որ հավասարվենք հներին, քանզի մեր ցանկութուններն այլասերված են ոչ պակաս, քան նրանցը, բայց մենք շենք

* Փոքր երեխաները երազում հաճախ տեսնում են, թե փոսի կամ գիշերանոթի առջև բարձրացնում են իրենց շորը¹⁰ (լատ.):

** Այդպիսի ուտեստները թող վայելեն մողայամոյսները, իսկ ինձ դուր չի գալիս շորիկ ընթրիքը¹¹ (լատ.):

կարող հասնել դրան. առաքինություններով ու արատներով նրանց նմանվելու համար մեր ուժերը շեն բավարարում: Քանզի թե մեկը, թե մյուսը բխում են ոգու ամրությունից, մի բան, որ նրանք ունեին անհամեմատ ավելի շատ, քան մենք: Որքան հոգիները թույլ են, այնքան ավելի քիչ հնարավորություն ունեն վարվելու շատ լավ կամ շատ վատ:

Նրանց մոտ սեղանի շուրջ ամենապատվավոր տեղը համարվում էր կենտրոնը: Ինչպես երևում է նրանց գրական ստեղծագործություններից, առաջին կամ երկրորդ տեղը ոչ մի նշանակություն չունեին ոչ գրավոր, ոչ բանավոր խոսքում. նրանք նույնպիսի հաճույքով կասեն «Օպիոս և Կեսար», ինչպես «Կեսար և Օպիոս», «ես և դու»-ն նրանց համար միևնույնն է, ինչ «դու և ես»-ը: Ահա թե ինչու Պլուտարքոսի ֆրանսերեն թարգմանության մեջ՝ Փլամինիոսի կենսագրականում, ես նշել եմ մի տեղ, ուր հեղինակը, խոսելով էտոլիացիների ու հռոմեացիների այն վեճի մասին, թե համատեղ շահած ճակատամարտում նրանցից ով է ավելի փառաբանվել, կարծես, նշանակություն է տալիս այն բանին, որ հունական երգերում էտոլիացիներին հիշատակում էին հռոմեացիներից առաջ, եթե միայն այդ մասի ֆրանսերեն թարգմանության մեջ թույլ չի տրված ինչ-որ երկիմաստություն:

Կանայք այրերին ընդունում էին բաղնիքներում, հենց այնտեղ էլ աղամարդ ստրուկները մերսում ու օծում էին նրանց.

Inguina succinetus nigra tibi servus aluta
Stat, quoties calidis nuda loveris aquis*.

Քիչ քրտնելու համար կանայք վրաները հասուկ փոշի էին ցանում:

Սիդոնիոս Ապոլինարիոսը վկայում է, թե հին գաղերի մազերն առջևի մասում երկար էին, իսկ ծոծրակները խուզած՝ վերջերս այդ սովորությունը փոխառել է մեր փափկասուն ու նվաղուն դարը¹³:

Հռոմեացիներն ուղեորության համար նավատերերին վճարում էին նավահանգստից մեկնելիս, իսկ մենք դա անում ենք տեղ հասնելուց հետո.

dum as exigitur, dum mula ligatur,
Tota abit hora**.

* Սև գոգնոցով ստրուկն ամեն անգամ սպասարկում է քեզ, երբ դու, մերկ վիճակում, տաք ջուր ես լցնում վրադ¹² (լատ.):

** ... մինչև վճարեցինք, մինչև ջորին լծեցինք, մի ամբողջ ժամ անցավ¹⁴ (լատ.):

Կանայք պառկում էին մահճի էզրին: Ահա թե ինչու Կեսարին հոր-
ջորջել էին *spondam regis Nicomedis**.

Նրանք գինուն ջուր էին խառնում և խմում ավելի փոքր կումերով,
քան մենք.

quis puer ocius
Restinguet ardentis falerni
Pocula praetereunte lymphis***.

Մեր սպասափորների լկտի արարքները հատուկ էին նաև նրանց
ծառաններին.

O Iane, a tergo quem nulla ciconia pinsit,
Nec manus auriculas imitata est mobilis albas,
Nec linguae quantum sitiatis canis Apula tantum***.

Արգիփայցի ու հոռմեացի կանայք կրում էին սպիտակ սզաղգեստ,
ինչպես հնում անում էին մեր կանայք և, իմ կարծիքով, պետք է անեն
նաև այժմ:

Սակայն այս քաղոր բաների մասին գրվել են ամբողջ հատորներ:

Գլուխ Լ

ԴԵՄՈՎՐԻՏԻ ԵՎ ՂԵՐԱՎԼԻՏԻ ՄԱՍԻՆ

Իհասողությունք մի գործիք է, որը պիտանի է ուզածդ առարկայի
համար, և այն միջամտում է ամենուր: Ուստի, իմ փորձերում ես նրանից
օգտվում եմ քուրք դեպքերում: Եթե խոսքն ինձ անհասկանալի առար-
կայի մասին է, ես դատողությանն եմ դիմում հենց նրա համար, որ հեռ-
վից որոնեմ ծանծաղուտը և, գտնելով, որ այն իմ հասակի համար շա-
փազանց խորն է, աշխատում եմ ամփին մոտ մնալ: Բայց արդեն այն
բանի ըմբռնումը, որ անցումն անհնար է, դատողության արդյունք է,
լստ որում այն արդյունքներից մեկը, որոնցով դատելու ունակությունը
կարող է ամենից ավելի հստատանալ: Ուրեմն, ես վերցնում եմ մի սին

* Նիկոմեդես արքայի մահճի եզր¹⁵ (լատ.):

** ... ուրիշ ո՞ր տղան կողքով հոսող աղբյուրի ջրով ավելի շուտ կպաղեցնի բոցեղեն
ֆալեոնի գավաթները¹⁶ (լատ.):

*** Ո՞հ Յանուս! Ոչ ոք չէր կարող քո զխաղերում ցույց տայն անգիր, կամ ձեռքի
արագ շարժումով՝ էջի տկանջներ, կամ խմել ցանկացող ապուլական շան լեզվի պես եր-
կար լեզու¹⁷ (լատ.):

ու շնչին առարկա և փորձում հիմնավորել, մտորելով, թե ինչպես կարելի է այն պաշտպանել ու հաստատել: Երբեմն էլ դատում եմ մի վեհ ու հաճախակի հետազոտված առարկայի մասին, այս դեպքում սեփական ոչինչ չես գտնի՝ ճանապարհն այնքան է տրորված, որ կարելի է գնալ միայն ուրիշների հետքերով: Եվ դատողի խաղն այն է, որ ընտրի իրեն լավագույնը թվացող մի ճանապարհ և հաստատի, որ անհրաժեշտ է հազարավոր արահետներից ընտրել մեկը կամ մյուսը: Ես բախտաբերի վերջնում եմ առաջին պատահած սյուժեն: Երանք բոլորք միատեսակ լավն են: Եվ երբեք չեմ աշխատում մինչև վերջ սպառել իմ սյուժեն, քանզի ոչ մի րանը չեմ կարող ընդգրկել ամբողջովին, և կարծում եմ, դա չի հաջողվում նաև այն մարդկանց, ովքեր մեզ խոստանում են ցույց տալ այդ ամբողջը: Յուրաքանչյուր առարկա բաղկացած է բազմաթիվ մասերից ու կողմերից, և ես ամեն անգամ վերջնում եմ գրանցից մեկը, որ զննեմ կամ թեթևակի շոշափեմ, թեև երբեմն նաև խորամուխ եմ լինում նրանում: Ես հնարավորին շափ ձգտում եմ ոչ այնքան ընդարձակվել, սրբան խորանալ, և երբեմն ինձ դուր է գալիս իրերին նայել ոչ սովորական տեսանկյունով: Եթե ես ինձ ավելի վատ ճանաչեի, դուցե և կփորձեի հանգամանորեն հետազոտել որևէ հարց: Ես այստեղ մի խոսք եմ ասում, այնտեղ՝ մեկ ուրիշ. կցկատուր, սերտ կապից դուրկ խոսքեր, շնչելով իմ առջև ոչ մի խնդիր և շխոստանալով ոչինչ: Այսպիսով, ես ինձ չեմ պարտավորեցնում հետազոտել իմ առարկան մինչև վերջ կամ թեկուզ մշտապես կառչած մնալ նրան, այլ շարունակ անցնում եմ մեկից մյուսին, իսկ երբ ցանկության եմ ունենում, համակվում եմ կասկածներով, անվստահությամբ և նրանով, ինչն ինձ առանձնապես հատուկ է՝ սեփական անգիտությանս գիտակցումով:

Մեր յուրաքանչյուր շարժումը բացահայտում է մեզ: Կեսարի հոգին, որը Փարսալոսի ճակատամարտում երևաց ռազմական արվեստում, դրսևորվեց նաև պարապ ժամանցի և սիրային արկածներում: Զիու մասին մենք պետք է դատենք ոչ միայն նրա սրարշավ վարողով, այլև քայլքով և նույնիսկ վարքով, երբ հանգիստ կանգնած է մսուրի մոտ:

Մարդկային հոգու գործունեության մեջ կան նաև ստոր բաներ. ով չի տեսնում նրա այդ կողմը ևս, չի կարող ասել, թե մինչև վերջ գիտե հոգին: Եվ պատահում է, որ մարդկային հոգին ամենից դյուրին է ճանաչել, երբ այն հանգիստ է: Քանզի փոթորկուն կրքերով ամենից հաճախ համակվում են նրա առավել վսեմ դրսևորումները: Ի լրումն, այն ամբողջովին անձնատուր է լինում իրեն հուզող յուրաքանչյուր առարկային, տալիս է իր բոլոր ուժերը, երբեք չի տարվում միանգամից երկու առարկայով և միշտ, ելնելով ոչ թե առարկայի, այլ իր սեփական

էությունից, պարզորոշ տեսնում է լոկ այն, ինչը տվյալ պահին ձգում է իրեն: Իրենից դուրս գտնվող բաները, գուցեև, ունեն իրենց կշիռը, իրենց շահանիշները, իրենց առանձնահատկությունները, սակայն մեր ներսում, մեր հոգեկան ըմբռնման մեջ, մենք դրանք վերափոխում ենք մեր ձևով: Մահը Ցիցերոնի համար սոսկալի է, Կատոնի համար՝ ցանկալի, Սոկրատեսի համար՝ ոչինչ չարժող բան: Առողջությունը, գիտակցությունը, իշխանությունը, գիտությունը, հարստությունը, գեղեցկությունը և դրանց հակադիր ամեն ինչ մեր հոգու շեմքին հանում են իրենց զգեստը և նրանից ստանում իրեն ամենից դուրեկան գույնի հագուստ. դարչնագույն, կանաչ, բաց, մուգ, վառ, նուրբ, խոր, մակերեսային: Ըստ որում, ամեն ոք դատում է յուրովի, քանզի իրար հետ չեն համաձայնեցնում իրենց ոճը, կանոններն ու ձևերը. յուրաքանչյուրն ինքն է իր տերը: Ուստի, եկեք չվկայակոչենք իրերի արտաքին հատկանիշները. մենք ինքներս դրանք պատկերացնում ենք այդպիսին, այլ ոչ թե ուրիշ կերպ: Մեր երջանկությունը կամ դժբախտությունը կախված են հենց մեզանից:

Ահա թե ում, այլ ոչ թե ճակատագրին պետք է գիմել ընծաներով ու երգումներով: Մեր բարքերը կախված չեն ճակատագրից, ընդհակառակը, այն տանում են իրենց հետևից և ըստ իրենց պատկերի ու նմանության տալիս են այս կամ այն կերպարանքը: Մի՞թե ես չեմ կարող կարծիք կազմել Ալեքսանդրի մասին, հիմք ընդունելով այն, թե ինչպես է իրեն պահում սեղանի շուրջ, ինչպես է զրուցում ու խմում, կամ ինչպես է շախմատ խաղում: Այդ փուլ մանկական խաղը դիպչում էր նրա հոգու բոլոր լարերին: Անձամբ ես տանել չեմ կարող այն և ամեն կերպ խուսափում եմ հենց նրա համար, որ շախմատն այնքան էլ խաղ չէ և շահագանց լրջորեն է կլանում մեզ, ես ամաչում եմ դրան հատկացնել այդքան ուշադրություն, որը հարկ է նվիրել ավելի լավ բանի: Ալեքսանդրը Հնդկաստան կատարելիք արշավանքը ծրագրելիս, կամ մեկ ուրիշ մեծ մարդ, փնտրելով այն ուղին, որից կախված է մարդկության փրկությունը, այդքան գլուխ չէին կոտրում: Տեսեք, թե ինչպես է մեր հոգին նշանակություն ու իմաստ տալիս այդ ծիծաղելի խաղին, ինչպես են լարվում մեր բոլոր ջղերը և ինչպես դրա շնորհիվ այն ուզածդ մարդուն հնարավորություն է տալիս ճանաչել իրեն և անմիջականորեն դատել իր մասին: Ի՞նչ կրքեր ասես, որ չեն բորբոքվում այդ խաղի ժամանակ: Զայրույթ, սրտնեղություն, ատելություն, անհամբերություն և հողթանակի բուռն, սնափառ ձգտում մի մրցախաղում, ուր անհամեմատ ավելի ներելի կլինեք պարտությանը հպարտանալը, քանզի օրինավոր մարդուն անվայել է միջակ մակարդակը գերազանցող բացառիկ

ընդունակութիւններ ունենալ այդպիսի շնչին բանում: Այն, ինչ ես ասում եմ այս օրինակի առթիւ, կարելի է ասել ուղածո ուրիշ օրինակի մասին: Յուրաքանչյուր մանրուք, յուրաքանչյուր զբաղմունք լիովին մատնում է մարդուն և ամբողջ հասակով ցույց տալիս նրան, ինչպես և ամեն մի ուրիշ հասարակ բան:

Դեմոկրիտն ու Հերակլիտը երկու փիլիսոփաներ են, որոնցից առաջինը, մարգու ճակատագիրը համարելով շնչին ու ծիծաղելի, մարդկանց մոտ երևում էր ոչ այլ կերպ, քան ծաղրական ու ժպտացող գեմքով: Ընդհակառակը, Հերակլիտը, որի մոտ մարդկային նույն ճակատագիրը հարուցում էր գուժ ու կարեկցանք, միշտ տխուր դեմք և արտասովալից աչքեր ունէր.

alter

Ridebat, quoties a limine moverat unum

Protuleratque pedem; flebat contrarius alter*.

Առաջինի տրամագրութիւնն ինձ ավելի է դուր գալիս. ոչ թե նրա համար, որ ծիծաղելը լաց լինելուց հաճելի է, այլ այն պատճառով, որ նրանում մարդկանց նկատմամբ ավելի շատ արհամարհանք կա, և այն ավելի խիստ է դատապարտում մեզ, քան երկրորդի տրամագրութիւնը, իսկ ինձ թվում է, թե չկա մի արհամարհանք, որին մենք արժանի չլինենք: Գուժ ու կարեկցանքի հետ միշտ առկա է որոշ հարգանք այն բանի նկատմամբ, ինչը հարուցում է դրանք, իսկ այն ամենին, ինչի վրա ծիծաղում են, ոչ մի նշանակութիւն չեն տալիս: Ես չեմ կարծում, որ մեզանում լինի նույնքան շատ նենգամտութիւն, որքան ունայնութիւնն է, և նույնքան շատ շարութիւն, որքան հիմարութիւնն է. մեզանում ավելի քիչ ոխ կա, քան անխոհեմութիւն: և մենք այնքան նողկալի չենք, որքան շնչին: Այսպես, Դիոգենեսը, որը պարապ միայնութիւն մեջ տակառ էր գլորում ու քիթը շուռ տալիս մեծն Ալեքսանդրից, և մեզ համարում էր ինչ-որ ճանճեր կամ օգով լի պղպշակներ, ավելի թունոտ ու դաժան, հետևաբար նաև, իմ կարծիքով, ավելի արդարամիտ դատավոր էր, քան Տիմոնը, որին մարդատյաց էին հորջորջել²: Քանզի եթե մենք մի բան ատում ենք, կնշանակի, սրտներիս մոտ ենք ընդունում դա: Տիմոնը մեզ շարիք էր կամենում, կրքոտութիւնամբ տենչում էր մեր մահը և խուսափում մեզանից որպես վտանգավոր, շարաղետ ու այլասերված էակներ: Իսկ Դիոգենեսը մեզ բանի տեղ չէր դնում, մեզ հետ շփումը չէր կարող ոչ հուզել նրան, ոչ փոխել տրամագրութիւնը, նա չէր կամե-

* Հենց նրանք դուրս էին գալիս տան շնչից, մեկը ծիծաղում էր, մյուսն, ընդհակառակը, լաց լինում (լատ.):

նում մեզ հետ գործ ունենալ ոչ թե ինչ-որ երկյուղից, այլ մեր հասարակութեան նկատմամբ ունեցած արհամարհանքից, համարելով, թե ընդունակ չենք ոչ բարի, ոչ շար գործերի:

Այդպիսին էր նաև Ստատիլիոսի պատասխանը Բրուտոսին, որը նրան հորդորում էր միանալ Կեսարի դեմ ծրագրվող դավադրութեանը. նա այդ հղացումը համարեց արդարամիտ, բայց չէր տեսնում արժանի մարդիկ, որ հանուն նրանց դույզն ինչ ջանք թափեր: Այստեղ նա հետևում էր Հեղեսիասի³ ուսմունքին, որը պնդում էր, թե իմաստուն մարդը պետք է հող տանի միայն իր մասին, քանզի միայն նա է արժանի, որ իր համար որևէ բան արվի. ինչպես նաև Թեոդորոսի⁴ ուսմունքին, որը գտնում էր, թե անարպարացի կլինեն, եթե իմաստունն իրեն վտանգեր հանուն հայրենիքի բարօրութեան և հարվածի տակ դնելու իմաստությունը հանուն խելագարների:

Մեր բնատուր և ձեռք բերվի հատկանիշները նույնքան անհեթեթ են, որքան և ծիծաղելի:

Գլուխ ԼԷ

ԲԱՌԵՐԻ ՈՒՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անցյալ ժամանակների մի հոնտոր ասում էր, թե իր արվեստը փոքր բաները մեծ ցույց տալն է: Մեծ ոտնամանները փոքր ոտքին հարմարեցնելը կռչկակարի հունարն է: Սպարտայում նրան կխարազանեին, որ արհեստ է դարձրել սուտն ու խաբեությունը: Կարծում եմ, Արքիդամոսը, որը Սպարտայի թագավորն էր, զարմանքով է լսել Թուկիդիդեսի պատասխանն՝ իր այն հարցին, թե ով է մեծամարտում ավելի ուժեղ՝ ինքը թե Պեթիկլեար: «Քա,— ասել է Թուկիդիդեսը,— դժվար կլինենր ստուգել, քանզի եթե ես նբան գետին տապալելի, նա կկարողանար հանդիսատեսներին համոզել, թե ինքը չի ընկել, այլ հաղթել է»: Նրանք, ովքեր ձեռնիոխում ու թեթևակի ներկում են կանանց գեմքը, ավելի քիչ վնաս են հասցնում, քանզի նրանց բնական կերպարանքը շտճանելը մեծ կորուստ չէ: Անհամեմատ ավելի վնասակար են այն մարդիկ, որոնք փորձում են խաբել ոչ թե մեր աչքերը, այլ միտքը, և խեղաթյուրում ու աղավաղում են իրերի խսկական էությունը: Այն պետությունները, որոնցում խիստ կարգ ու կանոն էր տիրում, ինչպես, օրինակ, Կրետեն ու Լեզբոզիմոնը, հռեասրնեթին մեծ նշանակություն չէին տալից: ...»

Արիստոնն² իմաստուն կերպով հոնտորությունը բնորոշում է որպես ժողովրդին համոզելու արվեստ, Սոկրատեսն ու Պլատոնը՝ որպես շողո-

քորթելու և խաբելու արվեստ³, իսկ նրանք, ովքեր հերքում են այդպիսի ընդհանուր բնորոշումը, դրա ճշտությունը հաստատում են իրենց մասնավոր խրատներում:

Մահմեդականներն արգելում են իրենց երեխաներին սովորեցնել հոե-տորություն, նկատի առնելով նրա անօգտակարությունը: Իսկ աթենացիները, որոնց մատ այն շատ հարգի էր, նկատելով, թե որքան կործանարար է նրա ազդեցությունը, գրավար հրաման տվեցին հոետորու-թյունից հանել ամենագլխավորը՝ ներածությունները, եզրակացություն-ները և այն ամենը, ինչը հուզմունք է հարուցում:

Ամբոխը հուզելու և անկարգ համայնքը կառավարելու համար հնա-րած այդ միջոցը, դեպքի նման, կիրառվում է միայն անառողջ պետա-կան օրգանիզմներում: Հոետորները շատացել են այնտեղ, ուր հասարակ ժողովուրդը, տգետները և առհասարակ բոլորն անխտիր իշխանություն ունենին, ինչպես, օրինակ, Աթենքում, Հոռոսում, Հռոմում, ուր հասարա-կական ողջ կյանքը բուռն էր: Եվ իրոք, այդ պետություններում կային սակավաթիվ ազդեցիկ անձինք, որ առաջ քաշված լինեին առանց ճար-տասանության օգնության. դրա շնորհիվ, ի վերջո, բարձրագույն պաշ-տոնների հասան այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Պոմպեոսը, Կեսարը, Կրասոսը, Լուկուլլոսը, Լենատուսը, Մետելլոսը⁴, և, հակառակ լավագույն ժամանակների հայացքների, այն նրանց օգնեց ավելի շատ, քան զենքի ուժը: Քանզի Լուցիոս Վուլումնիոսը, հրապարակավ հանդես գալով Քվինտոս Փաբիոսին և Պուբլիոս Դեցիոսին կոնսուլներ ընտրելու օգտին, ասաց. «Նրանք պատերազմի համար ծնված այրեր են, մեծ գործիչներ, անո-ղոք են բանավոր գոտեմարտում, իսկական կոնսուլի խելք ունեն, նրբա-ճաշակ, պերճախոս և ուսյալ այդ մարդիկ արդարադատությունը անօրի-նոզ պրետորներ լինելու համար են»:

Պերճախոսությունը Հռոմում ծաղկում էր առավելապես այն ժամա-նակ, երբ նրա գործերը վատթարագույն վիճակում էին, երբ մոլեղնում էին քաղաքացիակոտ պատերազմի փոթորիկները, այնպես, ինչպես ան-մշակ ու լքված դաշտում ամենից փարթամ աճում են մոլախոտերը: Սրանից կարելի է եզրակացնել, որ միապետական երկրներն ավելի քիչ կարիք ունեն պերճախոսության, քան բոլոր մյուսները: Քանզի սմբոխին հատուկ է հիմարությունն ու թեթևամտությունը, որի հետևանքով, զե-ղեցիկ, քաղցրահունչ բառերից գմայլված և իրերի բուն իմաստը բանա-կանությամբ ստուգելու և ճանաչելու անընդունակ, նա թույլ է տալիս իրեն տանել ուր կամենաք: Նու անում եմ, նման թեթևամտության հետ խաղալն այնքան էլ հեշտ չէ, երբ խոսքը վերաբերում է մեկ մարդու, որին ավելի հեշտ է լավ դաստիարակությամբ ու բարի խորհուրդներով

զերծ պահել այդ թուլնից: Զուր չէ, որ Մակեդոնիայից կամ Պարսկաստանից ոչ մի նշանավոր հոետոր դուրս չի եկել:

Բոլոր ասածներս իմ մտքում հասունացել են կարդինալ Կարաֆայի մոտ՝ մինչև նրա մահը որպես սպասավորների պետ ծառայած մի իտալացու հետ վերջերս ունեցած խոսակցութիւնից հետո: Ես նրան խնդրեցի պատմել իր վարած պաշտոնի մասին: Նա լրջմտորեն ու գիտնականի պես հանգամանորեն մի ամբողջ ճառ արտասանեց ըմպանը գոհացնելու այդ գիտութեան մասին, կարծես աստվածաբանական մի կարևոր դրույթ էր պարզարանում ինձ: Նա բացատրեց ախորժակների տարբերութիւնը, թե մարդու մոտ ինչպիսին է այն սոված ժամանակ, ինչպիսին է երկրորդ, երրորդ ճաշատեսակներից հետո, թվարկեց այն միջոցները, որոնցով կարելի է կամ պարզապես թավարարել, կամ գրգռուել ու բացել ախորժակը, մանրամասն նկարագրեց սոուսները՝ սկզբից ընդհանուր գծերով, իսկ ապա առանձին-առանձին, կանգ առնելով բազադրիչ մասերի հատկութիւնների և դրանց ազդեցութեան վրա, թվարկեց տարբեր սալաթներ՝ կախված տարվա եղանակից, պատմեց, թե գրանցից որը պետք է տաքացնել, որը լավ է մատուցել սառը վիճակում, ինչպես դրանք զարդարել ու գեղեցկացնել, որպեսզի տեսքը նույնպես հաճելի լինի: Այնուհետև նա սկսեց մանրամասն խոսել ուտեստների մատուցման կարգի մասին, արտահայտելով բազում հիանալի ու կարևոր նկատառումներ.

nec minimo discrimine refert
Que gestu lepores, et quo gallina secetur*.

Եվ այս ամենը պատմեց այնպիսի գեղեցիկ ու փքուն արտահայտութիւններով, ինչպիսիք օգտագործում են, խոսելով որևէ կայսրութեան կառավարման մասին: Այդ մարդը հիշողութեանս մեջ արթնացրեց հետևյալ տողերը.

Hoc salsum est, hos adustum est, hoc lautum est parum,
Illud recte: iterum sic memento; sedulo
Moneo quae possum pro mea sapientia.
Postremo, tanquam in speculum, in patinas, Demea,
Inspicere iubeo, et moneo quid facto usus sit**.

* ... և բնավ էլ միևնույնը չէ, թե ինչպես պետք է կտրատել հավը կամ նապաստակը⁶ (լատ.):

** «Սա աղի է, սա խանձահամ է, սա շափազանց լոր է ստացվել, իսկ ահա այս մեկը լավ է պատրաստած, դե հիշիր, որ մյուս անգամ էլ այսպես անես»: Հենց այսպէս շանադրաբար, իմ հասկացողութեան լափով սովորեցնում եմ նրանց: Մի խոսքով, Գեմնա,

Սակայն, նույնիսկ հույները շատ էին գովում այն շքեղ խնջույքի կարգն ու կանոնը, որ կազմակերպեց Պողոս Էմիլիոսը՝ Մակեդոնիայից վերադառնալուց հետո, բայց այստեղ ես խոսում եմ ոչ թե հարցի էության, այլ խոսքերի մասին:

Զգիտեմ ուրիշներն ինչպես, բայց երբ ես լսում եմ մեր ցուցամուշ ճարտարապետների ճոռոմ խոսքերը, որմասյուն, քովթար, քիվ, կորընթոսական ու դորիական սյունակարգ, և նրանց ժարգոնում եղած նման բաներ, երևակայությանս մեջ պատկերանոյժ է Ապոլիդոնեսի դղյակը⁹, իսկ իրականում ես այստեղ տեսնում եմ միայն իմ խոհանոցի դռան խղճուկ տախտակները:

Դուք լսո՞ւմ եք, թե ինչպես են արտասանում փոխանունություն, փոխաբերություն, այլաբանություն բառերն ու քերականական մյուս անվանումները, և ձեզ չի՞ թվում արդյոք, որ այդպիսով նշվում են արտասովոր, հատկապես պաճուճազարդ խոսքի ձևերը: Իսկ չէ որ դրանք կարող են կիրառվել նաև ձեր սպասուհու շաղակրատանքի նկատմամբ:

Ճիշտ նույնպիսի խաբեություն է մեր պետական պաշտոններին գեղեցիկ հոռմեական անվանումներ տալը, թեև կատարվող պարտականությունների բնույթով մեր պաշտոնները շատ քիչ ընդհանուր բան ունեն հոռմեականների հետ, իսկ իշխանության ու զորության շափերով՝ ավելի պակաս: Նշեմ ևս մի խաբեություն, որն, իմ կարծիքով, երբևէ կբերվի իբրև մեր ժամանակի բացառիկ մտավոր սահմանափակության ապացույց՝ այն է, առանց որևէ հիմքի ամեն մարդու կպցնել փառավոր մականուններ, որոնցով հներն ամբողջ հարյուրամյակների ընթացքում մեծարում էին մեկ-երկու նշանավոր մարդու «Աստվածային» մականունը Պլատոնին տրվել է համընդհանուր ճանաչմամբ, և ոչ ոք այն չի վիճարկի: Սակայն իտալացիները, որոնք ոչ առանց հիմքի կարող են պարծենալ, որ իրենց միտքն ավելի զարգացած է, իսկ դատողություններն ավելի խոհեմ են, քան մեր օրերի մյուս ժողովուրդներինը, վերջերս այդ մակաունունով մեծարեցին Արետինոյին¹⁰, որն, ըստ իս, ոչնչով բարձր չէ իր ժամանակվա գրողների միջին մակարդակից, եթե շհաշվենք նրա վերամբարձ ու սուր, նրբագեղությունից ոչ զուրկ, բայց անրնական ու շինծու ոճը, ինչպես նաև՝ սովորական պերճախոսությունը, սակայն «աստվածային» (այն իմաստով, ինչ հները տալիս էին բառին) լինելուց նա հեռու է: Իսկ «մեծ» մականունը մենք հաճախ կպցնում ենք այն թաղավորներին, որոնք ամենևին էլ բարձր չեն ուղածդ միջակ մարդուց:

եւ նրանց հրամայում եմ կաթսայի մեջ նայել, ինչպես հայելու, և սովորեցնում եմ այն ամենը, ինչ պետք է արվի? (լատ.):

ՀՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աֆրիկայում հոռմեական գործերի հրամանատար Ատիլիոս Ռեզուլոսն՝ իր փառքի և կարթագենցիների նկատմամբ հաղթանակների ամենաեռուն շրջանում հանրապետութայանը դիմեց մի նամակով, որում հայտնում էր, թե այն ծառան, որին հանձնարարել էր տնօրինել յոթ արպան հողատարածություն ունեցող իր կալվածքը, փախել է, հետը տանելով երկրագործական գործիքները, ուստի Ռեզուլոսն արձակուրդ էր խընդրում վերադառնալու և իր տնտեսությունը կարգի բերելու համար, քանզի վախենում էր, թե իր կինն ու երեխաները կարող էին տուժել դրանից։ Սենատը հոգաց, որ Ռեզուլոսի կալվածքն ուղարկվի մեկ ուրիշ կառավարիչ, հրամայեց հատուցել Ռեզուլոսի բոլոր վնասները և, բացի այդ, կարգադրեց, որ նրա կինն ու երեխաները ապրուստի միջոցներ ստանան պետությունից։

Կատոն Ավագը, կոնսուլի պաշտոն դրադեցնելու նպատակով Իսպանիայից վերադառնալիս, վաճառեց իր ձին, ցանկանալով խնայել այն դրամը, որ պիտի վճարեր նրան ծովով Իտալիա փոխադրելու համար։ Սարդինիայի կառավարիչ եղած ժամանակ նա իր բոլոր գործերը կատարում էր հետիոտն, հանրապետությունից ոռճիկ ստացող միայն մեկ սպասավորի ուղեկցությամբ, որը նրա հետևից տանում էր պատմուճանն ու զոհեր մատուցելու համար նախատեսված անոթը, թեև, ավելի հաճախ, նա իր բեռը ինքն էր տանում։ Նա պարծենում էր, թե երբեք տասն էկյուից թանկ արժող հագուստ չի կրել, և երբեք շուկայում օրական տասը սուից ավելի չի ծախսել, պարծենում էր նաև, թե իր գյուղական տներից ոչ մեկը դրսից սվաղած ու սպիտակեցրած չի եղել։ Երկու հաղթանակ տոներուց և երկու անգամ կոնսուլ ընտրվելուց հետո Սկիպիոն էմիլիանոսն² ընդամենը յոթ ծառայի ուղեկցությամբ մեկնեց դավառ որպես լեգատ։ Պնդում են, թե Հոմերոսը երբեք մի ծառայից ավելի չի ունեցել, Պլատոնը՝ երեք, իսկ Զենոնը՝ ստոիկյան դպրոցի զխավորը, չի ունեցել նույնիսկ մեկը։

Երբ Տիբերիոս Գրակքոսը, որն այն ժամանակ առաջինն էր հոռմեացիներից, մեկնում էր հանրապետության գործերով, նրան ոռճիկ էին նշանակում ընդամենը օրական հինգուկես սու։

ԿԵՍԱՐԻ ԱՒ ԱՍՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Եթե մենք գտնե երբեմն հաճույք գտնեինք մեզ զննելու մեզ, և այն ժամանակը, որ վառնամ ենք ուրիշներին դիտելու և մեզ չվերաբերող բաներին ծանոթանալու վրա, օգտագործեինք ինքներս մեզ ուսումնասիրելու համար, ապա իսկույն կհասկանայինք, թե որքան անհուսալի ու փխրուն շինվածք է մեր «ես»-ը: Մի՞թե անկատարության զարմանալի վկայություն չէ որևէ բանով հարկ եղածին պես գոհանալու մեր անկարողությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ անգամ ցանկությամբ ու երևակայությամբ մենք ի վիճակի չենք ընտրել մի բան, որն ամենից անհրաժեշտ է մեզ: Այդ մասին պարզորոշ վկայում է երկու փիլիսոփաների մշտնջենական կատաղի վեճը՝ թե ինչն է մարդու համար գերագույն քարիք, որք տակավին շարունակվում է և կշարունակվի հավերժ, շարունակվա՞նք չլուծում, ոչ հաշտություն,

*cum abest quod avemus, id exsuperare videtur
Cetera; post aliud cum contigit illud avemus,
Et sitis aequa tenet*.*

Ինչի հետ էլ ծանոթանանք, ինչից էլ հաճույք վայելենք, միշտ զգում ենք, որ դա մեզ չի տոհայություն և ազահորին ձգտում ենք դեպի ապագան, դեպի անհայտը, բանցի տերկան մեզ չի հագեցնում. իմ կարծիքով, ոչ թե նրա հատար, որ այն շունի հագեցնող ոչինչ, այլ այն պատճառով, որ հատենապես մեր բուն երանելիներն անառողջ են ու անկանոն.

Nam, cum vidit hic, ad usum quae flagitat usus,
Omnia iam ferme mortalibus esse parata,
Divitiis homines et honore et laude potentes
Affluere, atque bona natorum excellere fama,
Nec minus esse domi cuiquam tamen anxia corda,
Atque animum infestis cogi servire querelis:
Intellexit ibi vitium vas efficere ipsum,
Omniaque illius vitio corrumpier intus,
Quae collata foris et commoda quaeque venirent**.

* ... քանի դեռ մենք չունենք այն, ինչին ձգտում ենք, մեզ թվում է, թե այդ բանը գերազանցում է ամեն ինչին, բայց ձեռք բերելով, մենք սկսում ենք նույնպիսի կյանքով զարմանալ ինչ-որ ուրիշ բան! (լատ.):

** Երբ նա (Էպիկուրը) տեսավ, որ մահկանացուներն ունեն անհրաժեշտ պեթե ամեն բան և նույնիսկ նրանք, ովքեր հարուստ են, մեծարված ու հարգված և ծնող և բարի

Մեր փափագն անկայուն է և անհուսալի. այն ի վիճակի չէ ոչինչ պահել, ի վիճակի չէ թույլ տալ, որ մի բանով հարկ եղածին պես գոհանանք: Մարդը, կարծելով, թե պակասը բուն իրերի մեջ է, սկսում է կլանել ու հափշտակել ուրիշ այնպիսի բաներ, որոնք մինչ այդ չի ճանաչել, որոնց դեռևս չի ծանոթացել, նա իր ցանկություններն ու հույսերը նպատակամղում է դրանց, հարգում ու մեծարում գրանք, ինչպես այդ մասին ասել է Կեսարը.

Communi fit vitio naturae ut invisis, latitantibus atque incognitis rebus magis confidimus, vehementiusque exterreamur*.

Գլուխ IV

ՍԻՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաճախ մարդիկ փորձում են հավանության արժանանալ թեթևամիտ, սին հնարքների միջոցով: Այդպես են այն բանաստեղծները, որոնք հորինում են նույն տառով սկսվող տողերից բաղկացած երկարաշունչ ստեղծագործություններ, նույն կերպ հնում հույներն իրենց բանաստեղծությունների համար շափ ընտրելիս տողերը երկարացնում կամ կրճատում էին այնպես, որ դրանց զուգակցումից գոյանային պատկերներ՝ ձվաձև, գնդաձև, թևանման, կացին հիշեցնող, այդպիսին էր նաև այն մարդու իմաստնությունը, որը տարվել էր այբուբենի տառերը տարբեր կերպ դասավորելով ու հաշվելով, և, ի վերջո, հայտնաբերել, ինչպես պատմում է Պլուտարքոսը, որ նման համակցություններն անասելի շատ են: Ես ճիշտ եմ համարում նման բաների մասին այն մարդու կարծիքը, որին ցույց տվեցին կորեկի հատիկը ասեղի ծակով նետող մի վարպետի, երբ այդ մարդուն խնդրեցին որևէ պարզև շնորհել նման բացառիկ արվեստի համար, նա տվեց զվարճալի և, իմ կարծիքով, միանգամայն ճիշտ հրաման՝ վարպետին նվիրել երկու-երեք շափաման կորեկ, որ նա կարողանա ուզածին շափ հմտանալ իր սքանչելի արվեստում²: Եվ մեր բանականության անզորության ապշեցուցիչ վկայությունն այն է, որ

Համրավ վայելող որդիների, այնուամենայնիվ հոգում ու սրտում տանջալից տազնաղ են կրում, իսկ նրանց հոգին ակամայից անձնատուր է լինում դառնադեմ գանգատների, նա հասկացավ, որ ամբողջ շափքը հենց անոթի մեջ է, որը ինչ-որ վնասվածք ունի և փշացնում է իր մեջ լցվող ամենաթանկարժեք հեղուկը² (լատ.):

* Այսպիսին է մեր էությունը բնորոշող արատը. անտեսանելի, թաքուն և չճանաչված բաները մեղանում ծնում են թե՛ ավելի մեծ հավատ, թե՛ ավելի սաստիկ վախ³ (լատ.):

ամեն բան գնահատում է բացառիկության ու նորության, ինչպես նաև սակավ մատչելիության տեսանկյունով, թեկուզ ինքնին այն ոչ մի լավ ու օգտակար բան չպարունակի:

Վերջերս իմ տանը մենք խաղում էինք մի խաղ, թե ով ավելի շատ կգտնի երկու միանգամայն հակառակ նշանակություն ունեցող բառեր, ինչպես, օրինակ, *sire* -ը, որը մեր պետության ամենաբարձր անձնավորությանը՝ թագավորին շնորհվող տիտղոսն է, բայց կիրառելի է նաև հասարակ մարդկանց, օրինակ առևտրականների հասցեին, սակայն, չի վերաբերում միջանկյալ դիրք ունեցող անձանց: Բարձրաստիճան կնոջն անվանում են *dame*, միջին դասին պատկանող կնոջը՝ *demoiselle*, իսկ ամենաստորին դասից սերող կանանց՝ դարձյալ *dame*: Սեղանների վերևում հովանի թույլատրվում է միայն թագավորական տոհմի անձանց և պանդոկներում:

Դեմոկրիտը պնդում էր³, թե աստվածներն ու գազաններն ավելի դյուրազգաց են, քան մարդիկ, որոնք այդ առումով միջակ մակարդակի են: Հոռմեացիները սգո և տոնական օրերին միատեսակ զգեստ էին կրում: Հաստատապես ապացուցված է, որ սաստիկ վախն ու անվեհերության թունդ բռնկումը միատեսակ առաջացնում են ստամոքսի խանգարում և լուծ:

Նավարայի տասներկուերորդ թագավոր Սանչոյի ստացած «դողդոջուն» մականունն ապացուցում է, որ համարձակությունը վախի նման մեզ ստիպում է դողալ: Մի անգամ, իրենց տիրոջ ասպազենքը հագցնելիս տեսնելով նրա դողը, ծառաները փորձեցին քաջալերել նրան և սկսեցին նվազեցնել վերահաս վտանգը, բայց նա ասաց. «Դուք ինձ լավ չեք ճանաչում: Եթե մարմինս իմանար, թե հիմա ուր է տանելու իմ քաջությունը, մահվան սարսուռից գետին կզլորվեր»:

Վեներայի խաղերի նկատմամբ անտարբերության և զզվանքի հետևանքով մեզ տիրող թուլությունն առաջանում է նաև շափից դուրս ցանկություններից և անզուսպ կրքից: Սաստիկ ցուրտն ու սաստիկ շողը կարող են խաշել ու տապակել: Արիստոտելը պնդում է, թե կապարի ձուլակտորները ցրտից ու ձմեռային սառնամանիքներից փափկում ու հալչում են այնպես, ինչպես թեժ կրակից⁴: Տարփանքն ու գերհագեցումը հավասարապես տանջում են և այն ժամանակ, երբ տակավին չենք հասել բավականության, և այն ժամանակ, երբ անցել ենք նրա սահմանները: Մարդուն հասած գառնություններում հիմարությունն ու իմաստնությունը միավորվում են նույն զգացումի և նույն վերաբերմունքի մեջ. իմաստուններն արհամարհում և անտեսում են այն, իսկ հիմարները

չեն գիտակցում, վերջիններս, եթե կարելի է այսպես ասել, չեն հասել այդ մակարդակին, իսկ առաջիններն անցել են: Իմաստունները, լավ կշռադատելով ու զննելով մեր դժբախտությունների բնույթը, շահելով դրանք և քննության առնելով դրանց բուն իմաստը, հուժկու և քաջարի պոռթկումով վեր են կանգնում դրանցից՝ քամահրում ու ոտնահարում են, քանզի ունեն այնպիսի ուժեղ ու անսասան ոգի, որ շար բախտի նետերը, դիպչելով նրան, ասես կարծր մարմնի, որի մեջ մխրձվելն անհնար է, անխուսափելիորեն հետ կթռչեն ու կբթանան: Սովորական, միջակ մարդիկ այդ երկու ծայրահեղությունների արանքում են՝ նրանք գիտակցում, զգում են իրենց դժբախտությունները, բայց դրանք կրելու ուժ չունեն: Մանկությունն ու զառամյալ ծերությունը իրար նման են թուլություն, ազահությունն ու վատնողությունը՝ ձեռք բերելու, ունեցածն ավելացնելու ձգտումներ:

Կան բոլոր հիմքերը պնդելու, թե ազիտությունը լինում է երկու տեսակ. մեկը՝ անդրագետ, որը նախորդում է գիտությանը, մյուսը՝ սնայարծ, որը հետևում է նրան: Տգիտության այդ երկրորդ տեսակն առաջանում ու ծնունդ է առնում գիտությունից, այնպես, ինչպես առաջինը քայքայվում ու ոչնչացվում է նրա կողմից:

Սովորական, սակավ հետաքրքրասեր ու թերզարգացած մտածողները լավ քրիստոնյաներ են դառնում հարզանքից ու խոնարհությունից, նրանք պարզամտորեն հավատում ու հնազանդվում են օրենքներին: Միջակ կարողության և միջակ ընդունակությունների տեր մտածողների մոտ ծնվում են թյուր կարծիքներ: Նրանք հետևում են մակերեսային ողջամտությանն ու որոշ հիմք ունեն միամտությամբ ու հիմարությամբ բացատրելու մեր հակումը հին մտածելակերպին, նկատի ունենալով նրանց, ովքեր կրթված չեն: Մեծ, ավելի լուրջ ու խորաթափանց մտածողներն այլ տեսակի իսկական հավատացյալներ են. նրանք երկար ու ակնածանքով ուսումնասիրում են Սուրբ գիրքը, այնտեղ գտնում ավելի խոր ճշմարտություն և, այդ շուրջով պայծառացած, ըմբռնում են մեր եկեղեցու ուսմունքի նվիրական ու աստվածային գաղտնիքը: Բայց և այնպես մենք տեսնում ենք, որ սմանք այդ բարձրագույն աստիճանին հասնում են միջակա փուլով, քնդ որում ճաշակելով մեծագույն բերկրանք և համոզվածություն, թե հասել են քրիստոնեկան շուսավորության վերջին սահմանին, և, բարոյապես վերածնված, խանդաղառանքով, երաստագիտությամբ ու մեծագույն պարկեշտությամբ համակված, ըմբռնվում են իրենց հաջթանակր: Սակայն ես չեի ուզենա նրանց շարքը գասել այն մարդկանց, որոնք ցանկանալով ձերբազատվել իրենց նախկին մո-

լորություններին հակված լինելու ամեն տեսակ կասկածներից և մեղ համոզել իրենց հաստատակամության մեջ, ընկնում են ծայրահեղության զիրկը, մեր գործի պաշտպանության հարցում դառնում անհամբեր ու անարդարամիտ և եղծում այն, հարուցելով անընդհատ կշտամբանքներ դատանության համար:

Հասարակ գյուղացիներն ազնիվ մարդիկ են. ազնիվ մարդիկ են նաև փիլիսոփաները, որոնք խորամիտ ու լուսավորյալ, օգտակար գիտությունների բնագավառում լայնածավալ գիտելիքներով հարստացած անհասակախելություններ են: Սակայն խառնածինները, որոնք արհամարհել են բարձր գիտությունների նախնական շիմացության վիճակը և չեն հասել երկրորդ, բարձրագույն մակարդակին (այսինքն նրանք, ովքեր նստած են երկու աթոռների արանքում, ինչպես, օրինակ, ես ինքս և շատ ուրիշներ), վտանգավոր են, հիմար ու վնասակար. հենց նրանք են խոտվություն սերմանում աշխարհում: Ինչ վերաբերում է ինձ, ապա ուժերիս ներածին շափ ես աշխատում եմ վերադառնալ սկզբնական, բնական վիճակին, որը ֆիտնգամայն իզուր փորձում էի թողնել:

Ժողովրդական և զուտ բնական պոեզիան աչքի է ընկնում անմիջական թարմությամբ ու նրբագեղությամբ, որոնք այն նմանեցնում են արվեստի շնորհիվ կատարելության հասած պոեզիայի հիմնական գեղեցկություններին, այդ են վկայում գասկոնական վիլլանելներն՝ ու ոչ մի գիտություն և նույնիսկ գիր շիմացող ժողովուրդների բանավոր ստեղծագործությունները: Միջակ պոեզիան, որը տեղ է զբաղեցնում ժողովրդական և գերագույն կատարելության հասած պոեզիայի արանքում, արժանի է արհամարհանքի, անարժան է բարձր գնահատականի ու երկրպագության:

Սակայն տարվելով նման մտավոր որոնումներով, ես նկատել եմ, թե որքան հաճախ ենք մենք դժվարին ու արտասովոր աշխատանք համարել այն, ինչե իրականում այդպիսին չէ. մեր հնարամտությունը, լարվելով, դրսևորում է այդպիսի անթիվ օրինակներ: Ես այստեղ կբերեմ միայն մեկը. եթե արժե խոսել իմ այս «Փորձերի» մասին, կարծում եմ, դուցե, այն դուր չի գա ոչ անճաշակ ու գոհճիկ, ոչ բացառիկ ու ակնառու մտածողներին: Առաջիններն այն չեն հասկանալ, վերջինները կհասկանան շափաղանց լով, և այն ստիպված կլինի բավարարվել մտավոր միջակ մակարդակ ունեցող ընթերցողով:

ՀՈՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Որոշ մարդկանց մասին (նրանցից է նաև Ալեքսանդր Մեծը) ասում են, թե, շնորհիվ նրանց մարմնի բացառիկ ու արտասովոր առանձնահատկությունների, նրանց քրտինքը հաճելի հոտ է ունեցել: Դրա պատճառը փորձել են պարզել Պլուտարքոսը և այլոք¹: Բայց սովորաբար մարդու մարմինը կառուցված է բոլորովին այլ կերպ, ամենից լավ է, երբ այն բնավ հոտ չունի: Ամենամաքուր ու քաղցրանուշ շնչառությամբ՝ օրինակ, առողջ երեխայի շնչառությամբ, մենք հիանում ենք նրա համար, որ այն գերթ է ամեն տեսակ տհաճ հոտերից: Ահա թե ինչու, ասում է Պլավտոսը,

Mulier tum bene olet, ubi nihil olet*.

Ամենից լավ իրեն պահում է այն կինը, որի վարքի մասին ոչինչ չգիտեն ու չեն լսում: Իսկ ինչ վերաբերում է արհեստական հաճելի հոտերին, ապա ինձ թվում է, ճիշտ է այն կարծիքը, թե մարդիկ օժանելիքներից օգտվում են ինչ-որ բնական թերություն կոծկելու համար: Այստեղից է հին բանաստեղծների հետևյալ նույնացումը. անուշահոտությունը նրանց մոտ հաճախ նշանակում է գարշահոտություն՝

Rides nos, Coracine, nil olentes
Malo quam bene olere nil olere**.

և մի ուրիշ տեղում.

Posthume, non bene olet, qui bene semper olet***.

Բայց և այնպես ես շատ եմ սիրում հաճելի հոտերը և սաստիկ զրգվում վատ հոտերից, քանզի սրանց հանդեպ ես ավելի զգայուն եմ, քան ուրիշ մեկը.

Namque sagacius unus odoror,
Polypus. an gravis hirsutis cubet hircus in alis.
Quam canis acer ub? lateat sus****.

* Կինը լավ է բուրում, երբ առհասարակ չի բուրում² (լատ.):

** Դու ինձ վրա ծիծաղում ես, Կորացինոս, որ ինձանից հոտ չի գալիս, բայց ես գերազասում եմ ոչ մի հոտ չարձակել, քան անուշաբուրի³ (լատ.):

*** Պոստումոս, վատ հոտ է արձակում նա, ով միշտ անուշաբուրում է⁴ (լատ.):

**** Իմ հոտառությունը, Պոլիպոս, ավելի լավ է տարբերում մաղոտ թևատակների այճալին հոտը, քան ամենասուր հոտառություն ունեցող շունը՝ վարադի որջը⁵ (լատ.):

Ամենահասարակ ու բնական հոտերն ինձ համար բոլորից հաճելի են: Եվ դա վերաբերում է հատկապես կանանց: Ամենաբոխ բարբարոսության ժամանակներում սկյութացի կանայք, լողանալով, շպարում էին դեմքն ու մարմինը և քսում իրենց երկրում տարածված բուրավետ նյութեր, տղամարդուն մերձենալուց առաջ նրանք մաքրում էին այդ քսուքները, և նրանց մարմինը դառնում էր ողորկ ու անուշահոտ:

Զարմանալի է, թե ինչպես են ամեն տեսակ հոտերը կաշում ինձ, թե դրանք ներծծելու ինչպիսի հակում ունի իմ մաշկը: Նա, ով գանգատվում է, թե բնությունը մարդուն չի շնորհել հատուկ միջոց՝ հոտերը քթին մոտեցնելու համար, իրավացի չէ, քանզի հոտերն իրենք են թափանցում քիթը: Իսկ անձամբ ինձ այդ հարցում շատ են օգնում թավ բեղերս: Բավական է դրանց մոտեցնեմ անուշաբույրով օծված ձեռնոցներս կամ թաշկինակս, և հոտը դրանց վրա կպահպանվի ամբողջ օրը: Իմ բեղերով կարելի է որոշել, թե որտեղից եմ գալիս: Անցյալում, պասսանեկությանս օրերին, պինդ, քաղցր, ագահ և հյութեղ համբույրները կաշում էին բեղերիս և ժամերով մնում: Սակայն, ես քիչ եմ նախատրամադիր այն համաճարակ հիվանդություններին, որոնք փոխանցվում են մարդկանց շփումների կամ վարակված օդի միջոցով: Ժամանակին ես հաջողությամբ խուսափել եմ մեր քաղաքներում ու զորքերի շրջանում մուլեգնող այդ հիվանդություններից: Սոկրատեսի մասին կարդում ենք, որ թեև նա չի թողել Աթենքն այն ժամանակ, երբ իրենց մոտ քանիցս ժանտախտ է ընկել, միայն նա է, որ ոչ մի անգամ չի վարակվել⁶: Ես կարծում եմ, բժիշկները կարող էին ավելի լավ օգտագործել հոտերը, քան դա անում են, քանզի շատ եմ նկատել, որ հոտերից փոխվում է իմ ինքնազգացողությունը՝ այդքան շատ են դրանք ազդում տրամադրությանս վրա, կախված իրենց բնույթից: Եվ դրանում ես գտնում եմ իմ այն տեսակետի հաստատումը, թե եկեղեցիներում խնկի և այլ բուրավետ նյութերի օգտագործումը, որ հնուց ի վեր տարածված էր բոլոր կրոններում և բոլոր ժողովուրդների շրջանում, նպատակ ունի արթնացնել, մաքրել ու խնդությամբ տոգորել մեր զգացմունքները, դրանով իսկ դարձնելով մեզ հայեցողության ավելի ունակ:

Այդ մասին ավելի լավ դատելու համար ես կուզենայի համտեսել այն խոհարարների պատրաստած կերակուրները, որոնք կարողանում են ուտեստները համեմել տարբեր տեսակի բուրավետ նյութերով, ինչպես դա նկատվում էր Թունիսի թագավորի հացկերույթների ժամանակ, այն թագավորի, որը մեր օրերում ժամանեց Նեապոլ՝ Կարլոս⁷ կայսեր հետ: Հանգիստման: Նրա կերակուրները խորիզվում էին բուրավետ հա-

մեմունքներով, և, ըստ որում, այնքան առատորեն, որ նրանց ձևով պատրաստված մի սիրամարգն ու երկու փասիանը նստում էին հարյուր դուկատ: Երբ պրանք կարտատում էին, ոչ միայն խնջուլքի դահլիճում, այլև պալատի բոլոր սենյակներում և նույնիսկ հարևան շենքերում տարածվում էին քաղցրաբույր գուլորշիներ, որոնք մնում էին բավական երկար:

Ինձ համար բնակարան փնտրելիս ես ամենից առաջ հոգ եմ տանում, որ այն զերծ լինի ծանր ու գարշելի հոտից: Սքանչելի քաղաքների՝ Վենետիկի ու Փարիզի նկատմամբ սերս նվազում է Վենետիկի կանգնած ջրի և Փարիզի կեղտի բարկ հոտի պատճառով:

Գլուխ LVI

ԱՂՈԹՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Ես ընթերցողի ուշադրությանն եմ առաջարկում անորոշ և ոչ այնքան ավարտուն մտքեր, ինչպես այն մարդիկ, որոնք գիտական ժողովների քննարկմանն են դնում կասեցածելի հարցեր. ոչ թե ճշմարտությունը գտնելու, այլ փնտրելու նպատակով: Եվ իմ սույն մտքերը հանձնում եմ այն մարդկանց դատին, որոնք կոշված են ուղղություն տալու ոչ միայն իմ գործողություններին ու գրառումներին, այլև իմ մտահոգումներին: Իմ կողմից ընդունելություն կգտնի և իմ օգտին կգործադրվի ինչպես պարտավանքը, այնպես էլ հավանությունը, քանզի ես անպատվություն կհամարեմ, եթե պարզվի, որ անգիտությամբ կամ անփութորեն ինձ թույլ եմ տվել Հոոմի կաթոլիկ առաքելական եկեղեցու (ուր պիտի մեռնեմ և ուր ծնվել եմ) սուրբ դրույթներին ներհակ որևէ արտահայտություն: Եվ այնուամենայնիվ, միշտ հնազանդվելով նրանց գրաքննությանը, որին անվերապահորեն ենթարկվում եմ, ես հանդրգնում եմ այստեղ շոշափել նման առարկաներ:

Զգիտեմ, թյուր է արդյոք իմ կարծիքը, սակայն քանի որ աստծուն հաճո է եղել իր առանձնահատուկ ողորմածությամբ ու բարեհաճությամբ մեզ հրամայել և սեփական շուրթերով թելադրել մի բացառիկ աղոթք, ինձ միշտ թվացել է, թե մենք դրանից պիտի օգտվեինք ավելի հաճախ, քան դա անում ենք: Եվ իմ համոզմամբ, ուտելուց առաջ և հետո, քնելուց առաջ և արթնանալուց հետո, և առհասարակ բոլոր այն պարագաներում, երբ մենք սովորաբար աղոթում ենք, քրիստոնյաները պետք է կարդան «Հայր մեր»-ը, եթե ոչ որպես միակ աղոթք, ապա համենայն դեպս միշտ: Եկեղեցին կարող է մեծացնել աղոթքների քանակը,

բազմազանել դրանք, ըստ անհրաժեշտության տալով մեզ այս կամ այն խրատը, և ես քաջ գիտեմ, որ դրանց էությունն ու առարկան միշտ նույնն են: Սակայն գերապատվությունը պետք է տրվի հենց այդ աղոթքին, որպեսզի մշտապես բոլորի շուրթերին լինի: Քանզի կասկածից վեր է, որ նրանում ասված է անհրաժեշտ ամեն բան և որ այն ընդունելի է բոլոր պարագաներում: Դա միակ աղոթքն է, որ ես անում եմ միշտ, և կրկնում եմ, փոխանակ ուրիշը կարդալու:

Ուստի, ուրիշ ոչ մի աղոթք ես այնքան լավ չեմ հիշում, որքան այդ մեկը: Հիմա ես մտածում եմ, թե որտեղից է մեր մոլոր ձգտումը՝ ապավինել աստծուն մեր բոլոր հղացումներում ու ձեռնարկումներում, դիմել նրան մեր բոլոր կարիքներով ու գործերով, որոնցում օգնություն է պետք, քանզի ինքներս թույլ ենք, հոգ չհամարելով՝ արդարացի են արդյոք մեր ցանկությունները, թե անարդարացի, և կոչ անել նրա անվանն ու զորությունը բոլոր, նույնիսկ ամենաանբարո կացություններում ու գործերում:

Իհարկե, նա է մեր միակ պաշտպանը, և նրա ձեռքում են մեզ օգնելու բոլոր միջոցները: Սակայն, շխոսելով արդեն այն մասին, թե արդյոք նա կհաճի մեզ արժանացնել իր հայրական քաղցր ողորմածությունը, նա նույնքան արդարամիտ է, որքան բարյացակամ ու ամենազոր: Եվ ավելի հաճախ նա ցուցաբերում է իր արդարամտությունը, քան ամենազորությունը, բարերարություն անելով դրա պահանջների շափով, այլ ոչ թե մեր թախանձանքներին համապատասխան:

Պլատոնն իր օրենքներում մատնանշում է աստվածների մասին երեք թյուր դատողություն². Թե նրանք առհասարակ զոյություն չունեն, թե խառնվում են մեր գործերին և թե ոչինչ չեն մերժում, երբ դիմում ենք նրանց աղոթքներով, երզումներով ու զոհեր մատուցելով: Նրա կարծիքով, երբեք չի լինում, որ հիշյալ մոլորություններից առաջինը հաստատապես արմատավորվի մարդու մեջ մանկությունից մինչև ծերություն: Մյուս երկուսը կարող են ավելի համառ լինել:

Աստծո արդարամտությունն ու զորությունն անբաժան են: Մենք ապարդյուն օգնության ենք կանչում նրա ուժը մեր անիրավ գործում: Թեկուզ այն պահին, երբ մենք աղոթում ենք նրան, մեր հոգին պետք է զերծ ու ազատ լինի արատավոր կրքերից, հակառակ դեպքում մենք ինքներս տալիս ենք նշան այն խարազանները, որոնցով նա մեզ պատժում է: Փոխանակ մեղքերից մաքրվելու, մենք կրկնապատկում ենք դրանք, անպատկառ ու դաժանությամբ լի զգացումներով դիմելով նրան, ումից ներողություն պիտի հայցենք: Ահա թե ինչու ես այնքան էլ չեմ հիանում առանձնապես հաճախ ու ջանադարար աստծուն աղոթողներով,

եթե աղոթքից հետո նրանց արարքները չեն վկայում զղջում և բարեփոխում.

si, nocturnus adulter,
Tempora santónico velas adopena cucullo*.

Եվ գարշելի կյանքը բարեպաշտությամբ զուգակցող մարդու վարքագիծն, ըստ իս, անհամեմատ ավելի է արժանի պարսավանքի, քան այն մարդունը, որն ամեն ինչում հավատարիմ է իրեն և միշտ միատեսակ արատավոր է: Ահա թե ինչու մեր եկեղեցին միշտ մերժում է որևէ կարևոր մեղքի մեջ համառող մարդուն և իր դոնները փակում նրա առջև:

Մենք աղոթում ենք ըստ սովորույթի և ըստ սովորության կամ, ավելի ճիշտ, պարզապես աղոթքի խոսքեր ենք կարդում կամ արտասանում: Ի վերջո, դա ընդամենը բարեպաշտության դիմակ է:

Ես նողկանք եմ ապրում, երբ մարդիկ երիցս խաչակնքվում են benedicite⁴ -ի և նույնքան անգամ շնորհակալական աղոթքի ժամանակ, իսկ մնացած բոլոր ժամերին ատելության, ընչաքաղցության ու անարդարության վարժություններ են անում, և դա ինձ համար առավել զզվելի է, քանզի ինքս շատ եմ պաշտում խաչակնքումը, միշտ խաչակնքվում եմ և նույնիսկ հորանջելիս, խաչ եմ հանում բերանիս: Արատներին իրենց ժամը, աստծուն՝ իրենը, այդպես մարդիկ կարծես հատուցում ու հավասարակշռում են մեկը մյուսով: Ուղղակի զարմանում ես, թե ինչպես են նրանք մեկը մյուսի հետևից կատարում այդքան տարբեր գործեր, և շմարող այնպիսի եռանդով, որ շի նկատվում ոչ մի ընդմիջում, ոչ մի փոփոխություն նույնիսկ մեկից մյուսին անցնելիս:

Հիրավի, հրեշավոր պիտի լինի խիղճը, որ մնա անդրդվելի, հաշտ ու հանգիստ, գոյակցության ասպաստան տալով և ոճրագործին, և դատավորին: Իր գործերի մասին աստծուն ի՞նչ կարող է ասել մարդը, որի մտքում միայն ցոփությունն է, և որը գիտե, թե ինչքան գարշելի է դա երկնավորի աչքում: Նա աստծուն է դիմում սակայն պատրաստ իսկույն-ևեթ նորից ընկնելու, ցածրանալու: Եթե, ինչպես նա է հավատացնում, աստծո արդար դատի միտքը աղոթքի ժամանակ ապշեցնում է նրան ու ցնցում հոգին, ապա, որքան էլ զղջումը կարճատև լինի, հենց միայն աստծո վախը նրա միտքը վերստին կուղղի ապաշխատանքի և նա իսկույն կհաղթահարի իր ներսում բույն դրած ու արմատավորված

* ... եթե դու, գիշերային անառակ, դեմքդ թաքցնում ես գլխանոց ունեցող գաղղիական թիկնոցի տակ³ (լատ.):

արատները: Սակայն ի՞նչ ասես նրանց մասին, ում կյանքը հիմնված է արատի պտուղներից օգտվելու վրա, իմանալով հանդերձ, որ դա մահացու մեղք է: Իսկ ինչքա՞ն են մեզ մոտ այն զբաղմունքներն ու պաշտոնները, որոնք իրենց բնույթով իսկ արատավոր են: Մի մարդ, սիրտը բաց անելով, ինձ խոստովանեց, որ, թեպետ հոգով մերժել, բայց ամբողջ կյանքում դավանել է կրոնի դոգմաներն ու կատարել ծեսերը, չկորցնելու համար իր բարձր դիրքն ու պատվաբեր պաշտոնները: Նա ինչպե՞ս հանդգնեց նման խոստովանություն անել: Ի՞նչ լեզվով են խոսում այդ մարդիկ, դիմելով աստծո արդարադատությանը: Հիրավի, հարկ չկա, որ նրանք աստծո և մեր առջև վկայակոչեն իրենց զղջումը, քանզի այն դրսևորվում է սոսկ առերևույթ ու մակերեսային բարեփոխումով: Թե՞ նրանք հանդգնորեն համարձակվում են ներողություն խնդրել, շմտածելով անգամ քավության ու զղջման մասին: Կարծում եմ, սրանց հետ բանն այնպես է, ինչպես այն մարդկանց, որոնց մասին խոսում էի, միայն թե սրանց համառությունը հաղթահարելն ավելի է դժվար: Այս հակասականությունը, կարծիքների այսքան հանկարծակի և կտրուկ փոփոխությունը, որ նրանք մեր առջև դրսևորում են, ինձ թվում է ինչ-որ հրաշք:

Նրանց հոգին մեզ ներկայանում է անտանելի հոգեվարքի վիճակում: Որքա՞ն այլասերված էր թվում ինձ այն մարդկանց երևակայությունը, որոնք մոտ անցյալում սովորություն ունեին ողջամտորեն կաթոլիկական հավատը դավանող ամեն մեկին մեղադրել կեղծավորության մեջ, ի լրումն պնդելով (հավանաբար, ցանկանալով սիրաշահել նրան), թե նա միայն առերևույթ է կաթոլիկ, իսկ հոգով չի կարող իսկական շհամարել իրենց ձևով բարեփոխված կրոնը: Ինչպիսի՞ ձանձրալի ու հիվանդագին մոլորություն, քեզ համարես այնքան իմաստուն, որ մաքովդ անգամ շանցնի, թե հնարավոր է, որ մեկ ուրիշը բոլորովին այլ կերպ մտածի: Եվ ավելի վատ է, որ նման մարդիկ ենթադրում են, թե այդ ուրիշը պատրաստ է երկրային ճակատագրերի փոփոխականությունը վեր դասել հավերժական փրկության հույսերից և հավերժական անեծքի սպառնալիքից: Նրանք կարող են հավատալ ինձ: Քանզի եթե պատանեկությանս տարիներին ինչ-որ բան կարողանար շեղել ինձ, ապա ճակատագրին մարտահրավեր նետելու և վերջերիս իրադարձությունների հետ կապված բոլոր վտանգները հաղթահարելու սնափառ ձգտումն այստեղ բավական կարևոր դեր կխաղար:

Կարծում եմ, բավականաչափ հիմքեր ունենալով, եկեղեցին արգելում է շափազանց ազատ, համարձակ ու անշրջահայացաբար օգտվել այն սուրբ ու աստվածային ժամերգություններից, որ սուրբ ոգին դրել

էր Դավիթ արքայի շուրթերին: Աստուծուն մեր գործերին մասնակից դարձնել կարելի է միայն մեծարանքով ու հարգանքով տոգորված պատշաճ պատկանանքով ու ղգոտելութեամբ: Այդ ձայնը շափազանց աստվածային է, որ վերաբարտադրես սոսկ թոքերդ մարգելու և լսողութունդ շոյելու համար, այդ խոսքերը պետք է կրկնի մեր խիղճը, այլ ոչ թե լեզուն: Անմատութուն կլինեն ներել, որ մի խանութի գործակատար զվարճանար և ուրախանար գրանցով, խառնելով դրանք իր ճղճիմ ու փուշ դիտավորութուններին:

Նույնպիսի անխոհեմութուն կլինեն թույլ տալ, որ մեր հավատքի աստվածային գաղտնիքներն ամբարող սուրբ գրքերն ընկած լինեին ընդհանուր դահլիճում կամ խոհանոցում: Ժամանակին դրանք գաղտնիքներ էին, իսկ հիմա ծառայում են ուրախութեան ու զվարճութեան: Նման կարևոր ու մեծարանքի արժանի առարկան չի կարելի ուսումնասիրել իրարանցման մեջ և հարեանցիորեն: Հարկ է դրան ձեռնամուխ լինել կենտրոնացած ու լրջմտորեն, ուսումնասիրությունը նախաբանելով եկեղեցական արարողության առաջին բառերով. Sursum corda⁵, և մեր մարմնի դիրքն անգամ պետք է լինի այնպիսին, որ վկայի առանձնահատուկ ուշադրություն ու հարգանք:

Այդ ղբաղմունքն ամենքի և յուրաքանչյուրի համար շէ. վայել է միայն նրանց, ովքեր նվիրվել են դրան, ովքեր աստուծո կողմից կոչված են դրա համար: Չար ու տգետ մարդկանց այն միայն կվնասի: Սուրբ պատմությունը պատմվում է ոչ հանուն զվարճության՝ այն անհրաժեշտ է ունենորել ակնածանքով, խոնարհաբար ու մեծարանքով: Որքան ծիծաղելի են նրանք, ովքեր երեկայում են, թե այն դարձրել են մատչելի, շարադրելով ժողովրդական լեզվով: Կարծես բավական է հասկանալ բառերը, որ ըմբռնես, թե ի՞նչ է գրված: Ես կասեի նույնիսկ ավելին. փոխանակ հասարակ մարդուն սուրբ գրքին մոտեցնելու, հեռացնում են նրանից: Ամեն ինչում ուրիշներին ապավինող կատարյալ շգիտությունն ավելի ազատարար ու ավելի իմաստուն բան է, քան մարդու ինքնապարծությունն ու հանդգնությունը սնող այդ զուտ բառային ու փուշ գիտությունը:

Ես գտնում եմ նաև, որ յուրաքանչյուրին ամեն տեսակ լեզուներով աստուծո խոսքը տարածելու ազատություն տրամադրելն ավելի շատ վտանգ է պարունակում, քան օգուտ: Հրեաները, մահմեդականները և գրեթե բոլոր մյուս ժողովուրդներն ընդունել ու երկրպագում են այն լեզուն, որով առաջին անգամ բացել են իրենց հավատի գաղտնիքները: Եվ ոչ առանց հիմքի նրանց մոտ արգելված է այն փոխարինել ուրիշ մեկով: Մենք կարող ենք ասել, թե բասկերի կամ բրետոնացիների մոտ

կղտնվեն բավականաչափ բանիմաց դատավորներ, պարզեցու համար, թե արդյոք Սուրբ գիրքը ճիշտ է թարգմանված իրենց լեզվով: Տիեզերական եկեղեցու համար այդ հարցը ամենակարևորն ու դժվարն է: Քարոզներում և բանավոր ուսուցման ժամանակ տրվում են ոչ այնքան որոշակի, ավելի ազատ ու հեղհեղուկ բացատրություններ, բայց այդ էլ, պարզաբանվում են առանձին հարցեր, այնպես որ դա բնավ էլ միևնույն բանը չէ:

Հույն քրիստոնյա պատմագիրներից մեկն արդարացիորեն փնտրվում է իր ժամանակը, երբ քրիստոնեից հավատի գաղտնիքներն ազատորեն տարածվում էին հրապարակներում, ընկնելով շնչին արհեստավորների ձեռքը, ամեն ոք կարող էր քննության առնել ու յուրովի մեկնել դրանք: Նա ասում է նաև, որ մեզ՝ վերին օգնությամբ բարեպաշտության բուն գաղտնիքներն իմացողներին համար խիստ ամոթաբեր կլինի, եթե թույլ տանք, որ այդ գաղտնիքները գոհհանան ուսմիկ ու տղետ մարդկանց բերանում, չէ որ նույնիսկ հեթանոսները Սոկրատեսին, Պլատոնին և մյուս մեծ իմաստուններին արգելում էին խոսել ու դատել դելփիական քրմերի տնօրինությանը հանձնված առարկաների մասին: Նա ասում է նաև, թե, երբ աստվածաբանական վեճերում թագավորներն այս կամ այն կողմն են անցնում, զինված են լինում ոչ թե կրոնական եռանդով, այլ զայրույթով, թե հռանդր խանդավառվում է աստվածային բանականությամբ ու արդարամտությամբ, ուստի և միշտ չափավոր ու մեղմ է իր դրսևորումներում, սակայն տարվելով մարդկային կրթով, կարող է վերածվել ատելության ու նախանձի, և այդժամ ցորենի ու խաղողի փոխարեն արգասում է որոմ ու եղինջ: Մեկ այլ պատմագիր, խորհուրդներ տալով Թեոդոսիոս կայսերը, ճշմարտացիորեն նշում էր, թե բանավեճերը ոչ այնքան վերացնում են եկեղեցու տարածայնությունները, որքան խթանում ու աշխուժացնում են հերետիկոսական ուսմունքները, ուստի և հարկ է խոսափել ամեն տեսակ վիճարանություններից ու լեզվակռիվներից և հենվել բացառապես հնգրի սահմանած դրույթների վրա: Իսկ Անդրոնիկոս կայսրը, իր պալատում հանդիպելով երկու մեծատոհմիկ աստիճանավորների, որոնք Կոպադոկոսի⁶ հետ վիճաբանում էին մեր հավատի կաթևորագույն հարցերից մեկի շուրջ, խիստ հանդիմանեց նրանց և նույնիսկ ազատնաց տեսում փակողել, եթե անմիջապես վերջ չտան:

Մեր օրերում երեխաներն ու կանայք վիճարկում են ամենապատկառելի տարիք ունեցող և եկեղեցական օրենքների հարցերում առաջիկ իմաստնացած մարդկանց կարծիքները, մինչդեռ Պլատոնի առաջին խաղ օրենքը նրանց արգելում էր նույնիսկ անդեկոսնալ քաղաքացիական օրենք-

ների հիմունքներին, որոնք նրանց համար պետք է լինեն աստվածային նախասահմանումներ: Մերերին թույլ տալով քննարկել օրենսդրությունը միմյանց և պաշտոնյա անձանց հետ, պլատոնյան այդ օրեքն ավելացնում է. պայմանով, որ դա տեղի չունենա երիտասարդների կամ անտեղյակ մարդկանց ներկայությամբ:

Ոմն եպիսկոպոս գրում էր, թե աշխարհի մյուս ծայրին կա մի կղզի, որը հներն անվանում էին Դիոսքորիդա⁷, և այն աչքի է ընկնում առողջարար կլիմայով, արգասարբերությամբ, առատ է ամեն տեսակ ծառերով ու պտուղներով և բնակեցված է քրիստոնեություն դավանող ցեղերով, որոնց եկեղեցիներն ու զոհարանները զարդարված են միայն խաչով, չունեն այլ պատկերներ: Այդ մարդիկ ճշտակատարությամբ պահում են պասերն ու տոները, բարեխղճորեն քահանաներին վճարում տասանորդը և այնքան առաքինի են, որ ամբողջ կյանքում ոչ ոք չի ունենում մեկ կնոջից ավելին: Նրանք գոհ են իրենց ճակատագրից. ապրելով ծովի մեջտեղը՝ կղզու վրա, գաղափար չունեն նավերի մասին, և այնքան պարզամիտ են, որ չեն իմանում ոչ մի բառ կրոնական ուսմունքից, որին այդպես ջանադրաբար հետևում են: Դա կարող է անհավանական թվալ նրանց, ովքեր անտեղյակ են, որ առանձին հեթանոսներ՝ ջերմեռանդ կռապաշտներ, իրենց աստվածների մասին շգիտեն ոչինչ, բացի նրանց անուններից ու արձաններից:

Եվրիպիդեսի «Մելանիպոս» ողբերգության հնագույն սկիզբն այսպիսին էր.

Ո՛վ, Յուպիտեր: Քանզի շգիտեմ ես քո մասին ոչինչ,
Բացի քո անունից⁸:

Մեր ժամանակներում ինձ վիճակվել է լսել գանգատներ որոշ ստեղծագործություններից, թե դրանց բովանդակությունը չափազանց մարդկային է ու փիլիսոփայական, չունի աստվածաբանական որևէ դատողություն: Սակայն նման գանգատների դեմ կարելի է ոչ առանց հիմքի առարկել, թե անհամեմատ ավելի լավ է, երբ կրոնական ուսմունքը, որպես ամենատարածվածն ու գերիշխողը, զբաղեցնում է առանձնահատուկ, պատշաճ տեղ, թե այն ամենուր պետք է լինի գլխավորող, այլ ոչ թե օժանդակ ու երկրորդական դեր խաղա. անհամեմատ ավելի տեղին է մարդկային ու փիլիսոփայական բնույթի դատողությունները հիմնավորել քերականորեն, հոետորությամբ, տրամաբանությամբ, քան այդպիսի սուրբ առարկայից բերվող օրինակներով. լավ է նաև դրանք վերցնել թատրոնի, խաղերի ու հրապարակային ներկայացումների բնագավառից, իսկ աստվածային նախասահմանումներն ավելի մեծ հար-

գանքով ու մեծարանքով են դնահատվում դրանցից անկախ և համապատասխան արտահայտություններով վերցված, այլ ոչ թե մարդկայինի մասին դատողությունների հետ կապված, և շատ ավելի հաճախ մեղանշում են չափազանց առօրեական բառեր օգտագործող աստվածաբանները, քան ոչ բավականաչափ խոյանքով գրող հումանիստները (փիլիսոփայությունը, ասում է Հովհան Ոսկեբերանը, դուրս էր մղվում սուրբ գիտության կողմից, իբրև մի անպիտան աղախին, որն արժանի չէ անգամ հպանցիկ, շեմքից տեսնելու երկնային ուսմունքի սուրբ զանձարանը), թե մարդկային խոսքին հատուկ են ավելի ստոր ձևերը և նրան սազական շեն սուրբ գրքի բարձր արժանիքները, մեծությունն ու վսեմ շուքը՝ Ես նրան կթողնեի *verbis indisciplinatis** խոսել ճակատագրի, նախասահմանման, պատահականության, երջանկության ու դժբախտության, աստվածների մասին և օգտագործել իրեն հատուկ ուրիշ արտահայտություններ:

Ես առաջարկում եմ մարդկային, այդ թվում նաև իմ սեփական հորինվածքներն ուղղակի որպես մարդկային, առանձին վերցրած, այլ ոչ թե երկնային հրամանով սահմանված ու կարգավորված և, հետևաբար, կասկածից վեր ու անառարկելի հորինվածքներ. սա տեսակետի հարց է, ոչ թե հավատի, ինչպես այն, ինչը ես քննարկում եմ համապատասխան իմ ըմբռնման, և ոչ թե այն, ինչին հավատում եմ ըստ Սուրբ գրքի: Դրանք նման են երեխաներին հանձնարարվող այն վարժություններին, որոնք բնավ էլ ուսուցողական չեն, այլ, ընդհակառակը, իրենք կարիք ունեն ուսուցման: Այս ամենը ես քննարկում եմ ոչ թե եկեղեցական, այլ՝ աշխարհիկ տեսակետից, թեև խորապես բարեպաշտ ոգով:

Եվ հարկ չկա՞ արդյոք հիմնավոր, շատ առումներով օգտակար ու արդարամիտ համարել այն, որպեսզի գրավոր հրամանով կրոնի հարցերի շուրջ միայն արտակարգ զգուշությամբ գրեն բոլոր նրանք, ովքեր ըստ իրենց դիրքի կոչված են դրա համար: Իսկ ինչ վերաբերում է ինձ, գուցե, ամենից լավ է շխոսեմ նման բաների մասին:

Ինձ հավատացնում էին, թե նույնիսկ ոչ մեր դավանանքի մարդիկ իրենց մոտ արգելում են առօրյա խոսքում շեշտել աստծո անունը: Նրանք չեն ցանկանում, որ այն օգտագործվի կոչերի ու բացականչությունների, երգումների կամ համեմատությունների համար, և ես գրտնում եմ, որ այստեղ նրանք իրավացի են: Մեր աշխարհիկ գործերում և միմյանց հետ շփվելիս ինչ պարագաներում էլ աստված կանչենք, դա պետք է արվի լրջմտորեն ու պատկառանքով:

* Պարզ ու անպաճույճ բառերով? (լատ.):

Կարծեմ Քսենոփոնի մոտ կա մի տեղ, ուր նա ասում է, թե մենք պետք է ավելի հազվադեպ աղոթենք աստծուն, քանզի այնքան էլ դյուրին չէ մեր հոգին բերել կենտրոնացվածության, մաքրության ու ուկնածանքի այն վիճակին, որում նա պետք է գտնվի աղոթելիս: Այլապես մեր աղոթքները ոչ միայն ապարդյուն ու անօգուտ են, այլև նույնիսկ մեղսահան¹⁰: Երբիք մեզ, ասում ենք, ինչպես մենք ենք ներում մեզ վիրավորողներին: Ի՞նչ է նշանակում սա, եթե ոչ այն, որ մենք թշնամանքից ու վրեժի ծարավից մաքրված մեր հոգին տալիս ենք նրան: Բայց և այնպես, մենք սովորաբար ասածն օգնությանն ենք դիմում նույնիսկ մեր մեղսալից նկրտումներում և աղերսում ենք անարգարության գործել:

Quae, nisi seductis, nequeas committere divis*.

Ժլատն աղոթում է իր փուշ ու ավելորդ գանձերի համար, փառամուր՝ հաղթանակների, ազատորեն իր կրթին անձնատուր լինելու համար, զողը խնդրում է օգնել հաղթահարելու իր շարադետ հղացումներին խոչընդոտող վտանգներն ու դժվարությունները, կամ շնորհակալություն հայտնում, որ իրեն հեշտությամբ հաջողվել է կողոպտել անցորդին: Այն նույն տան շեմքի մոտ, ուր թալանչիները փորձում են թափանցել դեպի սանդուղքով կամ կողպեքը կտարելով, նրանք աղոթում են, համակված լինելով դաժանությանը, ազահությանը ու ցանկասիրությանը չի դիտավորություններով ու հույսերով:

Hoc ipsum quo tu Iovis aurem impellere tentas,
Dic agedum Statio: Proh Iuppiter, o bone, clamet,
Iuppiter! at sese non clamet Iuppiter ipse**.

Նավարայի թագուհի Մարգարիտը պատմում է ոմն երիտասարդ արքայազնի մասին (ու, թեև անունը չի տալիս, դժվար չէ կռահել նրանով լինելը), թե, փարիզեցի մի փաստաբանի կնոջ հետ սիրային հանդիպման զնալիս նա անցնում էր եկեղեցու մոտով, և ամեն անգամ, հասնելով այդ սուրբ տեղը, աղոթք անում¹³, ինքներդ դատեք, թե ինչու էր պետք աստծո օգնությունն այդ մարդուն, որ համակված էր նման բարի մտադրություններով: Ասենք, Նավարայի թագուհին այդ մասին հիշատակում է ապացուցելու համար նրա բացառիկ բարեպաշտությունը: Բայց

* Այն, ինչ աստվածներին կարելի է վտահել միայն զազանարտը¹¹ (լատ.):

** Աստ Ստալոսին այն, ինչով ուզում ես զարմացնել Յուպիտերին, և նա, իհարկե, կրացականչի. «Ո՛վ, Յուպիտեր, ո՛վ ամենաբարի Յուպիտեր»: Եվ Յուպիտերն ինքը չի գուցի իրեն ու կանի նույն բացականչությունը¹² (լատ.):

լոկ այդ օրինակը չէ, որ վկայում է աստվածարանական թեմաների շուրջ դատողություններ անելու կանանց բացարձակ անկարողությունը: Իսկական աղոթքը, աստծո հետ իսկական հաշտությունը չեն կարող մատչելի լինել պիղծ հոգուն, առավել ևս, երբ այն սատանայի ազդեցության տակ է: Նա, ով աստծո օգնությանն է դիմում անբարոյական գործում, վարվում է այնպես, ինչպես գողը, որ թոցրել է ուրիշի քսակը և միևնույն ժամանակ արդարադատության կոչ է անում, կամ նրանք, ովքեր հիշատակում են աստծո անունը, տալով սուտ վկայություն:

tacito mala vota susurro

Concipimus*.

Քիչ կգանձեն մարդիկ, որոնք կհատարձակվեն բացեիքաց ասել այն, ինչ գողանի խնդրում են աստծուն:

Haud cuivis promptum est murmurque humilesque susurros
Tollere de templis, et aperto vivere voto**.

Ահա թե ինչու սլուծագորականները պահանջում էին, որ մարդիկ աղոթեին հրապարակավ և բարձրաձայն, որպեսզի աստծուց շնայցեին անարժան ու մեղսական րաներ, ինչպես, օրինակ.

clare cum dixit: Apollo!

Labra ovet, metuens audiri: Pulchra Laverna,
Da mihi fallere, da miustum sanctumque videri.
Noctem peccatis et fraudibus obice nubem***.

Աստվածները կատարեցին էդիպի մեղսական աղոթքները, որպեսզի դաժանորեն պատժեին դրանց համար: Նա աղերսում էր, որ իր երեխաները ղենքի ուժով լուծեն զահաժառանգության վեճը, և ցավոք դրանով մերկացրեց ինքն իրեն: Հարկ է խնդրել ոչ թե այն, որ ամեն բան լինի մեր ցանկությամբ, այլ այն, որ ամեն ինչ ընթանա ըստ բանականության պահանջների:

Եվ իրոք, թվում է, թե մենք աղոթքներն օգտագործում ենք իբրև

* ... մենք թարուն մրմնջում ենք հանցավոր աղոթքներ¹⁴ (լատ.):

** Ամենք լե, որ կհրաժարվեն եկեղեցում փնթինթալուց ու ամոթալիորեն շնջալուց և իրենց աղոթքները բացեիքաց կուղղեն աստվածներին¹⁵ (լատ.):

*** ... սկզբում զիլ ձայնով դիմելով Ապոլոնին, նա այնուհետև հազիվ շոթունքներն է շարժում, վախենալով, թե կլսեն իրեն. «Ո՛վ դյուրիլ կավեռնա, օգնիր ինձ խաբել, օգնիր ինձ երեալ ազնիվ ու բարի: Մածկիր մեղքերս գիշերային խավարով, խարդախություններս՝ մշուշով»¹⁶ (լատ.):

պայմանական լեզու, ինչպես այն մարդիկ, որոնք սուրբ ու աստվածա-
յին բառերն օգտագործում են կախարդանքի ու հրաշագործության նպա-
տակներով, և մենք կարծում ենք, թե իրր աղոթքի ազդեցությունը կախ-
ված է բառերի դասավորությունից ու հերթականությունից, դրանց հըն-
չողությունից և մեր այն շարժումներից, որ անում ենք աղոթելիս: Քանզի
տարփանքով համակված, զղջումից կամ աստծո հետ վերստին հաշտ-
վելու իսկական ցանկությունից զուրկ հոգով մենք նրան ենք ուղղում
մեր հիշողության թելադրած բառերը և հույս ունենք այդպիսով քավել
մեր մեղքերը: Չկա ավելի հեզ, քնքուշ ու մեր նկատմամբ ավելի ողոր-
մած բան, քան օրենքն աստծո. նա մեզ կանչում է իր մոտ, որքան էլ
գարշելի ու մեղսական լինենք, նա տարածում է թևերն ու գրկում մեզ,
որքան էլ նողկալի, պիղծ ու զզվելի լինենք և հիմա, և ապագայում:
Սակայն մենք էլ ջինջ աչքերով պետք է նայենք նրան: Պետք է այդ
ներումն ընդունենք մեծագույն երախտիքով, և գոնե այն պահին, երբ
դիմում ենք աստծուն, ամբողջ հոգով խորշենք մեր մեղքերից և ատենք
այն կրքերը, որոնք մեզ ստիպել են զանցառել աստծո օրենքը: Պլատոնն
ասում է, թե շար մարդկանցից ընծաներ շեն ընդունում ոչ աստվածները,
ոչ ողջամիտ մարդիկ¹⁷:

Immunis aram si tetigit manus,
Non sumptuosa blandior hostia,
Mollivit aversos Penates
Farre pio et saliente mica*.

Գլուխ IVII

ՏԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

Ես չգիտեմ, թե մենք ինչ հիմունքով ենք սահմանում մեր կյանքի
տևողությունը: Ես տեսնում եմ, որ, ընդհանուր կարծիքի համեմատ,
իմաստունները խիստ կրճատում են այդ ժամկետը, «Ինչպե՞ս, — ասաց
Կատոն Կրտսերն այն մարդկանց, ովքեր ուզում էին խանգարել նրան
ինքնասպան լինելու, — միթե՞, ձեր կարծիքով, ես այնքան երիտասարդ
եմ, որ կյանքից չափազանց վաղ հեռանալու համար կշտամբանքի եմ
արժանի»¹: Իսկ նա ընդամենը քառասունութ տարեկան էր: Համակերպ-

¹ Եթե զոհասեղանին մոտենաս մաքուր ձեռքով, ապա անողորմ պենատներին կտրե-
լի է մեղմացնել ոչ միայն առատ զոհաբերություններով, այլև բարեպաշտներն ազաչարկ-
վող մի բուռ հաճարով ու աղով¹⁸ (լատ.):

վելով այն բանի հետ, որ քչերն են հասնում այդ տարիքին, նա այն համարում էր շատ մեծ ու զառամյալ: Իսկ նրանք, ովքեր վկայակոչում են մի ժամկետ, որը համարում են բնական և որը խոստանում է էլի մի քանի տարվա կյանք, կարող էին դա անել ուրոշ հիմունքով, եթե ունենային անթիվ պատահականություններից իրենց զերծ պահող առավելություն, պատահականություններ, որոնց մեզանից յուրաքանչյուրը ենթակա է իրերի բերումով և որոնք միշտ կարող են կրճատել, իրենց կարծիքով, սահմանված՝ այդ ժամկետը: Ինչպիսի՞ զուր երազ է, երբ հույս ունես մեռնել խոր ծերությունից ուժասպառ լինելով և համարում ես, թե մեր կյանքի տևողությունը դրանով է որոշվում: Չէ որ այդպիսի մահն առավել հազվադեպ է և ոչ սովորական: Մենք բնական ենք համարում միայն դա, կարծես մարդու համար անբնական է ընկնելով կոտրել իր վիզը, խեղդվել նավաբեկությունից, հիվանդանալ ժանտախտով կամ թութաբորբով, և կարծես մեր գոյություն սովորական պայմանները չեն բերում բոլոր այդ փորձանքները: Չգայթակղվենք հաճելի խոսքերով. անհամեմատ ավելի ճիշտ է բնական համարել այն, ինչն առավել տարածված է, սովորական և համընդհանուր: Ծերությունից մեռնելը հազվադեպ, բացառիկ ու արտասովոր մահ է, դա մահվան վերջին ձևն է, որ հնարավոր է միայն ամենածայրահեղ դեպքում, և որքան մեզանից հեռու է նման հնարավորությունը, այնքան քիչ հիմքեր կան դրա հույսն ունենալու: Անշուշտ, դա այն սահմանն է, որը մենք երբեք չենք անցնի, բնության օրենքը մեզ թույլ չի տա անցնել, և այդ օրենքը շատ հազվադեպ է մեզ թույլ տալիս ապրել մինչև վերջ: Դա բացառիկ պարզ է, որ բնությունը երկու-երեք հարյուր տարում հատուկ շնորհ է անում որևէ մեկին, նրան դերժ պահելով կյանքի այդչափ երկար ճանապարհին մըշտապես հանդիպող փորձանքներից ու դժվարություններից:

Ուստի, իմ կարծիքով, մեր տարիքը պետք է դիտել այնպիսին, որին միայն քչերն են հասնում: Քանի որ մարդկանց սովորաբար վիճակված չի լինում հասնել դրան, դա նշան է այն բանի, որ մեզ հաջողվել է հեռուն գնալ: Եվ քանի որ մենք անցել ենք սովորական սահմանները, որոնք հենց մեր տեական գոյության իսկական չափանիշն են, հարկ չկա հուսալու, թե մեր ուղին դեռ կերկարի: Մենք արդեն այնքան ենք շրջանցել մարդուն շարունակ դարանող մահը, որ անսովոր կերպով մեզ պահպանող այդ երջանկությունը պետք է համարենք միանգամայն բացառիկ և հույս չունենանք, թե այն կշարունակվի:

Մեր բուն օրենքներն են մեղավոր, որ մենք համակվում ենք այդպիսի կեղծ ինքնագայթակղմամբ. նրանք մինչև քսանհինգ տարեկանը մարդուն համարում են իր ունեցվածքը տնօրինելու անընդունակ, իսկ

չէ որ նրան միշտ չի որ հաշտովում է հասնել այդ տարիքին: Օգոստոսը հինգ տարով իջեցրեց հոռմեական հիեալուսոց օրենքներով սահմանված ժամկետը, հայտարարելով, թե դատաւորի պաշտոնն զբազեցնելու համար բավական է լինել երեսուն տարեկան: Սերվիոս Տուլլիոսը զինժառայութեան պարտքից ազատեց քառասունյոթը բոլորած հեծյալներին, Օգոստոսն այդ ժամկետը կրճատեց և հասցրեց քառասունհինգ տարեկանի: Իսկ ինձ թվում է, թե մարդկանց հիսունհինգ-վաթսուն տարեկանից շուտ հանգստյան թողնելու առանձին հիմքեր չկա: Իմ կարծիքն այն է, թե ի շահ հասարակութեան, պետք է մեզ հեարավորութեան տրվի կարելույն շափ երկար զբաղեցնել մեր պաշտոնները, սակայն, մյուս կողմից, ես գտնում եմ, որ դրանք պետք է ավելի շուտ տրվեն մեզ: Օգոստոսն ինքը տասնինը տարեկանում աշխարհի ճակատագիրն էր տնօրինում, այնինչ հրապարակում է մի հրամանագիր, թե անհրաժեշտ է դառնալ երեսուն տարեկան, որոշելու համար, թե ոչտեղ դեռա շրհորդանը:

Իսկ ես գտնում եմ, որ քսան տարեկանում մարդու հոգին, հարկ եղածին պես, լիովին հասունանում է և արդէն դրսևորում իր բոլոր հնարավորութեանները: Եթէ մինչև այդ տարիքը մարդու հոգին լիակատար ակներևութեամբ չի ցուցաբերել իր ուժերը, ապա այլևս երբեք դա չի անի: Մեր բնական հատկանիշներն ու առաքինութեանները պետք է ամբողջ ուժով ու գեղեցկութեամբ դրսևորվեն հենց այդ տարիքում, այլապես չեն դրսևորվի երբեք.

*Թե սուր չէ փուշն սկզբից,
Սուր չի դառնա ժամանակից.—*

ասում են Դոֆինեում:

Ինձ հայտնի բոլոր սքանչելի գործերից, ինչպիսիք էլ դրանք լինեն, լստ իս, մարդիկ անհամեմատ ավելի շատ կատարել են մինչև երեսուն տարեկանը, քան հետո: Այդպես է եղել հնում, այդպես է նաև մեր օրերում, և հաճախ մինևուշն մարդու կյանքում. չէ որ դա լիակատար համոզվածութեամբ կարելի է ասել Հաննիբալի ու նրա հակառակորդ մեծն Սկիպիոնի մասին: Նրանք իրենց կյանքի կեսն անցկացրել են ի հաշիվ երիտասարդ տարիքում վաստակած փառքի. հետագայում էլ նրանք մեծ մարդիկ էին, բայց միայն ուրիշների համեմատութեամբ, այլ ոչ թե իրենց: Ինչ վերաբերում է ինձ, ապա լիակատար համոզվածութեամբ կարող եմ ասել, որ այդ տարիքից հետո հոգիս ու մարմինս ավելի շատ կորցրել են, քան ձեռք բերել, ավելի շատ հետ են դնացել, քան առաջ: Հնարավոր է, որ իր ժամանակը լավ օգտագործել իմացող մարդկանց գիտելիքներն ու փորձը կյանքի ընթացքում աճում են, սակայն աշ-

խուժութիւնը, արագաշարժութիւնը, դիմացկունութիւնը և անմիջականորեն մեր էութեանը պատկանող ավելի կարևոր ու հիմնական մյուս հագեցեցող հատկանիշները նվազում են ու խամրում.

ubi iam validis quassatum est viribus aevi
Corpus, et obtusis ceciderunt viribus artus,
Claudicat ingenium, delirat linguaque mensque*.

Երբեմն առաջինը մարմինն է տեղի տալիս ժերութեան առջև, երբեմն՝ հոգին: Ես գիտեմ բավական թվով ճրինականեր, երբ ուղեղն ավելի շուտ է թուլացել, քան ~~առամտքը~~ կամ ստքերը: Եվ այդ շարիքն առավել վտանգավոր է նրանով, որ տառապյալի համար ավելի քիչ է նկատելի ու այնքան էլ բացահայտ չի դրսևորվում: Ահա թե ինչու ևս արտաբերում եմ ոչ թե նրանից, որ օրենքները շափազանց ուշ են ազատում մեզ գործերից ու պարտականութիւններից, այլ այն բանից, որ շափազանց ուշ են թողնում ստանձնել դրանք: Ինձ թվում է, թե, նկատի առնելով մեր փուշ կշանքը և բոլոր այն բնական ու սովորական խուժերը, որոնց նա հանդիպում է իր ճանապարհին, հարկ չկա այդքան մեծ նշանակութիւն տալ ~~ժամանր~~ և այդքան ժամանակ հատկացնել պարտապարտութեան ուսուցմանը:

* Երբ ժամանկի ծանր հարվածները թուլացնում են մարմինը, երբ ձեռքերն ու ստքերը ծանրանում են, կորցնում ուժը, բանականութիւնը նույնպես սկսում է կաղալ, լիզուն փաթ է ընկնում և խելքը նվազում է² (լատ.):

ՅԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Մոնտենի «Փորձերի» ուսերին թարգմանությունն արված է Ա. Արմենցոյի հետևյալ հրատարակությունից. Oeuvres complètes de Michel de Montaigne. Les Essais. Texte du manuscrit de Bordeaux, étude, commentaires et notes par le Dr. A. Armain-gaud, tt 1—VI. Paris, 1924—1927

Մանթազարությունները կազմելիս օգտագործվել են վերոհիշյալ հրատարակության Ա. Արմենցոյի մեկնություններն ըստ էջերի:

Մոնտենի կենդանության օրոք «Փորձեր» լույս են տեսել հինգ անգամ (1580, 1582, 1587, 1588, մի հրատարակության տարեթիվը չի պարզված): Առաջին երեք հրատարակություններում տպագրվել են միայն I և II գրքերը: 1588 թ. հրատարակությունը խիստ տարբերվում է նախորդներից. այստեղ Մոնտենը մտցրել է մինչև 600 լրացում և առաջին անգամ հրատարակել III գիրքը:

Կյանքի վերջին տարիներին Մոնտենը 1588 թ. հրատարակված «Փորձերի» մի օրինակի մեջ մտցնում է բազմաթիվ ուղղումներ ու հավելումներ: Նրա մահից հետո այդ օրինակն օգտագործում է նրա մերձավոր բարեկամներից մեկը՝ Միշել դը Բրակը, որը օրիորդ դը Գուրնեի հետ համատեղ 1595 թ. թողարկում է «Փորձերի» նոր՝ լրացված հրատարակությունը:

Երկար ժամանակ համարվում էր, թե այդ նոր հրատարակությունը տալիս է վերջնական հեղինակային տեքստը: Սակայն «Փորձերի» Մոնտենի ձեռքով արված ուղղումներով օրինակը գտնելուց հետո (այն գտնվել է Բորգոյի քաղաքային գրադարանում, որ ընկել է 1789 թ. հեղափոխության ժամանակ), պարզվեց, որ 1595 թ. հրատարակության մեջ սպրդել են բազմաթիվ սխալներ, և միանգամայն էական աղավաղումներ: 1912 թ. «Փորձերի» այդ օրինակը, որը մատենագիտության մեջ ստացել է «Բորգոյի» տնվանումը, լուսատպագրական եղանակով վերարտադրվել է Ֆ. Ստրովսկու (F. Strowsky) հրատարակությամբ: Այն ժամանակվանից «Փորձերի» ֆրանսիական հրատարակությունները (իսկ դրանք եղել են մի քանիսը) թողարկվում են հենց այդ տեքստով: «Բորգոյի» օրինակը հիմք է ծառայել նաև Ա. Արմենցոյի՝ ֆրանսիացի խոշորագույն մոնտենագետի հրատարակությանը:

Մոնտենի օգտագործած սկզբնաղբյուրները նշվում են ըստ ժամանակակից բնագիր հրատարակությունների:

Ստեղծագործությունների խորագրերը բերվում են միայն այն դեպքերում, երբ հեղինակին պատկանում են մի քանի ստեղծագործություններ, եթե հայտնի է այդ հեղինակի միայն մեկ ստեղծագործությունը, դրա խորագիրը չի բերվում:

Գլուխ I

ՏԱՐՐԵՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՐՆԻ Է ՀԱՍՆԵԼ ՄԻՆՎՆՈՒՅՆ ԲԱՆԻՆ

1 Էդուարդ, Ուելսի աբայազեր (1330—1376) — Անգլիայի թագավոր Էդուարդ III տվադ որդին, որին իր սև ասպազենքի համար հորջորջել էին «Սև արքայազն»: Մասնակցել է Հարյուրամյա պատերազմին (1337—1453), երբ Անգլիայի թագավորները փորձում էին տիրել Ֆրանսիային, 1335 թ. նշանակվելով Գիենի (ան՝ս հաջորդ ծնթ.) կառավարչ, տխուր համրավ ձեռք բերեց թալաններով ու հարավարևմտյան Ֆրանսիայի ավերմամբ, պարավածների նկատմամբ իր դաժանություններ:— 7:

2 Գիեն — դավառ Ֆրանսիայի հարավ-արևմուտքում: Հարյուրամյա պատերազմի պատճառներից մեկը ֆրանսիացիների ձգտումն էր Ֆրանսիայից դուրս մղել անգլիացիներին և տիրել Գիենի այն մասին, որը դոնվում էր նրանց ձեռքում:— 7:

3 Սկանդերբեգ (1414—1467, ըստ ուրիշ տվյալների ծնվել է 1403 թ.) — խոսքը Ալբանիայի տիրակալ իշխան Գերրդի Կաստրիոտի՝ ալբան ժողովրդի ազգային հերոսի մասին է, որը դիտավորեց թուրք նվաճողների դեմ նրա պայքարը հանուն անկախության: «Սկանդերբեգը» ժողովրդի տված մականունն է, այսինքն՝ Ալեքսանդր (Մակեդոնացի) և թուրքական «բեգ»՝ տեր, տիրակալ:— 7:

4 Կոնրադ III — Գերմանիայի կայսր 1138—1152 թթ., առաջինը Շտաուֆենների կամ Գոդենշտաուֆենների դինաստիայի: Վելֆեր — Բավարիայի դքսեր, որոնք XII դարի առաջին կեսերին պայքարում էին Շտաուֆենների դեմ հանուն կայսերական թագի: Հիշատակվող միջադեպը կապված է 1140 թ. վայնաբերգի պաշարման հետ:— 8:

5 Պելրոպիդաս (մ. թ. ա. IV դ.) — հին Հունաստանի խոջորագրված զորապետներից մեկը, ծնունդով Թեբեից, էպամինոնդասի բարեկամը:— 9:

6 Էպամինոնդաս — թեբեցի հռչակավոր զորավար (ծնվ. թ. ա. 420—410 թթ., մահացել է 363 թ.):— 9:

7 Դիոնիսիոս Ավագ — Սիրիայի բռնապետ (մ. թ. ա. 401—398 թթ.) խոշոր զորավար, որը վճռեց է Սիցիլիա ներխուժած կարթագենցիներին: ձին պատմաբանները Դիոնիսիոսին պատկերում են որպես դաժան ու նենդ կառավարի:— 8:

8 Ռեզիոս — այժմ Ռեչո, քաղաք Իտալիայի հարավում (Կալարիայում):— 9:

9 Մամերտինացիների քաղաք — ներկայումս Մեսսինա (Սիցիլիա), հետո՝ Մեսսանա, մամերտինացիներ, այսինքն՝ Մարսի որդիներ՝ իտալացի վարձկաններ, որոնք դավթեցին Մեսսանան (մ. թ. ա. III դ.), Պոմպեոս — նկատի է առնված Պոմպեոս Մեծը (ան՝ս ծնթ. 16 էլ 371):— 9:

10 Ջենոն — Պլուտարքոսի մոտ՝ Ստենոն, ինչպես նաև Ստեննիս և Ստեննիս (Պլուտարքոս. նրատներ պետական գործերի վերաբերյալ, 19):— 9:

11 ... Եման առափնեություն դրսևորելով Պերուզիայում... — այստեղ Մոնտենը սխալվում է: Պետք է խոսել ոչ թե Պերուզիայի (այժմ Պերուչա), այլ Պրենեստի (այժմ Պալեստրինա), Մարոսի կողմնակիցների վերջին պատվարի մասին, որը գրավեց Սուլ-

լան մ. թ. ա. 82 թ. Այս դրվագի մասին տե՛ս Պլուտարխոս: Խրատներ պետական գործերի վերաբերյալ, 19: Անվանելով Պերուզիան, Մոնտենը կրկնում է Պլուտարքոսի ֆրանսեան թարգմանիչ ժակ Ամյոյի (տե՛ս ծնթ. 1, գլ. XXIV) սխալը:— 10:

¹² Կագա— պաղեստինյան բուշար, որին տիրում էին վոլշտացիները:— 10:

¹³ ... Թեբեն գրավելու...— Ալեքսանդր Մակեդոնացին Թեբեն գրավել ու ավերել է մ. թ. ա. 336 թ.:— 10:

Գլուխ II

ՎՇՏԻ ՄԱՍԻՆ

¹ Կամբյուանա— Հին Պարսկաստանի Երկրորդ թագավորը, Կյուրոսի որդին: Թագավորել է մ. թ. ա. 529-ից մինչև 522 թ. ինքնասպան է եղել 522 թ.:— 11:

² ... Ես սկսեց գլխին խփել...— Մոնտենն այստեղ կրկնում է Հերոդոտոսին, III, 14:— 11:

³ ... պատանեց մեռ տանիկ աստիճանավորներից մեկին:— Խոտը կարողնալ Կարլ Լոթարինգացու, հակառեֆորմացիայի առաջնորդներից մեկի սասին է, որը Տրիդենտի վեհաժողովում (1545—1563) ռեակցիայի նախամարտիկների թվում էր: 1563 թ. գտնվելով Տրիդենտում, նա լուր ստացավ իր ավագ եղբոր՝ Գրիգի դուքս, զորավար և հուդենոսների դաժան հալածող Ֆրանսուայի սպանության (հուդենոս Պալտրո դը Մերիի ձեռքով) մասին, իսկ մի քանի օր անց իմացավ Գրյոյի մաս հուդենոսների դեմ հակաամարտում իր մյուս եղբոր մահվան մասին:— 12:

⁴ ... այն հին գեղանկարչի...— ըստ Քվինտիլիանոսի (Հոնտորի ստուցումը, II, 13) այդ գեղանկարչի անունը Տիմանտոս էր:— 12:

⁵ Նիորե— Տանտալոսի դուստրը և Ամֆիոնի կինը, իր բազմածնությունը պարծենալով Յուպիտերի սիրելի կատնայի մոտ, որն ուներ ընդամենը երկու երեխա՝ Ապոլլանն ու Գիանան, հարուցեց նրա զայրույթը: Կատնայի հրամանով Ապոլլոնն ու Գիանան նետերով սպանեցին Նիորեի երեխաներին, որից հետո նա ծայռ դարձավ:— 12:

⁶ Վշտից Կառապոլ:— Յվիդիոս: Կերպարանափոխություններ, VI, 303: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 12:

⁷ ... վիշաք ... քացեց ձայնը:— Վերգիլիոս: Էնեական, XI, 151:— 13:

⁸ ... Բուդայի նակատամուտում...— 1540 թ. Հունգարիայի թագավոր Հովհաննես (Յանոշ) I Զապուլսկու մահից հետո Հունգարիային տիրելու համար պայքար բռնկվեց Հովհաննես I-ի այրու, որը պաշտպանում էր իրենց մանկահասակ որդու (հետագայում Հովհաննես II թագավորի) իրավունքները, Ավստրիայի էրցհերցոգ Ֆերդինանդ I-ի և թուրքական սուլթան Սուլեյման II-ի միջև 1541 թ. Բուդայի (այժմ Բուդապեշտ) մոտ վերջինիս հաղթանակը հասցրեց Հունգարիայի ժամանակավոր բաժանմանը երեք հավակնորդների միջև:— 13:

⁹ ... վիշտը նրա մեջ սառեցրեց կյանքի ոգիները...— Հին և միջնադարյան բնախոսների պատկերացումներով «կյանքի ոգիները» տահպանում էին օրգանիզմի կյանքը:— 13:

¹⁰ ... բույլ բոցով է այրվում:— Պետրարկա: Սոնետ 137:— 13:

¹¹ ... աշևես մթնում են:— Կատուլլոս, II, 5 և հաջ.:— 13:

¹² ... փոքր բախիժն է խոսում, մեծը՝ լուռ է:— Սենեկա: Ֆեդրա, 602:— 14:

¹³ ... միայն շառ ժամանակ անց խոսեց:— Վերգիլիոս: Էնեական, III, 306 և

հաջ.:— 14:

14 Կանն— գյուղ Ապուլիայում, մ. թ. ա. 216 թ. այստեղ մեզի՝ ունեցավ՝ հայտնի ճակատամարտը, որում Հաննիբալը գլխավոր ջախջախեց հռոմեացիներին, — 14:

15 Տալվա (Ճիշար՝ Տալնա—Մանիոս Յուվենցիոս Տալնա, հռոմեական կոնսուլ մ. թ. ա. 163 թ., Կորսիկայի նվաճող:— 14:

16 ... Լեոն X պապը... ճիվանդացավ ջերմախտով և շուտով մահացավ:— Լեոն X պապը, որ դաշինքի մեջ էր Գերմանիայի կայսր Կարլ V-ի հետ, ձգտում էր ֆրանսիացիներին վտարել Միլանի դքսությունից: Նա մահացել է 1521 թ., կարծում են, թունավորումից: Մոնտենի պատմությունը հիմնված է Գվիլլարդինիի հաղորդման վրա, ըստ նրա «Իտալիայի պատմությունը» գրքի:— 14:

17 Իրադորոս Դիալեկտիկ, մականունը Կրոնոս, — մեգարյան դպրոցի փիլիսոփա (մ. թ. ա. 1V դ.):— 14:

ԳԼՈՒԽ III

ՄԵՐ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՏՈՒՄ ՆՆ ՄԵՐ «ՆՄԻ» ՍԱՀՄԱՆՆԵՐԻՅ ԳՈՒՐՍ

1 ... ապագայի հոգսերով եամակված հոգին:— Սենեկա: Նամակներ, 98, 6:— 15:
2 Ճանաչի ինքն քեզ:— Պլատոն, Պրոտագորաս, 343, 6:— 15:
3 ... իմաստունությունը... երբեք իրենից չի սրտնկլում:— Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, V, 18:— 15:

4 ... միապետի իշխանության առջև մեծացած մարդկանց լեզվի վրա շողմարթություն է...— Մոնտենի այստեղ կրկնում է Տրտոս Լիվիոսին (XXXV, 48):— 16:

5 ... Բո անվերջ շարագործությունները կասեցնելու այլ միջոց չէի տեսնում:— Տալիտոս, Տարեգրություն XV, 67—68: Ներոն (54—68 թթ.)— Հոմերի կայսր:— 17:

6 ... կարելի է արդյոք երջանիկ անվանել Ռուս... երբ... սերունդն է լքվառ:— Արիստոտել: Նիկոմաքոսյան բարոյագիտություն, 1, 20:— 17:

7 ... նա չի կարող իրեն... բաժանել... դիտելից...— Լուկրեցիոս: III, 877 և հաջ. Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 18:

8 Բերտրան Դյու Գելլենը (1320—1380)— սերում էր բրետոնական ազրատ սպանական տոհմից, հետադադում դարձավ հուսկալոր զորավար և Ֆրանսիայի կոնետաբլ (1370—1380), Հարյուրամյա պատերազմի ժամանակ տարավ մի շարք փայլուն հաղթանակներ անգլիացիներին նկատմամբ:— 18:

9 Բարտոլոմեոս դը Ալվիանո— վենետիկցի զորապետ, իր ժամանակին հայտնի բախտահործ (1455—1515):— 18:

10 Թեոդորոս Տրիվուցիո (1448—1518)— աղնվատում միլանցի, շատ հմուտ էր ուղմական գործում, անցավ Ֆրանսիային ծառայելու, ստացավ մարշալի կոչում և մասնակցեց Իտալիայում կյուզովիկոս XII-ի և Ֆրանցիսկ I-ի (1515—1547) վարած պատերազմներին:— 18:

11 ... զրկվեց տրոֆեյ կանգնեցնելու իրավունքից:— «Տրոֆեյ» (ավար) բառն սերգրում նշանակում էր հաղթանակի հուշարձան:— 18:

12 Նիկիաս — աթենացի զորավար (մ. թ. ա. V դ.):— 18:

13 Ագեսիլայոս II— Սպարաայի թագավոր և զորավար (մ. թ. ա. IV դ.):— 18:

14 Էդուարդ I— Անգլիայի թագավոր (1272—1307): Զավթողական պատերազմներ է վարել Շոտլանդիայում և Ուելսում: Շոտլանդիան նվաճելու նրա փորձերը պոլոացիներին ու քաղաքացիներին դրոճեցին ապստամբության, որն ընդմիջումներով շարունակվեց:

մինչև 1306 թ., երբ այն դերաճեց երկրի ազտութիւն համար մղվող համընդհանուր պատերազմի: Պատերազմն ավարտվեց 1314 թ. շտալանդացիների հաղթանակով:— 18:

¹⁵ Ռոբերտ 1 շտալանդացի— Շտալանդիայի անկախութեան մարտիկ, թագադրվել է 1306 թ., մահացել է 1329 թ.:

¹⁶ Յան Ժիժկա (1378—1424)— չեխ ժողովրդի հերոս և մեծ զորավար, որը Մարքսի խոսքերով (տե՛ս Մարքսի և Էնգելսի արխիվը, VI, էջ 229 (ռուս.)), մարտի դաշտում միշտ հաղթող էր լինում: Գլխավորել է իր ստեղծած ժողովրդական բանակը, որը փայլուն հաղթանակներ է տարել թվաքանակով գերազանցող հակառակորդի ուժերի նկատմամբ. 1420-ից մինչև 1431 թ. չեխերի դեմ պայլի ու գերմանական կայսեր կազմակերպած բոլոր հինգ «խաչակրաց արշավանքները» խայտառակ կերպով տապալվեցին: Կյանքի վերջին տարիներին Ժիժկան կուրացավ, բայց շարունակում էր զեկավորել ռազմական դորժողութունները:— 19:

¹⁷ Ջոն Ուիկլիֆ (1320—1384)— Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, հարուստ ֆեոդալական եկեղեցուն թշնամաբար նայող, այն բարեփոխելու ձգտող անդլիական ասպետների և քաղաքացիների շահերի արտահայտուղը: Ֆ. Էնգելսի խոսքերով, Ուիկլիֆը վառ ներկայացուցիչն էր քաղաքների հերձարիկոսության, որի գլխավոր պահանջը միշտ եղել է «էժանագին եկեղեցու պահանջը (Ֆ. Էնգելս: Գյուղացիական պատերազմը Գերմանիայում):— 19:

¹⁸ Նոր աշխարհի մյուս ժողովուրդները...— Մոնտենը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում է Նոր Հնդկաստանին, ինչպես այն ժամանակ անվանում էին Ամերիկան (տե՛ս, օրինակ, դիրք I, գլուխ XXVI): Մոնտենը նորահայտ երկրների մասին իր տեղեկությունները քաղում էր ինչպես նավաստիների, վաճառականների, ճանապարհորդների պատմություններից, այնպես էլ գրքերից:— 19:

¹⁹ Բայառդ (1476—1524)— Լյուդովիկոս XII-ի և Ֆրանցիսկ I-ի իտալական պատերազմների ժամանակվա ֆրանսիացի զորավար, աչքի էր ընկնում խիզախությամբ, զինվորական պատվի զգացումով և ասպետական այլ հատկանիշներով, որոնք համապատասխանում էին իր ժամանակվա զինապարտ աղնվականության իդեալին: Ժամանակակիցները նրան կոչել են «քաջարի և ամբաստիրտ ասպետ»:— 19:

²⁰ ... Եւրկայիս քագավոր Ֆիլիպի...— նկատի է առնված Գերմանիայի կայսր Մաքսիմիլիան I-ը (1493—1519) և նրա ծոռը՝ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը (1556—1598):— 19:

²¹ Կյուրոս— Կյուրոս Ավագ, պարսից միապետության հիմնադիրը (մ. թ. ա. VI դ.), որի պտմությունը տվել է Քսենոփոնը «Կյուրոսպոլիտամ»:— 20:

²² Մարկոս Էմիլիոս Լեպիդոս— Կեսարի զինակիցը, II եռապետության մասնակից (մ. թ. ա. 43 թ.):— 21:

²³ Լիկոնաս— հին հույն փիլիսոփա (մ. թ. ա. III դ.):— 21:

²⁴ Մենեֆ պեաֆ է արհամարհանելով նայեմֆ այդ բոլոր հոգսերին...— Օգոսպինոս: Ասածո քաղաքի մասին, I, 12:— 21:

²⁵ ... ավելի շուտ մխիթարություն են կենդանի մնացածների համար, քան մեռածների... թեթևացում:— Ցիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, I, 45:— 21:

²⁶ ... Արգիեոսյան կղզիների մաս... նակատամարտում:— Արգիեոսյան կղզիները դանվում են Եգեյան ծովում, Լեսբոս կղզու և Փոքր Ասիայի միջև: Մովսեսյանը, որի մասին այստեղ խոսվում է, տեղի է ունեցել մ. թ. ա. 406 թ.:— 22:

²⁷ ... ուր հանգչում են տակավին չծնվածները:— Սենեկա: Տրոյայի կանտյք 407, 408:— 23:

28 ... մաքմիքը կարողանալու է հանգստանալ ձախողություններից... — *Հենիսը Յի-ցերոնից արված քաղվածքում*. *Տուսկուլանյան դրույցներ*, 1, 44:— 28:

Գլուխ IV

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀՈԳՈՒ ԿՐՔԵՐԸ ԹԱՓՎՈՒՄ ԵՆ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎՐԱ, ԵՐՔ ՊԱԿԱՍՈՒՄ ԵՆ ԻՍԿԱԿԱՆՆԵՐԸ

1 ... խիտ անտառներ... խաչընդառում են նրան:— *Լուկանոս*, III, 362—363:— 28:

2 ... սիրո պանանջմունք... ռաեղծում է նկարավի... կապվածություններ... — Պլուտարհոս: *Պերիկլեսի կենսագրությունը*, 1:— 24:

3 ... պանանջիական արջը... գալար-գալար է լինում կոթի շուրջը, որը փախչում է իր հետ:— *Լուկանոս*: VI, 220 և հաջ.: Պանանջիա— *այժմյան Հունդարիան*:— 24:

4 ... փառապանծ եղբայրներ... մահվան առթիվ... — *նկատի են առնված Պուրիոս և Գնեսյոս Սկիպիոնները*: Երկուսն էլ, առանձին-առանձին ջախջախվելով Հաստուրայի կողմից, զոհվել են *Իսպանիայում*, Պունիկյան երկրորդ պատերազմում (մ. թ. ա. 212 թ.):— 24:

5 Բոլորն... սկսեցին ողբալ... — *Տիտոս Լիվիոս*, XXV, 37:— 24:

6 ... նաղաառությունը կրեթնացեի իր վիշտը:— Յիցերոն: *Տուսկուլանյան դրույցներ*, III, 26: Բիոնոս— *կինիկյան գարոցի հույն փիլիսոփա* (մ. հ. մ. թ. ա. 241 թ.):— 25:

7 Հելլեսպոնոս— *Դարդանելի նեղուցի հին անվանումը*:— 25:

8 Կալիգուլա— *Հոմերի կայսր* (37—41), *Տիրհրիոս կայսեր թոռը*:— 25:

9 Օգոստոս կայսրը... — *Օկտավիանոս Օգոստոս*, Հոմերի ստաշին կայսրը:— 25:

10 Պուրիոս Քվինտիլիոս Վառոս— *հոմեակցի զորավար*, երևք լեզվոն կորցնելով Տեպոբուրգյան անտառում (մ. թ. 9 թ.), ուր խաբելով հասցրել էին հոմեակցիների դեմ սպասամբած գերմանացիները Արմինիոսի՝ խեղճակների ցեղի առաջնորդի զխավորությամբ, Վարոսն ինքնասպան եղավ:— 25:

11 Իս... լակ օղն ես թեղացնում:— Պլուտարհոս: *Զայրույթը զսպելու մասին*, 4: Պլուտարհոսի արձակ տեքստը Մոնտենը տալիս է շափահո թարգմանությունը:— 25:

Գլուխ V

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ԱՐԳՅՈՔ ՊԱՇԱՐՎԱԾ ԱՄՐՈՅԻ ՊԱՐԵՏԸ ԴՈՒՐՄ ԳԱՂ ԱՅՆՏԵՂՈՅ՝ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻ ԸՆՏ ԲՅՆԱԿՑՆՈՒՄ

1 ... Պերսևոսի վերջնական ջախջախմանը:— *Ըստ Տիտոս Լիվիոսի* (X, 11, 37), հոմեական լեզգաի անունը ոչ թե Լուցիոս Մարցիոս է, այլ Կվինտոս Մարցիոս. նույն զբրբում (գլուխ 47) Տիտոս Լիվիոսը պատմում է սենատորների կողմից Մարցիոսի խորամանկության դատաւարտման մասին: Պերսևոս— *Մակեդոնիայի թագավոր*, որին մ. թ. ա. 168 թ. Պիղնայի մոտ զխոսովին ջախջախեցին հոմեակցիները:— 26:

2 ... հանձնեցին... շարամիտ ուսուցչին... — *Էպիրի արքա Պլուտոսի բժիշկը հոմեակացիներին առաջարկեց թունավորել իր տիրոջը*:— Փալլասներ— *էթրուրիայի Փալերիա քաղաքի բնակիչները*, էթրուսկների դեմ հոմեակացիների պայքարի ժամանակ փախսկների ոմն դպրոցական ուսուցիչ զիկատատր Կամիլլուսին առաջարկեց անվանի քաղաքացիներին երիխաններին տալ հոմեակացիներին, որպեսզի զրանով բնակիչներին ստիպին քաղաքը հանձնել հոմեակացիներին:— 26:

3 Միևնույնը շէ՛ առդյո՛խ՝ խորամանկությամբ ես բշխամուն հուղթել, քե՛ Բաշու-
բյամբ:— Վերգիլիոս: *Հենեական*, II, 390:— 27:

4 ... նրանք հաղթանակը գնահատում էին... այն ժամանակ, երբ իրենց հաջողվում էր
կոտրել բշխամու... դիմադրությունը:— Պոլիբիոս, XII, 3: Նորագույն հրատարակություն-
ներում՝ «*Αρχαίοι* — «արյուցիցիների» փոխարեն արվում է *ἀρχαίοι* — «հներ»:— 27:

5 ... ստեփանոսյանն ու անթիմ առժամանակապես:— Ելուք, I, 12:— 27:

6 ... ինչ է այն բերուս:— *Հենեական Յիջերանից արված քաղվածքում*, Պարտականու-
թյունների մասին, I, 12:— 27:

7 Տարևառե՛ն — Մորաբայան արշիտակազի կղզիներից մեկը:— 27:

8 ... առնե՛մ ստորապատնում կին Մուզոնը Խասատի կանախ:— Մուզոնի (Արդեններ)
պաշարումը տեղի է ունեցել 1521 թ., Ֆրանսիայի Ֆրանցիսկ I (1494—1547) թողալորի
և Իսպանիայի Կարլ I (1500—1558) թաղաբարի՝ 1519 թվականից այսպես կոչված «Հոռ-
մի սրբազան կայսրության» կայսր Կարլոս V-ի միջև երկարամյա պատերազմների սկզբը-
նական շրջանում Խասատի կամ:— Կարլոս V-ի դորապետներից մեկը:— 28:

9 Կիլիկիայի Ֆրանչեսկո (1482—1540) — իտալացի պատմագիր, Գյու Քելլե, Գի-
լիոմ (1491—1543) — Ֆրանցիսկ I-ի խոշոր զորավար, Կարլոս V-ի դեմ մղած պատե-
րազմների մասնակից, մեծարժեք հուշագրությունների հեղինակ, Ռեչո — քաղաք էմիլիայի
մարզում (հս. Իտալիա): Հետագա պատմությունը վերարկրում է 1521 թ. անցրերին:— 28:

10 Անտիգոնոս ու էվմենոս — Քլեոսանդր Մակեդոնացու զորավարներն ու մերձավոր
անձինք, նրա մահից հետո միմյանց դեմ կատաղի պայքարի բռնկեցին: Նույնի պա-
շարումը տեղի է ունեցել մ. թ. ա. 316 թ.:— 28:

Գլուխ VI

ՔԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԸ ՎՏԱՆԳՍՎՈՐ ԺԱՄ Է

1 Մյուսիդան — փոքրիկ քաղաք Պերիզորի մարզում, Մոնտենի ղոչակից մի քանի կի-
լոմետր հեռու: Նկարագրվող դեպքը տեղի է ունեցել 1569 թ.:— 29:

2 Կազիլին — քաղաք Կամպանիայում, Կապուայի մոտակայքում:— 30:

3 Ոչ ոք չպետք է օգուտ Բալի ուրիշի անխելությունից:— Յիցերոն: Պարտականու-
թյունների մասին, III, 17:— 30:

4 ... ոչ միշտ կարող եմ համաձայնել... նրա... հայացքներին...— Մոնտենը նկատի
ունի Կյուրոսի կենսագրությունը *Քսենոփոնի*, «Կյուրոսի պատմություն»:— 31:

5 ... պաշարելով ափսոսանք, այն դաժանորեն ուժեղացրեց...— նկարագրվող դեպքը
տեղի է ունեցել 1501 թ. Նեապոլի թագավորության համար Ֆրանսիայի թագավոր Լյու-
դովիկոս XII-ի (1462—1515) մղած պատերազմի ժամանակ:— 31:

6 Բալուա (կամ Կարինիան) — փոքրիկ քաղաք Արդեններում: Այսպես Մոնտենը սխալ-
վում է. նրա նկարագրած դեպքը տեղի է ունեցել Գինանում 1554 թ.:— 31:

7 ... իսպանացիները բախանցեցին Բալուա և սկսեցին այնտեղ կարգադրություններ
անել...— նկարագրված դեպքը տեղի է ունեցել 1522 թ., մարդիկ Պեսկարացին Կարլոս
V-ի զորավարն էր:— 31:

8 ... Բառուայում գտնվող էինյի Բալուա... գավառաց...— սա տեղի է ունեցել
1544 թ.:— 31:

9 Հաղթանակը միշտ առժանի է գովեստի...— Արիստո: Մոլեզին Ռոլանդը, երգ XY,
1:— 31:

10 Քրիստոս — փիլիսոփա ստոիկյան (մ. թ. ա. 280—մոտ 208 թ.): Ստոիցիզմի հիմնադիր Ջենոնի աշակերտը:— 31:

11 Ես գերադասում եմ գանգառվել... բախտից, քան ամաշիկ հաղթանակից:— Քվինտոս Կուրցիոս, IV, 13:— 32:

12 ... գերազանցելով ոչ թե խորամանկությամբ, այլ քաջությամբ:— Վերգիլիոս, էնեական, X- 732 և հաջ.:— 32:

Գլուխ VII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵՐ ՄՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԱՐԱՐՔՆԵՐԻ ԳՏՏԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ

1 Հենրի VII — Անգլիայի թագավոր (1485—1509), Թյուսթոնների գիմնասիայի հիմնադիրը: Ֆրիլո I, որը հորշորջվել էր Գեդեցիկ,— Ալատրիայի էրցհերցոգ, նիդերլանդների տիրակալ (1478—1506): Կաստիլիայի թագուհի Իսեթի Խուանայի հետ ամուսնանալուց հետո անվանապես համարվում էր Կաստիլիայի թագավոր, սակայն փնջու նրա անվանը երբեմն ավելացնում էին «դոն» մասնիկը: Հենրի VII-ը ազգակից էր Նախորդ՝ Պրանտագենետների դինաստիայի կանքաստերների ճյուղին, դինաստիա, որը պայքարում էր փր մյուս ճյուղի՝ Յորքերի դեմ: Այդ երկպառակություն արձագանքը եղավ Հենրի VII-ի աստիճանը Սաֆֆորդի՝ Յորքերի նախկին համախոհի նկատմամբ: Կանքաստերների գերբի վրա պատկերված էր կարմիր վարդ, Յորքերի գերբի վրա՝ սպիտակ, այստեղից է պատմության մեջ մտել Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմ (1455—1485) անվանումը:— 32:

2 Կոմս էզմոնտ (1522—1568) — իսպանական լծի դեմ նիդերլանդների ազգային ազատագրական պայքարի մասնակից, նիդերլանդների բարձր խավի ներկայացուցիչ էզմոնտը պատկանում էր ազնվականական օպոզիցիային, որը ձգտում էր կրկնում ստեղծել նիդերլանդական արխատոկրատիայի և խոշոր բուրժուազիայի ղերիշխանությունն ապահովող քաղաքական կառուցվածք: Կասկածելով, թե իբր նա իսպանական տիրապետության դեմ սկսված ապստամբության առաջնորդներից մեկն է, նիդերլանդներում Ֆրիլո II-ի փոխարքա դուքս Ալբան 1567 թ. ձերբակալեց էզմոնտին, մեղադրեց դավաճանության մեջ և մահապատժի ենթարկեց: էզմոնտի հետ միասին կառավարող լորդ զոհվեց նիդերլանդական վերնախավի մի ուրիշ ներկայացուցիչ՝ Մոնտենի հիշատակած կոմս Հորնը (մոտ 1520—1568), որը հանգես էր եկել նիդերլանդներում իսպանական տիրապետության դեմ:— 32:

3 ... զազունիք... հայտնեց իր գավակներին:— Հերոդոտոս, II, 121:— 33:

Գլուխ VIII

ՊԱՐԱՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ... ջուրը... արձակում է շուրթեր...— Վերգիլիոս: էնեական, VIII, 22 և հաջ.:— 34:

2 ... ստեղծվում են անիմաստ պատկերներ:— Հորացիոս: Պոեզիայի գիտությունը, 7—8:— 34:

3 ... նա չի ապրում ոչ մի տեղ:— Մարտիալիս, VII, 73:— 34:

4 Վերջերս առանձնանալով տանը...— Մոնտենը «Փորձերի» վրա աշխատանքն սկսել է 39 տարեկանում՝ 1572 թ.: «Փորձերի» առաջին հրատարակությունը, որն ընդգրկում էր միայն I և II գրքերը, լույս է տեսել Բորդոյում 1580 թ. III գրքի առաջին հրատարակությունը՝ 1588 թ.:— 35:

5 Պատապուրյունը հոգում ծնում է անվստահություն:— Լուկանոս, IV, 704:— 35:

Գլուխ IX

ՍՏԱՆՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- 1 ...Պլատոնը... այն անվանել է մեծ... ասավածուհի...— Պլատոն: *Կրիտիոս*, 108 d:— 35:
- 2 ... մի հին գրող...— Յիցերոն: *Ի պաշտպանություն Լիգարիոսի*, 12:— 37:
- 3 ... գնալ ընդդեմ սեփական խղճի:— *Մոնտենի ժամանակվա լատիներեն բառարաններում* mentiri (*ստել*) բառն ունի հետևյալ պարզաբանումը. quasi contra mentem ire *այսինքն՝ կարծես գնալ ընդդեմ խղճի*: Ֆրանսերեն՝ *ստել*— mentir. — 38:
- 4 ... օտարերկրացին մաղղ չէ:— Պլինիոս Ավագ: *Բնական պատմություն*, VII, 1:— 40:
- 5 ... ոմն Մերվեյլը...— Միլանը զավթելուց (1499) հետո որոշ ֆրանսիացիներ մնացին Միլանի դքսությունում և դարձան Միլանի ազնվականներ: Միլանի ազնվական Լրնակ Մոնտենի հիշատակած Մերվեյլը, Ֆրանսիացիների Իտալիա կտտարած արշավանքների և Միլանի դքսության համար մղվող պայքարի մասին ավելի մանրամասն տե՛ս ձեթ. 6, գլ. XIV:— 40:
- 6 ... իսկույն բռնվեց: Նկարագրված դեպքը տեղի է ունեցել 1533 թ.:— 41:
- 7 ... Հուլիոս II պապը... ուղարկեց մի դեսպան...— Պապ Հուլիոս II (1503—1513), Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XII (1498—1515) և Անգլիայի թագավոր Հենրի VIII (1509—1547):— 41:

Գլուխ X

ԱՇԵՈՒՅԺ ԵՎ ԴԱՆԴԱՂԿՈՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ

- 1 Ոչ բոլորն ունեն բոլոր ձիւրերը:— Լա Բոեսիի (1530—1563) այն բանաստեղծությունից, որ նրա մյուս ստեղծագործությունների թվում հրատարակել է Մոնտենը:— 42:
- 2 ... ցուցադրելու... իրենց ամբողջ գրավչությունը...— Փոխառված է Կաստիլիոնից, III, 8 (*տե՛ս ձեթ. 29, գլ. XVIII*):— 42:
- 3 Պուայն— իր ժամանակի հայտնի իրավաբան, Ֆրանսիայի կանցլեր 1538-ից մինչև 1542 թ.: Նկարագրված դեպքը տեղի է ունեցել 1533 թ., Կղեմես VII պապը (1523—1534) Ֆրանցիսկ 1-ի դաշնակիցն էր Կարլոս V կայսեր դեմ մղվող պատերազմներում:— 42:
- 4 Կարդինալ ժան Դյու Բելլե (1492—1560)— նշանավոր պետական գործիչ, որը հովանավորում էր ազատամիտ գիտնականներին ու գրողներին: Թարգնն որպես բժիշկ երկու անգամ ուղեկցել է Դյու Բելլեին գիվանազիտական հանձնարարություններով Հռոմ կատարած նրա ուղևորությունների ժամանակ:— 43:
- 5 Կասիոս Սեբոս— հռոմեացի հետոթ օգոստոս կայսեր օրոք: Արտաքսվելով Հռոմից մ. թ. թ. 8 թ., մահացավ տարագրության մեջ 33 թ.:— 43:
- 6 ... վախենալով. թե զայրույթը կկրկնապատկի ճշտ պերճախոսությունը:— Սենեկա Ավագ: *Տարածայնություններ*, III:— 43:
- 7 Եթե ... Լս զարժի դե՛սի ամբլին...— *այսինքն՝ եթե ես փորձեի ինձանից զատել բոլոր թույլություններս ու թերություններս*:— 44:

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- 1 ... ոչ մի բանն այնպես չի արեամարեմովում, ինչպես դրանք:— Յիցերոն: Գուշակության մասին, II, 57:— 44:
- 2 ... որոշ շափով հարմարեցված են դրա համար...— Պլատոն: Թիմեոս:— 45:
- 3 ... որոշ բույսերն են նախատեսված են գուշակության համար:— Յիցերոն: Աստվածների էությունների մասին, II, 64:
- 4 ... շատ բան... նախաճանաչները:— Յիցերոն: Աստվածների էությունների մասին, II, 65,— Հարուստիկներ— զոհաբերած կենդանիների փորձերի վրա գուշակողներ, հավանմաներ— թռչունների թռիչքով, կոնչյունով գուշակողներ:— 45:
- 5 ... բույլ տոր, որ հուսա անաբեկվածը:— Լուկանոս, II, 4 և հաջ.:— 45:
- 6 ... խղճով վիճակ է, երբ տառապում ես... օգնելու անգոր:— Յիցերոն: Աստվածների էությունների մասին, III, 6:— 45:
- 7 Անտոնիո դը Լեյվա— Կարլոս V-ի իսպանացի նշանավոր զորապետ:— 46:
- 8 Տոսանո— քաղաք Պիեմոնտում: Նկարագրված դեպքը տեղի է ունեցել 1533 թ.:— 46:
- 9 ... կուզի... սև ամպով պատի, կուզի պայծառ արև պարզի:— Հորացիոս: Ներբողներ, III, 29, 29 և հաջ.:— 47:
- 10 ... հոգին ուպագայի մասին չի մտածի,— Հորացիոս: Ներբողներ, II, 16, 25 և հաջ.:— 47:
- 11 ... պետք է լինի... գուշակություն:— Յիցերոն: Գուշակության մասին, 1, 6:— 47:
- 12 ... հարկավոր է ավելի շուտ ունկեղրել նրանց, քան լսել:— Պակովիտոսը Յիցերոնից արված քաղվածքում. Գուշակության մասին, I, 57:— 47:
- 13 ... տոսկանացիներ... արվեստը...— այսպեղ «տոսկանացիներ» նշանակում է «հին էթրուսկներ»:— 47:
- 14 Տագես— էթրուսկյան աստված, որն իբր էթրուսկներին սովորեցրել էր ապագան գուշակելու արվեստը:— 47:
- 15 ... մեկնում են ... արվանախներ...— XV—XVI դդ. արվանախներ (արաբերեն «ալ-մանա» — «ժամանակ») էին կոչում հաջորդ կամ մի քանի տարվա աստղագուշակություններ պարունակող հավելվածներով օրացուցանման բաները:— 48:
- 16 ... չլսի նշանակեմին:— Յիցերոն: Գուշակության մասին, II, 59:— 48:
- 17 Քսենոփան Կոլոթոնացին փորձում էր պայխարել... գուշակների դեմ:— Յիցերոն: Աստվածների էությունների մասին, I, 3: Քսենոփան Կոլոթոնացի (մ. թ. ա. մոտ 570—490 թթ.)— հին հույն բանաստեղծ փիլիսոփա:— 49:
- 18 Յոաքիմոս դել Ֆիորե (Յոաքիմոս Ֆլորցի) (մոտ 1145—1202)— միջնադարի միստիկ: Նրա հերետիկոսական ուսմունքը, որը, թեև միստիկական ձևով, պարունակում էր համաշխարհային պատմության զարգացման իր ժամանակի համար առաջադեմ կոնցեպցիա և Սուրբ գրքի մեկնման առանձնահատուկ մեթոդ, ազդեցություն է ունեցել XIII—XIV դդ. ժողովրդական շարժումների գաղափարախոսության վրա:— Լեոն VI, որը հորշորջվել էր Փիլիսոփա,— բյուզանդական կայսր (886-ից մինչև 912 թ.), բեղմնավոր գրող, որն, ի միջի այլոց, ստեղծել է տասնչորս պատգամախոսություններից՝ բանդկտցած յամբոկան բանաստեղծությունների մի ժողովածու:— 49:
- 19 Սոկրատեսի «Իեր»...— Սոկրատեսը վկայակոչում էր ներքին ձայնը, որն իբր խրատում էր իրեն կարևոր հարցերում: Այդ ներքին ձայնը նա անվանում էր իր «դեյեր»:— 49:

Գլուխ XII

ՏՈԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ... ևրաճ ևաղթեցին:— Պլատոն, Լաբես, 191Ը, Պլատեա-հարավային Բեռտիայում (Հունաստան) գտնվող քաղաք, որի մոտակայքում մ. թ. ա. 479 թ. հույները պարտության մատնեցին պարսիկներին:— 50:

2 Ինգաութիս (այլ ընթերցմամբ Իդալութիս)— մ. թ. ա. VI—V դդ. սկյութական կիսաառասպելական արքա (Հերոդոտոս, IV, 127):— 51:

3 Կուլերին— փոքր տրամաշափի երկարափող հին թնդանոթ:— 51:

4 Լորենցո Մեդիչի— Լորենցո II (1492—1519), թագավորի մայրն էր Եկատերինա Մեդիչին (1519—1589):— 51:

5 ... Վիկարիատ կոչվող մարզում...— նկատի են առնված սլավոնական տիրույթները:— 51:

6 ... արցունքները զուր են հոսում:— Վերգիլիոս, էնեական, IV, 449:— 52:

Գլուխ XIII

ԹԱԳԱՎՈՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԳԻՊՄԱՆ ՄԻՍԱԿԱՐԳԸ

1 Մարգարիտ Անգուլեմցի կամ (այն բանից հետո, երբ նա երկրորդ անգամ ամուսնացավ Նավարայի թագավորի հետ) Նավարացի (1492—1549), Ֆրանցիսկ I թագավորի քույրը, հովանավորել է կրոնական ազատամտության համար հալածվող գրողներին, ինքը բանաստեղծուհի էր, դրամատուրգ և հեղինակը «Հեպտամերոն» նովելների ժողովածուի, ուր դեպքով կերպով նկարագրվում են այն ժամանակվա տոհմիկ հասարակության բարքերը:— 53:

Գլուխ XIV

ԱՅՆ ՄԱՍԻՆ. ՈՐ ԲԱՐՈՒ ԵՎ ՉԱՐԻ ՄԵՐ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԶԳԱԿԻ ՉԱՓՈՎ ԿԱՆՎԱԾ Է ԴՐԱՆՑ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻՑ

1 ... մառղիաճց տանջում են ոչ թե... իբերը, այլ դրանց մտքին... պատկերացումները:— Մոնտենը նկատի ունի էպիկտետոսի «Ուղեցույցը», 5: Այս ստույթը հունական մյուս ստույթների հետ գրված էր Մոնտենի դրողարանի առաստաղին:— 54:

2 Ո՛վ դու մահ, ուր էր, թե չիսի... կյանք...— Լուկանոս, IV, 580—581:— 55:

3 ... սխաճ, որը կղործե ևս խառանանհեր:— Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, V, 40: Կսիմոսոս— Ալեքսանդր Մակեդոնացու առավել նշանավոր զորապետներից մեկը: Նա աչքի էր ընկնում ծայրահեղ դաժանությամբ և դրանով հարուցել էր համընդհանուր ատելություն, սպանվել է մ. թ. ա. 282 թ.:— 56:

4 Նարսինգյան քաղալորույթանում...— ըստ Օգորիայի (1506—1580), որին Մոնտենն անվանում է «իր ժամանակի լատինական լավագույն պատմադիրը» և որի աշխատությունից օգտվում էր ինչպիսի լատիներեն բնագրից. (De gestis regis Emmanuelis), այնպես էլ Սիմոն Գուլարի ֆրանսերեն թարգմանությունից (Histoire de Portugal, contenant les entreprises, navigations et gestes mémorables des Portugallois), Նարսինգյան թագավորությունը սահմանակից էր Հնդկաստանի (Գոա) պորտուգալական տիրույթներին:— 57:

5 ... ես ինքս ինձ հանձնեմ նրան:— Այստեղ Մոնտենն ընդօրինակում է Բոնավենտուրա Դեպերիեի «Նոր զվարճություններ և ուրախ զրույցներ» ժողովածուի նախաբանին (B. Desperier. Nouvelles récréations et joyeux devis): Դեպերիե—Մարգարիտ Նավարացու (ծնվ. 1510—1515 թթ. միջև, մեջ. 1544 թ.) սերնդակից խոշոր գրող, բացի հիշյալ ժողովածուից, նրան է պատկանում նաև «Նազադուիթյան ձեռնարկ» գիրքը, որն այսօր էն հեղինակի աթեիստական միտումների և ծայրահեղ ազատամարտության պատճառով:— 57:

6 Միլանի համար մեր վերջին պատերազմների ժամանակ...— Միլանին աիրելու համար 1499-ից մինչև 1559 թ. (Կատո Կամբրեզիի պայմանագիրը) պատերազմներ են մղել Ֆրանսիայի թագավորներ Լյուդովիկոս XII-ը, Ֆրանցիսկ I-ը և Հենրի II-ը, որոնք վիճարկում էին Հյուսիսային Իտալիան Միլանի դքսերի ու Գերմանիայի կայսրերի հետ (վերջիններս այդ մարզի նկատմամբ անվանապես ունեին սուվերեն իշխանություն): Ի վերջո ֆրանսիացիները ստիպված եղան հեռանալ Իտալիայից, իսկ Միլանին տիրեց Իսպանիան:— 57:

7 ... երբ Խուտոսը պաշարել էր Քսանթոս քաղաքը...— Պլուտարխոս, Բրուտոս, 31: Քսանթոս— քաղաք Լիկիայում (Փոքր Ասիա): Պլուտարխոսը հայտնում է, թե Բրուտոսին հաջողվել է փրկել ընդամենը 150 մարդ:— 57:

8 ... յուրաքանչյուր ուր ավելի շատ կյանքը կփոխարինի մահով, քան իր երկրի օրեօրեներ՝ պարսկականով:— Այսպիսին էին Պլատոնի ճակատամարտից (մ. թ. ա. 479 թ., Դիոգորոս Սիցիլիացի, XI, 29) առաջ հունների տված հանդիսավոր երգման առաջին բառերը:— 58:

9 ... Կաստիլիայի քաղաքներն... արաբացիներն հրեաներին...— Իսպանիայից հրեաների արտաքսման հրամանագիրը հրապարակեց Ֆերդինանդ և Իզաբել թագավորական զույգը 1492 թ.: Պորտուգալիայում այդ ժամանակ իշխում էր Հովհաննես (Ժոան) II թագավորը:— 58:

10 ... Մե ժամանակի պատմագիր...— նկատի է առնված պորտուգալացի պատմագիր Եպիսկոպոս Երոնիմ Օգորիոն. Մոնտենը վկայակոչում է Օգորիոյի վերը հիշատակված աշխատությունը (տես ծնթ. 4, գլ. XIV):— 58:

11 «Փորձերի» 1595 թ. հրատարակությունում սրանից հետո գալիս է «Կասաեյունդարի քաղաքում հիսուն հերետիկոս արիքոցիներ միաժամանակ հաստատակամորեն գերադասեցին այսօրված լինել խարույկի վրա, քան հրաժարվել իրենց համոզմունքներից» նախադասությունը, արիքոցիներ— այսպես էին կոչում Ֆրանսիայի հարավի բոլոր հերետիկոսներին (անվանումը գալիս է Ալբր քաղաքից): Այս հերետիկոսներին բանադրեց Լատրանի 3-րդ վեհաժողովը (1179 թ.): 1209 թվականից արիքոցիների դեմ ձեռնարկվեցին նրեք այսպես կոչված «խալակրաց արշավանքներ», որոնք ուղեկցվում էին հերետիկոսության կողմնակիցների զանգվածային ջարդերով:— 59:

12 ... սայցե լեն... մահվանը ընդառաջ:— Յիցերոն: Տուսկուլանյան զրույցներ, I, 37:— 59:

13 ... մի հին գրող...— Սեեկա, Նամակներ, 70:— 60:

14 Պիոն (ծնվ. մ. թ. ա. մոտ 365 թ., մեջ. մոտ 275 թ.), հին հույն փիլիսոփա, անակ սկեպտիցիզմի հիմնադիր, զգալի...ազդեցություն է թողել: Մոնտենի վրա:— 60:

15 Ալիստիպոս, կիրենցի (քաղաք հս. Աֆրիկայում), փիլիսոփա (մ. թ. ա. մ. մոտ 434—360 թթ.): սուրը նրանիմ (մոտավորապես 343—420), Աստվածաշունչը թարգմանել է լատիներեն, Կաթոլիկ եկեղեցու կողմից ընդունելություն գտած այդ թարգմանությունը հայտնի է Վուլգատներ անվամբ:— 60:

16 Պամպիսո Մեծ— հռոմեացի զորավար և քաղաքական գործիչ (մ. թ. ա. 106—

48 թթ.), որը, Կեսարի նման, ձգտում էր միահեծան թոնապետութիւն:— Պոսիդոնիոս (մ. թ. ա. 135—50 թթ.)— պաամազիր, մաթեմատիկոս և աստղագետ, Հռոմում հեղե- նիսաական կրթվածութիւն խոշորագույն պրոպագանդիստ, որը լայն ճանաչում էր վա- յելում հռոմեական գիտնականների ու պետական գործիչների շրջանում:— 60:

17 ... մեր ամբողջ բանակցութիւնն էլ կլինի կեղծ:— Լուկրեցիոս, IV, 486:— 61:

18 ... նվազ տանջալի է... մահը, բան նրա սպասումը:— Առաջին տողը Մոնտանի վերցրել է իր բարեկամ էտիեն դը Լա Բոեսիի լատինական երգիծանքից, երկրորդը՝ Օվի- գիոսից (Հերոսագուններ: Արիադնայի ուղերձները Թեսսալիս, 82):— 61:

19 Մահը չարիք է լոկ այն բանի համար, ինչ նրան նետում է:— Օգոստինոս: Աստ- լոն քաղաքի մասին, I, 11:— 62:

20 Քաջութիւնը վտանգի է ծառայի— Սենեկա: Նախախնամութիւն մասին, 4:— 63:

21 ... սվոփանք են գտնում... ռոկուտիւնայն ու հաստատուտիւնայն մեջ:— Յիցերոն: Գերագույն բարիքի և գերագույն շարիքի մասին, II, 20:— 63:

22 ... առաքինութիւնը... այնքան ավելի հանելի է:— Լուկանոս, IX, 404:— 63:

23 Եթե ցտվը տանջալի է...— Յիցերոն: Գերագույն բարիքի և գերագույն շարիքի մասին, II, 29:— 63:

24 ... սաստիկ տառապանքներն ավարտվում են մահով...— Յիցերոն: Գերագույն բա- րիքի ու գերագույն շարիքի մասին, I, 15: Այս բառերը Յիցերոնը վերագրում է էպիկու- յան Տորկվատասին:— 64:

25 Պլատոնը երկյուղում է... տառապանքի ու վայելիքի անձնատուր լինելու մեր հա- կումից...— Պլատոն: Ֆեդոն, 65C:— 65:

26 Նրանք տառապում են... այնքանով, որքանով սեղի են տալիս առապանքի առ- ջել:— Օգոստինոս: Աստլոն քաղաքի մասին, I, 10:— 65:

27 ... մեկն... նրան ներշնչեցինք մեր կարիքներն ու... սովորութիւնները:— Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, V, 27:— 66:

28 ... այն մա՞րդը, որ շիամեցավ կտրվել զբից, երբ նրան մականերձում էին:— Սենեկա: Նամակներ, 78, 18:— 67:

29 ... գնալով ավելի ննարամիա դարձող տանջանքները... ծառայում էին... նրա հաղթանակին:— Նոսքը, հավանաբար, Գեմոկրիտի հետևող և Պիտոնի ուսուցիչ սկեպտիկ Անաքսարքոսի (մ. թ. ա. IV դ.) մասին է, Կիպրոսի բոնապետ Նիկոկրեոնասի հրամա- նով սանդի մեջ ձեռնասպան արվեց: Տե՛ս Գիոգենես Լաերտցի, IX, 58—59:— 67:

30 Ո՞ր մեկն է... մահացու հարված ընդունելու հրաման ստանալով, ներս փաշել Վիրը:— Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, II, 17:— 67:

31 Կան այնպիսիները, որոնք աշխատում են... վերադարձնել դեմքի չափերը:— Տիրուլլոս, I, 8, 45—46:— 67:

32 ... մեր թագավոր...— նկատի է առնվում Յրանսիայի թագավոր Հենրի III-ը (1574—1589), 1573 թ., երբ Յրանսիայի գահը դրաղեցնում էր նրա եղբայր Կարլոս IX-ը, որպես Լեհաստանի կաթոլիկական խմբի հովանավորչալ, ընտրվեց Լեհաստանի թագա- վոր և երգվեց հավատարիմ մնալ իր իշխանութիւնը խիստ սահմանափակող որոշակի հողվածների: Մեկ տարի անց, երբ Կարլոսը մահացավ, Հենրի III-ը շտապ փախավ Յրանսիա, որպեսզի եղբորից հետո ժառանգեր գահը:— 68:

33 Ասպեր— թուրքական մանր դրամ:— 68:

34 ... խոք վերք կհասցնեք իր...— թուրքերի մասին Մոնտանի անդեկոթիւնների կա- րևոր աղբյուրներից մեկը XVI դ. կեսերի ֆրանսիացի նշանավոր արեւելագետ Գիլիոմ Պոստելի (Histoire des Turcs, 1560) գիրքն էր:— 68:

35 Մենք վստահության արժանի վկայից իմանում ենք...— նկատի է առնված Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի ժամանակագիր պատմագետ Ժուանվիլը (1224—1317), որը նրան ուղեկցում էր յոթերորդ խաչակրաց արշավանքում (1248—1254): Տե՛ս:

J. de Joinville. Mémoires ou Histoire et chronique du très chrétien roi saint Louis, t. 1. Paris, 1858, էջ 34:— 68:

36 Գիլիամը՝ Աքվիտանիայի կամ Գիենի դուքսն ու Պուատուի կոմսը (մ. թ. 1137 թ.), իր բոլոր հողերը թողեց միակ դստերը՝ Ալիենոր Աքվիտանուհուն: Որպես օժիտ դրանք անցան սկզբում նրա առաջին ամուսնուն՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII-ին, իսկ ապա երկրորդին՝ Անգլիայի թագավոր Հենրի II-ին:— 68:

37 ... Անժուի դուքս Ֆուլկը...— Մոնտենը նկատի ունի Ֆուլկ III-ին, մականունը Ակ (972—1040), որն իր զավթումներով զգալիորեն ընդլայնեց անժույան տան տիրույթները: Տիպիկ գիշատիչ ֆեոդալ Ֆուլկ III-ը հանուն իր տիրույթների խաշորացման չէր խորշում ոչ մի միջոցից և հայտնի էր զաժան շարագործություններով ու ուխտագրծությամբ: Իր «մեղքերը» քաղելու համար Ֆուլկ III-ն ուխտ գնաց Երուսաղեմ:— 69:

38 ... դառնությունը գոյություն ունի ոչ թե ինքնին, այլ մեք պատկերացման մեջ:— Ցիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, III, 28:— 69:

39 Թերեսոս— թրակիացիների արքան (Գիոգորոս Սիցիլիացի, XII, 50):— 70:

40 Վայրի մի ցեղ, որը կյանքը չի պատկերացնում առանց զենքի:— Տիտոս Լիվիոս, XXXIV, 17:— 70:

41 Կարդինալ Կարլո Բոռոմեո— Միսլինի արքեպիսկոպոս (1538—1584):— 70:

42 ... այն մարդը, որն ինքն իրեն գրկել է տեսողությունից:— նկատի է առնվում Դեմոկրիտը: Այն ավանդությունը, թե Դեմոկրիտն ինքն է իրեն կուրացրել, անհավատարի է:— 71:

43 Թալես (մ. թ. ա. VII դ. վերջեր— VI դ. սկզբներ)— հին հույն ականավոր գիտնական և փիլիսոփա, հունական մատերիալիստական փիլիսոփայության նախահայրը (Գիոգենես Լաերտցի, I, 26):— 71:

44 Մի մարդ... իր ամբողջ գրամը նետեց... ծովը...— այդ մարդու անունն Արիստիպոս է (Գիոգենես Լաերտցի, II, 77, Հուրացիոս: Երգիծանքներ, II, 3, 100):— 71:

45 Էպիկուր (մ. թ. ա. 341—270)— հին հույն ականավոր մատերիալիստ փիլիսոփա նրա ասույթները տե՛ս. Սենեկա: Նամակներ, 17, 7:— 71:

46 Բագում մերկաձուփ ծովերով:— Կատուլլոս, IV, 18:— 72:

47 Ճակատագիրն ապակի է. փայլելով՝ փշրվում է:— Պուփլիոս Սիրոս: Ասույթներ:— 73:

48 Ամեն ոք ինքն է կռում իր բախար:— Սալլուստիոս: Երկրորդ նամակը Կեսարին, 1:— 73:

49 Հարստություն ունենալով կարիքի մեջ լինելն... ազգատություն է... Սենեկա: Նամակներ, 74, 4:— 73:

50 Իրոն— հին հույն փիլիսոփա (մ. թ. ա. 325—253): Մեզ են հասել նրա սրամտության մասին վկայող որոշ ասույթներ: Տեքստում բերված ասույթը տե՛ս Սենեկա, Հոգեկան անդորրի մասին, 8:— 74:

51 ... հարստությունն... ամենևին կույր չէ... նեոատես է...— Պլատոն: Օրենքներ, I, 931c:— 75:

52 ... Գիոնիսիոսը հրամայել է հետ վերադարձնել... խլած զանձեր...— Պլուտարքոսի «Ասույթներում» այս անեկդոտը պատմվում է Գիոնիսիոս հոր հասցեին:— 75:

⁵³ Ագահ չլինելն տղե՛ն հարստութիւն է...— Յիցերոն: *Տարիմաստութիւններ*, VI, 3.— 76:

⁵⁴ ... լիության նշանը բավարարվածութիւնն է:— Յիցերոն: *Տարիմաստութիւններ*, VI, 2:— 76:

⁵⁵ Անա մի օրինակ, որին ևս կենտեկի...— Վսենոփոն: *Կյուրոպեգիա*, VII, 3:— 77:

⁵⁶ Հարցն այն է, որ սուլորես տիրապետել ին՜դ քեզ:— Յիցերոն: *Տուսկուլանյան գրույցներ*, II, 22:— 78:

Գլուխ XV

ԱՄՐՈՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԻՄԱՍ ՀԱՄԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԺ ԵՆ ԿՐՈՒՄ

¹ ... Պավիայի պաշարման ժամանակ...— Պավիայի պաշարումը ֆրանսիական զորքերի կողմից և ապա վերջիններիս շախչախումը վերաբերում է 1525 թ.: Հին Ֆրանսիայում կռնետաբլը պատերազմի ժամանակ թուրը զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, խաղաղ ժամանակ՝ թագավորի առաջին խորհրդականը: Այս կոչումը վերացվեց 1627:— 79:

² ... գրավեց Վիլլանո ամրոց...— սա տեղի է ունեցել 1536 թ.: Դոֆին Ֆրանցիսկ—Ֆրանցիսկ I-ի (մ. ճ. 1536) ավագ որդին:— 79:

³ Մարտեն Դյու Բելլե (մ. ճ. 1559)— զորապետ, կարդինալ Ժան Դյու Բելլեի եղբայրը: Նա թողել է հուշագրութիւններ, որոնք շարունակութիւն ևն ծառայել նրա մյուս եղբոր՝ քաղաքական գործիչ, պատմագիր և պարսավագիր Գիյոմի հուշագրութիւններին: Մոնտենը շարունակ դիմում է Դյու Բելլե եղբայրների հուշագրութիւններին:— 79:

Գլուխ XVI

ՎԱՆԿՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ

¹ Դը Վերվենը Բուլոնն Անգլիայի թագավոր Հենրի VIII-ին հանձնեց 1544 թ.:— 80:

² Քարոնդ— Սիցիլիայի և Կալաբրիայի հունական գաղութների օրենսդիր (մ. թ. ա. VII դ.):— 81:

³ ... քան դեպի դուրս:— Տերաուլիանոս: *Ջատագութիւն*, IV:— 81:

⁴ ... դատապարտել մանվան:— Ամիանոս Մարցելինոս, XXIV, 4 և XXV, 1:— 81:

Գլուխ XVII

ՈՐՈՇ ԳԵՍՊԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

¹ Թող նավավարը խոսի միայն քամիների մասին...— Պրոպերցիոս, II, 1, 43—44: Ստեֆան Գուալցոյի խոսելերեն թարգմանութիւնը:— 82:

² Արխիդամոս III (մ. թ. ա. 361—338)— Սպարտայի թագավոր: Ագեսիլաչոզ II-ի որդին, հմուտ զորավար:— 82:

³ ... Կեսարը... նկարագրում է... իր նայտնագործութիւնները...— Տե՛ս, օրինակ, Հոննոսի կամուրջի նկարագրութիւնը: Կեսար: Նոթեր գաղիական պատերազմի մասին, IV, 17:— 82:

⁴ Ալարկոս Եզն ուզում է թամբի տակ լինել...— Հոբագիտ: Ուղերձներ, 1, 14, 43:— 83:

⁵ Իր Լանժե— Գլխով Գլու Բելլե: «Պատմություն» նրա հուշագրությունները (ան՝ օ ծնթ. 3, գլուխ XV):— 83:

⁶ Պուրլիոս Լիցինիոս Մուցիանոս Կրասոս (կոնսուլ մ. թ. ա. 131 թ.)— Հոմեացի քաղաքական գործիչ և իրավաբան, Տիրերիոս Գրակթոսի հողային ռեֆորմի եռանդուն կողմնակիցը:— 85:

Գլուխ XVIII

ՎԱՍԻ ՄԱՍԻՆ

¹ ... մագերս բիզ-բիզ կանգնեցին, և լեզուս կարկամեց:— Վերգիլիոս, էնեյդան, II, 774:— 86:

² ... ընդունել են... սպլտակ խաչը՝ կարմիր խաչի աեղ:— Մոնտենի ժամանակվա ֆրանսիական թագավորական զորքերի դրոշներին պատկերված էր սպիտակ խաչ, իսպանացիների շատ դրոշներին՝ կարմիր. Իսպանիայի հզոր ասպետական ուխտերի՝ Կալատրավի ուխտի և Սանտ Յազոյի ուխտի խորհրդանշանը:— 86:

³ Երբ Թուրոնյան արևայազնը գրավում էր Հոմը...— Կարլոս V-ի մոտ ծառայության անցած բուրբոնյան արքայազնի հրամանատարությունը նրա զորքերի կողմից 1527 թ. Հոմի գրավումն ուղեկցվում էր արտասովոր դաժանություններով և քաղաքի լիակատար թալանով:— 86:

⁴ Գերմանիկ— Հոմեական զորավար, Տիրերիոս կայսեր (մ. թ. ա. մոտ 16 թ.— մ. թ. 19 թ.) եղբորորդին:— 87:

⁵ Թևսպիլևս— ըլուզանդական կայսր (829—842)— Հագարացիներ, արաբացիների, այսինքն՝ արարների. աստվածաշնչային անվանումը:— 87:

⁶ Վախը ստիպում է սահմոկել նույնիսկ նրանից, ինչ կարող էր օգնել:— Քվինտոս Կուրցիոս, III, 11:— 87:

⁷ Խռովությունն ու վայրագությունները շարունակվեցին...— այն դեպքը, որի մասին պատմում է Մոնտենը, տեղի է ունեցել Կարթագենում մ. թ. ա. IV դ.: Քաղաքում իրադրությունը ծայրաստիճան լարված էր: Մոլեզնում էր ժանտախարը, որն ամեն օր հազարավոր կյանքեր էր տանում: Չարագուշակ լուրեր էին պտտվում սարգինական նավերի մոտեցման և անհաշիվ խմբերով Կարթագենի վրա հարձակվող աֆրիկացիների մասին: Մոնտենի սկզբնաղբյուրն է Դիոդորոս Սիցիլիացին, XV, 24:— 88:

Գլուխ XIX

ՈՐԻՎԷ ՄԵԿԻ ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼ ՉԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՉԻ ԿԱՐՆԼԻ ԳԱՏԵԼ, ՔԱՆԻ ԴԵՌ ՆԱ ՉԻ ՄԱՀԱՅԵԼ

¹ ... ոչ ոքի չի կարելի երջանիկ նորջոջել մինչև նրա մանը...— Օլիդիոս: Կերպարանափոխություններ, III, 135 և հանչ.:— 88:

² Ագեսիլայոս:— Տե՛ս ծնթ. 13, գլ. III:— 89:

³ ... անա թե ինչքան բանկ նստեց Պոմպիոսին նրա կյտնի երկարացումը...— Մոնտենը նկատի ունի Պոմպիոսի ծանր դրությունը, երբ նա, Փարսալոսի մոտ Կեսարից ջախջախված (մ. թ. ա. 48 թ.), ուղևորվեց դեպի արևելք՝ Եգիպտոսի արքայի օգնություն:

նը փնտրելու: Եզիպատոսի մանկահասակ թագավորի դրանիկները սպանեցին փախուստ-
կանին և նրա գլուխն ու մատանին հանձնեցին մի քանի օր հետո ժամանած Կեսարին (Յի-
ցերոն: Տուսկուլանյան գրույցներ, I, 35):— 89:

⁴ ... Լոդովիկա Աֆորցան (1452—1508), որին շվեյցարացիները հանձնեցին Ֆրան-
ցիակ I թագավորին, իր կյանքի վերջին յոթ տարին (ըստ Մոնաենի տասը ասորի) անց-
կացրեց բանտում:— 89:

⁵ ... մի՞թե դահե՞ր ձևո՞ւով շմեռով ամենաշնաղ բազունի՞ն...— Եկատի է առնված
Մարիա Ստյուարտը (1542—1587)՝ Շոտլանդիայի թագուհին և Ֆրանսիայի թագավոր
Ֆրանցիսկ II-ի այրին:— 89:

⁶ Այդպես մի թափնված օւժ տապալում է մարդկանց գործերը...— Լուկրեցիոս, V,
1233 և հաջ.: Փակեղներ— ձողերի կապոցներ, իշխանության խորհրդանիշ հին Հռո-
մում:— 89:

⁷ Լարերիոս (Գեցիմոս Յունիոս)— հռոմեացի հեծյալ, միմերի հեղինակ, Կեսարը
նրան ստիպեց հանդես գալ իր ստեղծագործության միմերից մեկում: Մակրոբիոսը մեջ է
բերում այն միմի նախերգանքը, որում Լարերիոսը խաղացել է Կեսարի ներկայությամբ:
Այդ նախերգանքում Լարերիոսը վշտանում է իր ստորացման համար, քանզի հռոմեացի
հեծյալի համար դերասանությունը խայտառակություն էր համարվում:— 90:

⁸ ... ես... մեկ օրն ապրել եմ ավելի, քան պետք է...— Մակրոբիոս: Սառուրնա-
ան, II, 7, 3, 14—15:— 90:

⁹ ... միայն այդ ժամանակ... եղբու խաբից դուրս են թռչում անկեղծ խոսեր...—
Լուկրեցիոս, III, 57—58:— 90:

¹⁰ ... մի հին հեղինակ...— Սենեկա, տե՛ս Նամակներ, 26 և 102:— 90:

¹¹ Պուբլիոս Կոռնելիոս Սկիպիոն Նազիկան, ինչպես պատմում է Սենեկան (Նամակներ,
24), Փարսալոսի Ճակատամարտից (մ. թ. ա. 48 թ.) հետո ինքնասպան եղավ: Կեսա-
րականները հարձակվեցին նրա նավի վրա, տեսնելով, որ հետագա գիմադրությունն ան-
օգուտ է, Սկիպիոնն ինքն իրեն սրախողխող արեց: Երբ մոտ վազած թշնամի զինվորները
հարցրին, «Իսկ ո՞ւր է գորապետը», նա, մահամերձ, պատասխանեց. «Ջորապետն իրեն
հիանալի է զգում»:— 91:

¹² Մանտինեայի ճակատամարտում մահացու վիրավոր էպամինոնդասը (տես ծնթ.
6, գլ. I), ինչպես հաղորդում են անտիկ գրողները, մեռնելիս ասել է. «Ծս ապրել եմ
ինչքան պետք է, քանզի մեռնում եմ պարտություն չկրած», Քարբիոս— աթենացի գորա-
պետ, որը հաջողությամբ կռվել է Ազեսիլայոսի և էպամինոնդասի դեմ, սպանվել է մար-
տում (մ. թ. ա. 357 թ.), Լիկիյրատես— աթենացի ականավոր գորավար (մ. թ. ա. 415—
353 թթ.):— 91:

¹³ Ի՞ր մահով ես ձեռք բերեց ավելի մեծ հպարտյուն... քան երազում էր կենդանու-
րյան օրո՞ւ:— Հայտնի չէ, թե՛ այստեղ ում մահը նկատի ունի Մոնտենը: Ենթադրում
ենք, թե խոսքը վերաբերում է կամ Լոթարինգիայի դուքս Հենրի Գրիգին, որը 1588 թ. Հեն-
րի III թագավորի հրամանով սպանվեց Բյուլոյում, կամ Մոնտենի բարեկամ Հոսիեն Լա
Բոեսին, որի մահվանը (1563 թ.) նա ներկա է եղել:— 91:

Քերտվա XX

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՓԻԼԻՍՈՓՈՒՅՆԷԼ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՍՈՎՈՐՆԷԼ ՄԵՌՆԵԼ

¹ ... վիլիստիպելիք լինել քեզ նախապատրաստել մտնվան:— Յիցերոն: Տուսկու-
լանյան գրույցներ, I, 37:— 91:

- 2 ... ապրել մեր հանույթի համար...— *Տե՛ս էջիկիաստ, III, 12:— 92:*
- 3 ... մի կողմ բողոքենք այդ եղևիմ նմարհները:— *Սենեկա: Նամակներ, 117, 30:— 92:*
- 4 ... Քսենոփիլեսը, որը մահացավ հարշուր վեց տարեկանում... Վալերիոս Մաֆի-
մոս, VIII, 13, 3: Այստեղ Մոնտենի մոտ անճշտություն կա. Քսենոփիլեսը փրիխոփա է,
իսկ երածիշան Արիստոքսենասն է:— 94:
- 5 ... մեզ ընդմիջա կործանվելու համար կղատապարտի...— *Հուրացիոս: Ներբողներ, II, 3, 25 և հաջ.:— 94:*
- 6 Այն միշտ սպառնում է, ինչպես Տանտալոսի ժայռը:— *Ցիցերոն: Գերագույն բարի-
քի և գերագույն շարիքի մասին, I, 18:— 94:*
- 7 ... ոչ բռնաճեղքի գեղգեղանքն ու կիրառի նվազը կվերադարձնեն նրա բունը:— *Հու-
րացիոս: Ներբողներ, III, 1, 18 և հաջ.:— 94:*
- 8 Նա ... տանջվում է ապագա պատուհասների մահից:— *Կլավդիանոս: Ընդդեմ Ռու-
փինոսի, II, 137—138:— 94:*
- 9 Նա որոշեց գնալ, գլուխը շրջելով նեա:— *Լուկրեցիոս, IV, 472:— 95*
- 10 ... հոռմեացիների լեզվով «մահ» վանկը...— *Լատիններեն մահ՝ MOS— 95:*
- 11 ... մեր քվարկուրյան...— *Կարլոս IX-ը 1563 թ. օրդոնանսով* հրամայեց տա-
րեակիզը համարել հունվարի 1-ը: Նախկինում տարին սկսվում էր գատկից:— 95:*
- 12 ... նիշելով Մարտուաղային...— *Համաձայն աստվածաշնչային առասպելի, Մա-
թուսաղա նահապետի ապրել է 969 տարի:— 95:*
- 13 Մարդն ի վիճակի չէ կանխատեսել, թե ինչից պիտի խուսափի...— *Հուրացիոս:
Ներբողներ, II, 13, 13—14:— 96:*
- 14 ... ո՞վ կարող էր մտածել, թե Բրեստնի դուխը կնգմվեր ամբոխում...— *Մոնտենը
Նկատի ունի Բրեստնի դուքս Ժան II-ին, որը զոհվել է 1305 թ.: Մինչև պապ ընտրվելը
Վոլմես V-ը Բորդոյի արքեպիսկոպոսն էր, ահա թե ինչու է Մոնտենը նրան հաբուան
անվանում:— 96:*
- 15 ... մեր թագավորներից մեկը սպանվեց... ընդհանուր զվարհուրյանը...— *Այդպես
զոհվեց Հենրի II-ը, որը մահացու վերք ստացավ 1559 թ. իր դստեր ամուսնության առ-
թիվ կազմակերպված զինախաղի ժամանակ:— 96:*
- 16 ... մի՞թե չմահացավ... ուրիճ վիթվառել էր վարազը:— *Ցիլիպ IV Գեղեցիկը՝
տաճարականների** հալածողը, զոհվեց 1131 թ., որսի ժամանակ:— 96:*
- 17 ... խեղդվեց խաղողի կորիզով...— *ըստ ավանդության, այդպես է մահացել հին
հունական քնարերգու Անակրեոնը (մ. թ. ա. VI դ.):— 96:*
- 18 ... միայն թե իմ քերթությունները զվարհացնեին... ինձ:— *Հուրացիոս: Ուղերձներ,
II, 2, 126 և հաջ.:— 97:*
- 19 ... եա հետապնդում է նաև փախչող տղամարդուն և չի խնայում պատանու... քի-
կունքը:— *Հուրացիոս: Ներբողներ, III, 2, 14 և հաջ.:— 98:*
- 20 ... մահն ասպազենքի միջից կհանի նրա... գլուխը:— *Պրոպերցիոս, III, 18,
25—26:— 98:*
- 21 ... ամեն մի օր համարիք վերջինը...— *Հորացիոս: Ուղերձներ, I, 4, 13—14:— 98:*

* Որոշ երկրներում բարձրագույն մարմինների իրավական ակտեր: Մ. հ. թ.:

** Կաթոլիկական հոգևոր ասպետական ուխտի հետևորդներ: Մ. հ. թ.:

- 22 Երբ ծաղկում տարիքս իր ... գարունն էր անցկացնում:— *Կատուլլոս, LXVIII, 16:— 99:*
- 23 ... այլևս երբևից նևարավոր չի լինի հետ կանչել:— *Լուկրեցիոս, III, 915:— 99:*
- 24 ... ամեն ոք... անվստահ է վաղվա օրվան:— *Սենեկա: Նամակներ, 91, 16:— 100:*
- 25 Ինչո՞ւ վաղանցուկ կյանքում... ձգտեմք... շատ բաների:— *Հորացիոս: Ներբողներ, II, 16, 17:— 100:*
- 26 Տխրայի մեկ օրն ինձանից խլեց կյանքի բոլոր պարզները:— *Լուկրեցիոս, III, 898—899:— 101:*
- 27 Աշխատանքները մեռնում են անավարձ...— *Վերգիլիոս: Հնեական, IV, 88 և հաջ. Մեջ է բերվում ոչ հռոմեացիների մոտ manent-ի փոխարեն pendent է:— 101:*
- 28 Ես ուզում եմ, որ մահն ինձ գտնի աշխատելիս:— *Օվիդիոս: Սիրային բանաստեղծություններ, II, 10, 36:— 101:*
- 29 ... դու... այլևս չունես այդ ամենի ձգտումը:— *Լուկրեցիոս, III, 900—901:— 102:*
- 30 ... արշավը ցողելով կերտվումի սեղանները:— *Սիրիոս Իտալիկ: Պունիկյան պատերազմներ, XI, 51 և հաջ.։— 102:*
- 31 Իրկեարեա— հին հույն փրկիստժամ, որը ծխում էր հողու գոյությունը և պնդում, թե այն լուրջ մարմինն է «որոշակի վիճակում» (մ. թ. ա. IV դ.):— 102:
- 32 Շատ քիչ կյանք է բողբոջում ծեծերին:— *Մամսիմիանոս: Ներբող, I, 16:— 103:*
- 33 Այնչի չի կարող սասանել նրա հագու տակուցությունը...— *Հորացիոս: Ներբողներ, III, 3, 3 և հաջ.։— 104:*
- 34 Քանզի մահվան հետ վերջանում է ամեն բան:— *Հորացիոս: Ուղերձներ, I, 16, 76 և հաջ.։— 105:*
- 35 ... Երեսուն բոնապետները քեզ դատապարտել են մահվան...— *այստեղ Մոնտենի մոտ անհշտություն է. Սոկրատեսին մահվան են դատապարտել ոչ թե Երեսուն բոնապետները (մ. թ. ա. 404 թ.) այլ Աթենքի երգվյալների դատարանը մ. թ. ա. 399 թ.։ Բերվող պատմությունը տե՛ս: Դիոգենես Լաերտցի, II, 35:— 105:*
- 36 ... Ես չեմ էլ հասնում մեկ կյանքի, եթե այն համեմատեմ հավերժության... հետ:— *Մոնտենի այս միտքը հույժ կարևոր է. այն ապացուցում է, որ հակառակ կաթոլիկական դավանաբանության, Մոնտենը ծխում է հողու անմահությունը (Մոնտենն այս միտքը կրկնում է նաև իր «Փորձերի» այլ տեղերում): Հարկ է նշել, որ այս ամբողջ գրքում, ինչպես և նախորդում, ուր Մոնտենն ամենատարբեր տեսանկյուններից քննում է մահվան հարցը, նա ոչ մի տեղ չի հիշատակում կաթոլիկական ժեսուկարգի պահպանման մասին:— 106:*
- 37 Մահկանացուները կյանք փոխառում են միմյանցից...— *Լուկրեցիոս, II, 76, 79:— 106:*
- 38 Մեզ կյանք տվող... ժամը կրհատեց այն:— *Սենեկա: Մուլեզին Հերկուլեսը, 874:— 106:*
- 39 ... վերջը պայմանավորված է սկզբով:— *Մանիլիոս: Աստղաբաշխություն, IV, 16:— 106:*
- 40 Ինչո՞ւ չես հետանում կյանքից, ինչպես կուտ կերած սեղանակիցը...— *Լուկրեցիոս, III, 938:— 106:*
- 41 Ինչո՞ւ ես աշխատում երկարաձգել այն, ինչը կործանվելու է...— *Լուկրեցիոս, III, 941—942:— 107:*
- 42 ... այն է, ինչ տեսել են մեր նայրերը...— *Մանիլիոս: Աստղաբաշխություն, I, 522—523:— 107:*

42 Այստեղ Մոնտենը միացրել է երկու առող՝ մեկը *Լուկրեցիոսից*, մյուսը՝ *Վերգիլիոսից*։ 1) «Մենք միշտ ապրում ու գտնվում ենք նույն միջավայրում» (*Լուկրեցիոս*, III, 1080), 2) «Եվ տարին իր իսկ հետքերով վերադառնում է յուր տեղը» (*Վերգիլիոս*։ *Գեորգիկաներ*, II, 402)։— 107։

44 ... չկա մի բան, որ դուր չգա քեզ...— *Լուկրեցիոս*, III, 944—945։— 107։

45 ... քեզ ման է սպասում։— *Լուկրեցիոս*, III, 1090—1097։— 108։

46 ... իսկական մահվանից հետո չի լինի քո երկրորդ կենդանի «ես»-ը...— *Լուկրեցիոս*, III, 885 և հաջ.։— 108։

47 ... և մենք այլևս չենք տխրի մեզ համար։— *Լուկրեցիոս*, III, 919, 922։— 108։

48 Պետք է համարել, թե մանը... ավելի փոքր բան է...— *Լուկրեցիոս*, III, 926—927։— 108։

49 ... անցած ժամանակների հավերժությունը մեզ համար բացարձակապես ոչինչ է։— *Լուկրեցիոս*, III, 927—973։— 108։

50 ... և... բայուրը կհետևեն քեզ։— *Լուկրեցիոս*, III, 968։— 109։

51 Չի եղել ցերեկվան փոխաբիճող մի գիշեր, գիշերվան փոխաբիճող մի արշալույս...— *Լուկրեցիոս*, III, 578, և հաջ.։— 109։

52 Մարդածի Քիրոնը, որը դաստիարակել է Հերակլեսին և ապա Աքիլլեսին, Կրոնոսի և Ֆրիքոս հավերժահարսի որդին էր։ Վիրավորվելով թունավոր նետով, նա սկսեց աղոթել աստվածներին, որ մահ առաքեն իրեն, այդտեղ Ջևսը նրան խղճաց և տեղափոխեց երկինք, այդպես դուրսացավ Աղեղնավորի համաստեղությունը (հույն-հռոմեական դիցարանություն)։— 109։

Գլուխ XXI

ՄԵՐ ԵՐԵՎԱՆԿԱՅԻՆ ՈՒՅԻ ՄԱՍԻՆ

1 ... գծվել է իմաստությունից։— Մոնտենն այնքան էլ ճիշտ չի տալիս Սենեկա Ավագի պատմությունը (*Տարածայնություններ*, II, 9, 26), ուր ասվում է, թե Վիրիոս Գալլը գծվել է, շտիպանց եռանդազին ընդօրինակելով խելագուրկների բոլոր շարժումներին։— 112։

2 ... կեղտոտում իրենց հագուստը։— *Լուկրեցիոս*, IV, 1035—1036։— 112։

3 ... այնուամենայնիվ... Ցիպոսի հետ տեղի ունեցածը... ուշագրավ է...— *Ըստ Վալերիոս Մաքսիմոսի* (V, 6), Ցիպոսը ոչ թե «Իտալիայի թաղավորն էր, այլ Հոմերի պրեստորը։ Պլինիոս Ավագը (Բնական պատմություն, XI, 45) այդ պատմությունը համարում է հեքիաթ։— 112։

4 Կիբլը Կրեսոսի որդիներից մեկին շնորհեց... ձայն...— *Հերոդոտոսի խոսքերով*, Կրեսոսի որդին ի ծնե համր էր և խոսեց վախի ազդեցության տակ (*Հերոդոտոս*, I, 85)։— 112։

5 ... Անտիոսը, զնցվելով Սաբատոնիկայի գեղեցկությունից...— *խոսքն Անտոնոս Սոտերի* (*Փրկչի*)՝ *Սիրիայի թողաժոր Սելևկոս Նիկատորի* (*Հաղթողի*) որդու մասին է։ Սաբատոնիկա— *Անտիոքոսի խորթ մայրը* (մ. թ. ա. IV—III դդ.)։— 112։

6 *Ջովիանո Պանտանո* (1426—1503) — բանասեր, գիտնակցի, բանաստեղծ և պատմագիր, նեապոլյան ակադեմիայի հիմնադիրը, բացի գիտական աշխատություններից, թողել է շատ բանաստեղծություններ։— 112։

7 ... կատարեց իր այն խոստումները, որ տվել էր, երբ աղջիկ էր...— Օվիդիոս, *Կերպարանափոխություններ*, IX, 794։— 112։

8 Գագոբերոս— ֆրանկական (Ֆրանսիայում) թագավոր Մերովինգների դինաստիայից (մ. ճ. 638 թ.), նրա մասին բավական մեծ թվով առասպելական ավանդություններ են հորինվել:— Տրանցիսկ Ասիացի (1182—1228)—իտալական կրոնական գործիչ և գրող, թափառող վանական ֆրանցիսկյանների ուխտի հիմնադիրը: Ըստ ավանդության, Քրիստոսի տանջանքների մասին խոր մտածմունքից աներևակայելի կրոնասեր Ֆրանցիսկի արհեստն ու սոսնաթափերին զոյացան սպիներ կամ վերքեր («խարաններ»):— 113:

9 Յելսուս— մ. թ. I դարի հռոմեացի նշանավոր բժիշկ, հեղինակ է բժշկական տրակտատի, որի մեծ մասը չի հասել մեզ:— 113:

10 ... Ես... երակազարկ չէր ունենում:— Սգոստինոս: Աստծո քաղաքի մասին, XIV, 24:— 113:

11 Ժակ Պելլետիե (1517—1582)— գրող, բժիշկ և մաթեմատիկոս, կապված էր իր ժամանակի ֆրանսիական ակնավոր գիտնականների ու գրողների հետ: Մոնտենի ընկերը՝ Պելլետիեն 1572—1579 թթ. ապրում էր Բորդոյում և հաճախ լինում Մոնտենի ամբողջում, որտեղ «Փորձերի» հեղինակի և Պելլետիեի միջև տեղի էին ունենում աշխույժ բանավեճեր փիլիսոփայական թեմաներով:— 115:

12 Ամասիս— եգիպտական XXVI դինաստիայի թագավոր: Տեքստում հիշատակվող դեպքը պատմված է Հերոդոտոսի մոտ (II, 181):— 116:

13 ... իր գեղձախտը բողնում է մեզ մոտ...— ակնարկվում են Ֆրանսիայի թագավորների «հրաշագործ» ընդունակությունները: Ժողովրդի մեջ սնտրիստիկալիզմի արմատավորելով, Ֆրանսիայի թագավորներն ու նրանց սատարող կաթոլիկ եկեղեցին հավատ էին ներշնչում, թե թագավորի ձեռքերի հպումը բուժում է տարբեր հիվանդություններ, մասնավորապես գեղձախտը: Ընդհուպ մինչև XVII դ. (և նույնիսկ ավելի ուշ) որոշակի օրերին թագավորի պալատի մոտ էին գալիս հարյուրավոր, իսկ երբեմն էլ հազարավոր այդպիսի հիվանդներ: Հոգևորականության ուղեկցությամբ անցնելով նրանց մոտով և ձեռքը դնելով նրանց զուխներին, թագավորը բուժում էր գեղձախտավորներին: Այդ արարողությանը հատկապես շատ հիվանդներ էին գալիս Իսպանիայից:— 119:

14 ... վառակ տառածելով, վեաս են հասցնում մարմիններին:— Օվիդիոս: Սիրո գեղեր, 615:— 120:

15 Ինչ-որ մեկը աչքով տվեց իմ գառնուկներին:— Վերգիլիոս: Հովվերգականություններ, III, 103:— 121:

16 ... աղացույցն են Հակոբի ոչխարները...— Աստվածաշունչ: Մենգոց, XXX, 37—39:— 121:

17 Ամանք ինձ հորդորում են նկարագրել իմ ժամանակի անցքերը...— Մոնտենի այս տեղեկացումը հաստատվում է այլ աղբյուրներով: Մոնտենի ժամանակակիցների հուշագրություններից ու աշխատություններից հայտնի է, որ նրան բազմիցս արվել են նման առաջարկություններ, քանզի Մոնտենի ժամանակակիցները հարգում էին նրա անկախ դատողությունները և գնահատում տեղի ունեցող իրադարձություններից գլուխ հանելու նրա կարողությունը, իրադարձություններ, որոնց նա միշտ քաջատեղյակ էր շնորհիվ այն ժամանակվա ամենանշանավոր քաղաքական գործիչների հետ իր մտախոհության: Այդպիսի մի վկայություն բերում է XVI դ. ֆրանսիացի հայտնի պատմադիր դը Թուն (de Thou), որն իր «Պատմության» (Historia mei temporis. Բագել, 1742, XI, 44) մեջ հայտնում է, թե 1582 թ. Բորգոն եղած ժամանակ, ի մեծ օգուտ իրեն, նա Մոնտենից տեղեկանում էր Գիենում գործերի վիճակի մասին:— 122:

18 Գայոս Սալլուստիոս Քրիսպոս— հռոմեացի նշանավոր պատմադիր (մ. թ. ա. մոտ

86—85 թ.), «Կատիլինայի դավադրությունը» և «Պատերազմ Յուզուրտայի հետ» գործերի հեղինակը:— 122:

¹⁹ ... դատողությունները ... կլինեն ... պատժելի:— Այստեղ Մոնտենը միանգամայն պարզորոշ ակնարկում է, թե չի կարող ազատորեն արտահայտել մտքերը և ստիպված է իր հայացքներն ու դատողությունները ներկայացնել ակնարկներով, որպեսզի իր վրա չթափվեն բարձրագույն իշխանությունների հալածանքները: Նման խոստովանություններ հանդիպում են նաև «Փորձերի» այլ գլուխներում:— 123:

Գլուխ XXII

Մեկի ՅԳՈՒՏԸ ՄՅՈՒՍԻ ՎՆԱՍՆ Է

¹ Կեմադոս (մհց. մ. թ. ա 318 թ.)— աթենացի պետական գործիչ, հոեատր և դիվանագետ: Տեքստում հիշատակված գեպքը տե՛ս. Սենեկա: Բարեգործությունների մասին, VI, 38:— 123:

² ... Կլինի նախկինի... վախճանը:— Լուկրեցիոս, II, 753—754 և III, 519—520:— 124:

Գլուխ XXIII

ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՅԵԼ ՉԷ ԱՌԱՆՑ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔԻ ՓՈՆԵԼ ԱՐՄԱՏԱՎՈՐՎԱՄ ՕՐԵՆՔՆԵՐԸ

¹ ... հորինել է հեֆիաթը... գեղջկունու մասին...— Մոնտենը նկատի ունի Քվինտիլիանոսին (Հոեատորի ուսուցումը, I, 9):— 124:

² Ամեն ինչում լավագույն խրատունն սովորությունն է:— Պլինիոս Ավագ: Բնական պատմություն, XXVI, 6:— 124:

³ ... Այդ առթիվ միտս են գալիս Պլատոնի ֆարանձավը երա «Պետություն»-ում...— Մոնտենը նկատի ունի «Պետության» լայնորեն հայտնի հատվածը (VII, 514a—517b): Պլատոնի պնդմամբ, զգայական իրերի աշխարհն իսկական գոյի աշխարհ չէ: Պատկերացրեք մարդկանց, իր միտքը զարգացնում է Պլատոնը, որոնք ի ծնե շղթայված են քարանձավում և դեմքով շրջված են դեպի քարանձավի ելքի հանդիպակաց պատը: Նրանք հրեք չեն տեսել իսկական աշխարհը և գործ չեն ունեցել փաստական, իրական առարկաների հետ: Քարանձավի պատին եղած անցքի կողքով մարդիկ զամբյուղներով տանում են տարբեր առարկաներ: Այդ առարկաներն արտացոլվում են այն պատին, որին դեմքով ուղղված են կալանավորները: Վերջիններս ամբողջ կյանքում տեսնում են քարանձավի անցքի կողքով տարվող առարկաների ստվերները միայն: Նման այդ կալանավորներին, պնդում է Պլատոնը, մարդիկ ստվերները, այսինքն՝ իրերի աշխարհն, ընդունում են իշականի տեղ և չեն տեսնում այն զաղափարները, որոնք տեսանելի առարկաների ծագման ինկական աղբյուրներն են:— 124:

⁴ ... իր ստամոքսը վարժեցրել է թույնի...— Մոնտենը նկատի ունի Պլինիոսի այն պատմությունը, թե Պոնտոսի թագավոր Միհրդատ եվպատորը (մ. թ. ա. մոտ 131—63 թթ.), աշխատելով կոփել իրեն, վարժվեց թույնի (Պլինիոս: Բնական պատմություն, II, XXV, 3):— 125:

⁵ Բուշտեղջի Ալբերտը. որը հորջորջվեց «Մեծ»— դոմինիկյան վանական, աստվածա-

բան և ալքիմիկոս (1207—1280): նրա աշխատություններում կարելի է գտնել դիտական-
րնագիտության որոշ սաղմեր:— 125:

⁶ Մոնտենը նոր Հնդկաստան է անվանում «նոր աշխարհը», այսինքն՝ Ամերիկան:— 125:

⁷ Սովորության ուժը մեծ է...— Յիցերոն: Տուսկուլանյուն դրույցներ, II, 17:— 125:

⁸ Ave, Maria (Ուրախացիր, Կույս)— կաթոլիկական այն աղոթքի սկիզբը, որի մե-
ղեղին սովորարար երեկոներին ղանգանվազում էին կուրանտները:— 126:

⁹ Սովորությունը... դատարկ բան չէ:— Այս մասին պատմում է Գիոզենես Լաերտցին,
III, 38:— 126:

¹⁰ Իտալի — հին մանրագրամ, գուրլան, ոսկե դրամ:— 127:

¹¹ ... նշմարտության... փնտրի սովորությամբ ստրկացած հոգիներում:— Յիցերոն:
Աստվածների էության մասին, I, 30:— 128:

¹² ... շնայել նրան, ում ուզում են հարգանք հավաստել— ստորև բերվող գլխի
բոլոր օրինակները Մոնտենը փոխառել է Լույսե դը Գոմարայի «Հնդկաստանների ընդ-
հանուր պատմությունը» գրքից (Ֆրանսերեն թարգմանություն. L. Gomara. Histoire gé-
nérale des Indes. 1586):— 128:

¹³ ... Պինդարոսը... նրան հարջուրչել է «աշխարհի տերն ու տիրակալը»...— Պինդա-
րոս (մ. թ. ա. մոտ 518—442 թթ.)— հին հույն բանաստեղծ, Մոնտենի բերած խոսքերով
Պինդարոսը բնութագրում է օրենքը, իսկ Հերոդոտոսն այդ բնութագիրը տարածել է սո-
վորության վրա, տե՛ս. Հերոդոտոս, III, 38:— 133:

¹⁴ ... հող ու անուխ են ուտում...— Արիստոտել: Նիկոմաքոսյան բարոյագիտություն,
VII, 5:— 133:

¹⁵ ... ատել ստրկացումը:— «Փորձերի» 1595 թ. օրինակում «Մի անգամ Դարեհը...
հարցրեց...» բառերով սկսվող պարբերությունից առաջ կա հետևյալ ընդմիջարկությունը.
«Սովորության համաձայն, ամեն ոք սիրում է այն երկիրը, որտեղ նրան իրեն վիճակված
է ապրել. այսպես, բնիկ շոտլանդացին անտարբեր է Տուրենի նկատմամբ, սկյութացիները՝
Թեսալիայի»: Իր հայրենիքի նկատմամբ ամեն մարդու բնական սիրո գաղափարը
Մոնտենի նախասիրելի մտքերից է, որին բազմիցս անդրադառնում է:— 134:

¹⁶ Ձկա մի բան... որին չսկսեն... Նայել ավելի պակաս զարմանալով:— Լուկրեցիոս,
II, 1028, և հաջ.:— 135:

¹⁷ ... մանկական... ուղեղում ամրապնդում են... նախազգուշացումը:— Պլատոն:
Օրենքներ, VIII, 838c.— Պելոփսի որդի Թիեստեսը՝ Ատրևսի եղբայրը, գայթակղեց նրա
կնոջը: Այնուհետև առասպելը պատմում է Ատրևսի վրեժի մասին, որը Թիեստեսին կերա-
կրեց նրա սեփական երեխաների մսից պատրաստած ուտեստներով:— Էդիպ— Թիբեի ար-
քան, որի անվան հետ կապված են հին հունական առասպելաբանության մի ամբողջ
շարք լեգենդներ: Դրանց ելման կետը ասքն է էդիպի մասին, որը սպանեց հորն ու ամուս-
նացավ մոր հետ:— Մակաբեոս կամ Մակարոս— էոլոսի որդին, եղբայրը Կանակեի, որի
հետ նա արյունազղծիչ կապի մեջ մտավ: Ըստ առասպելի մի վարկածի, և՛ նա, և՛ Կա-
նակեն ինքնասպան եղան, ըստ մեկ ուրիշի՝ Կանակեին սպանեց հայրը:— 135:

¹⁸ Քրիստոս — տե՛ս ծնթ. 10, գլուխ VI:— 136:

¹⁹ ... ժողովուրդը պետք է ենթարկվի օրենքների, որոնք... հրապարակված են ոչ իր
լեզվով...— XVI դ. եվրոպական երկրների մեծ մասում գործում էին օրենքներ, որոնց
տեքստը միայն լատիներենով էր:— 136:

²⁰ ... սնանկացույցի դարձնել վեհերն ու զժառայուններ...— Իսկրատես (մ. թ. ա.
436—338 թթ.)— հին հույն ականավոր հրապարակախոս և հոեւոր, բաղմամբիվ ճառերի

և պարսալագրերի հեղինակ: Մոնտենը նկատի ունի նրա «Խոսք Նիկոլեային» գործը, 18, որը նվիրված է հպատակների պարտականությունների հարցին:— 136:

21 ... գասկոնացի մի ազնվազան, իմ հայրենակիցը:— Տեքստում հիշատակվող դասկոնացի ազնվականի պատմությունը հանդիպում է Կարլոս VIII-ի կողմից որպես թագավորական պատմաբան Վերոնայից Ֆրանսիա հրավիրված իտալացի պատմադատ Պատուր էմիլիոյի (կամ էմիլիի, մհց. 1529 թ. Փարիզում) «Ֆրանսիայի պատմություն»-ում: Կարլոս VIII-ի հետնորդ Լյուդովիկոս XII-ը նրան առաջարկեց գրել «Ֆրանսիայի պատմությունը»: 1516 թ. Լեմիլիոն հրատարակեց «De rebus gestis Francorum»-ի առաջին շորս գիրքը, իսկ 1519 թ.¹ ևս երկու գիրք, նա մահացավ, չհասցնելով ավարտել իր աշխատությունը, որը վերջացրեց ուրիշը: Էմիլիոյի «Ֆրանսիայի պատմությունը», որը լի է ակնածանքով իտալական ամեն ինչի նկատմամբ, ունի բազմաթիվ անհամապատասխանություններ, սխալներ, հագեցված է Տիտոս Լիվիոսի ոճով գրված հնարովի ճառերով: Մոնտենը բազմիցս սխալվել է այդ աշխատությունից որպես սկզբնաղբյուր:— 136:

22 ... սովորույթի համաձայն դատական պաշտոնները վաճառվում են...— դատական պաշտոնները գրավելու այդպիսի կարող Ֆրանսիայում սահմանվել է 1526 թվականից: Այն մտքերը է Ֆրանցիսկ I կանցլերը՝ կարյուքալ Անտուան Դյուպրան (1463—1535): Մոնտենի այս առույթները հետագայում վերցրել է Մոնտեսքյոն, որը քննադատում է այդ սովորույթը «Պարսկական նամակներում» (նամակ 91):— 136:

23 Միանշիլի է, երբ ենթարկվում ես երկրի օրենքներին:— Պարզված չէ, թե անտիկ հեղինակներից որին է այստեղ մեջբերում Մոնտենը, սակայն այս առույթը հաճախ է հանդիպում ասացվածների XVI դ. ֆրանսիական ժողովածուներում:— 138:

24 ... պառանք վզին դուրս գաւ ... խնդրաման էր արվում:— Դիոդորոս Սիցիլիացի, XII, 17: Այդ օրենսդրի անունը Քարոնդ էր, տե՛ս ծնթ. 2, գլ. XVI:— 138:

25 ... լակեդեմոնացիների օրենսդիրը...— Մոնտենը նկատի ունի Սպարտայի առասպելական օրենսդիր Լիկուրգոսին:— 138:

26 Միտիլեն կղզու բնակիչ Քրիեխոսը (ծնվ. մ. թ. ա. մոտ 480 թ.) ավելացրեց ևս երկու լար կիթառին, որը մինչ այդ ուներ յոթ լար:— 138:

27 ... արդարադատության հին, ժանգոտած սուրբ...— այս սուրբ պահվում էր Մարսելում քաղաքի հիմնադրման ժամանակվանից որպես հնամենի սովորույթների անխախտության խորհրդանիշ:— 138:

28 ... արմատն... աղետների ու սարսափների...— Մոնտենը նկատի ունի կրոնական տարածաշրջանների դրոշի ներքո 1562 թվականից Ֆրանսիայում մղվող քաղաքացիական պատերազմները, որոնք երկրին հասցնում էին սոսկալի ավերածություններ և ավարտվեցին Մոնտենի մահվանից հետո միայն՝ 1594 թ.:— 139:

29 ... ես տատաղում եմ իմ սեփական զենքով հասցրած վերելից:— Օլիվիոս: Հերոսագուններ, II, 48:— 139:

30 ... Նորագույն անկարգությունների բալր ձևերը...— ակնարկ է այն կաթոլիկ ֆեոդալների գաղտնությունների, որոնք Ֆրանսիայում XVI դ. երկրորդ կեսի քաղաքացիական պատերազմների ժամանակ, հուգենոտների նման, ապստամբում էին թագավորական իշխանության դեմ:— 139:

31 ... ինչի մասին խոսում է Թուկիդիդես...— Թուկիդիդես, III, 52: Մոնտենը մեջ է բերում ըստ Պլուտարքոսի. Ֆինչալիս պարսերի բարեկամին շողոքորթից, 12:— 140:

32 Պատրվակը հարմար է:— Տերենտիոս: Աղջիկն Անդրոսից, 141:— 141:

33 Չի կարելի հավանություն տալ հնություններից շեղվելուն:— Տիտոս Լիվիոս, XXXIV, 54:— 140:

34 ... առողջ դատադուրյան համար:— Եվ շի՞ սխալվում արդյո՞ք ես... բառերով սկսվող վերջին երկու նախադասությունները չկան «Փորձերի» ընթացքի օրինակում: Գրանք գրված են օրիորդ գրչու Գուրնեի ձեռագրով:— 140:

35 ... որ չպղծվեն իրենց ուրբությունները:— Տիտոս Լիվիոս, X, 6:— 140:

36 ... հուշարձաններով վկայված... հին աշխարհը:— Յիցերոն: Գուշակության մասին, I, 40:— 141:

37 ... բերալուսման ավելի մաս է շափավորությանը, քան գերալուսմը:— Իսոկրատես, Խոսք նիկոկլեսին, 33:— 141:

38 Երբ բանը վերաբերում է կրոնին, ես հետևում եմ... գերազույն քրեմբին...— Յիցերոն: Աստվածների էության մասին, III, 2: Գայոս Ավրելիոս Կոստա— մ. թ. ա. 75 թ. Հռոմի կոնսուլ: Յիցերոնը նրան պատկերում է «Հոստորի մասին» իր ստեղծագործությունում:— 142:

39 Ուխտադրուժին ընծայված հավասար նրան հնարավորություն է տալիս վնասել:— Սենեկա, Էդիպ, 686:— 143:

40 ... էլ քեմե... ավելի խելամիտ կլինի խոնարհես գլուխդ ու հարվածը կրես...— Այս գլխի Հերջին երկու էջերում Մոնտենը պարզորոշ արտահայտվում է հօգուտ այն բանի, որ թագավորական իշխանությունը պետք է ընդառաջ գնա հուզենոտների պահանջներին և վերջ գնի քաղաքացիական պատերազմին:— 144:

41 ... ես, ով... մեկ օրով կրեաաեյ է օրացույցը...— Մոնտենը նկատի ունի Սպարտայի թագավոր Ագեսիլայոս II-ին, որը Լեկտրայի մոտ պարտվելուց (մ. թ. ա. 371 թ.) հետո հրամայեց մեկ օրով շեղյալ հայտարարել օրենքները, համաձայն որոնց ճակատամարտից փախածների իրավունքները սահմանափակվում էին և նրանք ենթարկվում էին համընդհանուր անարգանքի: Այդ ամենը նպատակ ուներ ներում շնորհել և հետ բերել մեծաբանակ փախստականներին (Պլուտարհոս: Ագեսիլայոսի կենսագրությունը, 30):— 144:

42 ... ով հունիսը դարձել է երկրորդ մայիս:— Այստեղ Մոնտենը նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացուն: Յոթ ամիս պաշարման մեջ գանվող Տյուրոսի անկման (մ. թ. ա. 332 թ.) նախօրեին Ալեքսանդրի գուշակներից մեկը՝ Արիստանդրոսը, հայտարարեց, թե մինչև ամսվա վերջ Տյուրոսը կընկնի: Քանի որ դա ամսվա վերջին օրն էր, Արիստանդրոսի բառերն ընդունեցին բարձր ծիծաղով: Այդժամ Ալեքսանդրը հրամայեց այդ օրը համարել ոչ թե ամսի 30-ը, այլ 28-ը: Նույն օրը, վերջապես, Տյուրոսը գրոհով վերցվեց: Մոնտենի սկզբնաղբյուրը. Պլուտարհոս: Ալեքսանդրի կենսագրությունը, 25:— 144:

43 Լիսանդրոս (մեց. մ. թ. ա. 395 թ.)— սպարտացի զորավար և քաղաքական գործիչ:— 144:

44 Պերիկլես (մ. թ. ա. 494—429)— հույն հռչակավոր պետական գործիչ և զորավար:— 144:

45 Փիլոպեմեն մեգալոպոլիսցի (մ. թ. ա. մտ 253—182)— հունական անկախության վերջին ժամանակաշրջանի զորավար և քաղաքական գործիչ:— 144:

Գլուխ XXIV

ՄԻԵՎՆՈՒՅՆ ՄՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՊՔՈՒՄ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵՆ ՏԱՐՐԵՐ

1 Ժակ Ամիո (1513—1593)— բանասեր, ֆրանսերեն է թարգմանել Պլուտարքոսի բոլոր երկերը, Լոնդոնի «Դափնիս և Քլոյա» վեպը և բաղմաթիվ այլ անտիկ ստեղծագործություններ: Հատկապես հայտնի է Պլուտարքոսի «Համեմատական կենսագրությունների»

այն ժամանակվա համար միանգամայն որակյալ նրա թարգմանությունը (1559 թ.): Ամիոյին Մոնտենի աված գնահատականը տե՛ս գիրք II, գլ. IV «Հետաքրքրասիրություն մասին»:— 144:

2 ... մեր արքայազնի...— դուքս Ֆրանսուա Գիզ (1519—1563), ծագումով լոթարինգացի (լոթարինգիան ինքնուրույն դքսություն էր մինչև 1766 թ.) Ֆրանսիայի նշանավոր գորավարներից մեկը, XVI դ. երկրորդ կեսերի քաղաքացիական պատերազմների ժամանակ Ֆրանսուա Գիզը կաթոլիկական խմբի առաջնորդն էր (տե՛ս նաև ծնթ. 3, գլ. II):— 144:

3 ... խռովություններն սկսվելուց...— XVI դ. երկրորդ կեսերի քաղաքացիական պատերազմների սկիզբը: Ռուանի պաշարումը անգլի էր ունեցել 1562 թ.: Քաղաքում ամրացել էին կալվինականները, պաշարումը ղեկավարում էր հիշյալ Ֆրանսուա Գիզը, որը դրավեց այդ քաղաքը:— 145:

4 ... մայր թագուհին...— Եկատերինա Մեդիչի (տես ծնթ. 4, գլ. XII):— 145:

5 Քուսուներ (կամ Կոսնեյիտսներ) և Սերվիլիոսներ— հռոմեական երկու հռչակավոր տոհմեր:— 147:

6 ... ընկավ դավանանքյան ծուլակը:— Տե՛ս ծնթ. 3, գլ. II:— 148:

7 Կիոն (մ. թ. ա. IV դ.)— տոհմիկ սիրակուսացի, գլխավորում էր արիստոկրատական խումբը, որը Գիոնիսիոս Կրտսեր բռնապետին քշելուց հետո ձգտում էր իշխանության և պայքարում ժողովրդավարական շրջանների դեմ: Այդ պայքարում Գիոնը սպանվեց իր կարծեցյալ բարեկամ և համախոհ Կալիպոսի ձեռքով:— 151:

8 Վատահուրյունը հաբուցում է... պատասխան ազնվություն:— Տիտոս Իվիոս: XXII, 22:— 152:

9 Մեր ամենակասկածամիտ միապետը... Կարգավորեց իր զորքերը...— խոսքը 1468 թ. Պերոննում Բուրգունդիայի դուքս Կարլոս Համարձակի հետ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XI-ի հանդիպման մասին է, Լյուդովիկոս XI-ի համար վտանգ կար, որ իր վաղեմի թշնամի Կարլոս Համարձակը կբռնի իրեն:— 152:

10 Կեստը... լեգիոներին հակադրեց միայն... հպարտ խոսք...— խոսքը մ. թ. ա. 47 թ. X լեգիոնի բարձրացած ապստամբության մասին է, որն այնուհետև տարածվեց Կամպանիայում դասավորված զորքերի շրջանում:— 152:

11 Ես ... ստիպեց վախենալ, շվախենալով ոչ մի բանից— Լուկանոս, V, 316 և հաջ. :— 152:

12 ... նա անգրորեն սպանվեց:— Գիենի նահանգապետ Տրիստան դը Մոնենը (mo-eins) — սպանվեց 1548 թ. Բորդոյում, ժողովրդական ապստամբության ժամանակ, որն ուղղված էր ժողովրդին ատելի աղահարկի («գարել») դեմ:— 153:

13 ... ֆենարկվում էր... ջոկատների... ստուգատես, կազմակերպելու հարցը...— բանը անգլի է ունեցել 1585 թ., երբ Մոնտենը Բորդոյի քաղաքագլուխն էր: Մոնտենն այստեղ իր վարքը հակադրում է Մոնենի ոչ բավականաչափ վճռական վարքագծին: Չնայած իշխանությունների ունեցած այն տեղեկությանը, թե Կաթոլիկական լիգային հարող մի աստիճանազրկված զորապետ շքերթին զորքի նապատամբություն էր պատրաստում, Մոնտենը, որին հանձնարարված էր անցկացնել ստուգատեսը, որոշեց լիովին վստահել զինվորներից որ սպաներին և իր հմուտ տակտիկայով կանխեց պատրաստվող խռովությունը:— 153:

14 Արենի դուքսը— ֆրանսիացի ասպետ Գոտիե դը Բրիենը (XIV դ.), որի նախնիներից մեկը՝ Ժան դը Բրիենը Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի թագավորն էր: Աթենքի դքսությունը, որին տիրում էր Բրիենների տոհմը, ստեղծվել է XIII դ. սկզբներին

խաչակրաց արշավանքների հետևանքով: 1342 թ. Գոտիե զը Բրիենը դարձավ Ֆլորենցիայի գուբաը (րոնապետը), մեկ տարի հետո ապստամբած քաղաքացիները նրան բռնեցին և յնստեղից:— 154:

Գլուխ XXV

ՏԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ... իտալական կառավերգություններում տառակերներ...— Մոնտենի ժամանակ «պեդանտ» (տառակիր— Ա. Խ.) բառը եվրոպական շատ լեզուներում նշանակում էր ուսուցիչ, դասատու: «Պեդանտը» իտալական դեղ արտեի կատակերգության գործող անձանցից մեկն էր: Մագիստրոս (ինչպես նաև նրանից առաջացող ֆրանս. maitre — դասախարակ) նույնպես նշանակում է ուսուցիչ:— 155:

2 Ժոսաշեն Իյու Բելլե (1522—1560)— նշանավոր բանաստեղծ, որը Ռոնսարի հետ միասին գլխավորել է ֆրանսիական պոեզիայի նոր ուղղությունը («Պլեադայի» խումբը): Մոնտենի բերած տողը վերցված է Գյու Բելլեի մի ստեղծագործից, որը մտցված է «Ափսոսանքներ» («Regrets» տղովածուի մեջ:— 156:

3 ... «նայն» և «նետոր» բառերը... նախատական... են:— Պլուտարխոս: Յիցերոնի կենսագրությունը, 5:— 156:

4 Magis magnos clericos... — այս բառերը ծաղրերգարար աղավաղված լատիներենով (որն ընդգծում է այն ժամանակվա դպրոցական ուսուցման ոչնչությունը) աշխատանքում է եղբայր ժանը Ռարլեի վեպում (Գարգանտյուա, գլ. 39): Դրանք հայերեն կհնչեն մտալորապես հետևյալ կերպ. ավելի մեծ գիտնականները տակավին չեն նշանակում ավելի մեծ իմաստուններ, այսինքն՝ մարդը դպրոցական մեծ ուսումով իսլամիտ չի դառնում:— 156:

5 Արպուն— հողաշահական միավոր, մոտավորապես 1/3-ից մինչև 1/2 հա:— 157:

6 Ինչ վերաբերում է... փիլիսոփաներին... ինքնահավան ու գոսգամիր...— այս ամբողջ հասկացումը Պլատոնի «Քեետետոս»-ի 24-րդ գլխից արված բավական ճշգրիտ վերապատումն է:— 157:

7 Ես ատում եմ գործի նամար ոչ պիտանի... մարդկանց:— Պակովիոսը Աուլուս Հելլիոսից արված քաղվածքում, XIII, 8:— 157:

8 ... սիրականեցի... երկաշափը...— Արքիմեդ (մ. թ. ա. 287—212 թթ.): Շնորհիվ Արքիմեդի հայտնագործությունների, Սիրակուսեն երեք տարի շարունակ հաջողությամբ դիմադրում էր հռոմեացիներին (մ. թ. ա. 214—212 թթ.): Տե՛ս Պլուտարխոս: Մարցելլոսի կենսագրությունը, 17—18:— 158:

9 ... նարյրեց Կրատեսին...— Կրատես— հույն փիլիսոփա-կինիկ, Դիոգենեսի (մ. թ. ա. IV դ.) աշակերտը:— 158:

10 Թալեսին... կշտավրեցին...— Թալես միլեացի (մ. թ. ա. VII դ. վերջեր— VI դ. սկզբներ) հին հույն գիտնական է և մտածող:— 158:

11 Անախագրասը (մ. թ. ա. 500—428 թթ.) նշանավոր հին հույն փիլիսոփա է, Պերիկլեսի և բանաստեղծ Նվրիպիդեսի բարեկամը:— 158:

12 Նրանք սովորե լեն խոսել ուրիշների առաջ...— Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, V, 36:— 160:

- 13 Հարկ է ոչ թե խոսել, այլ գործել:— Սենեկա: *Նամակներ*, 108, 37:— 160:
- 14 Ասում եմ այն իմաստունին, որն իմաստուն չէ իր համար— *Հարասությունը Եվ-րիպիդեսի բանաստեղծությունից է*, Յիցերոն: *Նամակներ բարեկամներին*, XIII, 15:— 161:
- 15 ... իմաստունն օգուտ չունի... եթե ինքն իրեն չի կարող օգնել:— Յիցերոն: *Պարտականությունների մասին*, II, 13:— 161:
- 16 ... Նրան գնելն ավելի դյուրին է, քան... ոչխարը:— Յուվենալ: *Երգիծանքներ*, VIII, 15:— 161:
- 17 ... մենք պետք է ոչ միայն կուտակենք իմաստնությունը, այլև օգուտ փողենք նրանից:— Միցերոն: *Գերագույն բարիքի և գերագույն չարիքի մասին*, I, 1:— 161:
- 18 ... սակայն իրականում չեն պահպանում սյուն:— *Դիոգենես Լաերտցի*, VI, 27—28: *Մոնտենն այստեղ այնքան էլ ճշգրիտ չէ. Դիոգենես Լաերտցին նշում է ոչ թե Դիոնիսիոսին, այլ փիլիսոփա Դիոգենեսին*:— 162:
- 19 ... որոնց մասին... է խոսում Պլատոնը...— *Մենոն*, 91 a—e:— 162:
- 20 ... Պրոտագորասի առաջարկած կանոնը...— Պլատոն: *Պրոտագորաս*, 328 c. *Պրոտագորաս— հին հույն փիլիսոփա-սոփեսոս (մ. թ. ա. V դ.)*:— 162:
- 21 Գալիենոս— *հռոմեացի հայտնի բժիշկ, ծնունդով հույն (մ. թ. 131—մոտ 200 թ.)*, թողել է շայն ճանաչում գտած բազմաթիվ աշխատություններ: *Միջնադարյան բժշկագիտության համար Գալիենոսը (Յելսուսի հետ միասին) անառարկելի հեղինակություն է*:— 163:
- 22 ... գգուշացեք, որ ձեր նեակից շժադրեն ձեզ:— *Պերսիոս*, I 61:— 163:
- 23 Ադրիան Տուրենը (1512—1565)— *ֆրանսիացի նշանավոր բանասեր, որը բազմաթիվ թարգմանություններ է արել հին հեղինակներից և ծանոթագրել գրանք: Տուրեներին Մոնտենի տված գնահատականին համամիտ էին նրա ժամանակակիցների մեծ մասը*:— 163:
- 24 Արոնք հոգիները... ձեռակերտել է Տիտանը...— Յուվենալ: *Երգիծանքներ*, XIV, 35:— 164:
- 25 ... ինչի՞ է պետք գիտությունը, եթե չկա հասկացողություն:— Ստոբիլոս: *Մարգարա*, III, 25:— 164:
- 26 Մենք սովորում ենք ոչ թե կյանքի, այլ դպրոցի համար:— Սենեկա: *Նամակներ*, 106, 12:— 165:
- 27 ... լավ կիլներ առհասարակ շտվարել:— Յիցերոն: *Տուսկուլանյան գրույցներ*, II 4:— 165:
- 28 ... Իրեոնի դուրս Ֆրանցիսկին...— *Նկատի է առնված Ֆրանցիսկ I-ը՝ Իրեոնի գուբը 1442-ից մինչև 1450 թ.*:— 165:
- 29 ... երևան եկան գիտուն մարդիկ, չկան... լավ մարդիկ:— Սենեկա: *Նամակներ*, 95, 13:— 165:
- 30 Արիստիպոսի դպրոցից դուրս են գալիս անառակներ, Չենոնի դպրոցից՝ փնթփնթաններ— Յիցերոն: *Աստվածների էություն մասին*, III, 31:— 167:
- 31 Պալաոնն ասում է...— «I Ալկիբիադեսում», 121 a—122 b:— 167:
- 32 ... երբ Անտիպատրոսը սպարապիներից պահանջեց... երեխա...— *Անտիպատրոս (մ. թ. ա. 397—319 թթ.)*— *Ասկեդոնիայի խոշորագույն զորավարներից և քաղաքական գործիչներից մեկը*:— 169:
- 33 կրեյտիվ չփայտան...— *Հիպիաս— էլիպիցի սոփեսոս (մ. թ. ա. V դ.)*:— 169:
- 34 ... թուրքերի կայսրությունն է, մի ժողովուրդ, որը դաստիարակված է... արհամարհել գիտությունները:— *Անշուշտ անապացուցելի են այս, ինչպես նաև հետագա օրինակները, որոնք Մոնտենը բերում է ավելի ուշ արված «Շատ հետաքրքիր է հետևել Սոկրո-*

տեսին...» պարբերութիւնից սկսվող և մինչև զլիխ վերջը հասնող ընդմիջարկութիւնում: Կարող է տպավորութիւն ստեղծվել, թե Մոնտենն այստեղ հակասում է սույն զլխում ապացուցվող հիմնական դրույթին (իսկական գիտութեան օգտակարութիւնն ի տարբրութիւն սխոլաստիկ կեղծ ուսյալութեան): Սակայն նման տարիմաստութիւնները Մոնտենի մտա հազվադեպ շեն, հատկապես, երբ խոսքն այն հավելումների մասին է, որոնք արվել են հիմնական տեքստը գրելուց շատ ժամանակ անց: Իրականում այդ հակասութիւնը լոկ թվացյալ է. Մոնտենն իր դրույթին հավատարիմ է մնում նաև այստեղ, քանզի նրա բերած օրինակները վերաբերում են այն երկրներին ու ժողովուրդներին, որոնց մոտ գիտութիւնը սաղմնային վիճակում էր կամ «արհամարհված», ինչպես ասում է Մոնտենը: Իսկ ինչ վերաբերում է Իտալիայի անշուքամբ Մոնտենի բերած վերջին օրինակին, որը կապված է Իտալիային տիրելու համար ֆրանսիական ֆեոդալների մղած պատերազմների հետ, ապա Մոնտենն այստեղ բերում է Կարլոս VIII-ի մերձավոր անձանց բացատրութիւնը, իսկ անձամբ Մոնտենը հիանալի գլտեր և մի ուրիշ տեղում ցույց է տվել, որ Կարլոս VIII-ի շատ կարճատև ու անկայուն հաջողութիւնն արդյունք էր Իտալիային աչք տնկած մյուս զավթիչների ճամբարում շահերի հակասութեան:— 169:

³⁵ Լենկթեմուր, կամ Թեմուր (1333—1405)— մոնղոլական երկրորդ կայսրութեան հիմնադիրը, ընդարձակ տարածքներ է նվաճել Միջին և Փոքր Ասիայում, Հնդկաստանում, Պարսկաստանում, արշավանքներ է կատարել Օսմանյան կայսրութեան, Թուսիայի վրա, մահացել է Չինաստան կատարած արշավանքում: Լենկթեմուրի հորդաները կատարում էին սոսկալի ավերածութիւններ, և նրա անունը, Աթիլայի ու Չինգիզիանի անունների կողքին, ժողովրդական հիշողութեան մեջ մնացել է որպես անսահման դաժանութեան, սանձարձակութեան, անիմաստ ու անօգուտ կոտորածի մարմնավորում:— 170:

³⁶ Երբ մեր քաղաքը Կարլոս VIII-ը ... տիրեց... Տոսկանայի մեծ մասին...— Խոսքը 1495 թ. զարմանալի հեշտութեամբ ընդարձակ տարածքներ նվաճած Կարլոս VIII-ի նեպոլյան արշավանքի մասին է: Սակայն նույն տարում Հոմեր պապի, Գերմանիայի կայսեր և վենետիկցիների միացյալ ուժերի ճնշման տակ ֆրանսիացիները ստիպված եղան հեռանալ Իտալիայից:— 170:

Գլուխ XXVI

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

¹ Դիանա դը Ֆուա— Լուի դը Ֆուայի՝ կոմս Գյուրսոնի կինը: Լուի զը Ֆուան և նրա երկու եղբայրը պատանի հասակից Մոնտենի մոտ ընկերներն էին:— 170:

² ... մաքեմատիկայի շոքս բաժինների...— Թվաբանութեան, երկրաչափութեան, երաժշտութեան և աստղագիտութեան:— 170:

Դանայունիներ— Դանասի դուստրերը, իրենց ամուսիններին սպանելու համար նրանք դատապարտվեցին Տարտարոսում անտակ աակառը լցնելու (հուն. դից.):— 171:

⁴ Կլեանթես— հին հույն փիլիսոփա ստոիկյան, Ջենոնի (ծնվ. մ. թ. ա. մոտ 300 թ.) աշակերտը: Դիոգենես Լաերտցին թողել է նրա կենսագրութիւնը:— 171:

Ապոլլոդորոն ասում էր...— Ապոլլոդորոսի մասին այս միակ հիշատակութեամբ անհնար է որոշել թե Մոնտենը որ Ապոլլոդորոսին նկատի ունի:— 172:

⁶ Յեկատե— ստեղծագործութիւն, որը կազմվում է տարբեր հեղինակներից վերցված հատվածներից:— 173:

⁷ Ալիո Կապիլուպի (1498—1560)— իտալացի բանասեր, տարբեր, զլխավորապես վերգիլիոսից վերցված թեմաներով ցենտոններ կազմող: Մոնտենը նկատի ունի վանա-

կաններին նվիրված նրա մի ցենտոնը (Cento ex Virgilio de vita monachorum, 154).
— 173:

8 Ֆուսա Կիպսիս (1547—1608) — հոլանդացի բանասեր և հումանիստ, հոտմեական հնությունների գիտակ, լատինական շատ հեղինակների, մասնավորապես Տակիտուսի հրատարակիչը: Մոնտենի հետ մոտ էր և նամակագրություն էր պահպանում: Մոնտենը նկատի ունի նրա ծավալուն բանաբաղությունը (Politica, sive civilis doctrinae libri VI, 1589), որտեղ Կիպսիսը պաշտպանում էր խղճի ազատությունը: Այդ գիրքն ընծայագրով Կիպսիսն ուղարկել է Մոնտենին:— 173:

9 ... պահպանվել են ստեղծագործությունները, դր Ֆուսա կոմսերի...— Մոնտենն այստեղ նկատի ունի Բեառնի կոմս Գասսան III-ին (1331—1391), որը թողել է ժամանակին հայտնի «Փերոսի լանջապտնակը» խորագրով տրակտատը:— 175:

10 ... սովորել ցանկացողներին... խոչընդոտում է սովորեցնողների հեղինակությունը:— Յիցերոն: Աստվածների էության մասին, 1, 5:— 177:

11 ... բոզ ղեկավարվի Պլատոնի օրինակով:— Այսինքն՝ թող որպես հայտնիից գեպի անհայտը դասավանդման հերթականության նմուշ վերցնի Պլատոնի երկխոսությունները:— 177:

12 Նրանք երբեք դուրս չեն գալիս խնամակալության տակից:— Սենեկա: Նամակներ, 33:— 178:

13 Կասկածն ինձ գիտելիքից պակաս հաճույք չի պատճառում:— Դանթե: Դոնթո, XI, 93:— 178:

14 ... թոզ ամեն ոք ինքը տեղիքի իրեն:— Սենեկա:— Նամակներ, 33, 7:— 178:

15 Էպիքարմոս — հին հույն բանաստեղծ կատակերգու (մ.հ. մ. թ. ա. մոտ 450 թ.):— 179:

16 Սանտա-Մարիա Բոտոնդա եկեղեցի — «բոլոր աստվածների» զմբեթավոր տաճարը, որը մ. թ. ա. 25 թ. Հռոմում կառուցել է Ագրիպան, հաազայում դարձել է բրիտոնեական եկեղեցի:— 180:

17 Թոզ նա ապրի... ձախորդությունների մեջ:— Հորացիոս: Ներբողներ, 111, 2, 5:— 181:

18 Աշխատանքը մեզմացնում է ցավը:— Յիցերոն: Տուսկուլանյան զրույցներ, II, 23:— 181:

19 Կարելի է կիրք լինել առանց մեծամտության ու սնապարծության:— Սենեկա: Նամակներ, 103, 5:— 182:

20 Երե Սոկրատեսն ու Արիստոտելն ինչ-որ բան արել են նաև հակառակ... սովորույթների, բոզ ուրիշներին չթվա, թե իրենց էլ է թույլատրված...— Յիցերոն: Պարասկանությունների մասին, I, 41: Արիստոտել (մ. թ. ա. V—IV դ.) — փիլիսոփա, Սոկրատեսի աշակերտը:— 182:

21 ... ոչ մի անհրաժեշտություն նրան չի ստիպում...— Յիցերոն: Ակադեմիական հարցեր: Առաջին ուրվագիր, II, 3:— 183:

22 ... առազառախն, սրն ուղղություն է աալիս դեպի Խալիս:— Պրոպերցիոս, IV, 3, 39—40:— 184:

23 ... Պլատոնի խոսքերով...— Հիպիաս Մեծ, 285 C:— 185:

24 Պուրլիոս Կոնսելիոս Սկիպիոն Աֆրիկացի — հոտմեացի զորապետ, Պունիկյան 2-րդ պատերազմում (մ. թ. ա. 218—201) հաղթել է Հաննիբալին: ... Մարցելլուսն... անվայել

ման քննարկեց:— Մարկոս Կլավդիոս Մարցելլոս— Պունիկյան 2-րդ պատերազմի ժամանակների զորավար, գոհվել է մ. թ. ա. 208 թ. դարանկալվելով:— 185:

25 ... նրա... դիտողությունը... Լա Բոեսին նյութ ու առիթ տվեց գրելու «Կամավոր ստեղծությունը»:— Այս ենթագրությունն անհիմն է: Լա Բոեսիի այն գաղափարը, թե միապետ բռնակալին «ոչ» ասելը բավական է, այսինքն՝ բավական է, որ ամբողջ ժողովուրդը հրաժարվի ծառայել ու հնազանդվել նրան, արդյունք էր Լա Բոեսիի երկար մտորումների, այլ ոչ Պլուտարքոսի մոտ պատահարար կարգացած մի նախագասություն հեռանք:— 185:

26 ... դու առում ես... ոչ այնպես, ինչպես հարկն է:— Պլուտարքոս: Լակեդեմոնացիների ասույթները, Ալեքսանդրիդ, 2:— 186:

27 ... ինչպիսի՞ կյանքի համար ե՞նք ծնվել:— Պերսիոս, III, 69 և հաջ.:— 188:

28 ... ինչպիսի դժվարություններից... խուսափի և ինչպիսի՞ կրի:— Վերգիլիոս: Ընկան, III, 459: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 188:

29 ... Սակրատեսի խորհրդով, սահմանափակվելով միայն աներկբայորեն օգտակար բաների ուսումնասիրությամբ:— Դիոգենես Լահերտցի: II, 21:— 189:

30 Վնոիր դառնալ խելամիտ, ոկոիր...— Հորացիոս: Ուղերձներ, I, 2, 40 և հաջ.:— 189: 1, 85—86:— 189:

31 Թե ինչպիսին է Ահան... համաստեղության ազդեցությունը:— Պրոպերցիոս, IV, 1, 85—86:

32 Ես ի՞նչ գուժ ունեմ Բագումի... հետ:— Անակրեոն: Ներբողներ, 17:— 189:

33 Անասիմենես (մ. թ. ա. VI դ.)— հին հույն փիլիսոփա, տարերտյին մատերիալիստ, Անաքսիմանդրեսի աշակերտը:— 189:

34 Թեոդորոս Գազա (1400—1478), ծնունդով հույն, XIV դ. տարածված հունարեն քերականության հեղինակ:— 190:

35 βάλλω — «նետել» բայի ներկա ժամանակվա 1-ին դեմք, ապառնի 1-ին դեմք՝ βαλλῶ; χεῖρον — «ավելի վատ», βέλτιον — «ավելի լավ», համեմատական աստիճանի անկանոն ձև, χειριστον և βέλτιστον — գերազրական աստիճանի անկանոն ձև:— 190:

36 ... դեմքն աբստինյանում է և՛ մեկը, և՛ մյուսը:— Յուլիանոս: Երգիծանքներ, IX, 18 և հաջ.:— 191:

37 ...baroco և baralipon...— սխոլաստիկ տրամաբանության տերմիններ, որոնք ցույց են տալիս հեռուարանության եղանակները:— 191:

38 Էպիցրիկոս — շրջանագծեր, որոնց օգնությամբ հները բացատրում էին մոլորակների տեղանքի շարժումը: Մոլորակների շարժման կեպլերի օրենքներից հետո էպիցրիկերի աստիճանը մի կողմ թողնվեց:— 191:

39 Բրադամանտա և Անժելիկա— Արիստոտի (1474—1533) «Մոլեզին Ռոլանդը» պոեմի հերոսուհիները:— 192:

40 ... կանացիակերպ փոյուզիայի հովիվը...— Աֆրոդիտին ոսկե խնձոր ավող Պարիսը: Սոփեսա Պրոպիկոսի (մ. թ. ա. V դ.) մոտ կարելի է գտնել մի այսպիսի պատմություն. ուղերածանի մոտ պատանի Հերակլեսի գեմ ելան երկու կին՝ Փափկակեցությունն ու Առաքինությունը, և ամեն մեկը նրան հորզորում էր գնալ իր հասկից, Հերակլեսն ընտրեց Առաքինությունը: Նույն բանն է ուզում նաև Մոնաներ պատանուց:— 192:

41 Կավր խոնավ է ու փափուկ...— Պերսիոս, III, 23—24: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 183:

42 ... Այստեղ փնտրեցե՛ք... իսկական նպատակը...— Պերսիոս, V, 64—65:— 194:

43 Փիլիսոփայությունից չի փախում պատանեակը... գառավյալ ձերը:— Դիոգենես Լահերտցի, X, 122:— 195:

44 Կառնեաղես (մ. թ. ա. 214—129) — անտիկ սկեպտիցիզմի կարկառուն ներկայացուցիչ: — 195:

45 ... Պլատոնի հրավերով ներկայանալով նրա խնջույքին... — Պլատոնի ամենահայանքի երկխոսություններից մեկի խորագիրն է «Ննջույք»: — 196:

46 Այն օգտակար է ինչպես աղբատին, այնպես էլ նարուստին... — Հորացիոս: Ուղերձներ, I, 1, 25—26: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ: — 196:

47 ... այնպես, ինչպես մի... գույգ ձիերին: — Պլուտարհոս: Ինչպես պահպանել առողջությունը, 25: — 196:

48 ... ուսուցիչ... անսահման իշխանությունը հղի է ամենավտանգավոր հետևանքներով... — Քվինտիլիանոս: Հոստորի ուսուցումը, I, 3: — 197:

49 Սպեսիպոս (մ. թ. ա. մոտ 409—339) — հին հույն փիլիսոփա պլատոնական: — 197:

50 Գերմանիկոս — տես ծնթ. 4, գլ. XVIII: — 198:

51 Մեծ տարբերություն է կա գանգանք կատարել շքանկարալու և շխարհագնալու միջև: — Սենեկա: — Նամակներ, 96, 46: — 199:

52 Ալիբիադես (մ. թ. ա. 451—404) — ասիական քաղաքական գործիչ, որն աչքի է ընկնում քաղաքական արկածախնդրություններով, պատանի ժամանակ Սոկրատեսի աշակերտներից մեկն էր: — 199:

53 Արիստիպոսը հեշտությամբ հարմարվում էր իրերի ուզածը ընթացքին... — Հորացիոս: Ուղերձներ, I, 17, 23: — 199:

54 ... ես... գոհ կմնայի, եթե նա սովորեք հարմարվել... հանգամանքներին... — Հորացիոս: Ուղերձներ, I, 17, 25—26 և 29: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ: Այստեղ Հորացիոսի սողերի հարասություն կա: — 199:

55 Ճիշտ ապրելու այդ գիտությունը նրանք յուրացրել են... կյանքից... — Ցիցերոն: Տուսկուլյան զրույցներ, IV, 3: — 200:

56 Ես չգիտեմ ոչ գիտություն, ոչ արվեստ... ես փիլիսոփա եմ: — Ցիցերոնը (Տուսկուլյան զրույցներ, V, 3) նույն բանը պատմում է ոչ թե Հերակլիդես Պոնտացու, այլ Պյութագորասի մասին: — 200:

57 Հեգեսիոս — փիլիսոփա-կիեիկ (մ. թ. ա. IV—III դդ.): Մոնանի ասածը տե՛ս Գիոգենես կաերացի, VI, 64 և 48: — 200:

58 Հարկ է, որ նա կարողանա ենթարկվել ինքն իրեն... — Ցիցերոն: Տուսկուլյան զրույցներ, II, 4: — 200:

59 ... ուզում են նրան ընտելացնել գործերի, այլ ոչ թե խոսքերի: — Պլուտարհոս: Հակեգեմոնացիների անույթները: Ջեֆսիլամոս — Սպարտայի թագավոր Արքիլամոս II-ի (մ. թ. ա. V դ.) հայրը: — 201:

60 Երբ հարցի էությունը նախապես կշռագաաված է, բաները գալիս են ինքնաբերաբար: — Հորացիոս: Պոեզիայի գիտությունը, 311: — 202:

61 Երբ հարցի էությունը լցնում է հոգիդ, բաներն ուղեկցում են նրան: — Սենեկա Ավագ: Տարածայնություններ III: — 202:

62 Բուն էությունը բաներ է հուշում: — Ցիցերոն: Գերագույն բարիքի և գերագույն շարիքի մասին, III, 5: — 202:

63 ... նսնձ հարձակմաները կարող են հրապարակել... տգետներին միայն... — Տակիտոս: Երկխոսություն հոստորների մասին, XIX: — 202:

64 ... նա հորինում էր վատ ոտանավորներ: — Հորացիոս: Երգիծանքներ, I, 4, 8: — 203:

65 ... դու կգտնես նույնիսկ բզկաված բանաստեղծի մնացորդը: — Հորացիոս: Երգի-

ձանքներ, I, 4: *Հորացիոսի մոտ.* «գու շես գոնի նույնիսկ մնացորդը» (non ժխտումը Մոնտենի բաց թողած վաթսուներորդ տողում է):— 203:

⁶⁶ Մենեդրոս (մ. թ. ա. 342—292 թթ.) — աթենացի նշանավոր կատակերգակ, այսպես կոչված նոր ատտիկյան կատակերգության ներկայացուցիչ:— 203:

⁶⁷ Ավելի շատ ղեզոց, քան իմաստ:— Սենեկա: *Նամակներ*, 40, 5:— 204:

⁶⁸ Խնկված ու հնարամիտ սովետությունները:— Յիցերոն: *Ակադեմիական հարցեր: Առաջին ուրվագիր*, II, 24:— 204:

⁶⁹ ... ոչ թե բառերն են համապատասխանեցնում առարկային, այլ... առարկաներ, որոնք կազմել են... բառերին:— *Քվինտիլիանոս*, VIII, 3:— 204:

⁷⁰ ... հրապուրվելով... բառով, գիմում են այն բանին, ինչի մասին մտադիր չէին գրել:— Սենեկա: *Նամակներ*, 59, 5:— 204:

⁷¹ ... գուր է գալիս լոկ այն խոսքը, որը ցնցում է:— *Տոդ Հուկանոսի տապանագրից*:— 205:

⁷² ... խոսք... գիեզերի... Սվետոնիոսն անվանում է Կեսարի խոսքը... Սվետոնիոս: *Աստվածային Հուլիոսը*, 55: *Մոնտենի մոլորեցրել է Սվետոնիոսի իր ժամանակվա հրապարակությունների տեքստը, որում այս տեղը, այնպես, ինչպես տպագրվում էր, իսկապես հիմքեր էր առիտ խոսելու Կեսարի ինչ-որ առանձնահատուկ զինվորական ճարասանության մասին: նորագույն հրատարակություններում մենք կարդում ենք. «Eloquentia militarique re aut aequavit praestantissimorum gloriam aut excessit» («Ճարասանության մեջ և ուղղմական արվեստում նա ձեռք բերեց ոչ նվազ, եթե ոչ ավելի մեծ փառք, քան զրոնց լավագույն զիտակները»):— 205:*

⁷³ ... խոսքը պետք է լինի պարզ ու անպահույց:— Սենեկա: *Նամակներ*, 40, 4:— 205:

⁷⁴ ... ով խնդիր է դնում խոսել օրերերով:— Սենեկա, *Նամակներ*, 75, 1:— 206:

⁷⁵ Արիստոֆան (*Քերական*) *Բյուզանդացի*— մ. թ. ա. III—II դդ. հին հույն քերական: Անտիկ սովորույթը նրան է վերագրում կետագրական նշանների և զանազան շեշտերի գյուտը:— 206:

⁷⁶ ... հենց նրանք են բոլորից հիշտ վարվում:— Պլատոն: *Օրենքներ*, I, 11:— 206:

⁷⁷ ... որոնք հոգ էին տանում միայն լեզվի մասին:— Ստրեբոս: *Մաղկաբաղ*, XXXVI, 26, φιλόλογοι— գրականություն սիրող բանասերներ, λογόφιλoi— գատարկ խոսքեր սիրող բանասերներ: *Զենոն* (մ. թ. ա. մոտ 360—մոտ 263 թթ.)— հույն փիլիսոփա, ստոիկյանների փիլիսոփայական դպրոցի հիմնադիրը:— 206:

⁷⁸ ... ինձ հանձնել էր մի գերմանացու խնամքին...— *Նրա ազգանունը Հորսա (Horst) էր, բայց լատինական ձևով նրան անվանում էին Հորստանուս. Մոտենների ընտանիքից հետո նա դասավանդում էր Բորդոյի այն նույն գիեյան քոլեջում, ուր սովորել է Մոնտենը*:— 207:

⁷⁹ *Նիկոլա Կրուշի (1520—1572)*— ֆրանսիացի բանասեր, դասավանդել է հունարեն Բորդոյի և Կոնստանցի համալսարաններում: *Ֆրանսիայի այսպես կոչված կրոնական պահպանողների ժամանակ որպես բողոքական ենթարկվել է հալածանքների*:— *Զորջ Բյուրենեն (1506—1582)*— շոտլանդացի բանասեր, բանասահղծ, քաղաքական մտածող և պետական գործիչ: *Հարեց հումանիստական շարժմանը և մեղադրվեց հերետիկոսության մեջ: Ստիպված լինելով փախչել Ֆրանսիա, Բյուրենենը որոշ ժամանակ Բորդոյում դասավանդում էր լատիներեն: Այնուհետև վերագարձավ Շոտլանդիա, որտեղ դարձավ Շոտլանդիայի թագավոր Հակոբ VI-ի (ավելի ուշ՝ Անգլիայի թագավոր Հակոբ I-ի) դաստիարակը: Գրել է «Թագավորական իրավունքի մասին շոտլանդացիների մոտ» (1579) հա-*

կարճնապետական սրահտատը, որում շարադրված է ժողովրդական ինքնիշխանության երբևէ նապետների դեմ ժողովրդի ապստամբության իրավունքի ուսմունքը: Բյուքենենի տրտկատար, որն արգելված էր XVII դարի ամբողջ ընթացքում և հանգիսավորությամբ այրվեց Օքսֆորդի համալսարանում, անկասկած, հայանի էր Մոնտենին, որն ամբողջ կյանքում պահպանեց կապվածությունն իր ուսուցչին: Մարկ Անտուան Մյուրե (1526—1585)— ֆրանսիացի նշանավոր բանասեր, որին անվանում էին «լատինական դպրոցի լուսառու և նեցուկ»: Մյուրեն իր ժամանակակիցների շրջանում փառարանվեց «Հուլիոս Կեսար» (լույս է տեսել 1553 թ.) լատիներեն ողբերգությամբ և Ռոնսարի ֆրանսերեն մեկնաբանություններով: Բյուքենենն ու Մյուրեն կանգնած էին Ֆրանսիայում անտիկ թատերագրական ավանդույթի վերածնության ակունքներում: Գրողին, Գերանտը, Բյուքենենն ու Մյուրեն Մոնտենի ուսուցիչներն էին կամ Բորդոյի գիենյան քոլեջում, կամ Բորդոյի համալսարանում:— 208:

⁹⁰ ... ես նույնիսկ չէի լսել... Լանսելոտ Լենցիների, Ամադիսների, Հյուոն Բորգայիների... մասին...— նկատի են առնված XVI դ. հսկայական քանակությամբ հրատարակվող, ավելի ուշ ձևափոխված ասպետական վեպերի հերոսները:— 210:

⁸¹ Սու... նոր էի տասներկու տարեկան:— Վերգիլիոս: Հովվերգանմանություններ, VIII, 39:— 211:

⁸² Անդրեա դը Գուվեա (1497—1548)— պորտուգալացի բանասեր, որը դասավանդում էր Ֆրանսիայում և մի ժամանակ Բորդոյի գիենյան քոլեջի տնօրենն էր:— 212:

⁸³ ... դերասանական տրվեստը... բնավ չէր ստորացնում նրան:— Տիտոս Լիվիոս, XXIV, 24:— 212:

Գլուխ XXVII

ՅՆՈՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴԱՏԵԼ, ԹԵ ԻՆՉՆ Է ՃՇՄԱՐԻՑ ԵՎ ԻՆՉԸ՝ ՍՈՒՑ

¹ ... հոգին եերարկվում է ակնհայտի ներգործությանը:— Ցիցերոն: Ակադեմիական հարցեր: Առաջին ուրվադիր, II, 12:— 213:

² Նրազներ, մոգերի կախարդանք...— Հորացիոս: Ուղերձներ, II, 2, 208—208:— 213:

³ ... յարախանջուր ո՛ք... այլևս չի նայում փայլող երկնքին:— Լուկրեցիոս, II, 1038—1039:— 214:

⁴ ... ոչինչ... ինչի էլ որ հանդգնած լինեք մարդու երևակայությունը...— Լուկրեցիոս, II, 1033 և հաջ.: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 214:

⁵ ... նույն ձևի առարկուներին գերազանցող ամեն բան նրան թվում է վիթխարի:— Լուկրեցիոս, VI, 674 և հաջ.: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 215:

⁶ ... նրանք չեն որոնում պատհաններն այն բանի, ինչը... նրանց աչքի առաջ է:— Ցիցերոն: Աստվածների էության մասին, II, 38:— 215:

⁷ Քիլան (մ. թ. ա. VI դ.)— փիլիսոփա, որը սովորաբար գասվում է «յոթ հույն իմաստունների» շարքը:— 215:

⁸ Ֆրուասար Ժան (1338—1404)— ֆրանսիացի ժամանակագիր: Մոնտենը գիտե Ֆրուասարի գինը որպես պատմագրի, նա նշում է, թե Ֆրուասարի շարադրանքը գուրկ է նյութի նկատմամբ քննադատական վերաբերմունքից, սակայն զնահատում է փոստերի առատությունն ու շարադրանքի թարմությունը:— Բեառն— գավառ Ֆրանսիայի հարավարևմտյան ծայրամասում: Ալխուրառոտ— քաղաք Պորտուգալիայում: Մոնտենի հիշատակած ճակատամարտը տեղի է ունեցել 1385 թ. իսպանացիների և պորտուգալացիների միջև:— 215:

« ... մեր տարեգրքում...— Մոնտենը նկատի ունի Ն. Ժիլի «Ֆրանսիայի պատմական տարեգրքը» գործը: Խոսքն այստեղ Հոնորիոս III պապի մասին է, որը մահացել է 1227 թ.:— 215:

¹⁰ Տիլիպ II Սգոտոս— Ֆրանսիայի քաղավոր (1180—1223):— Մանտ— քաղաք Ֆրանսիայում, Սեն դետի վրա, Փարիզից 57 կմ հեռու:— 216:

¹¹ ... պարտության լուր... այդ... օրն Լեք... իսկույն տարածվել է...— Պլուտարխոս: Էմիլիոս Պողոսի կենսագրությունը, 25—, 216:

¹² ... Կեսարը հավատացնում է, թե հանախ լուրերը կանխում են իրադարձություններին...— Կեսար: Քաղաքացիական պատերազմի մասին, III, 36:— 216:

¹³ Ժան Բուշե (1476—1550)— Ֆրանսիացի պատմագիր և բանաստեղծ, ժամանակին շատ տարածված «Աքվիտանիայի տարեգրքը» (Annales d'Aquitaine 1524) գրքի հեղինակը:— 216:

¹⁴ ... միևնույն է իրենց ներկանկարչամբ կջախջախեն ինձ:— Յիցերոն:— Տուսկուլանյան գրույցներ, I, 21:— 217:

Գլուխ XXVIII

ԱՐԻՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

¹ Վերևը հմայիչ կին է ներքևը՝ ձուկ:— Հորացիոս: Պոեզիայի գիտությունը, 4:— 218:

² ... միանգամայն հաշոդ կերպով վերանվանել են «Ընդդեմ մեկի»:— Լա Բոեսի իր տրակտատն անվանել էր «Կամավոր ստրկության մասին» (De la servitude volontaire): Էռսելով դա շիմացող մարդկանց մասին, Մոնտենը նկատի ունի հուգենոսներին, որոնք հակակառավարական մի շարք այլ պարսավագրերի թվում 1576 թ. տպագրեցին Լա Բոեսի «Գատողություն կամավոր ստրկության մասին» տրակտատը «Ընդդեմ մեկի» (Contr'Un) այսինքն՝ բնդդեմ բոնտկալ միապետական կարգի, մարտական անունը կրող Memoires de l'Estal de France sous Charles IX». Ժողովածուի մեջ:— 218:

³ ... Եղումներ հունվարյան հրովարտակի մասին...— նկատի են առնված Լա Բոեսի երկու հուշագրությունները Բազալորական հրովարտակի մասին, որը հրատարակվել է 1562 թ. հունվարին և հուգենոսներին իրավունք վերապահել բացահայտ ժամերգություն կատարելու ամենուր, բացի բազարներից, Լա Բոեսի հայացքների բնութագրման համար հետաքրքրություն ներկայացնող այդ երկու հուշագրությունները գտել է Ֆրանսիացի գիտնական Պ. Բոնեֆոնը և 1917 թ. հրատարակել «Revue d'Histoire littéraire de la France». Հանդեսում:— 219:

⁴ ... եթե չհաշվենք նրա ստեղծագործությաններն այն զբոսայգի, որ ես նրատարակել եմ...— Լա Բոեսի սակեծագործությունների ոչ մեծ գրքույկում, որը 1571 թ. Փարիզում հրատարակեց Մոնտենը, գետեղված էին Լա Բոեսի մի քանի թարգմանություններ հունարենից (Քսենոփոնի «Տնավարության մասին», Պլուտարքոսի «Ամուսնության կանոնները» և Միսիթարական համակ կնոջ» գործերը), ինչպես նաև Լա Բոեսի լատիներեն ու ֆրանսերեն բանաստեղծությունները:— 219:

⁵ ... լավ օրենսդրմունքն ավելի շատ հոգում են բարեկամության, քան արդարության մասին:— Արիստոտել: Նիկոմաքոսյան բարոյագիտություն, VIII, 1:— 219:

⁶ Ես ինքս էլ նայունի եմ եղբայրներս նկատմամբ իմ հայրական զգացմունքներով:— Հորացիոս: Ներբողներ, II, 2, 6:— 221:

7 ... քաղցր գառնությունը խառնում է սիրո ճոզներին:— *Կատուլլոս, ԼXVIII, 17 և հար.:*— 221:

8 ... նա... տիրելով նրան, արդեն ֆիչ է գնահատում:— *Արիոստո: Մոլեգին Ռուանդը, X, 7:*— 221:

9 Ուրեմն իրենից ի՞նչ է ներկայացնում բարեկամների այդ սիրահարությունը:— *Յիցերոն: Տուսկուլանյան զրույցներ, IV, 33:*— 223:

10 ... սիրո այն ճկարագիրը, որ... Ակադեմիան...— *Պլատոն: Խնջույք, 178a—212c:* Ակադեմիա— *Վիլհելմ Կոլարի ընկերակցություն Պլատոնի գլխավորությամբ: Այստեղ նկատի է առնվում այսպես կոչված «Հին ակադեմիան», որի կազմում մտնում էին Պլատոնի մերձավոր աշակերտները. Սպեսիպոսը, Քսենոկրատեսը, Պոլեմոնեսը, Քրանթորը և ուրիշներ:*— 223:

11 Հարմողիոս— *աթենացի պատանի, որն իր բարեկամ Արիստոգիտոնեսի աշակցությամբ մ. թ. ա. 514 թ. սպանեց բռնապետ Հիպարքոսին: Հետագայում Աթենքում կանգնեցվեց Հարմողիոսի և Արիստոգիտոնեսի արձանը և ի հիշատակ նրանց զործի հաստատվեցին հրապարակային տոնախմբություններ:*— 224:

12 Սերը մի ձգտում է ձեռք բերելու այն մարդու բարեկամությունը, որը զբաղվում է իր գեղեցկությամբ:— *Յիցերոն: Տուսկուլանյան զրույցներ, IV, 34:*— 224:

13 Բարեկամության մասին կարող է... դատել արդեն կոփված ճոզի... ունեցող մարդը միայն:— *Յիցերոն: Լելիոս, 20:*— 225:

14 Ի՞նչ գրած... լատինական ճիշտապես երգիծանքում...— *Մոնտեներ նկատի ունի Լա Բոսսի իրեն հասցեագրված լատիներեն երգիծանքը, որը Մոնտեներ հրատարակել է Լա Բոսսիի վերահիշյալ ստեղծագործությունների շարքում (տես ծնթ. 4, գլ. XXVIII):*— 225:

15 ... մե՞նք երկուսս էլ արդեն ձեռնարկված մարդիկ էինք...— *Մոնտեների և Լա Բոսսիի բարեկամությունն սկսվեց, երբ Մոնտեներ 25 ամսական էր, իսկ Լա Բոսսին՝ 28:*— 225:

16 ... երբեք սիրել նրան:— *Աուլուս Հելիոս, I, 3:*— 227:

17 Օ՞ր իմ բարեկամներ, շկա այլևս ոչ մի բարեկամ:— *Դիոգենես Լաերտցի, V, 21:*— 227:

18 ... մի ճոզի երկու մարմնում...— *Դիոգենես Լաերտցի, V, 20:*— 228:

19 Իմ սովորությունն այսպիսին է, իսկ դու՛ վարվիր ինչպես քեզ է պետք:— *Տերենտիոս: Ինքն իրեն պատժողը, 80:*— 231:

20 Ումն հայր, որին... տեսավ, բե ինչպես... փայտին հեծած ֆշում է...— *Նկատի է առնված Սպարտայի թագավոր Ագեսիլայոս II-ը (տես ծնթ. 13, գլ. III):*— 231:

21 Քանի դեռ խելոս տեղն է, սիրելի բարեկամիս ոչ մի բանի հետ չեմ համեմատի:— *Հորացիոս: Երգիծանքներ, I, 5, 44:*— 231:

22 ... երջանիկ է նա, ում վիճակվել է տեսնել իսկական բարեկամի գունն սավերը:— *Մենանդրոսը Պլուտարքոսից արված քաղվածքում, Եզրայրական բարեկամության մասին, 3:*— 231:

23 ... (որ), որը... համարելու եմ ամենասարսուփիին...— *Վերգիլիոս: Էնեական, V, 49—50:*— 232:

24 ... ինձ համար այլևս վայելքներ չպիտի լինեն...— *Տերենտիոս: Ինքն իրեն պատժողը, 149—150:*— 232:

25 Սրբ մաքր վաղածամ տաներ (քեզ) ...— *Հորացիոս: Ներբողներ, II, 17, 5 և հար.:*— 232:

26 Հարկ կա՞ արդյոք ամաչել սեփական վշտից...— *Հորացիոս: Ներբողներ, I, 24, 1—2:*— 233:

27 Ռ՝ն, քշվաոիցս խլված եղբայր:— Կասուլլոս, ԼXVIII, 20 և հաշ., ԼXV, 9՝ սկսած
Alloquar բառից: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 233:

28 ... ես որոշեցի այն շղեակն ինչպես էր նշանակում:— Տե՛ս ծնթ. 2, գլ. XXVIII:— 233:

29 Սարլակ կամ Սարլա— փոքրիկ քաղաք Տրանսիայի հարավում, ուր ծնվել է Լա
Բոեսին:— 234:

30 ... լուրջ աշխատության փոխարեն, ես... կրեմ ավելի զվարեալի ու կենսու-
րախ...— «Դատադոսիոն կամավոր ստրկության մասին» ստեղծագործության փոխարեն
Մոնտենն իր «Փորձերի» հաջորդ (XXIX) գլխում գետնից է Լա Բոեսիի 29 սոնետները:
Այս բանաստեղծությունները տպագրվել են Մոնտենի կենդանության օրոք լույս տեսած
«Փորձերի» բոլոր հրատարակություններում, և միայն մահից քիչ առաջ, նախապատրաս-
տելով իր գրքի նոր հրատարակությունը (որը լույս տեսավ 1595 թ.), Մոնտենն այնտեղից
հանել է Լա Բոեսիի սոնետներն ու գրել. «Այդ բանաստեղծությունները կարելի է կարգալ
ուրիշ տեղում»: Սակայն այդ սոնետներն առանձին հրատարակությամբ ոչ մի տեղ
չտպագրեցին:— 234:

Գլուխ XXIX

ԷՏԻՆ ԴԸ ԼԱ ԲՈԵՍԻԻ ՔՍԱՆԻՆՐ ՍՈՆԵՏՆԵՐԸ

1 Կորիզանդա Անդուանոսի— անտիկ ձեռք աչգպես էին հորջորջել Դիանա դը Տուա-
յին, որն ամուսնացավ Գրամոնի՝ կոմս դը Գիշի, կամ գը Գիսենի հետ, և հետագայում
դարձավ Հենրի IV թագավորի սիրուհին:— 234:

2 ... կարելի է կարգալ ուրիշ տեղում: (Տես ծնթ. 30, գլ. XXVIII): Մեր հրատարա-
կությունում այդ, ինչպես նաև մյուս բոլոր գլուխների տեքստերը բերվում են ըստ «Փոր-
ձերի» 1595 թ. բորդոյան նմուշի:— 235:

Գլուխ XXX

ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 Արյունահեղ զոհաբերությունների Մոնտենի այս դիտում բերած օրինակներից քաղ-
վածքներ է անում XVIII դ. մարտնչող աթիստ ժան Մեշիեն իր «Կտակում», XXIV:— 235:

2 Իմաստունին էլ կարող են անվանել խենք...— Հորացիոս Ուլբրաններ, I, 6, 15—
16:— 235:

3 ... մտածել պարկեշտ կենալ...— Պոզոս առաջյալ: Թուղթ առ հոսվմայեցիս, XII,
3:— 235:

4 Ես տեսել եմ այս աշխարհի մեծերից մեկին...— հավանաբար, Մոնտենն ակնար-
կում է Տրանսիայի թագավոր Հենրի III-ին:— 235:

5 Պավոսեիս— սպարտացի զորավար (մ. թ. ա. V դ.), որը հետագայում դավա-
ճանորեն անձնատուր եղավ պարսիկներին և դրա համար իր հայրենակիցների կողմից
դատապարտվեց մահվան. զնդանվեց Աթենքի տաճարում, ուր փորձել էր ապաստան
գանել:— 236:

6 Աուլուս Պաստուս Տուրիտ— Հռոմի դիկտատոր մ. թ. ա. 431 թ.: Որդուն գրել:
խատելու մասին նրան վերագրվող հրամանն առասպել է:— 236:

7 ... փիլիսոփայությամբ շափազանց տարվելը վնասակար է...— Պլատոն: Գորգիաս,
484 c—d:— 236:

8 Թովմա Աթվինացի (1225—1274) — կաթողիկոսական ամենանշանավոր աստվածարաններից և միջնադարյան սխոլաստիկայի ներկայացուցիչներից մեկը:— 236;

9 Պլատոնի կարծիքով դա եույնն է, ինչ սպանությունը:— Պլատոն: *Օրենքներ*, VIII, 838e:— 237;

10 Աենոբիա — Պալմիրայի թագուհին (267—273):— 237;

11 ... կնոջ և իր ծնողներից բախուհ... — Համբրուս: *Իլիական*, XIV, 294 և հաջ.:— 238;

12 Մեեք արհեստակաճարեն երկարացրել են և ևակատագրի տխրալի ճանապարհները:— Պրոպերցիոս, III, 7, 32:— 239;

13 Գալլիոն — հռոմեացի սենատոր, որին Տիբերիոս կայսրը դատապարտել էր արտոթի Մոնտենն այնքան էլ ճիշտ չի հաղորդում նրա մաժին Տակիտոսի պատմությունը (*Տարեգիրք*, VI, 3):— 239;

14 Մուրադ II — թուրքական սուլթան (1421—1451), որը ստրկացրել էր բալկանյան ժողովուրդներին:— 240;

15 ... ետ երկրներում ճման սովորույթն ամենուր տարածված է... — Ինչպես արդեն նշվել է վերը (տես ծնթ. 12, գլ. XXIII), Մոնտենն Ամերիկայի բնիկների մասին առատ տեղեկություններ է քաղում Լոպես դե Գոմարայի աշխատություններից («Հնդկաստանների ընդհանուր պատմությունը» գրքից, որը 1553 թ. իսպանական կառավարությունն արգելեց. Lopez de Comara. *Historia general de las Indias con la conquista del Mexico y de la Nueva-Espana*. Medina, 1553.), սակայն բացի Գոմարայից, Մոնտենն օգտվում է նաև այլ հեղինակներից. *Բենցոնի, Բելֆորե, Տեե և այլն*:— 240;

Գլուխ XXXI

ՄԱՐԳԱԿԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1 Պլուտոս (մ. թ. ա. 295—272 թթ.) — էպիրոսի արքան, նշանավոր զորավար:— 241;

2 Տիտոս Քվինտինոս Ֆլամինիոս (Մոնտենն իր ժամանակվա սովորույթի համաձայն նրան անվանում է Ֆլամինիոս) — հռոմեացի զորավար, կոնսուլ մ. թ. ա. 198 թ.: Գլխավորելով հռոմեական զորքերը Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս V-ի դեմ մղվող պատերազմում, Կինոսկեֆալեի մոտ (Թեսալիա) նրան հասցրեց վճռական պարտություն, որը հանգեցրեց այսպես կոչված Մակեդոնյան II պատերազմի ավարտին:— 241;

3 Պուբլիոս Սուլպիցիոս Գալբա — Ֆլամինիոսի զորքի հրամանատար Մակեդոնյան II պատերազմում:— 241;

4 Վիլգանիոն (1510—1571) — ֆրանսիացի ծովակալ, ծովագնաց, որը Հենրի II-ին առաջարկեց իսպանացիներից խլել Ամերիկայի նրանց որոշ դաղույթները: Վիլգանիոնը մտազիր էր նոր աշխարհում ապաստան ստեղծել հալածվող հուգենոտների համար և իր համար ապահովեց ծովակալ Կոլինյիի աջակցությունը: 1555 թ. Վիլգանիոնի արաշվախումն ափ իջավ Ռիո դե Փանելլոյի մոտ: Սակայն Վիլգանիոնի հիմնած բողոքական գաղութը գոյատևեց շատ կարճ:— 241;

5 Պլատոնի մտ Սոլոնը... — Պլատոն: *Տիմևս*, 20e:— 241;

6 Մեծծով — Սև ծովի հին անվանումներից մեկը:— 242;

7 ... նախկինում դա միասնական երկիր է եղել:— Վերգիլիոս: *Էնեական*, III, 414, և 416—417:— 242;

8 Նեգրեպոնոս — Եգեյան ծովում գտնվող էվբեա կղզու մյուս անվանումը:— 242;

⁹ ... նախկինում անպառուզ ծովախափը... կերակրում է... փաղափները:— Հորացիոս: *Պոեզիայի գիտությունը*, 65—66:— 242:

¹⁰ Սկսած «Պլատոնի մոտ Սոլոնը» պարբերությունից մինչև այս տեղը, Մոնտենը վերարտադրում է 1579 թ. ժնկում հրատարակված Բենցոնիի «Նոր աշխարհի պատմությունը»: (Benzoni. Histoire du Nouveau Monde) գրքի ֆրանսերեն թարգմանության տեքստը:— 242:

¹¹ Մեղոն— գավառ Ֆրանսիայի հարավ-արևմուտքում:— 243:

¹² ... եթե ինքուր... գրեցիր... իսկապես նրան է:— Մոնտենը նկատի ունի «Պատմվածքներ հրաշալիքների մասին» պարականոն ժողովածուն, որն անտիկ սովորույթով առանց բավարար հիմքերի վերագրվում է Արիստոտելին և Արիստոտելի ու այլ հեղինակների ստեղծագործությունների բանաբաղություն է:— 243:

¹³ ... բուռններ... երգիչներից փաղցր են երգում:— Պրոպերցիոս, 1, 2, 10—11 և 14:— 245:

¹⁴ Ամեն բան ստեղծում է կամ բնությունը, կամ դիպվածը...— Պլատոն: *Օրենքներ*: X, 888c:— 245:

¹⁵ Ես Պլատոնին կասեի, ամա մի ժողովուրդ...— Շեքսպիրը «Փոթորիկում» (II, 1, 141—158, *Գոնզալոյի խոսքը*) գրեթե բառացի վերարտադրել է սույն գլխի այս բառերով սկսվող համվածը, մինչև. «... ճանաչե՛ր... իր հորինած պետությունը»:— 246:

¹⁶ ... առավածների ձեռքերից... իջած մարդիկ են:— Սենեկա: *Նամակներ*, 90, 44:— 246:

¹⁷ Այսպիսին են բնության սանձանած առաջին օրեփները:— Վերգիլիոս: *Գեորգիկաներ*, II, 20:— 246:

¹⁸ Սուղա— մ. թ. X դ. բյուզանդական համանուն բացատրական բառարանի ենթագրյալ հեղինակը:— 247:

¹⁹ Գինձ— հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս: Սրանից բամվոդ չուղն օգտագործվում է լիկյորներ պատրաստելու համար:— 247:

²⁰ ... չենք ոչ միայն կարդացել ենք այլ ստեղծել բաների մասին... այլև... եղել ենք... ակաճատեսը...— Մոնտենն այստեղ ակնարկում է Կարլոս IX-ի օրոք 1572 թ. օգոստոսի 24-ի գիշերվա բողոքականների զանգվածային կոտորածը (Բարդուղեմիոսյան գիշեր):— 250:

²¹ ...Ալեգիա փաղափում պաշարված լինելով... Ալեգիայի պաշարումը տեղի է ունեցել մ. թ. ա. 52 թ., այստեղ փակվել էր Կեսարի դեմ ապստամբած գաղերի առաջնորդ Վերցինգիտորիքսը:

²² ... գասկոնցիները ճման սնունդով երկարացրել են իրենց կյանքը:— Յուլիենայ: *Նրգիծանքներ*, XV, 93: Իսակոնցիներ— հին ցեղ, որը բնակեցնում էր Գասկոն նահանգը:— 250:

²³ ... բժիշկներ... չեն ամաչում դիակներից պատրաստել տարբեր դեղամիջոցներ...— Մոնտենի ժամանակներում կարծիք կար, թե եգիպտական մոմիաներն ունեն բուժիչ հատկություններ, այդ պատճառով որոշ բժիշկներ, մոմիայի մասերը փոշիացնելով, պատրաստում էին թրմեր և քսուքներ, օգտագործելով դրանք. հիվանդների բուժման համար:— 250:

²⁴ Իսլական կարելի է համարել լոկ այն հազրանակը, երբ ընձամիներն իրենք են իրենց պարտված ճանաչում:— Կլավդիանոս: *Հոնորիոսի վեցերորդ կոնսուլության մասին*, 248—249:— 252:

25 Եւզնիոկ գետին տապալված ժամանակ շարունակում է կովել:— Սեճեկա: Նախահինամության մասին, 2:— 252:

26 Սալամին— հունական կղզի և բաղաբ, որի մերձակայքում մ. թ. ա. 480 թ. սեպտեմբերին Քեմիստոկլեսի հրամանատարութեամբ հույները հաղթեցին պարսիկներին, Պլատեա— տես ծնթ. 1, գլ. XII, Միկայի— հրվանդան Հոնիայում (Հունաստան), որի մոտակայքում մ. թ. ա. 479 թ. հույները հաղթեցին պարսիկներին. ինչ վերաբերում է Միցիլիայի հաղթանակին, ապա Մոնտենը, հավանաբար, նկատի ունի Նավլոխի ճակատամարտը մ. թ. ա. 36 թ., որում Սեքստոս Պամպեսը ջախջախվեց, որից հետո Միցիլիային անցավ Օկտավիանոսը (Օգոստոս): Քերմոսիլիի կիրճ: Կոստի վանքում (Հունաստան)— այն վայրը, որտեղ մ. թ. ա. 480 թ. զքհվել են Լեոնիդաս Սպարտացին ու նրա զինվորները, մարտնչելով պարսից թագավոր Քսերքսեսի հրոսակների դեմ:— 252:

27 Իսֆոլյանս— սպարտացիների զորավարը (մ. թ. ա. IV դ.):— 253:

28 Լիան, Լեանիլը, Սառան և Հակարի կանայք...— այստեղ Մոնտենի մոտ սխալություն է. ըստ Աստվածաշնչի, Հակոբի կանայք Ռահելն ու Լիան էին, իսկ Սառան Աբրահամի կինն էր:— 254:

29 Իեյուսարոս— Գալաթիայի շորորդապետը (կառավարիչ) և Փոքր Հայքի թագավորը (մ. թ. ա. մոտ 42 թ.), հռոմեացիների դաշնակիցը Միհրդատ VI նվաճարի դեմ պայքարում:— 254:

30 ... սա... անակրեոնյան ստեղծագործություն է:— Անակրեոնյան պոեզիան բնութային, սիր և վայելք գովերգող պոեզիա է: Անակրեոն— մ. թ. ա. VI դ. հին հույն քնարերգու:— 255:

31 ... բնիկներից երեք եկել էին Ռուան...— դա եղել է 1562 թ.:— 255:

Գլուխ XXXII

ԱՅՆ ԱՄՍԻՆ, ՈՐ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱՍՄՂՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՐԿ Է ԽՈՍԵՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ

1 ... ավելի հեշտ է ունկնդիրներին զգեսցնել, խոսելով աստվածների, քան մարդկանց... մասին...— Պլատոն, *Կրիտիաս*, 107d:— 256:

2 Եվ նման բոլոր մարդիկ:— Հորացիոս: *Երգիծանքներ*, 1, 2, 2:— 256:

3 ... անա... մի օրինակ... մեզ մոտ տեղի ունեցող կրոնական պատերազմներից:— *Լարոշլաբեյլի մոտ հուզենոսների ու կաթոլիկների միջև ճակատամարտը տեղի է ունեցել 1569 թ. մայիսին և ավարտվել է հուզենոսների հաղթանակով: Մոնկոնտուրի և ժարնակի ճակատամարտերը կաթոլիկների և հուզենոսների միջև տեղի են ունեցել նույնպես 1569 թ.:— 257:*

4 ... ծովում փայլուն հաղթանակ... բուրբերի նկատմամբ...— Մոնտենը նկատի ունի ծովամարտը Լեպանտոյի մոտ, Հունաստանի անիերին (1571): Այդ ճակատամարտում երիտասարդ Սերվանտեսը կորցրեց ձեռքը:— 257:

5 Արիոս (մոտ 256—336)— Քրիստոսի աստված լինելը ժխտող խոշորագույն հերետիկոսներից մեկը, այսակողից են արիոսականները, Լեոն— հակապապ, որին սուսը քաշեցին Արիոսն ու նրա հետևորդները:— 258:

6 Հելիոգարալոս (Էլագաբալոս)— Հռոմի կայսր, կայսերական գահ են բարձրացրել լիզիոնները 217 թ., սպանել են պրեստրյանները 222 թ.:— 258:

7 Իրինեսա— II դ. նշանավոր աստվածաբաններից է, ուղարկվել է Գաղիա՝ քրիստոնեությունը քարոզելու, 177 թ.-ից՝ Լիոնի եպիսկոպոսն էր:— 258:

«... ս'վ կառույ է հասկանալ, քե ինչն է աստծուն հաճա:— Սողոմոնի իմաստութեան գիրքը, IX, 13:— 258:

Գլուխ XXXIII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԽԵ ԻՆՉՊԵՍ ԿՅԱՆՔԻ ԳՆՈՎ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՆ ՎԱՅԵԼՔՆԵՐԻՑ

¹ Լավ է չապրել, քան ապրել վշաի մեջ:— Մոնտենը մեջ է բերում երեք հույն անհայտ բանաստեղծների երեք ասույթները, փոխառելով գրանք Poètes gnomiques գրքից, 1569:— 259:

² Չկա մի մարդ... որ չգերադասի մեկ անգամ բնկնել, քան շարունակ երեւալ:— Սենեկա: Նամակներ, 22, 3:— 259:

³ Հիլարիոս— Պուատիի քաղաքի հայտնուպոսը, ապրել է IV դ.:— 259:

Գլուխ XXXIV

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՀԱՃԱՆ ԽԵԼԱՄԻՏ Է ՎԱՐՎՈՒՄ

¹ Հատկանշական է այս գլխի բուն անվանումը, ուր տեղ է գտել «ճակատագիր» (fortuna) տերմինը, որը Մոնտենին մեղսագրում էր պապական ցենզորը ստուգելով «Փորձերը» 1581 թ. Մոնտենի Հոռոմում եղած ժամանակ: Ինկվիզիցիան Հոռոմում, առանձնահատուկ եռանդով ոտքի էլնելով խոտվարարութեան դիմ, արգելել էր ստեղծագործութուններում օգտագործել «ճակատագիր», «հեթանոսական» բառը, որը Մոնտենը շատ հաճախ էր օգտագործում: Պապական ցենզորը, որն աչքի էր անցկացրել «Փորձերը», Մոնտենին խնդրել էր «ճակատագիր» «պիղծ» տերմինը փոխարինել «նախախնամութուն» բառով: Մոնտենը խոստացել է ուղղել, բայց իր կյանքի ընթացքում լույս տեսած ոչ մի հրատարակությունում փոփոխություններ չի մտցրել:— 260:

² Դուրս վալանտինուա— Չեզարե Բորջա (մհց. 1507 թ.), Ալեքսանդր VI Բորջա պապի ապօրինի որդին: Բորջանների ընտանիքը հայտնի էր գաղտնի սպանություններով և դավաճանություններով: Ալեքսանդր VI պապի մահից հետո (1503) Հուլիոս II պապը և Գոնսալվո Կորդովացին սկսեցին հալածել Չեզարե Բորջային, նրան երիցս զնդան նետեցին: Գոնսալվոյի հրամանով ուղարկված լինելով Իսպանիա, նա փախավ Նավարայի թագավորի մոտ, 1507 թ. սպանվեց մարտում: Մաթիսվելին Չեզարե Բորջային նկարագրում է որպես կատարյալ բռնակալ:— 260:

³ ... ավելի շուտ, քան... գիշերները կհագեցնելին նրանց սիրս ծառավր:— Կատուլլոս, LXVIII, 81,— 261:

⁴ ... Կոստանտինոսը հիմնեց... կայսրությունը... Կոստանտինոսով ավարտվեց նրա բազմադարյա գոյությունը:— Նկատի է առնված Կոնստանտինոս I-ը (Մեծ), որը Հռոմի կայսրության մայրաքաղաքը փոխադրեց Կոստանդնուպոլիս (306—337). Կոնստանտինոս XII Պալեոլոգը (1448—1453) զոհվել է թուրքերի կողմից Կոնստանդնուպոլիս գրավման ժամանակ:— 261:

⁵ Խլոզվիզ— դերմանական ֆրանկների թագավոր Մերովինգների դինաստիայից, 508 թ. իր մայրաքաղաքը փոխադրեց Փարիզ և ֆրանկների թագավորներից առաջինն էր, որ քրիստոնեություն ընդունեց: Ժան Բուլշե— տե՛ս ծնթ. 13, գլ. XXVII:— 262:

⁶ Յասոն Յերեցի— այսինքն՝ Յերեցի (Թեսալիայում):— 262:

7 ... Իզարեյը... բարեհաջող ամի իջավ:— Նկարագրված դեպքը տեղի է ունեցել 1326 թ.— Իզարեյը— Ֆրանսիայի թագավոր Ֆրիխո IV. գեղեցիկի գուստրը, Անդլիայի թագավոր էդուարդ II-ի կինը:— 262:

8 ... Ընկատագիրը մեզանից լավ գիտե, թե ինչ պետք է անել:— Հույն անհայտ հեղինակի ասույթ, որը Մոնտենը փոխառել է գլ. XXXIII-ի 1-ին ծանոթագրությունում հիշատակված ժողովածուից:— 262:

9 Իկեա— Սիցիլիայի բռնապետ (մ. թ. ա. IV դ.), երկար ժամանակ պայքարել է կորնթոսցի զորավար Տիմոկոնի դեմ, որն, ի վերջո, այնուամենայնիվ գահընկեց է արել նրան, ազատագրելով սիցիլիացիներին:— 263:

Գլուխ XXXV

ՄԵՐ ԿԵՆՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՂԱՄ ՄԻ ԲԱՑԹՈՂՄԱՆ ՄԱՍԻՆ

1 Կլիո Գրեգորիո Ջիրալդի (1479—1552)— իտալացի բանասեր և բանասանդու Սեբաստիան Կասաուլիոն (1515—1563), ծնվել է Գոֆինեում, Ֆրանսիայում, XVI դ. կրոնական հանդուրժողականության նշանավոր քարոզիչ, որը հայտնի էր Կալվինի գեմ մղած անողոր պայքարով և, մասնավորապես, Սերվետին այրելու գեմ խիստ բողոքով: Չնայած հալածանքներին և մուրացիկ դոյությունը, Կասաուլիոնը թողել է մի շարք գործեր, որոնց մեջ հատկապես աչքի է ընկնում «Հերեաիկոսների մասին» նրա լատիներեն տրակտատը՝ կրքոտ բողոք ընդդեմ ամեն տեսակ խավարամոլություն: Մոնտենին, անկասկած, հայտնի էր այդ ստեղծագործությունը, և նա ոչ միայն կարեկցում էր Կասաուլիոնի տղետանի վիճակին, այլև նրա հետ գաղափարական մոտիկություն էր զգում:— 264:

Գլուխ XXXVI

ՀԱՔՈՒՍՏ ԿՐԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ... ինչպես Սուրբ Գիբն է ասում...— «սա վատ է արեզակի տակին եղած բուրբ գործերումը, որ ամենքին էլ միևնույնն է պատահում...» (Գիրք ժողովող, գլ. թ., 3):— 265:

2 ... գրեթե ամեն կենդանի բան ծածկված է...— Լուկրեցիոս, IV, 935—936:— 266:

3 Մասինիսսա— Նումիդիայի արքա (մ. թ. ա. II դ.):— 267:

4 Սեպտիմիոս Սևերոս— Հռոմի կայսր (մ. թ. II—III դդ.):— 267:

5 ... սպանված Եգիպտացիների կառափներև... ավելի պիեղ են. քան պարսիկներինը...— Հերոդոտոս, III, 12:— 267:

6 Կեսարը... գնում էր միշտ գործի առջևից...— Սվետոնիոս Լեստիմոսիան Հուլիոս, 58:— 267:

7 ... դիմանում էր սարսափելի տեղատարափներին ու... ամպրոպներին:— Օրիստո Իտալիկ: Պունիկյան պատերազմներ, I, 250—251:— 267:

8 Պեզուի թագավորություն— Բիրմա: Մոնտենը նկատի ունի վենետիկցի վաճառական Կասպարո Բալդի «Ճանապարհորդություն արևելյան Հնդկաստան» (Casparo Baldi. Viaggio dell'Indie Orientale. Venezia, 1590) գիրքը, որ նա իտալիերեն կարդացել էր մահից թիչ առաջ:— 267:

9 ... Պլատոնը... խորհուրդ է տալիս ոչ մեք ոտները, ոչ գլուխը շժածկել...— Պլատոն: Օրենքներ, XII, 942d:— 267:

10 Թագավորը, որին ընտրել են լեհերը մեր թագավորից հետո... — խոսքը 1575թ.-ից Լեհաստանի թագավոր Ստեֆան Բատորիի մասին է: Նրանից առաջ մեկ տարի Լեհաստանի թագավոր էր Անժուի արքայազնը՝ հետագայում Ֆրանսիայի թագավոր Հենրի III-ը: — 267:

11 ... տանն է դնում: — Այստեղ Մոնտենի մոտ քերականորեն երկվամաստություն է, քանզի պարզ չէ, թե թագավորներից որ մեկին է վերաբերում «նա»-ն: Սակայն կասկած չկա, որ Մոնտենը նկատի ունի Ստեֆան Բատորիին: — 267:

12 ... նրանք, ովքեր հռոմեացիներին նրամայել էին... հասնել գլխարկները, դա արել են... նկատի ունենալով ֆաղափայիների ուռուցումները... — Պլինիոս Ավագ: Բնական պատմություն, XXVIII, 17: — 268:

13 ... 'Իյո, Բելլեի... Լյուսեմբուրգ կատարած արշավանքի ժամանակ... — դա տեղի է ունեցել 1543 թ.: — 268:

14 ... (սառած) գիճիկ... կտրատում են: — Սվիդրոս: Վշտալի հղերերգեր, III, 10, 23 և հաջ.: — 268:

15 Մեռախայան լին — Ազոլի ծովի հին անվանումը: — Մինեդամ — Պոնտոսի թագավոր Միհրդատ VII Եվպատոր (մ. թ. ա. 123—63 թթ.): — 268:

16 ... Պլացենցիայի մոտ... նակատամարտի... — Պլացենցիա — Պլաչենցա (քաղաք Իտալիայում): Մոնտենը նկատի ունի մ. թ. ա. 217 թ. Պլացենցիայի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտը Պունիկյան II պատերազմի ժամանակ, որն ավարտվեց հռոմեացիների նկատմամբ կարթագենցիների հաղթանակով: — 268:

Գլուխ XXXVII

ԿԱՏՈՆ ԿՐՏՍԵՐԻ ՄԱՍԻՆ

1 Ֆելյանցիներ կամ ֆելյաններ — ցիստերցիական ուխտից առանձնացած կաթոլիկ վանականների ուխտի անդամներ: Ուխտը հիմնվել է 1577 թ. և կոչվել Ֆելյան արքայության (Լանգեդոկում) անունով, հակառակ ճգնաժողովական երզումների, ունիր վիթխարի հարստություն: Հենրի III-ը ֆելյանցիներին հրավիրեց Փարիզ (1588), որտեղ ուխտի համար կառուցեց մի շքեղ վանք: Ֆրանսիական բուրժուական հեղափոխության ժամանակ ուխտը ոչնչացվեց: — Կապուցիներ* — 1525 թ. ռեֆորմացիայի գաղափարների գեմ պայքարելու համար Իտալիայում ստեղծված և 1572 թ. Ֆրանսիայում դործելու թույլտվություն ստացած մուրացիկ միարանության վանականների ուխտի (ֆրանցիսկյանների ճյուղ) անդամներ: Այգպես են կոչվել իրենց կնգուղների համար, որոնք նրանց հազուստի պորտադիր պարագան էին: Պապական գահին ջանադրաբար ծառայելու նպատակով XVI դ. ճգնաժողովական նոր ուխտերի ստեղծումը կապված էր հավատացյալների վրա իր իշխանությունը պահպանելու կաթոլիկ եկեղեցու նկրտումների, այսպես կոչված հակառեֆորմացիայի հետ: — 269:

2 ... մարդիկ. որոնք զուլաբանում են... այն. ինչին... կարող են ընդօրինակել: — Յիցերոն: Հոնտորը, 7, Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, II, 1: Մեջ է բերվում ոչ հըշգրիտ: — 269:

3 Նրանց համար առաքիճությունը... բառ է... — Հորացիոս: Ուղերձներ, I, 6, 31—32: — 270:

4 Նրանք պե՛տք է այն (առաքիճությունը) հարգե՛ին... — Յիցերոն: Տուսկուլանյան գրույցներ, V, 2: — 270:

* Իտալերեն cappuccio — կնգուղ բառից (Ս. հ. թ.):

5 Պռաիդեայի մեծ ճակատամարտից նետա...— Մոնտենն այստեղ սխալ է թույլ տվել, նրա հաղորդած փաստը կատարվել է ոչ թե Պռոտիդեայի, այլ Պլասեայի ճակատամարտից հետո (մ. թ. ա. 479 թ.), Պավանիաս— Սպարտայի կառավարիչ, որը Պլասեայի ճակատամարտում հրամանատարում էր հունական զորքին, Մարզոնիոս— պարսից զորավար, որն ընկավ նույն ճակատամարտում։— 270:

6 ... ոմանք կատոն Կրտուերի ինճնասպանության պատճառը համարում էին նրա քվացյալ վախը Կեսարից...— Պլուտարհոս: Հերոդոտոսի շարանենգության մասին, 6:— 272:

7 Հիրավի... այդ մարդուն... մի տիպար...— Մոնտենն այստեղ փոխարանում է Կատոնին և արդարացիում նրա ինքնասպանությունը: Սակայն II դրքի III գլխում, որը զրեղ է ութ տարի անց, նա փոխել է իր կարծիքը Կատոնի մասին և խիստ դատապարտել նրա ինքնասպանությունը:— 272:

8 ... Կատոնը, քանի դեռ ողջ էր, ավելի մեծ էր, քան ինճը Կեսարը:— Մարտիալիս: Էպիգրամներ, VI, 32:— 273:

9 Եվ մահին նաղթած անհաղթ Կատոնին:— Մանիլլոս: Աստղարաշխություն, IV, 87:— 273:

10 ... Կատոնը՝ պարտվածների:— Լուկանոս, I, 128:— 273:

11 Եվ երկրի երեսին ամեն ինչ հնազանդվեց, բացի Կատոնի անգիջող հոգուց:— Հորացիոս: Ներրոզներ, II, 1, 23:— 273:

12 Նրանց նկատմամբ դատաւտան տեսնող Կատոնին:— Վերգիլիոս: Էնեական, VIII, 670:— 274:

Գլուխ XXXVIII

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵՆՔ ԾԻՄԱՂՈՒՄ ՈՒ ԼԱԼԻՍ ԵՆՔ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՆՆՅ

1 ... Անաիգանոսը գայրացել է որդու վրա, երբ վերջինս բերել է... Պյուտոսի գլուխը...— Այս պատմությունը բերվում է Պլուտարհոսի մոտ, տե՛ս Պյուտոսի կենսագրությունը, 34:— 274:

2 Կարլոս Բուրգունդացի— Բուրգունդիայի վերջին դուքսը (1467—1477), որ փորձում էր տիրել էլզասին ու Լոթարինգիային և շարունակ կռվում էր դուքս Ռենե Լաբարիեզացու դեմ, զոհվել է Նանսիի մոտ՝ Լոթարինգացիների և շվեյցարացիների հետ ճակատամարտում:— 274:

3 Մրայի ճակատամարտը տեղի է ունեցել Ֆրանսիայի թագավոր Կարլոս V-ի կառավարման ժամանակ, 1364 թ.:— 274:

4 ... հոգին... գրացմունքները ծածկում է դիմակով...— Պետրարկա, սոնետ 81:— 274:

5 ... երբ Պամպոսի գլուխը բերին Կեսարին, նա փախցրեց աչքերը...— Պլուտարհոս: Կեսարի կենսագրությունը, 48:— 274:

6 ... նա սխեց կեղծ արտասուքներ բափել...— Լուկանոս, IX, 1037 և հաջ.:— 275:

7 Փառանգաբերի լացը ծիծաղ է դիմակի տակ:— Պուրլիլիոս Սիրոսն Առվուս Գելլիոսից արված քաղվածքում, XVII, 14:— 275:

8 ... նրանք կեղծ են լալիս:— Կատուլլոս, LXVI, 15 և հաջ.:— 276:

9 ... նա... ցնցվե՛ց ու խղճա՛ց նրան:— Մոնտենը նկատի ունի Տակիտոսի պատմությունը: (Տարեգիրք, XIV, 4):— 276:

10 ... հառազում շող շողի նետից:— Լուկրեցիոս, V, 282 և հաջ.:— 276:

11 ... հոգին շարժվում է ավելի արագ, քան բոլոր... բաները...— Լուկրեցիոս, III, 182:— 277:

12 Տիմոթեոսը... արքում է եղբորը:— Տիմոթեոսը (աՆ՝ս ծնթ. 9; գլ. XXXIV) օրինականության ու տղատառության սիրուն իր երկու բարեկամներին թույլ տվեց սպանել իր հարազատ եղբորը՝ Տիմոփանին, որը փորձում էր դառնալ Կորնթոսի բանապետը:— 277:

Գլուխ XXXIX

ՄԵՆԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ... մեծ մասը միշտ վաթարագայն մասն է...— Բիանթոս (մ. թ. ա. VI դ.)— Հին հուն փիլիսոփա, «յոթ իմաստուններից» մեկը: Մոնտենը Բիանթոսի բառերը բերում է Գիոգենես Լահրտցուց. Բիանթոսի կենսագրությունը, I, 86:— 278:

2 Լավ մարդիկ քիչ են... այնքան, որքան դառապաններ կան թերևում...— այսինքն՝ յոթ. ակնարկվում են անտիկ աշխարհի «յոթ իմաստունները»):— Յուվենալ: Երգիծանքներ, XIII, 26—27:— 278:

3 Ալֆոնսո Ալբուկերկե (1453—1515)— պորտուգալացի ծովագնաց և կոնկիստադոր, որը սկիզբ դրեց Պորտուգալիայի տիրապետությանը Հնդկաստանում:— 278:

4 Հոգսերից ազատում են բանականությունն ու իմաստությունը...— Հորացիոս: Ուղերձներ, I, 11, 25—26:— 279:

5 Հեծյալի թիկունքում նույնպես նստած է մռայլ եղբորը:— Հորացիոս: Ներբողներ, III, 1, 40:— 280:

6 Մահաբեր նետը կողմ մխրվեց:— Վերգիլիոս: Էնեական, IV, 73:— 280:

7 Ո՞վ կարող է փախչել ինձն իրենից...— Հորացիոս: Ներբողներ, II, 16, 18 և հաջ.:— 280:

8 Ի՞նչ կասես, բե ազատի՞ն՝ ես շղթաներից:— Պերոնոս: Երգիծանքներ, V, 158 և հաջ.:— 280:

9 Երե մեր հոգին չի մաքրվել...— Լուկրեցիոս, V, 43 և հաջ.:— 281:

10 Մոնտենը թարգմանությունը տվել է մեղրերումից անմիշտպես առաջ (Հորացիոս: Ուղերձներ, I, 14, 13):— 281:

11 Ստիլպոնես— Հին հուն փիլիսոփա (մ. թ. ա. 380—300 թթ.), Դեմետրիոս Պոլիարկետես— Մակեդոնիայի թագավոր:— 281:

12 ... Սարգ պետք է իր հետ վերցնի լոկ այն, ինչ մնում է ջրի երեսին...— Գիոգենես Լահրտցուցի, VI, 6:— 282:

13 Երբ միայնակ ես, ինձի քեզ համար ամբոխ եղիր:— Տիրուլլոս, IV, 13, 12: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 282:

14 Կապվել մեկին... որ նա քեզ համար ավելի բանկ լինի, քան դու ինձի:— Տերենտիոս: Եղբայրները, 37—39:— 283:

15 Ախր հազվադեպ է լինում, որ որևէ մեկը բավականաչափ վախենա ինձն իրենից:— Քլիմեոսիանոս: Հոնտորի ուսուցումը, X, 7:— 284:

16 ... պատանիները պետք է սովորեն... ձերերը՝ հետանան... գործերից...— Ստոբեոս: Մազկաբաղ, XIIII, 48—49, Այս խոսքերը վերագրելով Սոկրատեսին, Մոնտենը թույլ է տալիս անճշտություն, Ստորոտուրը գրանք բերում է որպես պլուրալիզմի օրինակ:— 284:

17 Երբ ես աղիատության մեջ եմ...— Հորացիոս: Ուղերձներ, I, 15, 41 և հաջ.:— 285:

18 Արկեսիլայոս (մ. թ. ա. III դ.)— Հին հուն սկեպտիկ փիլիսոփա:— 286:

19 Թող նրանք ձգտեն հանգամանքներն իրենց երբարկել...— Հորացիոս: Ուղերձներ, I, 1, 13; Այստեղ Հորացիոսի սողերի հարասություն կա:— 287:

- 20 ... տնտեսական գործերով տարվածությունը... յուրօրինակ ստեղծություն: — Սալ-
յուատրոս: *Կարիլիանյի գաղաղորթությունը*, 4:— 287:
- 21 ... պաղարձությունը, որի նկատմամբ, բոս Քսենոփոնի, հակում ունեւ Կյու-
ւր: — *Քսենոփոն Տնավարության մասին*, IV:— 287:
- 22 ... անասունն ուսում էր Դեմոկրիտի դաշտերն ու ցանֆերը: — *Հուրացիս: Ուղերձ-
ներ*, I, 12, 19—20:— 287:
- 23 Ես... խորհուրդ եմ տալիս տնտեսության... հոգսերը հանձնարարել քո մարդ-
կանց... — Պլինիոս Կրտսեր: *Նամակներ*, I, 3: *Մոնտենը թույլ է տալիս անճշտություն.
այդ խորհուրդները Պլինիոսը տալիս է ոչ թե Կոռնելիոսին, այլ Կանինիոս Ռուֆոսին*:— 287:
- 24 Նա... ուզում է մարդկանցից իր հետացումն... օգտագործել, որպեսզի... ստեղ-
ծագործություններով իր համար հավերժական կյանք՝ ապահովի: — Յիցերոն: *Հոնտորը*,
43, և *փիլիսոփայական բազմաթիվ այլ տրակտատների ներածություններում*:— 287:
- 25 Միթե քո գիտելիքը գին չունի... — Պերսիոս: *Երգիծանքներ*, I, 26—27:— 287:
- 26 ... պետք է ընտրի... հանապարհը... բայրից ջառ է դուր գալիս իրեն... — Պրո-
պերցիոս: II 25, 38: *Մոնտենը թարգմանությունը տալիս է միջերրումից անմիջապես
տառք*:— 289:
- 27 ... հայացքս սկեսելով այն բանին, ինչը վայել է ... մարդուն: — *Հուրացիս:
Ուղերձներ*, I, 4, 4—5:— 290:
- 28 Այս օրը մերն է, իսկ հետո դու կզառնաս փոշի... — Պերսիոս: *Երգիծանքներ*, V,
151—152:— 290:
- 29 Մերով, շիկի՞ հոգ ես տանում, թե ինչպես զվարհացնես ուրիշներին: — Պերսիոս:
Երգիծանքներ, I, 22:— 290:
- 30 Համեմատեմք ... երկու փիլիսոփաների կարծիքները... — *այսինքն՝ էպիկուրի և Սե-
նեկայի: Հետագայում բերվող դատողությունները վերցված են Սենեկայից (Նամակ-
ներ, 21)*:— 290:
- 31 Թող ճշման իրենց հոգում առաքինության տիպարներ պատկերեն: — Յիցերոն:
Տուսկուլանյան գրույցներ, II, 22:— 291:
- 32 Փոկիոն (Ճ. թ. ա. մոտ 417—300) — *աթենացի ականավոր զորավար և պետական
գործիչ: Պահպանվել է Պլուտարքոսի և Կոռնելիոս Նեպոտի կազմած նրա կենսագրու-
թյունը*:— 291:

Գլուխ XI

ԳԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԻՅԵՐՈՆԻ ՄԱՍԻՆ

1 ... Սկիպիոնն ու Լելիոսը... շփոթեին ափրիկացի մի ստրուկի... — *ժամանակակից
գիտությունը կարականապես ժխտում է Տերենտիոսի ժամանակներում տարածված այն
կարծիքը, թե իբր նրա անունը կրող կատակերգությունների հեղինակները նրա ազնվա-
տանձ հովանավորներ Սկիպիոնն ու Լելիոսն էին: Հոռոմեացի լրջմիտ ու գիտակ հեղինակ-
ները նույնպես արհամարհում էին այդ լուրերը, համարելով ոչ մի հիմք չունեցող հեր-
յուրանք: Տերենտիոսն, իսկապես, չէր հիրքում դրանք, բայց նա այդպես էր վարվում,
հավանաբար, տակտիկական նկատառումներով*:— 293:

2 Թող նա անողոք լինի մաշտում և խնայի պարտված բշեամուն: — *Հուրացիս: Հո-
բելլանական հիմն, 51 և հաշ:*— 293:

3 ... քախտարածներ... լինի ժողովուրդներին իշխել... — *Վերգիլիոս: Էնեական, VI,
849 և հաշ:*— 294:

4 ... դու... բավականաչափ շեռ առումնասիրել ավելի պիտանի... բաները:— Պուտարխոս: Պերիկլեսի կենսագրությունը, 1:— 294:

5 Իփիկրատես— տե՛ս ծնթ. 12, գլ. XIX: Անտիսթենես— հին հույն փիլիսոփա, կիկլոսների դպրոցի հիմնադիրը (մ. թ. ա. VI—V դդ.): Իսեմեխաս— ոմն թերեցի:— 294:

6 ... դրանցում կան ավելի հարուստ... մտերի սերմեր...— Մոնտենն ակնարկում է, թե ինքը լի կարող բացահայտորեն արտահայտել իր մտքերը, վախենալով հաշտանքներից:— 295:

7 Կեղեցկությունն արժանավոր տղամարդու զարգը չէ:— Սենեկա: Նամակներ, 116, 2:— 295:

8 ... նրանք... հավերժություն են խոստանում այն նամակներին, որ գրել են իրենց բարեկամներին:— Հպիկորն Իդոմենեսին ուղղված նամակում և Սենեկան Լուցիլիոսին ուղղված նամակում:— 295:

9 Աննիրալե Կարո (1507—1566)— իտալացի բանաստեղծ բանասեր, «Էնեասիկա» և անտիկ բողոքաբանի վաղ հեղինակների ստեղծագործությունների թարգմանիչ: Նրա նամակները (1572—1574) հրատարակվեցին հետմահու:— 297:

Գլուխ XI

ՄԵՓԱԿԱՆ ՓԱՌՔԸ ՉԻՉԵԼ ՉԿԱՄԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1 ... համբավը... ամենաթույլ շնչից... չբանում է:— Տաստ: Ազատագրված Երուսողենը, XIV, 63:— 299:

2 ... (սառանան) շի դադարում գայրակղկնեմ... հագինները...— Օգոստինոս: Աստծո պաշտպանությունը բանաստեղծ Արքիասի, 11:— 299:

3 ... ուզում են փառաբանվել նրանով, որ արհամարհել են փառքը:— Յիցերոն: Իրադարձի մասին, V, 14:— 299:

4 ... 1537 թ. Կարլոս V-ը ներխուժեց Պրովանս...— Այստեղ անճշտություն կա. Կարլոս V-ի զորքերի ներխուժումը Պրովանս տեղի է ունեցել 1536 թ.: Անտոնիո դը Լեյվա— տես ծնթ. 7, գլ. XI:— 299:

5 Իրատիազաս— սպարտացի նշանալոր զորապետ (մ. թ. ա. V դ.):— 300

6 Կրեսիի հակատամարտը— տեղի է ունեցել 1346 թ. Հարյուրամյա պատերազմի ժամանակ, ավարավել է ֆրանսիացիների նկատմամբ անգլիացիների վճռական հաղթանակով:— 300:

7 ... վերջում մարտի մեջ մտած ջոկատներն են վճռել... Ելքը:— Տրտոս Լիվիոս, XXVII, 45:— 300:

8 Գայոս Լիվոս, մականունը «Իմաստուն»— Սկիպիոն Աֆրիկացու (Կրտսերի) բարեկամն ու նրա լեզատը Աֆրիկայում և Իսպանիայում, մ. թ. ա. 140 թ.: կոնսուլ:— 300:

9 Թովիեի հակատամարտը— տեղի է ունեցել 1214 թ. ֆրանսիացիների և Գերմանիայի կայսեր զորքերի ու նրա զաշնակից անգլիացիների միջև, ավարտվել է ֆրանսիացիների հաղթանակով:— 301:

Գլուխ XII

ՄԵՋԱՆՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՇԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 Թագավորի նկարագիրը, որ ներկայացնում է Մոնտենը, գրեթե բառ առ բառ համընկնում է բոնապարտի այն բնութագրին, որ տալիս է Մոնտենի բարեկամ կա Բոնաին իր

«Դատողություն կամավոր ստրկություն մասին» աշխատությունում: Այն միտքը, թե թագավորներն ու սղեվահանները մյուս մարդկանցից չեն տարբերվում ոչնչով, բացի շրթերից, Մոնտենի սիրած զաղափարներից մեկն է:— 301:

2 ... կենդանին կենդանուց այնքան չի տարբերվում, որքան մարդը մարդուց:— Պլուտարհոս: Այն մասին, որ վայրի զազանները բանականություն ունեն, 10:— 301:

3 Որքան է մի մարդը գերազանցում մյուսին:— Տերենտիոս: Ներքինին, 232:— 301:

4 ... մեկ հիանում եմ... ձիու արագավազությամբ...— Յովենալ:— Երգիծանքներ, VIII, 57 և հաջ.:— 302:

5 ... երբ ձի էն գնում, գնում էն ծածկած վիճակում... Հորացիոս: Երգիծանքներ, 1, 2, 86 և հաջ.:— 302:

6 Ձեզ խաբում են նրա բարձր կրունկները:— Սենեկա: Նամակներ, 76, 31:— 303:

7 ... եթե նա իմաստուն է... մի՞թե նրան կհնազանդեցնեն հակոտազրի անհիկալները: Հորացիոս: Երգիծանքներ, II, 7, 83 և հաջ.:— 303:

8 Իմաստուն մարդը... ինքն է կոռում իր բախար:— Պլավտոս: Երեք գրոշանոցը, զորոտություն II, աեսարան 2:— 303:

9 ... մեր բնությունը պահանջում է... մի բան...— Լուկրեցիոս, II, 16 և հաջ.:— 303:

10 ... նա կրում է ... վիթխարի գլուխաներ...— Լուկրեցիոս, IV, 1126:— 304:

11 ... իսկ սրա երջանկությունը .. արտաբնու է:— Սենեկա: Նամակներ, 115:— 304:

12 ... ոչ կանսույի բարձր աստիճանը չեն վանի ... տաղնապներ...— Հորացիոս: Ներոտներ, XI, 16, 9: և հաջ.:— 305:

13 ... Երկուզն ու... նոգոները չեն վախենում... զենքի...— Լուկրեցիոս, II, 48 և հաջ.:— 305:

14 ... անդն ավելի շուտ չի անցնում...— Լուկրեցիոս, II, 34 և հաջ.:— 305:

15 ... նա, ով դուրս է տանում իմ գիշերանոցը... գիտե, որ դա սուա է:— Պլուտարհոս: Հին արքաների ասույթները:— Անտիգոնոս— Մակեդոնիայի թագավոր (մ. թ. ա. III դ.):— 306:

16 Թող կայսերը ձեռքից ձեռք խլեն նրան...— Պերսիոս: Երգիծանքներ, II, 37—38:— 306:

17 ... բոլոր առարկաներն այնպիսին են, ինչպիսին իրենց տիրոջ ոգին է...— Տերենտիոս: Ինքն իրեն պատժողը, 195—196:— 306:

18 Ոչ առնը, ոչ կալիածք... դուրս չեն մղում տեղը...— Հորացիոս: Ուղերձներ, I, 2, 47 և հաջ.:— 306:

19 ... այն ամենը, ինչ բարի է կոչվում, անխոհեմ մարդու համար... վատ է...— Պլատոն:— Օրենքներ, II, 661b:— 306:

20 Ամբողջովին արժարով զարդարված...— Տիրուլլոս, I, 2, 69:— 307:

21 Եթե բո ստամոքսը... կարգին են...— Հորացիոս: Ուղերձներ, I, 12, 5—6:— 307:

22 ... կհամոծայնի Սելևկոս արքայի կարծիքին...— Պլուտարհոս: Պետր է արդյոք ծերունին միջամտի պետական գործերին, II: Սելևկոս— Սելևկոս I Նիկատոր (Հաղթող), Սիրիայի թագավոր (մ. թ. ա. IV դ.):— 307:

23 ... ավելի լավ է ... ենթարկվել, քան ... իշխել...— Լուկրեցիոս, V, 1127—1128:— 307:

24 ... Քսենոփոնի մոտ Հիերոնը...— նկատի է առնված Քսենոփոնի «Հիերոն, կամ արքաների դրություն մասին» երկխոսությունը, 2—3: Հիերոն Ավագ (մ. թ. ա. V դ.)— Սիրակուսի բռնապետ:— 308:

25 Չափազանց չեմ... սերբ... ձանձուր է բերում...— Օվիդիոս: Սիրային բանաստեղծություններ, 11, 19, 25—26:— 308:

26 Հանելի է երբապեղությունն այս աշխարհի մեծերին...— Հորացիոս: Ներբողներ, III, 29, 13 և հաջ:— 308:

27 ... «Գորգիասում» Պլատոնը... բնութագրում է...— Պլատոն: Գորգիաս, 484d:— 309:

28 Ալֆոնս արքան ասում էր...— նկատի է առնված Ալֆոնս XI-ը (1311—1350) Կաստիլիայի և, 1312 թ.-ից, Լեոնի թագավորը:— 309:

29 Կազալե— ամբողջ Իտալիայում, Միլանի դքսության համար մղվող պատերազմ. ներում (1499—1547) բազմիցս անցել է ձեռքից ձեռք: Կարլոս V-ի կողմից Սիենի պաշարումը տեղի է ունեցել 1554 թ.:— 310:

30 ... մարդիկ իրենք են կառչում ստրուկի բախտին:— Սենեկա: Նամակներ, 22:— 310:

31 ... ժողովուրդները ստիպված են լինում... հանդուրժել... փառաբանել... տիրակալներին:— Սենեկա: Թիեստ, 205:— 311:

32 Անախարսի կարծիքով...— Պլուտարխոս: Յոթ իմաստունների խնջույքը, 11:— Անախարսիս— փիլիսոփա, ծնունդով Սիլյուսթրիացի, Սոլոնի (մ. թ. ա. VI դ.) բարեկամը:— 312:

33 Երբ Պլուտոս արքան մտադրվել էր շարժվել Իտալիայի վրա...— Պլուտարխոս: Պլուտոսի կենսագրությունը, 14:— 312:

34 ... նա օտույզ չգիտեր. թե որտեղ պետք է կանգ առնի...— Լուկրեցիոս, V, 1432—1433: Մեջ է բերվում ոչ ճշգրիտ:— 312:

35 Մեր բախտը կախված է մեր բարբերից:— Կոսենիոս Նապա: Աստիկոսի կենսագրությունը, 11:— 312:

Գլուխ XIII

ՇՔԵՂՈՒԹՅԱՆ ԿԵՄ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- 1 Հենրի II— Ֆրանսիայի թագավոր 1547-ից մինչև 1559 թ.:— 313:
- 2 Չալկոս— հույն հնագույն օրենսդիր (մ. թ. ա. VII դ.), որն օրենքներ է կազմել Լոհրա (հունական գաղութ Իտալիայում) քաղաքի համար:— 314:
- 3 Թագավորներն ինչ էլ անեն, քվում է, թե նրանք այդ են երամայում... մյուսներին:— Քվինտիլիանոս. Ճարտասանության վարժություններ, 3:— 314:
- 4 Պլատոնն իր «Մեեններում» գտնում է...— Պլատոն: Օրենքներ, VII, 796a—979a:— 315:

Գլուխ XIV

ՔՆԻ ՄԱՍԻՆ

- 1 69 թ. պրետորյաններն Օտոնին (Մարկոս Սալվիոս) հռչակեցին Հռոմի կայսր: նույն տարում, պարտություն կրելով Վիտելլիոսից, որին միաժամանակ կայսր էին հռչակել ստորին զորմանական լեգիոնները, Օտոնն ինքնասպան եղավ:— 316:
- 2 Սեխոս Պոմպեոսը՝ Գենոս Պոմպեոս (Մեծի) որդին, մ. թ. ա. 36 թ. վճռական պարտություն կրելով Միլիի և ապա Նամվլոֆի (Միցիլիա) մոտ տեղի ունեցած ճակատամարտերում, փախավ Ասիա և մ. թ. ա. 35 թ. անանվից Անտոնիոսի մերձավոր անձանց ձեռնով:— 317:

3 Մարիոս Կրտսեր, Քայոս Մարիոսի հոգեգալակը: Մ. թ. ա. 82 թ. Պրինեստերի ճակատամարտում Սուլլայի կողմից շախչախվելով, Մարիոս Կրտսերն ինքնասպան եղավ:— 317:

4 Պերսեոս— Մակեդոնիայի վերջին թագավորը: Պիրոնայի մոտ շախչախվելով հռոմեական զորավար էմիլիոս Պողոսի կողմից (մ. թ. ա. 168 թ.), նա հաջորդ տարում գերի բռնվելով հռոմեացիներին և շուտով մահացավ:— 317:

5 ... մարդիկ տարվա կեսը քնում են, կեսը արթուն մնում:— Հերոդոտոս, IV, 25:— 317:

6 ... Բենի է ճիսունյոս տարի:— Գիոդենես Լաբրտցի, I, 109: Պլինիոս Ավագ: Բնական պատմություն, VII, 53:— Էպիմենիդես— ծնվել է Կրետե կղզում (մ. թ. ա. V դ.), բացի այն մեկից, որ հիշատակում է Մոնտենը, նրա մասին պահպանվել են տարրեր լեզուներ, նրան վեյազրում էին առասպելական երկարակեցություն. պնդում էին, Բենյոսը է ավելի քան 300 տարի:— 317:

Գլուխ XLV

ԳՐՅՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄՍՍԻՆ

1 Գրյոյի ճակատամարտ.— Տեղի է ունեցել 1502 թ. կաթոլիկների և բողոքականների միջև ավարտվել է կաթոլիկների հաղթանակով:— 318:

2 Ֆրանսուա Գրյո կոնետարի Մոնմորանսի (1492—1567) հետ միասին Գրյոյի ճակատամարտում հրամանատարում էր կաթոլիկների զորքերին:— 318:

3 Փիլոպեմեն— տես ծնթ. 45, գլ. XXIII, Մալանիդես— Սպարտայի բանասեր, որին Փիլոպեմենը շախչախեց Մանտինեայի ճակատամարտում (մ. թ. ա. 206 թ.):— 318:

Գլուխ XLVI

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄՍՍԻՆ

1 ... անգամ Պլատոնի մոտ շնանդիպելն... նույնքան կոպիա օրինակներ:— Նկատի է առնված Պլատոնի «Կրտախիս» երկխոսությունը, որի զգալի մասը նվիրված է այժմյան տեսակետից բավական անհավանական բառամեկնություններ:— 319:

2 Պետա (Լուցիոս Սեպտիմիոս Գետա)— Հռոմի կայսր (211—212), դահբ զրուղեցրել է իր եղբոր՝ Կարակալլայի հետ միասին և սպանվել նրա սպորանքով:— 320:

3 Վալլեմոնտանուս— ֆրանսիական Վոդեմոն անվան լատինացված ձևը:— 321:

4 ... ո՞ւմն է... Կեկենի՞նր, Կլեկենի՞նր քե Գետկենի՞նր:— Մոնտենը նկատի ունի Բերտրան Գյու Գեկլենին (նրա մասին տես ծնթ. 8, գլ. III), որի անունը որովում և արատանվում էր տարրեր կերպ:— 323:

5 ... ալյոսեղ խոսքն էժանագին... պարզելի մասին շէ:— Վերդիլլուս: Լեոկոն, XII, 764:— 323:

6 Նիկոլ Կենիգո (1515—1559)— ֆրանսիացի լատինագետ և նկարիչ:— 323:

7 ... Սվետոնիոսին բանկ էր լու անվան լոկ նշանակությունը...— Խոսքն ալյոսեղ հռոմեացի նշանավոր գրող «Տասներկու կեսարների կյանքը» գրքի հեղինակ Գայոս Սվետոնիոս Տրանկվիլլոսի մասին է, որի տոհմական անունն էր Կենիս (Lenis), որ լատիներեն նշանակում է «դանդաղկոտ», «հանգիստ»: Tranquillus (Տրանքվիլլոս) անունը, որով նա իրեն կոչել էր, նույնպես լատիներեն նշանակում է «հանգիստ»: Ալյոսեղ լատիներեն tranquillus և lenis բառերը, զրեթե հոմանիշներ են, այդ է նշում Մոնտենը:— 323:

⁸ Պիեռ Տեոսյլ—Ֆրանսիացի զորավար Բայարդի (տես ծնթ. 19, գլ. III) իսկական անունը:— 324:

⁹ Սեռուան էսկալեյր (մոտ 1498—1578) իրեն անվանում էր նաև կապիտան Պուլեն և բարոն դը Լա Կարդ: Ֆրանսիացի սպա էր, որն աչքի էր ընկել զինվորական ծառայության մեջ և զինվանագիտության ասպարեզում:— 324:

¹⁰ Մի՞րե զու կարծում ես. քե հաբեզույցպեերի անյունեն ու հոգին հոգում եմ այդ մտսին:— Վերգիլիոս: *Էնեական*, IV, 34:— 324:

¹¹ Մեր ջանքերով սպարտացիների փառքը նվազեց:— Յիցերոն: *Տուսկուլանյան գրույցներ*, V, 17:— 324:

¹² ... չկա ոչ մեկը, ուր կարողանար... համեմատվել ինձ նետ:— Յիցերոն: *Տուսկուլանյան գրույցներ*, V, 17:— 324:

¹³ ... մարդիկ ավելի շաա փառք եմ տենչում, քան առափնուրյուն:— Յուվենալ: *Նրգիծանքներ*, X, 138 և հաջ.։— 325:

Գլուխ XLVII

ՄԵՐ ԳԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՈՒՍԱՎՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

¹ Մենք... կարող եմք ամեն ինչի մասին խոսել, և բեր, և դեմ:— *Հոմերոսի տողի թարգմանությունը* (Իլիական, XX, 249):— 325:

² Հանձնիրալը հազրեց, բայց չկարողացավ... օգտվել հաջողության պատվերից:— Պեարաբկա: *Սոնետ*, 82:— 325:

³ Մոնկոնտուրի հակատամարտը տեղի է ունեցել 1569 թ. Ֆրանսիայի կրոնական պատերազմների ժամանակ, Անժուի դուքսը (ապագա թագավոր Հենրի III) հաղթեց բողոքականների ծովակալ Կոլինյին... չի օգտագործել Սեն Կանտենի մոտ... աաբած իր նազրանակը...— Սեն Կանտենի ճակատամարտում (1557) անգլիական ջոկատներով ուժեղացված իսպանական բանակը ջախջախեց ֆրանսիական բանակին, որին հրամանատարում էին Մոնմորանսին ու Կոլինյին: Սակայն այդ ամբողջի առումը չհանգեցրեց ֆրանսիացիների վճռական ջախջախման: Իսպանիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ Մոնտենը, Ֆրիլիպ II-ն է:— 325:

⁴ ... երբ թշնամուն սաբսափ է պատել:— *Լուկանոս*, VII, 734:— 326:

⁵ ... Դաշնակցային պատերազմում ջախջախեցին մարսերին...— Մարսեր— միջին և հարավային Իտալիայում ապրող իտալիկյան ժողովուրդ: Դաշնակցային պատերազմի (մ. թ. ա. 90—88 թթ.) ժամանակ մարսերը կատաղի պայքար էին մղում հռոմեացիների դեմ:— 326:

⁶ Գաստոն դը Ֆուա (1489—1512)—Ֆրանսիացի զորավար, որը մի շարք հաղթանակներ է տարել Իտալիայում:— 326:

⁷ Սերիզոլի (Չերեզոլի, Իտալիա) հակատամարտը տեղի է ունեցել 1544 թ. Ֆրանսիացիների և կայսերական զորքերի միջև. Ֆրանսուա դ'Անգլեն (1510—1545)—Ֆրանսիացի զորավար:— 326:

⁸ Կատաղած անհրաժեշտության խայրույներն առավել վտանգավոր են:— Պորցիոն Լատրոնի բառերը Կապիլինայի մասին նրա խոսքից: Սալլուստիոս (?): *Հատվածներ*, 11:— 326:

⁹ ... կովում է՝ մեռնելու պատրաստ:— *Լուկանոս*, IV, 275:— 326:

¹⁰ ... ախական ժողովուրդները նետներն արշավանքի էին առնում... կանանց...— Քսենոփոն: *Կյուրոպեդիա*, IV, 3:— 327:

11 ... վեցնելով Կեմոզակլեսի ապագեներ...— Պլուտարհոս: Պլուտոսի կենսագրութիւնը, 17: Մեզակլեսին անվանելով Դեմոզակլես, Մոնտենը կրկնում է Պլուտարքոսի իր ժամանակակից ֆրանսիացի թարգմանիչների սխալը:— 328:

12 Ագիս— Ագիս IV (մ. թ. ա. III դ.), Սպարտայի թագավոր, սպանվել է Լիկուրգոսի օրենքները վերականգնելու փորձի համար. Ագեսիլայոս (տես ծնթ. 13, զլ. III), Կիլիպոս— սպրտացի նշանավոր զորավար (մ. թ. ա. V դ.):— 328:

13 Փարսայոս— քաղաք Թեսալիայում, որի շրջակայքում Կեսարը վճռական հաղթանակ տարավ Պոմպեոսի նկատմամբ (մ. թ. ա. 48 թ.):— 328:

14 ... նա բուլացրեց... ուժը...— Պլուտարհոս:— Պոմպեոսի կենսագրութիւնը, 69:— 329:

15 Երկու պարսիկ եղբայրների միջև տեղի ունեցած շարաքառտիկ նակատամարտում...— Քսենոփոն: Անարասիս, I, 8: Մոնտենը նկատի ունի պարսկական զահի համար մղվող պայքարը Կյուրոս Կրտսեր և Արտաքսերքսես II (Մեմոն) եղբայրների միջև, որն ավարտվեց Արտաքսերքսեսի հաղթանակով և Կյուրոսի մահով մ. թ. ա. 401 թ.:— 329:

16 ... ներխուժել Պրովանս...— Տես ծնթ. 4, զլ. XII:— 329:

17 Սկիպիոնը... գերազանց թշնամու վրա հարձակվել...— խոսքը Պունիկյան II պատերազմի մասին է: Սկիպիոնն ափ է իջել Աֆրիկա մ. թ. ա. 204 թ.:— 331:

18 ... իրենից հարձակվեցին Սիցիլիայի վրա...— խոսքն այն մասին է, որ Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ աթենացիները փորձեցին զավթել Սիցիլիան (մ. թ. ա. 415—413):— 331:

19 Ազարոկլես— Սիցիլիայի բռնապետ, 310 թ., կարթագենցիներից ազատագրելով Սիցիլիան, նա ուղղմական զործողութունների թատերարեմը տեղափոխեց Աֆրիկա Հետադայում նա կարթագենցիներին կանչեց Սիցիլիա և սվեց նրանց նախկին տիրույթների մեծ մասը, որպեսզի նրանց օգնությամբ ճնշեր ժողովրդական ապստամբութիւնը:— 331:

20 Անխոնեմությանը նույնպես հուշողութուն է բաժին բնկնում...— Մանիլիոս, Աստղաբաշխութիւն, IV, 95 և հաջ.։— 331:

Գլուխ XVIII

ՄԱՐՏԱԿԱՆ ՁԻՆԻ ՄԱՍԻՆ

1 Equus funalis — կողքից լծված ձի, equus dextrior, կամ, ոչ լատիներենում՝ dextrarius—նույնն է (dexter— աջ, աջ կողմում գտնվող): Ռոմաներեն (այսինքն՝ պրովանսերեն լեզվով) adostret նշանակում է լինել աջ կողմում, այլ կերպ ասած, ուղեկցել՝ հին ֆրանս. accompagnier. Equus desultorius— սատյունախաղի վարժեցրած ձի:— 332:

2 Նրանք սպոր են... ունենալ պահեստային ձի...— Տիտոս Լիվիոս: XXIII, 29:— 332:

3 ... Արտյուրիոսը ... փորձանքի եկավ...— Մոնտենը հենվում է Հերոդոտոսի պատմության վրա (V, 111—112):— Սալամին— կղզի Եգեյան ծովում, Ատտիկայի արևելքի մոտ, հետո նեթերից անկախ էր:— 332:

4 Տոնոնովա— քաղաք Իտալիայում, Պարմից քիչ հեռու: Ճակատամարտը, որի մասին խոսում է Մոնտենը, տեղի է ունեցել 1495 թ. ֆրանսիացիների և միլանցիների միջև:— 332:

5 ... ինչպես նաև տեսնում են ու տարբերում:— էջի լուսանցքը, որում Մոնտենն ավելացրել է այս պարբերութիւնը, կազմելու ժամանակ կտրվել է այնպես, որ նախադասության վերջը չի պահպանվել:— 333:

8 ... համարում է, որ ձիավարությունը շատ օգտակար է... — Պլատոն: *Ցրենքներ*, VII, 794c. Պլինիոս Ավագ: *Քննական պատմություն*, XXVIII, 14:— 333:

7 ... օրհներ ձի ունեցողին արգելում էր ճանապարհորդել օտեմ: — Քսենոփոն: *Կյուրոպեդիա*, IV, 3:— 333:

6 ... պարթևները սովորություն ունեին ձի նեծած ոչ միայն կովել... — Հուստինոս: *Քաղվածք Քրոդոս Պոմպեոսից*, XII, 3:— 333:

9 ... Սվետոնիոսը դա նշում է... Կեսարի մասին... — Սվետոնիոս: *Աստվածային Հուստինոսը*, 60:— 333:

10 ... որում հոսմեացիներն... ավելի ուժեղ էին: — *Տրտոս Լիվիոս*, IX, 22:— 334:

11 Հրամայում է ... տալ պատանդներ: — Կեսար: *Գրառումներ Գաղիական պատերազմի մասին*, VII, 11:— 334:

12 Քրիստոսը Քսենոփոնի մոտ... — Քսենոփոն: *Կյուրոպեդիա*, IV, 3:— 334:

13 ... ոչ ոք չգիտեր ինչ է փախուստը: — Վերգիլիոս: *Հնեական*, X, 756:— 334:

14 ... առաջին զոռոցները որոշում են հաբը: — *Տրտոս Լիվիոս*, XXV, 41:— 334:

15 ... Նրանք քամուն են հանձնարարում կարվածներն ուղղել... — *Լուկանոս*, VIII,

384 և հաջ. :— 335:

16 ... սուլոցով բռնում է ... փախարիկան: — Վերգիլիոս: *Հնեական*, IX, 705:— 335:

17 Սովորելով ... պարսատիկով ... նետել ... — *Տրտոս Լիվիոս*, XXXVIII, 29:— 336:

18 Ան ու դողը համակեց պաշարվածներին... — *Տրտոս Լիվիոս*, XXXVIII, 5:— 336:

19 Նրանք շեն վախենում խոր վերեբերից: — *Տրտոս Լիվիոս*, XXXVIII, 21:— 336:

20 Գիտնիսիոս Սիրակուսեցի — *տես ծնթ. 7, գլ. 1:*— 337:

21 ... կտրմարանները... նման են մեր գյուղերին: — *Խոսքը բարանների մասին է:*— 337:

22 ... նրանք սուլո շէին նման բան տեսնել: — Monstrellet. *Chronique*. Ed. Douët d'Arcq., t. 1, 349:— 337:

23 Մի բուռ սվներ համաճակվում էին հարձակվել... խոշոր շոկատների վրա: — Կեսար: *Գրառումներ Գաղիական պատերազմի մասին*, IV, 2:— 337:

24 ... բշում սունձի փոխարեն փոքրիկ մտակի օգնությամբ: — *Լուկանոս*, IV, 682—683:— 337:

25 Իվ նուսիլիացիները զսպում են ամենի ձիերին: — Վերգիլիոս: *Հնեական*, IV, 41:— 337:

26 ... ամենի ձիերը վազում են տգեղ... — *Տրտոս Լիվիոս*, XXXV, 11:— 337:

27 Ալֆոնս XI — *տես ծնթ. 28, գլ. XIII:*— 337:

28 *Անտոնիո դե Վեսա (մ. ճ. 1545 թ.)* — Իսպանացի նշանավոր դրող-բարոյախոս, որի բանվածությունն ու ոճը շատ էին զնահատվում Իսպանիայում և նրա սահմաններից դուրս: Ուրիշ ստեղծագործություններից զատ, թողել է «Տնային նամակների» երկու հատոր, որոնք վերաբերում են ամենատարրեր տոնարիկների (հրատ. 1539—1545 թթ.), ունեին մեծ հաջողություն և բազմիցս վերահրատարակվել են XVI դ. երկրորդ կեսերին: Մոնտենը, ինչպես և նրա ամբողջ սերունդը, կլանված կարդում էր Գեարայի ստեղծագործությունները, որոնք հիշատակվում են նրա գրադարանի գրքացանկում, թեև վերաբերվում էր քննադատարար:— 338:

29 «Պալատականը» — Իտալացի Բաղասարի Կաստիլոնի գիրքը (հրատ. 1528 թ.), որում տեղ են գտել պալատական հասարակության ներկայացուցիչների գրույցներն այն մասին, թե ինչ հատկանիշներ պիտի ունենա բարձր ու նուրբ կուլտուրայի անը մարդը: Այս գիրքը շուտով մեծ ճանաչում ձեռք բերից նաև Իտալիայի սահմաններից դուրս:

1537 թ. այն թարգմանվեց ֆրանսերեն: Մոնտենը հաճախ է տարբեր օրինակներ փոխանց այնտեղից:— 338:

³⁰ ... առավել բարձրաստիճան է ... Երեց Հովհաննեսի մեծավար հարեշները...— Միջին դարերում և XVI դ. բավական լայն տարածում ունի այն պատմագրությունը, թե Արևելքում, մահմեդական երկրներում՝ ոչ այն է Հարիջստանում, ոչ այն է Հնդկաստանում կամ ավելի հեռու Ասիայում կա մի քրիստոնեական թագավորություն, որը կտաճի և արժան է քահանա Հովհաննեսի: Այդ պատմագրության հիմքում ընկած էին միանշանակ արժանահավատ տեղեկություններ կենտրոնական Ասիայում մինչև XII—XIII դդ. պահպանված նեստորական աղանդի քրիստոնեական հիմնականների մասին:— 338:

³¹ Քսենոփոնը պատմում է. — Քսենոփոն. *Կյուրոպեդիա*, III, 3:— 338:

³² Ահա և ձիու արյունով սեխով մի սարմատ:— Մարտիալիս: *Գիրք տեսիլների*, 3, 4:— 338:

³³ Կրետեցիները, որոնց պաշարել էր Մետելլուսը... տառապում էին չրի բացակայությունից...— Մոնտենը հենվում է Վալերիոս Մարսիմոսի հաղորդման վրա, VII, 6, ext. 1:— 338:

³⁴ ... Հնդկաստանի վերջերս հայտնաբերված ժողովուրդները...— Մոնտենը նկատի ունի Անդերիկան, որն այն ժամանակ կոչվում էր Նոր Հնդկաստան: Մի փոքր ստորև Մոնտենը խոսում է մերձավոր Հնդկաստանի, այսինքն՝ բուն Հնդկաստանի մասին:— 338:

³⁵ Փարիսոս Մախսիմոս Թուտիլիանոս (կամ Ռուլլիանոս)— հռոմեացի քաղաքական գործիչ և գորավար (մ. թ. ա. IV—III դդ.):— 339:

³⁶ ... Ձեր ձիերի գրոհն ավելի ուժգին կլինի, Էրե... սանձազերծել նրանց...— *Տրտոս կիվիոս*, XI, 40:— 339:

³⁷ Բայազեա I (Բայազիդ)— թուրքական սուլթան (1390-ից մինչև 1403 թ.), նվաճել է Բուլղարիան, Մակեդոնիան, Թեսալիան և լայն տարածքներ Փոքր Ասիայում: ... պատում էին... փոքր, մտնում մեջը...— Մոնտենի սկզբնաղբյուրը (չատ բաներում ոչ արժանահավատ) XVI դ. յե՛հ պատմարան Յան Հերրուրտ Ֆուլստինացու «Լեհերի ծագման և գործերի մասին» աշխատությունն է (Jan Heriurt z Fulsztyna De origine et rebus gestis Polonorum. *Ֆրանսերեն թարգմանությունը* «Histoire de rois et princes de Pologne») լույս է տեսել 1573 թ.:⁴¹ «Պահպանվել է այդ գրքի իր դրաղարանի օրինակի վրա Մոնտենի խղումը. «Ընթերցումն ավարտեցի 1586 թ. փետրվարին: Սա Լեհաստանի համառոտ ու պարզ պատմությունն է, առանց չափազանցությունների»:

Ռուսաստանի նկատմամբ Մոնտենի դրսևորած հետաքրքրության մասին տե՛ս Մ. Պ. Ալեքսևի «Эпизоды из русской истории» հոդվածը. «Романо-германская филология» գրքում, որը հոդվածների ժողովածու է ի պատիվ ակադեմիկոս Վ. Ֆ. Շիշմարյովի, II., 1957:— 340:

³⁸ ... ասում է Հերոդոտոսը...— *Հերոդոտոս*, I, 78:— 340:

³⁹ Իտոլեր— այժմյան Դաղստանում և Միջին Ասիայում ապրող ցեղեր:— 340:

⁴⁰ Ռեալ— իսպանական մանրադրամ:— 341:

Գլուխ XLIX

ՀԻՆԱՎՈՒՐՑ ՍՈՎՈՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

¹ Գայոս Փարբիցիոս Լուսցինոս— Հռոմի կոնսուլ մ. թ. ա. 282 թ., որը հայտնի էր իր տնկաշատությանը և համեստ բարքով: Լեյիոս նկարող—հռոմեացի գորավար (մ. թ. ա. III—II դդ.), Սկիպիոն Աֆրիկացու բարեկամը:— 341:

2 Երանք ... մերկացնում են ասորը:— Կեսար: Գրառումներ քաղաքացիական պատերազմի մասին, I, 75:— 342:

3 ... վառ սովորությունը. կանգնեցնել... անցողներին...— Կեսար: Գրառումներ Գաղիական պատերազմի մասին, IV, 5:— 342:

4 Գո, փետում ես ... մազերը:— Մարտիալիս, II, 62, 1:— 343:

5 Նա ... վրան չոր կավիճ է ցանում:— Մարտիալիս, VI, 93, 9:— 343:

6 ... էնեսան այգպես սկսեց բարձր մահնից:— Վերգիլիոս: էնեսան, II, 2:— 343:

7 Ես կհամբուրեի (ֆեզ) ...— Օվիդիոս: Նամակներ Պոնտոսից, IV, 9, 13:— 343:

8 ... փայտը մտցրեց իր կոկորդն ու խեղդվեց:— Սենեկա: Նամակներ, 70, 20:— 344:

9 Մոնտենը նախքան մեջ բերելը տալիս է այս սողի մոտավոր թարգմանությունը (Մարտիալիս, XI, 58, 11):— 344:

10 Փոքր երեխաները հանախ երազում տեսնում են...— Լուկրեցիոս, IV, 1026—1027:— 344:

11 ...բող վայելեն մողայամուկներ...— Մարտիալիս, VII, 35, 1—2:— 345:

12 Ին զոզնոցով ստրուկը...— Մարտիալիս, VII, 35, 1—2:— 345:

13 Սիդոնիոս Ապոլինարիոսը վկայում է...— Սիդոնիոս Ապոլինարիոս, VII, 239 և հաջ.:— 345:

14 ... մինչև վհարեցինք... մի ամբողջ ժամ անցավ:— Հորացիոս: Երգիծանքներ, I, 5, 13—14:— 345:

15 ... նիկոմեդես տրֆայի մահնի էզր:— Սվետոնիոս: Աստվածային Հուլիոսը, 49:— 346:

16 ... ուրիշ ո՞ր տղան... ավելի շատ կպաղեցնի... զավարները:— Հորացիոս: Ներբողներ, II, 11, 18 և հաջ.:— 346:

17 Ո՞՞ն Յանուս: Ոչ ոք չէր կարող... ցույց տալ պողե...— Պետրոս: Երգիծանքներ, I, 58 և հաջ.:— 346:

Գլուխ 4

ԳՆՄՈԿՐԻՏԻ ԵՎ ՀԵՐԱԿԼԻՏԻ ՄԱՍԻՆ

1 ... մեկը ծիծաղում էր, մյուսը ... լաց լինում:— Յուվենալ: Երգիծանքներ, X, 28:— 349:

2 ... Տիմոնը, որին մառդասյաց էին հարջորջել:— Աթենացի (մ. թ. ա. V դ.): Անտիկ սկզբնաղբյուրներում մենք գտնում ենք բազում պատմություններ մարդկային ցեղի նկատմամբ նրա ատելության մասին: Տիմոնի կերպարն արտացոլել է Շեքսպիրն իր «Տիմոն Աթենացի» ողբերգության մեջ:— 349:

4 Թեոդոսոս— հին հույն փիլիսոփա (մ. թ. ա. IV դ.), որը քարոզում էր չհավատալ աստվածներին:— 350:

Գլուխ 11

1 ... լսել Թուկիդիդեսի պատասխանը...— Խոսքը ոչ թե Օսլորասի որդի պատմազիր Թուկիդիդեսի, այլ Մելևսիոսի որդի աթենացի քաղաքական գործիչ, արխատոկրատական խմբի առաջնորդ, Պերիկլեսի կատաղի թշնամի Թուկիդիդեսի մասին է, որ մ. թ. ա. 443 թ. ենթարկվեց օստրակիզմի:— 350:

2 Արխտոն— հին հույն փիլիսոփա-ստոիկյան (մ. թ. ա. III դ.):— 350:

3 ... շողոփարելու և խարելու արվեստ... — Պլատոն. *Գորգիաս*, 465b: — 351:

4 Պուրլիոս Լենտուլոս Սուրա — *Հոմմի կոնսուլ մ. թ. ա. 71 թ.*, Կատրիլինայի դավադրության մասնակից, որին մյուսների հետ միասին մահապատժի ենթարկեց Ցիցերոնը (63 թ.): Քվինտոս ՄԼսելլոս Նեպոտ — 63 թ. Ժողովրդական տրիբուն, մ. թ. ա. 57 թ. կոնսուլ: — 351:

5 ... Կարդինալ Կարաֆայի մոտ ... — Մոնտենը, *Հավանարար*, նկատի ունի կարդինալ Կարլո Կարաֆային, որին 1561 թ. Պիոս IV պապը դատապարտեց մահվան: Կարաֆա — XVI դ. հայտնի նեպոլյան ազգանուն: — 352:

6 ... միևնույնը չէ, թե ինչպես... կտրատել էավր... — Յուվենալ: *Սրդիծանքներ*, V, 123: — 352:

7 ... Լս նրանց նրամայում ևմ կարսայի մեջ նայել, ինչպես հայելու... — *Տերենտիոս*: — *Աղելիփոսներ կամ եղբայրներ*, 439: — 353:

8 Լուցիոս էմիլիոս Պատուլուս (Պոզս) — հոմեացի զորավար, որը Պիդնայի ճակատամարտում (Մակեդոնյան 3-րդ պատերազմը մ. թ. ա. 168 թ.), պարտության է մատնել Պերսեոսին, նվաճել է Մակեդոնիան: — 353:

9 ... Ապոլիդոնեսի դղյակը... — Կախարդանքով կառուցված շքեղ պալատ, նկարագրված է յուպանական ուշ ասպեռական «Գաղիական ամաղիա» վեպում, որը XVI դ. թարգմանվել է ֆրանսերեն: — 353:

10 Պիեթրո Արետինո (1492—1554) — վերածնության դարաշրջանի իտալացի ակադեմիոս երգիծարան, հրապարակախոս և թատերագիր: Արետինոյի հանդուգն ազատամտության ոգով տոգորված ստեղծագործություններում հանդիպում են միջարկներ, որոնք աչքի են ընկնում ցինիզմով, անպարկեշտությամբ: Սրանով, ինչպես նաև Արետինոյի անփուլթ ոճով է բացատրվում նրա մասին Մոնտենի խիստ կարծիքը: — 353:

Գլուխ ԱԼ

ԲԱՒԵՐԻ ՈՒՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 Մարկոս Ատրիլիոս Ինգուլոս — մ. թ. ա. III դ. հոմեացի զորավար, որը հաջողությամբ կռվել է կարթագենցիների դեմ, ստիպել է նրանց հաշտության բանակցություններ սկսել, սակայն, ի վերջո, դավաճանությամբ դերի է վերցվել: — 354:

2 Պուրլիոս Կոննելիոս Սկիպիոն Էմիլիանոս Աֆրիկացի Կրտսեր — հոմեացի հռչակավոր զորավար, որը զավթել ու ավերել է Կարթագենը (մ. թ. ա. 146 թ.) և Նումանտիան (մ. թ. ա. 133 թ.): — 354:

Գլուխ ԱԻԻ

ԿԵՍԱՐԻ ՄԵ ԱՍՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1 ... ձեռք բերելով, մենք ոկսում ենք... ցանկանալ... ուրիշ բան: — *Լուկրեցիոս*, III, 1082 և հաջ.: — 355:

2 ... ամբողջ շարիքը մեկ... առոթի մեջ է: — *Լուկրեցիոս*, VI, 9 և հաջ.: — 356:

3 Այսպիսին է ձեր էության բնորոշ արատը... — Կեսար: *Ֆրառումներ քաղաքացիական պատերազմի մասին*, II, 4: — 356:

Գլուխ ԼԿ

ՍԻՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

¹ ... ինչպես պատմում է Պլուտարխոսը...— Պլուտարխոս: *Ճաշկերույթի զրույցներ*, VIII, 9:— 356:

² ... նա տվեց զվարճալի և ... նիշտ նուման...— *Հաս Քվինտիլիանոսի (Հոնատրի ուսուցումը*, II, 20), այդ հրամանը ավել է Ալեքսանդր Մակեդոնացին:— 356:

³ Ինձուկիար պեղում էր...— Մոնասնի սկզբնաղբյուրը Պլուտարխոսն է (Փիլիսոփաների կարծիքները, IV, 10):— 357:

⁴ ... կապարի ձուլակտուրները ցրտից... նալչում են...— Արիստոտել: *Պրոբլեմներ*, 50:— 357:

⁵ Վիլլանել— քնարական բանաստեղծություն, որն ունի երեք առղանոց վեց աուն և եզրափակիչ մեկ տող, ընդամենը երկու հանգով:— 359:

Գլուխ ԼՎ

ՀՈՏԵՐԻ ՄԱՍԻՆ

¹ Դեռ պատեաոր փորձել են պտրզել Պլուտարխոսը և այլոք:— Պլուտարխոս: *Ալեքսանդրի կենսագրությունը*, 4:— 360:

² Կինը լավ է բուրում, երբ առնասարակ չի բուրում:— Պլավտոս: *Տեսիլք*, I, 3:— 360:

³ ... էս գերադասում եմ ոչ մի նոտ շարձակել, քան անուշարուել:— Մարտիալիս, VI, 55, 4:— 360:

⁴ ... վատ հոտ է արձակում նա, ով... անուշարուում է:— Մարտիալիս, II, 12, 4:— 360:

⁵ Եմ նոտաոթյունը ... ավելի լավ է տարբերում հոտը, քան... շունը...— Հուրոցիս: *Էպոգներ*, XII, 4 և հաջ.:— 360:

⁶ ... միայն նա է, որ ոչ մի անգամ չի վարակվել:— Դիոգենես Լաերտցի, II, 25:— 361:

⁷ ... Թունիսի բազալար հացկերույթների ժամանակ...— Նկատի է առնված Թունիսի սուլթան Մուլեաս Հասանը, որը 1543 թ. ժամանեց Նեապոլ, հույս ունենալով այնտեղ հանդիպել Կարլոս V-ին, որպեսզի նրանից օգնություն խնդրի ընդդեմ իր ապստամբած հպատակների:— 361:

Գլուխ ԼՎԻ

ԱՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

¹ Այս գլուխը, ինչպես նաև գլուխ ԼԿ-ը, բնորոշում է կաթոլիկ եկեղեցու նկատմամբ Մոնասնի վերաբերմունքը: Ամբողջ առաջին պարբերությունը Լոնտոնի ընդմիջարկությունն է, որ նա արել է 1582 թ. Իտալիայից վերադառնալուց հետո, երբ նրա «Փորձերը» ստու-

զիչ էր պապական ցնեղորը, որին Մոնտենը խոստացել էր փոփոխել տարրեր զլուսնի-
նիքում իրեն մեղազրվող տեղերը:— 362:

2 Պլատոնը ... մատնանշում է աստվածների մասին երեք բյուր գառազուրյուն...—
Պլատոն: *Օրենքներ*, X, 888 c—d:— 363:

3 ... դու ... դեմքը բաժնում ես... բիկնոցի տակ...— Յուվենալ: *Երգիծանքներ*, VIII,
144 և հաջ.:— 364:

4. Benedicite («Օրհնեցեք») — լատիներեն կաթոլիկական աղոթք, որը կարդացվում
է ուտելուց առաջ:— 364:

5 Sursum corda («Քող սրտերը վեր խոյանան») — լատիներեն կաթոլիկական աղոթքի
առաջին բառերը:— 366:

6 ... Անդրոնիկոս կայսրը ... հանդիպելով երկու մեծատանիկ աստիճանավորեն-
րի...— Մոնտենն, ըստ *Կրեյթի*, նկատի ունի բյուզանդական կայսր Անդրոնիկոս II
Պալեոլոգոսին (1258—1322): Լապալթոս անունը Մոնտենը մտցրել է թյուրիմացաբար,
այդպիսի պատմական զեմք հայտնի չէ:— 367:

7 Ոմն եպիսկոպոս...— նկատի է առնված եպիսկոպոս Օգորիոն (տե՛ս ծնթ. 10, գլ.
XIV):— 'Իոսուբիզա— Հնդկական օվկիանոսում' Գվարդաֆույ հրվանդանից 180 կմ
հեռու գտնվող Սորոթրա կղզու հին անվանումը:— 368:

8 Ո՛վ Յուպիտեր: Քանզի չգիտեմ ես քա մասին ոչինչ...— Մոնտենն այստեղ մեջ է
բերում Պլուտարքոսի «Սիրո մասին» տրակտատի (XII) Ամիոլի (տես ծնթ. 1, գլ. XXIV)
Ֆրանսերեն թարգմանությունը:— 368:

9 Պարզ ու անպանույն բառերով:— Սզոստինոս: *Աստծո քաղաքի մասին*, X, 29:— 369:

10 ... Քսենոփոնի մոտ կա մի տեղ...— Մոնտենը, հավանաբար, սխալվում է նման
գառազությունների կարելի է հանդիպել Պլատոնի «II Ալկիբիադես»-ում:— 370:

11 Այն, ինչ աստվածներին կարելի է վստահել, միայն զազտեաբար:— Պերսիուս
Երգիծանքներ, II, 4:— 370:

12 ... Յուպիտեր... չի գուպի ... կանի ... բացականչությունը:— Պերսիուս: *Երգիծանք-
ներ*, II, 21 և հաջ.:— 370:

13 Մարգարիտ նավարացին... պատմում է ... աբալյազնի մասին— Մարգարիտ նա-
վարացի: *Հնդկամերոն*, III, 25, Մարգարիտ նավարացի (1492—1549) — նավարայի թա-
գուհի, Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ I-ի քույրը, XVI դ. շնորհալի գրող («Հնդկա-
մերոն» նովելների ժողովածուն, «Արքայադատեր գոհարների գահարները» բանաստեղծա-
կան ժողովածուն և այլն): Մեկնարանները գտնում են, որ երիտասարդ արքայազնի մա-
սին իր պատմության մեջ նա նկատի ունի ապազա թագավոր Ֆրանցիսկ I-ին:— 370:

14 ... մեեք ... մեմնշում եեք հանցավոր աղոթքներ:— *Լուկանոս*, V, 104:— 371:

15 Ամենի՛ր, չէ որ ... իրենց աղոթքները բացեիբաց կուզեն...— Պերսիուս, *Երգի-
ծանքներ*, II, 6—7:— 371:

16 Սեղիւր մեղեքս ... խավարով...— Հորացիուս: *Ուղերձներ*, I, 16, 58 և հաջ.:— 371:

17 ... շար մարդկանցից բնծաներ չեն ընդունում ոչ աստվածները, ոչ ... մարդիկ:—
Պլատոն: *Օրենքներ*, IV, 716c—717a:— 372:

18 Եթե զոհասեղանին մոտենա մաքուր ձեռքով, ապա անողորմ պեճատներին կարե-
լի է մեղմացնել... մի բուռ հանարով ու աղով:— Հորացիուս: *Ներբողներ*, III, 29, 17 և
հաջ.:— 372:

Գլուխ ԼVII

ՏԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

¹ ... ասաց Կատոնը... այն մարդկանց, ովքեր ուզում էին խանգարել նրան ինքնապաշտան լինելու... — *Մոնտեն այստեղ հենվում է Պլուտարքոսի պատմության վրա (Կատոն Ուտիկացու կենսագրությունը, 69)։— 372։*

² ... բանակցությունը... ռկսում է կազալ... — *Լուկրեցիոս, III, 451 և հաջ.։— 375։*

ԱՆՎԱՆԱՑՎՆԿ*

- Ազաթուկլիս— 331
 Ազեսիլայոս II— 18, 89, 168, 169, 267, 318, 328
 Ազիս IV— 328
 Ազրիպոս, Մարկոս Վիպսանիոս— 317
 Ազրիանո (Կոնստանդի կարգինալ)— 261
 Ալբա (Ալվարես զր Տոլեդո, Ֆերնանզո)— 32, 33
 Ալբերտ Մեծ— 125
 Ալբուկերկե, Ալֆոնս— 278
 Ալեքսանդր Մակեդոնացի— 10, 11, 32, 70, 89, 151, 186, 194, 198, 294, 305, 316, 328, 333, 340, 348, 349, 360
 Ալեքսանդր VI (պապ)— 261
 Ալեքսանդրիդ— 188
 Ալեկտորա— 68
 Ալվիանո, Բարթոլոմեո զր— 18
 Ալիբրիտո— 199
 Ալֆոնս XI— 309, 337
 Ամասիս— 116
 Ամիանոս Մարցիլիոս— 81
 Ամիո Ժակ— 144, 321
 Անակրեոն— 96, 189
 Անաքարսիս— 312
 Անաքսագորաս— 158
 Անաքսարքոս Աբդերացի— 67
 Անաքսիմենես— 189
 Անգիեն, Ֆրանսուա զր— 326
 Անդրոնիկոս II Պալիոլոգոս— 367
 Անտիգոնոս (զորավար)— 28, 274
 Անտիգոնոս Գոնատոս (Մակեդոնիայի թագավոր)— 305
 Անտիոքոս III— 112
 Անտիոքոս Սոսերոս— 327
 Անտիպատրոս (Ճակեգոնացի զորավար)— 169
 Անախիթենես— 279, 281, 282, 294
 Անտոնիոս, Մարկոս— 216, 317
 Ապոլինարիոս, Սիզոնիոս— տե՛ս Սիզոնիոս Ապոլինարիոս
 Ապոլլոգորոս— 172
 Աստիագես— 168
 Ավրելիոս— 217
 Ավրելիոս Կոստա, Գայոս— 142
 Ավարդիոս— 96
 Արակոս— 144
 Արեստինո, Պիեարո— 353
 Արիոս— 257
 Արիոսատ, Լոդովիկո— 31, 221
 Արիստիդես— 291
 Արիստիպոս— 60, 204, 220
 Արիստոգիտանես— 324
 Արիստոգեմոս— 271
 Արիստոնես (գերասան)— 260
 Արիստոնես Քիոսցի— 166, 212
 Արիստոտել— 17, 105, 133, 158, 159, 160, 170, 178, 194, 219, 227, 228, 243, 357
 Արիստոֆան Բյուզանդացի— 206
 Արիստոքսենաս— 94
 Արկեսիլայոս— 177, 286
 Արմենզո, Անտուան— 376
 Արսակ զր— 243
 Արտաբանես— 276
 Արայուրիոս— 332
 Արքիդամոս II— 350
 Արքիդամոս III— 82
 Արքիմեդ— 158
 Բալբի, Կասպարո— 267
 Բայազետ I Կայծակնային— 339, 340
 Բայարդ— տե՛ս Տեոպլ Պիեո
 Բեթիս— 10
 Բելֆորե— 240
 Բենցոնի— 240
 Բիանթոս— 278
 Բիոն Բորիսթենցի— 24
 Բիոն Զմյուռնիացի— 74
 Բլոսիոս, Գայոս— 226, 227
 Բլուա, Ծառլ զր— 274
 Բոկաչո Զովանի— 173
 Բոնկալ, զր— 51

* Անվանացանկը չի հավակնում Մոնտենի հիշատակած անունների լրիվ բնագրկմանը:

Քորչա, Չեզարն (Վալանտինուսի գուքս) — 260
Քոռուհո, Կարլոս — 70
Քրակ, Միշել դը — 376
Քրասիդաս — 300
Քրիեն, Գոտին դը — 154
Քրիեն, Ժան դը — 21
Քրիսակ, Շառլ դը (մարշալ) — 208
Քրիսակ, Շառլ դը (մարշալորդի) — 208
Քրուսոս — տե՛ս Ջուզեպե Քրուսոս
Քուբրոնցի (արքայազն) — տե՛ս Կարլոս Բուրբոնցի
Քուրզուկցի (գուքս) — տե՛ս Կարլոս Լամարձակ
Քուշե Ժան — 216, 262
Քյուրենեն, Ջորջ — 208, 211
Ղազա, Քեոզորոս — 190
Ղալեն, Կլավդիոս — 163
Ղալիոն — 239
Ղևարա, Անտոնիո դե — 328
Ղերանա, Գրիլոմ — 208, 211
Ղետա — տե՛ս Անպարմիոս Գետա
Ղիզ, Կարլ դը — 234
Ղիզ, Ֆրանսուա դը — 318
Ղրլիոմ (Աբվիտանիայի կամ Գրենի գուքս, Պուաաուի կոմս) — 68, 223
Ղրլիպոս — 328
Ղյուբսոն, դը — 170
Ղոմարա, Լոպես դե — 240
Ղոնգազո, Գվիդո (Մանտուանի մարկիզ) — 96
Ղոնգազո, Լոդովիկո — 246
Ղրլլարդինի, Ֆրանչեսկո — 28
Ղրաքոս — տե՛ս Սեմպրոնիոս Գրաքոս
Ղրամոն դը — տե՛ս Կորիզանդա Անգուանգի — 234
Ղրուշի, Նիկոլա — 208
Ղուաստո, դը — 51
Ղուրնե, Մարիա դը — 140
Ղուայցցո, Ստեֆանո — 82
Ղուվեա, Անդրեա դը — 212
Ղունդեմար — 327
Ղուլո, Էլյոս — 113
Ղանթե Ալիգիերի — 178
Ղարեհ I Վշտասալ — 151, 316
Ղարեհ II Կողոմանոս — 32, 37, 51, 124
Ղենալաս — 123
Ղոմեարիոս Պոլիորկետես — 281
Ղեմետրիոս Քերական — 190
Ղեմոկրիա — 346, 349, 357
Ղեմոքսիլես — տե՛ս Մեհակլես
Ղեմոսլեսես (աթենացի զորավար) — 293
Ղեմոսլեսես — 198

Ղեյոսարոս — 254
Ղենիզո, Նիկոլա — 323
Ղեպերիե, Բոնավենտուրա — 57
Ղեցիոս Մուսոս, Պուբլիոս (որդի) — 351
Ղը Լանժե — տե՛ս Դյու Բելլե, Գրյոմ
Ղիագուրաս, Աթեհատ — 48
Ղիկեարքոս Մեսինացի — 102
Ղիոպենես Սինոպացի — 200, 228, 349
Ղիոզորոս Դիալեկաիկ — 14
Ղիոզորոս Սիցիլիացի — 58
Ղիոկղեախանոս, Գալոս Ավրելիոս Վալերիոս — 312
Ղիոն (սիրակուսցի) — 151
Ղիոնիսիոս II Կրասեր (Սիրակուսի թագնապետ) — 75, 161
Ղիոնիսիոս I Ավագ (Սիրակուսի թոնապետ) — 9, 14, 83, 154, 237
Ղյու Բելլե, Գրյոմ — 28
Ղյու Բելլե, Ժան — 43, 204
Ղյու Բելլե, Ժորաշեն — 156
Ղյու Բելլե, Մարանն — 79, 268
Ղյու Դեկլեն, Բերտրան — 323
Ղյուլյարա, Անտուան — 136

Նկատերինա Մեդիչի — 145
Նվրիպիգես — 172, 368
Նրոնիմ — 60

Ջալեկոս — 314
Ջենոբիա — 237
Ջենոն — 9, 206, 250, 254
Ջերսիդամոս — 200

Էդմոնտ, Լամորալ — 32, 33
Էդուարդ I (Անգլիայի թագավոր) — 18
Էդուարդ III (Անգլիայի թագավոր) — 300
Էդուարդ (Էդուարդի ավագ որդին), «Սև արքայազն» — ?, 300
Էլագաբալոս (Հելիոգաբալոս) — 258
Էմիլիոս Լեպիդոս, Մարկոս (կոնսուլ մ. թ. ա. 42 թ.) — 21, 96, 146
Էմիլիոս Պոզոս, Լուցիոս — 99, 353
Էմիլիոս Ռեզիլլոս, Լուցիոս — 29, 30
Էմիլիո (Էմիլի), Պաուլո — 136
Էմպեդոկլես — 158
Էնգելս Ֆրիդրիխ — 19
Էննիոս, Քվինտոս — 26, 27
Էպամինոնդաս — 9, 91, 238, 301, 324
Էպիկտետոս — 54
Էպիկուր — 15, 71, 172, 195, 206, 259
Էպիմենիդես — 317
Էպիբարմոս — 179
Էսկալեն, Անտուան — 324
Էսթիլես — 96, 224
Էվմենոս — 28

Քալես Միլեթացի— 71, 110, 158, 283
Քեմիստոկլես— 175
Քեոզոսիոս I Մեծ— 350, 367
Քեոզորոս— 55, 350
Քեոպոմպոս— 300
Քեոփիլես— 87
Քովմա Արվինացի— 236
Քրինիոս— 138
Քուկիդիդես (Մելեսիոսի որդին)— 350
Քուկիդիդես (Օլորոսի որդին) (պատմիչ)— 140

Փան II (Բրետանիայի գալթս)— 96
Փիթիա, Յան— 19
Փիլ, Նիկոլ— 215
Փուանվիլ, Փան դը— 68

Իզոմենես— 259, 290
Իզաբելլա (Անգլիայի թագուհի, էդուարդ II-ի կինը)— 262
Իզաբելլա (Իսպանիայի թագուհի)— 58
Իլարիոս (Հիլարիոս)— 260
Իկես (Հիկես)— 263
Իսմենիոս— 294
Իսոկրատես— 136, 141, 195
Իսքոլայոս— 253
Իրենես— 258
Իփիկրատես— 91, 294

Լարերիոս Դեցիմոս, Յունիոս— 90, 392
Լա Բոնսի, էայնն դը— 185, 218, 220, 234
Լա Գարդ, զը— տե՛ս էսկալեն, Անտուան
Լարոշֆուկո, Ֆրանսուա դը— 201
Լաքես— 50
Լելիոս, Գայոս (Սկիպիոն Կրտսերի բարեկամը)— 293, 300
Լելիոս Նեպոտ— 226, 341
Լենվա, Անտոնիո դը— 46, 299
Լենիս— տե՛ս Սվետոնիոս Տրանքվիլոս, Գայոս
Լենկթեմուր— 170, 340
Լենտուլոս Սուրա, Պուբլիոս— 351
Լեոն (Ֆլուունտի տիրակալ)— 200
Լեոնիդաս— 252
Լեպիդոս Մարկոս— տե՛ս էմիլիոս Լեպիդոս, Մարկոս
Լիկոնաս— 21
Լիկուրգոս (Սպարտայի օրենսդիր)— 102, 167, 246, 327
Լիպսիոս, Յուստ— 173
Լիսիմաքոս— 55
Լիվիա— 146, 254
Լիվիոս, Տիտոս— 16, 24, 185, 334
Լիցինիոս Կրասոս, Մարկոս— 351
Լիցինիոս Կրասոս Մուցիանոս, Պուբլիոս— 85

Լիցինիոս Լուկուլլոս, Լուցիոս— 328, 351
Լյուզովիկոս VI (Ֆրանսիայի թագավոր)— 68
Լյուզովիկոս IX Սուրբ (Ֆրանսիայի թագավոր)— 68
Լյուզովիկոս XI (Ֆրանսիայի թագավոր)— 56
Լյուզովիկոս XII (Ֆրանսիայի թագավոր)— 31, 41, 57
Լոնգ— 144
Լորենցո II Մեգրի— 51
Լուկանոս, Մարկոս Աննոս— 273
Լուկիանոս— 323
Լուկրեցիոս, Կարոս, Տիտոս— 21, 95, 101, 106, 107, 108, 112, 124, 231, 303, 304, 305, 307, 344, 355
Լուկուլլոս— տե՛ս Լիցինիոս Լուկուլլոս, Լուցիոս
Լուսցինոս Ֆարրիցիոս— տե՛ս Ֆարրիցիոս Լուսցինոս, Գայոս
Լուտացիոս Կատուլոս, Քվինտոս— 299
Լուցիլիոս, Գայոս— 259, 290
Լենթ Նուանա (Կասսիոսի թագուհի)— 32
Լուզովիգ, Լամորալ— 261
Լուզովիր— 327
Լուան Ավստրիացի— 257

Կալիգուլա, Գայոս Հուլիոս Կեսար— 25
Կալիպոս— 151
Կալիսթենես— 198
Կալվին, Փան— 264
Կամբյուսես— 11
Կանդալ, Ֆրանսուա դը— 175
Կանինիոս Ռուֆուս— 287
Կապիտուլի, Լելիոս— 173
Կաննեադես— 195
Կաննեալես— 340
Կասիոս Սեվերոս, Տիտոս— 43
Կասսալիոն, Սերաստիան— 264
Կաստիլիոնես, Բալգասարես— 338
Կաստրիոս, Գեորգի (Սկանդերբեգ)— 7
Կատրիլես— տե՛ս Սերգիոս Կատրիլես
Կատոն— տե՛ս Պորցիոս Կատոն
Կատուլոս, Գայոս Վալերիոս— 275
Կարակալլա, Մարկոս Ավրելիոս Անտոնինիոս— 320
Կարաֆա, Դիոմեդոս— 352
Կարլ I Չեխ (Բոհեմիայի թագավոր)— 28
Կարլ V (Գերմանիայի կայսր)— 14, 28, 32, 46, 86, 299, 310, 361
Կարլոս V (Ֆրանսիայի թագավոր)— 46, 51, 84, 299, 329, 361

Կարլոս VIII (Ֆրանսիայի թագավոր) — 136, 170, 184
 Կարլոս IX (Ֆրանսիայի թագավոր) — 255
 Կարլոս Բուրբոնցի (արքայազն) — 86
 Կարլոս Բուրգունդացի (գուքս) — տե՛ս Կարլոս Համարձակ
 Կարլոս Լոթարինգիացի — տե՛ս Գիզ, Կարլոս զք
 Կարլոս Համարձակ (Բուրգունդիայի գուքս) — 274
 Կարո, Աննիբալե — 297
 Կեպլեր, Յոհան — 191
 Կեսար — տե՛ս Հուլիոս Կեսար, Գայոս
 Կիմոն — 175
 Կիսկապոս — 312
 Կլավդիանոս — 94, 252
 Կլավդիոս Մարցելլոս — 185
 Կլավդիոս Փլավիոս Հուլիանոս (Հուլիանոս Ուրացող) (Հռոմի կայսր) — 81, 311
 Կլեանթես Սամոսացի — 171, 204
 Կլեարքոս — 329
 Կլեոմենես I — 30, 202
 Կղեմես V — 53, 96
 Կղեմես VII — 42
 Կյուրոս Ավագ (Պարսկաստանի թագավոր) — 20, 76, 88, 89, 230, 293, 307, 333, 338
 Կյուրոս Կրտսեր — 25, 168, 287, 329
 Կոլինյի, Գասպար զք (Շառիլիոն) — 81
 Կոլոննա, Ֆարրիցիո — 31
 Կոնրադ III — 8
 Կոոնելիոս Գալոս, Գայոս — 96
 Կոոնելիոս Նեպոս (Նեպոտ) — 291, 312
 Կոոնելիոս Ռուֆոս — 287
 Կոոնելիոս Սկիպիոն Աֆրիկացի (Ավագ), Պուբլիոս — 151, 185, 324
 Կոոնելիոս Սկիպիոն, Գնեյոս — 24
 Կոոնելիոս Սկիպիոն էմիլիանոս Աֆրիկացի (Կրտսեր), Պուբլիոս — 293, 300, 354
 Կոոնելիոս Սկիպիոն Նազիկա, Պուբլիոս — 91
 Կոոնելիոս Սկիպիոն, Պուբլիոս — 331
 Կոոնելիոս Ցիննա, Լուցիոս — 146, 147, 148, 149, 374
 Կոոնելիոս Սուլլա, Լուցիոս — 10, 143, 317, 326
 Կոստանդինոս I Մեծ (Հոռոմեական կայսր) — 261
 Կոստանդինոս XII Պալեոլոգոս (բյուզանդական կայսր) — 261
 Կոտա — տե՛ս Ալքիբիոս Կոտա
 Կորաես, Ֆեոնանդո — 240
 Կորունկանիոս, Տիրերիոս — 87

Կրասոս — տե՛ս Լիցինիոս Կրասոս Մարկոս
 Կրատես — 158, 343
 Կրեսոս — 88, 89, 112, 340
 Կուրցիոս, Քվինտոս — 32, 87
 Լակոր I (Անգլիայի թագավոր, Նույն ինքը՝ Լակոր VI Շոտլանդիայի թագավոր անվան տակ) — 208
 Լաննիբալ — 87, 185, 267, 268, 327, 331, 374
 Լաստրուբալ — 24
 Լարմոզիս — 224
 Լեգեսիաս — 200, 350
 Լեյոգարալոս — տե՛ս Էլագարալոս
 Լեյոս, Աուլոս — 227
 Լենրի II (Ֆրանսիայի թագավոր) — 313, 319, 320, 340
 Լենրի III (Ֆրանսիայի թագավոր) — 68
 Լենրի IV (Ֆրանսիայի թագավոր) — 234
 Լենրի VII (Անգլիայի թագավոր) — 32
 Լենրի VIII (Անգլիայի թագավոր) — 41, 80
 Լենրի, Նորմանդիայի գուքս — 319
 Լերակլենոն Մեգարացի — 190
 Լերակլիդես Պոնտացի — 200
 Լերակլիտ — 158, 346, 349
 Լերրուրտ Ֆուլստինացի, Զան — 140
 Լերմոզրոս — 305
 Լերոզոտոս — 33, 317, 340
 Լիբրոն Ավագ — 307, 309, 310
 Լիպիաս — 169
 Լոմերոս — 50, 160, 305, 354
 Լոնորիոս III — 215
 Լովհան Ոսկեբերան — 369
 Լովհաննես (Զանոշ) I Զապոլսկի — 13
 Լովհաննես II (Հունգարիայի թագավոր) — 215
 Լովհաննես (Փոան) II (Պորտուգալիայի թագավոր) — 58
 Լորացիոս Յլակոս, Քվինտոս — 203
 Լորն, Ֆիլիպ զք Մոնմորանսի — 32, 33
 Լորս — 207
 Լուլիանոս Ուրացող — տե՛ս Կլավդիոս Փավիոս Հուլիանոս
 Լուլիոս Կեսար, Գայոս — 70, 72, 82, 97, 103, 104, 143, 154, 184, 205, 216, 250, 267, 272, 273, 274, 275, 292, 310, 326, 327, 328, 329, 333, 334, 337, 342, 346, 347, 350, 351, 355, 356
 Լուլիոս Կեսար, Գերմանիկոս — 87, 152
 Լուլիոս Կեսար Յիտավիանոս (Օգոստոս), Գայոս (Հոռոմեական կայսր) — 25, 146, 147, 148, 254, 317, 374

Հուլիս II (պապ) — 41
 Հուստինոս — 333
 Մակրորիոս — 90
 Մանիլիոս — 106, 107, 273, 331
 Մանվել (Պորտուգալիայի թագավոր) — 58, 87, 278
 Մասինիաս — 267
 Մարգարիտ Անզուլեմցի (Նավարացի) — 53, 370
 Մարգոնիոս — 270
 Մարկոս Ավագ, Գայոս — 326
 Մարկոս Կրտսեր, Գայոս — 317
 Մարկոս Ատիլիոս Ռեգուլոս — տե՛ս Ռեգուլոս Աթելիոս, Մարկոս
 Մարցելլոս — տե՛ս Կլավդիոս Մարցելլոս
 Մարցելինոս Ամիանոս — տե՛ս Ամիանոս Մարցելինոս
 Մարցիոս, Լուցիոս — 26
 Մաքսիմիլիան I — 19, 20
 Մաքսիմիանոս կամ Կեղծ Գալլոս — 108
 Մաքսիմոս — 318
 Մարտիալիս, Մարկոս Վալերիոս — 273, 338, 343, 344, 345, 360
 Մաքսիմիանոս — 217
 Մելիե, Ժան — 235
 Մեհակլես — 328
 Մենանդրոս (կատակերգակ) — 203, 231
 Մետտելիոս — տե՛ս Տեգրիլիոս Մետելլոս
 Մերվելլ — 40, 41
 Միհրդատ VII եմպատոր — 268
 Մյուրե, Մարկ Անաուան — 208, 211
 Մոնմորանսի, Անն դը — 79
 Մոնտեսպյո, Շառլ Լուի — 136
 Մոնտրելի, Անգեռան — 337
 Մոնֆոր, Սիմոն դը — 274
 Մորոզո, Մատանո գի — 155
 Մուրադ II — 240
 Մուցիոս Սցևոլա, Պուրլիոս — 66
 Յասոն Ֆերիցի — 262
 Յունիոս Բրուտոս, Մարկոս — 57, 58, 327, 350
 Նասաուցի (կոմս) — 28, 81
 Նել, Ժան դը — 301
 Նեպոտ (Նեպոս) — տե՛ս Կոնսելիոս Նեպոս
 Ներոն Կլավդիոս Կեսար (Հռոմեացի կայսր) — 16, 180, 276
 Նիկիտաս — 18
 Նիկոկլես — 141
 Շաբան դը — 81
 Շատիլիոն — տե՛ս Կոլիենցի
 Շեքսպիր, Ուիլյամ — 246
 Շիշմարլով Վ. Յ. — 340

Պալլուկ — 180
 Պակովիոս — 47
 Պարմենիոն — 151, 316
 Պավլինաս (եպիսկոպոս) — 282
 Պելլեատիե, Ժակ — 115
 Պելոպիդաս — 9, 238
 Պետրարկա, Ֆրանչեսկո — 13, 274, 325
 Պերիանդրոս — 82
 Պերիկլես — 144, 238, 350
 Պինդարոս — 133
 Պիոն — 60, 61
 Պլավտոս, Տիտոս Մակցիա — 210, 283, 360
 Պլատոն — 15, 35, 45, 48, 50, 65, 75, 96, 124, 126, 135, 157, 160, 162, 166, 167, 175, 177, 178, 179, 180, 185, 193, 196, 198, 200, 206, 236, 237, 241, 245, 246, 256, 267, 306, 309, 315, 319, 331, 333, 350, 353, 354, 363, 367
 Պլինիոս Ավագ, Գայոս — 317, 333
 Պլինիոս Կրտսեր, Գայոս — 112, 216, 287, 288, 290, 292
 Պլուտարքոս — 24, 25, 123, 144, 156, 171, 185, 186, 194, 216, 272, 294, 301, 321, 329, 345, 356, 360
 Պլոթարա — 116, 187, 189, 320
 Պլուտոս էպիրացի — 26, 274, 312, 328, 341
 Պոլեմոնես — 223
 Պոլեն — տե՛ս էսկալեն, Անաուան
 Պոլիբիոս — 27
 Պոլիկրատես — 202
 Պոլլիս — 22
 Պոլ Պիեռ — 337
 Պոլտրո դը Մերե — 12
 Պոմպեոս (պարոզ) — 180
 Պոմպեոս Մեծ, Գայոս — 9, 60, 89, 91, 333
 Պոմպեոս Սեքստոս (զորավար) — 273, 274, 316, 317, 326, 328, 329, 351
 Պոմպեոս Քրոզոս (պատմագիր) — 333
 Պոնտանո, Ջովիանո — 112
 Պոսիդոնիոս — 60, 61
 Պոստելո Գիլլոմ — 68
 Պոստոմոս Տուրբու, Աուլուս — 236
 Պորսենա — 67
 Պորցիոս Կատոն Ավագ Յենզոր, Մարկոս — 69, 143, 291, 316, 348, 354
 Պորցիոս Կատոն Կրտսեր Ուտիացի, Մարկոս — 203, 269, 272, 274, 372
 Պսամմենիտոս — 11, 12
 Պրոպերցիոս Սեքստոս — 98, 184, 189, 239, 289
 Պրոտագորաս — 162
 Պուայե — 42

Պուրջիտս Կրաստս— տե՛ս Լիցիներոս Կրաստս

Պուլեն— տե՛ս Էսիպլեն, Աննաուան

Ջիրալդի, Լիլիո Գրեգորիո— 264

Ռարլե, Յրաննուա— 156

Ռանգոնե, Գվինդո դի— 28

Ռեզուլոս, Մարկոս Ատրիլոս— 354

Ռենե Լոթարինգացի (գուբս)— 274

Ռիենցի, Կոլա դի— 262

Ռորերա I Բրյուս— 18

Ռոնասար Պիեռ— 204

Ռուլիանոս— տե՛ս Ռուալիլիանոս

Ռուալիլիանոս, Քվինտոս Փարիոս Մաքսիմոս— 339

Սալվիգիեն— 146

Սալլուատրոս Կրիսպոս, Գալոս— 122, 287

Սելլեկոս I Նիկատոր— 307

Սեմպրոնիոս Գրաքոս, Տիրերիոս (հայր)— 206, 354

Սեմպրոնիոս Գրաքոս, Տիրերիոս (որդի)— 87

Սենեկա, Լուկիոս Աննեոս— 161

Սենեկա Ավագ, Լուցիոս Աննեոս— 171, 202, 259

Սեպտիմիոս Գետա, Պուրլիոս— 320

Սերգիոս Կատրիլեն, Լուցիոս— 351

Սերվանտես զե Սաավեդրա, Միգել— 257

Սերվետ, Միքայել— 264

Սերվիլիոս Յեպիոն, Քվինտոս— 146

Սերուարիոս, Քվինտոս— 327

Սիգոնիոս Ապոլինարիոս— 345

Սիլիոս Իսավիլիոս— 102

Սկանզերերգ Գեորգ Կաստրիոս— տե՛ս Կաստրիոս, Գեորգի

Սկրպիոն— տե՛ս Կոռնելիոս Սկրպիոն

Տոլոն— 17, 89, 90, 241

Սոլարերի, Ուիլյամ— 301

Սոկրատես— 21, 31, 49, 50, 56, 105, 119, 138, 169, 177, 186, 189, 192, 280, 284, 320, 348, 350, 361, 367

Սոֆոկլես— 14, 238

Սպեսիպոս— 96,

Սվետոնիոս Տրանքվիլոս, Գալոս— 205, 267, 323, 333

Ստատիլիոս— 350

Ստեֆան Բաթորի— 267

Ստրապոնենս— 281

Սարատոնիկա— 112, 254

Սարոնոս— 164, 284

Սուլեյմա II (թուրքական սուլթան)— 13

Սուլլա— տե՛ս Կոռնելիոս Սուլլա, Լուցիոս

Սուլմոնե (Նեպոլիցի իշխան)— 341

Սուլպիցիոս Գալբա Մաքսիմոս, Պուրլիոս— 241

Սցևոլա— տե՛ս Մուցիոս Սցևոլա, Պուրլիոս

Սֆորցա, Լոդովիկո— 89

Սֆորցի, Յրանչեսկո— 40, 41

Վալանտինուա (ղուբս)— տե՛ս Բորչա, Չեզարե

Վալերիոս Մաքսիմոս— 94, 112, 338

Վարոս— տե՛ս Քվինտիլիոս Վարոս, Պուրլիոս

Վառոն Տերենտիոս, Մարկոս— 267

Վելլֆ (Բավարիայի ղուբս)— 8

Վերգիլիոս Մարոն, Պուրլիոս— 210, 273

Վերոս, Էլիոս— 208

Վերվեն, դք— 80

Վիբիոս Գալլոս— 111

Վիլգանթոն, Նիկոլա Գյուրան դք— 241

Վիվես, Լուիս— 118

Վիսելիոս (հռոմեական կայսր)— 328

Վո, Անրի դք— 28, 29

Վոլումնիոս, Լուցիոս— 351

Տալնա Յուվենցիոս, Մանիոս— 14

Տալվա— տե՛ս Տալնա

Տակիտոս Կոռնելիոս, Պուրլիոս— 17, 202

Տաստ, Տորկվատո— 299

Տերենտիոս Աֆեր, Պուրլիոս— 210, 283, 293

Տերես— 70

Տերտուլիանոս— 81

Տեռալլ, Պիեռ (Բայարդ)— 19, 323, 324

Տիրերիոս Կլավդիոս Ներոն (հռոմեական կայսր մ. թ. 14—37 թթ.)— 87

Տիրերիոս Սեմպրոնիոս Գրաքոս— տե՛ս Սեմպրոնիոս Գրաքոս

Տիրուլլոս, Ալբիոս— 67, 282, 307

Տիգելինոս Սոփոնիոս, Գալոս— 96

Տիմոլեոն— 263, 277

Տիմոն Աթենացի— 349

Տիմոնիան— 277

Տոմա, Սիմոն— 111

Տրիվուցիո, Ալեսանդրո— 28

Տրիվուցիո, Փևոզորո— 18

Տրոզոս— տե՛ս Պոմպեոս Տրոզոս

Տուլլիոս Յիցերոն, Մարկոս— 44, 59, 66, 91, 160, 161, 203, 290, 291, 292, 296, 299, 348

Տուրներ Լեդրիան— 163, 164

Ցելս Կոռնելիոս, Աուլուս— 113, 163

Ցեպիոն— տե՛ս Սերվիլիոս Ցեպիոն

Ցեցիլիոս Մետելլոս Նեպոտ (Նեպոս), Քվինտոս— 338, 351

Յիննա— տե՛ս Կոտնելիոս Յիննա, Լուցիոս
Յիցերոն— տե՛ս Տուլլիոս Յիցերոն, Մարկոս

Փարբոս Մաքսիմոս Կանկատատր, Քվինտոս— 351

Փարբոս Մաքսիմոս Ռուտիլիանոս— տե՛ս Ռուտիլիանոս Փարբոս

Փարաբոսոս— 327

Փիլիպոս (Ալեքսանդր Մակեդոնացու բժիշկը)— 151

Փիլիպոս II (Մակեդոնիայի թագավոր)— 294

Փիլիպոս V (Մակեդոնիայի թագավոր)— 241, 293

Փիլոպեմեն— 144, 318

Փոկիոն— 291

Փրատն— 9

Քարրիան— 91

Քարոնդ— 81, 279

Քիլոնյ— 215, 227

Քսենիկրատես Քաղկեդոնացի— 223

Քսենոփան Կոլոթոնացի— 49

Քսենոփիլիս— 93

Քսենոփան Աթենացի— 31, 167, 168, 169, 178, 287, 292, 307, 318, 327, 333, 334, 338, 370

Քսերքսես— 25, 276

Քրանթո— 223

Քվինկարիոս Ֆլամինիոս, Տրաոս— 241

Քվինտիլիանոս, Մարկոս Փարբոս— 197

Քվինտիլիոս Վարոս, Պուրբիոս— 25

Քվինտոս Մաքսիմոս— 69

Քվինտոս Մեաելլոս Նեպոս (Նեպոս)— տե՛ս Ցեցիլիոս Մեաելլոս

Քրիսպոս— 31, 44, 136, 172, 260

Օգոստինոս, Ավրելիոս— 65, 113, 118, 258

Օգոստոս— տե՛ս Հուլիոս Կեսար Օկտավիանոս Օգոստոս

Օզորիո, Երոնիմոս— 58

Օկտավիանոս— տե՛ս Հուլիոս Կեսար Օկտավիանոս Օգոստոս

Օկտավիոս, Մարկոս— 143

Օնեսիլայոս— 332

Օվիդիոս Նազոն, Պուրբիոս— 210, 273

Օտոն, Մարկոս Սալվիոս— 316, 328

Յարրիցիոս Լուացինոս, Գայոս— 341

Յեզոն— 65

Յերդինանդ I Արագոնցի (Արագոնի թագավոր)— 13

Յերդինանդ I (Ավստրիայի էրցհերցոգ)— 13

Յիլիպ II Գեղեցիկ (Ավստրիայի էրցհերցոգ)— 32

Յիլիպ II (Իսպանիայի թագավոր)— 19

Յիլիպ II Օգոստոս (Յրանսիայի թագավոր)— 216, 301

Յիլիպ IV Գեղեցիկ (Յրանսիայի թագավոր)— 96

Յիորե, Յուաքիմոս դել (Յուաքիմոս Յլորցի)— 49

Յլամինիոս— տե՛ս Քվինկցիոս Յլամինիոս

Յլոր Աննոս, Լուցիոս— 27

Յրանլեսկո (Սալուցայի մարկիզ)— 46

Յրանցիսկ Ասիզցի— 113

Յրանցիսկ I (Յրանսիայի թագավոր)— 40, 41, 42, 46, 53

Յրանցիսկ I (Բրետոնիայի դուքս)— 165

Յրանցիսկ II (Յրանսիայի թագավոր)— 329

Յրեզոզո, Օսաավիանո— 31

Յրուասար, Ժան— 215

Յուա, Գաստոն դը— 175, 326

Յուա, Դիանա դը (Կոմսուհի դը Գյուրսոն)— 170

Յուա, Լուկ դը (Կոմս դը Գյուրսոն)— 235

Յուլի III (Անժուի կոմս)— 69

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Խմբադրության կողմից</i>	5
<i>Հնթերցողին</i>	6
ԳԼՈՒԽ I <i>Տարբեր միջոցներով կարելի է հասնել միևնույն բանին</i>	7
ԳԼՈՒԽ II <i>Վշտի մասին</i>	11
ԳԼՈՒԽ III <i>Մեր զգացմունքները միտում են մեր «եսի» սահմաններից դուրս</i>	15
ԳԼՈՒԽ IV <i>Այն մասին, որ հոգու կրքերը թափվում են երևակայական առարկաների վրա, երբ պակասում են իսկականները</i>	23
ԳԼՈՒԽ V <i>Իրավունք ունի՞ արդյոք պաշարված ամբողջ պարետը դուրս գալ այնտեղից՝ հակառակորդի հետ բանակցելու</i>	26
ԳԼՈՒԽ VI <i>Բանակցությունների ժամը վտանգավոր ժամ է</i>	29
ԳԼՈՒԽ VII <i>Այն մասին, որ մեր մտադրությունները մեր արարքների դատավորներն են</i>	32
ԳԼՈՒԽ VIII <i>Պարապոթյան մասին</i>	34
ԳԼՈՒԽ IX <i>Սաախոսների մասին</i>	35
ԳԼՈՒԽ X <i>Աշխույժ և դանդաղկոտ խոսքի մասին</i>	42
ԳԼՈՒԽ XI <i>Գուշակությունների մասին</i>	44
ԳԼՈՒԽ XII <i>Տոկունության մասին</i>	50
ԳԼՈՒԽ XIII <i>Թաղավորող անձանց հանդիպման ծիսակարգը</i>	52
ԳԼՈՒԽ XIV <i>Այն մասին, որ բարու և չարի մեր ըմբռնումը զգալի չափով կախված է դրանց մասին մեր պատկերացումներից</i>	54
ԳԼՈՒԽ XV <i>Ամբողջ պաշտպանության զործում անիմաստ համարության համար պատիժ են կրում</i>	79
ԳԼՈՒԽ XVI <i>Վախկոտության համար պատժի մասին</i>	80
ԳԼՈՒԽ XVII <i>Որոշ դեսպանների գործելակերպի մասին</i>	82
ԳԼՈՒԽ XVIII <i>Վախի մասին</i>	86
ԳԼՈՒԽ XIX <i>Որևէ մեկի երջանիկ լինել չլինելու մասին չի կարելի դատել, քանի որ զեռ նա չի մահացել</i>	88
ԳԼՈՒԽ XX <i>Այն մասին, որ փիլիսոփայել՝ նշանակում է սովորել մեռնել</i>	91

ԳԼՈՒԽ XXII Մեր հրեակայության ուժի մասին	111
ԳԼՈՒԽ XXIII Մեկի օգուտը մյուսի վնասն է	123
ԳԼՈՒԽ XXIV Սովորության և այն մասին, որ վայել չէ առանց բավարար հիմ- քի փոխել արմատավորված օրենքները	124
ԳԼՈՒԽ XXV Միևնույն մտադրությունների դեպքում հետևանքները կարող են տարբեր լինել	144
ԳԼՈՒԽ XXVI Մանրախնդրության մասին	155
ԳԼՈՒԽ XXVII Երեխաների դաստիարակություն մասին	170
ԳԼՈՒԽ XXVIII Յնորամտություն է մեր իրազեկության հիման վրա դատել, թե ինչն է ճշմարիտ և ինչը՝ սուտ	213
ԳԼՈՒԽ XXIX Բարեկամության մասին	218
ԳԼՈՒԽ XXX Էտիկեն դը լա Բոեսիի քսանինը ստենտները	234
ԳԼՈՒԽ XXXI Զափավորության մասին	235
ԳԼՈՒԽ XXXII Մարդակերների մասին	241
ԳԼՈՒԽ XXXIII Այն մասին, որ աստվածային նախասահմանումների շուրջ հարկ է խոսել մեծագույն զգուշությամբ	256
ԳԼՈՒԽ XXXIV Այն մասին, թե ինչպես կյանքի գնով խուսափում են վայելքնե- րից	258
ԳԼՈՒԽ XXXV Ընկալազիրը հաճախ խելամիտ է վարվում	260
ԳԼՈՒԽ XXXVI Մեր կենսակարգում եղած մի բացթողման մասին	264
ԳԼՈՒԽ XXXVII Հազուստ կրելու սովորության մասին	265
ԳԼՈՒԽ XXXVIII Կրտսեր Կատոնի մասին	269
ԳԼՈՒԽ XXXIX Այն մասին, որ մենք ծիծաղում ու լալիս ենք միևնույն բանից ԳԼՈՒԽ XXXIX Մենակեցության մասին	274
ԳԼՈՒԽ XL Գատողություն Ցիցերոնի մասին	277
ԳԼՈՒԽ XLI Մեփական փառքը զիջել չկամենալու մասին	292
ԳԼՈՒԽ XLII Մեզանում գոյություն ունեցող անհավասարության մասին	298
ԳԼՈՒԽ XLIII Շքեղության դեմ օրենքների մասին	301
ԳԼՈՒԽ XLIV Քնի մասին	313
ԳԼՈՒԽ XLV Գրյոյի ճակատամարտի մասին	315
ԳԼՈՒԽ XLVI Դրոյի կենունների մասին	318
ԳԼՈՒԽ XLVII Մեր դատողությունների անհուսալիության մասին	319
ԳԼՈՒԽ XLVIII Մարտական ձիերի մասին	325
ԳԼՈՒԽ XLIX Հինավուրց սովորությունների մասին	331
ԳԼՈՒԽ L Գեմոկրիտի և Հերակլիտի մասին	341
ԳԼՈՒԽ LI Բառերի ունայնության մասին	346
ԳԼՈՒԽ LII Հների խնայողության մասին	350
ԳԼՈՒԽ LIII Կեսարի մի ասույթի մասին	354
ԳԼՈՒԽ LIV Սին հնարքների մասին	355
ԳԼՈՒԽ LV Հոտերի մասին	356
ԳԼՈՒԽ LVI Ազոթքների մասին	360
ԳԼՈՒԽ LVII Տարիքի մասին	362
Մանոթագրություններ	372
Անվանացանկ	376
	434
	443

ՄԱՐԿՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԳՐԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԳՐԱՆԻՇՆԵՐ

Մանտեն Մ.

**Մ885 Փորձեր: Երեք գրքով: Թարգմ. է ռուս. 2-րդ հրատ.— Գիրք 1—
— Եր.: Հայաստան, 1991— Գիրք 1/Թարգմ. Ա. Խոցանյանի.—
1991.— 443 էջ:**

Մանտենի «Փորձեր» XVI դարի ֆրանսիական մշակույթի հիանալի հուշարձաններից մեկն է: Այն յուրահատուկ ստեղծագործություն է, ընդհանուր ոչինչ չունի փիլիսոփայական տրակտատի կամ սոցիալ-քաղաքական որոշակի թեմայով երկասիրության հետ: Մանտենը մտածում էր գրել իր «Փորձերը» որպես յուրօրինակ ինքնարժեքի յախատեսված այն ընթերցողների սահմանափակ շրջանակի համար, որոնք ընդունակ են հետաքրքրվելու նրա ինքնադիտարկումներով ու ինքնավերլուծությամբ: Իսկ գրա փոխարեն ստացվեց մի գիրք, որն ամփոփում է իր գործընթացի անաչափոր ձգտումները: Այն՝ ֆրանսիական և համաշխարհային գրականության վարպետ ու ամենաինքնատիպ ստեղծագործություն է: Երևանում է՝ ընթերցող չափը շրջանների համար:

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸՆԾԱՅԻ
«ՓՈՐՁԵՐԻ» ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ**

«ՔԱՎԱՔԱԿԱՆ ԳԵՒԵԿԻՏԻՎ» շարքից

ՑՈՒ. ՍԵՄՅՈՆՈՎ— «Հուսահատություն»

Փաստավավերագրական այս վիպակում ընթերցողը կհանդիպի Շտիրլից (Մարսիմ Ժսակ) հետախույզին, ետպատերազմյան շրջանում նրա կրած լիկանքներին Բերիայի զննաններում, ինչպես նաև փաստական հարուստ նյութի հիման վրա կծանոթանա սուս-լինյան Կրեմլի խարդավանքներին:

«ԵՐԳԻՄԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՐ» շարքից

Խ. ԳՅՈՒԼՆԱՋԱՐՅԱՆ— «Մեր գյուղի հանաճները»

Գրքույկը հումորի շտեմարան է Աշտարակի բարբառով, այն լիաթոք ծիծաղ կպար-գևի ընթերցողին:

Ա. ԳՅՈՒՄՐԵՅԻ— «Սրամտություններ և մալանուններ»

Գյումրեցիների անսպառ հումորով այս գրքույկը հիանալի նվեր կլինի հումորի սի-րահարների համար:

Մ. ՅԱՆՔԱՆՅԱՆ— «Արցախի ժողովրդական մանրապատումներ»

«Գիրք զատաբանների և դատավորների մասին»

Գրքում հավաքված են արևելյան ժողովուրդների սարբեր ժամանակների հետաքրքրաշարժ գատավարություններ, ասացվածքներ, սրամիտ պատմություններ և անեկդոտներ:

1. ԼՅՈՒԼԵՃՅԱՆՆ— «Յուրավարի աչքերով»։ Առաքելաց վանքի կոնվլը և Խալիլ բեգի սպանությունը

Անդրանիկի հուշերը լուսարանում են Արևմտյան Հայաստանում հայ ազգային-ազատագրական շարժման երկու կարևոր անցքեր։ Պատմության հերոսները քաջածանոթ հայ ֆիդայիներն են՝ Աղբյուր Սերոբը, Գևորգ Չաուշը, Ուրուխցի հարությունը և ուրիշներ։

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում։ Փաստաթղթերի և նյութերի յողովածու (կազմողներ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան)։

Ժողովածուն ամփոփում է Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթեր և նյութեր հայկական, ռուսական, թուրքական, գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից։ Դրանք ճշմարտացիորեն պատկերում են հայերի ոչնչացման ահալոր պատկերը Թուրքիայում XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ երիտթուրքերի ռճրագործության հեռանքով ոչնչացվեցին մոտ 1,5 միլիոն անմեղ մարդիկ և ամայացավ Արևմտյան Հայաստանը։

ԶԵՅՄ ՋՈՐՋ ՖՐԵՉԵՐ Բանահյուսությունը հին կտակարանում

Աշխատությունը անգլիացի խոշոր պատմագետ Զ. Զ. Ֆրեզերի բազմամյա ուսումնասիրությունների արդյունքն է։ Գրքում քննվում է այն բանահյուսական աղբյուրները, որոնցից սնվել է Աստվածաշունչը, սկսած համաշխարհային ջրհեղեղի մասին պատմությունից, որը ժողովուրդների հիշողության մեջ եղել է նախքան նույն նահապետի օրոք անցի ունեցած Մեծ ջրհեղեղը։

Միշել Մոնտեն

ՓՈՒՋԵՐ

Мишель Монтень

ОПЫТЫ

(на армянском языке)

Ереван «Айастан» 1991

Խմբագիր՝ Մ. Վ. Ասատրյան

Հրատ. խմբագիր՝ Ռ. Ս. Ասատրյան

Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան

Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան

Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նունասլետյան

Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Գևորգյան

ИБ 6956

Հանձնված է՝ շարվածքի՝ 30.09.1990 թ., Ստորագրված է տպագրության՝ 12.06.1991 թ.:
Տորմատ՝ 60×84^{1/16}: Խուլթ տպ. № 2, Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրու-
թյուն՝ բարձր: 26,04 պաշմ. տպագր. մամ., 25,99 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 20 000:
Պատվեր՝ 1540: Դինը՝ 7 ռ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կամիտեի
Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆիկամբինա, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. А. Мегаларта Комитета по печати при Совете Минист-
ров Республики Армения Ереван-9, ул. Теряна, 91.



— URGEL UMSEL PHOTER